ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՋԴԱԳԻՐ

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ

Երևան 2018

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Թողարկողի ֆիրմային անվանումը, կազմակերպաիրավական ձևը

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1,
հեռ. (+374 10) 511-200, (+374 10) 511-211,
էլ.փոստ՝ post@conversebank.am,
ինտերնետային կայք՝ www.conversebank.am

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր տեղաբաշխողի անվանումը, կազմակերպաիրավական ձևը

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1,
հեռ. (+374 10) 511-200, (+374 10) 511-211,
էլ.փոստ՝ post@conversebank.am,
ինտերնետային կայք՝ www.conversebank.am

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ

Արժեթղթերի տեսակը՝	Անվանական, արժեկտրոնային պարտատոմս
Արժեթղթերի ձևը՝	Ոչ փաստաթղթային
Արժեթղթերի անվանական արժեքը՝	100 (Մեկ հարյուր) ԱՄՆ դոլար, 100 (Մեկ հարյուր) Եվրո, 100 000 (Մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
Արժեթղթերի թողարկման ընդհանուր քանակը՝	250 000 (Երկու հարյուր հիսուն հազար) հատ ԱՄՆ դոլարով, 50 000 (Հիսուն հազար) հատ եվրոյով, 30 000 (Երեսուն հազար) հատ ՀՀ դրամով
Արժեթղթերի թողարկման ընդհանուր ծավալը՝	25 000 000 (Քսանհինգ միլիոն) ԱՄՆ դոլար, 5 000 000 (Հինգ միլիոն) Եվրո, 3 000 000 000 (Երեք միլիարդ) ՀՀ դրամ
Արժեթղթերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ծավալը՝	Ենթակա է որոշման Բանկի Խորհրդի կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար
Արժեթղթերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման քանակը՝	Համապատասխան յուրաքանչյուր տրանշի ծավալի և անվանական արժեքի
Արժեթղթերի արժեկտրոնի տարեկան եկամտաբերությունը՝	Ենթակա է որոշման Բանկի Խորհրդի կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար
Արժեթղթերի շրջանառության ժամկետը՝	Ենթակա է որոշման Բանկի Խորհրդի կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար
Արժեկտրոնների վճարման հաճախականությունը՝	Ենթակա է որոշման Բանկի Խորհրդի կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար
Տեղաբաշխման ձևը՝	Չերաշխավորված

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ		
ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ		**8**
1.1	**Բանկի և Բանկի գործունեության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն**	**8**
1.1.1	Բանկի տվյալները և կապի միջոցները	**8**
1.1.2	Բանկի հիմնադրումը և համառոտ պատմությունը	**9**
1.1.3	Բանկի կանոնադրական կապիտալը	**9**
1.1.4	Աշխարհագրական տեղաբաշխվածությունը	**10**
1.1.5	Զբաղեցրած դիրքը բանկային համակարգում (31.12.2017 դրությամբ)	**10**
1.1.6	Բանկի առաքելությունը և ռազմավարությունը	**11**
1.1.7	Բիզնեսի նկարագիրը	**11**
1.1.8	Բանկի ռազմավարությունը	**13**
1.1.9	Ակտիվների որակը	**16**
1.2	**Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը**	**17**
1.3	**Բանկի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները**	**19**
1.4	**Համառոտ տեղեկություններ Բանկի աուդիտն իրականացնող անձանց մասին**	**22**
1.5	**Բանկի կառավարման մարմինների կազմի վերաբերյալ տեղեկատվություն**	**22**
1.5.1	Բանկի բաժնետերերը	**22**
1.5.2	Բանկի կառավարման մարմինները	**22**
1.6	**Առաջարկվող պարտատոմսերի հիմնական վիճակագրական տվյալները**	**23**
1.7	**Արժեթղթերի առաջարկի համակողմանի նկարագիրը**	**25**
1.7.1	Պարտատոմսերի տեղաբաշխման գործընթացի համառոտ նկարագիրը	**25**
1.7.2	Վճարումների իրականացման կարգը	**25**
1.7.3	Պարտատոմսերի տեղաբաշխման գինը	**26**
1.8	**Պարտատոմսերի ռեեստրի վարումը**	**27**
1.9	**Այլ էական տեղեկություններ**	**27**
1.10	**Ամփոփ ֆինանսական տվյալներ**	**28**
ԲԱԺԻՆ 2. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ		**30**
2.1	**Ռիսկային գործոններ**	**30**
2.2	**Հիմնական տեղեկատվություն**	**32**
2.3	**Պարտատոմսերի վերաբերյալ տեղեկատվություն**	**32**
2.4	**Առաջարկի ժամկետները և պայմանները**	**41**
2.4.1	Առաջարկի պայմաններ, առաջարկի վիճակագրություն	**41**
2.4.2	Տեղաբաշխման պլան	**45**
2.4.3	Առաջարկի գին	**46**
2.4.4	Տեղաբաշխումը	**46**
2.5	**Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը**	**47**
2.6	**Լրացուցիչ տեղեկատվություն**	**48**
ԲԱԺԻՆ 3. ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ		**49**
3.1	**Անկախ աուդիտորները**	**49**
3.2	**Ռիսկային գործոններ**	**49**
3.3	**Տեղեկատվություն Բանկի մասին**	**60**
3.4	**Բիզնեսի նկարագիրը**	**61**

3.5	**Բանկի կառուցվածքը**	**68**
3.6	**Զարգացման վերջին միտումները**	**68**
3.7	**Շահույթի կանխատեսումը և գնահատումը**	**71**
3.8	**Բանկի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները**	**73**
3.8.1	Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը և յուրաքանչյուր մարմնի իրավասություններն ու պարտականությունները	**73**
3.8.2	Տեղեկություններ թողարկողի կառավարմանը մասնակցող յուրաքանչյուր անձի վերաբերյալ	**88**
3.8.3	Շահերի բախումը	**91**
3.9	**Հսկող անձինք**	**91**
3.9.1	Բանկի կողմից թողարկված արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ	**92**
3.10	**Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսի վերաբերյալ**	**94**
3.11	**Էական պայմանագրեր**	**97**
3.12	**Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը եվ երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը**	**97**
3.13	**Այլ տեղեկատվություն**	**97**
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ		
Հավելված 1	**«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական իրավաբանական անձանց համար**	**99**
Հավելված 2	**«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական (ֆիզիկական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար)**	**101**
Հավելված 3	**Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը**	**104**
Հավելված 4	**Թողարկման վերջնական պայմաններ**	**105**
Հավելված 5	**Բանկի մասնաճյուղերի ցանկը**	**114**
Հավելված 6	**Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը**	**116**
Հավելված 7	**Ֆինանսական հաշվետվություններ**	**117**

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը:

Ստորագրող անձինք

Արմեն Տեր-Տաճատյան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի նախագահ

06.03.2018թ.
(ամսաթիվ)

Ջուան Պաբլո Գեչիդջյան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի անդամ

06.03.2018թ.
(ամսաթիվ)

Արսեն Գամաղելյան (Տեր Հովել քահանա)
Կոնվերս Բանկ ՓԲԸ Խորհրդի անդամ

06.03.2018թ.
(ամսաթիվ)

Խոսե Լուիս Պերսիկո
Կոնվերս Բանկ ՓԲԸ Խորհրդի անդամ

06.03.2018թ
(ամսաթիվ)

06.03.2018թ.
(ամսաթիվ)

Արթուր Հակոբյան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Գլխավոր գործադիր տնօրեն
Տնօրինության նախագահ

06.03.2018թ.
(ամսաթիվ)

Դավիթ Ազատյան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հաշվապահական հաշվառման վարչության պետ
Գլխավոր հաշվապահ, Տնօրինության անդամ

06.03.2018թ.
(ամսաթիվ)

Գոհար Հարությունյան
Գործառնությունների, ծառայությունների
և SS գծով տնօրեն
Տնօրինության անդամ

06.03.2018թ.
(ամսաթիվ)

Հրանտ Հակոբյան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Ֆինանսական տնօրեն
Տնօրինության անդամ

06.03.2018թ.
(ամսաթիվ)

Վահե Դալյան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Ռիսկերի
կառավարման գծով տնօրեն
Տնօրինության անդամ

06.03.2018թ.
(ամսաթիվ)

Արթուր Նահապետյան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Բիզնեսի զարգացման գծով տնօրեն
Տնօրինության անդամ

06.03.2018թ.
(ամսաթիվ)

Գրիգորի Բադրասարյան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Մանրածախ
բիզնեսի գծով տնօրեն
Տնօրինության անդամ

06.03.2018թ.
(ամսաթիվ)

Ռոստոմ Բադալյան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Կորպորատիվ
բիզնեսի գծով տնօրեն
Տնօրինության անդամ

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Սույն ամփոփաթերթը դիտվում է որպես ազդագրի ներածական համառոտ նկարագրություն և առաջարկվող արժեթղթերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական ազդագրի վրա:
Ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու դեպքում (այդ թվում նաև թարգմանությանը վերաբերող մասով) ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձինք կրում են քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:
Ներդրողը կարող է ձեռք բերել սույն փաստաթուղթը և դրան կից փաստաթղթերը թղթային տարբերակով Բանկի Գլխավոր գրասենյակում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ Բանկի ինտերնետային կայքում՝ www.conversebank.am:

1.1. Բանկի և Բանկի գործունեության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն

1.1.1 Բանկի տվյալները և կապի միջոցները

Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է՝
հայերեն՝ «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերություն
ռուսերեն՝ закрытое акционерное общество “Конверс Банк”
անգլերեն՝ “Converse Bank” closed joint-stock company
Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է՝
հայերեն՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ
ռուսերեն՝ ЗАО “Конверс Банк”
անգլերեն՝ “Converse Bank” CJSC
Բանկի պետական գրանցման վայրն է՝
ՀՀ, 0010, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1:
Բանկի պետական գրանցման համարն է 57:
Բանկի գտնվելու վայրն է՝
ՀՀ, 0010, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1:
Կապի միջոցները՝
հեռ.՝ (+374 10) 511-200, (+374 10) 511-211
ֆաքս՝ (374 10) 511-212
էլ. Փոստ post@conversebank.am,
Ինտերնետային կայք՝ www.conversebank.am:
Բանկի հիմնադրման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն:
Ընկերության կազմակերպաիրավական ձևը՝ փակ բաժնետիրական ընկերություն (գրանցված 20.12.1993թ.):

Պարտատոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում ներդրողները կարող են կապ հաստատել Բանկի Ֆինանսական դեպարտամենտի Ներդրումային գործառնությունների բաժնի և Գանձապետարան, Դիլինգ, Ֆինանսական շուկաների վարչության համապատասխան մասնագետների հետ հետևյալ հեռախոսահամարներով՝ (+374 10) 511-206, 511-247:

1.1.2. Բանկի հիմնադրումը և համառոտ պատմությունը

Բանկը փաստացի գործունեությունը սկսել է 1993 թվականից և 25 տարի է գործունեություն է ծավալում ՀՀ բանկային շուկայում:
Բանկը գրանցվել է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից 1993թ. դեկտեմբերին և հանդիսանում է «Հյուսիս-հայկական» փայատիրական բանկի իրավահաջորդը:
Որպես «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերություն Բանկը վերակազմավորվել է 1997թ.-ին: Բանկն ունի ՀՀ ԿԲ կողմից տրված բանկային գործունեության թիվ 57 լիցենզիա: «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերությունը գրանցվել է ՀՀ, 0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1 հասցեում, իսկ գրանցող մարմին է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկը (Այսուհետ՝ ՀՀ ԿԲ):
Բանկի ֆիրմային անվանումը պաշտպանված է ՀՀ նորմատիվ իրավական ակտերով և գրանցված է ՀՀ արտոնագրային վարչությունում (ֆիրմային անվանման գրանցման մասին 03.06.1999թ. որոշում, գրանցման համարը 107913):
Բանկի ապրանքային նշանն է՝

ConverseBank

Բանկի հիմնադիր և հիմնական բաժնետեր է հանդիսանում «Ընվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս» ԷլԷլՍի-ն:

1.1.3. Բանկի կանոնադրական կապիտալը

Բանկի կանոնադրական կապիտալը բաղկացած է սովորական և արտոնյալ բաժնետոմսերից: Բանկի բաժնետերերն են. «Ընվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս» ԷլԷլՍի՝ սովորական բաժնետոմսերի (80.94%) և արտոնյալ բաժնետոմսեր (333 հատ), ՀայՓոստ Թրասթ Մենեջմենթ ԲԻ.ՎԻ. Ընկերությունը՝ սովորական բաժնետոմսերի (14.06%), Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցի՝ ի դեմս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ սովորական բաժնետոմսերի (5%) սեփականատեր:
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից մինչ այժմ թողարկվել և տեղաբաշխվել է 54,722 (Հիսունչորս հազար յոթ հարյուր քսաներկու) հատ սովորական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 300,000 (Երեք հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով և 333 (Երեք հարյուր երեսուներեք) հատ արտոնյալ փոխարկելի բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 100 (Մեկ հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով, որոնք էլ ձևավորում են Բանկի կանոնադրական կապիտալը:

1.1.4. Աշխարհագրական տեղաբաշխվածությունը

20.02.2018թ. դրությամբ Բանկն ունի 35 մասնաճյուղ, որոնք տեղաբաշխված են ՀՀ 9 մարզերում, Երևան քաղաքում, ինչպես նաև Արցախի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտում:

Բանկի մասնաճյուղերի աշխարհագրական տեղաբաշխվածությունը:

Մարզեր և քաղաքներ	Մասնաճյուղերի քանակը
Կոտայք	6
Լոռի	1
Սյունիք	1
Շիրակ	3
Տավուշ	2
Արմավիր	3
Արարատ	1
Արագածոտն	1
Գեղարքունիք	1
Երևան	15
Ստեփանակերտ	1
ԸՆԴԱՄԵՆԸ	**35**

Մասնաճյուղերի ցանկը ներկայացված է Հավելված 5-ում:

1.1.5. Զբաղեցրած դիրքը բանկային համակարգում (31.12.2017 դրությամբ)

ՀՀ տարածքում գործող 17 առևտրային բանկերը, այդ թվում՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն, ունեն 526 մասնաճյուղ, որոնք տեղաբաշխված են ինչպես ՀՀ-ում, այնպես էլ Լեռնային Ղարբաղում:

- Բանկի մասնաճյուղերի տեսակարար կշիռը բանկային համակարգում կազմում է 6.5% /34 մասնաճյուղ/:

Բանկը 31.12.2017թ. դրությամբ բանկերի կողմից հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների տվյալների հիման վրա հաշվարկված ֆինանսական ցուցանիշներով ՀՀ բանկային համակարգում զբաղեցնում է՝

- զուտ շահույթ՝ 7-րդ տեղ (3.63 մլրդ դրամ կամ համակարգի 9.8%),
- պարտավորություններ հաճախորդների նկատմամբ՝ 4-րդ տեղ (179.8 մլրդ դրամ կամ համակարգի 6.5%),
- ակտիվներ՝ 6-րդ տեղ (252.7 մլրդ դրամ կամ համակարգի 5.8%),
- վարկային ներդրումների ծավալով՝ 6-րդ տեղ (165.2 մլրդ դրամ կամ համակարգի 6.3%),
- ընդհանուր կապիտալ՝ 10-րդ տեղ (36 մլրդ դրամ կամ համակարգի 5.1%):

1.1.6. Բանկի առաքելությունը և ռազմավարությունը

Բանկի առաքելությունն է դառնալ առաջին նախընտրության բանկ Հայաստանում:

Բանկի տեսլականն է բավարարել մեր հաճախորդների ֆինանսական պահանջները և աջակցել նրանց՝ հասնել ֆինանսական հաջողության՝ ապահովելով սպասարկման բարձր որակ և բանկային ծառայությունների հասանելիություն թե Բանկի սպասարկման ցանցում և թե հեռահար բանկային ծառայությունների հնարավոր բոլոր եղանակներով:

Բանկը հաճախորդներին ծառայություններ մատուցելիս որդեգրել է հետևյալ արժեքները.

- Հասանելիություն
- Մատչելիություն
- Նորարարություն
- Տեղեկացվածություն
- Աջակցություն
- Սրտացավություն

Բանկը կիրառում է հետևյալ կորպորատիվ արժեքները.

- Թիմային աշխատանք
- Պատասխանատվություն
- Որոշումների կայացման իրավասությունների պատվիրակում
- Ազնվություն
- Ուսուցում և կատարելագործում
- Ոգևորություն

1.1.7. Բիզնեսի նկարագիրը

Բանկի հիմնական գործունեությունը վարկավորումը և ավանդների ընդունումն է, բանկային հաշիվների բացումն ու սպասարկումը, տեղական և միջազգային վճարային համակարգերի վճարային քարտերի տրամադրումը և սպասարկումը, վճարահաշվարկային ծառայությունների մատուցումը, այդ թվում՝ ներհանրապետական և միջազգային (ներառյալ՝ արագ փոխանցումների համակարգերով) փոխանցումների իրականացումը, հեռակառավարման համակարգերի տրամադրումը, այլ բանկային ծառայությունների մատուցումն ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց:

Բանկի գործունեության մեջ զգալի ծավալ կազմող գործարքների և ծառայությունների տեսակները և/կամ ենթատեսակներն են.

1. Բանկն ունենալով մանրածախ ուղղվածություն և շեշտը դնելով ֆիզիկական անձանց մատուցվող ծառայությունների զարգացման վրա, միաժամանակ, հիմք վերցնելով տարիների փաստացի ցուցանիշները՝ որպես էական բիզնես ուղղություն է դիտարկում հիփոթեքային վարկերի ճյուղը:

Հիփոթեքային վարկավորման շուկայում Բանկը զբաղեցնում է ՀՀ բանկային համակարգում երկրորդ տեղը և նպատակ ունի վարկավորման տեխնոլոգիաների արդյունավետության բարձրացման և պայմանների բարելավման արդյունքում

հիփոթեքային վարկավորման ծավալներով դառնալ առաջատար Բանկը ՀՀ բանկային համակարգում:

Հիփոթեքային վարկերի տրամադրմամբ Բանկը հաստատում է երկարաժամկետ գործարար հարաբերություններ կայուն եկամուտ ունեցող հաճախորդների հետ՝ խաչաձև վաճառքների իրականացմամբ մատուցելով բանկային այլ ծառայություններ ևս, միաժամանակ, հիփոթեքային վարկերի տրամադրումը հանգեցնում է անշարժ գույքի ոլորտի, արդյունքում նաև տնտեսության ակտիվացմանը. ավելանում են անշարժ գույքի շուկայում օտարման գործարքներից ծագող սեփականության իրավունքի գրանցումների քանակները:

2. Տնտեսության իրական հատվածում որոշ ոլորտների ակտիվությունը կհանգեցնի ՓՄՁ հաճախորդների կողմից վարկերի նկատմամբ պահանջարկի աճի, հետևաբար նաև Բանկի կողմից վարկավորման ծավալների աճի, 2018 թվականին ևս, ինչպես և 2017 թվականին կշարունակվի ՓՄՁ ֆինանսավորման տրամադրման ակցիան:

3. Նախորդ տարիների ընթացքում քարտային ոլորտում իրականացված բազմաթիվ միջոցառումները, ակցիաները, ծառայությունների ցանկի ընդլայնումը, ըստ թիրախային խմբերի արտոնյալ պայմաններով վճարային քարտերի տրամադրումը, արձանագրված ցուցանիշները 2018 թվականի և հաջորդ տարիների համար հիմք են հանդիսանում Բանկի վճարային քարտերի ոլորտը դիտարկել որպես էական բիզնես ուղղություն: Բանկը նպատակ ունի 2018 թվականին ևս ավելացնել վճարային քարտերի քանակը /2018 թվականի ընթացքում նախատեսվում է Բանկի վճարային քարտերի 20% աճ/, միաժամանակ, ՀՀ բանկային համակարգի մասշտաբներով ամրացնել իր դիրքերը:

Ֆինանսական ծառայությունների շուկայում նպատակային հատվածներն ըստ տնտեսության ոլորտների, տարածաշրջանների հետևյալն են.

- տնտեսության ճյուղերից՝ ա) արդյունաբերության ճյուղերից՝ սննդամթերքի, էներգետիկայի ճյուղերը, բ) առևտրի հատվածը, գ) շինարարության և գյուղատնտեսության ճյուղերը, դ) տրանսպորտի ու կապի ճյուղը, ե) սպառողական վարկերի հատվածը,
- բանկի կողմից պարտատոսմերի թողարկումը,
- արժեթղթերի շուկան՝ ՀՀ պետական և կորպորատիվ արժեթղթերի առաջնային և երկրորդային շուկան,
- ՀՀ տարածաշրջաններից՝ Երևանի, Լոռու, Շիրակի, Կոտայքի, Արմավիրի, Արարատի, Գեղարքունիքի, Տավուշի, Արագածոտնի, Սյունիքի մարզերը, Արցախը, նոր նպատակային հատվածներն են մարզերի այլ խոշոր և միջին քաղաքները:
- Բանկը նախատեսում է Վրաստանի տարածքում Բանկի քարտապանների համար նորանոր հնարավորությունների ավելացում: Միևնույն ժամանակ, Բանկի քարտապանների համար որպես հնարավորություն դիտարկվում է նաև ՌԴ մայրաքաղաք Մոսկվայում հատուկ ծրագրերի իրականացումը: Բանկը, կարևորելով Վրաստանի և Ռուսաստանի Դաշնության համագործակցության հնարավորությունները, ուսումնասիրում է այդ շուկաներում Բանկի ապրանքային նշանի ճանաչման, ինչպես նաև տվյալ տարածաշրջաններից Բանկի համար նոր հաճախորդների ներգրավման հնարավորությունները և մեթոդները:
- միջոցների փոխանցման հիմնական աշխարհագրությունն է՝ ՌԴ, Ուկրաինա, ԱՄՆ, Եվրոպական երկրներ և այլն,

➢ ՀՀ արժութային և արժեթղթերի շուկաները:

Հաճախորդների հիմնական խմբերն ըստ տարածաշրջանների, ռեզիդենտության, իրավական կարգավիճակի.

Բանկն իր ծառայությունները շարունակելու է տրամադրել Հայաստանի և Արցախի Հանրապետությունների տարածքում գործունեություն ծավալող կազմակերպություններին և բնակչությանը՝ կիրառելով ժամանակակից տեխնոլոգիական լուծումներ, մասնավորապես՝ ավտոմատ գանձման սարքեր, վճարային տերմինալներ, հեռակառավարման համակարգեր (internet-banking, mobile-banking, sms-banking):

Բանկի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին մատուցվող ծառայությունների շրջանակն է՝

➢ ռեզիդենտ հաճախորդներ՝ ա) ֆիզիկական անձինք՝ ժամկետային և ցպահանջ ավանդների, հաշվարկադրամարկղային սպասարկման, ապառիկ, սպառողական և հիփոթեքային վարկերի, վճարային քարտերի, հեռակառավարման համակարգերի, արտարժութային գործառնությունների և միջոցների փոխանցման բնագավառում, բ) իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերեր՝ ցպահանջ և ժամկետային ավանդների, հաշվարկադրամարկղային սպասարկման, վարկավորման, աշխատավարձային վճարային քարտերի, հեռակառավարման համակարգերի, արտարժութային գործառնությունների և միջոցների փոխանցման բնագավառում,

➢ ոչ ռեզիդենտ հաճախորդներ՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ ցպահանջ, ժամկետային ավանդների, հաշվարկադրամարկղային սպասարկման, աշխատավարձային վճարային քարտերի, հեռակառավարման համակարգերի և արտարժութային գործառնությունների բնագավառում:

4. Ներդրումային գործունեություն,
5. Հեռակառավարման համակարգերով ծառայությունների մատուցում,
6. Վճարահաշվարկային ծառայությունների մատուցում,
7. Տեղական և միջազգային վճարային համակարգերի վճարային քարտերի տրամադրում և սպասարկում՝ շարունակելով կատարելագործել քարտերով իրականացվող գործարքների անվտանգության աստիճանը:

1.1.8. Բանկի ռազմավարությունը

Բանկի հիմնական ռազմավարական առաջնահերթություններն են.

Հիմնվելով բաժնետերերի և հաճախորդների վստահության վրա և պահպանելով ռիսկի, կապիտալի և շահութաբերության միջև հավասարակշռությունը.

1. 2017-2019 թվականների ընթացքում կրկնապատկել վարկային ներդրումների ծավալները՝ ապահովելով վարկային ներդրումների տարեկան միջին հաշվարկով 27% աճ:

2. Հիփոթեքային վարկավորման ծավալներով դառնալ առաջատար բանկը ՀՀ բանկային համակարգում՝ կատարելագործելով վարկավորման գործընթացը և պայմանները՝ դարձնելով ավելի մատչելի:

3. Ֆիզիկական անձանց տրամադրված վարկային ներդրումների ծավալներով ապահովել շուկայի 10% մասնաբաժին:

4. Առաջիկա երեք տարիների ընթացքում ավելացնել վճարային քարտերի ծավալները 2.2 անգամ՝ ապահովելով տարեկան միջին հաշվարկով 30% աճ՝ ամրապնդելով զբաղեցրած դիրքը առաջատար 3 բանկերի շարքում: Վճարային քարտերի աճին զուգահեռ նախատեսվում է իրականացնել լոյալության տարբեր ծրագրեր Բանկի քարտապանների համար, այդ թվում նաև զեղչային համակարգի և հնարավորությունների կատարելագործում ՀՀ-ում և ՀՀ սահմաններից դուրս:

5. Առաջիկա երեք տարիների ընթացքում ապահովել Բանկի ոչ տոկոսային եկամուտների առաջանցիկ աճ բանկային համակարգի ոչ տոկոսային եկամուտների միջին աճի նկատմամբ:

6. Միջազգային ֆինանսական կառույցների հետ համագործակցություն և երկարաժամկետ միջոցների ներգրավում:

7. Բանկի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության քաղաքականության ներքո տնտեսության առանձին ոլորտների զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացումը, ինչպես նաև էներգաարդյունավետ և «Կանաչ» վարկերի տրամադրումը:

8. Բանկի համար առաջնային ուղղություններից էր վերաֆինանսավորող կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնումը՝ նպատակ ունենալով ավելացնել վերջիններիս ներքո տրամադրվող ֆինանսավորումների ծավալները:

9. Ապահովել Բանկում բարձրակարգ և որակյալ սպասարկում՝ միաժամանակ կրճատելով հաճախորդների սպասարկման տևողությունը:

10. Որակի կառավարման համակարգի ներդնումը, որի նպատակն էր ապահովել բանկային ծառայությունների և բիզնես գործընթացների բարձր որակը:

11. Ներդրումներ կատարել բանկային տեխնոլոգիաներում՝ մատուցելով նորարարական ծառայություններ, որը հնարավորություն կտա զարգացնել թվային բանկային տեխնոլոգիաների կիրառումը, ապահովելով բանկային գործող և նոր ներդրվելիք ծառայությունների մատուցումն ինչպես համացանցի, բջջային սարքավորումների, այնպես էլ Բանկի ավտոմատ ինքնասպասարկման սարքավորումների միջոցով՝ ապահովելով հաճախորդներին 24/7 սպասարկում:

Բանկի կողմից նախանշված նպատակները հիմնականում նույնն են, սակայն կատարվել են նպատակների ճշգրտումներ՝ պայմանավորված 2017 թվականին Բանկի գործունեության մի շարք հիմնական ֆինանսական ցուցանիշների մասով արձանագրված փաստացի տվյալներով և Բանկի կողմից իրականացված միջոցառումներով: 2017 թվականին շարունակվեցին վարկերի տրամադրման պայմանների բարելավման գործընթացները, որով վարկային պրոդուկտները դարձան առավել մրցունակ, միաժամանակ վերանայվեց նաև վարկերի տրամադրման որոշման կայացման գործընթացը, ստեղծվեցին կոլեգիալ նոր մարմիններ, ներդրվեցին անհատական ու առևտրային ֆինանսավորումների սքորինգային համակարգերը: Վերջիններիս կիրառման, և Բանկի՝ շուկայում զբաղեցրած դիրքի, վարկավորման ներուժի ամբողջական օգտագործման արդյունքում իրատեսական են վարկավորման ծավալների աճի նախանշված նպատակները:

Հիփոթեքային վարկավորման շուկայում Բանկը զբաղեցնում է ՀՀ բանկային համակարգում երկրորդ տեղը և նպատակ ունի վարկավորման տեխնոլոգիաների արդյունավետության բարձրացման և պայմանների բարելավման արդյունքում հիփոթեքային վարկավորման ծավալներով դառնալ առաջատար Բանկը ՀՀ բանկային համակարգում:

Բանկի համար առաջնային ուղղություններից է վճարային քարտերի ծավալների ավելացումը, որի իրագործման նպատակով Բանկը նախատեսում է իրականացնել քարտերի վաճառքի տարբեր ակցիաներ VISA և MasterCard վճարահաշվարկային համակարգերի հետ, քարտապանների համար լոյալության ծրագրեր, զեղչային համակարգի կատարելագործում, ծառայությունների ցանկի ընդլայնում, օրինակ՝ VISA Direct /VPP/ միջազգային քարտից քարտ փոխանցումների իրականացում և այլն:

Վարկավորման ծավալների աճին զուգահեռ միջոցների ներգրավման անհրաժեշտություն է առաջանում, այդ ուղղությամբ Բանկը նպատակ ունի հստակ քայլեր կատարել միջազգային ֆինանսական կազմակերպություններից երկարաժամկետ միջոցների ներգրավման և համագործակցության ուղղությամբ:

Բանկը շարունակելու է հատուկ ուշադրություն դարձնել Բանկի ոչ տոկոսային եկամուտների ծավալների ավելացմանը, միաժամանակ, հաճախորդներին առաջարկելով նոր ծառայություններ և զարգացնելով գործող ծառայությունների ցանկը:

Բանկը որդեգրել է կորպորատիվ սոցիալական պատասխանատվության քաղաքականությունը, որով խրախուսում է վարկառուների կողմից շինարարության և վերանորոգման աշխատանքներում էկոլոգիապես մաքուր նյութերի օգտագործումը, ինչպես նաև կանաչ/էներգաարդյունավետ վարկերի տեսակարար կշռի ավելացումն իր վարկային պորտֆելում:

Վերաֆինանսավորող կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնմամբ նախատեսվում է տրամադրվող ֆինանսավորումների ծավալների ավելացում:

Որպես բանկային ծառայությունների զարգացման առաջնահերթ և հեռանկարային ուղի՝ Բանկը դիտարկում է հեռահար տարբեր եղանակներով բանկային ծառայությունների մատուցման հնարավորությունների ընդլայնումը, հաճախորդների համար բոլոր հնարավոր և իրենց հարմար եղանակներով բանկային ծառայությունների մատուցման և սպասարկման հնարավորությունների կիրառումը, Բանկի ինտերնետ և մոբայլ բանկինգ համակարգերում նոր գործիքների ներդնումը և կատարելագործումը, Բանկի ինտերնետային կայքում հատուկ մոդելի ներդնումը, որը հնարավորություն կտա իրականացնել և կազմակերպել նաև մի շարք դիմումների առցանց ընդունումը, ՀՀ առանձին մարզերի բնակիչների համար նպատակային պրոդուկտների մշակումը և ներդնումը:

Բանկում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում հաճախորդների բարձրակարգ և որակյալ սպասարկման վրա. աշխատակիցների համար կկազմակերպվեն վերապատրաստման դասընթացներ, կմշակվի գործելակարգ, որտեղ կսահմանվեն որակի չափանիշներ, պարտադիր ստանդարտներ, միաժամանակ աշխատանքներ կտարվեն գործընթացների ավտոմատացման և հաճախորդների սպասարկման տևողության կրճատման ուղղությամբ: Առանձնակի

ուշադրություն է դարձվում հաճախորդներին մատուցվող ծառայությունների և բիզնես գործընթացների արդյունավետության բարձրացման վրա, հնարավորության դեպքում քայլեր կիրականացվեն աշխատանքների ավտոմատացման ուղղությամբ՝ գործընթացների տևողությունը կրճատելու և սխալները բացառելու նպատակով:

1.1.9. Ակտիվների որակը

Ակտիվների համարժեքությունը: Համաձայն աուդիտ չանցած տվյալների, 2017թ. Բանկի զուտ շահույթը կազմել է 3.6 մլրդ ՀՀ դրամ, իսկ կապիտալի շահութաբերությունը (զուտ շահույթի հարաբերությունը կապիտալի միջին մեծությանը)՝ 10.66%: Ընդհանուր կապիտալի հարաբերությունն ընդհանուր ակտիվներին կազմել է 14.2.%:

Ատիվների որակը: 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի համախառն վարկային պորտֆելը կազմել է 170մլրդ ՀՀ դրամ: 2016 թվականց վերանայվեցին ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց վարկերի տրամադրման պայմանները, որով վարկային պրոդուկտները դարձան առավել մրցունակ, միաժամանակ վերանայվեց նաև վարկերի տրամադրման գործընթացը: Վերջիններիս կիրառման, և Բանկի՝ շուկայում զբաղեցրած դիրքի, վարկավորման ներուժի ամբողջական օգտագործման արդյունքում իրատեսական են վարկավորման ծավալների աճի նախանշված նպատակները: Միաժամանակ մեծ ուշադրություն է դարձվում պորտֆելի որակի կառավարմանը: Վարկերը տրամադրվում են այն հաճախորդներին, ովքեր բավարարում են Բանկի կողմից սահմանված չափանիշներին:

Ակտիվների իրացվելիությունը: Բանկի նպատակն է ապահովել ֆինանսավորման աղբյուրների կայուն և տարբերակված կառուցվածք, ինչը կապահովի իրացվելիության չկանխատեսված պահանջների արագ և քիչ ծախսատար ապահովումը: ՀՀ ԿԲ իրացվելիության նորմատիվները հետևյալն են (հաշվետու ժամանակաշրջանի վերջին ամսվա միջին ցուցանիշ)

Նորմատիվներ	ՀՀ ԿԲ սահմանած մեծություններ	Փաստացի մեծություն 2017	Փաստացի մեծություն 2016	Փաստացի մեծություն 2015	Փաստացի մեծություն 2014
$Ն_2^{1*}$	15%	35.26%	39.01%	31.06%	25.21%
$Ն_2^{2**}$	60%	102.49%	116.23%	91.02%	89.96%

* Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների նվազագույն հարաբերակցություն

** Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների նվազագույն հարաբերակցություն

1.2. Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Ռիսկի ստանձնումը ֆինանսական գործունեության անբաժանելի մասն է ու հետևանքը և ներդրողը պետք է հաշվի առնի, որ պարտատոմսերում ներդրումները ենթակա են որոշակի ռիսկերի, որոնք կապված են ոչ միայն Թողարկողի ֆինանսատնտեսական վիճակից և գործունեության արդյունքից (Թողարկողի ռիսկ), այլ նաև ֆինանսական շուկայում տիրող իրավիճակից (շուկայական ռիսկ):

Շուկայում տեղի ունեցող անբարենպաստ փոփոխությունները կարող են հանգեցնել Բանկի կողմից ստանձնած պարտավորությունների չկատարմանը կամ շուկայում պարտատոմսերի գնի կամ իրացվելիության անկմանը: Նշվածի արդյունքում ներդրողը կարող է կորցնել ներդրված գումարը կամ դրա մի մասը:

Պոտենցիալ ներդրողը, մինչև պարտատոմսերում ներդրում կատարելու մասին որոշում ընդունելը, պետք է շրջահայաց լինի և հաշվի առնի ստորև բերված ռիսկերը և սույն ազդագրում ներառված այլ տեղեկատվությունը, ինչպես նաև իր փորձը, նպատակները, ֆինանսական ռեսուրսները, ռիսկի ախորժակը և եկամուտի սպասումները, ինչպես նաև հաշվի առնի, որ ստորև բերված ռիսկերը ոչ բոլոր ռիսկերն են, որ թողարկողը կարող է երբևէ կրել: Թողարկողը բացահայտել է միայն այն ռիսկերը, որոնք նա համարել է էական: Ենթադրաբար, կարող են լինել լրացուցիչ ռիսկեր, որոնք թողարկողն այժմ չի համարում էական կամ որոնք ներկայումս հայտնի չեն: Ցանկացած այդպիսի ռիսկ կարող է թողնել վերը նշված ազդեցությունն ու հետևանքը:

Բանկային գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն: Կարևորագույն ռիսկերն են վարկային ռիսկը, շուկայական ռիսկը, իրացվելիության ռիսկը, ինֆլյացիոն կամ գնողունակության ռիսկը, գործառնական ռիսկը, իրավական ռիսկը, տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) հետ առնչվող ռիսկերը:

<u>Աճող մրցակցություն շուկայի համակենտրոնացման արդյունքում:</u> Բանկային ոլորտին բնորոշ է բարձր մրցակցությունը, հետևաբար շուկայում մրցակիցների ակտիվության բարձրացումը կարող է բացասաբար անդրադառնալ Թողարկողի տնտեսական և ֆինանսական ցուցանիշների վրա: Սույն ազդագրի պատրաստման պահին բանկային հատվածում առկա են բանկեր, որոնք իրենց չափերով համադրելի են Թողարկողի հետ, ինչի արդյունքում սրվում է մրցակցությունը: Սակայն Թողարկողը նույնպես ակտիվորեն մասնակցում է ոլորտի գործընթացներին՝ ապահովելով իր առաջատար դիրքը:

<u>Վարկային ռիսկ:</u> Բանկի գործունեությունն ենթարկվում է վարկային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարման հետ, որի արդյունքում Բանկը կարող է վնասներ կրել: Վարկային ռիսկը Բանկի կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Բանկն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Բանկի չաշխատող վարկերի ու ակտիվների վերաբերյալ մանրամասն տեղեկությունը ներկայացված է Ազդագրին կից ֆինանսական հաշվետվություններում և էջ 56:

Բանկի պարտատոմսեր ձեռք բերելիս ներդրողը իր վրա է վերցնում ապագայում թողարկողի ֆինանսական վիճակի հնարավոր վատթարացման, պարտատոմսերի մայր գումարի կամ արժեկտրոնների վճարման անհնարինության, հավանական սնանկացման ռիսկը:

Գործառնական ռիսկը Գործառնական ռիսկ է համարվում ոչ ադեկվատ կամ սխալ ներքին գործընթացների, մարդկային գործոնի, համակարգերի և արտարքին միջավայրի ազդեցության հետևանքով կորուստի առաջացման հավանականությունը կամ առաջացած ուղղակի կորուստը, որը բացասական ազդեցություն կունենա բանկի կապիտալի և շահույթի վրա: Բանկերի, մասնավորապես «Կոնվերս Բանկ» ՓԲԸ գործունեության հետ կապված ռիսկերի, դրանց զսպման ու բացասական ազդեցության նվազեցման ուղղությամբ Բանկի կողմից իրականացվող միջոցառումների առավել մանրամասն նկարագրությանը կարող եք ծանոթանալ Ծրագրային ազդագրի 3.2 կետում (էջ 49):

Սույն Ծրագրային ազդագրով առաջարկվող պարտատոմսերում ներդրումը կապված է որոշակի ռիսկերի հետ:

Շուկայական ռիսկը շուկայական փոփոխականների (տոկոսադրույքներ, արտարժութային փոխարժեքներ կամ տոկոսադրույքներ) տատանման հետևանքով ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ իրական արժեքի տատանման և դրա հետևանքով վնաս կրելու հավանականությունն է: Շուկայական ռիսկը ներառում է տոկոսադրույքների, գնային, արտարժույթի և կապիտալի գործիքների գնային ռիսկերը: Այս ռիսկի բացասական ազդեցությունը Բանկի ֆինանսական ցուցանիշների վրա նվազեցնելու համար բանկի Ռիսկերի կառավարման վարչությունը սահմանել է ռիսկի ախորժակի մեծություն, մշակել շուկայական ռիսկերի սահմանաչափեր, որոնց պահպանումը գտնվում է մշտական վերահսկողության տակ:

Արտարժութային ռիսկ: Արտարժույթով թողարկված պարտատոմսերի դեպքում առկա է արտարժութային ռիսկ: Այս ռիսկը կարող է առաջանալ փոխարժեքի կտրուկ տատանումների, արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների ոչ ճիշտ կառավարման արդյունքում՝ հանգեցնելով կորուստների: Օրինակ, ԱՄՆ դոլարի արժեզրկման դեպքում ԱՄՆ դոլարով պարտատոմսեր ձեռք բերած ներդրողը կունենա որոշակի կորուստներ: Ներդրողը պարտատոմսերում ներդրում կատարելու նպատակով արտարժույթի փոխանակում կատարելիս նույնպես պետք է հաշվի առնի, որ փոխարժեքի անբարենպաստ տատանման հետևանքով կարող է ստանալ իր սպասվածից քիչ եկամուտ:

Տոկոսադրույքի ռիսկ: Հայաստանի ֆինանսական շուկայում առկա տոկոսադրույքների տատանումը կարող է բացասաբար ազդել պարտատոմսերի եկամտաբերության և իրացվելիության ցուցանիշների վրա: Շուկայում տոկոսադրույքների բարձրացումը կարող է բերել նաև Թողարկողի պարտատոմսերի եկամտաբերության վերանայման (բարձրացման), ինչն իր հերթին կբերի գնի անկման և հակառակը:

Գնողունակության ռիսկ: Գնաճի առկայության պայմաններում ներդրողները պետք է հաշվի առնեն, որ իրենց կողմից ստացվելիք իրական եկամտաբերությունը կարող է ավելի ցածր լինել (գնաճի չափով), քան Թողարկողի կողմից առաջարկվող անվանական արժեկտրոնային եկամտաբերությունը:

Վերաներդրման ռիսկ: Այն ներդրողները, ովքեր պարտատոմսերը ձեռք են բերում դրանք մինչև մարումը պահելու նպատակով, պետք է հաշվի առնեն, որ վերաներդրման ռիսկը վեցնում են իրենց վրա: Այսինքն նրանք իրենց վրա են վերցնում պարբերաբար ստացվող արժեկտրոնները կամ մարումից առաջացած

գումարը առնվազն նույն եկամտաբերությամբ վերաներդնելու հնարավորության բացակայության ռիսկը:

Իրացվելիության ռիսկ: Շուկայական իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման արդյունքում կարող է առաջանալ իրացվելիության ռիսկ: Թողարկողը պարտատոմսերի իրացվելիությունն ապահովելու համար նախատեսում է գործողությունների պլան (արժեկտրոնների պարբերական վճարում, մրցակցային եկամտաբերություն, ցուցակում և կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, շուկա ստեղծողի պայմանագրի կնքում համապատասխան ընկերությունների հետ), սակայն չի կարող երաշխավորել, որ դրանք երկրորդային շուկայում ցանկացած պահի հնարավոր կլինի վաճառել կամ գնել ցանկալի գնով:

Աշխարհաքաղաքական ռիսկ: Աշխարհաքաղաքական, տարածաշրջանային և ներքաղաքական իրավիճակի անբարենպաստ փոփոխությունների արդյունքում հնարավոր է առաջ գան այնպիսի բԲԱացասական գործոններ, որոնք կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ ընդհանուր մակրոտնտեսական իրավիճակի վրա, որն իր հերթին կարող է մեծացնել չաշխատող վարկերի տեսակարար կշիռը, ավելացնել պահուստավորման ծախսերը ու իջեցնել Բանկի շահութաբերությունը:

Նորմատիվային և օրենսդրական դաշտի փոփոխություններ: Թողարկողը գործում է ՀՀ տնտեսության ամենավերահսկվող ոլորտներից մեկում: Հնարավոր է, որ 2018թ-ից Բազել 3 ստանդարտների ներդրումը դրական կամ բացասական ազդեցություն ունենա բանկի գործունեության և ֆինանսական ցուցանիշների վրա:

Առաջարկվող պարտատոմսերի հետ կապված ռիսկերի առավել մանրամասն նկարագրությանը կարող եք ծանոթանալ Ծրագրային ազդագրի 2.1 կետում (էջ 30):

1.3. Բանկի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն Հայաստանի առաջատար բանկերից է: Բանկի հիմնական նպատակն է կապիտալի շարունակական, հուսալի տեղաբաշխումը, ինչպես նաև բանկի հաճախորդներին ժամանակին որակյալ բանկային ծառայությունների մատուցումը: Բանկի հավասարակշռված քաղաքականությունը կայունության, ինչպես նաև ֆինանսատնտեսական բարձր ցուցանիշների գրավականն է:

Բանկի առաջնային ուղղություններից են նոր բանկային տեխնոլոգիաների կիրառումը, ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ հաճախորդների կապիտալի հուսալի տեղաբաշխումը, վերջիններիս բանկային ծառայությունների ամբողջական փաթեթի առաջարկումն ու տրամադրումը: Որպես բանկային ծառայությունների զարգացման առաջնահերթ և հեռանկարային ուղի՝ Բանկը դիտարկում է տարբեր տիպի բանկային ծառայությունների մատուցումը հեռակառավարման համակարգերի միջոցով, ինչպես նաև ծառայությունների հնարավորինս լայն շրջանակների մատուցման հասանելիությունը 24/7 ռեժիմով՝ ինչպես հեռակառավարման համակարգերի շրջանակներում, այնպես էլ Բանկի ավտոմատ ինքնասպասարկման սարքավորումների կիրառմամբ՝ կատարելագործելով առկա տեխնոլոգիական հնարավորությունները:

Բանկում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում հաճախորդների բարձրակարգ և որակյալ սպասարկման վրա, աշխատակիցների համար պարբերաբար վերապատրաստման դասընթացներ են կազմակերպվում՝ վերջիններիս աշխատանքի արտադրողականության բարձրացման և սպասարկման ժամանակահատվածի կրճատման նպատակով:

Անձնակազմի բարձր պրոֆեսիոնալիզմը Բանկին թույլ է տալիս արագ արձագանքել շուկայական ենթակառուցվածքում առկա փոփոխություններին, կենտրոնացնել և ուղղել անհրաժեշտ դրամական միջոցները առավել հեռանկարային ուղղություններում:

Տարեցտարի Բանկի զարգացմանը և ընդլայնմանը զուգընթաց ավելացել է նաև Բանկի աշխատակիցների թվաքանակը: 31.12.2017թ.-ի դրությամբ բանկի աշխատակիցների ընդհանուր թվաքանակը կազմել է 806 /ներառյալ ֆիզ. արձակուրդում գտնվող աշխատակիցները/:

Հաշվի առնելով Բանկի առաքելությունը և նպատակները, բաժնետերերի դիրքորոշումը, նպատակները, թույլ և ուժեղ կողմերը, հնարավորությունները և սպառնալիքները՝ Բանկը 2018 թվականին իր առջև դրել է հիմնական հետևյալ խնդիրները.

- Վարկային պորտֆելի աճ 21%-ի չափով՝ ապահովելով 2018 թվականի վերջի դրությամբ ավելի քան 190 մլրդ դրամի վարկային պորտֆել, ընդ որում՝
  1. ՓՄՁ ֆինանսավորման ծավալներով աճը կկազմի 44.2%-ի չափով,
  2. Անհատական վարկերի աճը՝ 22.5%:
- Տարածքային քաղաքականության զարգացման առումով 2018 թվականի խնդիրներն են լինելու
  1. 9 նոր մասնաճյուղի բացում, որից 4-ը Երևան քաղաքում,
  2. 3 գործող մասնաճյուղի գործունեության տարածքի տեղափոխություն և վերանորոգում,
  3. 5 գործող մասնաճյուղի կապիտալ կամ ընթացիկ վերանորոգում:
- 2018 թվականի ընթացքում նախատեսվում է Բանկի քարտային բիզնեսի զարգացման ուղղված միջոցառումների իրականացում, ինչը ենթադրում է թե վճարային քարտերի քանակի, թե վճարային քարտերով իրականացվող գործարքների ծավալների աճ: Զուգահեռաբար իրականացվելու է վճարային քարտերով կատարվող գործառնությունների նոր հնարավորությունների ներդնում:
- Վճարային քարտերով կատարվող գործառնությունների հնարավորությունների տեսանկյունից նախատեսվում է VISA Direct /VPP/ միջազգային քարտից քարտ փոխանցումների իրականացում:
- Բանկի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության քաղաքականության ներքո տնտեսության առանձին ոլորտների զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացումը, ինչպես նաև էներգաարդյունավետ վարկերի տեսակարար կշռի ավելացում վարկային պորտֆելում և «Կանաչ» վարկերի տրամադրում:
- Ընդլայնել միջազգային ֆինանսական կառույցների /Ասիական զարգացման բանկ, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ, Միջազգային ֆինանսական կորպորացիա, KfW գերմանական զարգացման բանկ/ հետ համագործակցությունը:

• Ապահովել Բանկի կողմից թողարկվող պարտատոմսերի մոտ 20.0 մլրդ ՀՀ դրամի պորտֆել:

• Ապահովել Բանկի հաճախորդների էտալոնային սպասարկումը՝, այդ թվում՝ գործընթացների ավտոմատացման և հաճախորդների սպասարկման տևողության կրճատման միջոցով:

• Բանկային թվային տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցել նորարարական ծառայություններ՝ ապահովելով բանկային պրոդուկտների ու ծառայությունների հասանելիությունը տեղեկատվական տարբեր հարթակներում:

Բանկի կազմակերպական կառուցվածքի փոփոխությամբ, կորպորատիվ կառավարման համակարգի բարելավմամբ, որակի կառավարման համակարգի ներդրմամբ առանձնակի ուշադրություն կդարձվի հաճախորդներին մատուցվող ծառայությունների և բիզնես գործընթացների արդյունավետության բարձրացման վրա:

Ստորև ներկայացված աղյուսակը հնարավորություն կտա համառոտ պատկերացում կազմել Բանկի գործունեության արդյունքների մասին:

հազար ՀՀ դրամ

ԱՆՎԱՆՈՒՄԸ	31/12/17 (Աուդիտ չանցած)	31/12/16 (Աուդիտ անցած)	31/12/15 (Աուդիտ անցած)
ԱԿՏԻՎՆԵՐ	252,735,853	190,993,270	158,903,165
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	216,736,232	158,815,267	138,201,740
ԿԱՊԻՏԱԼ	35,999,621	32,178,003	20,701,425
Զուտ տոկոսային եկամուտ	9,340,183	7,071,897	6,496,275
Գործառնական եկամուտ (զուտ կոմիսիոն վճարները ներառյալ)	13,571,064	9,971,725	9,209,400
Շահույթ/(վնաս) հարկումից առաջ	4,414,515	1,508,590	-616,073
Շահույթ (վնաս) հարկումից հետո	3,626,122	1,565,032	-663,583
Ակտիվների շահութաբերության գործակիցը (ROA, %)	1.65%	0.94%	-0.44%
Սեփական կապիտալի շահութաբերության գործակիցը (ROE, %)	10.66%	5.84%	-2.97%

1.4. Համառոտ տեղեկություններ Բանկի աուդիտն իրականացնող անձանց մասին

2011-2014թթ. ընթացքում Բանկի արտաքին աուդիտն իրականացրել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն՝ հասցեն ՀՀ, 0012, ք. Երևան, Վաղարշյան 8/1, հեռ. (+374 10) 260-964, ֆաքս: (+374 10) 260-961, ինտերնետային կայք՝ www.gta.am: Կազմակերպության տնօրեն-բաժնետեր է հանդիսանում Գագիկ Գյուլբուդաղյանը:
Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից որպես Բանկի 2012-2014թթ. գործունեության աուդիտն իրականացնող աուդիտորական կազմակերպություն է ընտրվել «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն: 2015թ.-ի, 2016թ. և 2017թ-ի Բանկի գործունեության աուդիտն իրականացնող կազմակերպություն է ընտրվել «Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ-ն: Ընկերության հասցեն ՀՀ, 0001, ք. Երևան, Հյուսիսային պող. 1, գրասենյակ 27, հեռ. (+374 10) 500-790, ֆաքս: (+374 10) 500-706, ինտերնետային կայք. www.ey.com/am: Կազմակերպության Գլխավոր տնօրեն է հանդիսանում Հակոբ Սարգսյանը:
Աուդիտի նպատակն է ձեռք բերել բավարար երաշխիքներ՝ համոզվելու համար, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական անճշտություններից:
Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա ընթացքում թողարկողի աուդիտն իրականացրած անձանց կողմից աշխատանքից հրաժարման, վերընտրությանը չմասնակցելու, աշխատանքից ազատման դեպքեր չեն եղել:

1.5. Բանկի կառավարման մարմինների կազմի վերաբերյալ տեղեկատվություն

1.5.1 Բանկի բաժնետերերը: «Ըդվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս» ԷլԷլՍի՝ սովորական բաժնետոմսերի (80.94%) և արտոնյալ բաժնետոմսերը (333 հատ), Հայփոստ Թրասթ Մենեջմենթ ԲԻ. ՎԻ. Ընկերություն՝ սովորական բաժնետոմսերի (14.06%), Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցի՝ ի դեմս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ սովորական բաժնետոմսերի (5%) սեփականատեր:
Բանկը մինչ այժմ թողարկել և տեղաբաշխել է 54,722 (Հիսունչորս հազար յոթ հարյուր քսաներկու) հատ սովորական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 300,000 (Երեք հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով, և 333 (Երեք հարյուր երեսուներեք) հատ արտոնյալ փոխարկելի բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 100 (Մեկ հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով, որոնք էլ ձևավորում են Բանկի կանոնադրական կապիտալը:
Հաշվի առնելով Բանկի կազմակերպաիրավական ձևը՝ Բանկի կողմից թողարկված բաժնետոմսերը չեն շրջանառվում կարգավորող շուկայում: Բանկի բաժնետոմսերը թողարկված են անժամկետ:

1.5.2. Բանկի կառավարման մարմինները: Բանկի կանոնադրությամբ սահմանված են կառավարման հետևյալ մարմինները՝

- Բաժնետերերի ընդհանուր ժողով, այսուհետ նաև Ժողով,
- Բանկի խորհուրդ,
- Գործադիր մարմին. Բանկի Գլխավոր գործադիր տնօրեն և Բանկի

Տնօրինություն:

Բանկի խորհուրդը բաղկացած է յոթ անդամից.

Հ/հ	Անուն Ազգանուն	Պաշտոն
1	Արմեն Տեր-Տաճատյան	Խորհրդի նախագահ
2	Ջուան-Պաբլո Գեչիդջյան	Խորհրդի անդամ
3	Արսեն Գամաղելյան (Տեր Հովել քահանա)	Խորհրդի անդամ
4	Խոսե Լուիս Պերսիկո	Խորհրդի անդամ
5	Դանիել Գիլերմո Սիմոնուտի	Խորհրդի անդամ
6	Խորխե Ալբերտո Դել Ագիլա	Խորհրդի անդամ
7	Խուան Կարլոս Օսկոիդի	Խորհրդի անդամ

Բանկի գործադիր մարմինը: Բանկի գործադիր մարմինը բաղկացած է ութ անդամից.

Հ/հ	Անուն Ազգանուն	Պաշտոն
1	Արթուր Հակոբյան	Գլխավոր գործադիր տնօրեն, Տնօրինության նախագահ
2	Դավիթ Ազատյան	Հաշվապահական հաշվառման վարչության պետ, Գլխավոր հաշվապահ, Տնօրինության անդամ
3	Գոհար Հարությունյան	Գործառնությունների, ծառայությունների և ՏՏ գծով տնօրեն Տնօրինության անդամ
4	Հրանտ Հակոբյան	Ֆինանսական տնօրեն, Տնօրինության անդամ
5	Վահե Դալյան	Ռիսկերի կառավարման գծով տնօրեն, Տնօրինության անդամ
6	Արթուր Նահապետյան	Բիզնեսի զարգացման գծով տնօրեն Տնօրինության անդամ
7	Գրիգորի Բաղդասարյան	Մանրածախ բիզնեսի գծով տնօրեն Տնօրինության անդամ
8	Ռոստոմ Բադալյան	Կոնվերս Բանկ ՓԲԸ Կորպորատիվ բիզնեսի գծով տնօրեն, Տնօրինության անդամ

1.6. Առաջարկվող պարտատոմսերի հիմնական վիճակագրական տվյալները

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Բանկ) թողարկած պարտատոմսերը անվանական, ոչ փաստաթղթային, արժեկտրոնային, միջնաժամկետ պարտատոմսեր են և պետք է տեղաբաշխվեն 3 և ավելի տրանշով: Պարտատոմսերի

վերջին տրանշի տեղաբաշխումն ավարտվում է ոչ ուշ, քան ՀՀ ԿԲ կողմից պարտատոմսերի ազդագիրը հաստատելուց հետո մեկ տարվա ընթացքում:

Թողարկվող պարտատոմսերը տեղաբաշխվում և մարվում են՝ ԱՄՆ դոլարով թողարկվածները՝ ԱՄՆ դոլարով, եվրոյով թողարկվածները՝ եվրոյով, ՀՀ դրամով թողարկվածները՝ ՀՀ դրամով: Ե՛վ ԱՄՆ դոլարով, և՛ եվրոյով, և՛ ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի դիմաց արժեկտրոնների վճարումը կատարվում է ՀՀ դրամով:

Պարտատոմսի անվանական արժեքը՝	100 (Մեկ հարյուր) ԱՄՆ դոլար, 100 (Մեկ հարյուր) Եվրո, 100 000 (Մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
Պարտատոմսերի թողարկման ընդհանուր քանակը՝	250 000 (Երկու հարյուր հիսուն հազար) հատ ԱՄՆ դոլարով, 50 000 (Հիսուն հազար) հատ եվրոյով, 30 000 (Երեսուն հազար) հատ ՀՀ դրամով
Պարտատոմսերի թողարկման ընդհանուր ծավալը՝	25 000 000 (Քսանհինգ միլիոն) ԱՄՆ դոլար, 5 000 000 (Հինգ միլիոն) Եվրո, 3 000 000 000 (Երեք միլիարդ) ՀՀ դրամ
Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ծավալը՝	Ենթակա է որոշման Բանկի Խորհրդի կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար
Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման քանակը՝	Համապատասխան յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ծավալի և անվանական արժեքի
Պարտատոմսերի արժեկտրոնի տարեկան եկամտաբերությունը՝	Ենթակա է որոշման Բանկի Խորհրդի կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար
Պարտատոմսերի տեղաբաշխումը սկսելու և ավարտելու օրը	Ենթակա է որոշման Բանկի Խորհրդի կողմից՝ պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի համար:
Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի շրջանառության ժամկետը՝	Ենթակա է որոշման Բանկի Խորհրդի կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար
Արժեկտրոնների վճարման պարբերականությունը՝	Ենթակա է որոշման Բանկի Խորհրդի կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար
Տեղաբաշխման ձևը՝	Չերաշխավորված

Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության ու մարման վերջնական պայմանները ենթակա են որոշման Բանկի Խորհրդի կողմից՝ տեղաբաշխման յուրաքանչյուր տրանշի համար:
Պարտատոմսերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում Բանկի ինտերնետային կայքում՝ www.conversebank.am տեղաբաշխումից առնվազն 2 (երկու) օր առաջ:
Պարտատոմսերի վաղաժամկետ մարում չի նախատեսվում:

Պարտատոմսերով նախատեսված պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ նախատեսված չեն, քանի որ վերջիններս առանց ապահովման են:
Բանկը նպատակ ունի այս թողարկմամբ իրականացնել հնարավոր ավանդատուների բազայի ընդլայնում և տարատեսականացում (դիվերսիֆիկացիա), «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ հարթակներում հնարավոր ներդրողներին Բանկի ներդրումային գործիքների հետ ծանոթացում, Բանկի վարկային ռիսկի վերաբերյալ տեղեկատվության տարածում հնարավոր ներդրողների լայն շրջաններում: Պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված դրամական միջոցները հանդիսանալու են լրացուցիչ ռեսուրս Բանկի կողմից տրամադրվող վարկերի ծավալները ավելացնելու համար:

1.7. Արժեթղթերի առաջարկի համակողմանի նկարագիրը

1.7.1. Պարտատոմսերի տեղաբաշխման գործընթացի համառոտ նկարագիրը

Թողարկողի պարտատոմսերի բաժանորդագրություն չի իրականացվելու:
Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխումը սկսելու և ավարտելու օրը ենթակա է որոշման Բանկի Խորհրդի կողմից:
Պարտատոմսերի ձեռք բերման համար ներդրողները սահմանված կարգով պետք է լրացնեն պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը (իրավաբանական անձինք համաձայն Հավելված 1-ի և ֆիզիկական անձինք համաձայն Հավելված 2-ի), պատշաճ կերպով ներկայացնեն Բանկ, կատարեն համապատասխան վճարում, որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելը:
Պարտատոմս ձեռք բերողը պետք է ունենա որևէ բանկում ԱՄՆ դոլարով (եթե ձեռք բերվող պարտատոմսերի թողարկման արժույթը ԱՄՆ դոլարն է), եվրոյով (եթե ձեռք բերվող պարտատոմսերի թողարկման արժույթը եվրոն է), ՀՀ դրամով (անկախ ձեռք բերվող պարտատոմսի թողարկման արժույթից) հաշիվ և որևէ Հաշվի օպերատորի մոտ արժեթղթերի հաշիվ:
Պարտատոմսերում ներդրում կատարող անձը կարող է եկամուտ ստանալ հետևյալ դեպքերում՝

- Պարտատոմսերի դիմաց ստացվող տոկոսից,
- Մինչև մարումը վաճառքի և գնման գների դրական տարբերությունից (կապիտալի հավելաճ):

Բանկի թողարկած պարտատոմսերից ստացվող եկամուտն ենթակա է հարկման շահութահարկով (իրավաբանական անձանց համար) և եկամտային հարկով (ֆիզիկական անձանց համար) ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով:

1.7.2. Վճարումների իրականցման կարգը

Պարտատոմսերի դիմաց վճարումները գնորդները պետք է իրականացնեն պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի պատշաճ կերպով Բանկ ներկայացման օրը (որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմանների ընդունելը) ոչ ուշ քան մինչև ժամը 16:30-ը, հատուկ թողարկման նպատակով Բանկում բացված թիվ 1930043129906501 (ԱՄՆ դոլարով պարտատոմսերի համար), թիվ 1930043129823704 (եվրոյով պարտատոմսերի համար), թիվ 1930043123398600 (ՀՀ դրամով պարտատոմսերի համար), տարանցիկ հաշվին

կանխիկ մուտքագրման կամ փոխանցման միջոցով: Պարտատոմսերի դիմաց վճարվող գումարը հաշվարկվում է ստորև ներկայացված բանաձևով (էջ 26) հաշվարկված մեկ պարտատոմսի տեղաբաշխման տվյալ օրվա գինը բազմապատկելով ձեռք բերվող պարտատոմսերի քանակով՝ ընդ որում, եթե հայտ-հանձնարարականի ներկայացումը և համապատասխան գումարի վճարումը կատարվել է մինչ տվյալ օրվա 16:30 ներառյալ, ապա պարտատոմսի գինը հաշվարկվում է տվյալ օրով: Ժամը 16:30-ից հետո ներկայացված և/կամ վճարված հայտի համար վճարվող գումարի չափը հաշվարկվում է տվյալ օրվան հաջորդող աշխատանքային օրվա պարտատոմսի գնով:

1.7.3. Պարտատոմսերի տեղաբաշխման գինը որոշվելու է համաձայն հետևյալ բանաձևի.

$$DP = \frac{C}{f}\sum_{t=1}^{N}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{t-1+\tau}} + \frac{100}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+\tau}}$$

որտեղ.

$$\tau = \frac{DSN}{DCC}$$

DP - պարտատոմսի գինն է (կլորացվում է ստորակետից հետո 4 նիշի ճշտությամբ թվաբանական կլորացման կանոնների համաձայն),
DSN – գործարքի կատարման օրից մինչև հաջորդ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,
DCC- գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,
f – մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է՝ հաճախականությունը,
N – հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը,
C – տարեկան արժեկտրոնը 100 միավոր անվանական արժեքի դիմաց,
y – մինչև մարում եկամտաբերություն:

Թողարկված պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ծավալը որոշվում է Բանկի Խորհրդի կողմից՝ ելնելով շուկայական պահանջարկից:
Յուրաքանչյուր տրանշի պարտատոմսերի տվյալ օրվա գինը տեղաբաշխման ողջ ընթացքի համար Բանկը պարտավորվում է հրապարակել իր ինտերնետային կայքում՝ www.conversebank.am:
Պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնը հաշվարկում է յուրաքանչյուր տեղաբաշխան համար Բանկի Խորհրդի կողմից որոշված պարբերականությամբ՝ տեղաբաշխման սկզբի օրվան հաջորդող յուրաքանչյուր n-րդ պարբերական ամսվա համապատասխան օրը:

Պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնի կուտակումն իրականացվելու է հետևյալ բանաձևով.

$$AI = FV \times \frac{C}{k} \times \frac{DCS}{DCC}$$

որտեղ.
AI – կուտակված արժեկտրոնային եկամուտն է,
FV- մեկ պարտատոմսի անվանական արժեքն է,
C – տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,
k – մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է, հաճախականությունը
Օրերի հաշվարկման պայմանականությունը Թողարկողի պարտատոմսերի համար համարվում է Actual/Actual, ընդ որում
DCS - գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D2M2Y2-D1M1Y1],
DCC –արժեկտրոնային փուլի օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D3M3Y3-D1M1Y1],
D1M1Y1 – գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/ արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է,
D2M2Y2 – գործարքի կատարման ամսաթիվն է,
D3M3Y3 – գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման/ անվանական արժեքի մարման ամսաթիվն է:
Պարտատոմսերի տեղաբաշխման յուրաքանչյուր տրանշի վճարվող արժեկտրոնի տարեկան տոկոսադրույքը ենթակա է որոշման Բանկի Խորհրդի կողմից:

1.8. Պարտատոմսերի ռեեստրի վարումը

Պարտատոմսերի ռեեստրը վարելու է «Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ (ՀՀ, ք. Երևան, 0010, Միեր Մկրտչյան 5Բ, հեռ. +(37410) 543321՝ ըստ «Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի համապատասխան կանոնների, ընթացակարգերի:

1.9. Այլ էական տեղեկություններ

Համաձայն «ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի գ կետի Բանկի թողարկած անվանական արժեթղթերով ներգրավված դրամական միջոցները համարվում են բանկային ավանդ, ուստի ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի ներդրումները Բանկի կողմից թողարկված անվանական պարտատոմսերում ինչպես նաև պարտատոմսերից ստացվող տոկոսները երաշխավորված են նույն չափով և կարգով, ինչպես ավանդները:

Արժեկտրոնի գումարը Բանկը վճարում է պարտատոմսերի սեփականատերերին, արժեկտրոնի հաշվարկման օրը: Եթե արժեկտրոնի հաշվարկման օրը ոչ աշխատանքային է, ապա վճարման օր է համարվում դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Արժեկտրոնների վճարումը կատարվում է ՀՀ դրամով: ԱՄՆ դոլարով և եվրոյով պարատոմսերի արժեկտրոնի հաշվարկման համար հիմք է ընդունվում արժեկտրոնների հաշվարկմանը նախորդող օրվա ՀՀ ԿԲ հրապարակած համապատասխան արտարժույթի միջին շուկայական փոխարժեքը:

1.10. Ամփոփ ֆինանսական տվյալներ

Բանկի տարեկան և եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները, և ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը ներկայացված են Հավելված 6-ում և Հավելված 7-ում:

հազար ՀՀ դրամ

Ցուցանիշի անվանումը	31/12/2017 (աուդիտ չանցած)	31/12/16 (Աուդիտ անցած)	31/12/15 (Աուդիտ անցած)
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	3,626,122	1,565,032	-663,583
Սեփական կապիտալի միջին մեծություն	34,014,258	26,807,180	22,376,240
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	10.66%	5.84%	-2.97%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	3,626,122	1,565,032	-663,583
Ընհանուր ակտիվների միջին մեծություն	219,555,541	167,144,815	152,182,843
Ակտիվների շահութաբերություն (ROA), %	1.65%	0.94%	-0.44%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	3,626,122	1,565,032	-663,583
Գործառնական եկամուտ	13,571,064	9,971,725	9,209,400
Զուտ շահույթի մարժա (NPM), %	26.72%	15.69%	-7.21%
Գործառնական եկամուտ	13,571,064	9,971,725	9,209,400
Ընհանուր ակտիվների միջին մեծություն	219,555,541	167,144,815	152,182,843
Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	6.18%	5.97%	6.05%
Ընհանուր ակտիվների միջին մեծություն	219,555,541	167,144,815	152,182,843
Սեփական կապիտալի միջին	34,014,258	26,807,180	22,376,240

մեծություն			
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	6.45	6.24	6.80
Զուտ տոկոսային եկամուտ	9,340,183	7,071,898	6,496,275
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	164,028,097	115,653,469	104,378,946
Զուտ տոկոսային մարժա (NIM)	0.06	0.06	0.06
Տոկոսային եկամուտ	17,624,252	13,859,656	13,458,001
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	164,028,097	115,653,469	104,378,946
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն	0.11	0.12	0.13
Տոկոսային ծախսեր	8,284,069	6,787,759	6,961,726
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	213,602,196	156,653,307	136,187,336
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	0.04	0.04	0.05
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	3,626,122	1,565,032	-663,583
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը	31,074	31,074	23,340
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	116.69	50.36	-28.43
Սպրեդ	0.07	0.08	0.08

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ: ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ: ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԱՍՈՎ) ԿՐՈՒՄ Է ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԵԹԵ ԱՅՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ Է ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՄՅՈՒՍ ՄԱՍԵՐԻ ՀԵՏ ԴԻՏԱՐԿԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

ԲԱԺԻՆ 2. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2.1 Ռիսկային գործոններ

Սույն Ծրագրային ազդագրով առաջարկվող պարտատոմսերում ներդրումը կապված է որոշակի ռիսկերի հետ: Պոտենցիալ ներդրողը, մինչև պարտատոմսերում ներդրում կատարելու մասին որոշում ընդունելը, պետք է շրջահայաց լինի և հաշվի առնի ստորև բերված ռիսկերը և սույն ազդագրում ներառված այլ տեղեկատվությունը, ինչպես նաև իր փորձը, նպատակները, ֆինանսական ռեսուրսները, ռիսկի ախորժակը և եկամուտի սպասումները: Ներկայացված ռիսկերից յուրաքանչյուրը կամ դրանցից մի քանիսը կարող են բացասաբար անդրադառնալ շուկայում տիրող իրավիճակի և բերել պարտատոմսերի գնի կամ իրացվելիության անկման: Նշվածի արդյունքում ներդրողը կարող է կորցնել ներդրված գումարը կամ դրա մի մասը:
Ռիսկի ստանձնումը ֆինանսական գործունեության անբաժանելի մասն է ու հետևանքը և ներդրողը պետք է հաշվի առնի, որ պարտատոմսերում ներդրումները ենթակա են որոշակի ռիսկերի, որոնք կապված են ոչ միայն Թողարկողի ֆինանսատնտեսական վիճակից և գործունեության արդյունքից (Թողարկողի ռիսկ), այլ նաև ֆինանսական շուկայում տիրող իրավիճակից (շուկայական ռիսկ): Պոտենցիալ ներդրողը պետք է գիտակցի, որ ստորև բերված ռիսկերը ոչ բոլոր ռիսկերն են, որ երբևէ կարող են ի հայտ գալ: Թողարկողը բացահայտել է միայն այն ռիսկերը, որոնք ազդագրի կազմման ընթացքում հայտնի են եղել իրեն և նա համարել է էական: Ենթադրաբար, կարող են լինել լրացուցիչ ռիսկեր, որոնք թողարկողն այժմ չի համարում էական կամ որոնք ներկայումս հայտնի չեն, և ցանկացած այդպիսի ռիսկ կարող է թողնել վերևում նշված ազդեցությունն ու հետևանքը:
Ներդրողը ներդրում կատարելու մասին որոշում ընդունելու համար պետք է մանրամասն ուսումնասիրի սույն փաստաթղթում ներկայացված ռիսկերն ու այլ տեղեկատվությունը:
Ներդրողները նաև պետք է խորհրդակցեն իրենց իրավաբանների հետ՝ պարզելու համար, թե արդյո՞ք պարտատոմսերում ներդրումը հանդիսանում է իրավաբանորեն թույլատրելի ներդրում, և ինչպես ու ինչ ձևով պարտատոմսերը կարող են օգտագործվել որպես գրավի առարկա զանազան փոխառությունների համար:
Շուկայական ռիսկը շուկայական փոփոխականների (տոկոսադրույքներ, արտարժութային փոխարժեքներ կամ տոկոսադրույքներ) տատանման հետևանքով ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ իրական արժեքի տատանման և դրա հետևանքով վնաս կրելու հավանականությունն է: Այն կարող է ի հայտ գալ տնտեսությունում պարտատոմսերի գնի վրա ազգող գործոնների փոփոխության արդյունքում: Երկրորդային շուկայում Թողարկողի պարտատոմսերի գինը և դրանց նկատմամբ պահանջարկը կարող է փոխվել ներքին և արտաքին շուկաների տնտեսական ցուցանիշների փոփոխության արդյունքում, ինչը կարող է հանգեցնել ներդրողի կորուստներին: Այս ռիսկի բացասական ազդեցությունը Բանկի ֆինանսական ցուցանիշների վրա նվազեցնելու համար բանկի Ռիսկերի

կառավարման վարչությունը սահմանել է ռիսկի ախորժակի մեծություն, մշակել շուկայական ռիսկերի սահմանաչափեր, որոնց պահպանումը գտնվում է արդյունավետ մշտապես գործող վերահսկողական համակարգերի հսկողության տակ: Շուկայական ռիսկը ներառում է տոկոսադրույքների, գնային, արտարժույթի և կապիտալի գործիքների գնային ռիսկերը:

Շուկայական ռիսկի հիմնական տարատեսակներն են տոկոսադրույքի ռիսկը և արտարժութային ռիսկը:

Տոկսադրույքի ռիսկ: Հայաստանի ֆինանսական շուկայում առկա տոկոսադրույքների տատանումը կարող է բացասաբար ազդել պարտատոմսերի եկամտաբերության և իրացվելիության ցուցանիշների վրա: Շուկայում տոկոսադրույքների բարձրացումը կարող է բերել նաև Թողարկողի պարտատոմսերի եկամտաբերության վերանայման (բարձրացման), ինչն իր հերթին կբերի գնի անկման: Այս պարագայում պարտատոմսերը մինչև մարումը վաճառելու դեպքում ներդրողը կունենա կորուստներ կամ չի ստանա նախատեսված եկամուտը:

Արտարժութային ռիսկը առաջանում է ազգային արժույթի փոխարժեքի տատանումների արդյունքում և կարող է բացասական ազդեցություն ունենալ ներդրողի՝ պարտատոմսերից ստացված եկամուտի վրա, երբ ներդրողը եկամուտը գնահատում է դրամով: Այս ռիսկը կարող է առաջանալ փոխարժեքի կտրուկ տատանումների, արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների ոչ ճիշտ կառավարման արդյունքում՝ հանգեցնելով կորուստների: Մասնվորապես, ազգային արժույթի արժևորման դեպքում, արտարժույթով արտահայտված պարտատոմսերի մարումից ստացված գումարները փոխարկելու դեպքում, ՀՀ դրամով հաշվարկած եկամուտը կարող է նախատեսվածից քիչ (բացասական) լինել:

Իրացվելիության ռիսկ: Շուկայական իրավիճակի կտրուկ փոփոխության կամ բանկի ֆինանսական վիճակի վատթարացման արդյունքում կարող է առաջանալ իրացվելիության ռիսկ: Թողարկողը պարտատոմսերի իրացվելիությունը ապահվելու համար նախատեսում է գործողությունների պլան (արժեկտրոնների պարբերական վճարում, մրցակցային եկամտաբերություն, ցուցակում և կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, շուկա ստեղծողի պայմանագրի կնքում համապատասխան ընկերությունների հետ), սակայն չի կարող երաշխավորել, որ դրանք երկրորդային շուկայում ցանկացած պահին հնարավոր կլինի վաճառել կամ գնել ցանկալի գնով: Հնարավոր է, որ պարտատոմսերի սեփականատերը չկարողանա նախընտրած պահին վաճառել պարտատոմսերի ցանկալի քանակը կամ ստիպված լինի այն վաճառել ցածր գնով՝ կրելով վնասներ:

Ինֆլյացիոն ռիսկը դա այն կորստի հավանականությունն է, որն առաջանում է ակտիվի կամ եկամտի նվազմամբ ներքին արժույթի արժեզրկման ապա նաև գնաճի կտրուկ աճի արդյունքում: Այլ կերպ ասած՝ ապագա գնաճը կբերի դրամական հոսքերի գնողունակության անկման: Գնաճի առկայության պայմաններում ներդրողները պետք է հաշվի առնեն, որ իրենց կողմից ստացվելիք իրական եկամտաբերությունը կարող է ավելի ցածր լինել (գնաճի չափով), քան Թողարկողի կողմից առաջարկվող անվանական արժեկտրոնային եկամտաբերությունը:

Վերաներդրման ռիսկ: Այն ներդրողները, ովքեր պարտատոմսերը ձեռք են բերում դրանք մինչև մարումը պահելու նպատակով, պետք է հաշվի առնեն, որ

վերաներդրման ռիսկը վերցնում են իրենց վրա: Այսինքն նրանք իրենց վրա են վերցնում պարբերաբար ստացվող արժեկտրոնները կամ մարումից առաջացած գումարը առնվազն նույն եկամտաբերությամբ վերաներդնելու հնարավորության բացակայության ռիսկը:

2.2 Հիմնական տեղեկատվություն

Թողարկման նպատակը: Բանկը նպատակ ունի այս թողարկմամբ իրականացնել հնարավոր ավանդատուների բազայի ընդլայնում և տարատեսականացում (դիվերսիֆիկացիա), հաճախորդներին առաջարկվող ծառայությունների շրջանակի ընդլայնում, «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ հարթակներում հնարավոր ներդրողներին Բանկի ներդրումային գործիքների հետ ծանոթացում, Բանկի վարկային ռիսկի վերաբերյալ տեղեկատվության տարածում հնարավոր ներդրողների լայն շրջաններում: Բանկի կողմից պարտատոմսերի թողարկման նպատակն է նաև միջոցների ներգրավումը, որոնք կուղղվեն միջնաժամկետ վարկավորմանը, ինչպես նաև կնպաստեն հաշվեկշռի պասիվային մասի կառավարման արդյունվետության բարձրացմանը, այլ հավասար պայմաններում ավելի քիչ ծախսատար միջոցների ներգրավմանը: Պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումը նաև մեկ ֆինանսավորողի կամ ֆինանսավորող խմբի ռիսկի նվազման նպատակ է հետապնդում:

2.3 Պարտատոմսերի վերաբերյալ տեղեկատվություն

Ա. Արժեթղթերի տեսակը և դասը: «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի կողմից թողարկված պարտատոմսերն անվանական, ոչ փաստաթղթային, արժեկտրոնային, միջնաժամկետ պարտատոմսեր են: Թողարկված պարտատոմսերը փոխարկելի չեն:
Բ. Երկիրը: Պարտատոմսերը թողարկվելու են ՀՀ տարածքում՝ համաձայն ՀՀ օրենսդրության և ենթաօրենսդրական ակտերի: Վեճերի և դատական գործընթացների առկայության դեպքերում դրանք կարգավորվելու են ՀՀ օրենսդրության համաձայն:
Գ. Արժեթղթերի ձևը: Թողարկվող պարտատոմսերը ոչ փաստաթղթային են, իսկ պարտատոմսերի ռեեստրը վարելու է «Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ (ՀՀ, ք. Երևան, 0010, Միեր Մկրտչյան 5Բ, հեռ. +(37410) 543321՝ ըստ «Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի համապատասխան կանոնների, ընթացակարգերի:
Դ. Արժեթղթերի անվանական արժեքը և քանակը: Թողարկվող և տեղաբաշխվող պարտատոմսերից յուրաքանչյուրի անվանական արժեքը 100 (Մեկ հարյուր) ԱՄՆ դոլար, 100 (Մեկ հարյուր) եվրո, 100 000 (Մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ է: Բանկի կողմից թողարկվող պարտատոմսերի ընդհանուր անվանական ծավալը կազմում է 25 000 000 (Քսանհինգ միլիոն) ԱՄՆ դոլար, 5 000 000 (Հինգ միլիոն) եվրո, 3 000 000 000 (Երեք միլիարդ) ՀՀ դրամ: Թողարկվող և տեղաբաշխվող պարտատոմսերի քանակը 250 000 (Երկու հարյուր հիսուն հազար) հատ ԱՄՆ դոլարով, 50 000

(Հիսուն հազար) հատ եվրոյով, 30 000 (Երեսուն հազար) հատ ՀՀ դրամով է: Յուրաքանչյուր տրանշով տեղաբաշխվող պարտատոմսերի անվանական ծավալն ենթակա է որոշման Բանկի Խորհրդի կողմից: Յուրաքանչյուր տրանշով տեղաբաշխվող պարտատոմսերի քանակը կորոշվի տվյալ տեղաբաշխման ծավալին և անվանական արժեքին համապատասխան:

Ե. Թողարկման արժույթը: Պարտատոմսերի թողարկման արժույթը ԱՄՆ դոլար, Եվրո և ՀՀ դրամ է:

Զ. Պարտատոմսերի դասակարգման մասին տեղեկատվություն: Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի՝ Թողարկողի լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ՝

առաջին՝ ադմինիստրացիայի, լուծարային կառավարչի կողմից օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը, այդ թվում՝ աշխատավարձը՝ ՀՀ ԿԲ-ի խորհրդի կողմից հաստատված նախահաշվի շրջանակներում:

երկրորդ՝ այն պարտատերերի պահանջները, որոնք Բանկին վարկ, փոխառություն են տրամադրել կամ Բանկում ավանդ են ներդրել կամ բանկային հաշվին դրամական միջոցներ են մուտքագրել Բանկում ադմինիստրացիա նշանակվելուց հետո, բացառությամբ պարտատիրոջ և ՀՀ ԿԲ-ի միջև կնքված պայմանագրով սահմանված դեպքերի:

երրորդ՝ ՀՀ և օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց ՀՀ դրամով բանկային ավանդները և բանկային հաշիվներին առկա մնացորդները՝ մինչև 10 միլիոն դրամի չափով, իսկ արտարժութային ավանդների (հաշիվների) դեպքում՝ 5 միլիոն դրամին համարժեք չափով, ընդ որում՝ բանկի նկատմամբ ունեցած պահանջի գումարը 10 միլիոն դրամը (պահանջը արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ 5 միլիոն դրամին համարժեք չափը) գերազանցելու դեպքում, տվյալ անձի՝ մինչև 10 միլիոն դրամի չափով (պահանջը արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ 5 միլիոն դրամին համարժեք չափով) պահանջը բավարարվում է երրորդ հերթով, իսկ այդ գումարը գերազանցող պահանջը՝ չորրորդ հերթով:

չորրորդ՝ բանկի այլ պարտավորությունները, ներառյալ՝ Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից հատուցման կազմակերպման հետ կապված ծախսերը, բացառությամբ երկրորդ հերթում ընդգրկված բանկային ավանդների և բանկային հաշիվների մնացորդների:

հինգերորդ՝ պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ բանկի պարտավորությունները, ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումները:

վեցերորդ՝ ստորադաս փոխառություններից բխող պահանջները:

յոթերորդ՝ Բանկի մասնակիցների պահանջները:

Միևնույն հերթի պարտատերերն/սեփականատերերն ունեն իրենց պահանջների բավարարման հավասար իրավունքներ:

Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի միևնույն հերթի պարտատերերի/սեփականատերերի պահանջները բավարարվում են նախորդ

հերթի պահանջները լրիվ բավարարվելուց հետո: «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի և նույն օրենքի հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի իմաստով բանկի թողարկած անվանական արժեթղթերով, տվյալ դեպքում՝ պարտատոմսերով, ֆիզիկական անձանցից (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերից), ներգրավված դրամական միջոցները համարվում են բանկային ավանդ, որոնց հատուցումը երաշխավորված է նույն օրենքով սահմանված կարգով և պայմաններով, հետևյալ չափերով.

Եթե Ներդրողն անվճարունակ բանկում ունի միայն դրամային պարտատոմսեր, ապա երաշխավորված դրամական միջոցների չափը 10 միլիոն ՀՀ դրամ է:

Եթե Ներդրողն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային պարտատոմսեր, ապա երաշխավորված դրամական միջոցների չափը 5 միլիոն ՀՀ դրամ է:

Եթե Ներդրողն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային պարտատոմսեր, և դրամային պարտատոմսերի գումարը 5 միլիոն ՀՀ դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային պարտատոմսերի գումարը՝ մինչև 10 միլիոն ՀՀ դրամով:

Եթե Ներդրողն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային պարտատոմսեր, և նրա դրամային պարտատոմսերի գումարը պակաս է 5 միլիոն ՀՀ դրամից, ապա երաշխավորվում է դրամային պարտատոմսերի գումարն ամբողջությամբ և արտարժութային պարտատոմսերի գումարը՝ 5 միլիոն դրամի և հատուցված դրամային պարտատոմսերի տարբերության չափով:

Ներդրողի՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները, ներառյալ՝ պարտատոմսերում ներդրումները համարվում են մեկ ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների և ավանդատուի/ներդրողի՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժութային ավանդները: Երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկելիս առաջին հերթին հաշվարկվում են դրամային ավանդները, իսկ երկրորդ հերթին՝ արտարժութային ավանդները: Երաշխավորված ավանդների հատուցման դեպք (այսուհետ՝ հատուցման դեպք) է համարվում «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով բանկին անվճարունակ ճանաչելը և ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելն ի վիճակի չլինելու փաստը հաստատելը կամ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով բանկին սնանկ ճանաչելը (այսուհետ՝ բոլոր դեպքերի համար՝ անվճարունակ բանկ):

Պարտատոմսերի վերադասակարգում կարող է տեղի ունենալ նոր արժեթղթերի թողարկման դեպքում, եթե դրանք համարվելու են վերադաս, այն էլ միայն այն մասով, որը չի վերաբերվում ավանդների երաշխավորման հիմնադրամին:

Է. Արժեթղթերից բխող հիմնական իրավունքները, պարտականությունները և սահմանափակումները:

Պարտատոմսերի ձեռք բերմամբ պարտատոմսերի սեփականատերերը ստանում են հետևյալ իրավունքները.

• Ստանալ պարտատոմսով նախատեսված արժեկտրոնները և պարտատոմսի մարման գումարը՝ համաձայն սույն Ծրագրային ազդագրով սահմանված կարգի:

• Բանկի կողմից պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սույն ծրագրով սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ձեռնարկել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող իր պահանջների բավարարման ուղղությամբ օրենքով թույլատրվող գործողություններ:

• Բանկի կողմից պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սույն ծրագրով սահմանված ժամկետից ուշացնելու հիմքով (սնանկ ճանաչվելու արդյունքում) դատական կարգով լուծարման դեպքում օգտվել օրենքով պարտատիրոջ իրեն վերապահված իրավունքներից: «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի գ ենթակետի համաձայն՝ Բանկի կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի պահանջները բավարարվում են երրորդ հերթին:

• Իր ցանկությամբ օտարել պարտատոմսերը ֆոնդային բորսայում (ցուցակված և առևտրին թույլատրված լինելու դեպքում) կամ արտաբորսայում՝ օրենքով սահմանված կարգով. Ընդ որում ներդրողները պետք է հաշվի առնեն, որ ՀՀ օրենսդրությամբ չի թույլատրվում կարգավորվող շուկայից (ֆոնդային բորսա) դուրս վաճառել կարգավորվող շուկայում առևտրի թույլատրված կորպորատիվ արժեթղթեր: Բացառություն են կազմում.

  ο ՀՀ ԿԲ կողմից կնքվող գործարքները: Դրանք ՀՀ ԿԲ և Ֆինանսական շուկայի մասնագիտացված ընկերությունների միջև հնարավոր գործարքներն են,

  ο Թողարկողի կողմից իր թողարկած արժեթղթերի հետգնման կամ ձեռքբերամ գործարքները:

• Օրենքով սահմանված կարգով գրավադրել պարտատոմսերը:

• Օրենքով նախատեսված այլ իրավունքներ:

Պարտատոմսերի ձեռք բերմամբ սեփականատերերը պարտավորվում են ստանձնել հետևյալ պարտականությունները՝

- Հաշվի օպերատորի մոտ բացել արժեթղթերի հաշիվ:

- պարտատոմսերի թողարկման պայամաններում սահմանված ժամկետներում իրականացնել պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ գումարների փոխանցում համապատասխան բանկային հաշվին, կատարել պարտատոմսերի ձեռքբերումից, օտարումից և այլ գործողություններից ծագող դրամային և ոչ դրամային ցանկացած պարտավորություն:

Բանկի կողմից թողարկված պարտատոմսերում ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի ներդրումները, համաձայն «ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենքի, երաշխավորված են հետևյալ չափով.

ա) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը տասը միլիոն հայկական դրամ է.

բ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը հինգ միլիոն հայկական դրամ է.

գ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և դրամային բանկային ավանդի գումարը հինգ միլիոն հայկական դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև տասը միլիոն հայկական դրամով.
դ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է հինգ միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ և արտարժութային բանկային ավանդը՝ հինգ միլիոն դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:
Պարտատոմսերի թողարկման, ինչպես նաև պարտատոմսերում ներդրում կատարողների նկատմամբ Բանկի կանոնադրությամբ կամ պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ սահմանափակումներ չկան, բացառությամբ տեղաբաշխման ընթացքում ձեռք բերվող պարտատոմսերի նվազագույն ծավալի:
Պարտատոմսերի ձեռք բերման նվազագույն ծավալը յուրաքանչյուր տեղաբաշխման համար որոշվում է Բանկի Խորհրդի կողմից, իսկ առավելագույն ծավալը սահմանափակված է տեղաբաշխման ծավալով:
Ը. Արժեկտրոնի տոկոսադրույքը և դրա վճարման պայմանները: Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի վճարվող արժեկտրոնի տարեկան տոկոսադրույքն ենթակա է որոշման Բանկի Խորհրդի կողմից:
Արժեկտրոնները (տոկոսագումարները) ստանալու իրավունք ունեն պարտատոմսերի արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող օրը պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրի փակման դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրում գրանցված անձինք (սեփականատերերը կամ անվանատերերը):
Պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրը փակվելու է պարտատոմսերի հերթական արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող օրվա ժամը 18:00-ին, այսինքն՝ նշված ժամից հետո ռեեստրում գրանցված սեփականատերերը/անվանատերերը չեն կարող օգտվել նախորդող արժեկտրոնային ժամանակաշրջանի համար (նախորդ կիսամյակ) վճարվող արժեկտրոնի ստացման իրավունքից:
Թողարկողն արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող օրվա ժամը 18:00-ի դրությամբ Ռեեստրավարից վերցնում է պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրից քաղվածք, որի հիման վրա պարտատոմսերի սեփականատերերին՝ նրանց բանկային հաշիվներին անկանխիկ փոխանցման միջոցով, վճարում է համապատասխան գումարները:
Թողարկողը արժեկտրոնների հաշվարկման (վճարման) օրը պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրի հիման վրա պատրաստում է տեղեկանք պարտատոմսերի արժեկտրոնների գումարներ ստանալու իրավունք ունեցող անձանց (սեփականատերեր կամ անվանատերեր) վերաբերյալ՝ ներառյալ արժեկտրոնների գումարի փոխանցման համար անհրաժեշտ տվյալները:
ԱՄՆ դոլարով և Եվրոյով պարտատոմսերի արժեկտրոնային վճարումների համար նախատեսվող գումարները հաշվարկվում են ստորակետից հետո չորս նիշի ճշտությամբ՝ կլորացումը կատարելով թվաբանական կլորացման կանոնների համաձայն և վճարվում ՀՀ դրամով: Արժեկտրոնային վճարումների համար

նախատեսվող գումարներն անվանատերերին և/կամ սեփականատերերին վճարվում են մինչև 10 ՀՀ դրամ ճշտությամբ (ընդ որում կլորացումը իրականացվում է թվաբանական կլորացման կանոններին համաձայն՝ մինչև ամենամոտ ամբողջ տասնավոր թիվը): Թվաբանական կլորացման կանոնի ներքո հարկ է հասկանալ կլորացման այն մեթոդը, որի դեպքում միավորի ամբողջ թիվը չի փոխվում, եթե կլորացման ենթակա տասնորդական միավորը հավասար է 0-ից 4-ի, և փոխվում է՝ մեծանալով մեկ միավորով, եթե կլորացման ենթակա տասնորդական միավորը հավասար է 5-ից 9-ի:

Պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշվեհամարների բացակայության կամ ճիշտ չլինելու դեպքում, Բանկը գումարը կփոխանցի/կսառեցնի Բանկում՝ այդ նպատակով բացված հաշվեհամարին, այնուհետև Բանկը կգործադրի բոլոր ողջամիտ ջանքերը ներդրողի հայտնաբերման ու գումարի փոխանցման համար:

Արժեկտրոնի գումարը Բանկը վճարում է պարտատոմսերի սեփականատերերին արժեկտրոնի հաշվարկման (մարման) օրը: Եթե արժեկտրոնի հաշվարկման օրը ոչ աշխատանքային է, ապա վճարման օր է համարվում դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Անկախ պարտատոմսի թողարկման արժույթից, արժեկտրոնների վճարումը կատարվում է ՀՀ դրամով: ԱՄՆ դոլարով և Եվրոյով թողարկված պարտատոմսերի արժեկտրոնների հաշվարկման համար հիմք է ընդունվում արժեկտրոնների հաշվարկմանը նախորդող օրվա ՀՀ ԿԲ հրապարակած միջին շուկայական փոխարժեքը:

Ոչ ռեզիդենտ անձանց համար վճարումների առանձնահատկություններ սահմանված չեն:

Պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնը հաշվարկում է յուրաքանչյուր տեղաբաշխան համար Բանկի Խորհրդի կողմից որոշված պարբերականությամբ՝ տեղաբաշխման սկզբի օրվան հաջորդող յուրաքանչյուր n-րդ պարբերական ամսվա համապատասխան օրը:

Պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնի կուտակումն իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$AI = FV \times \frac{C}{k} \times \frac{DCS}{DCC}$$

որտեղ.

AI – կուտակված արժեկտրոնային եկամուտն է,

FV- մեկ պարտատոմսի անվանական արժեքն է,

C – տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,

k – մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է, հաճախականությունը

Օրերի հաշվարկման պայմանականությունը Թողարկողի պարտատոմսերի համար համարվում է Actual/Actual, ընդ որում

DCS - գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D2M2Y2-D1M1Y1],

DCC –արժեկտրոնային փուլի օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D3M3Y3-D1M1Y1],
D1M1Y1 – գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/ արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է,
D2M2Y2 – գործարքի կատարման ամսաթիվն է,
D3M3Y3 – գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման/ անվանական արժեքի մարման ամսաթիվն է:

Վճարվող արժեկտրոնների հաշվարկում օրերի հաշվարկման կարգը Actual/Actual է:

Թ.Արժեթղթերի մարման ժամկետը: Թողարկվող պարտատոմսերի մարման օրը ենթակա է որոշման Բանկի Խորհրդի կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար:
Պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրը փակվում է պարտատոմսերի մարման օրվան նախորդող օրը՝ ժամը 18:00-ին, այսինքն՝ պարտատոմսերի մարման գումարն իրավունք ունեն ստանալ մինչև ռեեստրի փակման պահը պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում գրանցված անձինք:
Պարտատոմսերի մարման գումարները պարտատոմսերի սեփականատերերին/անվանատերերին վճարվում են պարտատոմսերի մարման օրը, այսինքն պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրի փակման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ընթացքում: Եթե մարման օրը ոչ աշխատանքային է, ապա վճարման օր է համարվում դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:
Բանկը մարման օրվան նախորդող օրվա ժամը 18:00-ի դրությամբ Ռեեստրավարից վերցնում է պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածք, որի հիման վրա պարտատոմսերի մարման օրը պարտատոմսերի սեփականատերերին՝ նրանց բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով, վճարում է համապատասխան գումարները (պարտատոմսերի անվանական արժեքը): Միաժամանակ Բանկը հանձնարարական է տալիս Ռեեստրավարին՝ պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից տրված քաղվածքում նշված քանակության պարտատոմսերը մարելու համար:
Թողարկողը պարտատոմսերի մարման գումարները վճարում է անկանխիկ ձևով՝ պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով: Պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշվեհամարների բացակայության կամ ճիշտ չլինելու դեպքում գումարը վերադարձվում է ներդրողին կանխիկ՝ Բանկի Գլխամասային գրասենյակում:
ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի մարման դիմաց վճարումները կատարվելու են ԱՄՆ դոլարով, Եվրոյով թողարկվածների դիմաց՝ եվրոյով, իսկ ՀՀ դրամով թողարկվածների դիմաց՝ ՀՀ դրամով:
Հաշվի առնելով պարտատոմսերի անվանական արժեքի արժույթը և պարտատոմսերի մարման հետ կապված հնարավոր միջբանկային փոխանցումների անհրաժեշտությունը (եթե ներդրողի ԱՄՆ դոլարով կամ եվրոյով հաշիվը չի գտնվում Թողարկողի մոտ), ներդրողները պետք է նկատի ունենան, որ մարման գումարների

փոխանցման (միջբանկային փոխանցումներ) հետ կապված միջնորդավճարների ծախսերը պետք է կատարվեն ներդրողի հաշվին, հետևաբար նման ներդրողները մարման գումարները կստանան պահումներով՝ համապատասխան Բանկում և այլ միջնորդ բանկերում (եթե այդպիսիք կլինեն) գործող սակագների:
Պարտատոմսերի վաղաժամկետ մարում չի նախատեսվում:
Ժ. Արժեթղթի տարեկան եկամտաբերությունը: Պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը հաշվարկվում է համաձայն ազդագրի 2.4. կետի 2.4.3. ենթակետում (էջ 45) բերված բանաձևի: Տարեկան եկամտաբերությունը բանաձևում նշված է y տառով: Տեղաբաշխման ընթացքում տարեկան եկամտաբերության տոկոսադրույքը հավասար է լինելու հայտարարված արժեկտրոնի եկամտաբերությանը: Առաջնային տեղաբաշխման ավարտից հետո տարեկան եկամտաբերությունը որոշվելու է երկրորդային շուկայում՝ համաձայն տվյալ պահին շուկայում ձևավորված տոկոսադրույքների:
Ժա. "Կոնվերս Բանկ" ՓԲԸ թողարկած միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջարկի ծրագիրը հաստատվել է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի Խորհրդի 18.01.2018 թիվ 6 որոշմամբ: Պարտատոմսերի թողարկման տեղաբաշխման մասին որոշումն ընդունվել է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի Խորհրդի 18.01.2018 թիվ 6 որոշմամբ, որով սահմանվել է թողարկել և տեղաբաշխել միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսեր հետևյալ վավերապայմաններով՝

- թողարկման ծավալը՝ 25 000 000 ԱՄՆ դոլար, 5 000 000 եվրո, 3 000 000 000 ՀՀ դրամ,
- մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝ 100 ԱՄՆ դոլար, 100 եվրո, 100 000 ՀՀ դրամ,
- տեղաբաշխվող պարտատոմսերի ընդհանուր քանակը՝ 250 000 հատ՝ ԱՄՆ դոլարով, 50 000 եվրոյով, 30 000 հատ ՀՀ դրամով,
- տեղաբաշխումը 3 կամ ավելի տրանշով
- տեղաբաշխող՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ
- տեղաբաշխման իրականացման ձևը՝ չերաշխավորված

Խորհրդի որոշմամբ սահմանվել է նաև, որ տեղաբաշխվող յուրաքանչյուր տրանշի համար արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխման կարգն ու պայմանները, արժեկտրոնային պարտատոմսերի յուրաքանչյուր տեղաբաշխման սկզբի և ավարտի ժամկետները, արժեկտրոնի տարեկան եկամտաբերությունը, տեղաբաշխման ծավալը, արժեկտրոնների վճարման պարբերականությունը, պարտատոմսի շրջանառության ժամկետները, տեղաբաշխման ընթացքում մեկ ներդրողի կողմից ձեռք բերվող պարտատոմսերի նվազագույն ծավալը որոշվում են "Կոնվերս Բանկ" ՓԲԸ Խորհրդի կողմից:
Ժբ. Պարտատոմսերի ազատ շրջանառության հետ կապված պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ սահմանափակումներ չեն սահմանվում, բացի տեղաբաշխման ընթացքում մեկ ներդրողի կողմից ձեռք բերվող պարտատոմսերի նվազագույն ծավալի սահմանափակումից, եթե նման որոշում կայացվի Բանկի

Խորհրդի կողմից: Պարտատոմսերը կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն ստանալուց հետո, կարգավորվող շուկայից դուրս գործարքներ արգելվում են, բացառությամբ ՀՀ ԿԲ խորհրդի 27.11.2012թ. թիվ 331Ն որոշմամբ սահմանված դեպքերի:

Ժգ. Պարտատոմսերից ստացվող եկամուտների հարկման կարգի նկարագիրը:

Պարտատոմսերում ներդրում կատարող անձը կարող է եկամուտ ստանալ հետևյալ դեպքերում՝

- պարտատոմսերի դիմաց ստացվող տոկոսից,
- մինչև մարումը վաճառքի և գնման գների դրական տարբերությունից (կապիտալի հավելաճ):

Բանկի թողարկած պարտատոմսերից ստացվող եկամուտը ենթակա է հարկման շահութահարկով (իրավաբանական անձանց համար) և եկամտային հարկով (ֆիզիկական անձանց համար): Հայաստանի Հանրապետությունում շահութահարկ են վճարում ՀՀ-ում ստեղծված կազմակերպությունները և ոչ ռեզիդենտները (օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունները և դրանց կողմից Հայաստանի Հանրապետությունից դուրս ստեղծված կազմակերպությունները): Ընդ որում՝ վերջիններիս համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը: Հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Շահութահարկի գումարը հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ՝ 20 տոկոս դրույքաչափով: Ոչ ռեզիդենտ կազմակերպությունների համար շահութահարկը հաշվարկվում է այլ դրույքաչափով: Այսպես՝ եթե ոչ ռեզիդենտը հայաստանյան աղբյուրներից ստանում է պասիվ եկամուտներ (տոկոսներ, կապիտալի հավելաճ և այլն), ապա նրա հարկային գործակալը պարտավոր է գանձել շահութահարկ՝ 10 տոկոս դրույքաչափով:

ՀՀ-ում եկամտային հարկ են վճարում ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Ընդ որում՝ ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ ում կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում: Հարկվող եկամուտը հարկատուի համախառն եկամտի և ՀՀ հարկային օրենսգրքի դրույթներին համաձայն իրականացված նվազեցումների դրական տարբերությունն է: Պարտատոմսերից կապիտալի հավելաճից ստացված եկամուտները ենթակա չեն հարկման, իսկ տոկոսները հաշվառվում են համախառն եկամտում և հարկվում են 10 տոկոս դրույքաչափով:

Պարտատոմսերից ստացված եկամուտների հարկման կանոնները և եկամտային հարկի կիրառվող դրույքաչափը նույնն են ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար և սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ:

Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց, ինչպես նաև ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար որպես հարկային գործակալ հանդես է գալիս Բանկը:

Ծանուցում: Չնայած այն հանգամանքին, որ թողարկողը գործադրելով լավագույն ջանքեր և կիրառելով առկա գիտելիքները, սույն բաժնում ներկայացրել է

արժեթղթերից ստացվող եկամուտների հարկման մոտեցումները ՀՀ-ում, այնուամենայնիվ Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ ներդրողներն այն չպետք է համարեն հարկային խորհրդատվություն և ներդրումներ անելիս հիմնվեն միայն այս բաժնում ներկայացված նյութի վրա: Թողարկողը չի երաշխավորում, որ ներդրողի կողմից Ազդագրի ստացման և ծանոթացման պահին հարկային օրենսդրությունը կհամապատասխանի ներկայացվածին, կամ համարժեքորեն կիրառություն կունենա ՀՀ հարկային մարմինների կողմից և ցանկացած պարագայում խորհուրդ է տալիս օգտվել մասնագիտացված հարկային խորհրդատվական ծառայություններից: Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ սույնով զերծ է մնում ցանկացած ներդրողի հնարավոր պահանջներից կապված հարկային օրենսդրության և հարկման մեխանիզմների կիրառման և/կամ փոփոխության արդյունքում առաջացած ֆինանսական պահանջների նկատմամբ պատասխանատվությունից:

Ի. Պարտատոմսերով նախատեսված պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ նախատեսված չեն, քանի որ վերջիններս առանց ապահովման են:

2.4 Առաջարկի ժամկետները և պայմանները

2.4.1 Առաջարկի պայմաններ, առաջարկի վիճակագրություն

Ա. Առաջարկի ընդհանուր ծավալը: Բանկի կողմից թողարկվող պարտատոմսերի ընդհանուր անվանական ծավալը կազմում 25 000 000 ԱՄՆ դոլար, 5 000 000 եվրո, 3 000 000 000 ՀՀ դրամ: Թողարկվող և տեղաբաշխվող պարտատոմսերի ընդհանուր քանակը 250 000 հատ ԱՄՆ դոլարով, 50 000 հատ եվրոյով 30 000 հատ ՀՀ դրամով է:

Բ. Առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը: Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման սկիզբը ենթակա է որոշման Բանկի Խորհրդի կողմից:

Պարտատոմսերի յուրաքանչյուր տեղաբաշխման համար համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում Բանկի ինտերնետային կայքում՝ www.conversebank.am հրապարակային առաջարկի վերաբերյալ հայտարարության հրապարակումից առնվազն 2 (երկու) օր առաջ:

Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ավարտը ենթակա է որոշման Բանկի Խորհրդի կողմից:

Պարտատոմսերի վերջին տրանշի տեղաբաշխումն ավարտվում է ոչ ուշ, քան ՀՀ ԿԲ կողմից պարտատոմսերի ազդագիրը հաստատելուց հետո մեկ տարվա ընթացքում:

Որոշված ժամկետների փոփոխություն Բանկը չի նախատեսում:

Պարտատոմսերի առաջարկի և տեղաբաշխման հետաձգման կամ չեղյալ ճանաչման հանգամանքներ կարող են հանդիսանալ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 21 հոդվածով սահմանված հիմքերի առկայությունը: Մասնավորապես՝

1. Եթե Բանկը տեղաբաշխման ընթացքում ներկայացնում է ազդագրի լրացում, որը կապված է ազդագրում ներառված տեղեկատվության էական փոփոխության, նոր էական հանգամանքի կամ փաստի ի հայտ գալու հետ, ապա նա ներդրողի պահանջով պարտավորվում է չեղյալ համարել ներդրողի տված ակցեպտը և հետ վերադարձնել հայտ-հանձնարարականի հիման վրա նրանից ստացված միջոցները

և ձեռքբերման պահից մինչև տեղաբաշխման կասեցումն ընկած օրերի համար կուտակված տոկոսագումարը՝ համաձայն արժեկտրոնի հաշվարկման բանաձևի (էջ 37): Հետգնման պահանջը կարող է ներկայացվել ազդագրի լրացման հրապարակումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, ընդ որում՝ հետգնման պահանջը պետք է տեղաբաշխողին ներկայացվի գրավոր:

2. Տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել ՀՀ ԿԲ որոշմամբ այն դեպքերում, եթե՝

- տեղաբաշխման ընթացքում խախտվել են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի և հրապարակային առաջարկը կարգավորող այլ իրավական ակտերի պահանջները.
- տեղաբաշխման ընթացքում չեն պահպանվել ազդագրում սահմանված հրապարակային առաջարկի պայմանները.
- ազդագիրը պարունակում է էական սխալներ և ապակողմնորոշիչ տեղեկություններ, կամ նրանում էական փաստ է բաց թողնված կամ խեղաթյուրված:

Այս դեպքում տեղաբաշխումը կարող է շարունակվել ՀՀ ԿԲ-ի թույլտվությամբ՝ հայտնաբերված խախտումներն ու բացթողումները վերացնելու դեպքում:

3. Կասեցման ժամկետի ավարտի պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում տեղաբաշխումը չշարունակվելու դեպքում, տեղաբաշխողը պարտավոր է դադարեցնել տեղաբաշխումը եւ ներդրողներին վերադարձնել տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցները՝ կասեցման ժամկետի ավարտից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Տեղաբաշխումը չեղյալ ճանաչվելու դեպքում ներդրողների գումարները վերադարձվում են տեղաբաշխման չեղյալ ճանաչելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով՝ պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականներում ներդրողների կողմից նշված բանկային հաշիվների վրա փոխանցելու միջոցով: Բանկային հաշվեհամարի բացակայության կամ ճիշտ չլինելու դեպքում, գումարը վերադարձվում է ներդրողին կանխիկ՝ Բանկի գլխավոր գրասենյակում:

Բանկը պարտավորվում է տեղաբաշխումը կասեցնելու և շարունակելու, տեղաբաշխումը դադարեցնելու և դրա ընթացքում ստացված միջոցները վերադարձնելու մասին տեղեկատվությունը հրապարակել իր ինտերնետային կայքում՝ www.conversebank.am:

Գ. Առաջարկից օգտվելու համար դիմելու գործընթացը:

Պարտատոմսերում ներդրում կատարելու ցանկություն հայտնող անձինք (ֆիզիկական կամ իրավաբանական) սահմանված կարգով պետք է լրացնեն համապատասխան պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը (ֆիզիկական անձինք համաձայն Հավելված 2-ի, իրավաբանական անձինք համաձայն Հավելված 1-ի), պատշաճ կերպով ներկայացնեն Բանկ և կատարեն համապատասխան վճարում, որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմանների ընդունելը:

Վճարումը կատարվում է պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի պատշաճ կերպով Բանկ ներկայացման օրը, ոչ ուշ քան մինչև ժամը 16:30-ը, հատուկ թողարկման նպատակով Բանկում բացված թիվ **1930043129906501** (ԱՄՆ դոլարով

թողարկված պարտատոմսերի համար), **1930043129823704** (եվրոյով թողարկված պարտատոմսերի համար) և **1930043123398600** (ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի համար) տարանցիկ հաշվին կանխիկ մուտքագրման կամ փոխանցման միջոցով: Պարտատոմսերի դիմաց վճարվող գումարը հաշվարկվում է Ծրագրային ազդագրի 2.4 կետի 2.4.3 ենթակետում (էջ 46) ներկայացված բանաձևով հաշվարկված մեկ պարտատոմսի գինը բազմապատկելով ձեռք բերվող պարտատոմսերի քանակով՝ ընդ որում, եթե հայտ-հանձնարարականը ներկայացվել և համապատասխան գումարի վճարումը կատարվել է մինչ տվյալ օրվա 16:30-ն ներառյալ, ապա պարտատոմսի գինը հաշվարկվում է տվյալ օրով: Ժամը 16:30-ից հետո ներկայացված և/կամ վճարված հայտի համար վճարվող գումարի չափը հաշվարկվում է տվյալ օրվան հաջորդող աշխատանքային օրվա պարտատոմսի գնով:

Յուրաքանչյուր տրանշի պարտատոմսերի տվյալ օրվա գինը տեղաբաշխման ողջ ընթացքի համար Բանկը պարտավորվում է հրապարակել իր ինտերնետային կայքում՝ www.conversebank.am:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը համարվում է պատշաճ կերպով ներկայացված, եթե այն առաքվել է Բանկ ներքոնշյալ կապի միջոցներից որևէ մեկի միջոցով և ստացվել է հասցեատիրոջ կողմից առաքման ստացման հաստատում կամ ներկայացվել է Բանկ առձեռն: Այս դեպքում Բանկի աշխատակիցը պատճենում է հայտը, վրան կատարում «Ընդունված է բանկի կողմից» նշում, ընդունման օր/ամիս/տարեթիվ/ժամ, ընդունող աշխատակցի ստորագրություն և տրամադրում հաճախորդին:

Տեղաբաշխողի հետ կապի միջոցներն են՝

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, 0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1
հեռ. (+374 10) 511-206, (+374 10) 511-247
Գանձապետարան, Դիլինգ, Ֆինանսական շուկաների վարչություն
Էլեկտրոնային փոստ: **investment@conversebank.am,**
dealingcentre@conversebank.am,

կամ այցելելով Բանկի որևէ մասնաճյուղ: Մասնաճյուղերի ցանկը ներկայացված է Հավելված 5-ում:

Պարտատոմսերի ձեռքբերմանը մասնակցել ցանկացող ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք կարող են ներկայացնել մեկից ավելի հայտ-հանձնարարականներ:

Պարտատոմսերի տեղաբաշխման նախատեսված վերջնաժամկետից հետո թողարկման նպատակով բացված թիվ **1930043129906501** (ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի համար), **1930043129823704** (եվրոյով թողարկված պարտատոմսերի համար) և **1930043123398600** (ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի համար) տարանցիկ հաշիվներին ստացված գումարները ենթակա են հետ վերադարձման, իսկ դրանց համապատասխան հայտ-հանձնարարականները չեն կարող բավարարվել անկախ դրանց առաքման և/կամ Բանկի կողմից ստացման ժամկետից:

Դ. Առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորություն չի նախատեսվում:

Տեղաբաշխման կարգով պայմանավորված հնարավոր է պարտատոմսերի ձեռքբերման որևէ հայտ-հանձնարարականի մասնակի բավարարում, եթե հայտում նշված ծավալը գերազանցում է հայտ-հանձնարարականի ներկայացման պահին չտեղաբաշխված ծավալը: Այս դեպքում հայտ-հանձնարարականը բավարարվում է չտեղաբաշխված ծավալի չափով:

Հայտ-հանձնարարականի մասնակի բավարարման դեպքում, ներդրողին հետ վերադարձման ենթակա գումարը տեղաբաշխման ավարտից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Թողարկողն անկանխիկ եղանակով փոխանցում է համապատասխան ներդրողի բանկային հաշվին: Բանկային հաշվեհամարի բացակայության կամ ճիշտ չլինելու դեպքում, գումարը վերադարձվում է ներդրողին առձեռն՝ Բանկի Գլխամասային գրասենյակում:

Ե. Հայտի հետ կանչելը: Գնորդի կողմից ներկայացված և «Ընդունված է բանկի կողմից» նշումը պարունակող հայտը ենթակա չէ հետ կանչման:

Չբավարարված, հետ կանչված հայտերի (որոնց դիմաց վճարումը կատարվել է մինչև «Ընդունված է բանկի կողմից» հաստատումը ստանալը) համապատասխան գումարները Բանկը վերադարձնում է գնորդներին 3 աշխատանքային օր հետո՝ գնորդների համապատասխան հաշիվներին փոխանցելու միջոցով: Բանկային հաշվեհամարի բացակայության կամ ճիշտ չլինելու դեպքում, գումարը վերադարձվում է ներդրողին կանխիկ՝ Բանկի Գլխամասային գրասենյակում:

Հայտ-հանձնարարականի ներկայացումից հետո սահմանված ժամկետում համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտ-հանձնարարականները համարվում են անվավեր և չեն մասնակցում տեղաբաշխմանը:

Բացի վերոնշյալ դեպքերից, ներդրողները հայտ-հանձնարարականները պատշաճ կերպով առաքելուց, Բանկի կողմից հայտ-հանձնարարականի ստացման հաստատումը/ծանուցումը ստանալուց և համապատասխան վճարումը կատարելուց հետո չեն կարող դրանք հետ կանչել:

Զ. Հայտի առվելագույն և նվազագույն գումարը: Հայտ-հանձնարարականներում ձեռք բերվող պարտատոմսերի առավելագույն ծավալը սահմանափակված է տեղաբաշխման ծավալով, իսկ նվազագույն ծավալը սահմանվում է բանկի Խորհրդի կողմից՝ յուրաքանչյուր տեղաբաշխման համար առանձին:

Է. Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելը: Թողարկողի կողմից թողարկվող պարտատոմսերի ձեռքբերման համար իրավաբանական և/կամ ֆիզիկական անձիք վճարումը կատարում են թողարկման նպատակով «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում բացված **1930043129906501** (ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի համար), **1930043129823704** (եվրոյով թողարկված պարտատոմսերի համար) և **1930043123398600** (ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի համար) տարանցիկ հաշվեհամարին: Նշված հաշվեհամարին դրամական միջոցների ստացումից և հայտ-հանձնարարականի բավարարման կամ մասնակի բավարարման մասին որոշում ընդունելուց անմիջապես հետո Բանկը իր Ռեեստրավարին ներկայացնում է պարտատոմսերի տեղաբաշխման հանձնարարագիր՝ Թողարկողի թողարկման հաշվից համապատասխան քանակի պարտատոմսերի փոխանցման և ներդրողի կամ ներդրողի անվանատիրոջ արժեթղթերի հաշվին հաշվեգրման համար:

Թողարկողից իրենց հայտ-հանձնարարականների բավարարման կամ մասնակի բավարարման մասին տեղեկացվելուց հետո ներդրողներն արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող Պահառուից կամ Հաշվի Օպերատորից:
Իր Ռեեստրավարից ներդրողի կամ ներդրողի անվանատիրոջ դեպո հաշվին պարտատոմսերի փոխանցման վերաբերյալ համապատասխան հաստատում ստանալուց անմիջապես հետո Բանկը թողարկման նպատակով բացված **1930043129906501** (ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի համար), **1930043129823704** (եվրոյով թողարկված պարտատոմսերի համար) և **1930043123398600** (ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի համար) տարանցիկ հաշվեհամարից իր օգտագործման համար մատչելի է դարձնում համապատասխան հայտ-հանձնարարականում նշված դրամական միջոցները:
Ը. Տեղաբաշխման արդյունքների հրապարակումը: Տեղաբաշխման արդյունքները Թողարկողը հրապարակելու է Օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում: Տեղաբաշխման ավարտից հետո Բանկն իր ինտերնետային կայքում՝ www.conversebank.am հրապարակելու է տեղաբաշխման արդյունքները:
Թ. Նախապատվության իրավունքը: Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է ըստ պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականների և դրանց դիմաց կատարված վճարման ստացման հերթականության: Առաջնահերթության կարգով բավարարվելու են այն հայտերը, որոնց դիմաց վճարումը Թողարկման նպատակով «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում բացված **1930043129906501** (ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի համար), **1930043129823704** (եվրոյով թողարկված պարտատոմսերի համար) և **1930043123398600** (ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի համար) տարանցիկ հաշվեհամարին ավելի վաղ է ստացվել:
Թողարկվող պարտատոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք ունեցող անձիք չկան:

2.4.2 Տեղաբաշխման պլան

Ա. Առաջարկն ուղղված է ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձանց, ներառյալ որակավորված և ինստիտուցիոնալ ներդրողների, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերի: Պարտատոմսերի առաջարկն իրականացվելու է ազատ վաճառքի սկզբունքով՝ Բանկի Գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի միջոցով:
Բ. Հայտերի բավարարման մասին տեղեկացումը: Հայտ-հանձնարարականների բավարարման, մասնակի բավարարման կամ մերժման մասին Թողարկողը տեղեկացնում է Ներդրողներին մինչև հայտի ներկայացման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը: Հայտ-հանձնարարականների բավարարման մասին ներդրողին տեղեկացումը տրամադրվում է այն կապի միջոցով, որով ներդրողը Բանկ է ներկայացրել պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը/ները: Բանկի որևէ մասնաճյուղ ներկայացված հայտ-հանձնարարականի բավարարման, մասնակի բավարարման կամ մերժման մասին տեղեկանալու համար Ներդրողը պարտավոր է ներկայանալ բանկի տվյալ մասնաճյուղ:

2.4.3 Առաջարկի գին

Ա. Պարտատոմսերի տեղաբաշխման գինը: Պարտատոմսի տեղաբաշխման գինը որոշվելու է համաձայն հետևյալ բանաձևի.

$$DP = \frac{C}{f}\sum_{t=1}^{N}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{t-1+\tau}} + \frac{100}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+\tau}}$$

Որտեղ,

$$\tau = \frac{DSN}{DCC}$$

DP - պարտատոմսի գինն է (կլորացվում է ստորակետից հետո 4 նիշի ճշտությամբ թվաբանական կլորացման կանոնների համաձայն),
DSN – գործարքի կատարման օրից մինչև հաջորդ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,
DCC- գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,
f – արժեկտրոնի վճարման հաճախականությունն է,
N – հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը,
C – տարեկան արժեկտրոնը 100 միավոր անվանական արժեքի դիմաց,
y – մինչև մարում եկամտաբերություն:
Յուրաքանչյուր տրանշի պարտատոմսերի գինը տեղաբաշխման ողջ ընթացքի համար Բանկը պարտավորվում է հրապարակել իր ինտերնետային կայքում՝ www.conversebank.am:

Հաշվի առնելով թողարկվող պարտատոմսերի արժույթը, պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ և պարտատոմսերի և/կամ արժեկտրոնի մարումից գոյացած միջոցները այլ բանկեր/ից փոխանցելու դեպքում, ներդրողները պարտավոր են իրենց հաշվին հոգալ հնարավոր բանկային միջնորդավճարների հետ կապված ծախսերը:
Ներդրողները պարտավոր են նաև որևէ բանկում ունենալ ԱՄՆ դոլարով (ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսեր ձեռք բերելու դեպքում), եվրոյով (եվրոյվ թողարկված պարտատոմսեր ձեռք բերելու դեպքում) և ՀՀ դրամով հաշիվ, լիցենզավորված որևէ Հաշվի օպերատորի մոտ՝ արժեթղթերի հաշիվ և կրել դրանց հետ կապված ծախսերը:

2.4.4 Տեղաբաշխումը

Ա. Երաշխավորված Տեղաբաշխումը: Երաշխավորված տեղաբաշխում իրականացնողներ առկա չեն: Երաշխավորված տեղաբաշխման պայմանագիր չի կնքվել:

Բ. Չերաշխավորված տեղաբաշխում իրականացնողները: «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն տեղաբաշխելու է իր կողմից թողարկվող անվանական արժեկտրոնային ոչ փաստաթղթային 25 000 000 ԱՄՆ դոլար, 5 000 000 եվրո, 3 000 000 000 ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով պարտատոմսերը:

Գ. Տեղաբաշխման պայմանները: Թողարկողը և Տեղաբաշխողը նույն իրավաբանական անձն են՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ: Թողարկող/Տեղաբաշխողը այլ տեղաբաշխողների և/կամ խմբի հետ համատեղ տեղաբաշխման պայմանագիր չի կնքել:

Դ. Վճարում ընդունող բանկերը և պահառուները: Պարտատոմսերի դիմաց անհրաժեշտ է վճարում կատարել թողարկման նպատակով «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում (ՀՀ, 0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1, հեռ. (+374 10) 511-206, (+374 10) 511-247 բացված **1930043129906501** (ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի համար), **1930043129823704** (եվրոյով թողարկված պարտատոմսերի համար) և **1930043123398600** (ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի համար) տարանցիկ հաշվեհամարին: Եթե ներդրողը պարտատոմսերի ձեռք բերումը իրականացնելու է իր բրոքերային ընկերության միջոցով, ապա հարկավոր է վճարման գործընթացի մանրամասները հստակեցնել ներդրողի բրոքերային ընկերության հետ:

2.5 Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

Ա. Սույն Ծրագրային Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցելուց և պարտատոմսերը տեղաբաշխելուց հետո, Բանկը պարտադիր դիմելու է «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ-ին տեղաբաշխված պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և առևտրին թույլատրելու համար: Առևտրին թույլտվության հայտը կարող է չբավարարվել: Պարտատոմսերի առևտրի թույլտվություն չստանալու դեպքում, արտարժույթով արտահայտված պարտատոմսերի համար տեղաբաշխումը կհամարվի չեղյալ սույն Ծրագրային ազդագրի 2.4.1 կետով սահմանված կարգով:

Բ. Շուկաները: Այս պահին Թողարկողի կողմից սույն Ծրագրային Ազդագրով գրանցվող պարտատոմսերը թույլատրված չեն հրապարակային առևտրի ոչ մի շուկայում:

Գ. Շուկա ստեղծողի մասին տեղեկություններ: Թողարկողը մասնագիտացված անձանց հետ դեռ չի կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի (մարքեթ մեյքերի) ծառայություններից օգտվելու վերաբերյալ պայմանագիր:

Տեղբաշխված պարտատոմսերը «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ կարգավորվող շուկայում («ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ) ցուցակելու և առևտրին թույլատրելու դեպքում, Թողարկողը պարտադիր կնքելու է մասնագիտացված անձի/անձանց հետ երկրորդային շուկա ստեղծողի պայմանագիր:

Թողարկողը պարտավորվում է մասնագիտացված անձանց հետ երկրորդային շուկայում շուկա ստեղծողի պայմանագրի կնքումից հետո ողջամիտ ժամկետներում տեղեկացնել իր պատատոմսերի սեփականատերերին և անվանատերերին նման պայմանագրի ուժի մեջ մտնելու վերաբերյալ:

Դ. Պարտատոմսերի հաշվառմամբ զբաղվող կազմակերպություններ: Պարտատոմսերի սեփականատերերը կարող են այդ պարտատոմսերի իրավունքներն ու պարտավորությունները հաշվառել օրենքով սահմանված կարգով

լիցենզավորված Հաշվի օպերատորների մոտ՝ համապատասխան արժեթղթերի հաշիվ բացելու միջոցով: Պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվում է ՀՀ օրենսդրությամբ և պահառուի ներքին կանոնակարգերով սահմանված կարգով:
Թողարկողի պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրը վարելու է «Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ (ՀՀ, ք. Երևան, 0010, Միեր Մկրտչյան 5Բ, հեռ. +(37410) 543321՝ ըստ «Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի համապատասխան կանոնների, ընթացակարգերի:

2.6 Լրացուցիչ տեղեկատվություն

1. Խորհրդատուներ: Սույն Ազդագրի պատրաստման ընթացքում Թողարկողը չի օգտվել երրորդ անձ խորհրդատուների ծառայություններից:
2. Փորձագետների մասնագիտական կարծիքը և այլ անձանցից ստացված տեղեկությունները: Թողարկողը չի օգտվել երրորդ անձ փորձագետի կամ խորհրդատուի ծառայություններից և չի օգտագործել վերջիններիս մասնագիտական կարծիքը սույն ազդագրում:
3. Աուդիտորական եզրակացությունը: Բացի սույն Ծրագրային Ազդագրում ներկայացված Թողարկողի պատմական ֆինանսական հաշվետվություններից, որոնք ենթարկվել են աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից, սույն Ծրագրային Ազդագրում ներկայացված այլ տեղեկատվություն չի ենթարկվել աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից: Հաշվետվությունների և դրանց վերաբերյալ անկախ աուդիտորական կազմակերպությունների կողմից տրված եզրակացությունների պատճենները ներկայացված են Ազդագրի Հավելված 7-ում:
4. Պարտատոմսերով նախատեսված պարտավորությունների երաշխավորողի վերաբերյալ տեղեկություններ:
Պարտատոմսերով նախատեսված պարտավորությունների երաշխավորող չկա, քանի որ տեղաբաշխվող պարտատոմսերն առանց ապահովման են:
5. Թողարկողի վարկանիշը: 2017թ-ի Նոյեմբերի 1-ին Moody's Investor Service, Inc. միջազգային վարկանշող կազմակերպության կողմից Կոնվերս Բանկ ՓԲԸ-ին տրվել են հետևյալ վարկանիշները՝

Վարկանիշի դաս	Վարկանիշ
Հեռանկար	Կայուն
Բանկային ավանդներ	B2 /երկարաժամկետ/ NP /կարճաժամկետ/
Հիմնական վարկային գնահատական	b2
Հիմնական վարկային գնահատական (ճշգրտված)	b2
Գործընկերոջ ռիսկի գնահատական	B1(cr) /երկարաժամկետ/ NP(cr) /կարճաժամկետ/

Թողարկվող պարտատոմսերին վարկանիշ չի շնորհվել:

ԲԱԺԻՆ 3. ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

3.1 Անկախ աուդիտորները

2011-2014թթ. ընթացքում Բանկի արտաքին աուդիտն իրականացվել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի կողմից՝ հասցեն ՀՀ, 0012, ք. Երևան, Վաղարշյան 8/1, հեռ. (+374 10) 260-964, ֆաքս: (+374 10) 260-961, ինտերնետային կայք՝ www.gta.am: Կազմակերպության տնօրեն-բաժնետեր է հանդիսանում Գագիկ Գյուլբուդաղյանը:
Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից որպես Բանկի 2012-2014թթ. գործունեության աուդիտն իրականացնող աուդիտորական կազմակերպություն է ընտրվել «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն: 2016թ.-ի և 2017թ.-ի Բանկի գործունեության աուդիտն իրականացնող կազմակերպություն է ընտրվել «Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ-ն: Ընկերության հասցեն ՀՀ, 0001, ք. Երևան, Հյուսիսային պող. 1 գրասենյակ 27, հեռ. (+374 10) 500-790, ֆաքս: (+374 10) 500-706, ինտերնետային կայք՝ www.ey.com/am: Կազմակերպության Գլխավոր տնօրեն է հանդիսանում Հակոբ Սարգսյանը:
Աուդիտի նպատակն է ձեռք բերել բավարար երաշխիքներ՝ համոզվելու համար, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական անճշտություններից:
Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա ընթացքում թողարկողի աուդիտն իրականացրած անձանց կողմից աշխատանքից հրաժարման, վերընտրությանը չմասնակցելու, աշխատանքից ազատման դեպքեր չեն եղել:

3.2 Ռիսկային գործոններ

Թողարկողին առնչվող ռիսկեր: Սույն Ծրագրային ազդագրով առաջարկվող պարտատոմսերում ներդրումը կապված է որոշակի ռիսկերի հետ: Պոտենցիալ ներդրողը, մինչև պարտատոմսերում ներդրում կատարելու մասին որոշում ընդունելը, պետք է շրջահայաց լինի և հաշվի առնի ստորև բերված ռիսկերը և սույն ազդագրում ներառված այլ տեղեկատվությունը, ինչպես նաև իր փորձը, նպատակները, ֆինանսական ռեսուրսները, ռիսկի ախորժակը և եկամուտի սպասումները: Ներկայացված ռիսկերից յուրաքանչյուրը կամ դրանցից մի քանիսը կարող են բացասաբար անդրադառնալ Բանկի վիճակի վրա՝ արդյունքում հանգեցնելով Բանկի կողմից ստանձնած պարտավորությունների չկատարմանը կամ շուկայում պարտատոմսերի գնի կամ իրացվելիության անկմանը: Նշվածի արդյունքում ներդրողը կարող է կորցնել ներդրված գումարը կամ դրա մի մասը:
Պոտենցիալ ներդրողը պետք է գիտակցի, որ ստորև բերված ռիսկերը ոչ բոլոր ռիսկերն են, որ թողարկողը կարող է երբևէ կրել: Թողարկողը բացահայտել է միայն այն ռիսկերը, որոնք նա համարել է էական: Ենթադրաբար, կարող են լինել լրացուցիչ ռիսկեր, որոնք թողարկողն այժմ չի համարում էական կամ որոնք ներկայումս հայտնի չեն, և ցանկացած այդպիսի ռիսկ կարող է թողնել վերևում նշված ազդեցությունն ու հետևանքը:
Ռիսկի ստանձնումը ֆինանսական գործունեության անբաժանելի մասն է ու հետևանքը, և Բանկը հետևողականորեն իրականցնում է ռիսկերի աստիճանի ու համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում: Բանկի

նպատակն է հասնել ռիսկերի և օգուտների միջև համապատասխան հավասարակշռության և նվազագույնի հասցնել Բանկի ֆինանսական վիճակի վրա դրանց անցանկալի ազդեցությունները:

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ ռիսկերի կառավարման գործընթացի նպատակն է ռիսկերի նվազեցմանն ուղղված համալիր միջոցառումների, սահմանաչափերի և ներքին իրավական ակտերի շրջանակներում օժանդակել Բանկի ղեկավարությանը կայացնելու որոշումներ, որոնք թույլ են տալիս արդյունավետ կառավարել Բանկի և Բանկի հաճախորդների ակտիվների և պարտավորությունների հետ առնչվող ռիսկերը, ինչպես նաև հնարավոր ռիսկերով պայմանավորված կորուստների բացառման կամ դրանց նվազագույնի հասցնելու միջոցով, շահութաբերության, իրացվելիության և վճարունակության սահմանաչափերի ընդունելի մակարդակի ապահովումը: Ռիսկերի կառավարումը հիմնվում է Բանկի իրավասու մարմնի կողմից հաստատված ընթացակարգերի, կարգերի, նորմատիվների և սահմանաչափերի վրա: Բանկի ռիսկերի բացահայտումը, չափումը, վերահսկումը և մոնիտորինգը կրում են պարբերական և շարունակական բնույթ: Ռիսկերի վերլուծությունը հանդիսանում է Բանկի ռազմավարական պլանավորման, ինչպես նաև ներդրումային ծրագրերի գնահատման մի մասը: Բանկի ռիսկերի կառավարման սկզբունքներին են դասվում.

1. ճգնաժամային իրավիճակներում ռիսկերի կառավարման ոչ ստանդարտ ընթացակարգերի օգտագործումը,
2. ֆինանսական դրության կայունության ստուգման նպատակով սթրես սցենարների պարբերաբար կիրառումը,
3. ակտիվներում բիզնես գործառնությունների և վարկային պորտֆելի տեսակների կենտրոնացումից խուսափելը,
4. Բանկի ակտիվների և պարտավորությունների դիվերսիֆիկացումը,
5. Բանկի կողմից ստանձնված ռիսկերի համապատասխան հաճախականությամբ մոնիտորինգի իրականացումը,
6. բանկային ռիսկերի կենտրոնացված կառավարումը,
7. ռիսկերի կառավարման վարչության և այլ ստորաբաժանումների միջև անընդհատ կապը:

Ռիսկերի կառավարման կառուցվածք: Բանկում ռիսկերի կառավարումը կազմակերպում և կոորդինացնում է Գլխավոր գործադիր տնօրենը՝ Բանկի Խորհրդի կողմից հաստատված ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Բանկում ռիսկերի կառավարումն իրականացվում է հստակ և փաստաթղթավորված կերպով նկարագրված բոլոր բիզնես գործընթացների, վերջիններիս գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերի, բոլոր գործընթացների և գործառնությունների համար սահմանված համապատասխան սահմանաչափերի միջոցով:

Բանկի Խորհուրդ: Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության և ռիսկերի կառավարման քաղաքականության, ինչպես նաև ռիսկերի կառավարմանը վերաբերող այլ քաղաքականությունների հաստատման համար, որոնց հիման վրա Բանկի Գլխավոր գործադիր տնօրենը կազմակերպում է ռիսկերի կառավարումը՝ հիմք ընդունելով ռիսկերի կառավարման սահմանաչափերը և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջները:

Տնօրինություն: Բանկում ռիսկերի կառավարման կազմակերպման նպատակով Բանկի Տնօրինությունն իրականացնում է՝

- ճգնաժամային իրավիճակներում Բանկի եկամտաբերության հետ կապված, ինչպես նաև գործառնական, ռազմավարական, վարկանիշային և իրավական ռիսկերին առնչվող Բանկի ռիսկերի կառավարման տեսակետի հիման վրա Խորհրդի համաձայնությամբ համալիր միջոցառումների հաստատում,
- որոշակի գործարքների հանդեպ արգելքների սահմանում,
- միջբանկային շուկայում առանց ապահովվածության իրականացվող գործառնությունների սահմանաչափերի սահմանում,
- բանկային ռիսկերի կարգավորման և վերահսկման ներքին նորմատիվների սահմանում:

Տնօրինությունը պատասխանատու է Բանկի ակտիվների և պարտավորությունների կառավարման, ինչպես նաև ողջ ֆինանսական համակարգի համար: Տնօրինությունը պատասխանատվություն է կրում նաև Բանկի իրացվելիության ֆինանսական ռիսկերի համար: Տնօրինությանն է վերապահված Բանկի Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի գործառույթները:

Ռիսկերի կառավարման ստորաբաժանում: Ռիսկերի կառավարման դեպարտամենտի հիմնական գործառույթներն են՝

- Բանկում ռիսկերի կառավարման գործուն մեխանիզմների և գործընթացների մշակումն ու ներդրումը, դրանց ներդրման նկատմամբ հսկողության իրականացումը,
- Բանկի կողմից տրամադրվող վարկերի ռիսկայնության վերլուծությունը և ծրագրային վարկերի տրամադրման գործընթացի նկատմամբ հսկողությունը,
- տրամադրված վարկերի մոնիտորինգը, խնդիրների բացահայտումը և դրանց վերաբերյալ հաշվետվությունների ներկայացումը,
- գրավադրվող գույքի գնահատումների նկատմամբ վերահսկողության իրականացումը և գրավադրված գույքի վերագնահատումների պարբերական իրականացումը,
- Բանկի սեփականությունը հանդիսացող գույքի ապահովագրության գործընթացի կազմակերպումը,
- խնդրահարույց վարկային պորտֆելի կառավարումը:

Ներքին աուդիտ: Բանկի կողմից իրականացվող ռիսկի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում Ներքին աուդիտի բաժնի կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը և արդյունավետությունը, այնպես էլ Բանկի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի բաժինը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Բանկի խորհրդին:

Բանկի գործունեության հետ կապված ռիսկեր: Բանկային գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն: Կարևորագույն ռիսկերն են վարկային ռիսկը, շուկայական ռիսկը, իրացվելիության ռիսկը, ինֆլյացիոն կամ գնողունակության ռիսկը, գործառնական ռիսկը:

<u>Աճող մրցակցություն շուկայի համակենտրոնացման արդյունքում:</u> Բանկային ոլորտին բնորոշ է բարձր մրցակցությունը, հետևաբար շուկայում մրցակիցների

ակտիվության բարձրացումը կարող է բացասաբար անդրադառնալ Թողարկողի տնտեսական և ֆինանսական ցուցանիշների վրա: Սույն ազդագրի պատրաստման պահին բանկային հատվածում առկա են բանկեր, որոնք իրենց չափերով համադրելի են Թողարկողի հետ, ինչի արդյունքում սրվում է մրցակցությունը: Սակայն Թողարկողը նույնպես ակտիվորեն մասնակցում է ոլորտի գործընթացներին՝ փորձելով ապահովել իր առաջատար դիրքը:

Աշխարհաքաղաքական ռիսկ: Աշխարհաքաղաքական, տարածաշրջանային և ներքաղաքական իրավիճակի անբարենպաստ փոփոխությունների արդյունքում հնարավոր է առաջ գան այնպիսի բացասական գործոններ, որոնք կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ ընդհանուր մակրոտնտեսական իրավիճակի վրա, որն իր հերթին կարող է մեծացնել չաշխատող վարկերի տեսակարար կշիռը, ավելացնել պահուստավորման ծախսերը ու իջեցնել Բանկի շահութաբերությունը:

Նորմատիվային և օրենսդրական դաշտի փոփոխություններ: Թողարկողը գործում է ՀՀ տնտեսության ամենավերահսկվող ոլորտներից մեկում: Հնարավոր է, որ 2018թ-ից Բազել 3 ստանդարտների ներդրումը դրական կամ բացասական ազդեցություն ունենա բանկի գործունեության և ֆինանսական ցուցանիշների վրա:

Բանկին առնչվող ռիսկերի զսպման ուղղությամբ Թողարկողի կողմից իրականացվող միջոցառումների առավել մանրամասն նկարագրությանը ներկայացված է ստորև:

Վարկային ռիսկ: Բանկի գործունեությունն ենթարկվում է վարկային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարման հետ, որի արդյունքում Բանկը կարող է վնասներ կրել: Վարկային ռիսկը Բանկի կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Բանկն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Վարկային ռիսկը հիմնականում առաջանում է վարկային գործունեությունից՝ կապված վարկերի և փոխառությունների տրամադրման հետ, և ներդրումային գործունեությունից՝ պայմանավորված Բանկի ակտիվների պորտֆելում պարտքային արժեթղթերի և այլ պարտքային գործիքների առաջացման հետ: Վարկային ռիսկ առկա է նաև մի շարք հետհաշվեկշռային հոդվածներում, ինչպես օրինակ վարկային պարտավորվածությունները: Վարկային ռիսկը կառավարվում է համաձայն Բանկի վարկային քաղաքականության և ոլորտը կարգավորող այլ ներքին իրավական ակտերի:

Ռիսկերի կառավարման դեպարտամենտի կողմից կատարվում է վարկային պորտֆելի շաբաթական կտրվածքով մոնիտորինգ, կառուցված շարքերի հիման վրա վարկային պորտֆելի դինամիկայի հաշվարկ և պորտֆելի որակի վերլուծություն ըստ վարկատեսակների ու մասնաճյուղերի, ինչի հիման վրա կատարվում են վարկային պորտֆելի որակական ցուցանիշների կանխատեսումներ: Ռիսկերի կառավարման դեպարտամենտը իրականացնում է նաև տարբեր վարկատեսակների վարկերի մոնիտորինգ՝ հաստատված ընթացակարգերով, իսկ հարկ եղած դեպքում առանձին վարկերի մոնիտորինգ՝ ելնելով վարկառուի վարկունակության վատթարացումից: Ներքին իրավական ակտերի պահանջների համաձայն՝ վարկային ռիսկը նվազեցնելու նպատակով Բանկի կողմից տրամադրվող վարկերը նաև հաստատվում են Ռիսկերի կառավարման դեպարտամենտի կողմից:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը լավագույնս ներկայացնում է նրանց վարկային ռիսկին

առավելագույն ենթարկվածությունը՝ առանց հաշվի առնելու պահվող գրավը կամ վարկի որակի բարելավման այլ միջոցները:

Ռիսկի կենտրոնացումներ: Վարկային ներդրումների բաշխվածության տեսանկյունից, ըստ վարկատեսակի, Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը 2017թ դեկտեմբեր ամսվա կազմել է 0.1024, ինչը վկայում է Բանկի վարկային ներդրումների բաշխվածության չափավոր կենտրոնացվածության մասին:

Ռիսկի սահմանաչափերի վերահսկողություն և զսպողական քաղաքականություն: Բանկը կառավարում է վարկային ռիսկի կենտրոնացումները՝ մեկ փոխառուի կամ փոխառուների Բանկի, ինչպես նաև վարկավորման ճյուղային կտրվածքով: Բանկը կարգավորում է վարկային ռիսկի մակարդակները՝ մեկ փոխառուի կամ փոխառուների Բանկի, ինչպես նաև վարկավորման ճյուղային կտրվածքով ռիսկի ընդունելի գումարների սահմանաչափեր սահմանելով: Նման ռիսկերը ամսեկան վերահսկվում են:

Մեկ վարկառուի գծով վարկային ռիսկի չափը, ներառյալ բանկերը և ֆինանսական կազմակերպությունները, լրացուցիչ սահմանափակում է հաշվեկշռային և հետհաշվեկշռային ռիսկերի համար լրացուցիչ սահմանաչափերով:

Վարկային ռիսկը նաև կառավարվում է վարկառուների և պոտենցիալ վարկառուների՝ մայր գումարի և տոկոսների վճարման ունակությունը պարբերաբար վերլուծելով և անհրաժեշտության դեպքում վարկի տրամադրման սահմանաչափերը փոխելով:

Ստորև ներկայացված են հատուկ հսկողության և զսպողական մի քանի այլ միջոցներ:

Գրավ: Բանկը կիրառում է բազմաթիվ միջոցներ վարկային ռիսկը զսպելու համար: Առավել ավանդական մոտեցում է համարվում տրամադրված դրամական միջոցների դիմաց գրավ վերցնելը, որը նաև համընդհանուր ընդունված գործելակերպ է: Բանկը կանոններ է սահմանում ընդունելի գրավի տեսակների կամ ռիսկերի նվազեցման ուղղությամբ: Վարկերի և փոխառությունների համար գրավի հիմնական տեսակներն են.

- Հիփոթեքային պայմանագրերով գրավադրվող անշարժ գույքը,
- Կազմակերպությունների գործառնական ակտիվները՝ շենքերը, պաշարները և մեքենաները,
- Ոսկին և դրամական միջոցները:

Իրավաբանական անձանց երկարաժամկետ ֆինանսավորումը և վարկավորումը հիմնականում ապահովված են: Ֆիզիկական անձանց գծով վերականգնվող վարկային գծերը, որպես կանոն, ապահովված չեն: Ի լրումն, վարկային կորուստը նվազագույնի հասցնելու նպատակով, առանձին վարկերի և փոխառությունների գծով արժեզրկման հայտանիշների ի հայտ գալու դեպքում, Բանկը վարկառուից լրացուցիչ ապահովություն է պահանջում: Վարկերի և փոխառություններց բացի այլ ֆինանսական ակտիվների գծով ապահովություն հանդիսացող գրավի տեսակը որոշվում է՝ ելնելով գործիքի էությունից: Հիմնականում բանկերին վարկեր և փոխառություններ տրամադրելու համար գրավներ չեն պահանջվում: Բացառություն են կազմում այն գրավները, որոնք ձեռք են բերվել հետգնման պայմանագրերի և արժեթղթերի փոխառության գործարքներից: Պարտատոմսերը և այլ պարտքային արժեթղթերը հիմնականում ապահովված չեն:

Համախառն վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության.

	31/12/2017թ. Դրությամբ հազար ՀՀ դրամ (աուդիտ չանցած)	*31/12/2016թ. Դրությամբ հազար ՀՀ դրամ (աուդիտ անցած)*
Անշարժ գույքի գրավադրմամբ վարկեր	82,040,110	58,061,771
Ոսկու գրավով վարկեր	15,950,465	13,485,219
Կազմակերպությունների երաշխիքներով ապահովված վարկեր	6,383,684	5,895,609
Տրանսպորտային միջոցների գրավադրմամբ վարկեր	2,320,430	1,977,955
Դրամական միջոցներով ապահովված վարկեր	34,978,334	27,221,417
Պաշարների գրավադրմամբ վարկեր	676,734	896,863
Սարքավորումների գրավադրմամբ վարկեր	3,300,657	1,485,529
Այլ արժեթղթեր	5,541,894	4,513,789
Այլ գրավներ	7,231,871	5,155,737
Չապահովված վարկեր	11,606,672	7,885,131
(Ընդամենը վարկեր և փոխառություններ համախառն)	**170,030,851**	**123,579,020**

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա վարկերի տրամադրման ամսաթվի դրությամբ: Հիմնականում դրանք չեն թարմացվում մինչև վարկերը չգնահատվեն որպես անհատապես արժեզրկված:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ անհատապես արժեզրկված վարկերի գծով գրավների իրական արժեքը կազմում է 7,808,184 հազ. դրամ :

Վարկերի հետ կապված պայմանական պարտավորություններ: Այս գործիքների հիմնական նպատակն անհրաժեշտության դեպքում հաճախորդներին միջոցներ տրամադրելն է: Երաշխիքները և ակրեդիտիվները ենթակա են նույն վարկային ռիսկին, ինչ վարկերը: Ապրանքային և փաստաթղթային ակրեդիտիվները Բանկի գրավոր հավաստումներն են հաճախորդների անունից, որոնք թույլ են տալիս չորրորդ անձանց գումարներ ստանալ Բանկից հատուկ պայմանների կատարման դեպքում, ապահովված են դրանց հետ կապված ապրանքների առաքմամբ, և, հետևաբար, դրանք ավելի ապահով են, քան ուղղակի տրամադրվող վարկերը:

Վարկի տրամադրման պայմանական պարտավորություններն իրենցից ներկայացնում են վարկային գծերի չօգտագործած մասերը: Այս դեպքում, հնարավոր կորուստների գումարը, որ Բանկը կարող է կրել, հավասար է չօգտագործված վարկային գծերի գումարին:

Սակայն հնարավոր վնասի իրական գումարն ավելի փոքր է, քան չօգտագործված վարկային գծերի ընդհանուր գումարը, քանի որ վարկային պարտավորությունները տրամադրվում են վարկառուների կողմից վարկերի տրամադրման որոշակի ստանդարտների պահպանման դեպքում: Բանկը հետևում է պարտավորությունների մարման ժամկետներին, քանի որ երկարաժամկետ պարտավորությունները պարունակում են ավելի բարձր վարկային ռիսկ, քան կարճաժամկետ պարտավորությունները:

Արժեզրկման և պահուստավորման քաղաքականություն: Վարկերի արժեզրկումը գնահատելու հիմնական գործոնները հետևյալն են. արդյոք տոկոսների և մայր գումարի վճարումները ժամկետանց են, արդյոք հայտնի են գործընկերների որևէ ֆինանսական դժվարությունների, նրանց վարկային վարկանիշի նվազման կամ պայմանագրի սկզբնական պայմանների խախտման դեպքեր: Բանկը գնահատում է վարկերի արժեզրկումը՝ ելնելով արժեզրկված վարկերի ապագա դրամական հոսքերի վերլուծությունից և արժեզրկման հայտանիշեր չունեցող վարկերի գծով կորուստների նախկին փորձից, ցուցաբերելով պահպանողական մոտեցում:

Անհատապես գնահատվող պահուստներ: Բանկն անհատապես սահմանում է յուրաքանչյուր անհատապես էական վարկի պահուստի ստեղծման անհրաժեշտությունը: Պահուստների չափի որոշման ժամանակ հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները.

- գործընկերոջ գործարար-ծրագրի կայունությունը,
- ֆինանսական բարդությունների ծագման դեպքում նրա ունակությունները բարելավելու գործունեության արդյունքները,
- սնանկացման պարագայում՝ կանխատեսվող ստացվելիք գումարները և ակնկալվող վճարման ենթակա շահաբաժինների գումարները,
- ֆինանսական օգնության ներգրավման հնարավորությունը,
- ապահովման միջոցի իրացման արժեքը, ինչպես նաև դրամական միջոցների ակնկալվող ժամկետները:

Արժեզրկումից վնասները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ կամ ավելի հաճախ, եթե չնախատեսված իրավիճակը պահանջում է ավելի մեծ ուշադրություն:

Բանկային հիմունքով գնահատվող պահուստներ: Անհատապես էական չհանդիսացող վարկերի (ներառյալ վարկային քարտերը, հիփոթեքային վարկերը և չապահովված սպառողական վարկերը), ինչպես նաև անհատապես էական, բայց անհատապես արժեզրկման օբյեկտիվ հայտանիշեր չունեցող վարկերի գծով պահուստները գնահատվում են Բանկային հիմունքներով: Պահուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, այդ թվում յուրաքանչյուր վարկային պորտֆել թեստավորվում է առանձին:

Բանկային հիմունքով գնահատման դեպքում որոշվում է պորտֆելի արժեզրկումը, որը կարող է տեղի ունենալ նույնիսկ անհատական արժեզրկման օբյեկտիվ հայտանիշերի բացակայության դեպքում: Արժեզրկումից վնասները որոշվում են հետևյալ տեղեկատվության հիման վրա. պորտֆելի գծով նախորդ ժամանակաշրջանների վնասները, ընթացիկ տնտեսական պայմանները, մոտավոր ժամանակահատվածը՝ սկսած հնարավոր կորստի պահից մինչև այն պահը, երբ

կհաստատվի, որ այն պահանջում է անհատապես գնահատվող արժեզրկման պահուստի ստեղծում, ինչպես նաև, ստացման ենթակա ակնկալվող գումարները և ակտիվի արժեզրկումից հետո արժեքի վերականգնումը:

Չարժեզրկված, ոչ ժամկետանց վարկեր և փոխառություններ:

Ստորև աղյուսակում ներկայացված է վարկերի և փոխառությունների որակն ըստ դասերի.

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (աուդիտ չանցած) Հազար ՀՀ դրամ	Ոչ ժամկետանց և չարժեզրկված			Ժամկետանց		Ընդամենը
	Բարձր վարկանիշ	Ստան-դարտ վարկանիշ	Ցածր վարկա-նիշ	բայց ոչ անհատապես արժեզրկված	Անհատա-պես արժեզրկված	
Հաճախորդ-ներին տրված վարկեր և փոխառություն-ներ	34,978,334	126,653,387		1,145,174	7,253,956	170,030,851

Ժամկետանց, բայց ոչ անհատապես արժեզրկված վարկեր: Ժամկետանց, բայց ոչ անհատապես արժեզրկված վարկերը և փոխառությունները ներառում են ժամկետանց, բայց ոչ անհատապես արժեզրկված վարկերը: Ժամկետանց, բայց ոչ անհատապես արժեզրկված վարկերի վերլուծությունը՝ ըստ վճարման ուշացման ժամկետների հետևյալն է.

31/12/2017թ. դրությամբ (աուդիտ չանցած) հազար ՀՀ դրամ					
	Մինչև 30 օր	*31-60 օր*	*61-90 օր*	*90 օրից առավել*	*Ընդամենը*
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ					
Արդյունաբերություն	0	10,016	5,296	14,672	29,984
Գյուղատնտեսություն	186	2,637	4,788	26,842	34,454
Շինարարություն	909	0	0	0	909
Առևտուր	0	0	14,196	14,923	29,119
Տրանսպորտ և կապ	0	0	0	12,014	12,014
Սպառողական վարկեր ֆիզիկական անձանց	194,988	133,290	71,080	308,747	708,105
Հիփոթեքային վարկեր	42,914	66,224	17,632	199,623	326,394
Ծառայությունների ոլորտ	0	0	0	0	0
Այլ	0	0	0	4,195	4,195
Ընդամենը	**238,997**	**212,167**	**112,992**	**581,016**	**1,145,174**

Միաժամանակ բանկի վարկային ռիսկը բնութագրող ցուցանիշներն ունեն հետևյալ տեսքը:

Վարկերի գծով պահուստ/ընդհանուր վարկեր= 2.86%

Չաշխատող վարկեր/ընդհանուր վարկեր= 4.94%

Վարկերի գծով պահուստ/ընդհանուր կապիտալ =13.51%

Շահույթի ծածկման գործակից (զուտ գործառնական եկամուտներ+պահուստի ստեղծման ծախսեր)/վարկերից զուտ կորուստ=254.1%:

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները կամ շուկայական ռիսկը տոկոսադրույքների, արժեթղթերի գների և (կամ) արժութային փոխարժեքների տատնումների արդյունքում վնաս կրելու հավանականությունն է: Բանկը տարանջատում է շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների: Առևտրային պորտֆելի շուկայական ռիսկը կառավարվում և վերահսկվում է ՎաՌ մեթոդով, որը արտացոլում է ռիսկի փոփոխականների միջև կախվածությունը: Ոչ առևտրային պորտֆելը կառավարվում և վերահսկվում է զգայունության վերլուծության միջոցով:

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Բանկի ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա:

Բանկը տոկոսադրույքի ռիսկի կառավարման համար ընտրել է տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ զգայունության ճեղքվածքի և դյուրացիայի մոդելները: Խորհրդի կողմից սահմանվել է ռիսկի ախորժակ տոկոսադրույքի ռիսկի համար, որը հաշվարկվում և վերահսկվում է ամսական կտրվածքով:

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով:

Արտարժութային ռիսկը Բանկը կառավարում է օգտվելով ստանդարտ, ՎաՌ (Value At Risk) և ոչ պարամետրիկ ՎաՌ մեթոդաբանություններից: Օրական կտրվածքով կատարվում է արտարժութային կուրսերի մոնիթորինգ, որի հիման վրա ամսվա վերջին գալիք ամսվա համար կատարվում է արտարժութային փոխարժեքների կանխատեսում: Բանկն իր արտարժութային դիրքը կառավարում է օրական կտրվածքով՝ Բանկում գործող ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Բաց դիրքերի դեպքում արտարժութային փոխարժեքների անբարենպաստ տատանումներից կորստի չափը և ակտիվների ու պարտավորությունների ճկունության աստիճանը գնահատելու նպատակով ամսական կտրվածքով կիրառվում են նաև սթրես-թեսթեր:

Իրացվելիության ռիսկը կապված է Բանկի ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում:

Տվյալ ռիսկը զսպելու նպատակով իրականացվում է ակտիվների և պարտավորությունների կառավարում՝ ապագա դրամական հոսքերի և իրացվելիության օրական վերահսկողություն, ֆինանսավորման տարբեր աղբյուրների ապահովում՝ ի լրումն արդեն իսկ գոյություն ունեցող բանկային ավանդների հիմնական բազայի:

Բանկը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Բացի այդ ՀՀ կենտրոնական բանկում պահում է իր դրամով պարտավորությունների 2%-ի և արտարժույթով պարտավորությունների 18%-ի չափով պահուստավորման գումար: Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում՝ հաշվի առնելով շուկայի հետ ընդհանրապես և Բանկի հետ մասնավորապես կապված սթրես գործոնները:

Բանկի իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար վերջիններիս մարման ժամանակ, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Բանկը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան: 31.12.2017թ.-ի դրությամբ իրացվելիության գործակիցները կազմել են՝

Դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ հարաբերակցությունը կազմել է՝	**31/12/2017թ., %**	**2016թ., %**
Ն21 – Ընդհանուր իրացվելիություն (բարձր իրացվելի ակտիվներ/Ընդհանուր ակտիվներ)	35.26	39.01
Ն22 – Ընթացիկ իրացվելիություն (բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ)	102.49	116.23

Գործառնական ռիսկը Գործառնական ռիսկ է համարվում ոչ ադեկվատ կամ սխալ ներքին գործընթացների, մարդկային գործոնի, համակարգերի և արտարքին միջավայրի ազդեցության հետևանքով կորուստի առաջացման հավանականությունը կամ առաջացած ուղղակի կորուստը, որը բացասական ազդեցություն կունենա բանկի կապիտալի և շահույթի վրա:

Գործառնական ռիսկերի կառավարման բարձրագույն մարմինը Բանկի Տնօրինությունն է, որը պատասխանատու է գործառնական ռիսկերի վերահսկման համար:

Բանկի նպատակն է կառավարել գործառնական ռիսկը ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից՝ հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկերի կառավարումն իրականացվում է հստակ և փաստաթղթավորված կերպով նկարագրված բոլոր բիզնես գործընթացների, վերջիններիս գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերի, բոլոր գործընթացների և գործառնությունների համար սահմանված համապատասխան սահմանաչափերի, Բանկի կողմից իրականացվող ցանկացած գործարքի ընթացքում կրկնակի ստուգման սկզբունքի միջոցով:

Գործառնական ռիսկի առավել արդիական տեսակների կառավարումը նկարագրված է ստորև:

Իրավական ռիսկ. Բոլոր ստանդարտ պայմանագրերի օրինակելի ձևերը մշակվում են Իրավաբանական վարչության կողմից համապատասխան ստորաբաժանման հետ համագործակցության միջոցով և հաստատվում են Վարչության կողմից:

Բանկի առօրյա գործունեության ընթացքում Բանկի և չորրորդ անձանց հետ փոխհարաբերությունները կարգավորող ոչ ստանդարտ պայմանագրերի կիրառումը թույլատրվում է միայն այդ պայմանագրերի վերաբերյալ Իրավաբանական վարչության կողմից եզրակացության առկայության դեպքում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) հետ առնչվող ռիսկերը կառավարվում են Բանկում գործող ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Գործընթացի ռիսկի զսպման մեխանիզմներ են՝

- բոլոր բիզնես գործընթացների կանոնակարգումը ներքին իրավական ակտերի միջոցով,
- Բանկի ակտիվների և առավել կարևոր փաստաթղթերի (այդ թվում՝ վարկային պայմանագիր) ֆիզիկական պաշտպանվածությունը,
- սահմանաչափերի սահմանումը և պահպանումը,
- գույքի և գրառումների համատեղ պահպանումը,
- տվյալների գրանցամատյանների կիրառումը և արխիվացումը,
- գործընթացների ժամանակ երկու աչքի սկզբունքի կիրառումը:

Ներքին աուդիտը պարբերաբար տալիս է ներքին հսկողության համակարգի արդյունավետության և ռիսկերին համարժեք լինելու գնահատական և հսկողություն է իրականացնում Բանկի գործունեության և ռիսկերի նկատմամբ:

Բանկի՝ ստանդարտներին համապատասխանությունը ուղեկցվում է ներքին աուդիտի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Ներքին աուդիտի դիտարկումների արդյունքները քննարկվում են ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Դիտարկումների ամփոփագրերը ներկայացվում են Խորհրդին:

Ռիսկերի ի հայտ գալու հավանականությունը ըստ առանձին ռիսկերի.

Վարկային ռիսկերի ի հայտ գալու հավանականությունը.

ա/ պայմանավորված Բանկի քաղաքականությամբ, վարկային ռիսկը բերված է խելամիտ և միջազգային պրակտիկայում ընդունելի մակարդակի և համաձայնեցված է Բանկի աճի և ֆինանսական արդյունքի հնարավորություններին: Վարկային քաղաքականությունով ընդունելի մակարդակը սահմանափակված է 5% խնդրահարույց վարկերի ցուցանիշով, որը փաստացի մի քանի անգամ ավելի փոքր է նախանշվածից:

բ/ պայմանավորված արտաքին գործոններով կախված է նաև ՀՀ և որոշ չափով՝ միջազգային տնտեսական զարգացումներով: Այնուամենայնիվ, Բանկի վարկային քաղաքականությունով և ներքին այլ ակտերով դրված սահմանափակումները (հաճախորդի վարկունակություն, վարկի ապահովվածություն և նրա արժեքի շուկայական ռիսկերի սահմանափակումներ ու պարտադիր ապահովագրություն, այլ մոտեցումները) թույլ են տալիս ենթադրելու վարկային ռիսկի նկատմամբ Բանկի դիմակայելու բարձր ներուժը: Նախանշված վարկային պորտֆելի 5%-ից ավել խնդրահարույց վարկերի ցուցանիշի վերաբերյալ հնարավոր վատթարացման հավանականությունը ցածր է գնահատվում առաջիկա 2-3 տարիների համար:

Ներդրումային գործունեություն և դրանից ռիսկերի ի հայտ գալու հավանականությունը.

Բանկի արժեթղթերի պորտֆելը հիմնականում ձևավորված է ՀՀ պետական պարտատոմսերի հաշվին: Առևտրային նպատակով պահվող, վաճառքի համար մատչելի և մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները սահմանափակ են և վերջին երեք տարիներին էական կշիռ չեն կազմել բանկի հաշվեկշռում (մինչև ակտիվների 10.68%):

Միջազգային շուկաներից բխող ռիսկերը ոչ էական ազդեցություն են ունեցել Բանկի ընդհանուր ֆինանսական արդյունքի վրա: Ներդրումներն արժեթղթերում առավելապես իրականացվել են իրացվելիության պաշարի ապահովման

նպատակով, միաժամանակ ապահովելով բարձր իրացվելի ակտիվների արդյունավետ կառավարման նպատակը: Նշված քաղաքականության փոփոխություններ առաջիկայում չեն սպասվում, ՀՀ պետական արժեթղթերի շուկայի վատթարացման սպասումներ չեն նախանշվում, ուստի այս բնագավառում ռիսկերի սպասումները մոտ են զրոյական մակարդակի:

3.3 Տեղեկատվություն Բանկի մասին

Ա. Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է
հայերեն՝ «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերություն:
ռուսերեն՝ закрытое акционерное общество “Конверс Банк”.
անգլերեն՝ “Converse Bank” closed joint-stock company.
Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է
հայերեն՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ
ռուսերեն՝ ЗАО “Конверс Банк”
անգլերեն՝ “Converse Bank” CJSC
Ընկերության կազմակերպաիրավական ձևը՝ փակ բաժնետիրական ընկերություն (գրանցված 20.12.1993թ.):

Բանկն ավելի քան 20 տարի է գործունեություն է ծավալում ՀՀ բանկային շուկայում: Բանկը գրանցվել է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից 1993թ. դեկտեմբերին և հանդիսանում է «Հյուսիս-հայկական» փայատիրական բանկի իրավահաջորդը: Որպես «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերություն Բանկը վերակազմավորվել է 1997թ.-ին:
«Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերությունը գրանցվել է ՀՀ, 0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1 հասցեում, իսկ գրանցող մարմին է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկը:
Բանկի հիմնադիր և հիմնական բաժնետեր է հանդիսանում «Ընվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս» ԷլԷլՍի-ն:
Բանկի ֆիրմային անվանումը պաշտպանված է ՀՀ նորմատիվ իրավական ակտերով և գրանցված է ՀՀ արտոնագրային վարչությունում (ֆիրմային անվանման գրանցման մասին 03.06.1999թ. որոշում, գրանցման համարը 107913):
Բանկի ապրանքային նշանն է՝

ConverseBank

Բանկային գործունեության թիվ 57 Լիցենզիան Բանկը ստացել է 20.12.1993թ., իսկ լիցենզիայում փոփոխություններ կատարվել են 21.02.1995թ.-ին, 20.05.1996թ.-ին, 31.12.1996թ.-ին, 23.05.1997թ.-ին, և 13.11.2001թ.-ին:
Բանկի պետական գրանցման վայրն է՝
ՀՀ, 0010, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1:

Բանկի պետական գրանցման համարն է 57:
Բանկի Գլխավոր գրասենյակի գտնվելու վայրն է՝
ՀՀ, 0010, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1:
Կապի միջոցները՝
հեռ. (+374 10) 511-200, (+374 10) 511-211
ֆաքս (+374 10) 511-212
էլ. փոստ post@conversebank.am,
Ինտերնետային կայք՝ www.conversebank.am:
Բանկի հիմնադրման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն:
Բանկի մասնաճյուղերը: Մասնաճյուղերի ցանկը և հասցեները ներկայացված են Հավելված 5-ում:
Ֆինանսական և այլ խմբերի վերաբերյալ տեղեկություններ
Բանկը չի հանդիսանում որևէ ֆինանսական և այլ խմբերի ու միությունների անդամ:
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի չափը
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի կողմից մինչ այժմ թողարկվել և տեղաբաշխվել է 54,722 (Հիսունչորս հազար յոթ հարյուր քսաներկու) հատ սովորական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 300,000 (Երեք հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով, և 333 (Երեք հարյուր երեսուներեք) հատ արտոնյալ փոխարկելի բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 100 (Մեկ հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով, որոնք էլ ձևավորում են Բանկի կանոնադրական կապիտալը:
Բանկի կանոնադրական կապիտալը բաղկացած է սովորական և արտոնյալ բաժնետոմսերից: Բանկի բաժնետերերն են. «Ըդվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս» ԷլԷլՍի՝ սովորական բաժնետոմսերի (80.94%) և արտոնյալ բաժնետոմսեր (333 հատ), ՀայՓոստ Թրասթ Մենեջմենթ ԲԻ.ՎԻ. Ընկերությունը՝ սովորական բաժնետոմսերի (14.06%), Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցի՝ ի դեմս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ սովորական բաժնետոմսերի (5%) սեփականատեր:

Պարտատոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում ներդրողները կարող են կապ հաստատել Բանկի Ֆինանսական դեպարտամենտի Ներդրումային գործառնությունների բաժնի և ԳԴՖԾ վարչության համապատասխան մասնագետների հետ հետևյալ հեռախոսահամարներով՝ (+374 10) 511-206, 511-247:

3.4 Բիզնեսի նկարագիրը

Հիմնական գործունեությունը և հիմնական շուկաները
Բանկի հիմնական գործունեությունը վարկավորումը և ավանդների ընդունումն է, բանկային հաշիվների բացումն ու սպասարկումը, տեղական և միջազգային վճարային համակարգերի վճարային քարտերի տրամադրումը և սպասարկումը, վճարահաշվարկային ծառայությունների մատուցումը, այդ թվում՝ ներհանրապետական և միջազգային (ներառյալ՝ արագ փոխանցումների համակարգերով) փոխանցումների իրականացումը, հեռակառավարման համակարգերի տրամադրումը, այլ բանկային ծառայությունների մատուցումն ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց:

Բանկի գործունեության մեջ զգալի ծավալ կազմող գործարքների և ծառայությունների տեսակները և/կամ ենթատեսակներն են.

1. Բանկն ունենալով մանրածախ ուղղվածություն և շեշտը դնելով ֆիզիկական անձանց մատուցվող ծառայությունների զարգացման վրա, միաժամանակ, հիմք վերցնելով տարիների փաստացի ցուցանիշները՝ որպես էական բիզնես ուղղություն է դիտարկում հիփոթեքային վարկերի ճյուղը:

Հիփոթեքային վարկավորման շուկայում Բանկը զբաղեցնում է ՀՀ բանկային համակարգում երկրորդ տեղը և նպատակ ունի վարկավորման տեխնոլոգիաների արդյունավետության բարձրացման և պայմանների բարելավման արդյունքում հիփոթեքային վարկավորման ծավալներով դառնալ առաջատար Բանկը ՀՀ բանկային համակարգում:

Հիփոթեքային վարկերի տրամադրմամբ Բանկը հաստատում է երկարաժամկետ գործարար հարաբերություններ կայուն եկամուտ ունեցող հաճախորդների հետ՝ խաչաձև վաճառքների իրականացմամբ մատուցելով բանկային այլ ծառայություններ ևս, միաժամանակ, հիփոթեքային վարկերի տրամադրումը հանգեցնում է անշարժ գույքի ոլորտի, արդյունքում նաև տնտեսության ակտիվացմանը. ավելանում են անշարժ գույքի շուկայում օտարման գործարքներից ծագող սեփականության իրավունքի գրանցումների քանակները:

2. Տնտեսության իրական հատվածում որոշ ոլորտների ակտիվությունը կհանգեցնի ՓՄՁ հաճախորդների կողմից վարկերի նկատմամբ պահանջարկի աճի, հետևաբար նաև Բանկի կողմից վարկավորման ծավալների աճի, 2018 թվականին ևս, ինչպես և 2017 թվականին կշարունակվի ՓՄՁ ֆինանսավորման տրամադրման ակցիան:

3. Նախորդ տարիների ընթացքում քարտային ոլորտում իրականացված բազմաթիվ միջոցառումները, ակցիաները, ծառայությունների ցանկի ընդլայնումը, ըստ թիրախային խմբերի արտոնյալ պայմաններով վճարային քարտերի տրամադրումը, արձանագրված ցուցանիշները 2018 թվականի և հաջորդ տարիների համար հիմք են հանդիսանում Բանկի վճարային քարտերի ոլորտը դիտարկել որպես էական բիզնես ուղղություն: Բանկը նպատակ ունի 2018 թվականին ևս ավելացնել վճարային քարտերի քանակը /2018 թվականի ընթացքում նախատեսվում է Բանկի վճարային քարտերի 20% աճ/, միաժամանակ, ՀՀ բանկային համակարգի մասշտաբներով ամրացնել իր դիրքերը:

Ֆինանսական ծառայությունների շուկայում նպատակային հատվածներն ըստ տնտեսության ոլորտների, տարածաշրջանների հետևյալն են.

- տնտեսության ճյուղերից՝ ա) արդյունաբերության ճյուղերից՝ սննդամթերքի, էներգետիկայի ճյուղերը, բ) առևտրի հատվածը, գ) շինարարության և գյուղատնտեսության ճյուղերը, դ) տրանսպորտի ու կապի ճյուղը, ե) սպառողական վարկերի հատվածը,
- բանկի կողմից պարտատոմսերի թողարկումը,
- արժեթղթերի շուկան՝ ՀՀ պետական և կորպորատիվ արժեթղթերի առաջնային և երկրորդային շուկան,
- ՀՀ տարածաշրջաններից՝ Երևանի, Լոռու, Շիրակի, Կոտայքի, Արմավիրի, Արարատի, Գեղարքունիքի, Տավուշի, Արագածոտնի, Սյունիքի մարզերը, Արցախը, նոր նպատակային հատվածներն են մարզերի այլ խոշոր և միջին քաղաքները:

➢ Բանկը նախատեսում է Վրաստանի տարածքում Բանկի քարտապանների համար նորանոր հնարավորությունների ավելացում: Միևնույն ժամանակ, Բանկի քարտապանների համար որպես հնարավորություն դիտարկվում է նաև ՌԴ մայրաքաղաք Մոսկվայում հատուկ ծրագրերի իրականացումը: Բանկը, կարևորելով Վրաստանի և Ռուսաստանի Դաշնության համագործակցության հնարավորությունները, ուսումնասիրում է այդ շուկաներում Բանկի ապրանքային նշանի ճանաչման, ինչպես նաև տվյալ տարածաշրջաններից Բանկի համար նոր հաճախորդների ներգրավման հնարավորությունները և մեթոդները:

➢ միջոցների փոխանցման հիմնական աշխարհագրությունն է՝ ՌԴ, Ուկրաինա, ԱՄՆ, Եվրոպական երկրներ և այլն,

➢ ՀՀ արժութային և արժեթղթերի շուկաները:

Հաճախորդների հիմնական խմբերն ըստ տարածաշրջանների, ռեզիդենտության, իրավական կարգավիճակի.

Բանկն իր ծառայությունները շարունակելու է տրամադրել Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների տարածքում գործունեություն ծավալող կազմակերպություններին և բնակչությանը՝ կիրառելով ժամանակակից տեխնոլոգիական լուծումներ, մասնավորապես՝ ավտոմատ գանձման սարքեր, վճարային տերմինալներ, հեռակառավարման համակարգեր (internet-banking, mobile-banking, sms-banking):

Բանկի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին մատուցվող ծառայությունների շրջանակն է՝

➢ ռեզիդենտ հաճախորդներ՝ ա) ֆիզիկական անձինք՝ ժամկետային և ցպահանջ ավանդների, հաշվարկադրամարկղային սպասարկման, ապառիկ, սպառողական և հիփոթեքային վարկերի, վճարային քարտերի, հեռակառավարման համակարգերի, արտարժութային գործառնությունների և միջոցների փոխանցման բնագավառում, բ) իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերեր՝ ցպահանջ և ժամկետային ավանդների, հաշվարկադրամարկղային սպասարկման, վարկավորման, աշխատավարձային վճարային քարտերի, հեռակառավարման համակարգերի, արտարժութային գործառնությունների և միջոցների փոխանցման բնագավառում,

➢ ոչ ռեզիդենտ հաճախորդներ՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ ցպահանջ, ժամկետային ավանդների, հաշվարկադրամարկղային սպասարկման, աշխատավարձային վճարային քարտերի, հեռակառավարման համակարգերի և արտարժութային գործառնությունների բնագավառում:

4. Ներդրումային գործունեություն,
5. Հեռակառավարման համակարգերով ծառայությունների մատուցում,
6. Վճարահաշվարկային ծառայությունների մատուցում,
7. Տեղական և միջազգային վճարային համակարգերի վճարային քարտերի տրամադրում և սպասարկում՝ շարունակելով կատարելագործել քարտերով իրականացվող գործարքների անվտանգության աստիճանը:

Վերջին տարիների ընթացքում Բանկի կողմից տեղաբաշխված միջոցների հիմնական բնութագրիչները հետևյալն են՝

Տեղաբաշխման ուղղությունները	31/12/17 (Աուդիտ չանցած)		31/12/16 (Աուդիտ անցած)		31/12/15 (Աուդիտ անցած)	
	Ծավալը (հազ. դրամ)	միջին %-ը	Ծավալը (հազ. դրամ)	միջին %-ը	Ծավալը (հազ. դրամ)	միջին %-ը
Վարկեր՝ այդ թվում	170,030,851	10.86%	123,579,020	11.74%	86,970,958	13.6%
-բիզնեսի վարկավորում	97,844,810	9.13%	71,198,846	9.45%	36,629,585	11.62%
-սպառողական վարկեր	42,841,633	15.15%	31,088,469	17.59%	27,517,505	18.27%
- հիփոթեքային վարկեր	28,612,851	10.36%	20,706,198	11.15%	20,492,115	12.09%
- ավտովարկ.	300,393	11.82%	339,898	15.25%	542,277	15.09%
- այլ	431,164	11.29%	245,609	14.22%	1,789,476	18.7%
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություն ներում	10,546,355	4.6%	2,320,882	0%	9,148,697	7.74%
ՀՀ պետական արժեթղթերում	22,707,948	8.96%	13,273,481	9.24%	3,772,238	8.06%

Վերջին տարիների ընթացքում Բանկի կողմից ներգրավված միջոցների հիմնական բնութագրիչները հետևյալն են՝

Ներգրավման ուղղությունները	31/12/17 (Աուդիտ չանցած)		31/12/16 (Աուդիտ անցած)		31/12/15 (Աուդիտ անցած)	
	Ծավալը (հազ. դրամ)	միջին %-ը	Ծավալը (հազ. դրամ)	միջին %-ը	Ծավալը (հազ. դրամ)	միջին %-ը
Ավանդներ՝ այդ թվում	173,914,157	4.21%	139,680,217	4.70%	111,430,135	4.25%
- ժամկետային ավանդներ	96,545,265	6.30%	85,227,331	7.20%	60,299,954	7.10%
- ցպահանջ ավանդներ	77,368,892	0.91%	54,452,886	0.78%	51,130,181	0.88%
Բանկերից և այլ ֆինանսական հաստատություն ներից	27,832,817	5.50%	9,374,272	8.46%	17,326,492	8.94%

Բանկը կատարում է հաճախորդների վճարահաշվարկային սպասարկում և մատուցում է բանկային ցանկացած ծառայություն, որոնց մասին ցուցանիշները, դրանց շարժը ներկայացված է ստորև:

	31/12/17 դրությամբ	31/12/16 դրությամբ	31/12/15 դրությամբ

Իրավաբանական անձ հաշվետերերի թիվ, անձ	7,672	6,556	5,290
Ֆիզիկական անձ հաշվետերերի թիվ, անձ	117,701	108,096	90,215
Ընթացիկ հաշիվների քանակը, հատ	305,976	257,772	225,445
Ժամկետային հաշիվների քանակը, հատ	11,320	10,349	7,438
Իրավաբանական անձանց կողմից արտերկիր ուղարկված գումարներ (մլն. ՀՀ դրամ)	176,565	133,785	154,742
Իրավաբանական անձանց անունով արտերկրից ստացված գումարներ (մլն. ՀՀ դրամ)	151,579	108, 020	167,240
Ֆիզիկական անձանց կողմից արտերկիր ուղարկված գումարներ (SWIFT, Western Union, Migom և այլ) (մլն. ՀՀ դրամ)	39,823	22,774	19,886
Ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված գումարներ արտասահմանից (SWIFT, Western Union, Migom և այլ) (մլն. ՀՀ դրամ)	76,618	59,119	63,537

Բանկի գործունեության մեջ զգալի ծավալ կազմող գործարքների և ծառայությունների տեսակները և/կամ ենթատեսակները.

Բանկի գործունեության հիմնական ուղղությունները լինելու են.

1. ոսկու, շարժական և անշարժ գույքի գրավով ապահովված վարկերի և վարկային քարտերի տրամադրումը,
2. հաճախորդների տարանջատումն ըստ առանձին խմբերի և թիրախավորումը՝ ներկայացնելով վարկային պրոդուկտների հատուկ պայմաններ յուրաքանչյուր խմբին համապատասխան,
3. ապառիկ ֆինանսավորման տրամադրման գործընթացների պարզեցման արդյունքում ֆինանսավորման ծավալների ավելացումը և համագործակցության շրջանակների ընդլայնումը,
4. հեռակառավարման համակարգերով ծառայությունների մատուցման ցանկի ընդլայնումը,
5. փոքր և միջին բիզնեսի զարգացման խրախուսման նպատակով առևտրային վարկային պորտֆելում ՓՄՁ ֆինանսավորման զարգացումը,
6. ներդրումային գործունեության զարգացումը,
7. ֆինանսական գործիքների համակարգի զարգացումը,
8. տեղական և միջազգային վճարային համակարգերի վճարային քարտերի տրամադրումը և սպասարկումը՝ շարունակելով կատարելագործել քարտերով իրականացվող գործարքների անվտանգության աստիճանը:

2017 թվականը բանկերը սկսեցին կապիտալի ավելի ամուր դիրքից, ինչը տարեսկզբին նվազագույն ընդհանուր կապիտալի պահանջի վեցապատիկ աճի շնորհիվ էր, որն ուղղակիորեն ազդեց նաև առևտրային բանկերի գործունեության աշխուժացմանը՝ զուգահեռ հանգեցնելով նաև թե վարկային, և թե ավանդային տոկոսադրույքների նվազեցմանը: Հատկանշական է, որ Բանկում դեռևս 2016

թվականի վերջին եռամսյակում իրականացված համալիր փոփոխությունները ամուր հիմքեր ստեղծեցին 2017 թվականի Բանկի գործունեության համար՝ ապահովելով բանկերի միջև սրվող մրցակցային պայմաններում գործունեության բոլոր ուղղություններով էական աճ, ինչը դրսևորվեց նաև Բանկի՝ ՀՀ բանկային համակարգում հիմնական ցուցանիշներով 3-4 դիրքերով առաջանցմանը: Տարվա ընթացքում, հիմք ընդունելով նաև Բանկի կիսամյակային գործունեության արդյունքները, Խորհրդի կողմից որոշում կայացվեց վերանայել և առավել հավակնոտ պլանային առաջադրանքներ նախատեսել 2017 թվականի երկրորդ կիսամյակի համար, որը, ևս, հաջողությամբ իրականացվեց:

Անդրադառնալով բանկերի կողմից հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների տվյալների հիման վրա հաշվարկված հիմնական ֆինանսական ցուցանիշներին՝ պետք է նշենք, որ Բանկն 2016 թվականի համեմատ ապահովել է ակտիվների ավելի քան 32% աճ, վարկային ներդրումների մոտ 39% աճ, ավանդների 22.1% աճ: Միևնույն ժամանակ, չնայած վարկային պորտֆելի առաջանցիկ տեմպերին՝ զուտ մասհանումների մակարդակը նախորդ տարվա նկատմամբ նվազել է ավելի քան 26%-ով: Արդյունքում, Բանկի զուտ շահույթը կազմել է ավելի քան 3.6 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա 1.56 մլրդ ՀՀ դրամի դիմաց:

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ը գործունեություն է իրականացնում Հայաստանի բանկային հատվածում: Հայաստանի ֆինանսական շուկայի ակտիվների գերակշիռ մասը կենտրոնացած է բանկային սեկտորում: Բանկային հատվածի ակտիվների աճը 2017թ. կազմել է 8.5% (4,362 միլիարդ ՀՀ դրամ): 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկային հատվածի ակտիվները կազմել է 3,457 մլրդ ՀՀ դրամ, իսկ 31.12.2016թ.՝ 4,019 մլրդ դրամ:

Վերջին երեք տարիների ընթացքում «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի գրաված դիրքը մնացած բանկերի համեմատ ըստ առանձին ուղղությունների ունի հետևյալ տեսքը՝

Դիրքն ըստ ուղղությունների	**2017թ. /աուդիտ չանցած/**	**2016թ. /աուդիտ անցած/**	**2015թ. /աուդիտ անցած/**
Ակտիվներ	6-րդ	9-րդ	8-րդ
Կապիտալ	10-րդ	12-րդ	12-րդ
Վարկեր	6-րդ	9-րդ	9-րդ
Պարտավորություններ	6-րդ	9-րդ	8-րդ

Շահութաբերության գործակիցներ	**2017թ.**	**2016թ.**	**2015թ..**
Սեփական Կապիտալի Շահութաբերության գործակից (ROE)	10.66%	5.84%	-2.97%
Ակտիվների շահութաբերության գործակից (ROA)	1.65%	0.94%	-0.44%

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի մասնաբաժինը ՀՀ բանկային համակարգում ներկայացված է ստորև:

հազար ՀՀ դրամ

		Ակտիվներ	Վարկային ներդրումներ	Պարտավորություններ	Ընդհանուր կապիտալ
31/12/2017 դրությամբ /աուդիտ չանցած/	**Համակարգ**	4,362,083,404	2,638,603,699	3,661,060,561	701,022,842
	ԲԱՆԿ	252,735,853	165,167,500	216,736,232	35,999,621
	%	5.79%	6.26%	5.92%	5.14%
31/12/2016 դրությամբ (աուդիտ անցած)	**Համակարգ**	4,019,621,599	2,528,952,222	3,359,196,520	660,425,139
	ԲԱՆԿ	190,993,270	119,024,824	158,815,267	32,178,003
	%	4.75%	4.71%	4.73%	4.87%
31/12/2015 դրությամբ (աուդիտ անցած)	**Համակարգ**	3,456,694,821	2,139,296,981	2,917,677,034	539,017,788
	ԲԱՆԿ	158,903,165	82,945,627	138,201,740	20,701,425
	%	**4.85%**	**3.88%**	**4.74%**	**3.84%**

Բանկի հիմնական մրցակիցները.

Բանկի մրցակիցները հանդիսանում են ՀՀ-ում գործունեություն ծավալող բոլոր առևտրային բանկերը, սակայն, ելնելով առևտրային բանկերի գործունեության հիմնական ուղղություններից և ցուցանիշներից, կարելի է ասել, որ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի հիմնական մրցակիցներն են հանդիսանում «Ամերիաբանկ» ՓԲԸ, «Արդշինբանկ» ՓԲԸ, «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, «Էյչ-Էս-Բի-Սի Հայաստան Բանկ» ՓԲԸ, «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ, «Ինեկոբանկ» ՓԲԸ, «Յունիբանկ» ՓԲԸ:

Հաշվի առնլով, որ բանկերի գործունեության առավել կարևոր ուղղությունները միջոցների ներգրավումը և դրանց տեղաբաշխումն է՝ ստորև ներկայացվում են «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի հիմնական մրցակիցների կողմից տրամադրած վարկերի և ներգրավված ավանդների գումարները և համապատասխանաբար դրանց բաժինը ընդհանուր բանկային հատվածում 2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հազար ՀՀ դրամ

ԲԱՆԿ	**Ավանդներ**		**Վարկեր**	
	Ծավալը (հազ. դրամ)	**Բաժինը (%)**	**Ծավալը (հազ. դրամ)**	**բաժինը (%)**
Ամերիաբանկ	517,461,588	18.77%	471,432,220	17.87%
Արդշինբանկ	344,968,629	12.52%	392,527,712	14.88%
Հայբիզնեսբանկ	401,210,484	14.56%	375,982,733	14.25%
ՎՏԲ-Հայաստան Բանկ	152,178,534	5.52%	134,805,785	5.11%
Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան	158,579,491	5.75%	95,431,247	3.62%
ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ	172,604,177	6.26%	184,618,746	7.00%
Կոնվերս բանկ	179,768,553	6.52%	165,167,500	6.26%
Ինեկոբանկ	140,773,746	5.11%	173,066,076	6.56%
Յունիբանկ	143,423,699	5.20%	135,284,544	5.13%

Հայէկոնոմբանկ	99,119,350	3.60%	104,216,554	3.95%

3.5 Բանկի կառուցվածքը

Բանկի բաժնետեր են հանդիսանում

1. «Ըդվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս» ԷլԷլՍի-ն,
2. ՀայՓոստ Թրասթ Մենեջմենթ ԲԻ.ՎԻ. Ընկերությունը,
3. Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցի՝ ի դեմս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի:

«Ըդվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս» ԷլԷլՍի-ն հանդիսանում է նաև Փոստ Ֆայնընս Ինթերնեյշնլ ԲԻ. ՎԻ. 100% բաժնետոմսերի սեփականատեր, իսկ վերջինս իր հերթին հանդիսանում է Հայփոստ Թրասթ Մենեջմենթ Բի. Վի. Ընկերության 100% բաժնետոմսերի սեփականատեր:

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն նշանակալից մասնակցություն ունի «Կոնվերս Ինկասացիա» ՍՊԸ–ում (ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 49) հանդիսանալով 100% բաժնեմասի սեփականատեր:

«Կոնվերս Ինկասացիա» ՍՊԸ-ն, հանդիսանալով «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի դուստր ընկերություն, որևէ այլ անձի բաժնային արժեթղթերի նշանակալից սեփականատեր չի հանդիսանում:

3.6 Զարգացման վերջին միտումները

Բանկի առաքելությունն է դառնալ առաջին նախընտրության բանկ Հայաստանում:

Բանկի տեսլականն է բավարարել մեր հաճախորդների ֆինանսական պահանջները և աջակցել նրանց՝ հասնել ֆինանսական հաջողության՝ ապահովելով սպասարկման բարձր որակ և բանկային ծառայությունների հասանելիություն թե Բանկի սպասարկման ցանցում և թե հեռահար բանկային ծառայությունների հնարավոր բոլոր եղանակներով:

Բանկը հաճախորդներին ծառայություններ մատուցելիս որդեգրել է հետևյալ արժեքները.

- Հասանելիություն
- Մատչելիություն
- Նորարարություն
- Տեղեկացվածություն
- Աջակցություն
- Սրտացավություն

Բանկը կիրառում է հետևյալ կորպորատիվ արժեքները.

- Թիմային աշխատանք
- Պատասխանատվություն
- Որոշումների կայացման իրավասությունների պատվիրակում
- Ազնվություն
- Ուսուցում և կատարելագործում
- Ոգևորություն

Բանկի հիմնական ռազմավարական նպատակներն ու ռազմավարական առաջնահերթություններն են.

Հիմնվելով բաժնետերերի և հաճախորդների վստահության վրա և պահպանելով ռիսկի, կապիտալի և շահութաբերության միջև հավասարակշռությունը.

1.2017-2019 թվականների ընթացքում կրկնապատկել վարկային ներդրումների ծավալները՝ ապահովելով վարկային ներդրումների տարեկան միջին հաշվարկով 27% աճ:

2. Հիփոթեքային վարկավորման ծավալներով դառնալ առաջատար բանկը ՀՀ բանկային համակարգում՝ կատարելագործելով վարկավորման գործընթացը և պայմանները՝ դարձնելով ավելի մատչելի:

3. Ֆիզիկական անձանց տրամադրված վարկային ներդրումների ծավալներով ապահովել շուկայի 10% մասնաբաժին:

4. Առաջիկա երեք տարիների ընթացքում ավելացնել վճարային քարտերի ծավալները 2.2 անգամ՝ ապահովելով տարեկան միջին հաշվարկով 30% աճ՝ ամրապնդելով զբաղեցրած դիրքը առաջատար 3 բանկերի շարքում: Վճարային քարտերի աճին զուգահեռ նախատեսվում էր իրականացնել լոյալության տարբեր ծրագրեր Բանկի քարտապանների համար, այդ թվում նաև զեղչային համակարգի և հնարավորությունների կատարելագործում ՀՀ-ում և ՀՀ սահմաններից դուրս:

5. Առաջիկա երեք տարիների ընթացքում ապահովել Բանկի ոչ տոկոսային եկամուտների առաջանցիկ աճ բանկային համակարգի ոչ տոկոսային եկամուտների միջին աճի նկատմամբ:

6. Միջազգային ֆինանսական կառույցների հետ համագործակցություն և երկարաժամկետ միջոցների ներգրավում:

7. Բանկի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության քաղաքականության ներքո տնտեսության առանձին ոլորտների զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացումը, ինչպես նաև էներգաարդյունավետ և «Կանաչ» վարկերի տրամադրումը:

8. Բանկի համար առաջնային ուղղություններից էր վերաֆինանսավորող կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնումը՝ նպատակ ունենալով ավելացնել վերջիններիս ներքո տրամադրվող ֆինանսավորումների ծավալները:

9. Ապահովել Բանկում բարձրակարգ և որակյալ սպասարկում՝ միաժամանակ կրճատելով հաճախորդների սպասարկման տևողությունը:

10. Որակի կառավարման համակարգի ներդնումը, որի նպատակն էր ապահովել բանկային ծառայությունների և բիզնես գործընթացների բարձր որակը:

11.Ներդրումներ կատարել բանկային տեխնոլոգիաներում՝ մատուցելով նորարարական ծառայություններ, որը հնարավորություն կտա զարգացնել թվային բանկային տեխնոլոգիաների կիրառումը, ապահովելով բանկային գործող և նոր ներդրվելիք ծառայությունների մատուցումն ինչպես համացանցի, բջջային սարքավորումների, այնպես էլ Բանկի ավտոմատ ինքնասպասարկման սարքավորումների միջոցով՝ ապահովելով հաճախորդներին 24/7 սպասարկում:

Բանկի կողմից նախանշված նպատակները հիմնականում նույնն են, սակայն կատարվել են նպատակների ճշգրտումներ՝ պայմանավորված 2017 թվականին Բանկի գործունեության մի շարք հիմնական ֆինանսական ցուցանիշների մասով արձանագրված փաստացի տվյալներով և Բանկի կողմից իրականացված միջոցառումներով: 2017 թվականին շարունակվեցին վարկերի տրամադրման պայմանների բարելավման գործընթացները, որով վարկային պրոդուկտները դարձան առավել մրցունակ, միաժամանակ վերանայվեց նաև վարկերի տրամադրման որոշման կայացման գործընթացը, ստեղծվեցին կոլեգիալ նոր մարմիններ, ներդրվեցին անհատական ու առևտրային ֆինանսավորումների սքորինգային համակարգերը: Վերջիններիս կիրառման, և Բանկի՝ շուկայում զբաղեցրած դիրքի, վարկավորման ներուժի ամբողջական օգտագործման արդյունքում իրատեսական են վարկավորման ծավալների աճի նախանշված նպատակները:

Հիփոթեքային վարկավորման շուկայում Բանկը զբաղեցնում է ՀՀ բանկային համակարգում երկրորդ տեղը և նպատակ ունի վարկավորման տեխնոլոգիաների արդյունավետության բարձրացման և պայմանների բարելավման արդյունքում հիփոթեքային վարկավորման ծավալներով դառնալ առաջատար Բանկը ՀՀ բանկային համակարգում:

Բանկի համար առաջնային ուղղություններից է վճարային քարտերի ծավալների ավելացումը, որի իրագործման նպատակով Բանկը նախատեսում է իրականացնել քարտերի վաճառքի տարբեր ակցիաներ VISA և MasterCard վճարահաշվարկային համակարգերի հետ, քարտապանների համար լոյալության ծրագրեր, զեղչային համակարգի կատարելագործում, ծառայությունների ցանկի ընդլայնում, օրինակ՝ VISA Direct /VPP/ միջազգային քարտից քարտ փոխանցումների իրականացում և այլն:

Վարկավորման ծավալների աճին զուգահեռ միջոցների ներգրավման անհրաժեշտություն է առաջանում, այդ ուղղությամբ Բանկը նպատակ ունի հստակ քայլեր կատարել միջազգային ֆինանսական կազմակերպություններից երկարաժամկետ միջոցների ներգրավման և համագործակցության ուղղությամբ:

Բանկը շարունակելու է հատուկ ուշադրություն դարձնել Բանկի ոչ տոկոսային եկամուտների ծավալների ավելացմանը, միաժամանակ, հաճախորդներին առաջարկելով նոր ծառայություններ և զարգացնելով գործող ծառայությունների ցանկը:

Բանկը որդեգրել է կորպորատիվ սոցիալական պատասխանատվության քաղաքականությունը, որով խրախուսում է վարկառուների կողմից շինարարության և վերանորոգման աշխատանքներում էկոլոգիապես մաքուր նյութերի օգտագործումը, ինչպես նաև կանաչ/էներգաարդյունավետ վարկերի տեսակարար կշռի ավելացումն իր վարկային պորտֆելում:

Վերաֆինանսավորող կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնմամբ նախատեսվում է տրամադրվող ֆինանսավորումների ծավալների ավելացում:

Որպես բանկային ծառայությունների զարգացման առաջնահերթ և հեռանկարային ուղի՝ Բանկը դիտարկում է հեռահար տարբեր եղանակներով բանկային ծառայությունների մատուցման հնարավորությունների ընդլայնումը,

հաճախորդների համար բոլոր հնարավոր և իրենց հարմար եղանակներով բանկային ծառայությունների մատուցման և սպասարկման հնարավորությունների կիրառումը, Բանկի ինտերնետ և մոբայլ բանկինգ համակարգերում նոր գործիքների ներդնումը և կատարելագործումը, Բանկի ինտերնետային կայքում հատուկ մոդելի ներդնումը, որը հնարավորություն կտա իրականացնել և կազմակերպել նաև մի շարք դիմումների առցանց ընդունումը, ՀՀ առանձին մարզերի բնակիչների համար նպատակային պրոդուկտների մշակումը և ներդնումը:

Բանկում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում հաճախորդների բարձրակարգ և որակյալ սպասարկման վրա. աշխատակիցների համար կկազմակերպվեն վերապատրաստման դասընթացներ, կմշակվի գործելակարգ, որտեղ կսահմանվեն որակի չափանիշներ, պարտադիր ստանդարտներ, միաժամանակ աշխատանքներ կտարվեն գործընթացների ավտոմատացման և հաճախորդների սպասարկման տևողության կրճատման ուղղությամբ: Առանձնակի ուշադրություն է դարձվում հաճախորդներին մատուցվող ծառայությունների և բիզնես գործընթացների արդյունավետության բարձրացման վրա, հնարավորության դեպքում քայլեր կիրականացվեն աշխատանքների ավտոմատացման ուղղությամբ՝ գործընթացների տևողությունը կրճատելու և սխալները բացառելու նպատակով:

3.7 Շահույթի կանխատեսումը և գնահատումը

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի 2017-2019թթ. Ռազմավարական զարգացման ծրագրի կանխատեսումներով Բանկի զուտ շահույթի ցուցանիշը 2018թ.-ին կկազմի 4 404 168 .02 մլն դրամ: Շահութաբերության ակնկալվող ցուցանիշները հետևյալն են՝

- ըստ ակտիվների (ROA). 2018թ 1.7%, 2019թ.՝ 1.78%,
- ըստ կապիտալի (ROE). 2018թ.՝ 12.73%, 2019թ.՝ 14.42%,

Շահույթի կանխատեսման հիմնական սկզբունքները:

Բանկի շահույթի կանխատեսումն իրականացվել է Բանկի ընդհանուր գործունեության կանխատեսումների հիման վրա: Բանկի գործունեության կանխատեսումների համար հիմք է վերցվել 2016-2018թթ. ժամանակաշրջանը, կանխատեսումներն իրականացվել են մաթ. վիճակագրական և փորձագիտական մեթոդներով, որոնց միջոցով նախապատմության դիտարկված դինամիկ շարքերում բացահայտվել են էական ոչ օրինաչափ, օրինաչափ (սեզոնային, միջոցառումներից բխող) գործոնները, տենդենցները և կապերը, վերջիններս կիրառվել են կանխատեսումներում: Հեռանկարային զարգացման ծրագրի կանխատեսումներն ու սպասումները նախագծվել են նորմալ սցենարին (լավատեսական և վատատեսական սցենարի միջնակետ) համապատասխանող մոտեցմամբ:

Միջավայրի, այդ թվում՝ մակրոտնտեսական միջավայրի կանխատեսման գործընթացում Բանկն առաջնորդվել է.

- ՀՀ կառավարության 2017-2022 թվականի ծրագրով,
- Արտաքին միջավայրի վերաբերյալ կանխատեսումներով,
- ՀՀ բանկային համակարգի հնարավոր զարգացումների վերաբերյալ կանխատեսումներով,
- ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության ծրագրերով, ՀՀ ԿԲ տեղեկագրերով, այլ հրապարակումներով,

• ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տարեգրքերով և հրապարակումներով,

• Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքով,

• Համաշխարհային բանկի զեկույցներով և Արժույթի միջազգային հիմնադրամի կանխատեսումներով,

• 2018-2020թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով,

• ՀՀ բանկերի հրապարակային հաշվետվություններով,

• Բանկի տարբեր ստորաբաժանումների կողմից իրականացված վերլուծություններով, ներքին այլ վերլուծություններով,

• այլ տեղեկատվությամբ:

Բանկում բյուջետավորման և հեռանկարային զարգացման ծրագրի մշակման գործընթացի կազմակերպման նպատակով Խորհրդի կողմից 16.03.2017թ.-ի թիվ 49 որոշմամբ հաստատվել է ««Կոնվերս Բանկ» ՓԲԸ Ռազմավարական պլանավորման քաղաքականությունը», (QP 53-16) որով սահմանվել են «Կոնվերս Բանկ» ՓԲԸ ռազմավարական պլանավորման մշակման, վերանայման, թույլատրելի շեղումների, շեղումների դեպքում՝ միջոցառումների, հսկողության ու կատարողականի գնահատման գործընթացները:

Բանկի կառավարման մարմինների կողմից գործոնների վրա ազդեցությունը:

Բանկի կառավարման մարմինները հնարավորություն ունեն ազդելու Բանկի գործունեության և շահույթի վրա հետևյալ միջոցներով՝

- ներգրավվող և տեղաբաշխվող միջոցների կառավարում՝ ծավալների, կառուցվածքի կամ եկամտաբերության/ծախսատարության փոփոխման միջոցով,
- Բանկի անձնակազմի վարձատրության և վերապատրաստման ծախսերի կառավարում,
- Բանկի ընթացիկ գործունեության ապահովման համար անհրաժեշտ ծախսերի կառավարում,
- նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման և առկա համակարգերի պահպանմանն ուղղվող ծախսերի կառավարում,
- բանկային ծառայությունների սակագների սահմանում,
- նոր պրոդուկտների ներդրման հետ կապված եկամուտների և ծախսերի կառավարում:

Բանկի կառավարման մարմինները հնարավորություն չունեն ազդելու Բանկի գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ գործոնների վրա

• շուկայական գործոնների ազդեցությամբ պայմանավորված բանկային ծառայությունների շուկայում տոկոսադրույքների փոփոխություն,

• ՀՀ դրամի փոխարժեքի տատանումներ այլ արժույթների նկատմամբ.

• գնաճի, տնտեսական ակտիվության կամ մակրոտնտեսական միջավայրի փոփոխություն,

• անհաղթահարելի ուժի ազդեցության գործոններ (արտակարգ դրություն, պատերազմ, բնական աղետներ, պետական մարմինների կողմից ընդունած իրավական ակտեր, որոնք անհնարին են դարձնում Բանկի բնականոն գործունեությունը):

3.8 Բանկի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները

3.8.1 Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը և յուրաքանչյուր մարմնի իրավասություններն ու պարտականությունները

Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը ներկայացված է Հավելված 3-ում:
Բանկի կանոնադրությամբ սահմանված են կառավարման հետևյալ մարմինները՝

- Բաժնետերերի ընդհանուր ժողով, այսուհետ նաև Ժողով,
- Բանկի խորհուրդ,
- Գործադիր մարմին. Բանկի Գլխավոր գործադիր տնօրեն և Բանկի Տնօրինություն:

Ժողովը

Ժողովը, բանկի կառավարման բարձրագույն մարմինն է: Բանկը պարտավոր է ամեն տարի գումարել տարեկան ժողով, որը հրավիրվում է ֆինանսական տարվա ավարտից հետո վեց ամսվա ընթացքում: Տարեկան ժողովից բացի անհետաձգելի հարցերի քննարկման համար կարող են գումարվել արտահերթ Ժողովներ:
Ժողովի իրավասությանն են պատկանում՝

ա/ Կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը,

բ/ Բանկի վերակազմակերպումը,

գ/ Բանկի լուծարումը,

դ/ ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարման հանձնաժողովի նշանակումը,

ե/ Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և պաշտոնավարման ժամկետի սահմանումը /որը չի կարող մեկ տարուց պակաս լինել/, ինչպես նաև նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

զ/ հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,

է/ բանկի կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,

ը/ Խորհրդի ներկայացմամբ բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը,

թ/ բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը: Տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,

ժ/ Ժողովի վարման կարգի հաստատում,

ժա/ հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը,

ժբ/ բաժնետոմսերի համախմբումը, բաժանումը.

ժգ) Խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը,

ժդ) օրենքով նախատեսված դեպքերում բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը,

ժե) օրենքով նախատեսված այլ հարցեր:

Ժողովում ձայնի իրավունքից օգտվում են՝

ա/ Բանկի հասարակ /սովորական/ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը.
բ/ Բանկի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ ՀՀ օրենսդրությամբ և Կանոնադրությամբ սահմանված դեպքերում, այսուհետ՝ «Քվեարկող բաժնետոմսեր»:
Ժողովի որոշումներն ընդունվում են Ժողովին մասնակցող Քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե ՀՀ օրենսդրությամբ և Կանոնադրությամբ ձայների այլ քանակ սահմանված չէ:
Ժողովին մասնակցելու իրավունք ունեն.
ա/ Բանկի հասարակ /սովորական/ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ իրենց պատկանող բաժնետոմսերի քանակին համապատասխան ձայների քանակով.
բ/ Բանկի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ իրենց պատկանող արտոնյալ բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով.
գ/ Բանկի բաժնետեր չհանդիսացող Խորհրդի և Գործադիր մարմնի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով.
դ/ Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման անդամները՝ որպես դիտորդ.
ե/ Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձը՝ որպես դիտորդ /եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող Ժողովի նյութերում/,
զ/ Կենտրոնական բանկի ներկայացուցիչները՝ որպես դիտորդ:
Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
Բանկը բաժնետերերի ընդհանուր ժողովի անցկացման մասին Կենտրոնական բանկին ծանուցում է դրա անցկացումից ոչ ուշ, քան 15 օր առաջ:
Տարեկան Ժողովի գումարման մասին Բանկի բաժնետերերը ծանուցվում են նշանակված օրվանից առնվազն 10 օր առաջ՝ էլեկտրոնային տարբերակով կամ փոստով՝ պատվիրված նամակով, կամ էլ առձեռն :
Ժողովի օրակարգը հաստատվում է Խորհրդի կողմից՝ հաշվի առնելով առանձին բաժնետերերի կողմից տրված առաջարկությունները:
Ժողովի որոշումներն ընդունվում են քվեարկությունների արդյունքում, որի արդյունքները արտացոլվում են Ժողովի արձանագրության մեջ՝ Ժողովի օրակարգում ընդգրկված յուրաքանչյուր հարցի վերաբերյալ: Քվեարկությունը Ժողովում իրականացվում է «Բանկի մեկ քվեարկող բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքով, բացառությամբ Խորհրդի անդամների ընտրության և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Ժողովի հրավիրման և անցկացման աշխատանքները կազմակերպում է Խորհրդի քարտուղարը /քարտուղարությունը/ կամ Բանկի այլ լիազորված ստորաբաժանում կամ աշխատակից /այսուհետ՝ Խորհրդի քարտուղար/:
Ժողովն իրավասու է, եթե Ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50 տոկոսից ավելիին տիրապետող բաժնետերերը /նրանց ներկայացուցիչները/: Քվորումի բացակայության դեպքում ուղիղ 15 օր հետո հրավիրվում է նոր Ժողով: Ժողովի

մասնակիցների նոր ցուցակ չի կազմվում: Օրակարգի փոփոխություն չի կատարվում:
Ժողովը նախագահում է Խորհրդի նախագահը, նրա բացակայության դեպքում Խորհրդի անդամներից մեկը՝ Խորհրդի անդամների ընտրությամբ /կամ Ժողովի մասնակիցների քվեարկությամբ/:
Ժողովների արձանագրությունները կազմում է Խորհրդի քարտուղարը: Ժողովի արձանագրությունը կազմվում է դրա ավարտից 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ առնվազն 2 օրինակով, որոնք ստորագրում են Ժողովի նախագահը և Խորհրդի քարտուղարը:
Ժողովի նախագահը պատասխանատվություն է կրում Ժողովի արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:
Բաժնետերերի պահանջով նրանց տրվում է արձանագրության պատճեն կամ քաղվածք նրանից:
Բացի տարեկան Ժողովից անհետաձգելի հարցերի քննարկման համար գումարվում են նաև արտահերթ Ժողովներ: Արտահերթ Ժողովը գումարվում է Խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, Բանկի գործադիր մարմնի, Բանկի աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Բանկի առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ /բաժնետերերի/ պահանջով: Բացառությամբ Խորհրդի կողմից սեփական նախաձեռնությամբ արտահերթ Ժողովի գումարումից, մնացած դեպքերում արտահերթ Ժողովը գումարվում է արտահերթ Ժողով գումարելու պահանջ ունեցող անձի կողմից նման պահանջը ներկայացնելու պահից 45 օրվա ընթացքում: Արտահերթ Ժողովի գումարման հետ կապված հարցերը լուծվում են Խորհրդի կողմից՝ պահպանելով ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջները: Արտահերթ Ժողովները գումարվում են բաժնետերերի համատեղ ներկայությամբ կամ հեռակա կարգով քվեարկության միջոցով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Հեռակա կարգով քվեարկությունը կատարվում է քվեաթերթիկներով: Հեռակա կարգով քվեարկության ժամանակ քվեաթերթիկները տրամադրվում են բաժնետերերին էլեկտրոնային տարբերակով կամ փոստով՝ պատվիրված նամակով, կամ էլ առձեռն՝ Ժողովի կայացման օրվանից առնվազն 10 օր առաջ:

Քվեաթերթիկը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

ա. Բանկի անվանումը,
բ. Ժողովի գումարման օրը, ժամը և վայրը,
գ. քվեարկության դրվող յուրաքանչյուր հարցի ձևակերպումը,
դ. քվեարկության դրվող յուրաքանչյուր հարցի վերաբերյալ քվեարկության տարբերակները՝ “կողմ”, “դեմ” և “ձեռնպահ”,
ե. լրացված քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելու օրը, ժամը և վայրը,
զ. ցուցում այն մասին, որ քվեաթերթիկը պետք է ստորագրվի բաժնետիրոջ /լիազորված ներկայացուցչի/ կողմից,
է. քվեաթերթիկը լրացնելու կարգի պարզաբանումը:

Բաժնետերերի կողմից լրացված և ստորագրված քվեաթերթիկները ուղարկվում են Խորհրդի քարտուղարին՝ Ժողովի կայացման օրվանից երեք օրվա ընթացքում էլեկտրոնային տարբերակով կամ փոստով՝ պատվիրված նամակով, կամ էլ առձեռն:

Խորհրդի քարտուղարը անփոփում է քվեաթերթիկների արդյունքները և քվեարկության արդյունքում կազմում արձանագրություն: Քվեաթերթիկները կցվում են արձանագրությանը և Խորհրդի քարտուղարի կողմից զմռսվում և հանձնվում Բանկի արխիվ՝ պահպանության:

Ժողովների արձանագրությունների հիման վրա Ժողովի որոշումները կարող են կազմվել առանձին որոշումների տեսքով, որոնք համարակալվում են՝ նշելով Ժողովի անցկացման ամսաթիվը: Ժողովի որոշումները ստորագրվում Խորհրդի նախագահի կողմից:

Ժողովի որոշումներն ընդունվում են Ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Որոշումների բնօրինակները պահպանվում են Խորհրդի քարտուղարի մոտ՝ մինչև սահմանված կարգով դրանք արխիվ հանձնելը:

Ժողովի որոշումներով սահմանված ժամկետների պահպանման նկատմամբ վերահսկողությունը, տարածման և տեղեկացման գործընթացը դրվում է Խորհրդի քարտուղարի կամ այլ լիազորված աշխատակցի վրա:

Ժողովի որոշումները կարող են ընդունվել այնպիսի նիստով, որի ժամանակ Ժողովի մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում:

Նման կարգով Ժողովի նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է Բանկի Խորհրդի որոշմամբ:

Խորհուրդը

Խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը օրենքով և Կանոնադրությամբ խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում: Խորհուրդը կազմված է 7 /յոթ/ անդամներից: Խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան Ժողովում, իսկ Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ արտահերթ Ժողովում՝ ներկա մասնակիցների կողմից: Ընդ որում՝ Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշում ընդունելու հետ միաժամանակ արտահերթ Ժողովում պետք է որոշում կայացվի Խորհրդի նոր անդամի ընտրության մասին:

Ժողովին Խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկությունները կարող են ներկայացնել Բանկի բաժնետերերը, ինչպես նաև Խորհուրդը (բացառությամբ առաջին անգամ խորհրդի ձևավորման դեպքի):

Խորհրդի անդամներն ընտրվում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Խորհուրդի իրավասությանն են պատկանում՝

ա/ Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը,
բ/ Ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը,
գ) Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի, Տնօրինության անդամների, այդ թվում՝ գլխավոր հաշվապահի, Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալների նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը,
դ) Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի աշխատակիցների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը,
ե/ Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը,
զ) Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,
է) Բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացումը,
ը) շահութաբաժինների վճարման վերաբերյալ Ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակի կազմումը, որում պետք է ընդգրկվեն Բանկի այն մասնակիցները, որոնք ընդգրկվել են Բանկի մասնակիցների ռեեստրում՝ տարեկան Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ,
թ) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և Ժողովին ներկայացումը,
ժ) Ժողովի հաստատմանը Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը,
ժա) Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը,
ժբ) Բանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը,
ժգ) Բանկի կողմից օրենքով սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը,
ժդ) Բանկի տարածքային և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը, Բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառութային պարտականությունների բաշխումը.
ժե) Կանոնադրության 9.2.3 կետի «բ», «ժգ» ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումը Ժողովի քննարկմանը.
ժզ) Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը.
ժէ) Բանկի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

ժը) Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը.
ժթ) Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը,
ժի) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը.
իա) դուստր կամ կախյալ ընկերություններին մասնակցությունը.
իբ) առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը.
իգ) առևտրային կազմակերպությունների միություններում մասնակցությունը.
իդ/ գույքի շուկայական արժեքի որոշումը,
իե) օրենքով նախատեսված այլ որոշումների ընդունումը
իզ) Որոշում է կայացնում Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի բացակայության ժամանակ նրան փոխարինողի վերաբերյալ:
Ներքին վերահսկողության նվազագույն պայմաններից ելնելով՝ Խորհուրդը, բացի վերը նշված իրավասություններից, իրականացնում է նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված ներքին հսկողության նվազագույն պայմաններով նախատեսված իրավասություններ:
Խորհրդի նիստերը պետք է գումարվեն առնվազն երկու ամիսը մեկ անգամ:
Խորհրդի նիստերը գումարում է Խորհրդի նախագահը՝ իր, Խորհրդի անդամի, Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի, Տնօրինության, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի, Կենտրոնական բանկի խորհրդի, ինչպես նաև Բանկի քվեարկող բաժնետոմսերի 5 և ավելի տոկոս ունեցող բաժնետիրոջ (բաժնետերերի) գրավոր պահանջով:

Խորհրդի նիստերի քվորումը համարվում է ապահովված, եթե Խորհրդի նիստերին մասնակցում են Խորհրդի անդամների առնվազն 2/3–ը: Քվեարկության ժամանակ Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:
Խորհրդի նիստերի բոլոր հարցերի քննարկումը կարող է տեղի ունենալ միայն Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի պարտադիր մասնակցությամբ, բացառությամբ Գլխավոր գործադիր տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև նրա վարձատրության պայմանների հաստատման հարցերի: Բանկի Գլխավոր գործադիր տնօրենը մասնակցում է Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:
Խորհրդի նիստերը նախագահում է Խորհրդի նախագահը, նրա բացակայության դեպքում՝ Խորհրդի անդամներից մեկը՝ խորհրդի անդամների ընտրությամբ:
Խորհրդի նախագահը հերթականությանբ ներկայացնում է օրակարգում ընդգրկված հարցերը և հրավիրում յուրաքանչյուր հարցի մասով համապատասխան զեկուցողին:
Հարցի վերաբերյալ զեկուցումը լսելուց հետո, անհրաժեշտության դեպքում, զեկուցողը տալիս է պարզաբանումներ Խորհրդի անդամների կողմից առաջադրվող հարցերին:

Զեկուցվող հարցի վերաբերյալ քննարկումներն ավարտելուց հետո Խորհրդի նախագահը, քննարկվող հարցի վերաբերյալ Խորհրդի կողմից որոշում կայացնելու համար քննարկման արդյունքում ձևակերպված առաջարկություն/ներ/ը դնում է քվեարկության:
Խորհրդի քվեարկության արդյունքները հաշվում և անփոփում է Խորհրդի քարտուղարը: Քվեարկության արդյունքները հայտարարվում են տվյալ Խորհրդի նիստում:
Խորհրդի նիստերը արձանագրվում են Խորհրդի քարտուղարի կողմից: Խորհրդի արձանագրությունը կազմվում է դրա ավարտից 10 օրվա ընթացքում՝ որոնք ստորագրում են Խորհրդի նախագահը, անդամները և քարտուղարը: Խորհրդի նիստերի արձանագրությունները ներկայացվում են ներքին աուդիտի ստորաբաժանմանը ստորագրման պահից առավելագույնը 10 օրվա ընթացքում:
Խորհրդի նիստերը կարող են գումարվել հեռակա կարգով, որոնք գումարվում են Կանոնադրությամբ հեռակա կարգով Ժողովների գումարման համար սահմանված կարգով:
Խորհրդի որոշումները կարող են ընդունվել այնպիսի նիստով, որի ժամանակ Խորհրդի անդամները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում:
Նման կարգով Խորհրդի նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է Բանկի Խորհրդի որոշմամբ:
Խորհուրդն իր աշխատանքն արդյունավետ կազմակերպելու նպատակով կարող է ստեղծել հանձնաժողովներ: Խորհրդին կից հանձնաժողովներում կարող են ընդգրկվել Խորհրդի անդամները և Բանկի այլ ղեկավարներ կամ աշխատակիցներ: Խորհրդին կից հանձնաժողովների որոշումներն ունեն խորհրդակցական բնույթ:
Խորհուրդը պատասխանատու է բանկի բնականոն և արդյունավետ գործունեության, Բանկի ակտիվների պահպանության, Բանկի բաժնետերերին, Կենտրոնական բանկին և հասարակությանը ճշգրիտ ու արժանահավատ տեղեկատվություն ներկայացնելու, ինչպես նաև Բանկի գործադիր մարմնի վերահսկման համար:
Խորհուրդը, ինչպես նաև գործադիր մարմինը, պատասխանատու են Բանկում էթիկայի նորմերի, ինչպես նաև մասնագիտական վարքագծի կանոնների ձևավորման և ներդրման համար:
Բանկի Խորհրդի նախագահի լիազորությունները սահմանվում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով և Խորհրդի աշխատակարգով:

Գործադիր մարմինը

Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումը իրականացնում է միանձնյա գործադիր մարմնի՝ Գլխավոր գործադիր տնօրենի և Բանկի Տնօրինության (այսուհետ՝ Տնօրինություն) կողմից: Գլխավոր գործադիր տնօրենը հանդիսանում է Տնօրինության նախագահը: Գլխավոր գործադիր տնօրենի և Տնօրինության

իրավասությանն են պատկանում Բանկի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ Կանոնադրությամբ Ժողովի և Խորհրդի բացառիկ իրավասությանը վերապահված հարցերի:

Գլխավոր գործադիր տնօրենի և Տնօրինության անդամների նշանակումը , ինչպես նաև նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը կատարվում է Խորհրդի որոշմամբ: Տնօրինության անդամները նշանակվում են և նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են Գլխավոր Գործադիր տնօրենի ներկայացմամբ:

Տնօրինությունը գործում է ՀՀ օրենքների, Կանոնադրության, ինչպես նաև Խորհրդի կողմից հաստատված Բանկի ներքին իրավական ակտերի հիման վրա, որոնք առավել մանրամասն սահմանում են Տնօրինության նիստերի հրավիրման ու անցկացման ժամկետներն ու կարգը, ինչպես նաև նրա կողմից որոշումների ընդունման կարգը:
Տնօրինության նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության՝ Գլխավոր գործադիր տնօրենի կամ Տնօրինության առնվազն 2 (երկու) անդամների նախաձեռնությամբ:
Տնօրինությունն իրավասու է, եթե նիստին ներկա են Տնօրինության անդամների առնվազն 1/2-ը: Որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Հավասար ձայների դեպքում Տնօրինության նախագահի ձայնը որոշիչ է:
Գլխավոր գործադիր տնօրենի, Տնօրինության անդամների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են ՀՀ նորմատիվ իրավական ակտերով և/կամ Բանկի ու նրանցից յուրաքանչյուրի հետ կնքված աշխատանքային պայմանագրով: Տնօրինության անդամների հետ աշխատանքային պայմանագրերը Բանկի անունից ստորագրում է Խորհրդի նախագահը կամ Խորհրդի կողմից լիազորված այլ անձ:
Գլխավոր գործադիր տնօրենը և Տնօրինության անդամներն այլ կազմակերպություններում կարող են վճարովի պաշտոններ զբաղեցնել միայն Խորհրդի համաձայնությամբ:
Տնօրինության իրավասությանն են պատկանում.
ա/ Բանկի կողմից կիրառվող սակագների և դրույքների սահմանումը,
բ/ Բանկի խորհրդի կողմից հաստատված քաղաքականությունների և այլ իրավական ակտերի հիման վրա կազմված Բանկի ընթացակարգերի և կարգերի հաստատումը,
գ/ Բանկի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց միջնորդավճարների սահմանումը,
դ/ ծառայությունների և բանկային գործիքների պայմանների հաստատումը,
ե/ Բանկի ակտիվների և պասիվների կառավարումը,
զ/ Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը,
է/ ներքին կարգապահության կանոնների հաստատում,
ը/ աշխատանքի նկարագրերի (պաշտոնեական հրահանգների) հաստատում,
թ/ Բանկի հրապարակային պայմանագրերի տիպային ձևերի հաստատումը,
ժ/ Բանկի ընթացիկ գործունեության հետ կապված այլ՝ Գլխավոր գործադիր տնօրենի իրավասությանը չվերապահված հարցերի լուծումը:

Տնօրինության նիստերը կազմակերպում և վարում է Գլխավոր գործադիր տնօրենը, որն ի պաշտոնե հանդիսանում է Տնօրինության նախագահը: Վերջինիս բացակայության դեպքում Տնօրինության նիստերը կազմակերպում և վարում է Գլխավոր գործադիր տնօրենի փոխարինողը, որը հանդիսանում է Տնօրինության անդամ:

Տնօրինության նախագահը հերթականությանբ ներկայացնում է օրակարգում ընդգրկված հարցերը և հրավիրում յուրաքանչյուր հարցի մասով համապատասխան զեկուցողին: Հարցի վերաբերյալ զեկուցումը լսելուց հետո, անհրաժեշտության դեպքում, զեկուցողը տալիս է պարզաբանումներ Տնօրինության անդամների կողմից առաջադրվող հարցերին: Զեկուցվող հարցի վերաբերյալ քննարկումներն ավարտելուց հետո Տնօրինության նախագահը, քննարկվող հարցի վերաբերյալ Տնօրինության կողմից որոշում կայացնելու համար քննարկման արդյունքում ձևակերպված առաջարկություն/ներ/ը դնում է քվեարկության:

Տնօրինության քվեարկության արդյունքները հաշվում և ամփոփում է Տնօրինության քարտուղարը: Քվեարկության արդյունքները հայտարարվում են տվյալ Տնօրինության նիստում:

Տնօրինության նիստերը արձանագրվում են քարտուղարի կողմից: Տնօրինության նիստի արձանագրությունը կազմվում է դրա ավարտից 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ առնվազն 1 օրինակով, որը ստորագրում են Տնօրինության նախագահը, անդամները և քարտուղարը:

Տնօրինության նիստերի արձանագրությունները ներկայացվում են Խորհրդին, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին՝ վերջիններիս պահանջով, ինչպես նաև ներքին աուդիտի ստորաբաժանմանը՝ ստորագրման պահից առնվազն 10 օրվա ընթացքում:

Գլխավոր գործադիր տնօրենը պատասխանատվություն է կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

Գլխավոր գործադիր տնօրենը՝

ա/ տնօրինում է Բանկի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Բանկի անունից, այդ թվում՝ տրամադրում է բանկային երաշխիքներ,

բ/ ներկայացնում է Բանկը Հայաստանի Հանրապետությունում և նրա տարածքից դուրս,

գ/ տալիս է լիազորագրեր,

դ/ գործում է Բանկի անունից առանց լիազորագրի,

ե/ սահմանված կարգով կնքում է պայմանագրեր,

զ/ Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Բանկի առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունները, Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալների, Բանկի գլխավոր հաշվապահի, Տնօրենների թեկնածությունները, Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը,ինչպես նաև Տնօրինության կողմից հավանության արժանացած ներքին իրավական ակտերը, բացառությամբ այն ներքին իրավական ակտերի, որոնց հաստատման իրավասությունը վերապահված է Տնօրինությանը,

է/ հաստատում է Բանկի աշխատատեղերը,

ը/ իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, սահմանում է աշխատակիցների պարտականությունները, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ, և վերահսկում է դրանց կատարումը,
թ/ սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և ազատում Բանկի աշխատակիցներին և կնքում աշխատանքային պայմանագրեր, բացառությամբ Ժողովի և Խորհրդի կողմից նշանակվող անձանցից,
ժ/ Բանկի աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,
ժա/ ստեղծում է մշտական և/կամ/ ընթացիկ աշխատանքային հանձնաժողովներ,
ժբ/ կազմում, ստորագրում և պետական լիազորված մարմին է ներկայացնում ՀՀ նորմատիվ իրավական ակտերով սահմանված հաշվետվություններ, այդ թվում՝ ֆինանսական հաշվետվություններ,
ժգ/ ստորագրում է Տնօրինության նիստերի արձանագրություններն ու որոշումները,
ժդ/ Բանկի անունից բացում է բանկային հաշիվներ,
ժե/ պարտավոր է Բանկի հիմնադիրների /բաժնետերերի/ պահանջով հատուցել իր կողմից Բանկին պատճառված վնասները, եթե այլ բան չի նախատեսված օրենքով կամ իր հետ կնքված աշխատանքային պայմանագրով,
ժզ/ գործում է ՀՀ իրավական ակտերի և Կանոնադրության հիման վրա.
ժէ/ իրավունք ունի առանց Ժողովի և/կամ/ Խորհրդի նախնական համաձայնության գործարքներ կնքել Բանկի անունից, եթե գործարքի գումարը չի գերազանցում Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25 տոկոսը,
ժը/ կազմակերպում է Ժողովի, Խորհրդի և Տնօրինության կողմից ընդունված որոշումների կատարումը, հաշվետու է Ժողովին, Խորհրդին ու Տնօրինության և իրավունք չունի Ժողովի, Խորհրդի անդամների համար պարտադիր որոշումներ կայացնելու,
ժթ/ իրականացնում է օրենքով կամ Կանոնադրությամբ Ժողովի, Խորհրդի, ներքին աուդիտի ստորաբաժանման իրավասությանը չվերապահված այլ լիազորություններ
ի/ կարող է ունենալ տեղակալներ, խորհրդականներ, որոնց իրավասությունները սահմանվում են Բանկի ներքին իրավական ակտերով,
իա/ արձակում է հրաման իր բացակայության կամ պաշտոնեական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում իր պարտականությունները Բանկի Խորհրդի կողմից նշանակված տեղակալներից/ Տնօրինության անդամներից մեկի վրա դնելու մասին,
իբ/ որոշում է Բանկի պայմանագրերով հատուկ պայմաններ կիրառելու մասին,
իգ/ մինչև լուծարման հանձնաժողովի ձևավորումն իրականացնում է լուծարման հանձնաժողովի լիազորությունները,
իդ/ հաստատում է Բանկի կառավարման այլ մարմինների իրավասությանը չվերապահված ներքին իրավական ակտերը,
իե/ իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ իրավասություններ:
Ներքին վերահսկողության նվազագույն պայմաններից ելնելով՝ Գլխավոր գործադիր տնօրենը, բացի վերը նշված իրավասություններից, իրականացնում է

նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված ներքին հսկողության նվազագույն պայմաններով նախատեսված իրավասություններ:

Տնօրինության կազմում ընդգրկվում են Գլխավոր գործադիր տնօրենը, նրա տեղակալները, գլխավոր հաշվապահը, Բանկի Տնօրենները:

Արթուր Հակոբյան,
Գլխավոր գործադիր տնօրեն, Տնօրինության նախագահ

Ծնվել է 1969 թվականի հունիսի 24-ին ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում: 1987-1989թթ. զինվորական ծառայություն է անցել ԽՍՀՄ զինված ուժերում:
1990-1995թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետում, ստացել տնտեսագետ-մաթեմատիկոսի որակավորում: 1996թ.-ի հունիսից մինչև 2000թ.-ի հունվար ամիսը աշխատել է ՀՀ ֆինանսների, ինչպես նաև վերակազմավորված ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություններում: Աշխատանքային գործունեությունը սկսել է նախարարության Դրամավարկային քաղաքականության վարչությունում, աշխատել է առաջատար մասնագետի, այնուհետ նույն վարչության վարչության պետի տեղակալ - բաժնի պետի պաշտոններում: Հետագայում, 1998թ. նշանակվել է նախարարության Պետական մասնակցության կառավարման վարչության պետի, հետագայում՝ Ֆինանսական ծրագրերի գլխավոր վարչությունում՝ վարչության պետի պաշտոնում: 2000-2014թթ. աշխատանքային գործունեություն է ծավալել ՀՀ բանկային համակարգում: 2000թ.-ի հունվարից մինչև 2002թ.-ի մայիսը հանդիսացել է «Հայխնայբանկ» ՓԲԸ-ի գործադիր տնօրենի տեղակալը, հետագայում՝ մինչև 2006թ.-ի օգոստոսը աշխատել է «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի գործադիր տնօրենի տեղակալի պաշտոնում: 2006թ.-ի հոկտեմբերից աշխատել է «Արարատբանկ» ԲԲԸ-Ի գործադիր տնօրեն-վարչության նախագահի տեղակալի, 2009-ից մինչև 2012թ.՝ նույն բանկի գործադիր տնօրեն-վարչության նախագահի առաջին տեղակալի պաշտոններում: 2012-2014թթ. ապրիլ ամիսը հանդիսացել է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի գործադիր տնօրենի, վարչության նախագահի առաջին տեղակալը: 2014-2016թթ. «Դիլիջան Ինտերնեշնլ Սքուլ Պրոփերթիզ» և «Դիլիջան Դեվելոփմենթ» հիմնադրամների գործադիր տնօրենն է և Հայաստանի զարգացման նախաձեռնություններ հիմնադրամի Դիլիջանի զարգացման ծրագրի ղեկավարը: 2014-2016թթ. սովորել է Մոսկվայի «Սկոլկովո» կառավարման դպրոցում, ստացել Գործարար կառավարման մագիստրոսի (Executive MBA) որակավորում:
2016թ.–ի օգոստոսի 1-ից «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում զբաղեցնում է Գլխավոր գործադիր տնօրեն-տնօրինության նախագահի պաշտոնը:
Ամուսնացած է, ունի երկու որդի մեկ դուստր:

Դավիթ Ազատյան
Հաշվապահական հաշվառման վարչության պետ, Գլխավոր հաշվապահ, Տնօրինության անդամ

Ծնվել է 1981թ. հունվարի 1-ին: 1997-2001թթ սովորել է Հայաստանի պետական

ճարտարագիտական համալսարանում:
Աշխատանքային գործունեությունը սկսել է 2003թ-ից՝ «ԱրդշինԲանկ» ԲԲԸ վարկային և ներդրումային քաղաքականության վարչության վարկային գործառնությունների բաժնում՝ որպես մասնագետ: Այնուհետև, 2003-2005թթ-ին աշխատել է «Հայխնայբանկ» ՓԲԸ-ի ներքին աուդիտի վարչությունում՝ որպես մասնագետ, ապա՝ գլխավոր մասնագետ:
2005-2011թթ-ին աշխատել է «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ում՝ զբաղեցնելով տարբեր պաշտոններ՝ Վերահսկողության վարչության մասնաճյուղերի վերահսկողության բաժնի առաջատար վերահսկողի, ապա Ներքին աուդիտի վարչության տեսչական վերահսկողության բաժնում առաջատար աուդիտորի, իսկ 10.10.2006թ-ից՝ գլխավոր աուդիտորի պաշտոնը:
17.01.2011թ-ից նշանակվել է «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ում որպես Ներքին աուդիտի վարչության պետ, ապա՝ 19.07.2011թ.-ից որպես Հաշվապահական հաշվառման վարչության պետ-գլխավոր հաշվապահ և «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ վարչության անդամ: 03.07.2017թ.-21.08.2017թ. աշխատել է «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ ֆինանսական տնօրեն-գլխավոր հաշվապահ:
2008-2013թթ.-ին հանդիսացել է «Սիլ Ինշուրանս» ապահովագրական ՓԲԸ Խորհրդի անդամ:
2017թ.–ի օգոստոսի 21-ից «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում զբաղեցնում է Հաշվապահական հաշվառման վարչության պետ-գլխավոր հաշվապահի պաշտոնը՝ հանդիսանալով Բանկի Տնօրինության անդամ:
Տիրապետում է անգլերեն, ռուսերեն և հայերեն լեզուներին:
Ամուսնացած է, ունի 2 երեխա

Գոհար Հարությունյան,
Գործառնությունների, ծառայությունների և SS դեպարտամենտի տնօրեն:
Տնօրնության անդամ
Ծնվել է 1971թ. փետրվարի 9-ին: 1991 թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի Ֆինանսահաշվային ֆակուլտետը: 2006թ.-ից ուսանում է Էյ-Սի-Սի-Էյ հաստատությունում (Երդվյալ որակավորված հաշվապահների ասոցիացիա):
1992-1999թթ. աշխատել է «Արդշինբանկ» ԲԲԸ՝ Հաշվապահական հաշվառման վարչությունում, 1999թ. նշանակվել է նույն բանկի Մաշտոցի մասնաճյուղի գլխավոր հաշվապահ: 2003-2004թթ. զբաղեցրել է «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ Հաճախորդների սպասարկման վարչության Հաշվեգործառնական բաժնի պետի պաշտոնը: 2004-2005թթ. աշխատել է «ՎՏԲ-Արմենիա» ՓԲԸ Հաճախորդների սպասարկման բաժնի պետ, այնուհետև նշանակվել նույն բանկի Ռիսկերի վերլուծության և պլանավորման վարչության պետի տեղակալ-Բյուջետային պլանավորման բաժնի պետ: 2005թ. դեկտեմբերի 1-ից մինչև 2007թ. օգոստոսի 1-ն աշխատել է «Կասկադ-Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ում որպես գլխավոր հաշվապահ, իսկ 2007թ. օգոստոսի 1-ից տեղափոխվել է նույն Խմբի անդամ «Կասկադ Բանկ» ՓԲԸ՝ որպես գլխավոր հաշվապահ: 2010թ. հունիսից «Կասկադ Բանկ» ՓԲԸ և «Ամերիաբանկ» ՓԲԸ միացման պայմանագրի համաձայն տեղափոխվել է «Ամերիաբանկ» ՓԲԸ, ուր 2010թ. հոկտեմբերի 8-ից նշանակվել է Ֆինանսական

դեպարտամենտի գլխավոր հաշվապահի տեղակալ:
2011թ. հուլիսի 1-ից մինչև նոյեմբերի 30-ն աշխատել է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում որպես Հաշվետվությունների ու վերլուծությունների բաժնի պետ: 2011 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2016թ. հուլիսի 31-ը ներառյալ ստանձնել է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի Գլխավոր հաշվապահի պաշտոնը: 2017թ. սեպտեմբերի 26-ից զբաղեցնում է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Գործառնությունների, ծառայությունների և SS դեպարտամենտի տնօրենի պաշտոնը: Գոհար Հարությունյանը «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Տնօրինության անդամ է:

Հրանտ Հակոբյան
Ֆինանսական տնօրեն, Տնօրինության անդամ
Ծնվել է 1980թ. ապրիլի 15-ին Երևանում՝ Հայաստան: Ունի Բուենոս Այրեսի համալսարանի տնտեսագիտության բակալավրի և Կոլումբիայի (ԱՄՆ) համալսարանի Գործարար կառավարման մագիստրոսի (MBA) որակավորում: Տիրապետում է իսպաներեն, անգլերեն, ռուսերեն և հայերեն լեզուներին:
Մինչ Հայաստան տեղափոխվելը զբաղեցրել է տարբեր պատասխանատու պաշտոններ Corporación América կազմակերպությունում՝ մասնակցություն է ունեցել ֆինանսական, բիզնեսի զարգացմանը, միաձուլման և ձեռքբերման գործընթացին ուղղված ծրագրերին, նախագծերին: ՀՀ-ում աշխատանքային գործունեությունը սկսել է 2008թ-ից. 2008-2011թթ. «Հայփոստ Տրաստ Մենեջմենթ Բի. Վի.» Ընկերությունում՝ զբաղվելով «Հայփոստ» ՓԲԸ-ում Կորպորատիվ զարգացման գործառույթներով և մինչ այժմ հանդիսանում է «Հայփոստ» ՓԲԸ տնօրենների խորհրդի անդամ: 2011-2017թթ. զբաղեցրել է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Գործադիր տնօրենի խորհրդականի պաշտոնը:
2017թ.փետրվարից հանդիսանում է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի Ֆինանսական տնօրեն:

Վահե Դալյան
Ռիսկերի կառավարման գծով տնօրեն, Տնօրինության անդամ
Ծնվել է 1969թ. դեկտեմբերի 21-ին: 1992թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի Ռադիոտեխնիկա ֆակուլտետը ստանալով Ռադիոինժեների որակավորում: Այնուհետև՝ 1994թ. ավարտել է Հայկազյան համալսարանի Բիզնես դպրոցը՝ ստանալով Գործավար կառավարման մագիստրոսի (MBA) որակավորում, իսկ 2002թ. ավարտել է Լոնդոնի բիզնես դպրոցը ստանալով Ֆինանսների մագիստրոսի (MIF) որակավորում:
Աշխատանքային գործունեությունը սկսել է 1995թ.-ից ստանձնելով «Ջինիշյան հիշատակի հիմնադրամ»-ի վարկային ծրագրի տնօրենի պաշտոնը (1995-1998թթ.): 1999-2001թթ. աշխատել է ԱՄՆ ՄԶԳ/Շորբանկ խորհրդատվական ծառայություններ ծրագրում որպես միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների վարկային ծրագրի պատասխանատու: 2003-2006թթ. եղել է ԱՄՆ ՄԶԳ Փոքր ձեռնարկությունների զարգացման նախաձեռնության միկրովարկավորման կազմակերպությունների զարգացման մասնագետ: 2006-2008թթ. աշխատել է ԱՄՆ ՄԶԳ Ֆինանսական ոլորտի զարգացման ծրագրում՝ նախ որպես միկրովարկավորման մասնագետ, այնուհետև որպես խմբի ղեկավար:
2009թ.-ից առ այսօր Վահե Դալյանն աշխատում է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում:

Զբաղեցրել է Ներդրումների զարգացման և ֆինանսական գործիքների բաժնի պետի, ռիսկերի կառավարման բաժնի պետի, ռիսկերի կառավարման վարչության պետի պաշտոնները: 2013-2017թթ. ստանձնել է Բանկի Գործադիր տնօրենի տեղակալի և Առևտրային ֆինանսավորման վարչության պետի պաշտոնները:
2017թ. փետրվարից հանդիսանում է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Ռիսկերի կառավարման գծով տնօրեն:
Վահե Դալյանը 2011թ.-ից Բանկի Վարչության /ներկայումս Տնօրինության/ անդամ է:

Արթուր Նահապետյան
Բիզնեսի զարգացման գծով տնօրեն,
Տնօրինության անդամ
Ծնվել է 1981թ. Սեպտեմբերի 25-ին: 1998-2003թթ. ուսանել է Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտում: Աշխատանքային գործունեությունը սկսել է 2003թ.-ից՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ից, Ռազմավարության և մեթոդոլոգիայի վարչությունում՝ որպես մասնագետ, ապա՝ առաջատար մասնագետ:
2005թ-ին աշխատել է «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ում՝ զբաղեցնելով Տեղեկատվավերլուծական վարչության գլխավոր մասնագետի պաշտոնը:
17.08.2006թ. ընդունվել է աշխատանքի «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ում՝ մասնաճուղերի կառավարման վարչության պետի տեղակալի պաշտոնում:
20.08.2007թ-ին զբաղեցրել է «Յունիբանկ» ՓԲԸ-ում ներքին աուդիտի գործառնական աուդիտի վարչության ակտիվապասիվային գործարքների աուդիտի բաժնի վերահսկիչի պաշտոնը, այնուհետև նշանակվել է բաժնի պետի հաստիքում:
23.01.2008թ.-ից նշանկվել է մեթոդոլգիայի և ստանդարտացման դեպարտամենտի տնօրեն, ապա՝ 02.06.2008թ.-ին նշանակվել է բանկի իրավաբանական դեպատամենտի մեթոդոլոգիայի և ստանդարտացման վարչության պետ:
26.01.2009թ.-ին ընդունվե է աշխատանքի Արմենիա Փոստբանկ ՓԲԸ՝ որպես դասընթացավարների խմբի ղեկավար, ապա նշանակվել է որպես Գործադիր փոխտնօրեն:
17.10.2009թ.-ից «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Անձնակազմի կառավարման բաժնում ընդունվել է որպես դասընթացավար, այնուհետև նույն վարչությունում՝ որպես կարիերայի զարգացման պատասխանտու: 0106.2010թ. նշանակվել է փոստբանկային ծառայությունների ղեկավար, իսկ 22.10.2012թ.-ին՝ որպես Մեթոդոլոգիայի բաժնի պետ:
01.02.2017թ-ին նշանակվել է որպես Բիզեսի զարգացման գծով տնօրենի տեղակալ-Ռազմավարության, պլանավորման և վերլուծությունների վարչյան պետ:
01.09.2017թ.-ից զբաղեցնում է Բիզնեսի զարգացման գծով տնօրենի պաշտոնը:
Տիրապետում է ռուսերեն, անգլերեն, հայերն լեզուներին:
Ամուսնացած է, ունի 2 դուստր:
Տնօրինության անդամ է:

Գրիգորի Բաղդասարյան
Մանրածախ բիզնեսի գծով տնօրենի տեղակալ-ՄՑՎ վարչության պետ, Տնօրինության անդամ :

Ծնվել է 1976թ. նոյեմբերի 26-ին: 1992-1997թթ. սովորել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտում ստանալով ինժեներ-տնտեսագետի որակավորում:
Աշխատանքային գործունեությունը սկսել է 1999-2001թթ.՝ Սևանի Սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնում՝ որպես 2-րդ կարգի տեսուչ:
2004-2007թթ. աշխատել է «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի Սևանի մասնաճյուղում՝ որպես վարկային մասնագետ:
2007թ.-ի հոկտեմբերից մինչև 2009թ.-ի մայիս աշխատել է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ «Սևան» մասնաճյուղում՝ որպես վարկային մասնագետ:
2009-2011թթ. հանդիսացել է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ Սևան մասնաճյուղի կառավարիչ,
2011-2012թթ.՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ Մանրածախ դեպարտամենտ, Բիզնեսի զարգացման գծով Տարածքային տնօրեն:
2012-2016թթ. «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում զբաղեցրել է տարածաշրջանային ղեկավարի պաշտոնը:
2017թ.-ի փետրվարից նշանակվել է Մանրածախ բիզնեսի գծով տնօրենի տեղակալ-ՄՑՎ վարչության պետ:
2017թ. սեպտեմբերի 1-ից նշանակվել է Մանրածախ բիզնեսի գծով տնօրեն:
Ամուսնացած է, ունի 2 երեխա:

Ռոստոմ Բադալյան
Կորպորատիվ բիզնեսի գծով տնօրեն:
Տնօրինության անդամ:
Ծնվել է 1983թ. փետրվարի 11-ին: 1999-2004թթ. սովորել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետում:
2007-2013թթ-ին «Արարատբանկ» ՓԲԸ-ում զբաղեցրել է տարբեր պաշտոններ՝ որպես վարկային մասնագետ, միկրովարկավորման խմբի ղեկավար, վարկավորման բաժնի պետի տեղակալ/կորպորատիվ հաճախորդների վարկավորման բաժնի ղեկավար, վարկավորման բաժնի պետ:
2014թ.-ի մարտից մինչև մայիս աշխատել է «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում՝ որպես կորպորատիվ հաճախորդների հետ աշխատանքի վարչության միջին հաճախորդների հետ աշխատանքի բաժնի պետ:
2014-2016թթ. աշխատել է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ում՝ որպես վարկային դեպարտամենտի սեփական ռեսուրսներով վարկավորման վարչության պետ:
2016թ.-ի ապրիլ ամսից մինչև 2017թ.-ի փետրվար աշխատել է «Իզի Փեյ» ՍՊԸ-ում՝ որպես տնօրեն:
2017թ.-ի փետրվարի 06-ից զբաղեցնում է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կորպորատիվ բիզնեսի գծով տնօրենի պաշտոնը:
Ամուսնացած է, ունի 2 երեխա:

Ներքին աուդիտի ստորաբաժանում

Ներքին աուդիտի ստորաբաժանման /այսուհետ՝ ներքին աուդիտ/ ղեկավարը և անդամները նշանակվում են Խորհրդի կողմից: Ներքին աուդիտի անդամ չեն կարող լինել Բանկի կառավարման մարմինների անդամները, այլ ղեկավարներ ու

աշխատակիցներ, ինչպես նաև Գործադիր մարմնի անդամների հետ փոխկապակցված անձինք:
Ներքին աուդիտի ղեկավարը և անդամները պարտավոր են պահպանել Բանկի աշխատակիցների համար սահմանված աշխատանքային կարգապահությունը:
Ներքին աուդիտը Խորհրդի կողմից հաստատված կանոնակարգի համաձայն՝

ա) հսկողություն է իրականացնում Բանկի ընթացիկ գործունեության և գործառնական ռիսկերի նկատմամբ,

բ) հսկողություն է իրականացնում Գլխավոր գործադիր տնօրենի, Տնօրինության, Բանկի տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից օրենքների, այլ իրավական ակտերի և Բանկի ներքին ակտերի, Գլխավոր գործադիր տնօրենին, Տնօրինության տրված հանձնարարականների կատարման նկատմամբ,

գ) եզրակացություններ և առաջարկություններ է տալիս Խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրած հարցերի վերաբերյալ:

Ներքին աուդիտի իրավասություններին վերաբերող հարցերը չեն կարող փոխանցվել Բանկի կառավարման մարմինների կամ այլ անձանց լուծմանը:
Ներքին աուդիտի ղեկավարը Խորհրդին, Տնօրինության և Գլխավոր գործադիր տնօրենին է ներկայացնում հետևյալ հաշվետվությունները՝

ա) հերթական՝ տարեկան ծրագրով սահմանված ստուգումների արդյունքների մասին,

բ) արտահերթ, եթե բացահայտվել են ներքին աուդիտի հիմնավորված կարծիքով էական խախտումներ, ընդ որում, եթե խախտումները հետևանք են Գլխավոր գործադիր տնօրենի, Տնօրինության կամ Խորհրդի գործողությունների կամ անգործության, ապա հաշվետվությունը ներկայացվում է անմիջապես Խորհրդի նախագահին:

Սույն մասով նախատեսված դեպքերում հաշվետվությունները ներկայացվում են խախտումը հայտնաբերելուց առավելագույնը երկու աշխատանքային օրվա ընթացքում:
Ներքին աուդիտն օրենքների, այլ իրավական ակտերի խախտումներ բացահայտելու դեպքում պարտավոր է դրանք ներկայացնել բանկի Խորհրդին՝ միաժամանակ առաջարկելով այդ խախտումների վերացման և ապագայում չկրկնման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումներ:

3.8.2 Տեղեկություններ թողարկողի կառավարմանը մասնակցող յուրաքանչյուր անձի վերաբերյալ

Անուն ազգանուն	**Պաշտոնը**	**Բնակության վայրը (հասցեն)**	**Մասնագիտությունը**	**վերջին 3 տարիներում զբաղեցրած պաշտոնները այդ թվում համատեղությամբ**
Արմեն Տեր-Տաճատյան	Խորհրդի նախագահ	ք.Երևան, Չեխովի փ, շենք 10, բն.120	Իրավաբան	«Տեր-Տաճատյան իրավաբանական և բիզնես-խորհրդատվական» ՓԲԸ. Հիմնադիր տնօրեն, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի նախագահ

Ջուան Պաբլո Գեչիդջյան	Խորհրդի անդամ	Վահագնի թաղ. Արաքս 23	Մենեջեր	«Հայփոստ» ՓԲԸ դիտորդ խորհրդի նախագահ, «ԸդվանսդԳլոբալ Ինվեսթմենթս» ԷլԷլՍի-ի տնօրեն, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ խորհրդի անդամ, Արմենիա միջազգային օդանավակայանների տնօրեն
Արսեն Գամաղելյան (Տեր Հովել քահանա)	Խորհրդի անդամ	Զվարթնոց շ. 15, բն. 18	Հոգևորական	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ֆինանսական բաժնի հաշվապահ, Քահանա, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ խորհրդի անդամ
Խոսե Լուիս Պերսիկո	Խորհրդի անդամ	Բուենոս Այրես, Ռույ Դիաս դե Գուզման 257փ., 4/բ շ./	Տնտեսագետ	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ խորհրդի անդամ «Կորպորասիոն Ամերիկա» ՍԱ-ում որպես «Բոդեգաս դել Ֆին դել Մունդո» ՍԱ-ի գլխավոր ֆինանսական տնօրեն
Դանիել Գիլերմո Սիմոնուտտի	Խորհրդի անդամ	Բուենոս Այրես, Հոնդուրասի փ., 5663-GA1	Հաշվապահ	Ամերիկյան միջազգային օդանավակայանների (ԱՄՕ)՝ Զվարթնոց միջազգային օդանավակայան (Երևան, Հայաստանի Հանրապետություն) և Կարասկո միջազգային օդանավակայան (Մոնտեվիդեո, Ուրուգվայի Հանրապետություն) կոնցեսիոներ կազմակերպությունների գործունեությունը վերահսկող կորպորացիայի գլխավոր ֆինանսական տնօրեն. «Կոնվերս Բանկ» ՓԲԸ խորհրդի անդամ
Խորխե Ալբերտո Դել Ագիլա	Խորհրդի անդամ	Արգենտինա, Բուենոս Այրես, Լաս Կամպանիլաս 602	Տնտեսագետ-քաղաքագետ	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ խորհրդի անդամ

Խուան Կարլոս Օսկոիդի	Խորհրդի անդամ	ք. Բուենոս Այրես, Ալբարինո 1064	Մենեջեր-Տնտեսագետ	«Afluenta» S.A.-ի տնօրեն, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Կոմերցիոն և Այլ Քաղաքականությունների Զարգացման և Վերահսկողության հանձնաժողովի նախագահ, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ խորհրդի անդամ
Արթուր Հակոբյան	Գլխավոր գործադիր Տնօրեն, Տնօրինության նախագահ	Ք. Երևան Նոր–Նորքի 2-րդ զանգված Թոթովենցի շ. 2, բն 10	Տնտեսագետ-մաթեմատիկոս	«Դիլիջան Ինտերնեշնլ Սքուլ Պրոփերթիզ» և «Դիլիջան Դեվելոփմենթ» հիմնադրամների գործադիր տնօրեն, «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» հիմնադրամի Դիլիջանի զարգացման ծրագրի ղեկավար
Դավիթ Ազատյան	Հաշվապահական հաշվառման վարչության պետ, Գլխավոր հաշվապահ, Տնօրինության անդամ	Ք. Աշտարակ, Ուջան 3 փ, տուն 11	Ճարտարագետ	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Հաշվապահական հաշվառման վարչության պետ-գլխավոր հաշվապահ, «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ ֆինանսական տնօրեն-գլխավոր հաշվապահ:
Գոհար Հարությունյան	Գործառնությունների, ծառայությունների և SS դեպարտամենտի տնօրեն Տնօրինության անդամ	Ք. Երևան. Հանրապետության փ. 46շ.բն.16 Պուշկինի 1, բն.7	Տնտեսագետ	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Հաշվապահական հաշվառման վարչության պետ-Գլխավոր հաշվապահ
Հրանտ Հակոբյան	Ֆինանսական տնօրեն, Տնօրինության անդամ	Ք. Երևան Այգեստան 9փ., տուն 45	Տնտեսագետ	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Գործադիր տնօրենի խորհրդական
Վահե Դալյան	Ռիսկերի կառավար-ման գծով տնօրեն, Վարչության	Ք. Երևան. Սոսե 2 նրբ, 8/16	Ռադիոինժեներ, ֆինանսիստ	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Գործադիր տնօրենի տեղակալ-Առևտրային ֆինանսավորման վարչության պետ

	անդամ			
Արթուր Նահապետյան	Ռիսկերի կառավարման գծով տնօրեն, Տնօրինության անդամ	Ք. Երևան. Նոր Նորքի 9զ., 81 շ, 31 բն	Տնտեսագետ	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Մեթոդոլոգիայի բաժնի պետ, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ բիզնեսի զարգացման գծով տնօրենի տեղակալ – Ռազմավարության, պլանավորման և վերլուծությունների վարչության պետ
Գրիգորի Բաղդասարյան	Մանրածախ բիզնեսի գծով տնօրեն Տնօրինության անդամ	Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, 5-րդ միկրոշրջան, 7շ., բն7	Ինժեներ-տնտեսագետ	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Տարածաշրջանային ղեկավար
Ռոստոմ Բադալյան	Կորպորատիվ բիզնեսի գծով տնօրեն Տնօրինության անդամ	Ք. Երևան. Նուբարաշեն 11, 10շ., բն.28	Տնտեսագետ	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ում՝ որպես վարկային դեպարտամենտի սեփական ռեսուրսներով վարկավորման վարչության պետ, «Իզի Փեյ» ՍՊԸ տնօրեն
Լիլիթ Յորդանյան	Ներքին աուդիտի ղեկավար	Ք. Երևան. Ամիրյան 4/6, բն.107	Տնտեսագետ	Ներքին աուդիտի ղեկավար

3.8.3 Շահերի բախումը

Բանկի և Բանկի կառավարմանը մասնակցող անձանց միջև ազդագրի գրանցման ներկայացնելու պահի դրությամբ շահերի բախումը բացակայում է:

3.9 Հսկող անձինք

ա. Բանկը չունի նշանակալից մասնակից հանդիսացող ֆիզիկական անձինք:
բ. Բանկի **ուղղակի նշանակալից մասնակից** իրավաբանական անձինք են՝
1. «Ընդվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս» ԷլԷլՍի՝ սովորական բաժնետոմսերի 80.94% և արտոնյալ բաժնետոմսեր 333 հատ
2. ՀայՓոստ Թրասթ Մենեջմենթ ԲԻ.ՎԻ. Ընկերությունը՝ սովորական բաժնետոմսերի 14.06%:
գ. «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի **անուղղակի նշանակալից մասնակիցներն են**.
1. «Ընդվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս» ԷլԹիԴի, քանի որ տիրապետում է բանկի նշանակալից մասնակից «Ընդվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս» ԷլԷլՍի 100% բաժնետոմսերին:

2. Փոստ Ֆայնընս Ինթերնեյշնլ Բի. Վի., քանի որ տիրապետում է բանկի նշանակալից մասնակից Հայփոստ Թրասթ Մենեջմենթ Բի. Վի. Ընկերության 100% բաժնետոմսերին: Փոստ Ֆայնընս Ինթերնեյշնլ Բի. Վի. բաժնետոմսերի 100% պատկանում է «Ըդվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս» ԷլԷլՍի ընկերությանը:
3. Էդուարդո Էռնեկյան, քանի որ տիրապետում է «Ըդվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս» ԷլԹիԴի 100% բաժնետոմսերին, իսկ վերջինս էլ տիրապետում է բանկի նշանակալից մասնակից «Ըդվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս» ԷլԷլՍի-ի 100% բաժնետոմսերին:

3.9.1 Բանկի կողմից թողարկված արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի կողմից մինչ այժմ թողարկվել և տեղաբաշխվել է 54,722 (Հիսունչորս հազար յոթ հարյուր քսաներկու) հատ սովորական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 300,000 (Երեք հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով, և 333 (Երեք հարյուր երեսուներեք) հատ արտոնյալ փոխարկելի բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 100 (Մեկ հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով, որոնք էլ ձևավորում են Բանկի կանոնադրական կապիտալը:
1) Բանկի կողմից թողարկված բոլոր արժթղթերը ոչ փաստաթղթային են:
2) Բանկի կողմից թողարկված արժեթղթերը թույլատրված չեն որևէ կարգավորվող շուկայում առևտրին:
3) Բանկի թողարկած 54,722 հատ սովորական և 333 հատ արտոնյալ բաժնետոմսերը տեղաբաշխվել են ամբողջությամբ:
4) Թողարկված արժեթղթերի մարման ժամկետ նախատեսված չէ:
5) Բանկի հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերն իրավունք ունի՝
ա/ մասնակցել Ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,
բ/ մասնակցել Բանկի կառավարմանը, ՀՀ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում՝ մասնակցող անձի մասնագիտական որակավորման վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկի դրական եզրակացության առկայության դեպքում,
գ/ ստանալ շահութաբաժիններ Բանկի գործունեությունից առաջացած շահույթից,
դ/ առաջնահերթ կարգով ձեռք բերել Բանկի կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե ՀՀ օրենսդրությամբ և Կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ,
ե/ ստանալ Բանկի գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից և տեղեկություններից բացի, այդ թվում՝ Կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին, Բանկի ֆինանսական գործունեությանը, ստանալու Բանկի վերջին տարեկան հաշվետվության և արտաքին աուդիտի եզրակացության պատճենները, ինչպես նաև հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունները: Իսկ Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 2% և ավելիին տիրապետող բաժնետերն իրավունք ունի ստանալ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված փաստաթղթերն ու տեղեկությունները նույն հոդվածով սահմանված կարգով:

զ/ Ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,
է/ հանդես գալ առաջարկություններով Ժողովներում,
ը/ Ժողովներում քվեարկել իրեն պատկանող քվեարկող բաժնետոմսերի ձայների չափով,
թ/ դիմել դատարան՝ Ժողովի կողմից ընդունված և գործող ՀՀ նորմատիվ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,
ժ/ Բանկի սեփական միջոցների հաշվին կանոնադրական կապիտալն ավելացնելիս Խորհրդի կողմից որոշված գնով, բայց ոչ պակաս անվանական արժեքից, ձեռք բերել համապատասխան քանակությամբ հասարակ (սովորական) բաժնետոմսեր,
ժա/ Բանկի լուծարման դեպքում ստանալ Բանկի գույքի (միջոցների) իրեն հասանելիք մասը,
ժբ/ նախապատվության իրավունքով նույն գնով, որով այն բաժնետերերի կողմից վաճառվում է և այլ հավասար պայմաններով ձեռք բերել վաճառվող բաժնետոմսերը՝ պահպանելով Կանոնադրության պահանջները,
ժգ/ Բանկի կանոնադրական կապիտալում իր բաժնետոմսերը կամ դրա մի մասը վաճառել կամ այլ ձևով զիջել Բանկի մեկ կամ մի քանի բաժնետերերի, ինչպես նաև երրորդ անձանց՝ պահպանելով ՀՀ օրենսդրությամբ և Կանոնադրությամբ սահմանված կարգը,
ժդ/ ունենալ Կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:
Բանկի արտոնյալ փոխարկելի բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերն իրավունք ունի՝
ա/ Ժողովում մասնակցել ձայնի իրավունքով, եթե քննարկվում են Բանկի վերակազմակերպման կամ լուծարման հարցերը, Կանոնադրության փոփոխման կամ լրացման հետ կապված այն որոշումները, որոնք սահմանափակում են իր իրավունքները,
բ/ արտոնյալ փոխարկելի բաժնետոմսերի ձեռք բերման պահից մեկ տարվա ընթացքում պահանջել դրանց փոխարկում հասարակ (սովորական) բաժնետոսերի, առաջնահերթության իրավունքով ձեռք բերել Բանկի կողմից տեղաբաշխվող հայտարարված բաժնետոմսերը, արտոնյալ բաժնետոմսերը՝ հավասար քանակային հարաբերակցությամբ փոխարկելով հասարակ (սովորական) բաժնետոմսերի և Կանոնադրությամբ սահմանված ժամկետներում վճարելով լրացուցիչ տեղաբաշխվող հասարակ (սովորական) բաժնետոմսերի շուկայական արժեքի և արտոնյալ փոխարկվող բաժնետոմսերի անվանական արժեքի ու վերջիններիս հասանելիք շահութաբաժնի գումարի տարբերությունը,
գ/ իրավասու մարմնի կողմից շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման դեպքում ստանալ տարեկան հաստատագրված շահութաբաժին իրենց պատկանող արտոնյալ փոխարկելի բաժնետոմսի անվանական արժեքի 20%-ի չափով,
դ/ օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում մասնակցել Բանկի գործերի կառավարմանը՝ մասնակցող անձի մասնագիտական որակավորման վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկի դրական եզրակացության առկայության դեպքում,
ե/ հանդես գալ առաջարկություններով Ժողովներում,

զ/ Կանոնադրությամբ նախատեսված դեպքերում Ժողովներում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով,
է/ Բանկի չբաշխված շահույթի հաշվին կանոնադրական կապիտալն ավելացնելիս Խորհրդի կողմից որոշված գնով, բայց ոչ պակաս անվանական արժեքից, ձեռք բերել համապատասխան քանակությամբ հասարակ (սովորական) բաժնետոմսեր:
Բանկի բաժնետերը պարտավոր է՝
ա/ Կանոնադրությամբ սահմանված ժամկետներում լրիվ վճարել իր բաժնետոմսերի արժեքը,
բ/ չհրապարակել Բանկի գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկությունները, որոնց ցանկը սահմանում է Բանկի խորհուրդը,
գ/ Խորհրդին և Բանկի աուդիտն իրականացնող անձին տրամադրել օրենքով սահմանված տեղեկություններ Բանկի գործարքներում իր շահագրգռվածության, Բանկի հետ գործարք իրականացնող անձանց հետ իր փոխկապակցվածության մասին,
դ/ ենթարկվել Կանոնադրության այլ պահանջներին:
6) «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի կողմից 2014 թվականի շահույթից հաշվարկվել և վճարվել է 286,020 հազ. դրամ, 2013 թվականի շահույթից՝ 287,922 հազ. դրամ, 2015 թվականի շահույթից՝ 562,246 հազ. դրամ, 2016 թվականի շահույթից՝ 702,047 հազ. դրամ շահաբաժին:
7) Ընկերության բաժնետոմսերի շուկայական գնի մասին տեղեկություններ չկան, քանի որ նրանք ազատորեն չեն շրջանառվում շուկայում:
8) Ընկերության բաժնետոմսերի փոխարկման, բաժանման, համախմբման, հետգնման դեպքեր չեն եղել:

3.10 Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսի վերաբերյալ

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի բոլոր տարիներ ֆինանսական հաշվետվությունները կազմված են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին համապատասխան:
Բանկի աուդիտորական եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև անկախ աուդիտորական եզրակացությունները ներկայացված են սույն Ծրագրային ազդագրի Հավելված 7-ում:
Նախորդ տարիների «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի գործունեության ֆինանսական արդյունքները և ակտիվների տարեկան եկամտաբերությունը ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

հազար ՀՀ դրամ

ԱՆՎԱՆՈՒՄԸ	**31/12/17 (Աուդիտ չանցած)**	**31/12/16 (Աուդիտ անցած)**	**31/12/15 (Աուդիտ անցած)**
ԱԿՏԻՎՆԵՐ	252,735,853	190,993,270	158,903,165
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	216,736,232	158,815,267	138,201,740
ԿԱՊԻՏԱԼ	35,999,621	32,178,003	20,701,425
Զուտ տոկոսային եկամուտ	9,340,183	7,071,898	6,496,275
Գործառնական եկամուտ (զուտ կոմիսիոն վճարները ներառյալ)	13,571,064	9,971,725	9,209,400

Շահույթ/(վնաս) հարկումից առաջ	4,414,515	1,508,590	-616,073
Շահույթ (վնաս) հարկումից հետո	3,626,122	1,565,032	-663,583
Ակտիվների շահութաբերության գործակիցը (ROA, %)	1.65%	0.94%	-0.44%
Սեփական կապիտալի շահութաբերության գործակիցը (ROE, %)	10.66%	5.84%	-2.97%

Բանկի ֆինանսական գործունեությունը

ա. Բանկի պարտավորությունները (ռեսուրսները) ունեն հետևյալ կառուցվածքը.

Ֆինանսական միջնորդություն կատարող անձանց, այդ թվում՝ բանկերի, բնականոն գործունեության համար ռեսուրսների գլխավոր աղբյուրներն են հանդիսանում սեփական կապիտալը և ներգրավված միջոցները: Բանկը վարկերի տրամադրման և միջոցների այլ տեղաբաշխումների նպատակով վերջին տարիներին զգալիորեն ամրապնդել է իր ռեսուրսային բազան:

	31/12/17 (Աուդիտ չանցած)	**Տես. կշիռ %**	**31/12/16 (Աուդիտ անցած)**	**Տես. կշիռ %**	**31/12/15 (Աուդիտ անցած)**	**Տես. կշիռ %**
Ռեսուրսներ, ընդամենը, այդ թվում՝	252,735,853	100	190,993,270	100	158,903,165	100
Սեփական կապիտալ	35,999,621	14.24	32,178,003	16.85	20,701,425	13.03
Պարտավորություններ, որից՝	216,736,232	85.76	158,815,267	83.15	138,201,740	86.97
հաճախորդներից ներգրավված միջոցներ	173,914,157	68.81	139,680,217	73.13	111,430,135	70.12
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	27,832,817	11.01	9,374,272	4.91	17,326,492	10.90
այլ պարտավորություններ	1,336,872	0.53	841,484	0.44	755,678	0.48

31.12.2016թ և 31.12.2017թ. դրությամբ Բանկի պարտավորությունների կատարման մակարդակը բնորոշող ստորև ներկայացված աղյուսակում, ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված նորմատիվային ցուցանիշների փաստացի մակարդակը վկայում են, որ Բանկի պարտավորությունների կատարման հնարավորությունները պահպանվել են բարձր մակարդակի վրա:

Նորմատիվներ	Նորմատիվի փաստացի մեծությունը՝ հաշվարկված բանկի համար 31/12/17	Նորմատիվի փաստացի մեծությունը՝ հաշվարկված բանկի համար 31/12/16	ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը
Ն1 Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	16.96%	21.56%	12.00%
Ն21 Բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	35.26%	39.01%	15.00%
Ն22 Բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը	102.49%	116.23%	60.00%

բ. Բանկի սեփական կապիտալի կառուցվածքը 2015-2017թթ. ընթացքում ունի հետևյալ տեսքը.

Կապիտալ	31/12/17 (Աուդիտ չանցած)	31/12/16 (Աուդիտ անցած)	31/12/15 (Աուդիտ անցած)
Կանոնադրական կապիտալ	16,416,633	16,416,633	7,002,033
Էմիսիոն եկամուտ	63,233	63,233	63,233
Պահուստներ՝	6,595,922	5,724,323	4,659,858
Գլխավոր պահուստ	1,243,064	1,005,996	1,005,996
Վերագնահատման պահուստներ	5,352,858	4,718,327	3,653,862
Կուտակված շահույթ (վնաս)	12,923,833	9,973,814	8,976,301
Ընդամենը կապիտալ	35,999,621	32,178,003	20,701,425

Բանկի սեփական կապիտալը տարիների ընթացքում ունեցել է աճի միտում, որը պայմանավորված է եղել ինչպես կուտակված (չբաշխված) շահույթի աճով, այնպես էլ բաժնետերերի կողմից կապիտալի համալրմամբ: Նշված միտումները կրելու են շարունակական բնույթ:

Գ. Հարկային արտոնություններ

Բանկը չի օգտվում որևէ հարկային արտոնությունից:

Դ.Դատական և իրավական ընթացակարգը

Նախորդ 12 ամիսների ընթացքում Բանկի նկատմամբ դատարանի, պետական

մարմինների կողմից կայացրած և օրինական ուժ ստացած վճիռ/դատական ակտ չի եղել:
Բանկի դեմ սնանկության կամ լուծարային վարույթի կիրառման նախաձեռնություններ վերջին 12 ամիսների ընթացքում չի եղել:

3.11 Էական պայմանագրեր

2017 թվականի ընթացքում Բանկի կողմից բնականոն գործունեության շրջանակներից դուրս կնքված և գործողության մեջ գտնվող պայմանագրեր, որոնց գինը գերազանցում է Բանկի վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում նշված սեփական կապիտալի արժեքի 5%-ը չեն կնքվել:

3.12 Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը եվ երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը

1. Սույն Ազդագրի պատրաստման ընթացքում Թողարկողը չի օգտվել այլ խորհրդատուների ծառայություններից:
2. Թողարկողը չունի երրորդ անձ փորձագետ կամ խորհրդատու, որոնց մասնագիտական կարծիքն օգտագործվել է սույն ազդագրում:
3. Բացի սույն Ծրագրային Ազդագրում ներկայացված Թողարկողի պատմական ֆինանսական հաշվետվություններից, որոնք ենթարկվել են աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից, սույն Ծրագրային Ազդագրում ներկայացված այլ տեղեկատվություն չի ենթարկվել աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից: Հաշվետվությունների և դրանց վերաբերյալ անկախ աուդիտորական կազմակերպությունների կողմից տրված եզրակացությունների պատճենները ներկայացված են Ազդագրի Հավելված 7-ում:

3.13 Այլ տեղեկատվություն

Բանկի Կանոնադրությունը, միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունները, աուդիտորական եզրակացությունները մշտապես հասանելի են հանրությանը էլեկտրոնային տարբերակով: Նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրված են Բանկի ինտերնետային կայքում՝ www.conversebank.am:
Սույն Ծրագրային ազդագրի էլեկտրոնային տարբերակը կիրառության ողջ ժամկետի ընթացքում տեղադրված լինելու բանկի ինտերնետային կայքում՝ www.conversebank.am:
Ներդրողը անվճար կարող է ձեռք բերել սույն Ծրագրային ազդագիրը և դրան կից փաստաթղթերը թղթային տարբերակով՝ Բանկի Գլխամասային գրասենյակում՝ Հայաստանի Հանրապետություն, 0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1 հասցեում:

ՆԵՐԴՐՈՂԸ, ԾԱՆՈԹԱՆԱԼՈՎ ՍՈՒՅՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻՆ, ՊԵՏՔ Է ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՆԱՀԱՏԻ ՏՎՅԱԼ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՍԵՓԱԿԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՌԻՍԿԸ՝ ՄԻՆՉԵՎ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի տիպային ձև (իրավաբանական անձ)

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ թողարկած արժեկտրոնային
պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական
իրավաբանական անձանց համար

Լրացվում է Ներդրողի կողմից

Հայտը Բանկ ներկայացման ամսաթիվը և ժամը (օր, ամիս, տարի, ժամ)	
Իրավաբանական անձի անվանումը (ֆիրմային անվանում, կազմակերպաիրավական ձև)	
Պետական գրանցման տվյալները (գրանցման վկայականի համար, ամսաթիվ)	
Գրանցման և գտնվելու վայրը (գրանցման և գտնվելու վայրի հասցեները)	
ՀՎՀՀ	
Ռեզիդենտությունը (ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ)	

Սույն հայտ-հանձնարարականի ներկայացմամբ ընդունում եմ «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) առաջարկը, որով և ցանկություն եմ հայտնում ձեռք բերել թողարկած արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝

Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը՝ հատ (թվերով/տառերով)	
Ձեռքբերվող պարտատոմսերի թողարկման արժույթ	
Ձեռքբերվող 1 պարտատոմսի ձեռքբերման գինը (թվերով/տառերով)	
Ձեռքբերվող պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարվելիք ընդհանուր գումարը (թվերով/տառերով)	
Անձի ԱՄՆ դոլարով բանկային հաշվի համարը Բանկի անվանումը	
Անձի ՀՀ դրամով բանկային հաշվի համարը Բանկի անվանումը	
Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը	
Արժեթղթերի հաշվի համարը	

Սույնով, հավաստում եմ, որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ, ծանոթացել եմ վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող Բանկի պարտատոմսերի հրապարակային առաջարկի Ծրագրային Ազդագրին, ընդունում և համաձայն եմ դրանում նշված պայմաններին, ստանձնում եմ այդ պարտատոմսերում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը:
Հաստատում եմ, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Բանկ ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:
Հաստատում եմ, որ սույն հայտ-հանձնարարականը Բանկի կողմից ընդունվելու/ակցեպտավորելու պահից, այն կհանդիսանա Կողմերի միջև կնքված և ուժի մեջ մտած պայմանագիր:

Ներդրողի ստորագրություն ---------- Կ.Տ

Լրացվում է Բանկի կողմից

Հայտի ընդունման ամսաթիվը և ժամը (օր, ամիս, տարի, ժամ)	
Հայտ ընդունող աշխատակցի ստորագրությունը և շտամպը	

Վաճառված պարտատոմսերի ընդհանուր քանակ (թվերով/տառերով)	
Վաճառված Պարտատոմսերի դիմաց գանձված ընդհանուր գումարը (թվերով/տառերով)	
Դրամական միջոցների փոխանցման/ մուտքագրման ամսաթիվը* (օր, ամիս, տարի)	
Ստորագրություն (Բանկի լիազորված անձի պաշտոն, անուն, ազգանուն) Կ. Տ.	

Հիշեցում: Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները 1930043129906501 (ԱՄՆ դոլարով պարտատոմսերի համար), 1930043129823704 (Եվրոյով պարտատոմսերի համար), 1930043123398600 (ՀՀ դրամով պարտատոմսերի համար) հատուկ բանկային հաշվին են փոխանցվում մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, ապա այդ դրամական միջոցները ստացված են համարվում այդ օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են տվյալ աշխատանքային օրվա 16:30-ից հետո, ապա դրանք ստացված են համարվում վճարման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

ՀԱՎԵԼՎԱԾ 2 «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի տիպային ձև (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր)

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ թողարկած արժեկտրոնային
պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական
(ֆիզիկական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար)

Լրացվում է Ներդրողի կողմից

Հայտը Բանկ ներկայացման ամսաթիվը և ժամը (օր, ամիս, տարի, ժամ)	
Հայտ ներկայացնողի անունը (անուն, ազգանուն)	
Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ (անձնագրի համար)	
Անձը հաստատող փաստաթղթի տրման Ամսաթիվը (անձնագրի տրման ամսաթիվը)	
Գրանցման վայրը (գրանցման վայրի հասցեն)	
Ռեզիդենտությունը (ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ)	

Սույն հայտ-հանձնարարականի ներկայացմամբ ընդունում եմ «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) առաջարկը, որով և ցանկություն եմ հայտնում ձեռք բերել թողարկած արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝

Ձեռքբերվող պարտատոմսերի քանակը՝ հատ (թվերով/տառերով)	
Ձեռքբերվող պարտատոմսերի թողարկման արժույթ	
Ձեռքբերվող պարտատոմսերի ձեռքբերման գինը (թվերով/տառերով)	
Ձեռք բերվող 1 պարտատոմսի ձեռքբերման դիմաց վճարվելիք ընդհանուր գումարը (թվերով/տառերով)	
Անձի ԱՄՆ դոլարով բանկային հաշվի համարը Բանկի անվանումը	
Անձի ՀՀ դրամով բանկային հաշվի համարը Բանկի անվանումը	
Արժեթղթերի հաշիվը Հաշվառող անձի անունը	
Արժեթղթերի հաշվի համարը	

Հավաստում եմ, որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ, ըստ էության, ծանոթացել եմ վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող Բանկի պարտատոմսերի հրապարակային առաջարկի Ազդագրին, ընդունում և համաձայն եմ դրանում նշված պայմաններին, ստանձնում եմ այդ պարտատոմսերում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը:
Տեղյակ եմ, որ արժեթղթերում կատարվող ներդրումները ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափերով երաշխավորված են ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջոցներով, ծանուցվել, ստացել և համաձայն եմ Ավանդների հատուցման երաշխավորման պայմաններին ու կարգին:
Հաստատում եմ, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Բանկ, ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:
Համաձայն եմ, որ Կողմերի միջև ծագած վեճերն ու տարաձայնություններն առաջնահերթության կարգով լուծվեն Կողմերի փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
Տեղեկացված եմ, որ տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով*:
Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված համաձայնագրի համաձայն, Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:
Սույն հայտ-հանձնարարականը Բանկի կողմից ընդունվելու պահից, այն կհանդիսանա Կողմերի միջև կնքված և ուժի մեջ մտած պայմանագիր:

Ներդրողի ստորագրություն ----------

Լրացվում է Բանկի կողմից

Հայտի ընդունման ամսաթիվը և ժամը (օր, ամիս, տարի, ժամ)	
Հայտ ընդունող աշխատակցի ստորագրությունը և շտամպը	
Վաճառված պարտատոմսերի ընդհանուր քանակ (թվերով/տառերով)	
Վաճառված Պարտատոմսերի դիմաց գանձված ընդհանուր գումարը	

(թվերով/տառերով)	
Դրամական միջոցների փոխանցման/ մուտքագրման ամսաթիվը (օր, ամիս, տարի)	
Ստորագրություն (Բանկի լիազորված անձի պաշտոն, անուն, ազգանուն) Կ. Տ.	

Հիշեցում: Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները 1930043129906501 (ԱՄՆ դոլարով պարտատոմսերի համար), 1930043129823704 (Եվրոյով պարտատոմսերի համար), 1930043123398600 (ՀՀ դրամով պարտատոմսերի համար) հատուկ բանկային հաշվին են փոխանցվում մինչև աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են աշխատանքային օրվա 16:30-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

**ՀՀ օրենսդրության համաձայն, անհատ ձեռնարկատերը չի օգտվում իր պահանջները Ֆինանսական համակարգի հաշտարարին ներկայացնելու հնարավորությունից:*

ՀԱՎԵԼՎԱԾ 3 Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը



Հաստատված է
"Կոնվերս Բանկ" ՓԲԸ Խորհրդի
07.03.2018թ. N50 որոշմամբ
(թիվ 12 արձանագրության 1-ին հարց)
Խորհրդի նախագահ
Արմեն Տեր-Տաճատյան

ՀԱՎԵԼՎԱԾ 4 Թողարկման վերջնական պայմաններ

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
(Թողարկողի անվանումը)

անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային, ոչ փոխարկելի պարտատոմս
(արժեթղթերի տեսակը)

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել ծրագրային ազդագիրը (գրանցված է ------- ---------- 2018թ.), դրա լրացումները և սույն թողարկման վերջնական պայմանները: Ծրագրային ազդագիրը, դրա լրացումները գտնվում են «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում՝ Հայաստանի Հանրապետություն, 0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1 հասցեում:

1. Ընդհանուր տեղեկություններ (Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»: Եթե միևնույն սերիայի ներքո տարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ, առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթեր են թողարկվում, ապա յուրաքանչյուր պայմանին բավարարող արժեթղթերի խմբի համար տարբերվող պայմանները ներկայացվում են տարանջատված:)		
1.1	Թողարկողը (Թողարկողի անվանումը)	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
1.2	Երաշխավորողը	Նախատեսված չէ ներգրավել երաշխավոր
1.3	Սերիան (տվյալ ծրագրային ազդագրի հիման վրա իրականացվող հերթական թողարկման համարը և տարեթիվը, օրինակ 2016 թ-ի 1-ին թողարկման համար՝ 2016-1)	2018-1
1.4	Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը	

1.5	Արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո յուրաքանչյուր թողարկման ծավալը՝ ըստ ստորադասության	Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի միևնույն հերթի պարտատերերի/ սեփականատերերի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարվելուց հետո: «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի գ ենթակետի համաձայն՝ Բանկի կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի պահանջները բավարարվում են երրորդ հերթին: Մանրամասն ներկայացված է Ծրագրային ազդագրի 2.3 կետի Զ ենթակետում էջ 32
1.6	Թողարկման արժույթը	ԱՄՆ դոլար, եվրո, ՀՀ դրամ
1.7	Առաջարկի գինը	Պարտատոմսի գինը տեղաբաշխման առաջին օրվանից հաշվարկվում է հետևյալ բանաձևով. $DP = \frac{C}{f}\sum_{t=1}^{N}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{t-1+\tau}} + \frac{100}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+\tau}}$ որտեղ. $\tau = \frac{DSN}{DCC}$ DP - պարտատոմսի գինն է (կլորացվում է ստորակետից հետո 4 նիշի ճշտությամբ թվաբանական կլորացման կանոնների համաձայն), DSN – գործարքի կատարման օրից մինչև հաջորդ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում, DCC- գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում, f – արժեկտրոնի վճարման հաճախականությունն է N – հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը, C – տարեկան արժեկտրոնը 100 միավոր անվանական արժեքի դիմաց, y – մինչև մարում եկամտաբերություն: Յուրաքանչյուր տրանշի պարտատոմսերի տվյալ օրվա գինը տեղաբաշխման ողջ ընթացքի համար

		Բանկը պարտավորվում է հրապարակել իր ինտերնետային կայքում՝ www.conversebank.am:
1.8	Անվանական արժեքը	100 (Մեկ հարյուր) ԱՄՆ դոլար, 100 (Մեկ հարյուր) եվրո, 100,000 (Մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
1.9	Քանակը	250,000 (Երկու հարյուր հիսուն հազար) հատ ԱՄՆ դոլարով, 50 000 (Հիսուն հազար) հատ եվրոյով, 30,000 (Երեսուն հազար) հատ ՀՀ դրամով
1.10	Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	Ենթակա է որոշման Բանկի Խորհրդի կողմից
1.11	Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	Ենթակա է որոշման Բանկի Խորհրդի կողմից
1.12	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր	
1.13	Թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը (լրացվում է այն դեպքում, եթե տվյալ հրապարակային առաջարկի համար առանձին որոշում է ընդունվել, հակառակ դեպքում նշվում է «ոչ կիրառելի»)	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի 18.01.2018թ. թիվ 6 որոշում
2. Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ		
2.1	Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը	Ենթակա է որոշման Բանկի Խորհրդի կողմից և համընկնում է տեղաբաշխման սկզբի օրվա հետ
2.2	Արժեկտրոնի	Արժեկտրոնի տոկոսադրույքը ենթակա է որոշման

	տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը, եթե արժեկտրոնի տոկոսադրույքը լողացող է, ապա ներկայացնել տեղեկատվություն, թե ինչ ցուցանիշից (դրա փոփոխությունից) է կախված տոկոսադրույքի մեծությունը, և որտեղ կարելի է ստանալ այդ ցուցանիշի/դրա փոփոխության մասին տեղեկատվություն	Բանկի Խորհրդի կողմից, Վճարման պարբերականությունը ենթակա է որոշման Բանկի Խորհրդի կողմից,
2.3	Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի)	Ենթակա է որոշման Բանկի Խորհրդի կողմից,
2.4	Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը (օրինակ 30/360, Act/Act, Act/360 և այլն)	Փաստացի օրեր արժեկտրոնի փուլի ընթացքում/փաստացի օրեր տարվա ընթացքում (Actual/Actual)
2.5	Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը	«ոչ կիրառելի»
2.6	Արժեկտրոնի հաշվարկման այլ էական պայմաններ	
2.7	Զրոյական արժեկտրոնով (զեղչատոկոսային) արժեթղթերի վերաբերյալ դրույթ (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	«ոչ կիրառելի»
3. Մայր գումարի մարման վերաբերյալ տեղեկություններ		
3.1	Մարման (մասնակի մարումների) ժամկետը	Ենթակա է որոշման Բանկի Խորհրդի կողմից,
3.2	Մարման (մասնակի մարումների) արժեքը,	100 (հարյուր) ԱՄՆ դոլար՝ 1 պարտատոմսի համար, 100 (հարյուր) եվրո՝ 1 պարտատոմսի

	եթե հնարավոր չէ, ապա նշվում է հաշվարկման մեթոդաբանությունը	համար, 100,000 (Մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ 1 պարտատոմսի համար
3.3	Մարման արժեքի փոփոխությունը (լրացվում է այն բոլոր պայմանները, որոնց դեպքում հնարավոր է մարման արժեքի փոփոխություն)	Չի նախատեսվում
3.4	Վաղաժամկետ մարման հնարավորություն թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	«ոչ կիրառելի»
3.4.1	Ժամկետ(ներ)ը	
3.4.2	Օպցիոնի իրականցման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	
3.4.3	Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեքը	
3.4.4	Այլ տեղեկություններ	
3.5	Վաղաժամկետ մարման հնարավորություն ներդրողի նախաձեռնությամբ/փութ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	«ոչ կիրառելի»
3.5.1	Ժամկետ(ներ)ը	
3.5.2	Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	
3.5.3	Այլ տեղեկություններ	

	(տեղեկացման ժամանակաշրջանը)	
4. Տեղաբաշխման վերաբերյալ տեղեկություններ		
4.1	Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ, Հայաստանի Հանրապետություն, 0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1
4.2	Տեղաբաշխման այլ պայմաններ (որոնք ներառված չեն ազդագրում)	
5. Այլ տեղեկություններ		
5.1	Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության առկայություն (նշվում է համապատասխան կարգավորվող շուկաների անվանումները, թույլտվության ամսաթիվը)	Արժեթղթերը դեռ չեն թույլատրված կարգավորվող շուկայում առևտրի
5.2	Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, ապա նշվում է տեղեկություններ այդ մասին (շուկայի անվանումը, նաև դրույթ, որ առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել, առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը (հնարավորության դեպքում))	Թողարկողը պարտադիր դիմելու է պարտատոմսերը կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն ստանալու համար, և համաձայն ՀՀ գործող օրենսդրության թույլտվություն ստանալու դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորվող շուկայում: Կարգավորվող շուկա ասելով Թողարկողը նկատի ունի «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ-ն: Առևտրի թույլտվության հայցը կարող է չբավարարվել:
5.3	Արժեթղթի վարկանիշը	Արժեթղթերը վարկանիշ չունեն
5.4	Արժեթղթերի դիմաց	Վճարումը կատարվում է պարտատոմսերի

	վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը	ձեռքբերման հայտ-հանձնարարականի պատշաճ կերպով Բանկ ներկայացման օրը, ոչ ուշ քան մինչև ժամը 16:30-ը, հատուկ թողարկման նպատակով Բանկում բացված թիվ 1930043129906501 (ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի համար), 1930043129823704 (եվրոյով թողարկված պարտատոմսերի համար), 1930043123398600 (ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի համար) տարանցիկ հաշվին կանխիկ մուտքագրման կամ փոխանցման միջոցով: Ընդ որում, եթե հայտ-հանձնարարականի ներկայացումը և համապատասխան գումարի վճարումը կատարվել է մինչ տվյալ օրվա 16:30-ն ներառյալ, ապա պարտատոմսի գինը հաշվարկվում է տվյալ օրով: Ժամը 16:30-ից հետո ներկայացված և/կամ վճարված հայտի համար վճարվող գումարի չափը հաշվարկվում է տվյալ օրվան հաջորդող աշխատանքային օրվա պարտատոմսի գնով: Պարտատոմսերի սեփականատերերը կարող են այդ պարտատոմսերի իրավունքներն ու պարտավորությունները հաշվառել օրենքով սահմանված կարգով լիցենզավորված Հաշվի օպերատորների մոտ՝ համապատասխան արժեթղթերի հաշիվ բացելու միջոցով: Պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվում է ՀՀ օրենսդրությամբ և պահառուի ներքին կանոնակարգերով սահմանված կարգով: Պարտատոմսերի սեփականատերերն արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց Հաշվի օպերատորից:

Թողարկողը պատասխանատու է սույն «Թողարկման վերջնական պայմաններ»-ում ներառված տեղեկությունների համար: Թողարկողը (երաշխավորողը) հավաստիացնում է, որ սույն փաստաթղթում ներառված տեղեկությունները համապատասխանում են այն տեղեկություններին (ներկայացված ընդհանուր մեթոդաբանությանը), որոնք ներառված են ծրագրային ազդագրում, դրա լրացումներում, ինչպես նաև ճշգրիտ են (այնքանով, որքանով հայտնի են), և որևէ փաստ բաց չի թողնվել կամ խեղաթյուրվել:

Ստորագրող անձինք

_____	_____
Արմեն Տեր-Տաճատյան «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի նախագահ	(ամսաթիվ)
_____	_____
Ջուան Պաբլո Գեչիդջյան «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի անդամ	(ամսաթիվ)
_____	_____
Արսեն Գամաղելյան (Տեր Հովել քահանա) «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի անդամ	(ամսաթիվ)
_____	_____
Խոսե Լուիս Պերսիկո «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի անդամ	(ամսաթիվ)
_____	_____
Արթուր Հակոբյան «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Գլխավոր գործադիր տնօրեն Տնօրինության նախագահ	(ամսաթիվ)
_____	_____
Դավիթ Ազատյան «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Հաշվապահական հաշվառման վարչության պետ Գլխավոր հաշվապահ, տնօրինության անդամ	(ամսաթիվ)
_____	_____
Գոհար Հարությունյան Գործառնությունների, ծառայությունների և ՏՏ գծով տնօրեն Տնօրինության անդամ	(ամսաթիվ)

_____ _____

Հրանտ Հակոբյան (ամսաթիվ)
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Ֆինանսական տնօրեն
Տնօրինության անդամ

_____ _____

Վահե Դալյան (ամսաթիվ)
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Ռիսկերի
կառավարման գծով տնօրեն
Տնօրինության անդամ

_____ _____

Արթուր Նահապետյան (ամսաթիվ)
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Բիզնեսի զարգացման գծով տնօրեն
Տնօրինության անդամ

_____ _____

Գրիգորի Բաղդասարյան (ամսաթիվ)
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Մանրածախ
բիզնեսի գծով տնօրեն
Տնօրինության անդամ

_____ _____

Ռոստոմ Բադալյան (ամսաթիվ)
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Կորպորատիվ
բիզնեսի գծով տնօրեն
Տնօրինության անդամ

ՀԱՎԵԼՎԱԾ 5 Մասնաճյուղերի ցանկ

«Գլխամասային գրասենյակ» ՀՀ, 0010, Երևան, Կենտրոն համայնք, Հանրապետության հրապարակ, Վ. Սարգսյան 26/1 Հեռախոս՝ (+374 10) 51-12-00	
«Ավան» մասնաճյուղ ՀՀ, 0060, Երևան, Ավան համայնք Խուդյակով 161/2 Հեռախոս՝ (+374 10) 51-12-77, 61-44-72	«Էջմիածին» մասնաճյուղ ՀՀ, 1101, ք. Էջմիածին Մաշտոցի 69/90 Հեռախոս՝ (+374 231) 52-093, 52-088
«Կենտրոնական» մասնաճյուղ ՀՀ, 0051, Երևան, Արաբկիր համայնք Կոմիտասի 49 Հեռախոս՝ (+374 10) 51-12-00	«Սևան» մասնաճյուղ ՀՀ, 1501, ք. Սևան Նաիրյան 155, 2 Հեռախոս՝ (+374 261) 20-162, 20-165
«Փոստբանկ 19» մասնաճյուղ ՀՀ, 0019, Երևան, Արաբկիր համայնք Բաղրամյան 23 Հեռախոս՝ (+374 10) 51-46-19	«Ստեփանակերտ» մասնաճյուղ ԼՂՀ, ք. Ստեփանակերտ Վ. Սարգսյան 25/2 և 25/3 Հեռախոս՝ (+374 47) 97-52-77,97-53-77
«Դավթաշեն» մասնաճյուղ ՀՀ, 0054, Երևան, Դավթաշեն համայնք 3 թաղամաս, 18/6 տարածք Հեռախոս՝ (+374 10) 51-12-11	«Լոռի» մասնաճյուղ ՀՀ, 2021 ք. Վանաձոր Գ. Լուսավորչի 54 Հեռախոս՝ (+374 322) 42-912, 42-118
«Էրեբունի» մասնաճյուղ ՀՀ, 0041, Երևան, Էրեբունի համայնք Էրեբունի 11 Հեռախոս՝ (+374 10) 43-04-57, 43-04-58	«Վանաձոր» մասնաճյուղ ՀՀ, 2021 ք. Վանաձոր Գ. Լուսավորչի 40 Հեռախոս՝ (+374 322) 42-910, 41-258
«Մոսկովյան» մասնաճյուղ ՀՀ, 0009, Երևան, Կենտրոն համայնք Մաշտոցի 39/12 Հեռախոս՝ (+374 10) 52-15-28	«Աբովյան» մասնաճյուղ ՀՀ, 2202, ք. Աբովյան Սահմանադրության հրապարակ 8 Հեռախոս՝ (+374 222) 33-080, 22-025
«Կիլիկիա» մասնաճյուղ ՀՀ, 0070, Երևան, Կենտրոն համայնք Քաջազնունի 4/1 Հեռախոս՝ (+374 10) 55-13-59	«Ավան -1» մասնաճյուղ ՀՀ, ք. Աբովյան, Երևան-Սևան մայրուղու աջակողմյան հատված՝ "Գլոբալ Մոթորսե" ավտոսրահ Հեռախոս՝ (+374 10) 51-1 2-11 (1477)
«Երիտասարդական» մասնաճյուղ ՀՀ, 0070, Երևան, Տերյան 105/1 Հեռախոս՝ (+374 10) 51-12-11	«Հրազդան» մասնաճյուղ ՀՀ, 2302, ք. Հրազդան Միկրոշրջան 104, 1-ին հարկ, Հեռախոս՝ (++374 223) 34-709, 24-707
«Սայաթ Նովա» մասնաճյուղ ՀՀ, 0001, Երևան, Կենտրոն համայնք Սայաթ-Նովա 19	«Նոր Հաճըն» մասնաճյուղ ՀՀ, 2412, ք. Նոր Հաճն Չարենցի 8,

Հեռախոս՝ (+374 10) 51-12-00	Հեռախոս՝ (+374 224) 43-810, 43-840
«Զվարթնոց օդանավակայան» մասնաճյուղ ՀՀ, Երևան, Մալաթիա համայնք մ/օ «Զվարթնոց» 42, Մեկնման սրահ Հեռախոս՝ (+374 10) 49-31-97, 49-31-98	«Չարենցավան» մասնաճյուղ ՀՀ, 2501, ք. Չարենցավան Խանջյան 21 Հեռախոս՝ (+374 226) 41-597
«Ավիացիա» մասնաճյուղ ՀՀ, Երևան, Մալաթիա համայնք մ/օ "Զվարթնոց" 42, Ժամանման սրահ Հեռախոս՝ (+374 10) 49-31-97	«Կոտայք» մասնաճյուղ ՀՀ, 2228, Վերին Պտղնի Երևան Աբովյան խճուղի 5 Հեռախոս՝ (+374 10) 51-12-11
«Նոր-Նորք» մասնաճյուղ ՀՀ, 0056, Երևան, Նոր-Նորք համայնք Գայի պող. 10/6 Հեռախոս՝ (+374 10) 51-12-00	«Կումայրի» մասնաճյուղ ՀՀ, 3106, ք. Գյումրի, Խրիմյան Հայրիկ 46ա Հեռախոս՝ (+374 312) 49-606, 49-605
«Արարատյան» մասնաճյուղ ՀՀ, 0039, Երևան, Շենգավիթ համայնք Բագրատունյաց 13, 111 Հեռախոս՝ (+374 10) 46-50-07, 42-44-95	«Շիրակ» մասնաճյուղ ՀՀ, ք. Գյումրի Օդանավակայանի սպասասրահում գտնվող կրպակ Հեռախոս՝ (+374 312) 35-605
«Զեյթուն» մասնաճյուղ ՀՀ, 0069, Երևան, Քան-Զեյթուն համայնք Ռուբինյանց փող. 14/7 Հեռախոս՝ (+374 10) 51-12-00	«Գյումրի» մասնաճյուղ ՀՀ, 3106, ք. Գյումրի Գ. Նժդեհի 4բ, Հեռախոս՝ (+374 312) 42-095, 41-794
«Աշտարակ» մասնաճյուղ ՀՀ, 0201, ք. Աշտարակ Սիսակյան 1 Հեռախոս՝ (+374 232) 36-911, 36-922	«Կապան» մասնաճյուղ ՀՀ, 3301, ք. Կապան Թումանյան 1/2 Հեռախոս՝ (+374 285) 20-058, 20-068
«Արտաշատ» մասնաճյուղ ՀՀ, 0701, ք. Արտաշատ Օգոստոսի 23, փող. թիվ 43 Հեռախոս՝ (+374 235) 22-499, 22-478	«Դիլիջան» մասնաճյուղ ՀՀ, 3901, ք. Դիլիջան Մյասնիկյան փողոց, Կապի հանգույցի 1-ին հարկ Հեռախոս՝ (+374 268) 22-386
«Արմավիր» մասնաճյուղ ՀՀ, 0902, ք. Արմավիր Շահումյան փող. 46 Հեռախոս՝ (+374 237) 22-273	«Իջևան» մասնաճյուղ ՀՀ, 4001 ք. Իջևան, Վալանսի փող. 6/1 Հեռախոս՝ (+374 263) 40-844, 40-899
«Մեծամոր» մասնաճյուղ ՀՀ, 0910, ք. Մեծամոր Քաղաքապետարանի շենք, 1-ին հարկ Հեռախոս՝ (+374 237) 32-070, (374 10) 28-18-33	

ՀԱՎԵԼՎԱԾ 6 Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը

Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE) = (Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Սեփական կապիտալի միջին մեծություն) x 100

Ակտիվների շահութաբերություն (ROA) = (Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո/ Ընդհանուր ակտիվների միջին մեծություն) x 100

Զուտ շահույթի մարժա (NPM) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո /

Գործառնական եկամուտ
Ակտիվների օգտագործման գործակից (AU) = Գործառնական եկամուտ / Ընդհանուր ակտիվների միջին մեծություն

Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM) = Ընդհանուր ակտիվների միջին մեծություն / Սեփական կապիտալի միջին մեծություն

Զուտ տոկոսային մարժա (NIM) = Զուտ տոկոսային եկամուտ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն

Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն = Տոկոսային եկամուտներ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն

Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր =
Տոկոսային ծախսեր / Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր

Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Բաժնետոմսերի միջին կշռված թիվը

Սպրեդ = (Տոկոսային եկամուտներ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն) - (Տոկոսային ծախսեր/Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր)

ՀԱՎԵԼՎԱԾ 7 Ֆինանսական հաշվետվություններ

«Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերություն

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն 1
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն 2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն 3
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն 4

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Գործունեության նկարագրություն 5
2. Հայաստանի գործարար միջավայրը 5
3. Պատրաստման հիմունքներ 6
4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր 11
5. Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումներ 22
6. Ֆինանսական հաշվետվությունների վերադասակարգում և վերահաշվարկ 23
7. Տոկոսային եկամուտ և ծախս 24
8. Միջնորդավճարների գծով եկամուտ և ծախս 24
9. Զուտ առևտրային եկամուտ 24
10. Այլ եկամուտ 25
11. Արժեզրկումից կորուստներ 25
12. Անձնակազմի գծով ծախսեր 25
13. Այլ ծախսեր 25
14. Շահութահարկի գծով ծախս 26
15. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 27
16. Առևտրային արժեթղթեր 27
17. Պահանջներ բանկերի նկատմամբ 28
18. Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ 29
19. Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր 32
20. Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր 32
21. Հիմնական միջոցներ 33
22. Ոչ նյութական ակտիվներ 34
23. Բռնագանձված ակտիվներ 34
24. Այլ ակտիվներ 35
25. Ստորադաս փոխառություններ 35
26. Պարտավորություններ բանկերի նկատմամբ 36
27. Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ 36
28. Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ 37
29. Այլ պարտավորություններ 37
30. Այլ փոխառու միջոցներ 37
31. Կապիտալ 38
32. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ 39
33. Կապակցված կողմերի հետ գործառնություններ 40
34. Իրական արժեքի չափում 42
35. Փոխանցված ֆինանսական ակտիվներ և որպես գրավ պահվող կամ տրամադրված ակտիվներ 47
36. Ֆինանսական գործիքների հաշվանցում 48
37. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն 49
38. Ռիսկերի կառավարում 50
39. Կապիտալի համարժեքություն 65

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Ernst & Young CJSC
1 Northern Ave., office 27
Yerevan, 0001, Armenia
Tel: +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Fax: +374 (10) 500 706
www.ey.com/am

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0001
Հյուսիսային պող. 1, գրասենյակ 27
Հեռ. +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Ֆաքս. +374 (10) 500 706

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերության Խորհրդին և Բաժնետերերին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերության և նրա դուստր ընկերության կից ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան պատրաստելու և ճշմարիտ ներկայացնելու, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է, անցկացված աուդիտի հիման վրա, կարծիք արտահայտել սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտները պահանջում են, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և պլանավորենք ու իրականացնենք աուդիտը՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով:

Աուդիտը ներառում է ընթացակարգերի իրականացում ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով: Ընտրված ընթացակարգերը հիմնված են աուդիտորի դատողության վրա՝ ներառյալ խարեության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու և արժանահավատ ներկայացնելու համար կիրառվող ընկերության ներքին վերահսկողության համակարգը, տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր մշակելու, սակայն ոչ ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է նաև կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների հիմնավորվածության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

EY
Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Կարծիք

Մեր կարծիքով, համախմբված ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում «Կոնվերս Բանկ» ՓԲԸ և նրա դուստր ընկերության ֆինանսական վիճակը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

Այլ հանգամանքներ

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ և նրա դուստր ընկերության 2014 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական ընկերության կողմից, որի 2015 թ. ապրիլի 20-ի եզրակացությունում արտահայտվել է չձևափոխված կարծիք նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Աուդիտի բաժնի հիմնադիր գործընկեր՝

Գլխավոր տնօրեն՝ Հ. Սարգսյան՝ ի դեմս
լիազորված անձ Է. Հայրապետյանի (գործող 2013թ.
հուլիսի 31-ին տրված լիազորագրի հիման վրա)

Էրիկ Հայրապետյան

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ

2016թ. հունիսի 14

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն
2015 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

հազար ՀՀ դրամ	*Ծան.*	*2015թ.*	*2014թ. (վերա-հաշվարկված)*	*2013թ. (վերա-հաշվարկված)*
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	46,029,188	27,841,421	21,103,554
Առևտրային արժեթղթեր	16	207,592	–	268,904
Պահանջներ բանկերի նկատմամբ	17	9,148,697	6,916,220	2,512,621
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	18	82,945,627	93,384,045	80,329,843
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր	19	4,818,866	1,943,118	7,544,409
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	20	5,484,221	5,920,903	–
Հիմնական միջոցներ	21	6,612,460	7,297,407	7,357,158
Ոչ նյութական ակտիվներ	22	187,008	253,290	191,883
Բոնազանձված ակտիվներ	23	2,288,512	2,329,501	1,012,014
Ընթացիկ ակտիվներ շահութահարկի գծով		131,654	–	46,763
Այլ ակտիվներ	24	1,049,340	961,455	1,015,868
Ընդամենը ակտիվներ		158,903,165	146,847,360	121,383,017
Պարտավորություններ և կապիտալ				
Պարտավորություններ				
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	26	7,431,275	8,194,824	151,546
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	28	14,495	180,645	–
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	27	111,430,135	96,339,768	84,926,764
Ընթացիկ պարտավորություններ շահութահարկի գծով		–	125,931	–
Հետաձգված հարկային պարտավորություններ	14	1,244,231	1,358,887	1,528,345
Այլ փոխառու միջոցներ	30	9,895,217	9,367,616	7,831,060
Այլ պարտավորություններ	29	755,678	502,850	497,782
Ստորադաս փոխառություններ	25	7,430,709	8,272,556	7,390,036
Ընդամենը պարտավորություններ		138,201,740	124,343,077	102,325,533
Կապիտալ				
Կանոնադրական կապիտալ	31	7,002,033	7,002,033	4,860,033
Էմիսիոն եկամուտ		63,233	63,233	63,233
Գլխավոր պահուստ		1,005,996	844,898	780,365
Այլ պահուստներ		3,653,862	4,325,879	4,873,554
Չբաշխված շահույթ		8,976,301	10,268,240	8,480,299
Ընդամենը կապիտալ		20,701,425	22,504,283	19,057,484
Ընդամենը պարտավորություններ և կապիտալ		158,903,165	146,847,360	121,383,017

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները վավերացվել և ստորագրվել են Բանկի Գործադիր տնօրենի և Գլխավոր հաշվապահի կողմից 2016թ. հունիսի 14-ին:

Տիգրան Դավթյան Գոհար Հարությունյան

Գործադիր տնօրեն Գլխավոր հաշվապահ

Կից ներկայացված ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն 2015 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

հազար ՀՀ դրամ	*Ծան.*	*2015թ.*	*2014թ.*
Տոկոսային եկամուտ	7	13,458,001	12,605,148
Տոկոսային ծախս	7	(6,961,726)	(6,274,958)
Զուտ տոկոսային եկամուտ		**6,496,275**	**6,330,190**
Միջնորդավճարների գծով եկամուտ	8	1,887,676	1,676,155
Միջնորդավճարների գծով ծախս	8	(656,310)	(536,449)
Միջնորդավճարների գծով զուտ եկամուտ		**1,231,366**	**1,139,706**
Զուտ առևտրային եկամուտ	9	1,009,948	824,348
Արտարժույթի փոխարկումից զուտ (վնաս)/օգուտ		(518,306)	1,030,149
Վաճառքի համար մատչելի ներդրումներից զուտ օգուտ		45,838	8,270
Այլ եկամուտ	10	944,279	613,337
Արժեզրկումից կորուստներ	11	(3,271,603)	(1,697,589)
Անձնակազմի գծով ծախսեր	12	(3,137,936)	(2,977,136)
Հիմնական միջոցների մաշվածություն	21	(669,766)	(670,801)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	22	(127,891)	(88,533)
Այլ ծախսեր	13	(2,618,277)	(2,143,746)
(Վնաս)/շահույթ մինչև շահութահարկ		**(616,073)**	**2,368,195**
Շահութահարկի գծով ծախս	14	(47,510)	(305,694)
Հաշվետու տարվա (վնաս)/շահույթ		**(663,583)**	**2,062,501**
Այլ համապարփակ եկամուտ			
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Հիմնական միջոցների վերագնահատում		(708,574)	–
Շահութահարկի ազդեցություն		141,715	–
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող զուտ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		**(566,859)**	**–**
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթերի հետ կապված գործառնություններից չիրացված օգուտ/(վնաս)		33,128	(574,325)
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթերի հետ կապված գործառնություններից իրացված օգուտ՝ վերադասակարգված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում		(45,838)	(15,277)
Շահութահարկի ազդեցություն		2,542	117,920
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող զուտ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		**(10,168)**	**(471,682)**
Այլ համապարփակ վնաս հարկումից հետո		**(577,027)**	**(471,682)**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ (վնաս)/եկամուտ		**(1,240,610)**	**1,590,819**

Կից ներկայացված ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն
2015 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

հազար ՀՀ դրամ	*Կանոնադրական կապիտալ*	*Էմիսիոն եկամուտ*	*Գլխավոր պահուստ*	*Վաճառքի համար մատչելի արժեթղթերի վերագնահատման պահուստ*	*Հիմնական միջոցների գծով վերագնահատման պահուստ*	*Չբաշխված շահույթ*	*Ընդամենը կապիտալ*
Մնացորդն առ 2014թ. հունվարի 1	**4,860,033**	**63,233**	**780,365**	**819,073**	**4,054,481**	**8,480,299**	**19,057,484**
Կանոնադրական կապիտալի ավելացում	2,142,000	–	–	–	–	–	**2,142,000**
Հատկացում գլխավոր պահուստին	–	–	64,533	–	–	(64,533)	**–**
Շահաբաժիններ բաժնետերերին	–	–	–	–	–	(286,020)	**(286,020)**
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	**2,142,000**	**–**	**64,533**	**–**	**–**	**(350,553)**	**1,855,980**
Հաշվետու տարվա շահույթ	–	–	–	–	–	2,062,501	**2,062,501**
Հաշվետու տարվա այլ համապարփակ վնաս	–	–	–	(471,682)	–	–	**(471,682)**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ/(վնաս)	**–**	**–**	**–**	**(471,682)**	**–**	**2,062,501**	**1,590,819**
Վերագնահատման պահուստի ամորտիզացիա	–	–	–	–	(75,993)	75,993	**–**
Մնացորդը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**7,002,033**	**63,233**	**844,898**	**347,391**	**3,978,488**	**10,268,240**	**22,504,283**
Հատկացում գլխավոր պահուստին	–	–	161,098	–	–	(161,098)	**–**
Շահաբաժիններ բաժնետերերին	–	–	–	–	–	(562,248)	**(562,248)**
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	**–**	**–**	**161,098**	**–**	**–**	**(723,346)**	**(562,248)**
Հաշվետու տարվա վնաս	–	–	–	–	–	(663,583)	**(663,583)**
Հաշվետու տարվա այլ համապարփակ վնաս	–	–	–	(10,168)	(566,859)	–	**(577,027)**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ վնաս	**–**	**–**	**–**	**(10,168)**	**(566,859)**	**(663,583)**	**(1,240,610)**
Վերագնահատման պահուստի ամորտիզացիա	–	–	–	–	(94,990)	94,990	**–**
Մնացորդը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**7,002,033**	**63,233**	**1,005,996**	**337,223**	**3,316,639**	**8,976,301**	**20,701,425**

Կից ներկայացված ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն
2015 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

հազար ՀՀ դրամ	***2015թ.***	***2014թ. (վերահաշվարկված)***
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
(Վնաս)/շահույթ մինչև շահութահարկ	(616,073)	2,368,195
Ճշգրտումներ՝		
Ամորտիզացիա և մաշվածություն	797,657	759,334
Բոնագանձված ակտիվների վաճառքից վնաս	63,210	16,738
Արժեզրկումից կորուստներ	3,271,603	1,697,589
Բոնագանձված ակտիվների արժեզրկում	62,268	–
Հիմնական միջոցների վաճառքից եկամուտ	(839)	(76,448)
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթերից օգուտներ	(45,838)	(15,277)
Զուտ վնաս ածանցյալ գործիքներից	66,690	249,035
Զուտ վնաս առևտրային արժեթղթերից	3,597	54,923
Արտարժույթի փոխարկումից զուտ վնաս/(օգուտ)	518,306	(1,030,149)
Ստացվելիք տոկոսներ	28,919	(480,183)
Վճարվելիք տոկոսներ	(22,249)	184,297
Դրամական միջոցների հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունները	**4,127,251**	**3,728,054**
Գործառնական ակտիվների (ավելացում)/նվազում		
Առևտրային արժեթղթեր	(318,847)	(94,564)
Պահանջներ բանկերի նկատմամբ	(1,961,453)	(3,241,704)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	5,083,968	(6,018,596)
Բոնագանձված ակտիվներ	406,513	273,939
Այլ ակտիվներ	(537,253)	10,165
Գործառնական պարտավորությունների ավելացում/(նվազում)		
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	(858,194)	8,165,199
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	15,778,647	2,347,413
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	(232,840)	(68,390)
Այլ պարտավորություններ	(485,708)	111,499
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկը	**21,002,084**	**5,213,015**
Վճարված շահութահարկ	(275,495)	(184,538)
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ ստացված գործառնական գործունեությունից	**20,726,589**	**5,028,477**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթերի ձեռքբերում	(6,402,759)	(2,585,890)
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթերի վաճառքից հոսքեր	4,237,823	2,013,817
Հիմնական միջոցների ձեռքբերում	(694,328)	(613,681)
Հիմնական միջոցների վաճառքից հոսքեր	–	2,631
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(61,609)	(149,940)
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ օգտագործված ներդրումային գործունեությունում	**(2,920,873)**	**(1,333,063)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Մուտքեր կանոնադրական կապիտալի համալրումից	–	2,142,000
Այլ փոխառու միջոցների ներգրավումից հոսքեր	3,836,778	2,824,862
Այլ փոխառու միջոցների մարումներ	(3,412,102)	(1,789,055)
Ստորադաս փոխառությունների մարումներ	(957,952)	(145,081)
Բաժնետերերին վճարված շահաբաժիններ	(562,248)	(286,020)
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ (օգտագործված)/ստացված ֆինանսավորման գործունեությունում	**(1,095,524)**	**2,746,706**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	**16,710,192**	**6,442,120**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա սկզբում	27,841,421	21,103,554
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	1,477,575	295,747
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա վերջում (Ծան. 15)	**46,029,188**	**27,841,421**
Լրացուցիչ տեղեկատվություն		
Ստացված տոկոսներ	13,429,082	13,085,331
Վճարված տոկոսներ	(6,939,477)	(6,459,255)

Կից ներկայացված ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

1. Գործունեության նկարագրություն

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ «Բանկ») հանդիսանում է Խմբի մայր կազմակերպությունը, որը ներառում է Բանկը և իր դուստր ընկերությունը (այսուհետ՝ «Խումբ»):

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն հիմնվել է 1994թ. և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Բանկը գրանցվել է 1994թ. նոյեմբերի 28-ին ՀՀ Կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N 57 արտոնագրային համարով:

Բանկն ընդունում է բնակչությունից ավանդներ, տրամադրում է վարկեր և իրականացնում է դրամական փոխանցումներ Հայաստանի Հանրապետության տարածքում և ՀՀ տարածքից դուրս, իրականացնում է արտարժույթի փոխանակման գործարքներ, ինչպես նաև իր հաճախորդ իրավաբանական և ֆիզիկական անձանց մատուցում է այլ բանկային ծառայություններ:

Բանկի գլխամասային գրասենյակը գտնվում է Երևանում: Բանկն ունի 33 մասնաճյուղ, որոնք գտնվում են Երևանում և Հայաստանի տարբեր մարզերում, իսկ 1 մասնաճյուղը՝ ԼՂՀ տարածքում: Բանկի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան փող. 26/1:

2015 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ «Ընդվանսդ Գլոբալ Ինվեստմենտ» ՍՊԸ–ն հանդիսանում է Խմբի մայր ընկերությունը (բաժնետոմսերի 95%-ի սեփականատեր): Խմբի վերջնական վերահսկող անձը արգենտինացի գործարար է. Էռնեկյանն է:

Բանկի դուստր ընկերությունը

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են հետևյալ դուստր ընկերությունը.

	Բաժնեմաս %					
Դուստր ընկերություն	*2013*	*2014*	*2015*	*Երկիր*	*Միավորման ամսաթիվ*	*Ոլորտ*
«Կոնվերս Ինկասացիա» ՍՊԸ	100%	100%	100%	Հայաստան	20 ապրիլի, 2000թ.	Դրամական միջոցների, դրանց համարժեքների և այլ ակտիվների տեղափոխում

2. Հայաստանի գործարար միջավայրը

Հայաստանի Հանրապետությունը շարունակում է իրականացնել քաղաքական և տնտեսական բարեփոխումներ: Որպես զարգացող շուկա, Հայաստանում բացակայում են զարգացած գործարար միջավայր և համապատասխան օրենսդրական ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և կառուցվածքային զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ, կենտրոնացված տնտեսական հենքով:

ՀՀ հետ համագործակցող երկրների տնտեսությունների վիճակի վատթարացումը հանգեցրել է արտերկրից դրամային փոխանցումների կրճատմանը, ինչից Հայաստանի տնտեսությունը գտնվում է մեծ կախման մեջ: Հանքահումքային ապրանքների միջազգային գների հետագա անկումը, անորոշությունները՝ պայմանավորված ուղղակի կապիտալ ներդրումների ներգրավման հնարավորություններով, գնաճը, կարող են հանգեցնել Հայաստանի տնտեսության, ինչպես նաև Խմբի վիճակի վատթարացմանը: Այնուամենայնիվ, քանի որ այս անորոշություններում առկա դատողություններն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Խմբի ակտիվների և պարտավորությունների մնացորդային արժեքի վրա:

Խմբի ղեկավարությունը գտնում է, որ ընթացիկ հանգամանքներում ձեռնարկվում են համապատասխան միջոցառումներ Խմբի կայունությունն ապահովելու նպատակով:

3. Պատրաստման հիմունքներ

Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ «ՖՀՄՍ»), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (այսուհետ՝ «ՀՀՄՍԽ») կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (այսուհետ՝«ՖՀՄՄԿ»):

Չափման հիմունքներ

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի հիմունքով այն ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար, որոնք չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների և պարտավորությունների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ներկայացված են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները՝ պատմական արժեքով, բացառությամբ հողի և շինությունների, որոնք ներկայացվել են վերագնահատված արժեքով:

Գործունեության անընդհատություն

2014 թ. դեկտեմբերի 30-ին ՀՀ ԿԲ-ն փոխեց տեղական բանկերի համար սահմանված նորմատիվային կապիտալի նվազագույն չափը ՝ 5,000,000 հազ. դրամից դարձնելով 30,000,000 հազ. դրամ: Պահանջն ուժի մեջ է մտնում 2017 թ. հունվարի 1-ից: 2015թ. հունվարի 1-ի դրությամբ Բանկի նորմատիվային կապիտալը կազմում էր 18,283,773 հազ. դրամ (2014 թ.՝ 17,369,247 հազ. դրամ):

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները կազմվել են գործունեության անընդհատություն սկզբունքի հիման վրա, քանի որ Բանկի մայր կազմակերպությունը հաստատել է, որ մինչև 2016 թ. ավարտը կապահովի Բանկի կապիտալի անհրաժեշտ համալրումը՝ մինչև 2017թ. հունվարի 1-ը նոր պահանջին համապատասխանելու համար:

Գործառնական և ներկայացման արժույթ

Խմբի գործառնական արժույթը այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Խումբը: Խմբի գործառնական և ներկայացման արժույթը Հայաստանի Հանրապետության դրամն է (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը: Խումբը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան: Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Խմբի հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով: Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ: ՀՀ սահմաններից դուրս դրամը փոխարկելի չէ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները

Խումբը կիրառել է հետևյալ վերանայված ՖՀՄՍ-ները, որոնք ուժի մեջ են մտնում 2015 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար:

Տարեկան բարելավումներ՝ 2010-2012 շրջան

Այս բարելավումներն ուժի մեջ են մտնում 2014 թվականի հուլիսի 1-ից հետո, և Խումբն առաջին անգամ կիրառել է այս փոփոխությունները տվյալ համախմբված ֆինանսական հաշվետվություններում: Դրանք ներառում են՝

3. Պատրաստման հիմունքներ (շարունակություն)

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները (շարունակություն)

Տարեկան բարեփոխումներ՝ 2011-2013 շրջան

3. Պատրաստման հիմունքներ (շարունակություն)

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները (շարունակություն)

ՀՀՄՍ 40 «Ներդրումային գույք»

ՀՀՄՍ 40 ստանդարտում օժանդակ ծառայությունների նկարագրությունը տարբերում է ներդրումային գույք և սեփականատիրոջ կողմից զբաղեցված գույք (այսինքն՝ հիմնական միջոց) հասկացությունները: Փոփոխությունը կիրառվում է առաջընթաց կերպով և պարզաբանում է, որ որոշելու համար թե արդյոք գործարքը ակտիվի գնում է, թե ձեռնարկատիրական գործունեության միավորում, օգտագործվում է ՖՀՄՍ 3-ը, այլ ոչ թե ՀՀՄՍ 40 ստանդարտի օժանդակ ծառայությունների նկարագիրը: Նախկինում Խումբը հիմնվել է ՖՀՄՍ 3-ի, այլ ոչ ՀՀՄՍ 40-ի վրա, որպեսզի սահմանի արդյոք ձեռքբերումը ակտիվի թե բիզնեսի ձեռքբերում է: Այսպիսով, տվյալ փոփոխությունը ազդեցություն չունի Խմբի հաշվապահական քաղաքականության վրա:

Արդյունավետ ՖՀՄՍ-ի նշանակությունը՝ ՖՀՄՍ 1-ի փոփոխություններ

Փոփոխությունը «Եզրակացության հիմքեր» բաժնում պարզաբանում է, որ կազմակերպությունը կարող է ընտրել կիրառել ներկայիս ստանդարտը կամ նոր ստանդարտը, որը դեռևս պարտադիր չէ, բայց թույլ է տալիս վաղաժամ կիրառություն, այն պայմանով, որ ստանդարտներից ցանկացածը կիրառվում է հետևողականորեն կազմակերպության առաջին՝ ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների մեջ ներկայացված բոլոր ժամանակաշրջանների ընթացքում: ՖՀՄՍ 1-ի այս փոփոխությունն ազդեցություն չունի Խմբի վրա, քանի որ Խումբը հանդիսանում է ՖՀՄՍ-ի ընթացիկ կիրառող:

Խմբի կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Ստորև ներկայացված են ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք թողարկվել են, բայց Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների հրապարակման օրվա դրությամբ դեռևս ուժի մեջ չեն մտել: Խումբը մտադիր է կիրառել այդ ստանդարտները ուժի մեջ մտնելուց հետո:

ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ»

2014թ. հուլիսին ՀՀՄՍԽ-ն թողարկեց ՖՀՄՍ 9 *«Ֆինանսական գործիքներ»* ստանդարտի վերջին տարբերակը, որն արտացոլում է ֆինանսական գործիքներին վերաբերող նախագծի բոլոր փուլերն ու փոխարինում է ՀՀՄՍ 39՝ *«Ֆինանսական գործիքներ. ճանաչում և չափում»*, ստանդարտին և ՖՀՄՍ 9-ի բոլոր նախկին տարբերակներին: Ստանդարտը դասակարգման, չափման, արժեզրկման և հեջավորման հաշվառման նոր պահանջներ է ներկայացնում:

ՖՀՄՍ 9-ը ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար՝ ավելի վաղ կիրառման հնարավորությամբ: Ստանդարտը կիրառվում է հետընթաց կարգով, սակայն համեմատական տեղեկատվության ներկայացումը պարտադիր չէ: ՖՀՄՍ 9-ի ավելի վաղ տարբերակների (2009, 2010 և 2013) կիրառումը թույլատրելի է, եթե սկզբնական կիրառման ամսաթիվը 2015թ. փետրվարի 1-ից շուտ է: ՖՀՄՍ 9-ի կիրառումն ազդեցություն կունենա Խմբի ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման վրա, սակայն ազդեցություն չի ունենա Խմբի ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման վրա: Խումբը ակնկալում է, որ ՖՀՄՍ 9-ի արժեզրկման պահանջները նշանակալի ազդեցություն կունենան իր կապիտալի վրա: Այդ ազդեցության չափը որոշելու համար անհրաժեշտ է կատարել ավելի մանրամասն վերլուծություն, որը հաշվի կառնի ամբողջ հիմնավորված և կիրառելի տեղեկատվությունը՝ ներառյալ հեռանկարային տարրեր:

ՖՀՄՍ 15 «Հաճախորդների հետ պայմանագրերից ստացված հասույթ»

ՖՀՄՍ 15-ը հրապարակվել է 2014 թվականի մայիսին և հաստատում է նոր, հինգ քայլից բաղկացած մոդել հաճախորդների հետ կնքած պայմանագրերի գծով հասույթի հաշվառման համար:

Հասույթի ճանաչումը, որն առաջացել է վարձակալության պայմանագրերից՝ ՀՀՄՍ 17 *«Վարձակալություն»* ստանդարտի շրջանակներում, ապահովագրական պայմանագրերից՝ ՖՀՄՍ 4-ի *«Ապահովագրության պայմանագրեր»* ստանդարտի շրջանակներում, ֆինանսական գործիքներից և այլ պայմանագրային իրավունքներից և պարտավորություններից ՀՀՄՍ 39-ի *«Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը»* ստանդարտի շրջանակներում (կամ ավելի վաղ կիրառման դեպքում՝ ՖՀՄՍ 9-ի *«Ֆինանսական գործիքներ»* ստանդարտի շրջանակներում) դուրս է ՖՀՄՍ 15-ի շրջանակներից և կարգավորվում է համապատասխան ստանդարտներով:

3. Պատրաստման հիմունքներ (շարունակություն)

Խմբի կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

Համաձայն ՖՀՄՍ 15-ի հասույթը ճանաչվում է հաճախորդին տրամադրված ապրանքների և ծառայությունների դիմաց ակնկալվող փոխհատուցման գումարի չափով: ՖՀՄՍ 15-ի սկզբունքները ապահովում են հասույթի չափման և ճանաչման ավելի կառուցվածքային մոտեցում:

Հասույթի վերաբերյալ նոր ստանդարտը կիրառելի է բոլոր կազմակերպությունների համար և կփոխարինի հասույթի ճանաչման ՖՀՄՍ-ի բոլոր ընթացիկ պահանջներին: Պահանջվում է ամբողջական կամ մասնակի հետընթաց կիրառում 2018թ.-ի հունվարի 1-ից սկսած հաշվետու ժամանակաշրջանների համար (թույլատրվում է նաև վաղաժամ կիրառում): Խումբը ներկայումս գնահատում է ՖՀՄՍ 15-ի ազդեցությունը և պլանավորում է կիրառել նոր ստանդարտը պահանջվող ամսաթվից սկսած:

ՀՀՄՍ 16 և ՀՀՄՍ 38 ստանդարտների փոփոխություններ՝ «Մաշվածության և ամորտիզացիայի ընդունված մեթոդների պարզաբանում»

Փոփոխությունները հստակեցնում են ՀՀՄՍ 16-ի և ՀՀՄՍ 38-ի այն սկզբունքը, որ հասույթն արտացոլում է գործունեության (որի մի մասն է հանդիսանում օգտագործվող ակտիվը) ընթացքում ձևավորված, այլ ոչ թե ակտիվի օգտագործման ընթացքում սպառվող տնտեսական օգուտները: Արդյունքում՝ առաջացած հասույթի հարաբերությունը ակնկալվող ընդհանուր հասույթին չի կարող օգտագործվել հիմնական միջոցների մաշվածության հաշվարկի համար և եզակի դեպքերում կարող է օգտագործվել ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի համար: Փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2016 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Ավելի վաղ կիրառումը թույլատրելի է: Ակնկալվում է, որ այս փոփոխությունները որևէ ազդեցություն չեն ունենա Խմբի վրա, քանի որ Խումբը ոչ նյութական ակտիվների նկատմամբ չի կիրառում հասույթի վրա հիմնված մաշվածության հաշվարկի մոտեցումը:

ՀՀՄՍ 27 ստանդարտի փոփոխություններ՝ «Բաժնեմասնակցության մեթոդը առանձին ֆինանսական հաշվետվություններում»

Փոփոխությունները թույլ կտան, որպեսզի կազմակերպությունները դուստր կազմակերպություններում, համատեղ ձեռնարկություններում և ասոցիացված կազմակերպություններում կատարված ներդրումները առանձին ֆինանսական հաշվետվություններում հաշվառեն բաժնեմասնակցության մեթոդով (equity method): Այն կազմակերպությունները, որոնք արդեն կիրառում են ՖՀՄՍ և պատրաստվում են ընդունել բաժնեմասնակցային մեթոդը, պետք է կիրառեն այն հետընթաց կերպով: Այն կազմակերպությունները, որոնք առաջին անգամ են կիրառում ՖՀՄՍ և որոշում են կիրառել բաժնեմասնակցային մեթոդը, պետք է այն կիրառեն ՖՀՄՍ-ի անցման օրվանից ի վեր: Այս փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2016թ. հունվարի 1-ից, սակայն ավելի վաղ կիրառումը թույլատրվում է:

ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ – Նախաձեռնություն տեղեկատվության բացահայտման ոլորտում

«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՀՀՄՍ 1-ի փոփոխություններն ավելի շատ պարզաբանում, քան էապես փոփոխում են ՀՀՄՍ 1-ի առկա պահանջները: Փոփոխությունները պարզաբանում են հետևյալը՝

- ՀՀՄՍ 1-ի պահանջները էականության նկատմամբ,
- Ֆինանսական արդյունքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունների առանձին հոդվածները կարող են առանձնացվել,
- Կազմակերպություններն ունեն հնարավորություն ընտրելու ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրությունների ներկայացման կարգը,
- Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող կապակցված կազմակերպությունների և համատեղ ձեռնարկությունների համապարփակ եկամտի մասը պետք է ներկայացվի ամբողջությամբ մեկ հոդվածում և դասակարգվի որպես հոդվածներ, որոնք հետագայում կդասակարգվեն կամ չեն դասակարգվի ծախսերի և եկամուտների կազմում:

3. Պատրաստման հիմունքներ (շարունակություն)

Խմբի կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

Բացի այդ, փոփոխությունները պարզաբանում են այն պահանջները, որոնք կիրառվում են ֆինանսական վիճակի մասին, ֆինանսական արդյունքների մասին և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններում լրացուցիչ միջանկյալ գումարների բացահայտման ժամանակ: Փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2016 թվականի հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Ավելի վաղ կիրառումը թույլատրելի է: Այս փոփոխությունները ազդեցություն չեն ունենա Խմբի վրա:

Տարեկան բարեփոխումներ՝ 2012-2014 շրջան

Այս բարեփոխումներն ուժի մեջ են մտնում 2016 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո և ակնկալվում է, որ էական ազդեցություն չեն ունենա Խմբի վրա: Դրանք ներառում են՝

ՖՀՄՍ 5 «Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործունեություն»՝ օտարման մեթոդների փոփոխություններ

Ակտիվները (կամ օտարման խմբերը) ընդհանուր առմամբ օտարվում են կա՛մ վաճառքի, կա՛մ սեփականատերերի միջև բաշխման միջոցով: ՖՀՄՍ 5-ի փոփոխությունը պարզաբանում է, որ նշված օտարման մեթոդներից մեկը մյուսով փոխարինելը չի նշանակի օտարման նոր պլան, այլ այն կհանդիսանա սկզբնական ծրագրի շարունակություն: Հետևաբար ՖՀՄՍ 5-ի պահանջների կիրառման ընդհատում չի լինի: Փոփոխությունը նաև պարզաբանում է, որ օտարման մեթոդի փոփոխությունը չի հանգեցնի դասակարգման ամսաթվի փոփոխությանը: Փոփոխությունը պետք է կիրառվի առաջընթաց կերպով 2016 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար, սակայն ավելի վաղ կիրառումը թույլատրելի է:

ՖՀՄՍ 7 «Ֆինանսական գործիքներ». Ծառայությունների մատուցման պայմանագրերի բացահայտումներ

ՖՀՄՍ 7 պահանջում է կազմակերպությունից տրամադրել բացահայտումներ ցանկացած փոխանցված և ամբողջովին ապաճանաչված ակտիվի նկատմամբ շարունակական ներգրավվածության մասին: Խորհրդին հարցրել են, թե արդյոք ծառայությունների մատուցման պայմանագրերը բավարարում են շարունակական ներգրավվածության նպատակով կիրառվող այս բացահայտման պահանջներին: Փոփոխությունը պարզաբանում է, որ ծառայությունների մատուցման պայմանագիրը, որը ներառում է միջնորդավճար, կարող է հաստատել ֆինանսական ակտիվի մեջ շարունակական ներգրավվածություն: Կազմակերպությունը պետք է գնահատի միջնորդավճարի բնույթը և ճշտի շարունակական ներգրավվածության համար անհրաժեշտ բացահայտումների համապատասխանությունը ՖՀՄՍ 7.Բ30 և ՖՀՄՍ 7.42Գ կետերում ներկայացված ցուցումներին: Փոփոխությունը պետք է կիրառվի 2016 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար, սակայն ավելի վաղ կիրառումը թույլատրելի է: Փոփոխությունը պետք է կիրառվի այնպես, որ շարունակական ներգրավվածություն կազմող ծառայությունների մատուցման պայմանագրերի գնահատումը կատարվի հետընթաց: Սակայն, պահանջվող բացահայտումները չպետք է կատարվեն ավելի վաղ ժամանակահատվածներում, քան այն տարեկան ժամանակաշրջանը, երբ կազմակերպությունն առաջին անգամ կիրառում է փոփոխություններ:

ՖՀՄՍ 7 «Ֆինանսական գործիքներ». Միջանկյալ ամփոփ հաշվետվությունների համար հաշվանցման բացահայտումների կիրառելիությունը

2011թ. դեկտեմբերին ՖՀՄՍ 7-ում կատարվել են փոփոխություններ, որպեսզի ավելացվի ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցման ուղեցույց: ՖՀՄՍ 7-ի փոփոխությունների կիրառման ամսաթվի դրությամբ նշվում է, որ կազմակերպությունը պետք է կիրառի նշված փոփոխությունները տարեկան հաշվետվությունների և նրանց միջանկյալ հաշվետվությունների համար 2013 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: ՀՀՄՍ 34-ը՝ *«Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ»*, չի անդրադառնում բացահայտման այս պահանջին, և պարզ չէ՝ հարկավոր են արդյոք բացահայտումները ամփոփ միջանկյալ հաշվետվությունների համար:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվություններում կիրառվում է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

Համախմբման հիմունքները

Դուստր ընկերությունը, որի մայր կազմակերպությունը իրավունք ունի ներդրումներից ստանալ փոփոխական արդյունքներ կամ ենթարկվում է այդ արդյունքների փոփոխությունների հետ կապված ռիսկին և կարող է ազդել այդ ներդրումներից ստացվող արդյունքների վրա իր իրավասությունների միջոցով, համախմբվում է: Դուստր կազմակերպության համախմբումը սկսվում է, երբ Խումբը ձեռք է բերում վերահսկողություն դուստր ընկերության նկատմամբ և դադարում է, երբ Խումբը կորցնում է այդ վերահսկողությունը: Ներխմբային բոլոր գործարքները, ինչպես նաև այդ գործարքների արդյունքում առաջացած մնացորդներն ու չիրացված օգուտները ամբողջությամբ բացառվում են: Չիրացված վնասները նույնպես բացառվում են, բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքը վկայում է փոխանցվող ակտիվի արժեզրկման մասին: Անհրաժեշտության դեպքում, դուստր ընկերության ֆինանսական հաշվետվությունները ճշգրտվում են՝ այդ ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխանեցնելու նպատակով: Դուստր ընկերության հաշվետու տարին հանդիսանում է դեկտեմբերի 31-ը:

Ձեռքբերման ժամանակ դուստր ընկերության ակտիվները, պարտավորությունները և պայմանական պարտավորությունները չափվում են ձեռքբերման պահին գոյություն ունեցող իրական արժեքով: Որոշելի զուտ ակտիվների նկատմամբ ձեռքբերման գնի ցանկացած գերազանցող մաս ճանաչվում է որպես գուդվիլ: Որոշելի զուտ ակտիվների նկատմամբ ձեռքբերման գնի ցանկացած պակաս մասը (այսինքն՝ ձեռքբերման զեղչում) կրեդիտագրվում է ձեռքբերման ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

Ծախսերի և եկամուտների ճանաչում

Հասույթը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Խումբ և ստացված հասույթը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Խմբից, և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև հասույթի ճանաչումը:

Տոկոսային եկամուտ և ծախս

Տոկոսային եկամուտը ու ծախսը բոլոր տոկոսային եկամուտ բերող ֆինանսական գործիքների համար, բացառությամբ առևտրային նպատակով պահվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների, շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես «տոկոսային եկամուտ» և «տոկոսային ծախս»՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի հաշվեկշռային արժեքը նվազում է արժեզրկումից կորուստների պատճառով, տոկոսային եկամուտը շարունակում է ճանաչվել կիրառելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը՝ նոր հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Միջնորդավճարների գծով եկամուտ

Վարկերի տրամադրման համար գանձվող վճարները (համապատասխան ուղղակի ծախսերի հետ միասին) հետաձգվում են՝ ճշգրտելով տվյալ վարկի արդյունավետ տոկոսադրույքը: Վճարները, այլ եկամուտները և ծախսերը հիմնականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով ծառայությունների մատուցման ընթացքում: Ներդրումային պորտֆելի, այլ կառավարչական և խորհրդատվական ծառայությունների գծով վճարները ճանաչվում են պայմանագրային պայմաններին համապատասխան: Ակտիվների կառավարման գծով վճարները ճանաչվում են ծառայությունների մատուցման ժամանակաշրջանում: Նույն սկզբունքն է կիրառվում կարողությունների կառավարման, ֆինանսական պլանավորման և ակտիվների պահպանման ծառայությունների դեպքում, որոնք ենթադրում են ծառայությունների մատուցման երկար ժամկետ:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ծախսերի և եկամուտների ճանաչում (շարունակություն)

Շահաբաժիններից եկամուտ

Եկամուտը ճանաչվում է, երբ Խմբի՝ վճարը ստանալու իրավունքը հաստատված է:

Զուտ առևտրային եկամուտ

Զուտ առևտրային եկամուտը ներառում է առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից իրացված և չիրացված եկամուտը և ծախսը, տոկոսներից, շահաբաժիններից և արտարժութային տարբերություններից գոյացող բոլոր եկամուտները և ծախսերը: Զուտ առևտրային եկամուտը ներառում է նաև արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտը և ծախսը և ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ համապատասխան ծառայությունն արդեն մատուցված է:

Գործառնական վարձակալությունից եկամուտ

Ներդրումային գույքի վարձակալությունից ստացվող եկամուտը հաշվառվում է գծային մեթոդով վարձակալության ժամանակահատվածի ընթացքում և ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում գրանցվում է «Այլ եկամուտ» հոդվածում:

Արտարժույթի վերահաշվարկ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը Խմբի գործառնական և հաշվետվությունների ներկայացման արժույթն է: Արտարժույթով կատարված գործարքները գրանցվում են գործառնական արժույթով՝վերահաշվարկված ՀՀ ԿԲ կողմից հրապարակված գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվներն ու պարտավորությունները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով հաշվետու ամսաթվի փոխարժեքը: Արտարժույթով արտահայտված գործարքների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ որպես արտարժույթի վերագնահատման տարբերություններից օգուտ/(վնաս): Ոչ դրամային հոդվածների համար, որոնք ներկայացվում են սկզբնական արժեքով, վերագնահատման ժամանակ կիրառվում է գործարքի ամսաթվի փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքը:

Գործարքի ամսաթվի դրությամբ պայմանագրային փոխարժեքի և ԿԲ-ի փոխարժեքի տարբերությունը ներառվում է եկամտի կազմում՝ նվազեցված արտարժույթով կատարված գործարքի գծով ծախսերը: 2015 և 2014 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ ԿԲ-ի կողմից 1 ԱՄՆ դոլարի համար հայտարարված փոխարժեքը կազմում էր համապատասխանաբար 483.75 և 474.97 ՀՀ դրամ:

Հարկում

Հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են կապիտալում, որի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են կապիտալում:

Ընթացիկ հարկը ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման ենթակա ակնկալվող շահութահարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության, ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ, ինչպես նաև նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն հաստատված են թողարկման համար մինչ համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է գնահատումների վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի վճարում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Հարկում (շարունակություն)

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուդվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում, և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջինները հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության, ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ առաջանում են նաև այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են դուստր, ասոցիացված կամ համատեղ կազմակերպություններում ներդրումներից, բացի այն դեպքերից, երբ ժամանակավոր տարբերությունների իրացման ժամկետները կառավարվում են մայր կազմակերպության կողմից, և հավանական է, որ դրանք մոտ ապագայում չեն իրացվի:

ՀՀ-ում գործում են նաև այլ գործառնական հարկեր, որոնք վերաբերում են Խմբի գործունեությանը: Այդ հարկերը ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության «Այլ ծախսեր» հոդվածում:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ դրամը, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցները՝ ներառյալ պարտադիր պահուստները և այլ բանկերում պահվող մնացորդները (բացառությամբ Արքա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների համար դեպոնացված գումարների), որոնք կարճ ժամանակամիջոցում կարող են փոխարկվել կանխիկի, այդ թվում, մինչև 90 օր մարման ժամկետ ունեցող բարձր իրացվելի ներդրումները, որոնք հեշտությամբ փոխարկելի են ֆիքսված կանխիկ գումարների, և չեն ենթարկվում արժեքի փոփոխման զգալի ռիսկի:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

Թանկարժեք մետաղներ

Ոսկին և այլ թանկարժեք մետաղները հաշվառվում են ՀՀ ԿԲ գնման գներով, որոնք մոտավորապես համապատասխանում են իրական արժեքին՝ Լոնդոնի մետաղների բորսայի գնանշումների նկատմամբ զեղչմամբ: Թանկարժեք մետաղները ներառված են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության «Այլ ակտիվներ» հոդվածում:

Գների տատանումներն արտացոլվում են թանկարժեք մետաղներով գործառնություններից որպես զուտ եկամուտ/վնաս՝ այլ եկամուտների կամ ծախսերի կազմում:

Պահանջներ բանկերի նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Խումբն օգտագործում է այլ բանկերում տարբեր ժամկետայնության բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Բանկերին տրամադրված ֆիքսված ժամկետով վարկերն ու կանխավճարները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ոչ ֆիքսված ժամկետներով միջոցներն ամորտիզացվում են Խմբի ղեկավարության կողմից գնահատված ժամկետներում: Բանկերի նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական գործիքներ

Խումբը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր հաշվեկշռում ճանաչում է այն դեպքում, երբ դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների բոլոր կանոնավոր կերպով գնումներն ու վաճառքները արտացոլվում են գործարքի ամսաթվով: Հետագայում իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների կանոնավոր ձեռքբերման գործարքները պայմանագրի օրվա և գործարքի օրվա միջև ընկած ժամանակահատվածում հաշվառվում են նույն սկզբունքով, ինչ-որ ձեռքբերված գործիքները:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչման պահին այն չափվում է իրական արժեքով՝ գումարած՝ այն դեպքում, երբ դա իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի հետ կապված ուղղակիորեն վերագրելի ծախսումները: Սկզբնական ճանաչումից հետո բոլոր ֆինանսական պարտավորությունները, բացի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորությունների (ներառյալ նաև առևտրային նպատակներով պահվող գործիքները), հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորությունները հաշվառվում են իրական արժեքով:

Խումբը իր ֆինանսական ակտիվները դասակարգում է հետևյալ խմբերի՝ վարկեր և դեբիտորական պարտքեր, իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ և մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ: Ներդրումների նման դասակարգումը կատարվում է դրանց ձեռքբերման պահին՝ Խմբի ղեկավարության կողմից սահմանված ուղեցույցի հիման վրա: Խումբը սահմանում է ֆինանսական ակտիվների դասակարգումը սկզբնական ճանաչման ժամանակ և հետագայում յուրաքանչյուր հաշվետու տարում անհրաժեշտության և հնարավորության դեպքում կարող է վերադասակարգել դրանք:

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ

Այս խմբում հաշվառվում են առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվները և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվները: Ֆինանսական ակտիվը հաշվառվում է այս խմբում, եթե այն ձեռք է բերվում կարճ ժամկետում վաճառքի նպատակով կամ եթե այդպես է որոշվում ղեկավարության կողմից ակտիվի ձեռքբերման պահին:

Իր բնականոն գործունեության ընթացքում, արտարժույթի և կապիտալի շուկաներում, Խումբը հանդես է գալիս որպես ածանցյալ գործիքներով պայմանագրերի կողմ, որոնք ներառում են ֆյուչերսներ, ֆորվարդներ, սվոպեր և օպցիոններ: Նմանատիպ ածանցյալ գործիքները դասակարգվում են որպես առևտրային նպատակներով պահվող և սկզբնապես ճանաչվում են ֆինանսական գործիքների նախնական ճանաչման քաղաքականության համաձայն, իսկ հետագա չափումը իրականացվում է իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է շուկաներում գնանշվող գների միջոցով կամ այնպիսի մոդելների կիրառմամբ, որոնց հիմքում ընկած են շուկաների ընթացիկ վիճակների գնահատումները և բազային գործիքների պայմանագրային գները և այլ գործոններ: Դրական իրական արժեք ունեցող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվ, իսկ բացասական իրական արժեքով ածանցյալ գործիքները՝ որպես պարտավորություն:

Այլ ֆինանսական գործիքներում ներառված ածանցյալ գործիքները դիտարկվում են որպես առանձին ածանցյալ գործիքներ, եթե դրանց գծով ռիսկերը և բնութագրիչները սերտորեն կապված չեն հիմնական պայմանագրերի ռիսկերի և բնութագրիչների հետ, և հիմնական պայմանագրերը չեն հաշվառվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Պարունակվող ածանցյալ գործիքը հանդիսանում է հիբրիդ ֆինանսական գործիքի բաղադրիչ, որը ներառում է ինչպես հիմնական պայմանագիրը, այնպես էլ ածանցյալ բաղադրիչը, ինչի արդյունքում հիբրիդ գործիք որոշ դրամական հոսքեր փոփոխվում են նույն ձևով, ինչ առանձին ածանցյալ գործիքինը:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական գործիքներ (շարունակություն)

Ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, երբ.

- Այդպես վարվելը զգալիորեն կնվազեցնի չափման անհամապատասխանությունները, որոնք կառաջանային, եթե ածանցյալ գործիքները համարվեին առևտրային նպատակներով պահվող, իսկ բազիսային ֆինանսական գործիքները հաշվառվեին ամորտիզացված արժեքով, ինչպես հաճախորդներին և բանկերին տրված վարկերը, կամ պարտքային արժեթղթերի տեսքով թողարկված արժեթղթերը:
- Որոշ ներդրումներ, ինչպես օրինակ կապիտալի գործիքներում կատարված ներդրումները, որոնք փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային քաղաքականության համաձայն հաշվառվում են իրական արժեքով և կառավարչական անձնակազմին զեկուցվում են այդ արժեքով, համարվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, և
- Ֆինանսական գործիքները, ինչպիսիք են մեկ կամ ավելի ներառված ածանցյալներ պարունակող պարտքային արժեթղթերը, որոնք էականորեն ազդում են դրամական հոսքերի վրա, համարվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Ածանցյալ գործիքները նաև դասակարգվում են որպես առևտրային նպատակներով պահվող, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք օգտագործվում են հեջավորման նպատակով: Առևտրային նպատակներով պահվող ակտիվներից շահույթը և վնասը արտացոլվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում:

Վարկեր և դեբիտորական պարտքեր

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Խմբի կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ՝ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում: Այնուհետև վարկերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հաճախորդներին տրված ֆիքսված մարման ժամկետ չունեցող վարկերը հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հաճախորդներին տրված վարկերի գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից կորուստների պահուստների գումարներով:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքներ

Վաճառքի համար մատչելի ներդրումները պարտքային, ինչպես նաև կապիտալի գործիքներում կատարված այն ներդրումներն են, որոնք Խումբը մտադիր է պահել անորոշ ժամկետով, և որոնք կարող են վաճառվել իրացվելիության կարիքների բավարարման համար, ինչպես նաև տոկոսադրույքներում, փոխարժեքներում կամ բաժնետոմսերի գներում փոփոխությունների դեպքում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները նախնական ճանաչումից հետո հաշվառվում են իրական արժեքով, ընդ որում օգուտներն ու վնասները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում մինչև ներդրումների օտարումը կամ արժեզրկումը, որի ընթացքում նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներառված կուտակված շահույթը կամ վնասը վերադասակարգվում է համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ամեն դեպքում, արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում: Վաճառքի համար մատչելի կապիտալի գործիքների գծով շահաբաժինները համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում գրանցվում են այն ժամանակ, երբ Խումբը իրավունք է ձեռք բերում ստանալու այդ շահաբաժինները: Կարգավորվող ֆինանսական շուկաներում ակտիվորեն վաճառվող ֆինանսական ակտիվի իրական արժեքը որոշվում է հաշվետու ամսաթվին բորսայի փակման պահին այդ ակտիվի գծով գնանշվող գների միջոցով: Ակտիվ շուկա չունեցող գործիքների իրական արժեքը որոշվում է գնահատման մոդելների միջոցով: Նման մոդելները ներառում են վերջին շուկայական անկախ գործառնությունները, էականորեն չտարբերվող ակտիվների շուկայական գներին հղում կատարելը, զեղչված դրամական հոսքերի վերլուծությունը: Հակառակ դեպքում ներդրումները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով արժեզրկումից կորուստները:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական գործիքների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Խումբն իրականացնում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի՝ արժեզրկված լինելու օբյեկտիվ հայտանիշների գնահատում:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվներ

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը համարվում են արժեզրկված և արժեզրկումից կորուստը ճանաչվում է միայն այն դեպքում, եթե կա արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ, որպես ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձությունների («ծախսային իրադարձություն») արդյունք, և այդ իրադարձությունը կամ իրադարձություններն ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվից կամ ակտիվների խմբից ակնկալվող ապագա դրամական հոսքերի վրա, որոնք կարելի է արժանահավատորեն չափել:

Արժեզրկումից առաջացած վնասի օբյեկտիվ հայտանիշը կարող է ներառել վարկառուի կամ վարկառուների խմբի զգալի ֆինանսական դժվարությունները, տոկոսագումարների և մայր գումարների վճարման պարտավորությունների խախտումների առկայությունը, այն հավանականությունը, որ տեղի կունենա սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմակերպում, ինչպես նաև դիտարկվող շուկաներից տեղեկատվությունն ակնկալվող ապագա դրամական հոսքերի չափերի նվազման վերաբերյալ, օրինակ՝ ժամկետանց վճարումների մակարդակի փոփոխություն կամ տնտեսական պայմանների փոփոխություն, որոնք կապված են ակտիվների արժեզրկման հետ;

Խումբն ի սկզբանե գնահատում է արժեզրկված լինելու հայտանիշները անհատապես՝ էական ակտիվների համար, և անհատապես կամ խմբային՝ բոլոր ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես էական չեն համարվում: Եթե Խումբը որոշում է, որ անհատապես գնահատված ֆինանսական ակտիվի համար չկա արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ, անկախ այն հանգամանքից, էական է այն, թե՝ ոչ, այդ ակտիվը ներառվում է համանման վարկային ռիսկերի բնութագրիչներ ունեցող ֆինանսական ակտիվների խմբում և դրանց արժեզրկված լինելը գնահատվում է խմբային հիմունքով: Ակտիվները, որոնց արժեզրկված լինելը գնահատվում է անհատական հիմունքով և որոնց նկատմամբ ճանաչվում են արժեզրկումից վնասներ, չպետք է գնահատվեն խմբային հիմունքով:

Արժեզրկված լինելու օբյեկտիվ հայտանիշների առկայության դեպքում արժեզրկումից վնասը իրենից ներկայացնում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի տարբերությունը, որը չի ներառում վարկերից՝ ապագայում սպասվող կորուստները, որոնք Խումբը դեռ չի կրել: Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկման պահուստի միջոցով, իսկ արժեզրկումից ծախսն արտացոլվում է համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Եթե վարկը կամ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումն ունի փոփոխական տոկոսադրույք, ցանկացած արժեզրկումից վնաս չափելու համար զեղչման դրույքը պայմանագրով որոշված ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքն է: Խումբը կարող է արժեզրկումը չափել գործիքի իրական արժեքի հիման վրա՝ օգտագործելով տեսանելի շուկայական գինը:

Գրավով ապահովված ֆինանսական ակտիվների ապագա հոսքերի ներկա արժեքի հաշվարկը հիմնվում է այն դրամական հոսքերի վրա, որոնք կարող են ստացվել գրավի իրացումից, նվազեցված գրավի բռնագանձման և օտարման ծախսումներով՝ անկախ բռնագանձման հավանականությունից:

Արժեզրկման խմբային գնահատման նպատակով ֆինանսական ակտիվները խմբավորվում են Խմբի ներքին վարկային դասակարգման հիման վրա, որը հաշվի է առնում վարկային ռիսկի այնպիսի բնութագրիչներ, ինչպիսիք են ակտիվի տեսակը, ոլորտը, աշխարհագրական դիրքը, գրավի տեսակը, ժամկետայնության կարգավիճակը և այլ կապակցված գործոններ:

Ֆինանսական ակտիվների խմբի գծով ապագա դրամական հոսքերը, որոնց արժեզրկված լինելը գնահատվում է խմբային հիմքով, որոշվում են ակտիվների գծով կրած վնասների պատմական վիճակագրության հիման վրա, որի գծով պարտքային ռիսկի բնութագրիչները համարժեք են համանման ակտիվների խմբի բնութագրիչներին: Պատմական վիճակագրական շարքերը ճշգրտվում են ընթացիկ շուկայական իրավիճակը արտացոլելու համար՝ չեզոքացնելու պատմական վիճակագրական շարքերի հիմքում ընկած այն շուկայական պայմանների ազդեցությունը, որոնք տվյալ ժամանակաշրջանում գոյություն չունեն, և արտացոլելու պատմական վիճակագրական շարքերի հիմքում չընդգրկված շուկայական նոր պայմանները:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական գործիքների արժեզրկում (շարունակություն)

Ապագա դրամական հոսքերում գնահատման փոփոխությունները արտացոլում և համապատասխանում են դիտարկվող շուկաներում յուրաքանչյուր տարվա տեղեկատվության փոփոխությանը (օրինակ, գործազրկության մակարդակի փոփոխություն, անշարժ գույքի գներ, ապրանքների գներ, վճարունակության կարգավիճակ կամ այլ գործոններ, որոնք վկայում են խմբի կրած վնասների և դրանց չափի մասին): Ապագա դրամական հոսքերի գնահատման համար օգտագործվող մեթոդաբանությունը և ենթադրությունները պարբերաբար վերանայվում են Խմբի կողմից՝ վնասների իրական և գնահատված արժեքների միջև տարբերությունները նվազեցնելու նպատակով:

Վարկերը համապատասխան պահուստների հետ միասին դուրս են գրվում, եթե ապագայում չկա վարկը հավաքագրելու իրատեսական հեռանկար, և երբ բոլոր գրավներն օգտագործվել են կամ փոխանցվել Խմբին: Եթե հաջորդող տարում, գնահատված արժեզրկման գծով ծախսը ավելանում կամ նվազում է արժեզրկման ճանաչումից հետո կատարված իրադարձությունների պատճառով, նախկինում ճանաչված արժեզրկման ծախսը ավելացվում կամ նվազեցվում է պահուստի գումարը ճշտելով: Եթե ապագա դուրսգրումը հետագայում վերականգնվում է, ապա վերականգնված գումարը կրեդիտագրվում է պահուստի հաշվին:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակված վնասը փոխանցելով շահույթի կամ վնասի կազմ՝ որպես վերադասակարգման ճշգրտում: Կուտակված վնասը, որը այլ համապարփակ եկամտից վերադասակարգվում է շահույթի կամ վնասի կազմ, հանդիսանում է ձեռքբերման արժեքի՝ հանած մայր գումարի մարումները ու ամորտիզացիան, և ընթացիկ իրական արժեքի՝ հանած նախկինում շահույթի կամ վնասի կազմում ճանաչված արժեզրկումից կորուստները, միջև տարբերությունը: Ժամանակի արժեքին վերագրելի արժեզրկման գծով պահուստի փոփոխություններն արտացոլվում են որպես տոկոսային եկամտի բաղադրիչ:

Եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկված վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթի իրական արժեքն աճում է, և այդ աճը հնարավոր է անկողմնակալորեն վերագրել շահույթի կամ վնասի կազմում արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը, ապա արժեզրկումից կորուստը հակադարձվում է, իսկ հակադարձված գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այնուհանդերձ, արժեզրկված վաճառքի համար մատչելի բաժնային արժեթղթի իրական արժեքի ցանկացած հետագա վերականգնումը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը, կամ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ

- ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքի ժամկետն ավարտված է,
- Խումբը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամբողջությամբ և առանց էական ուշացման փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրի համաձայն, ինչպես նաև,
- Խումբը կամ (ա) փոխանցել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) ոչ փոխանցել և ոչ էլ պահպանում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողության իրավունքը:

Այն դեպքում, երբ Խումբը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը և ոչ փոխանցել ու ոչ էլ պահպանում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, և չի փոխանցել ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ակտիվը հաշվառվում է ակտիվում Խմբի շարունակվող մասնակցության սահմաններում: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի նկատմամբ երաշխիքի ձև, այդպիսի մասնակցությունը չափվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնով՝ ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեք և Խմբից պահանջվող փոխհատուցման առավելագույն գումար:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում (շարունակություն)

Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի գծով թողարկված/կամ գնված օպցիոնի ձև, ներառյալ՝ դրամական միջոցներով մարվող օպցիոններ կամ նմանատիպ գործիքներ, Խմբի մասնակցության չափը որոշվում է այն գումարի չափով, որով Խումբը կարող է հետ գնել փոխանցված ակտիվը, բացառությամբ իրական արժեքով գնահատված ակտիվի գծով վաճառված օպցիոնի, ներառյալ՝ դրամական միջոցներով մարվող օպցիոններ կամ նմանատիպ գործիքներ, երբ շարունակվող մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ փոխանցված ակտիվի իրական արժեք և օպցիոնի իրագործման գին:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ մարվում, չեղյալ է համարվում կամ ուժի մեջ լինելու ժամկետը լրանում է: Նույն վարկատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորության փոխարինումը այլ ֆինանսական պարտավորությամբ (որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ երբ կատարվում է գործող պարտավորության պայմանների էական փոփոխություն) հանգեցնում է հին պարտավորության ապաճանաչմանը և նոր պարտավորության ճանաչմանը, իսկ համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը արտացոլվում է համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսավորման գործառնություններ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակում են հաշվառվել հաշվեկշռում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում որպես առանձին հաշվեկշռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է բանկերի կամ հաճախորդների միջոցների կազմում:

Հետադարձ վաճառքի պայմանագրով արժեթղթերի ձեռքբերումը (հակադարձ ռեպո) արտացոլվում է բանկերի նկատմամբ պահանջների կամ հաճախորդներին տրված վարկերի կազմում՝ կախված իրավիճակից: Վաճառքի գնի և ձեռք բերման գնի միջև տարբերությունը դիտարկվում է որպես տոկոսային եկամուտ և հաշվեգրվում ռեպո պայմանագրի ժամկետի ընթացքում՝ արդյունավետ եկամտաբերության մեթոդով:

Եթե հակադարձ ռեպո պայմանագրով գնված ակտիվները վաճառվեն երրորդ կողմին, արժեթղթերի վերադարձի պարտավորությունը արտացոլվում է առևտրային գործառնությունների գծով պարտավորություններում՝ իրական արժեքով:

Վարձակալություն

Ֆինանսական վարձակալություն՝ Խումբը որպես վարձատու

Խումբը ճանաչում է ֆինանսական վարձակալությունից դեբիտորական պարտքը վարձակալության զուտ ներդրման գումարի չափով՝ վարձակալության պայմանների ուժի մեջ մտնելու պահից սկսած: Այս գործառնությունները ներկայացվում են որպես հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ: Ֆինանսական եկամուտը ճանաչվում է վարձակալության ընթացքում այնպես, որ ապահովի անփոփոխ պարբերական դրույք վարձակալության շրջանակներում չմարված զուտ ներդրումների նկատմամբ: Սկզբնական ուղղակի ծախսերը ներառվում են ստացվելիք գումարների սկզբնական ճանաչման ժամանակ:

Երբ վարձակալման պայմանագրերի դադարեցման արդյունքում Խմբի տիրապետության տակ է անցնում գրավի առարկան, այդ ակտիվները չափվում են իրացման զուտ արժեքի և պատմական ամորտիզացված արժեքների նվազագույնով:

Գործառնական վարձակալություն՝ Խումբը որպես վարձատու

Խումբը համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացնում է գործառնական վարձակալության առարկա հանդիսացող ակտիվը՝ ըստ ակտիվի բնույթի: Գործառնական վարձակալությունից ստացվող վարձակալական եկամուտը ճանաչվում է շահույթում կամ վնասում որպես այլ եկամուտ՝ հավասարաչափ վարձակալության ժամկետի ընթացքում: Վարձակալներին տրամադրված զեղչերի համախառն գումարը արտացոլվում է որպես վարձակալությունից եկամտի նվազեցում՝ հավասարաչափ վարձակալության ժամկետի ընթացքում: Գործառնական վարձակալության պայմանագրի հետ կապված սկզբնական ուղղակի ծախսումները ավելացվում են վարձակալության առարկա հանդիսացող ակտիվի հաշվեկշռային արժեքին:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ, բացի հողից և շենքերից: Բանկի շենքերը ներկայացված են իրական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը: Հողը հաշվառվում է իրական արժեքով և ունի անսահմանափակ օգտակար ծառայության ժամկետ և, հետևաբար, չի ամորտիզացվում:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայություն (տարի)	*Դրույք (%)*
Շենքեր	20	5
Համակարգիչներ	1	100
Տրանսպորտային միջոցներ	5	20
Սարքավորումներ	5	20
Այլ հիմնական միջոցներ	5	20

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալման ժամկետի և հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով: Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները հաշվառվում են փաստացի ծախսերի և արժեզրկումից կորուստների տարբերությամբ: Շինարարական աշխատանքների ավարտից հետո ակտիվները փոխանցվում են հիմնական միջոցներին և հաշվառվում են իրենց մնացորդային արժեքով: Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները չեն ամորտիզացվում, քանի դեռ պատրաստ չեն օգտագործման համար:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ դրանք բավարարում են ակտիվի ճանաչման չափանիշին: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

Հողը և շինությունները վերագնահատվում են կանոնավոր կերպով մոտավորապես 3-5 տարին մեկ: Վերագնահատման հաճախականությունը կախված է ակտիվների իրական արժեքի փոփոխություններից: Այն դեպքում, երբ նշանակալի շեղում կա վերագնահատված ակտիվների իրական արժեքի և նրանց մնացորդային արժեքների միջև, ապա անցկացվում է հետագա վերագնահատում: Վերագնահատումը կատարվում է հիմնական միջոցների ողջ դասի համար:

Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի աճը արտացոլվում է կապիտալում՝ հիմնական միջոցների վերագնահատման պահուստում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է ֆինանսական արդյունքներում տվյալ ակտիվի գծով նախկինում ճանաչված վերագնահատումից վնասը. այս դեպքում վերագնահատումից աճը նույնպես ճանաչվում է ֆինանսական արդյունքներում: Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի նվազումը ճանաչվում է ֆինանսական արդյունքներում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է նախկինում տվյալ ակտիվի գծով կապիտալում ճանաչված վերագնահատումից աճը:

Հիմնական միջոցների օգտագործմանը զուգահեռ, տվյալ ակտիվի վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության տարբերությունը փոխանցվում է չբաշխված շահույթին: Վերագնահատված գումարով հաշվառվող հիմնական միջոցների իրացման դեպքում, իրացված հիմնական միջոցների համապատասխան դասի վերագնահատման պահուստում վերագրված գումարը փոխանցվում է չբաշխված շահույթին:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից, արտոնագրերից և այլն:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում՝1-ից 10 տարվա ընթացում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հայտանիշեր: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական հաշվետու տարում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

Բռնագանձված ակտիվներ

Որոշ դեպքերում, ակտիվները բռնագանձվում են վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Շնորհներ

Ակտիվներին վերաբերող շնորհները ներառվում են այլ պարտավորություններում և կրեդիտագրվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությանը գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Ներգրաված միջոցներ

Ներգրաված միջոցները, որոնք ներառում են ՀՀ կառավարության և Կենտրոնական բանկի, ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների հաշիվները, թողարկված արժեթղթերը և ստորադաս փոխառությունները, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրաված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

Ֆինանսական երաշխիքներ

Ֆինանսական երաշխիքների պայմանագրերը այն պայմանագրերն են, որոնք պահանջում են, որ երաշխիք տրամադրողը փոխհատուցի երաշխիքը ստացողին կոնկրետ պարտապանի կողմից պարտքային գործիքի ժամկետներին համաձայն վճարումները ժամանակին չկատարելու պատճառով վերջինիս կողմից կրած վնասների դիմաց: Նման ֆինանսական երաշխիքներ տրամադրվում են բանկերին, ֆինանսական և այլ կազմակերպություններին՝ որպես հաճախորդների վարկերի, օվերդրաֆտները և այլ բանկային գործիքների ապահովման միջոց:

Ֆինանսական երաշխիքների պայմանագրերը համախմբված ֆինանսական հաշվետվություններում սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով «Այլ պարտավորություններ» հոդվածում՝ միջնորդավճարների գծով ստացված վարձատրության չափով: Պարտավորության սկզբնական ճանաչումից հետո Խումբը յուրաքանչյուր երաշխիքի պայմանագրի գծով իր պարտավորությունը գնահատում է հետևյալ երկու մեծություններից առավելագույնով. միջնորդավճարների գծով ամորտիզացված վարձատրությունը և երաշխիքի պայմանագրից առաջացող ֆինանսական պարտավորությունը մարելու համար անհրաժեշտ ծախսումների լավագույն գնահատականը:

Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Խումբն ունի գործող իրավական կամ կառուցողական պարտավորություն, որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտավորության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Կապիտալ

Կանոնադրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը և չմարվող արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը վերաբերող ուղղակի ծախսերը, բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության միավորման դեպքերի, արտացոլվում են սեփական կապիտալում որպես թողարկման գծով մուտքերից նվազեցում: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես էմիսիոն եկամուտ:

Էմիսիոն եկամուտ

Էմիսիոն եկամուտը ներառում է բաժնետոմսերի թողարկումից ստացված ցանկացած հավելավճար: Գործարքի գծով ցանկացած ծախսում, որը կապված է բաժնետոմսերի թողարկման հետ, նվազեցվում է էմիսիոն եկամուտից:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվետու ամսաթվի դրությամբ շահաբաժինները նվազեցվում են սեփական կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն միայն այն դեպքում, երբ դրանք հայտարարվել են մինչև հաշվետու ամսաթիվը ներառյալ: Մինչև հաշվետու ամսաթիվը առաջարկված կամ հաշվետու ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը առաջարկված կամ հայտարարված շահաբաժինները բացահայտվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում:

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստը օգտագործվում է գույքի իրական արժեքի աճը և նույն ակտիվի՝ նախկինում կապիտալում ճանաչված աճի սահմաններում իրական արժեքի նվազեցումը գրանցելու համար:

Վաճառքի համար մատչելի արժեթղթերի վերագնահատման պահուստ

Այս պահուստը արտացոլում է վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքի փոփոխությունները:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները հաշվանցվում են պարտավորություններով և համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվում են զուտ մնացորդով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավական հիմք և գոյություն ունի դրանք զուտ հիմքով մարելու կամ միաժամանակ ակտիվները իրացնելու և պարտավորությունները մարելու մտադրություն:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՍ-ների, կամ համանման գործարքների խմբից առաջաղող օգուտներիի և վնասների համար, օրինակ՝ Խմբի առևտրային գործունեությունից:

5. Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումներ

ՖՀՄՍ համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Խմբի ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Իրական արժեքի չափում

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է իրական արժեքի գնահատման մոդելներ: Սա ներառում է զարգացող գնահատումները և ենթադրությունները համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կստացվեր շուկայական գործարքների դեպքում (տես՝ Ծանոթագրություն 34):

Ներդրումային արժեթղթերի դասակարգում

Խմբի ներդրումային արժեթղթերը ներառում են ՀՀ պետական և ոչ պետական պարտատոմսերը, ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթերը և կորպորատիվ բաժնետոմսերը: Սկզբնական ճանաչման ժամանակ Խումբը դասակարգում է արժեթղթերը որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ, մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվներ և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, որոնց իրական արժեքի ճշգրտումն իրականցվում է կապիտալում:

Կապակցված կողմերի հետ գործառնություններ

Խումբն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Խումբը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա:

Վարկերի արժեզրկման պահուստ

Խումբը պարբերաբար կատարում է վարկերի և դեբիտորական պարտքերի՝ արժեզրկված լինելու վերլուծություն: Սեփական փորձից ելնելով՝ Խումբը արժեզրկումից վնասները գնահատելիս օգտագործում է իր սուբյեկտիվ դատողություններն այն դեպքերում, երբ վարկառուն ֆինանսական դժվարություն է կրում և համանման վարկառուների վերաբերյալ չկա բավարար փաստացի տեղեկատվություն: Խումբը համանման կերպով գնահատում է ապագա դրամական հոսքերի փոփոխությունները դիտարկվող տեղեկատվության հիման վրա, որը վկայում է վարկառուի պարտավորությունների մարման ոչ բարենպաստ կարգավիճակի, կա՛մ պետական, կա՛մ տեղական տնտեսական պայմանների փոփոխության մասին, որոնք վերագրվում են տվյալ խմբի ակտիվների գծով պարտավորությունների չկատարման դեպքերին: Ղեկավարությունն օգտագործում է գնահատումներ՝ հիմնվելով ակտիվների նկատմամբ համանման վարկային ռիսկի բնութագրերի և վարկերի ու դեբիտորական պարտքերի խմբերի արժեզրկման օբյեկտիվ հայտանիշների պատմական տվյալների վրա: Սեփական փորձից ելնելով՝ Խումբը օգտագործում է իր սուբյեկտիվ դատողությունները դիտարկվող վարկերի և դեբիտորական պարտքերի վերաբերյալ տեղեկատվության ճշգրտման համար՝ ընթացիկ իրավիճակը արտացոլելու նպատակով:

6. Ֆինանսական հաշվետվությունների վերադասակարգում և վերահաշվարկ

(ա) Վերադասակարգումներ

Խումբը 2015թ. ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության մեջ «Պահանջներ ֆինանսական հաստատությունների նկատմամբ» և «Պարտավորություններ ֆինանսական հաստատությունների նկատմամբ» հոդվածները վերանվանել է «Պահանջներ բանկերի նկատմամբ» և «Պարտավորություններ բանկերի նկատմամբ»:

2015թ. ներկայացմանը համապատասխանելու նպատակով 2014 և 2013թթ. մնացորդների գծով կատարվել են հետևյալ վերադասակարգումները՝

հազար ՀՀ դրամ	*Նախկինում գրանցված*	*Վերադասակարգում*	*Վերահաշվարկված*
2014թ.			
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն			
Պահանջներ բանկերի նկատմամբ	7,412,250	(496,030)	6,916,220
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	92,888,015	496,030	93,384,045
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	21,466,662	(13,271,838)	8,194,824
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	92,435,546	3,904,222	96,339,768
Այլ փոխառու միջոցներ	–	9,367,616	9,367,616

հազար ՀՀ դրամ	*Նախկինում գրանցված*	*Վերադասակարգում*	*Վերահաշվարկված*
2013թ.			
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն			
Պահանջներ բանկերի նկատմամբ	2,884,009	(371,388)	2,512,621
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	79,958,455	371,388	80,329,843
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	14,830,469	(14,678,923)	151,546
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	78,078,901	6,847,863	84,926,764
Այլ փոխառու միջոցներ	–	7,831,060	7,831,060

(բ) Վերահաշվարկ

2014թ. մնացորդներում կատարվել են հետևյալ ճշգրտումները:

հազար ՀՀ դրամ	*Նախկինում գրանցված*	*Վերահաշվարկ*	*Վերահաշվարկված*
2014թ.			
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն			
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	6,707,452	(786,549)	5,920,903
Առևտրային պարտավորություններ	(786,549)	786,549	–

Բանկը սխալմամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ճանաչել էր հակադարձ հետգնման պայմանագրերով որպես գրավ ստացված և հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարների դիմաց վերագրավադրված արժեթղթերը: Նույն գումարով առևտրային պարտավորություն էր ճանաչվել ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում: Սույն համախմբված ֆինանսական հաշվետվություններում սխալը ճշգրտվել է:

7. Տոկոսային եկամուտ և ծախս

հազար ՀՀ դրամ	*2015թ.*	*2014թ.*
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	12,087,657	11,401,100
Վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթեր	929,731	824,506
Պահանջներ բանկերի նկատմամբ	434,354	342,445
Այլ տոկոսային եկամուտ	6,259	37,097
Ընդամենը տոկոսային եկամուտ	**13,458,001**	**12,605,148**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	5,195,451	4,901,330
Այլ փոխառու միջոցներ	791,850	714,361
Ստորադաս փոխառություն	765,471	546,670
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	208,954	112,597
Ընդամենը տոկոսային ծախս	**6,961,726**	**6,274,958**

2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում անհատապես արժեզրկված վարկերի գծով հաշվեգրված տոկոսային եկամուտը կազմել է 384,490 հազ. դրամ (2014թ.՝ 589,990 հազ. դրամ):

8. Միջնորդավճարների գծով եկամուտ և ծախս

հազար ՀՀ դրամ	*2015թ.*	*2014թ.*
Վճարային քարտերով գործառնություններ	838,569	752,315
Միջնորդավճարներ փոխանցումներից	556,537	596,845
Դրամարկղային գործառնություններ	167,034	206,355
Միջնորդավճարներ վարկերից	96,567	57,738
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	42,903	4,446
Այլ	186,066	58,456
Ընդամենը միջնորդավճարների գծով եկամուտ	**1,887,676**	**1,676,155**
Վճարային քարտերով գործառնություններ	434,045	351,920
Դրամարկղային գործառնություններ	100,463	70,965
Միջնորդավճարներ փոխանցումներից	84,925	79,254
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	11,761	–
Այլ ծախսեր	25,116	34,310
Ընդամենը միջնորդավճարների գծով ծախս	**656,310**	**536,449**

9. Զուտ առևտրային եկամուտ

հազար ՀՀ դրամ	*2015թ.*	*2014թ.*
Արտարժույթի փոխարկումից զուտ օգուտ	1,080,235	1,128,306
Առևտրային արժեթղթերից զուտ վնաս	(3,597)	(54,923)
Ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով զուտ վնաս	(66,690)	(249,035)
Ընդամենը զուտ առևտրային եկամուտ	**1,009,948**	**824,348**

10. Այլ եկամուտ

հազար ՀՀ դրամ	*2015թ.*	*2014թ.*
Ստացված տույժեր և տուգանքներ	728,931	327,452
Ինկասացիայի գծով եկամուտ	68,380	82,265
Թանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ եկամուտ	40,328	14,538
Շահաբաժիններից եկամուտ	4,133	2,810
Շնորհներից եկամուտ	2,422	2,422
Հիմնական միջոցների վաճառքից եկամուտ	839	76,448
Այլ եկամուտ	99,246	107,402
Ընդամենը այլ եկամուտ	**944,279**	**613,337**

11. Արժեզրկումից կորուստներ

հազար ՀՀ դրամ	*2015թ.*	*2014թ.*
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ (Ծան. 18)	3,242,949	1,646,181
Այլ ակտիվներ (Ծան. 24)	28,654	69,800
Այլ պահուստներ	–	(18,392)
Ընդամենը արժեզրկումից կորուստներ	**3,271,603**	**1,697,589**

12. Անձնակազմի գծով ծախսեր

հազար ՀՀ դրամ	*2015թ.*	*2014թ.*
Աշխատավարձ	3,105,119	2,956,505
Այլ ծախսեր	32,817	20,631
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	**3,137,936**	**2,977,136**

13. Այլ ծախսեր

հազար ՀՀ դրամ	*2015թ.*	*2014թ.*
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	485,145	408,789
Հարկային պարտավորությունների, տույժերի և տուգանքների գծով պահուստ	253,353	–
Գովազդի գծով ծախսեր	248,571	347,844
Անվտանգության գծով ծախսեր	192,454	176,122
Հայկական ծրագրերի գծով ծախսեր	149,388	137,520
Կապ	125,030	124,872
ԱրՔա-ի գծով ծախսեր	121,223	109,632
Ավանդների ապահովագրման ծախսեր	112,924	97,128
Ապահովագրության գծով ծախսեր	102,505	112,694
Հիմնական միջոցների վերանորոգման և սպասարկման ծախսեր	98,210	106,217
Խորհրդատվություն և այլ ծառայություններ	86,901	49,586
Բռնագանձված գրավի օտարումից կորուստներ	63,210	16,738
Բռնագանձված գրավի արժեզրկումից կորուստներ	62,268	–
Հարկեր (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	52,588	20,899
Գրասենյակային ծախսեր	48,792	46,181
Գործուղման ծախսեր	18,484	19,910
Վճարված տուգանքներ	6,420	400
Այլ ծախսեր	390,811	369,214
Ընդամենը այլ ծախսեր	**2,618,277**	**2,143,746**

14. Շահութահարկի գծով ծախս

հազար ՀՀ դրամ	*2015թ.*	*2014թ.*
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	2,369	338,922
Նախորդ ժամանակաշրջանի շահութահարկի ճշգրտում	15,540	18,310
Հետաձգված հարկի գծով ծախս/(փոխհատուցում)	29,601	(51,538)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	**47,510**	**305,694**

2015 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ անորոշ հարկային պարտավորությունների գծով Խումբը ձևավորել է պահուստ 253,353 հազ. դրամի չափով (Ծան. 13): Պահուստը ձևավորվել է շահութահարկի գծով պարտավորությունների (87,756 հազ. դրամ), ԱԱՀ-ի (15,500 հազ. դրամ) և դրանց հետ կապված տույժերի և տուգանքների համար (150,097 հազ. դրամ):

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2014թ.՝ 20%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկման նպատակով հաշվեկշռային արժեքների միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է՝ կիրառելով 20% հիմնական դրույքաչափը:

Հաշվապահական շահույթի և հարկային ծախսերի միջև թվաբանական համաձայնեցումը ներկայացված է ստորև.

հազար ՀՀ դրամ	*2015թ.*	*2014թ.*
(Վնաս)/շահույթ նախքան հարկումը	**(616,073)**	**2,368,195**
Շահութահարկի (փոխհատուցում)/ծախս՝ 20% դրույքաչափով	**(123,215)**	**473,639**
Չհարկվող եկամուտ	(67,014)	(105,906)
Չնվազեցվող ծախսեր	118,538	125,681
Արտարժույթի փոխարկումից զուտ վնաս/(օգուտ)	103,661	(206,030)
Նախորդ ժամանակաշրջանի շահութահարկի ճշգրտում	15,540	18,310
Շահութահարկի գծով ծախս	**47,510**	**305,694**

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

հազար ՀՀ դրամ	*2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ*	*Հաշվեգրված շահույթում և վնասում*	*Ճանաչված այլ համապարփակ ֆինանսական արդյունքում*	*2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ*
Բռնագանձված ակտիվներ	7,752	11,344	–	19,096
Այլ ակտիվներ	22,613	(16,359)	–	6,254
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	10,061	(10,140)	–	(79)
Այլ պարտավորություններ	27,760	7,796	–	35,556
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	**68,186**	**(7,359)**	**–**	**60,827**
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր	(83,024)	–	2,542	(80,482)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	(392,945)	(111,901)	–	(504,846)
Հիմնական միջոցներ	(951,104)	89,659	141,715	(719,730)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություններ	**(1,427,073)**	**(22,242)**	**144,257**	**(1,305,058)**
Զուտ հետաձգված հարկային պարտավորություններ	**(1,358,887)**	**(29,601)**	**144,257**	**(1,244,231)**

14. Շահութահարկի գծով ծախս (շարունակություն)

հազար ՀՀ դրամ	*2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ*	*Հաշվեգրված շահույթում և վնասում*	*Հանաչված այլ համապարփակ ֆինանսական արդյունքում*	*2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ*
Բռնագանձված ակտիվներ	–	7,752	–	7,752
Այլ ակտիվներ	(25,669)	48,282	–	22,613
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	–	10,061	–	10,061
Այլ պարտավորություններ	28,794	(1,034)	–	27,760
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	**3,125**	**65,061**	**–**	**68,186**
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր	(200,944)	–	117,920	(83,024)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	(350,417)	(42,528)	–	(392,945)
Հիմնական միջոցներ	(980,109)	29,005	–	(951,104)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություններ	**(1,531,470)**	**(13,523)**	**117,920**	**(1,427,073)**
Զուտ հետաձգված հարկային պարտավորություններ	**(1,528,345)**	**51,538**	**117,920**	**(1,358,887)**

15. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

հազար ՀՀ դրամ	*2015թ.*	*2014թ.*
Կանխիկ դրամական միջոցներ	9,872,122	8,049,424
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	32,111,909	17,343,318
Այլ բանկերում տեղաբաշխված միջոցներ	4,045,157	2,448,679
Ընդամենը դրամական միջոցներ և համարժեքներ	**46,029,188**	**27,841,421**

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ թղթակցային հաշիվները ՀՀ ԿԲ-ում ներառում են ՀՀ բանկային օրենսդրության համաձայն ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված պարտադիր պահուստները, որոնք հաշվարկվում են Խմբի կողմից ներգրաված դրամային միջոցների 2%-ի և արտարժույթով միջոցների 20%-ի չափով (2014թ. նույնը, ինչ 2015թ.)՝ կազմելով 19,136,759 հազ. դրամ (2014թ.՝ 15,269,468 հազ. դրամ): Այդ միջոցների ելքագրումն արգելված չէ, սակայն պահուստավորման նվազագույն չափը չպահպանելը հանգեցնում է ԿԲ-ի կողմից տույժերի կիրառման: Պարտադիր պահուստավորման դիմաց Խումբը տոկոսներ չի ստանում:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ բանկերում տեղաբաշխված միջոցները 3,842,137 հազ. դրամ գումարով (95%) կենտրոնացված են երեք բանկերում (2014թ.՝ 2,115,481 հազ. դրամ գումարով (86%) կենտրոնացված են երեք բանկերում):

16. Առևտրային արժեթղթեր

հազար ՀՀ դրամ	*2015թ.*	*2014թ.*
ՀՀ կառավարության կողմից թողարկված պարտքային արժեթղթեր	207,592	–
Ընդամենը առևտրային արժեթղթեր	**207,592**	**–**

16. Առևտրային արժեթղթեր (շարունակություն)

Ստորև ներկայացվում են նշված արժեթղթերի անվանական տոկոսադրույքները և մարման ժամկետները.

	2015թ.		*2014թ.*	
	%	*Մարման ժամկետ*	*%*	*Մարման ժամկետ*
ՀՀ կառավարության կողմից թողարկված պարտքային արժեթղթեր	8.0-11.0	2017-2020	–	–

Առևտրային արժեթղթերը 310,177 հազ. դրամ իրական արժեքով (2014թ.՝ 202,516 հազ. դրամ) վաճառվել են երրորդ անձանց հետգնման պայմանագրերով: Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության մեջ այս արժեթղթերը վերադասակարգվել են որպես հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր (Ծան. 20):

17. Պահանջներ բանկերի նկատմամբ

հազար ՀՀ դրամ	*2015թ.*	*2014թ. (Վերահաշվարկված)*	*2013թ. (Վերահաշվարկված)*
ՀՀ ԿԲ-ում դեպոնացված միջոցներ	720,000	520,000	520,000
Բանկերին տրված վարկեր և ավանդներ	7,147,471	4,105,290	3,119
Հակադարձ հետգնման պայմանագրեր	–	842,390	1,040,365
Դեբիտորական պարտքեր վճարահաշվարկային ծառայությունների գծով	635,324	553,663	442,412
Այլ	645,902	894,877	506,725
Ընդամենը պահանջներ բանկերի նկատմամբ	**9,148,697**	**6,916,220**	**2,512,621**

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկերին տրված վարկերի և ավանդների մնացորդը կազմում է 7,147,471 հազ. դրամ, որից 91%-ը երկու գործընկերներից է (2014թ.՝ 4,105,177 հազ. դրամ (89%) երկու գործընկերներից, 2013թ.՝ 330,776 հազ. դրամ (88%) երկու գործընկերներից):

ՀՀ ԿԲ-ում դեպոնացված գումարը իրենից ներկայացնում է ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդ:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերի իրական արժեքը ներկայացված է ստորև.

	2015թ.		*2014թ. (Վերահաշվարկված)*		*2013թ. (Վերահաշվարկված)*	
հազար ՀՀ դրամ	*Գրավի իրական արժեք*	*Վարկի հաշվեկշռային արժեք*	*Գրավի իրական արժեք*	*Վարկի հաշվեկշռային արժեք*	*Գրավի իրական արժեք*	*Վարկի հաշվեկշռային արժեք*
ՀՀ կառավարության պարտատոմսեր	–	–	873,674	842,390	1,042,306	1,040,365
Ընդամենը հետգնման պայմանագրերով գրավադրված ակտիվներ	**–**	**–**	**873,674**	**842,390**	**1,042,306**	**1,040,365**

18. Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ

հազար ՀՀ դրամ	*2015թ.*	*2014թ. (Վերահաշ-վարկված)*	*2013թ. (Վերահաշ-վարկված)*
Վարկեր հաճախորդներին	77,667,081	86,089,192	74,068,467
Օվերդրաֆտ	8,927,382	11,361,113	9,341,628
Ֆակտորինգ	33,790	–	–
Ակրեդիտիվ	1,359	2,381	6,637
Դեբիտորական պարտքեր ֆինանսական վարձակալության գծով	341,346	408,627	170,629
	86,970,958	**97,861,313**	**83,587,361**
Հանած՝ վարկերի գծով արժեզրկման պահուստ	(4,025,331)	(4,477,268)	(3,257,518)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	**82,945,627**	**93,384,045**	**80,329,843**

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի տասը խոշոր վարկառուներին տրամադրված վարկերի կենտրոնացում 19,975,139 հազ. դրամ ընդհանուր գումարով (համախառն վարկային պորտֆելի 23%) (2014թ.՝ 21,533,450 հազ. դրամ կամ համախառն վարկային պորտֆելի 22%, 2013թ.՝ 18,925,171 հազ. դրամ կամ համախառն վարկային պորտֆելի 23%): Նշված վարկերի գծով արժեզրկումից պահուստները կազմում են 802,195 հազ. դրամ (2014թ.՝ 215,334 հազ. դրամ, 2013թ.՝ 1,575,601 հազ. դրամ):

Հաճախորդներին տրված վարկերը և փոխառությունները, ըստ տնտեսության ճյուղերի ունեն հետևյալ տեսքը.

հազար ՀՀ դրամ	*2015թ.*	*2014թ. (Վերահաշ-վարկված)*	*2013թ. (Վերահաշ-վարկված)*
Սպառողական վարկեր ֆիզիկական անձանց	29,546,709	31,643,619	27,027,398
Հիփոթեքային վարկեր	20,492,115	20,681,879	16,453,609
Առևտուր	9,263,987	11,363,683	8,538,926
Էներգետիկա	6,537,726	6,175,996	2,551,308
Այլ	4,778,838	5,905,634	4,852,008
Շինարարություն	4,503,695	9,210,701	9,691,524
Տրանսպորտ և կապ	4,395,824	5,019,507	7,500,383
Գյուղատնտեսություն , ներառյալ ֆիզիկական անձանց տրված վարկեր	4,053,981	2,626,474	2,212,206
Արդյունաբերություն	2,602,907	3,910,335	3,440,810
Ծառայությունների ոլորտ	795,176	1,323,485	1,319,189
	86,970,958	**97,861,313**	**83,587,361**
Հանած՝ վարկերի գծով արժեզրկման պահուստ	(4,025,331)	(4,477,268)	(3,257,518)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	**82,945,627**	**93,384,045**	**80,329,843**

18. Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ (շարունակություն)

Ստորև ներկայացված է վարկերի արժեզրկման պահուստի համաձայնեցումը՝ ըստ դասերի.

2015թ.

հազար ՀՀ դրամ	*Արդյունաբերություն*	*Էներգետիկա*	*Գյուղատնտեսություն (ներառյալ ֆիզիկական անձանց տրված վարկեր)*	*Շինարարություն*	*Առևտուր*	*Տրանսպորտ և կապ*	*Ծառայությունների ոլորտ*	*Սպառողական վարկեր ֆիզիկական անձանց*	*Հիփոթեքային վարկեր*	*Այլ*	*Ընդամենը*
2015թ. հունվարի 1-ի դրությամբ	**417,018**	**61,760**	**424,734**	**1,816,376**	**416,020**	**71,937**	**40,285**	**324,902**	**506,462**	**397,774**	**4,477,268**
Տարվա ծախս/ (հակադարձում)	75,186	(29,068)	250,601	451,528	143,696	93,275	(7,390)	1,157,604	428,358	679,159	**3,242,949**
Դուրսգրում	(11,983)	–	(315,987)	(1,757,490)	(198,077)	(27,647)	–	(1,200,262)	(604,143)	(1,333,567)	**(5,449,156)**
Վերականգնում	9,376	–	353,743	198	94,517	15,092	9,279	550,478	413,577	308,010	**1,754,270**
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**489,597**	**32,692**	**713,091**	**510,612**	**456,156**	**152,657**	**42,174**	**832,722**	**744,254**	**51,376**	**4,025,331**
Անհատական հիմունքներով արժեզրկում	468,026	–	672,789	484,570	369,426	139,783	37,834	112,821	519,175	28,439	**2,832,863**
Խմբային հիմունքներով արժեզրկում	21,571	32,692	40,302	26,042	86,730	12,874	4,340	719,901	225,079	22,937	**1,192,468**
	489,597	**32,692**	**713,091**	**510,612**	**456,156**	**152,657**	**42,174**	**832,722**	**744,254**	**51,376**	**4,025,331**
Անհատապես արժեզրկված վարկերի համախառն գումար (մինչև անհատական արժեզրկման պահուստով զտելը)	**591,318**	**–**	**1,069,098**	**1,105,175**	**1,103,773**	**430,444**	**228,850**	**336,273**	**1,860,820**	**339,614**	**7,065,365**

2014թ.

հազար ՀՀ դրամ	*Արդյունաբերություն*	*Էներգետիկա*	*Գյուղատնտեսություն (ներառյալ ֆիզիկական անձանց տրված վարկեր)*	*Շինարարություն*	*Առևտուր*	*Տրանսպորտ և կապ*	*Ծառայությունների ոլորտ*	*Սպառողական վարկեր ֆիզիկական անձանց*	*Հիփոթեքային վարկեր*	*Այլ*	*Ընդամենը*
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	**191,031**	**25,513**	**301,154**	**1,528,998**	**541,880**	**87,776**	**33,253**	**129,796**	**375,963**	**42,154**	**3,257,518**
Տարվա ծախս/ (հակադարձում)	235,522	36,247	479,309	437,698	(22,779)	(14,862)	(830)	413,498	115,497	(33,119)	**1,646,181**
Դուրսգրում	(10,982)	–	(410,631)	(150,320)	(709,192)	(20,148)	(8,777)	(344,117)	(255,874)	(635,164)	**(2,545,205)**
Վերականգնում	1,447	–	54,902		606,111	19,171	16,639	125,725	270,876	1,023,903	**2,118,774**
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**417,018**	**61,760**	**424,734**	**1,816,376**	**416,020**	**71,937**	**40,285**	**324,902**	**506,462**	**397,774**	**4,477,268**
Անհատական հիմունքներով արժեզրկում	383,857	–	404,184	1,751,415	308,031	25,874	27,659	9,243	308,064	352,345	**3,570,672**
Խմբային հիմունքներով արժեզրկում	33,161	61,760	20,550	64,961	107,989	46,063	12,626	315,659	198,398	45,429	**906,596**
	417,018	**61,760**	**424,734**	**1,816,376**	**416,020**	**71,937**	**40,285**	**324,902**	**506,462**	**397,774**	**4,477,268**
Անհատապես արժեզրկված վարկերի համախառն գումար (մինչև անհատական արժեզրկման պահուստով զտելը)	**594,235**	**–**	**571,391**	**2,714,622**	**740,777**	**237,229**	**60,887**	**54,815**	**864,976**	**866,762**	**6,705,694**

18. Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ (շարունակություն)

Վարկերը և դրանց գծով ձևավորված արժեզրկման պահուստները դուրս են գրվում, երբ չկա վարկերի վերականգնման իրատեսական հեռանկար և գրավն ամբողջությամբ իրացվել է կամ փոխանցվել է Խմբին:

Տրված վարկերի և փոխառությունների վերլուծությունը ըստ հաճախորդների հետևյալն է.

հազար ՀՀ դրամ	*2015թ.*	*2014թ. (Վերահաշ-վարկված)*	*2013թ. (Վերահաշ-վարկված)*
Ֆիզիկական անձինք	50,341,373	53,460,989	44,140,635
Մասնավոր ձեռնարկություններ	29,886,465	36,699,420	34,049,979
Պետական ձեռնարկություններ	4,261,584	4,297,768	1,740,763
Անհատ ձեռնարկատերեր	2,471,967	3,337,602	3,516,316
Ոչ առևտրային կազմակերպություններ	9,569	65,534	139,668
	86,970,958	**97,861,313**	**83,587,361**
Հանած՝ վարկերի գծով արժեզրկման պահուստ	(4,025,331)	(4,477,268)	(3,257,518)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	**82,945,627**	**93,384,045**	**80,329,843**

Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերը ներառում են հետևյալ հոդվածները.

հազար ՀՀ դրամ	*2015թ.*	*2014թ. (Վերահաշ-վարկված)*	*2013թ. (Վերահաշ-վարկված)*
Հիփոթեքային վարկեր	20,492,115	20,681,879	16,453,609
Վարկային քարտեր	12,895,093	15,691,502	14,128,198
Ոսկու վարկեր	8,248,570	6,563,742	5,570,919
Սպառողական վարկեր	6,373,842	8,271,456	6,087,633
Ավտո վարկեր	542,277	916,392	659,628
Գյուղատնտեսական վարկեր	302,611	639,453	659,628
Այլ	1,486,865	696,565	581,020
Ընդամենը ֆիզիկական անձանց տրված համախառն վարկեր և փոխառություններ	**50,341,373**	**53,460,989**	**44,140,635**

Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերը ներառում են.

հազար ՀՀ դրամ	*2015թ.*	*2014թ.*
Ֆինանսական վարձակալության գծով համախառն ներդրումներ		
Մինչև 1 տարի	3,859	10,637
1-5 տարի	394,117	483,732
	397,976	**494,369**
Ապագա ժամանակաշրջանների չվաստակած ֆինանսական եկամուտ ֆինանսական վարձակալության գծով	(56,630)	(85,742)
Զուտ ներդրումներ ֆինանսական վարձակալությունում նախքան արժեզրկման գծով պահուստը	**341,346**	**408,627**
Արժեզրկման գծով պահուստ	(135,519)	(4,086)
Զուտ ներդրումներ ֆինանսական վարձակալությունում	**205,827**	**404,541**

Հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների գնահատված իրական արժեքը 2015թ. դեկտեմբերի 31-ի և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բացահայտված են Ծանոթագրություն 34-ում:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների վերլուծությունը ըստ մինչև մարումը մնացած ժամկետների բացահայտված է Ծանոթագրություն 37-ում:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների վերլուծությունը ըստ վարկային, արտարժույթի, իրացվելիության և տոկոսային ռիսկի բացահայտված են Ծանոթագրություն 38-ում: Կապակցված անձանց վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է Ծանոթագրություն 33-ում:

19. Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր

հազար ՀՀ դրամ	*2015թ.*	*2014թ.*
Պետական պարտատոմսեր	3,514,646	1,047,935
ՏՀՋԿ երկրների բաժնեմասային արժեթղթեր	612,771	516,821
ՀՀ կառավարության արժեթղթեր	389,861	97,161
Ներդրումներ ֆոնդերում	243,794	223,408
ՀՀ բաժնեմասային արժեթղթեր	57,794	57,793
Ընդամենը վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր	**4,818,866**	**1,943,118**

Բոլոր պարտքային արժեթղթերը ունեն հաստատուն արժեկտրոններ:

ՀՀ բաժնային արժեթղթերը հաշվառվում են ինքնարժեքով, քանի որ իրական արժեքը չի կարող արժանահավատորեն գնահատվել: Այս ներդրումների համար գնանշվող շուկա չկա, և Խումբը նախատեսում է դրանք պահել երկար ժամկետով:

Չգնանշվող վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերը չափվում են իրական արժեքով գնահատման մեթոդների միջոցով՝ կիրառելով տվյալ պահին գործող շուկայական տոկոսադրույքները ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը զեղչելու նպատակով:

Վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերը ըստ արդյունավետ եկամտաբերության և մարման ժամկետի ներառում է.

	2015թ.		*2014թ.*	
հազար ՀՀ դրամ	*%*	*Մարման ժամկետ*	*%*	*Մարման ժամկետ*
Պետական պարտատոմսեր	6.15-16.9	2016-2032	9.19-14.36	2016-2032
ՀՀ ոչ պետական պարտատոմսեր	8.77-15.85	2017-2019	12.92	2019

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթերում ներառված են ՀՀ պետական պարտատոմսեր, որոնք գրավադրված են հետգնման պայմանագրերով ՀՀ ԿԲ-ում 5,174,044 հազ. դրամ (2014թ.՝ 5,718,387 հազ. դրամ)՝ գործընկերոջ կողմից վաճառելու կամ կրկին վերագրավադրելու իրավունքով: Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում այս արժեթղթերը վերադասակարգվել են որպես հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր (Ծան. 20):

20. Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր

հազար ՀՀ դրամ	*2015թ.*	*2014թ. (Վերահաշվարկված)*	*2013թ. (Վերահաշվարկված)*
Առևտրային արժեթղթեր (Ծան. 16)	310,177	202,516	–
Ներդրումային արժեթղթեր (Ծան. 19)	5,174,044	5,718,387	–
Ընդամենը	**5,484,221**	**5,920,903**	**–**

Գրավադրված արժեթղթերը այն ֆինանսական ակտիվներն են, որոնք գրավադրված են հետգնման պայմանագրերով ՀՀ ԿԲ-ում՝ գործընկերոջ կողմից վաճառելու և կրկին վերագրավադրելու իրավունքով: Բոլոր պայմանագրերը ունեն մինչև մեկ ամիս ժամկետայնություն:

Այս գործարքները կատարվել են ստանդարտ վարկավորման, արժեթղթերի փոխառության և վարկավորման սովորական պայմանների ներքո:

21. Հիմնական միջոցներ

հազար ՀՀ դրամ	*Հող և շենքեր*	*Սարքավորումներ*	*Փոխադրամիջոցներ*	*Համակարգչային տեխնիկա*	*Այլ հիմնական միջոցներ*	*Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում*	*Ընդամենը*
Վերագնահատված կամ սկզբնական արժեք							
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	**5,626,000**	**610,405**	**222,646**	**2,289,170**	**607,888**	**809,196**	**10,165,305**
Ավելացումներ	200,965	79,724	–	177,927	47,785	107,280	**613,681**
Օտարում	–	(8,971)	(17,826)	(4,965)	(12,305)	(5,020)	**(49,087)**
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**5,826,965**	**681,158**	**204,820**	**2,462,132**	**643,368**	**911,456**	**10,729,899**
Ավելացումներ	243,744	51,727	3,537	195,007	77,152	123,161	**694,328**
Օտարում	–	(91)	–	(337)	(1,256)	–	**(1,684)**
Վերագնահատման ազդեցություն	(787,305)	–	–	–	–	–	**(787,305)**
Հողվածների միջև տեղափոխություն	78,143	–	–	–	–	(78,143)	**–**
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**5,361,547**	**732,794**	**208,357**	**2,656,802**	**719,264**	**956,474**	**10,635,238**
Կուտակված մաշվածություն							
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	**–**	**438,794**	**134,276**	**1,575,395**	**442,166**	**217,516**	**2,808,147**
Մաշվածություն	128,895	65,444	26,997	281,496	54,031	113,938	**670,801**
Օտարում	–	(8,964)	(15,453)	(4,965)	(12,291)	(4,783)	**(46,456)**
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**128,895**	**495,274**	**145,820**	**1,851,926**	**483,906**	**326,671**	**3,432,492**
Մաշվածություն	137,750	71,953	23,755	248,503	59,022	128,783	**669,766**
Օտարում	–	(46)	–	(326)	(378)	–	**(750)**
Վերագնահատման ազդեցություն	(78,730)	–	–	–	–	–	**(78,730)**
Հողվածների միջև տեղափոխություն	22,750	–	–	–	1,999	(24,749)	**–**
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**210,665**	**567,181**	**169,575**	**2,100,103**	**544,549**	**430,705**	**4,022,778**
Հաշվեկշռային արժեք							
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	**5,626,000**	**171,611**	**88,370**	**713,775**	**165,722**	**591,680**	**7,357,158**
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**5,698,070**	**185,884**	**59,000**	**610,206**	**159,462**	**584,785**	**7,297,407**
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**5,150,882**	**165,613**	**38,782**	**556,699**	**174,715**	**525,769**	**6,612,460**

Ակտիվների վերագնահատում

Խմբի սեփականությունը հանդիսացող շենքերի և հողի վերագնահատումը կատարվել է 2015թ. անկախ գնահատող կազմակերպության կողմից: Ղեկավարությունը հիմք է ընդունել անկախ գնահատողի կողմից ներկայացված արդյունքները շենքերի և հողի իրական արժեքի գնահատման ժամանակ:

Եթե հիմնական միջոցները ներկայացվեին սկզբնական արժեքի մեթոդի կիրառմամբ, ապա հաշվեկշռային արժեքը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմեր 995,456 հազ. դրամ (2014թ.՝ 758,428 հազ. դրամ):

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների կազմում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվները կազմում են 1,941,920 հազ. դրամ (2014թ.՝ 1,884,464 հազ. դրամ):

21. Հիմնական միջոցներ (շարունակություն)

Տեղադրման փուլում գտնվող հիմնական միջոցներ

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների կազմում ներառված տեղադրման փուլում գտնվող ակտիվները կազմում են 91,843 հազ. դրամ (2014թ.՝ 125,292 հազ. դրամ):

Հիմնական միջոցների սահմանափակումներ

2015 և 2014թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չի ունեցել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա հիմնական միջոցներ:

22. Ոչ նյութական ակտիվներ

հազար ՀՀ դրամ	*Արտոնագրեր*	*Համակարգչային ծրագրեր*	*Այլ*	*Ընդամենը*
Սկզբնական արժեք				
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	**485,396**	**42,514**	**57,494**	**585,404**
Ավելացումներ	131,048	9,120	9,772	**149,940**
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**616,444**	**51,634**	**67,266**	**735,344**
Ավելացումներ	52,828	8,732	49	**61,609**
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**669,272**	**60,366**	**67,315**	**796,953**
Կուտակված մաշվածություն				
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	**347,831**	**29,314**	**16,376**	**393,521**
Ամորտիզացիա	77,073	3,300	8,160	**88,533**
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**424,904**	**32,614**	**24,536**	**482,054**
Ամորտիզացիա	114,476	4,855	8,560	**127,891**
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**539,380**	**37,469**	**33,096**	**609,945**
Հաշվեկշռային արժեք				
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	**137,565**	**13,200**	**41,118**	**191,883**
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**191,540**	**19,020**	**42,730**	**253,290**
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**129,892**	**22,897**	**34,219**	**187,008**

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ոչ նյութական ակտիվների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ոչ նյութական ակտիվները կազմում են 349,712 հազ. դրամ (2014թ.՝ 296,502 հազ. դրամ):

2015 և 2014թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չի ունեցել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա ոչ նյութական ակտիվներ:

23. Բռնագանձված ակտիվներ

Խմբի կողմից տրամադրված վարկերի ապահովվածություն հանդիսացող գրավների տնօրինման արդյունքում ձեռք բերված գրավները ներկայացված են ստորև.

հազար ՀՀ դրամ	*2015թ.*	*2014թ.*
Անշարժ գույք	2,217,598	1,898,184
Փոխադրամիջոցներ	13,400	15,000
Այլ	57,514	416,317
Ընդամենը	**2,288,512**	**2,329,501**

23. Բռնագանձված ակտիվներ (շարունակություն)

24. Այլ ակտիվներ

	2015թ.	*2014թ.*
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	349,989	363,865
Ընդամենը զուտ այլ ֆինանսական ակտիվներ	304,786	315,548
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	744,554	645,907
Ընդամենը այլ ակտիվներ	1,049,340	961,455

	Ընդամենը
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	80,847
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	48,317
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	45,203

25. Ստորադաս փոխառություններ

	2015թ.	*2014թ.*
	7,430,709	8,272,556

26. Պարտավորություններ բանկերի նկատմամբ

հազար ՀՀ դրամ	*2015թ.*	*2014թ. (Վերահաշվարկված)*	*2013թ. (Վերահաշվարկված)*
Հետգնման պայմանագրեր ՀՀ ԿԲ-ի հետ	5,302,646	6,507,102	–
Բանկերից ստացված վարկեր	1,800,961	1,425,783	–
Այլ բանկերի թղթակցային հաշիվներ	235,850	204,385	146,835
Այլ պարտավորություններ	91,818	57,554	4,711
Ընդամենը պարտավորություններ բանկերի նկատմամբ	**7,431,275**	**8,194,824**	**151,546**

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մեկ գործընկերոջ նկատմամբ պարտավորությունը կազմում է բանկերից ստացված վարկերի ընդհանուր գումարի 100%-ը (2014թ.՝ 100%):

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ բանկերի թղթակցային հաշիվների 57%-ը կենտրոնացված է երկու գործընկերների մոտ (2014թ.՝ 53%):

27. Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

հազար ՀՀ դրամ	*2015թ.*	*2014թ. (Վերահաշվարկված)*	*2013թ. (Վերահաշվարկված)*
Իրավաբանական անձինք			
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	32,545,909	23,791,773	20,445,157
Ժամկետային ավանդներ	16,676,273	19,685,138	18,918,699
	49,222,182	**43,476,911**	**39,363,856**
Ֆիզիկական անձինք			
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	18,584,272	11,584,161	9,899,118
Ժամկետային ավանդներ	43,623,681	41,278,696	35,663,790
	62,207,953	**52,862,857**	**45,562,908**
Ընդամենը պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	**111,430,135**	**96,339,768**	**84,926,764**

Հաճախորդներից ներգրավված ավանդները հաստատուն տոկոսադրույքով են:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդների նկատմամբ պարտավորություններում ներառված են 8,059,007 հազ. դրամ գումարով ավանդներ, որոնք հանդիսանում են ապահովածություն տրամադրված վարկերի, ակրեդիտիվների, երաշխիքների և այլ պայմանական պարտավորությունների համար (2014թ.՝ 9,402,378 հազ. դրամ): Այդ ավանդների իրական արժեքը մոտավորապես համարժեք է իրենց հաշվեկշռային արժեքին:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ամենամեծ տասը հաճախորդների միջոցների ընդհանուր գումարը կազմում է 52,933,661 հազ. դրամ (2014թ.՝ 44,385,328 հազ. դրամ) կամ հաճախորդներից ներգրավված միջոցների ընդհանուր գումարի 47.5% (2014թ.՝ 46.1%):

28. Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ

	2015թ.			2014թ.		
հազար ՀՀ դրամ	*Պայմանական գումար*	*Ակտիվների իրական արժեք*	*Պարտավ. իրական արժեք*	*Պայմանական գումար*	*Ակտիվների իրական արժեք*	*Պարտավ. իրական արժեք*
Վաճառքի համար պահվող ածանցյալ գործիքներ						
Արտարժութային սվոփ	4,160,250	–	14,495	3,251,100	–	180,645
Ընդամենը ածանցյալ պարտավորություններ	**4,160,250**	**–**	**14,495**	**3,251,100**	**–**	**180,645**

29. Այլ պարտավորություններ

հազար ՀՀ դրամ	*2015թ.*	*2014թ.*
Վճարվելիք գումարներ	181,430	165,251
Պարտավորություն անձնակազմի նկատմամբ	163,489	150,663
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	**344,919**	**315,914**
Հարկային պարտավորությունների, տույժերի և տուգանքների գծով պահուստ	253,353	–
Պարտավորություններ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	120,504	147,278
Ակտիվներին վերաբերող շնորհներ	30,856	33,278
Այլ	6,046	6,380
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	**410,759**	**186,936**
Ընդամենը այլ պարտավորություններ	**755,678**	**502,850**

Ակտիվներին վերաբերվող շնորհներ

հազար ՀՀ դրամ	*2015թ.*	*2014թ.*
Հունվարի 1-ի դրությամբ	33,278	35,700
Եկամտի ճանաչում (Ծան. 10)	(2,422)	(2,422)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**30,856**	**33,278**

30. Այլ փոխառու միջոցներ

հազար ՀՀ դրամ	*2015թ.*	*2014թ. (Վերահաշվարկված)*	*2013թ. (Վերահաշվարկված)*
ՀՀ ԿԲ-ից ներգրավված վարկեր	4,031,622	3,718,236	2,878,619
Այլ ֆինանսական հաստատություններից ներգրավված վարկեր	3,339,162	2,972,022	2,100,711
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված վարկեր	2,443,824	2,492,124	2,212,246
ՀՀ կառավարությունից ներգրավված վարկեր	80,609	185,234	639,484
Ընդամենը այլ փոխառու միջոցներ	**9,895,217**	**9,367,616**	**7,831,060**

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ նկատմամբ պարտավորությունները ներառում են Գերմանա-Հայկական հիմնադրամի կողմից Փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման, սպառողական և այլ նպատակով վարկերի տրամադրման համար ներգրավված միջոցների:

Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված վարկերը ներառում են Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկից ստացված վարկերը:

30. Այլ փոխառու միջոցներ (շարունակություն)

Այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված վարկերը ներառում են Առաջին Հիփոթեքային Ընկերությունից և Բնակարան երիտասարդներին ՈՒՀՎԿ-ից ներգրավված վարկերը:

Սահմանափակումների

Խումբը խախտել է Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (ՎԶԵԲ) հետ կնքված վարկային պայմանագրի որոշակի պարտադիր պայմաններ: Խումբը ՎԶԵԲ-ից չի ստացել պարտքի չվճարված մասն անմիջապես մարման ենթակա հայտարարելու իրավունքից հրաժարման հաստատում, համապատասխանաբար ՎԶԵԲ-ից ստացված վարկը 2,443,824 հազ. դրամ գումարի չափով (2014թ.՝ 2,492,124 հազ. դրամ), դասակարգվել է «Ցպահանջ կամ մինչև 1 ամիս» խմբում՝ իրացվելիության ռիսկի ծանոթագրությունում (Ծանոթագրություն 37), և «Ցպահանջ կամ մինչև 1 ամիս» խմբում՝ իրացվելիության ռիսկի վերլուծությունում (Ծանոթագրություն 38-ում):

31. Կապիտալ

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի հայտարարված և ամբողջությամբ վճարված կանոնադրական կապիտալը կազմում է 7,002,033 հազ. դրամ (2014թ.՝ 7,002,033 հազ. դրամ):

Համաձայն Բանկի կանոնադրության, կանոնադրական կապիտալը կազմված է թվով 23,340 սովորական բաժնետոմսերից և 333 արտոնյալ բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը համապատասխանաբար 300,000 դրամ և 100 դրամ անվանական արժեքներով:

2015թ. դեկտեմբերի 31-ի և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են՝

	2015թ.		*2014թ.*	
հազար ՀՀ դրամ	*Վճարված կանոնադրական կապիտալ*	*Բաժնեմասը վճարված կապիտալում*	*Վճարված կանոնադրական կապիտալ*	*Բաժնեմասը վճարված կապիտալում*
«Ռվանսդ գլոբալ ինվեստմենտ» ՍՊԸ	6,651,900	95	6,651,900	95
«Ռվանսդ գլոբալ ինվեստմենտ» ՍՊԸ (արտոնյալ բաժնետոմսեր)	33	–	33	–
Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցի	350,100	5	350,100	5
	7,002,033	**100**	**7,002,033**	**100**

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերը իրավունք ունեն ստանալու շահաբաժին և մեկ բաժնետոմսի դիմաց մեկ ձայնի իրավունք Բանկի տարեկան և ընդհանուր ժողովներում:

Բանկի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն իրավասու մարմնի կողմից շահաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման դեպքում ստանալ տարեկան հաստատագրված շահաբաժին, իրենց պատկանող արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքի 20%-ի չափով:

Համաձայն 2015թ. հունիսի 29-ին տեղի ունեցած Բաժնետերերի ժողովի որոշմանը՝ Բանկի կողմից հայտարարված և վճարված շահաբաժինները կազմել են 562,242 հազ. դրամ սովորական բաժնետոմսերի (2014թ.՝ 286,014 հազ. դրամ) և 6 հազ. դրամ արտոնյալ բաժնետոմսերի համար (2014թ.՝ 6 հազ. դրամ): Մեկ սովորական բաժնետոմսի գծով շահաբաժինները կազմել են 24,089 դրամ (2014թ.՝ 17,655 դրամ), և մեկ արտոնյալ բաժնետոմսի գծով շահաբաժինները՝ 19.8 դրամ (2014թ.՝ 19.8 դրամ):

Բանկի կանոնադրական կապիտալը ձևավորվել է բաժնետերերի դրամական ներդրումներից, ընդ որում, բաժնետերերն ունեն շահաբաժիններ ստանալու և կապիտալը ՀՀ դրամով տեղաբաշխելու իրավունք:

Բանկի բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են չբաշխված շահույթով՝ հաշվարկված համաձայն ՀՀ օրենսդրության: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով: Պահուստը ստեղծվել է համաձայն Բանկի կանոնադրության, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ պակաս, քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված կանոնադրական կապիտալի 20%-ի չափով:

32. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ

Իրավական և հարկային միջավայր

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և ենթարկվում են տարբեր մեկնաբանությունների հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել էական տույժեր, տուգանքներ և տոկոսագումարներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա:

Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները: Ղեկավարությունը համոզված է, որ Խումբն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Խմբին ներկայացվող դատական հայցերի առումով Խմբի ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Խմբի ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ, երաշխիքներ և այլ ֆինանսական պայմանագրեր

Իր գործունեության ընթացքում Խումբը տրամադրում է իր հաճախորդներին հետհաշվեկշռային ռիսկ պարունակող ֆինանսական գործիքներ: Նշված ֆինանսական գործիքները, որոնք ունեն պարտքային ռիսկի տարբեր մակարդակներ, չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ անվանական կամ պայմանագրային գումարները հետևյալն են՝

հազար ՀՀ դրամ	***2015թ.***	***2014թ.***
Չօգտագործված վարկային գծեր	5,518,235	5,449,216
Ակրեդիտիվներ	–	466,572
Երաշխիքներ	1,691,965	1,615,421
	7,210,200	**7,531,209**
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորությունների գծով պահուստ	–	–
Ընդամենը պայմանական և պայմանագրային պարտավորություններ	**7,210,200**	**7,531,209**

Վարկային պարտավորությունների, երաշխիքների և այլ ֆինանսական պայմանագրերի գծով պարտքային ռիսկի առավելագույն չափը լավագույնս ներկայացված է այս պարտավորությունների և պայմանական պարտավորությունների ընդհանուր գումարում:

32. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ (շարունակություն)

Գործառնական վարձակալություն՝ Խումբը որպես վարձակալ

Խումբն իր գործունեությունն ապահովելու նպատակով վարձակալում է շենք և տարածքներ: Չեղյալ չհայտարարվող գործառնական վարձակալության գծով վճարվելիք ապագա ընդհանուր նվազագույն վարձավճարների կառուցվածքը հետևյալն է.

հազար ՀՀ դրամ	***2015թ.***	***2014թ.***
Մինչև 1 տարի	488,686	429,956
1-5 տարի	1,341,220	1,400,221
5 տարուց ավելի	875,027	752,111
Ընդամենը գործառնական վարձակալության գծով պարտավորություններ	**2,704,933**	**2,582,288**

Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն իրականացրել է ավտոտրանսպորտային միջոցների (նաև ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն), շենքերի և շինությունների, շահագործվող գույքի, բանկին պատկանող բանկոմատների ապահովագրություն, ինչպես նաև Բանկային ռիսկերի համապարփակ, էլեկտրոնային և համակարգչային հանցագործության և տնօրենների և ղեկավարների պատասխանատվության ապահովագրություն: Քանի դեռ Խումբը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

33. Կապակցված կողմերի հետ գործառնություններ

ՀՀՄՍ 24 *«Կապակցված կողմերի բացահայտումներ»* ստանդարտի համաձայն կողմերը համարվում են կապակցված, եթե կողմերից մեկը հնարավորություն ունի վերահսկել կամ նշանակալի ձևով ազդել մյուս կողմի գործառնական և ֆինանսական որոշումների վրա: Ներկայացվող համախմբված ֆինանսական հաշվետվությունների առումով Խմբի կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները: Խմբի վերջնական վերահսկող է հանդիսանում արգենտինացի գործարար Է. Էռնեկյանը:

33. Կապակցված կողմերի հետ գործառնություններ (շարունակություն)

Խումբն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են վարկերը, ավանդները և այլն: Գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և տարվա եկամուտը և ծախսը հետևյալն են.

	2015թ.		*2014թ.*	
հազար ՀՀ դրամ	*Բաժնետերեր և կապակցված կողմեր*	*Ղեկավար անձնակազմ և կապակցված կողմեր*	*Բաժնետերեր և կապակցված կողմեր*	*Ղեկավար անձնակազմ և կապակցված կողմեր*
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն				
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ				
Վարկերի մնացորդը հունվարի 1-ի դրությամբ, համախառն	4,183,084	230,850	3,913,756	216,956
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	5,826,359	514,541	3,607,362	565,533
Տարվա ընթացքում մարված վարկեր	(5,845,657)	(501,361)	(3,338,034)	(551,639)
Վարկերի մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ, համախառն	**4,163,786**	**244,030**	**4,183,084**	**230,850**
Հանած՝ վարկերի գծով արժեզրկման պահուստ	(41,638)	(2,440)	(41,831)	(2,308)
Վարկերի մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**4,122,148**	**241,590**	**4,141,253**	**228,542**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ				
Ավանդների մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	20,432,445	147,256	15,251,822	108,463
Տարվա ընթացքում ստացված ավանդներ	713,153,502	1,915,324	618,303,845	1,657,822
Տարվա ընթացքում վճարված ավանդներ	(705,457,360)	(1,962,353)	(613,123,222)	(1,619,029)
Ավանդների մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**28,128,587**	**100,227**	**20,432,445**	**147,256**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ –Ստորադաս փոխառություն				
Ստորադաս փոխառության մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	7,087,003	–	6,225,413	–
Տարվա ընթացքում ստացված ստորադաս փոխառություններ	–	–	–	–
Տարվա ընթացքում մարված ստորադաս փոխառություններ	–	–	–	–
Արտարժույթի վերագնահատումից զուտ արդյունք	343,706	–	861,590	–
Ստորադաս փոխառության մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**7,430,709**	**–**	**7,087,003**	**–**
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն				
Տոկոսային եկամուտ	384,239	17,203	366,698	17,434
Միջնորդավճարների գծով եկամուտ	25,123	478	20,322	415
Այլ եկամուտ	90,474	865	85,519	471
Տոկոսային ծախս	(1,571,553)	(5,999)	(1,400,256)	(6,632)
Արժեզրկումից կորուստներ	193	(132)	(1,030)	(119)
Այլ գործառնական ծախսեր	(84,783)	(217)	(66,138)	(2,051)

Տնօրեններին և ղեկավար անձնակազմի այլ անդամներին (և ընտանիքի անդամներին) տարվա ընթացքում տրամադրված վարկերը ունեն 1-ից 20 տարի մարման ժամկետ և դրանց տոկոսադրույքը կազմում է 5-24% (2014թ.՝ 5-24%, 1-ից 20 տարի): Տնօրեններին տրամադրված վարկերը ապահովված են ոսկով, անշարժ գույքով, դրամական միջոցներով և այլ ակտիվներով:

33. Կապակցված կողմերի հետ գործառնություններ (շարունակություն)

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

հազար ՀՀ դրամ	***2015թ.***	***2014թ.***
Աշխատավարձ և այլ կարճաժամկետ վճարումներ	381,303	368,062
Ընդամենը առանցքային կառավարչական անձնակազմի փոխհատուցում	**381,303**	**368,062**

34. Իրական արժեքի չափում

Խմբի Խորհուրդը սահմանում է ինչպես իրական արժեքի պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, ինչպես օրինակ չգնանշվող առևտրային և վաճառքի համար մատչելի արժեթղթերի համար, չգնանշվող ածանցյալ ֆինանսական գործիքների համար, այնպես էլ իրական արժեքի ոչ պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, ինչպես օրինակ վաճառքի համար պահվող ակտիվների համար:

Անկախ գնահատողները ներգրավվում են նշանակալի ակտիվների, ինչպես օրինակ՝ անշարժ գույքի և բռնագանձված գույքի գնահատման համար: Անկախ գնահատողների ընդգրկումը յուրաքանչյուր տարի որոշվում է Խմբի Խորհրդի կողմից:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին Խմբի ղեկավարությունը վերլուծում է ակտիվների և պարտավորությունների արժեքների փոփոխությունները, որոնք պետք է վերագնահատվեն համաձայն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության: Այս վերլուծությունների համար ճշտվում են հիմնական տվյալները, որոնք կիրառվել են նախորդ գնահատման ժամանակ՝ համադրելով գնահատման հաշվարկի տեղեկատվությունը պայմանագրերի և այլ համապատասխան փաստաթղթերի հետ: Ղեկավարությունը Խմբի անկախ գնահատողների հետ միասին համեմատում է յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության իրական արժեքի յուրաքանչյուր փոփոխությունը համապատասխան արտաքին աղբյուրների հետ, որոշելու համար տվյալ փոփոխության հիմնավորված լինելը:

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում իրական արժեքով չափվող ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ներկայացված են ստորև: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

- Մակարդակ 1 – նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված):
- Մակարդակ 2 – Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):
- Մակարդակ 3 – ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

34. Իրական արժեքի չափում (շարունակություն)

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրական արժեքով և վերլուծում է դրանք ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների, որում իրական արժեքի չափումը դասակարգված է.

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
հազար ՀՀ դրամ	***Մակարդակ 1***	***Մակարդակ 3***	***Ընդամենը իրական արժեք***	***Ընդամենը հաշվեկշռային արժեք***
Ֆինանսական ակտիվներ				
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	–	80,922,222	80,922,222	82,945,627
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	46,029,188	–	46,029,188	46,029,188
Պահանջներ բանկերի նկատմամբ	–	9,148,697	9,148,697	9,148,697
Այլ ֆինանսական ակտիվներ	–	304,786	304,786	304,786
Ֆինանսական պարտավորություններ				
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	–	111,430,135	111,430,135	111,430,135
Այլ փոխառու միջոցներ	–	9,895,217	9,895,217	9,895,217
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	–	7,431,275	7,431,275	7,431,275
Ստորադաս փոխառություններ	–	7,430,709	7,430,709	7,430,709
Այլ ֆինանսական պարտավորություններ	–	344,919	344,919	344,919

	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
հազար ՀՀ դրամ	***Մակարդակ 1***	***Մակարդակ 3***	***Ընդամենը իրական արժեք***	***Ընդամենը հաշվեկշռային արժեք***
Ֆինանսական ակտիվներ				
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	–	91,277,743	91,277,743	93,384,045
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	27,841,421	–	27,841,421	27,841,421
Պահանջներ բանկերի նկատմամբ	–	6,916,220	6,916,220	6,916,220
Այլ ֆինանսական ակտիվներ	–	315,548	315,548	315,548
Ֆինանսական պարտավորություններ				
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	–	96,339,768	96,339,768	96,339,768
Այլ փոխառու միջոցներ	–	9,367,616	9,367,616	9,367,616
Ստորադաս փոխառություն	–	8,272,556	8,272,556	8,272,556
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	–	8,194,824	8,194,824	8,194,824
Այլ ֆինանսական պարտավորություններ	–	315,914	315,914	315,914

34. Իրական արժեքի չափում (շարունակություն)

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ (շարունակություն)

Պահանջներ և պարտավորություններ բանկերի նկատմամբ

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից ելնելով և զեղչվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ

Այն միջոցների գնահատված իրական արժեքները, որոնք ունեն ֆիքսված տոկոսադրույք, սահմանվում են՝ ելնելով ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նման պարտքային ռիսկ և մարման ժամկետ ունեցող գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով: Կիրառվելիք տոկոսադրույքները կախված են վարկառուի վարկային ռիսկից և տատանվում են 5% մինչև 24% տարեկան (2014թ.՝ 5% մինչև 24% տարեկան):

Արժեզրկված վարկերի իրական արժեքը հաշվարկվում է գրավի առարկայի վաճառքից ակնկալվող դրամական հոսքերի հիման վրա: Գրավի առարկայի արժեքը հիմնված է անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գույքի գնահատողի իրականացրած գնահատումների վրա:

Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

Հաճախորդների ավանդների իրական արժեքը գնահատվում է՝ օգտագործելով զեղչված դրամական հոսքերի մեթոդը՝ կիրառելով նմանատիպ մարման ժամկետ ունեցող ավանդների համար առաջարկվող դրույքաչափերը: Ցպահանջ վճարվելիք ավանդների իրական արժեքը հաշվետու ամսաթվին վճարվելիք գումարն է:

Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
հազար ՀՀ դրամ	***Մակարդակ 2***	***Ընդամենը***
Ֆինանսական ակտիվներ		
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	5,484,221	**5,484,221**
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	4,761,072	**4,761,072**
Առևտրային արժեթղթեր	207,592	**207,592**
Ընդամենը	**10,452,885**	**10,452,885**
Ֆինանսական պարտավորություններ		
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	14,495	**14,495**
Ընդամենը	**14,495**	**14,495**
Զուտ իրական արժեք	**10,438,390**	**10,438,390**

34. Իրական արժեքի չափում (շարունակություն)

Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ (շարունակություն)

	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
հազար ՀՀ դրամ	***Մակարդակ 2***	***Ընդամենը***
Ֆինանսական ակտիվներ		
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	5,920,903	**5,920,903**
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	1,885,325	**1,885,325**
Ընդամենը	**7,806,228**	**7,806,228**
Ֆինանսական պարտավորություններ		
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	180,645	**180,645**
Ընդամենը	**180,645**	**180,645**
Զուտ իրական արժեք	**7,625,583**	**7,625,583**

Իրական արժեքի չափման մեթոդները և գնահատման մեխանիզմները չեն փոփոխվել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատությամբ:

Չգնանշվող ՀՀ բաժնետոմսեր

Բանկի ներդրումների իրական արժեքը ՀՀ չգնանշվող բաժնետոմսերում չի կարող չափվել և, հետևաբար, դուրս է մնում այս բացահայտումից: Այս ներդրումների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար տե՛ս Ծան. 19-ը:

Ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափում

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
հազար ՀՀ դրամ	***Մակարդակ 3***	***Ընդամենը***
Ոչ ֆինանսական ակտիվների		
Հող և շենքեր	5,150,882	**5,150,882**
Ընդամենը	**5,150,882**	**5,150,882**

	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
հազար ՀՀ դրամ	***Մակարդակ 3***	***Ընդամենը***
Ոչ ֆինանսական ակտիվների		
Հող և շենքեր	5,698,070	**5,698,070**
Ընդամենը	**5,698,070**	**5,698,070**

34. Իրական արժեքի չափում (շարունակություն)

Ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափում (շարունակություն)

Իրական արժեքի չափումը Մակարդակ 3-ում

3-րդ մակարդակում դասակարգված Խմբի ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատման մեխանիզմների օգտագործումը հիմնված է այն էական ելակետային տվյալների վրա, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայի տվյալների վրա: Այս մակարդակում ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները շարժը կարելի է համաձայնեցնել հետևյալ կերպ.

հազար ՀՀ դրամ	*Հող և շենքեր*	*Ընդամենը*
Ոչ ֆինանսական ակտիվներ		
2015 հունվարի 1-ի դրությամբ	**5,826,965**	**5,826,965**
Ձեռքբերումներ	243,744	**243,744**
Այլ համապարփակ եկամուտում ճանաչված եկամուտ/վնաս	(787,305)	**(787,305)**
Հիմնական միջոցների հոդվածների միջև տեղափոխություն	78,143	**78,143**
Կուտակված մաշվածություն	(210,665)	**(210,665)**
Զուտ իրական արժեքը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**5,150,882**	**5,150,882**

հազար ՀՀ դրամ	*Հող և շենքեր*	*Ընդամենը*
Ոչ ֆինանսական ակտիվներ		
2014 հունվարի 1-ի դրությամբ	**5,626,000**	**5,626,000**
Ձեռքբերումներ	200,965	**200,965**
Կուտակված մաշվածություն	(128,895)	**(128,895)**
Զուտ իրական արժեքը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**5,698,070**	**5,698,070**

Խմբի հիմնական գույքային ակտիվների իրական արժեքը հաշվարկվում է գնահատումների հիման վրա՝ իրականացված անկախ, մասնագիտորեն որակավորված գույքի գնահատողների կողմից: Նշանակալի ելակետային տվյալները և ենթադրությունները մշակվում են համաձայն ղեկավարության հետ սերտ խորհրդակցության: Գնահատման գործընթացները և իրական արժեքի փոփոխությունները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին:

Գնահատումը իրականացվել է՝ կիրառելով համեմատական և եկամտային մեթոդները, որոնք արտացոլում են նմանատիպ գույքերի վերջին շուկայական գործարքների գները և ներառում են վերոնշյալ գույքին հատուկ գործոնների ճշգրտումներ, այդ թվում հողամասի չափը, գտնվելու վայրը, գրավադրումը, ներկայիս օգտագործումը և այլն:

Հողը և շենքերը վերագնահատվել են 2015թ.: Շենքերը նախկինում վերագնահատվել էին 2013թ.:

Նշանակալի չդիտարկվող ելակետային տվյալը՝ վերոնշյալ գույքին հատուկ գործոնների ճշգրտումն է: Այս ճշգրտումների ծավալն ու ուղղությունը կախված է դիտարկվող շուկայում նմանատիպ գույքի գործարքների քանակից և բնույթից, որոնք կիրառվում են որպես գնահատման մեկնարկային կետ: Չնայած նրան, որ այս ելակետային տվյալը սուբյեկտիվ դատողություն է, ղեկավարությունը գտնում է, որ ողջամտորեն հնարավոր այլընտրանքային ենթադրությունները էական ազդեցություն չեն ունենա ընդհանուր գնահատման վրա:

35. Փոխանցված ֆինանսական ակտիվներ և որպես գրավ պահվող կամ տրամադրված ակտիվներ

Փոխանցված ֆինանսական ակտիվներ, որոնք ամբողջությամբ չեն ապաճանաչվում

Ստորև ներկայացված է ֆինանսական ակտիվների ցանկը, որոնք այնպես են փոխանցվել, որ բոլոր փոխանցված ֆինանսական ակտիվները կամ փոխանցված ֆինանսական ակտիվների մի մասը չեն բավարարում ապաճանաչման չափանիշներին:

		2015թ.		
հազար ՀՀ դրամ	***Փոխանցված ֆինանսական ակտիվներ***	***Առևտրային արժեթղթեր***	***Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր***	***Ընդամենը***
Ակտիվների հաշվեկշռային արժեք	Հետգնման պայմանագրեր	310,177	5,174,044	**5,484,221**
Ընդամենը		**310,177**	**5,174,044**	**5,484,221**
Համապատասխան պարտավորությունների հաշվեկշռային արժեք	Հետգնման պայմանագրեր	326,388	4,976,258	**5,302,646**
Ընդամենը		**326,388**	**4,976,258**	**5,302,646**
Զուտ դիրք		**(16,211)**	**197,786**	**181,575**

		2014թ.		
հազար ՀՀ դրամ	***Փոխանցված ֆինանսական ակտիվներ***	***Առևտրային արժեթղթեր***	***Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր***	***Ընդամենը***
Ակտիվների հաշվեկշռային արժեք	Հետգնման պայմանագրեր	202,516	5,718,387	**5,920,903**
Ընդամենը		**202,516**	**5,718,387**	**5,920,903**
Համապատասխան պարտավորությունների հաշվեկշռային արժեք	Հետգնման պայմանագրեր	255,322	5,496,956	**5,752,278**
Ընդամենը		**255,322**	**5,496,956**	**5,752,278**
Զուտ դիրք		**(52,806)**	**221,431**	**168,625**

Հետգնման պայմանագրեր

Հետգնման պայմանագրով վաճառված արժեթղթերը փոխանցվում են երրորդ կողմին, և Խումբը դրա փոխարեն ստանում է դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվներ: Արժեթղթերի արժեքի ավելացման կամ նվազման դեպքում, Խումբը, որոշակի իրավիճակներում, կարող է պահանջել կամ նրանից կարող է պահանջվել դրամական միջոցների տեսքով լրացուցիչ ապահովություն: Խումբը եկել է այն եզրակացության, որ պահպանում է գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները կապված այդպիսի արժեթղթերի հետ, այդ թվում վարկային, շուկայական, երկրային և գործառնական ռիսկերը, և այդ պատճառով չի ապաճանաչել դրանք: Բացի այդ, Խումբը ճանաչում է ֆինանսական պարտավորությունները ստացված դրամական միջոցների նկատմամբ:

Նման ձևով, Խումբն իրավունք ունի վաճառել կամ գրավադրել փոխառությամբ ներգրավված կամ հակադարձ հետգնման պայմանագրով ձեռք բերած արժեթղթերը, բայց պարտավոր է վերադարձնել արժեթղթերը: Այս դեպքում գործընկերը պահպանում է սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերը և օգուտները: Հետևաբար, Խումբը չի ճանաչում այդպիսի արժեթղթերը, այլ ճանաչում է առանձին ակտիվ դրամական տեսքով տրամադրված ցանկացած գրավի նկատմամբ:

35. Փոխանցված ֆինանսական ակտիվներ և որպես գրավ պահվող կամ տրամադրված ակտիվներ (շարունակություն)

Փոխանցված ֆինանսական ակտիվներ, որոնք ամբողջությամբ չեն ապաճանաչվում (շարունակություն)

Հետգնման պայմանագրերով վաճառված արժեթղթերի հաշվեկշռային և իրական արժեքը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 5,484,221 հազ. դրամ (2014թ՝ 5,920,903 հազ. դրամ), և ներառում է վաճառքի համար մատչելի դասակարգված արժեթղթեր և առևտրային արժեթղթեր:

Համապատասխան պարտավորությունները, արտացոլված այդպիսի գործարքների գծով ստացված դրամական միջոցների դիմաց, ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված են որպես «Պարտավորություններ բանկերի նկատմամբ» 5,302,646 հազ. դրամ հաշվեկշռային արժեքով (2014թ.՝ 5,752,278 հազ. դրամ):

Խմբի կողմից 786,549 հազ. դրամ արժողությամբ ձեռք բերված հակադարձ հետգնման պայմանագրերով արժեթղթերը վերագրավադրվել են հետգնման պայմանագրերում 2014թ. դեկտեմբերի 31 դրությամբ:

36. Ֆինանսական գործիքների հաշվանցում

Ստորև ներկայացված աղյուսակները ներառում են ֆինանսական ակտիվները, որոնք հաշվանցվել են ֆինանսական պարտավորությունների հետ ֆինանսական վիճակի մասին համախմբած հաշվետվությունում, ինչպես նաև հաշվանցման վերաբերյալ իրավաբանորեն ամրագրված գլխավոր համաձայնագրերի և նմանատիպ համաձայնագրերի հետևանքները, որոնք չեն հանգեցնում հաշվանցման ֆինանսական վիճակի մասին համախմբած հաշվետվությունում:

հազար ՀՀ դրամ

2015 թ. հազար ՀՀ դրամ	*Ճանաչված ֆինանսական ակտիվների համախառն գումար*	*Ճանաչված ֆինանսական պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում*	*Ֆինանսական ակտիվների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում*	*Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել*		*Զուտ գումար*
				Ֆինանսական գործիքներ	*Ստացված դրամական ապահովում*	
Ֆինանսական պարտավորություններ						
Հետգնման պայմանագրեր	5,302,646	–	5,302,646	(5,302,646)	–	**–**
Ընդամենը	**5,302,646**	**–**	**5,302,646**	**(5,302,646)**	**–**	**–**

2014թ. հազար ՀՀ դրամ	*Ճանաչված ֆինանսական ակտիվների համախառն գումար*	*Ճանաչված ֆինանսական պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում*	*Ֆինանսական ակտիվների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում*	*Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել*		*Զուտ գումար*
				Ֆինանսական գործիքներ	*Ստացված դրամական ապահովում*	
Ֆինանսական ակտիվներ						
Հետադարձ հետգնման պայմանագրեր	842,390	–	842,390	(842,390)	–	**–**
Ընդամենը	**842,390**	**–**	**842,390**	**(842,390)**	**–**	**–**
Ֆինանսական պարտավորություններ						
Հետգնման պայմանագրեր	6,507,102	–	6,507,102	(5,920,903)	–	**586,199**
Ընդամենը	**6,507,102**	**–**	**6,507,102**	**(5,920,903)**	**–**	**586,199**

37. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ակտիվները և պարտավորությունները՝ իրենց սպասվելիք մարման ժամկետների կտրվածքով: Խմբի պայմանագրային չզեղչված պարտավորությունների մարման վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է Ծանոթագրություն 38–ում:

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ								
հազար ՀՀ դրամ	***Ցպահանջ և մինչև 1 ամիս***	***1-ից 3 ամիս***	***3-ից 12 ամիս***	***Մինչև 12 ամիս, ընդամենը***	***1-ից 5 տարի***	***5 տարուց ավելի***	***12 ամսից ավելի, ընդամենը***	***Առանց մարման ժամկետի***	***Ընդամենը***
Ակտիվներ									
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	46,029,188	–	–	**46,029,188**	–	–	**–**	–	**46,029,188**
Առևտրային արժեթղթեր		–	–	**–**	207,592	–	**207,592**	–	**207,592**
Պահանջներ բանկերի նկատմամբ	3,880,403	–	3,903,162	**7,783,565**	–	1,365,132	**1,365,132**	–	**9,148,697**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	6,976,806	5,702,285	23,695,226	**36,374,317**	24,038,369	22,532,941	**46,571,310**	–	**82,945,627**
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	–	5,140	655,788	**660,928**	3,327,862	830,076	**4,157,938**	–	**4,818,866**
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	–	–	–	**–**	2,888,798	2,595,423	**5,484,221**	–	**5,484,221**
Հիմնական միջոցներ	–	–	–	**–**	–	–	**–**	6,612,460	**6,612,460**
Ոչ նյութական ակտիվներ	–	–	–	**–**	–	–	**–**	187,008	**187,008**
Բոնազանձված ակտիվներ	–	–	2,288,512	**2,288,512**	–	–	**–**		**2,288,512**
Ընթացիկ ակտիվներ շահութահարկի գծով	–	–	131,654	**131,654**	–	–	**–**	–	**131,654**
Այլ ակտիվներ	304,786	–	–	**304,786**	–	–	**–**	744,554	**1,049,340**
	57,191,183	**5,707,425**	**30,674,342**	**93,572,950**	**30,462,621**	**27,323,572**	**57,786,193**	**7,544,022**	**158,903,165**
Պարտավորություններ									
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	7,348,959	1,316	–	**7,350,275**	8,437	72,563	**81,000**	–	**7,431,275**
Ածանցյալ պարտավորություններ	14,495	–	–	**14,495**	–	–	**–**	–	**14,495**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	55,941,809	9,503,510	41,355,464	**106,800,783**	4,550,860	78,492	**4,629,352**	–	**111,430,135**
Այլ փոխառու միջոցներ	2,483,308	43,281	842,340	**3,368,929**	5,427,115	1,099,172	**6,526,288**	–	**9,895,217**
Հետաձգված հարկային պարտավորություններ	–	–	–		1,244,231	–	**1,244,231**	–	**1,244,231**
Այլ պարտավորություններ	344,919	–	–	**344,919**	410,749	–	**410,759**	–	**755,678**
Ստորադաս փոխառություններ	–	–	–	**–**	2,266,076	5,164,633	**7,430,709**	–	**7,430,709**
	66,133,490	**9,548,107**	**42,197,804**	**117,879,401**	**13,907,478**	**6,414,860**	**20,322,339**	–	**138,201,740**
Զուտ դիրք	**(8,942,307)**	**(3,840,682)**	**(11,523,462)**	**(24,306,451)**	**16,555,143**	**20,908,712**	**37,463,854**	**7,544,022**	**20,701,425**
Կուտակված ճեղքվածք	**(6,586,481)**	**(10,427,163)**	**(21,950,625)**		**(5,395,482)**	**15,513,230**			

37. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն (շարունակություն)

	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ								
հազար ՀՀ դրամ	*Ցպահանջ և մինչև 1 ամիս*	*1-ից 3 ամիս*	*3-ից 12 ամիս*	*Մինչև 12 ամիս, ընդամենը*	*1-ից 5 տարի*	*5 տարուց ավելի*	*12 ամսից ավելի, ընդամենը*	*Առանց մարման ժամկետի*	*Ընդամենը*
Ակտիվներ									
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	27,841,421	–	–	**27,841,421**	–	–	**–**	–	**27,841,421**
Պահանջներ բանկերի նկատմամբ	1,851,085	955,521	2,997,189	**5,803,795**	–	1,112,425	**1,112,425**	–	**6,916,220**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	5,802,023	5,831,040	26,190,028	**37,823,091**	25,229,259	30,331,695	**55,560,954**	–	**93,384,045**
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	–	442,007	599,273	**1,041,280**	97,130	804,708	**901,838**	–	**1,943,118**
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	–	–	186,572	**186,572**	5,734,331	–	**5,734,331**	–	**5,920,903**
Հիմնական միջոցներ	–	–	–	**–**	–	–	**–**	7,297,407	**7,297,407**
Ոչ նյութական ակտիվներ	–	–	–	–	–	–	–	253,290	**253,290**
Բոնագանձված ակտիվներ	–	–	2,329,501	**2,329,501**	–	–	**–**		**2,329,501**
Այլ ակտիվներ	315,548			**315,548**	645,907	–	**645,907**	–	**961,455**
	35,810,077	**7,228,568**	**32,302,563**	**75,341,208**	**31,706,627**	**32,248,828**	**63,955,455**	**7,550,697**	**146,847,360**
Պարտավորություններ									
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	6,828,882	1,365,942	–	**8,194,824**	–	–	**–**	–	**8,194,824**
Ածանցյալ պարտավորություններ	180,645	–	–	**180,645**	–	–	**–**	–	**180,645**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	41,915,336	10,584,731	39,122,348	**91,622,415**	4,617,888	99,465	**4,717,353**	–	**96,339,768**
Ընթացիկ պարտավորություններ շահութահարկի գծով	–	–	125,931	**125,931**	–	–	**–**	–	**125,931**
Հետաձգված հարկային պարտավորություններ	–	–	–	**–**	1,358,887	–	**1,358,887**	–	**1,358,887**
Այլ փոխառու միջոցներ	137,333	276,456	1,607,601	**2,021,390**	6,307,087	1,039,139	**7,346,226**	–	**9,367,616**
Այլ պարտավորություններ	315,914	–	–	**315,914**	186,936	–	**186,936**	–	**502,850**
Ստորադաս փոխառություններ	4,055	–	1,160,700	**1,164,755**	7,107,801	–	**7,107,801**	–	**8,272,556**
	49,382,165	**12,227,129**	**42,016,580**	**103,625,874**	**19,578,599**	**1,138,604**	**20,717,203**	–	**124,343,077**
Զուտ դիրք	**(13,572,088)**	**(4,998,561)**	**(9,714,017)**	**(28,284,666)**	**12,128,028**	**31,110,224**	**43,238,252**	**7,550,697**	**22,504,283**
Կուտակված ճեղքվածք	**(13,572,088)**	**(18,570,649)**	**(28,284,666)**		**(16,156,638)**	**14,953,586**			

Մարման ժամկետների միջև տարբերությունների վերլուծությունը չի արտացոլում այն ընթացիկ հաշիվների միջոցների պատմական կայունությունը, որոնց վերադարձը սովորաբար տեղի է ունենում ավելի երկար ժամանակահատվածի ընթացքում, քան ներկայացված է վերոնշյալ աղյուսակում: Վերոնշյալ աղյուսակում այդ մնացորդները ներառված են «Ցպահանջ և մինչև 1 ամիս» ժամկետայնության խմբի մեջ:

Հաճախորդների նկատմամբ պարտավորությունները ներառում են ֆիզիկական անձանց ժամկետային ավանդները: Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության՝ Խումբը պարտավոր է մարել ֆիզիկական անձանց ժամկետային ավանդները ավանդատուների առաջին իսկ պահանջով:

38. Ռիսկերի կառավարում

Խմբի գործունեությանը բնորոշ են բազմազան ֆինանսական ռիսկեր, և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկերի կառավարման գործընթացը կազմակերպվում է Խմբի առաքելությանը, հիմնական ու միջանկյալ նպատակներին համահունչ և ուղղված է Խմբի ֆինանսական վիճակի բարելավմանը և հեղինակության բարձրացմանը:

38. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ռիսկերի կառավարման գործընթացի նպատակն է ռիսկերի նվազեցմանն ուղղված համալիր միջոցառումների, սահմանաչափերի և ներքին իրավական ակտերի շրջանակներում օժանդակել Խմբի ղեկավարությանը կայացնելու որոշումներ, որոնք թույլ են տալիս արդյունավետ կառավարել Խմբի և Խմբի հաճախորդների ակտիվների և պարտավորությունների հետ առնչվող ռիսկերը, հնարավոր ռիսկերով պայմանավորված կորուստների բացառման կամ դրանց նվազագույնի հասցնելու միջոցով, շահութաբերության, իրացվելիության և վճարունակության սահմանաչափերի ընդունելի մակարդակի ապահովումը: Ռիսկերի կառավարումը հիմնվում է Խմբի իրավասու մարմնի կողմից հաստատված ընթացակարգերի, կարգերի, նորմատիվների և սահմանաչափերի վրա: Խմբի ռիսկերի բացահայտումը, չափումը, վերահսկումը և մոնիտորինգը կրում են պարբերական և շարունակական բնույթ: Ռիսկերի վերլուծությունը հանդիսանում է Խմբի ռազմավարական պլանավորման, ինչպես նաև ներդրումային ծրագրերի գնահատման մի մասը: Խմբի ռիսկերի կառավարման սկզբունքներին են դասվում. ճգնաժամային իրավիճակներում ռիսկերի կառավարման ոչ ստանդարտ ընթացակարգերի օգտագործումը, ֆինանսական դրության կայունության ստուգման նպատակով սթրես սցենարների պարբերաբար կիրառումը, ակտիվներում բիզնես գործառնությունների և վարկային պորտֆելի տեսակների կենտրոնացումից խուսափելը, Խմբի ակտիվների և պարտավորությունների դիվերսիֆիկացումը, Խմբի կողմից ստանձնված ռիսկերի համապատասխան հաճախականությամբ մոնիտորինգի իրականացումը, բանկային ռիսկերի կենտրոնացված կառավարումը, ռիսկերի կառավարման վարչության և այլ ստորաբաժանումների միջև անընդհատ կապը:

Ռիսկերի կառավարման կառուցվածք

Բանկում ռիսկերի կառավարումը կազմակերպում և կոորդինացնում է Գործադիր տնօրենը՝ Բանկի Խորհրդի կողմից հաստատված ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Բանկում ռիսկերի կառավարումն իրականացվում է հստակ և փաստաթղթավորված կերպով նկարագրված բոլոր բիզնես գործընթացների, վերջիններիս գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերի, բոլոր գործընթացների և գործառնությունների համար սահմանված համապատասխան սահմանաչափերի միջոցով:

Բանկի Խորհուրդ

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության և ռիսկերի կառավարման քաղաքականության, ինչպես նաև ռիսկերի կառավարմանը վերաբերող այլ քաղաքականությունների հաստատման համար, որոնց հիման վրա Բանկի Գործադիր տնօրենը կազմակերպում է ռիսկերի կառավարումը՝ հիմք ընդունելով ռիսկերի կառավարման սահմանաչափերը և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջները:

Վարչություն

Բանկում ռիսկերի կառավարման կազմակերպման նպատակով Բանկի Վարչությունն իրականացնում է՝

- ճգնաժամային իրավիճակներում Խմբի եկամտաբերության հետ կապված, ինչպես նաև գործառնական, ռազմավարական, վարկանիշային և իրավական ռիսկերին առնչվող Խմբի ռիսկերի կառավարման տեսակետի հիման վրա Խորհրդի համաձայնությամբ համալիր միջոցառումների հաստատումը,
- որոշակի գործարքների հանդեպ արգելքների սահմանումը,
- միջբանկային շուկայում առանց ապահովվածության իրականացվող գործառնությունների սահմանաչափերի սահմանումը,
- բանկային ռիսկերի կարգավորման և վերահսկման ներքին նորմատիվների սահմանումը:

Վարչությունը պատասխանատու է Խմբի ակտիվների և պարտավորությունների կառավարման, ինչպես նաև ողջ ֆինանսական համակարգի համար: Վարչությունը պատասխանատվություն է կրում նաև Խմբի իրացվելիության ֆինանսական ռիսկերի համար: Վարչությանն է վերապահված Խմբի Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի գործառույթները:

38. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ռիսկերի կառավարման ստորաբաժանում

Ռիսկերի կառավարման վարչության հիմնական գործառույթներն են՝

- Խմբում ռիսկերի կառավարման գործուն մեխանիզմների և գործընթացների մշակումն ու ներդրումը, դրանց ներդրման նկատմամբ հսկողության իրականացումը,
- Խմբի կողմից տրամադրվող վարկերի ռիսկայնության վերլուծությունը և ծրագրային վարկերի տրամադրման գործընթացի նկատմամբ հսկողությունը,
- տրամադրված վարկերի մոնիտորինգը, խնդիրների բացահայտումը և դրանց վերաբերյալ հաշվետվությունների ներկայացումը,
- գրավադրվող գույքի գնահատումների նկատմամբ վերահսկողության իրականացումը և գրավադրված գույքի վերագնահատումների պարբերական իրականացումը,
- Խմբի սեփականությունը հանդիսացող գույքի ապահովագրության գործընթացի կազմակերպումը,
- խնդրահարույց վարկային պորտֆելի կառավարումը:

Ներքին աուդիտ

Խմբի կողմից իրականացվող ռիսկի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում ներքին աուդիտի բաժնի կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը և արդյունավետությունը, այնպես էլ Խմբի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի բաժինը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Բանկի խորհրդին:

Ռիսկի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր

Կախված տարատեսակ գործոններից՝ Խումբը նպատակահարմար է գտնում բանկային ռիսկերը բաժանել արտաքին և ներքին ռիսկերի:

Արտաքին ռիսկերն են՝ երկրի, օրենսդրական, ֆորս մաժորային հանգամանքների, գնային և մրցակցային ռիսկերը:

Խմբի ներքին ռիսկերի դասին են պատկանում իր իսկ գործառնություններից բխող ռիսկերը: Դրանք են վարկային, գործառնական, իրացվելիության, տոկոսադրույքի, արտարժութային, հեղինակության, կապիտալի նվազման, անձնակազմի և փողերի լվացման ռիսկերը:

Երկրի ռիսկը Բանկը կառավարում է՝ օգտվելով միջազգային վարկանիշային գործակալությունների (Moody's, S&P, Fitch) կողմից միջազգային բանկերին և կազմակերպություններին շնորհված վարկանիշներից: Ռիսկերի կառավարման վարչությունը կատարում է Խմբի գործընկեր արտասահմանյան բանկերի վարկանիշների մոնիտորինգ և եռամսյակը մեկ Բանկի Վարչության հաստատմանն է ներկայացնում այդ բանկերի գծով սահմանաչափերը:

Գնային ռիսկի հնարավոր նվազագույն մակարդակն ապահովվում է հետևյալ միջոցառումների շրջանակներում՝ ֆինանսական շուկայի կառուցվածքային, ծավալային և գնային ցուցանիշների դինամիկայի, առանձին ֆինանսական գործիքների իրացվելիության վերլուծություն, առկա միտումների բացահայտում, հնարավոր կորուստների գնահատում ամսական կտրվածքով կիրառվող սթրես թեստերի միջոցով, ֆինանսական գործիքների գծով սահմանաչափերի (ըստ արժեթղթերով գործառնության տեսակի, ըստ դիլերի, ըստ թողարկողի) սահմանում, արժեթղթերի փաթեթի բազմազանեցում (դիվերսիֆիկացիա)՝ ըստ թողարկողի, տնտեսության ճյուղերի, ժամկետայնության և այլն:

Մրցակցային ռիսկի կառավարումը իրականացվում է բիզնես ստորաբաժանումների և մարքետինգի բաժնի կողմից պարբերաբար իրականացվող Խմբի և այլ բանկերի կողմից առաջարկվող ծառայությունների տեսականու և պայմանների համեմատության միջոցով:

38. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ռիսկի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր (շարունակություն)

Տոկոսադրույքի ռիսկը Խմբում կառավարվում է Ռիսկերի կառավարման վարչության կողմից՝ մշակելով և կիրառելով տոկոսադրույքի ռիսկի զսպման մեխանիզմեր/մոդելներ, որի հիման վրա էլ Խմբի Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի կողմից ընդունվում են որոշումներ: Ռիսկերի կառավարման վարչությունը տոկոսադրույքի ռիսկի կառավարման համար ընտրել է տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ զգայունության ճեղքվածքի, դյուրացիայի և բազային ռիսկի մոդելները: Տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ զգայունության ճեղքվածքի և դյուրացիայի մոդելները կիրառվում են սթրես սցենարների միջոցով ամսական կտրվածքով: Տոկոսադրույքի բազային ռիսկը կառավարվում է սթրես սցենարի միջոցով տարբեր խստության սցենարների կիրառմամբ եռամսյակային կտրվածքով:

Իրացվելիության ռիսկի կառավարման նպատակով իրականացվում է ակտիվների և պարտավորությունների ժամկետային կառուցվածքի՝ իրացվելիության ճեղքվածքի (liquitidy GAP) ամենօրյա քննարկում, ինչպես նաև բարձր իրացվելի գործիքներում ներդրումների տեսակարար կշռի նկատմամբ հսկողություն: Իրացվելիության ռիսկի զսպման նպատակով Խմբի Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեին Ռիսկերի կառավարման վարչության կողմից ամսական կտրվածքով ներկայացվում է վերլուծություն Խմբի սպասվելիք մարումների, տրամադրվելիք միջոցների և դիրքի վերաբերյալ: Իրացվելիության ռիսկի կառավարումն իր մեջ ներառում է՝ Խմբի ակտիվների գնագոյացման մեխանիզմի մշակումը, բանկին տրամադրված փոխառությունների գումարների, տեսակների կամ համախառն տոկոսային ծախսերի սահմանաչափերը, իրացվելիության պահանջները բավարարելու համար օգտագործվող ֆինանսավորման աղբյուրների կենտրոնացումների սահմանաչափերի կիրառումը, փոխառությունները ըստ մարման ժամկետների դիվերսիֆիկացնելու պահանջը, իրացվելիության պահանջները բավարարելու համար Խմբի հետ կապված անձանցից (կազմակերպություններից) փոխառու միջոցների ներգրավման սահմանափակումները, տոկոսադրույքի ռիսկը սահմանափակելու սկզբունքներն ու մեթոդները՝ ներառյալ հետհաշվեկշռային հոդվածների հետ առնչվող տոկոսադրույքի ռիսկն ու սահմանաչափերը, տոկոսային մարժայի նպատակային մակարդակը, միջոցների ներգրավման և տեղաբաշխման տոկոսադրույքի վերաբերյալ որոշումների կայացման մեխանիզմներն ու ընթացակարգերը, Խմբի ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ճեղքվածքի թույլատրելի սահմանաչափերը, Խմբի այն ստորաբաժանումների աշխատանքների կոորդինացման եղանակները, որոնք կարող են իրենց կողմից իրականացվող գործառնություններով ազդել Խմբի իրացվելիության մակարդակի վրա, իրացվելիության արտահերթ պահանջները (ինչը կարող է ծագել եկամուտների նվազման, չաշխատող ակտիվների աճի, ավանդների կենտրոնացման) բավարարելու ծրագիրը, Խորհրդին ու գործադիր մարմնին Խմբի իրացվելիության կառավարման վերաբերյալ տրամադրվող համապատասխան հաշվետվությունների ձևերը:

Կապիտալի նվազման ռիսկի չափման մեխանիզմներ են հանդիսանում ներքին և ՀՀ ԿԲ կողմից սահմանված նորմատիվները (կապիտալի համարժեքության, մեկ փոխառուի գծով և այլն): Ամսական կտրվածքով կիրառվող սթրես սցենարները հնարավորություն են տալիս որոշելու կապիտալի առավելագույն կորստի մեծությունը՝ կախված տարբեր հանգամանքներից:

Անձնակազմի ռիսկը կառավարվում է Անձնակազմի կառավարման բաժնի կողմից, որը պարբերաբար իրականացնում է ՀՀ բանկային համակարգում աշխատատեղերի և դրանց պայմանների ուսումնասիրություն, ինչպես նաև կազմակերպում է աշխատակիցների մասնագիտական գիտելիքների բարձրացմանն ուղղված դասընթացներ՝ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ռեսուրսների հաշվին:

Փողերի լվացման ռիսկի կառավարումը իրականացվում է ֆինանսական դիտարկումների բաժնի կողմից, որը գործում է փողերի լվացման դեմ պայքարի օրենսդրության և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Ռիսկի կենտրոնացումներ

Ռիսկի կենտրոնացումները առաջանում են, երբ մի շարք գործընկերներ իրականացնում են նմանատիպ գործունեություն, կամ գործունեությունը կատարվում է միևնույն աշխարհագրական շրջանում, կամ նրանք ունեն համանման տնտեսական հատկանիշներ, որի հետևանքով տնտեսական, քաղաքական կամ այլ պայմաններում փոփոխությունները պայմանագրային պարտավորությունների կատարման նրանց ունակության վրա նույն կերպ են ազդում: Ռիսկի կենտրոնացումները արտացոլում են Խմբի գործունեության արդյունքների հարաբերական զգայունությունը պայմանների փոփոխություններին, որոնք ազդեցություն են ունենում կոնկրետ բնագավառի կամ աշխարհագրական շրջանի վրա:

38. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ռիսկի կենտրոնացումներ (շարունակություն)

Ռիսկի չափազանց կենտրոնացումներից խուսափելու համար Խմբի քաղաքականությունը և գործընթացները ներառում են հատուկ սկզբունքներ՝ ուղղված բազմաբնույթ ակտիվների տեսակների, վարկային և արժեթղթերի պորտֆելների պահպանմանը:

Վարկային ռիսկ

Խմբի գործունեությունը ենթարկվում է վարկային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարման հետ, որի արդյունքում Խումբը կարող է վնասներ կրել: Վարկային ռիսկը Խմբի կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Խումբն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Վարկային ռիսկը հիմնականում առաջանում է վարկային գործունեությունից՝ կապված վարկերի և փոխառությունների տրամադրման հետ, և ներդրումային գործունեությունից՝ պայմանավորված Խմբի ակտիվների պորտֆելում պարտքային արժեթղթերի և այլ պարտքային գործիքների առաջացման հետ: Վարկային ռիսկ առկա է նաև մի շարք հետհաշվեկշռային հոդվածներում, ինչպես օրինակ վարկային պարտավորվածությունները: Վարկային ռիսկը կառավարվում է համաձայն Խմբի վարկային քաղաքականության և ոլորտը կարգավորող այլ ներքին իրավական ակտերի:

Ռիսկերի կառավարման վարչության կողմից կատարվում է վարկային պորտֆելի օրական կտրվածքով մոնիտորինգ, կառուցված շարքերի հիման վրա վարկային պորտֆելի դինամիկայի հաշվարկ և պորտֆելի որակի վերլուծություն ըստ վարկատեսակների ու մասնաճյուղերի, ինչի հիման վրա կատարվում են վարկային պորտֆելի որակական ցուցանիշների կանխատեսումներ: Ռիսկերի կառավարման վարչությունը իրականացնում է նաև տարբեր վարկատեսակների վարկերի մոնիտորինգ հաստատված ընթացակարգերով, իսկ հարկ եղած դեպքում առանձին վարկերի մոնիտորինգ՝ ելնելով վարկառուի վարկունակության վատթարացումից: Ներքին իրավական ակտերի պահանջների համաձայն՝ վարկային ռիսկը նվազեցնելու նպատակով Խմբի կողմից տրամադրվող վարկերը նաև հաստատվում են ռիսկերի վարչության կողմից: Վարկային ռիսկի կառավարումը և վերահսկումը կենտրոնացած է Ռիսկերի Կառավարման վարչությունում, որը պարբերաբար հաշվետվություն է ներկայացնում գործադիր խորհրդին:

2015 և 2014թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը լավագույնս ներկայացնում է նրանց վարկային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը՝ առանց հաշվի առնելու պահվող գրավը կամ վարկի որակի բարելավման այլ միջոցները:

Ռիսկի կենտրոնացումներ

Աշխարհագրական սեգմենտներ

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս 2015 և 2014թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի՝ վարկային ռիսկի կենտրոնացումները հաշվեկշռային արժեքներով՝ ըստ աշխարհագրական սեգմենտների.

հազար ՀՀ դրամ	*ՀՀ*	*Ոչ ՏՀԶԿ երկրներ*	*ՏՀԶԿ երկրներ*	*Ընդամենը*
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	42,002,034	1,705,281	2,321,873	**46,029,188**
Առևտրային արժեթղթեր	207,592	–	–	**207,592**
Պահանջներ բանկերի նկատմամբ	8,292,328	194,690	661,679	**9,148,697**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	79,448,566	3,484,204	12,857	**82,945,627**
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	4,206,095	–	612,771	**4,818,866**
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	5,484,221	–	–	**5,484,221**
Այլ ֆինանսական ակտիվներ	120,027	30,959	153,800	**304,786**
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**139,760,863**	**5,415,134**	**3,762,980**	**148,938,977**

38. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ռիսկի կենտրոնացումներ (շարունակություն)

հազար ՀՀ դրամ	*ՀՀ*	*Այլ ՏՀԶԿ երկրներ*	*ՏՀԶԿ երկրներ*	*Ընդամենը*
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	25,393,181	1,500,697	947,543	**27,841,421**
Պահանջներ բանկերի նկատմամբ	5,898,982	876,929	140,309	**6,916,220**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	89,857,563	23,963	3,502,519	**93,384,045**
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	1,426,298	–	516,820	**1,943,118**
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	5,920,903	–	–	**5,920,903**
Այլ ֆինանսական ակտիվներ	135,768	152,559	27,221	**315,548**
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**128,632,695**	**2,554,148**	**5,134,412**	**136,321,255**

Ակտիվները դասակարգվում են՝ հիմք ընդունելով այն երկիրը, որտեղ գործընկեր կողմը գրանցված է:

Ռիսկի սահմանաչափերի վերահսկողություն և զսպողական քաղաքականություն

Խումբը կառավարում է վարկային ռիսկի կենտրոնացումները՝ մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի, ինչպես նաև վարկավորման ճյուղային կամ աշխարհագրական սեգմենտների կտրվածքով:

Խումբը կարգավորում է վարկային ռիսկի մակարդակները՝ մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի, ինչպես նաև վարկավորման ճյուղային կամ աշխարհագրական սեգմենտների կտրվածքով ռիսկի ընդունելի գումարների սահմանաչափեր սահմանելով: Նման ռիսկերը պարբերաբար վերահսկվում են և ենթակա են վերանայման տարեկան կամ ավելի հաճախակի կտրվածքով՝ ելնելով անհրաժեշտությունից: Ըստ վարկատեսակների, արդյունաբերության ճյուղերի և երկրների վարկային ռիսկի սահմանաչափերը հաստատվում են Վարկային կոմիտեի կողմից եռամսյակային կտրվածքով:

Մեկ վարկառուի գծով վարկային ռիսկի չափը, ներառյալ բանկերը և ֆինանսական կազմակերպությունները, լրացուցիչ սահմանափակում է հաշվեկշռային և հետհաշվեկշռային ռիսկերի համար լրացուցիչ սահմանաչափերով:

Վարկային ռիսկը նաև կառավարվում է վարկառուների և պոտենցիալ վարկառուների՝ մայր գումարի և տոկոսների վճարման ունակությունը պարբերաբար վերլուծելով և անհրաժեշտության դեպքում վարկի տրամադրման սահմանաչափերը փոխելով:

Ստորև ներկայացված են հատուկ հսկողության և զսպողական մի քանի այլ միջոցներ:

Գրավ

Խումբը կիրառում է բազմաթիվ միջոցներ վարկային ռիսկը զսպելու համար: Առավել ավանդական մոտեցում է համարվում տրամադրված դրամական միջոցների դիմաց գրավ վերցնելը, որը նաև համընդհանուր ընդունված գործելակերպ է: Խումբը կանոններ է սահմանում ընդունելի գրավի տեսակների կամ ռիսկերի նվազեցման ուղղությամբ: Վարկերի և փոխառությունների համար գրավի հիմնական տեսակներն են.

- Հիփոթեքային պայմանագրերով գրավադրվող անշարժ գույքը,
- Կազմակերպությունների գործառնական ակտիվները՝ շենքերը, պաշարները և մեքենաները,
- Ոսկին և դրամական միջոցները:

Իրավաբանական անձանց երկարաժամկետ ֆինանսավորումը և վարկավորումը հիմնականում ապահովված են, ֆիզիկական անձանց գծով վերականգնվող վարկային գծերը, որպես կանոն, ապահովված չեն: Ի լրումն, վարկային կորուստը նվազագույնի հասցնելու նպատակով Խումբը վարկառուից լրացուցիչ ապահովություն է պահանջում՝ առանձին վարկերի և փոխառությունների գծով արժեզրկման հայտանիշների ի հայտ գալու դեպքում: Վարկերի և փոխառություններց բացի այլ ֆինանսական ակտիվների գծով ապահովություն հանդիսացող գրավի տեսակը որոշվում է՝ ելնելով գործիքի Էությունից: Հիմնականում բանկերին վարկեր և փոխառություններ տրամադրելու համար գրավներ չեն պահանջվում: Բացառություն են կազմում այն գրավները, որոնք ձեռք են բերվել հետգնման պայմանագրերի և արժեթղթերի փոխառության գործարքներից: Պարտատոմսերը և այլ պարտքային արժեթղթերը հիմնականում ապահովված չեն:

38. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ռիսկի սահմանաչափերի վերահսկողություն և զսպողական քաղաքականություն (շարունակություն)

Համախառն վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության.

հազար ՀՀ դրամ	*2015թ.*	*2014թ.*
Անշարժ գույքի գրավադրմամբ վարկեր	49,805,080	55,692,182
Ոսկու գրավով վարկեր	11,191,936	10,092,218
Կազմակերպությունների երաշխիքներով ապահովված վարկեր	4,077,012	4,006,529
Տրանսպորտային միջոցների գրավադրմամբ վարկեր	2,778,470	4,353,145
Դրամական միջոցներով ապահովված վարկեր	6,500,593	6,511,505
Պաշարների գրավադրմամբ վարկեր	374,423	2,309,944
Սարքավորումների գրավադրմամբ վարկեր	2,316,309	686,239
Այլ գրավներ	6,228,448	8,556,356
Չապահովված վարկեր	3,698,687	5,653,195
Ընդամենը վարկեր և փոխառություններ (համախառն)	**86,970,958**	**97,861,313**

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա վարկերի տրամադրման ամսաթվի դրությամբ: Հիմնականում դրանք չեն թարմացվում մինչև վարկերը չգնահատվեն որպես անհատապես արժեզրկված:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ անհատապես արժեզրկված վարկերի գծով գրավների իրական արժեքը կազմում է 8,082,905 հազ. դրամ (2014թ. 6,461,334 հազ. դրամ):

Վարկերի հետ կապված պայմանական պարտավորություններ

Այս գործիքների հիմնական նպատակը անհրաժեշտության դեպքում հաճախորդներին միջոցներ տրամադրելն է: Երաշխիքները և ակրեդիտիվները ենթակա են նույն վարկային ռիսկին, ինչ վարկերը: Ապրանքային և փաստաթղթային ակրեդիտիվները Խմբի գրավոր հավաստումներն են հաճախորդների անունից, որոնք թույլ են տալիս երրորդ անձանց գումարներ ստանալ Խմբից հատուկ պայմանների կատարման դեպքում, ապահովված են դրանց հետ կապված ապրանքների առաքմամբ, և, հետևաբար, դրանք ավելի ապահով են, քան ուղղակի տրամադրվող վարկերը:

Վարկի տրամադրման պայմանական պարտավորություններն իրենցից ներկայացնում են վարկային գծերի չօգտագործած մասերը: Այս դեպքում, հնարավոր կորուստների գումարը, որ Խումբը կարող է կրել, հավասար է չօգտագործված վարկային գծերի գումարին:

Սակայն հնարավոր վնասի իրական գումարն ավելի փոքր է, քան չօգտագործված վարկային գծերի ընդհանուր գումարը, քանի որ վարկային պարտավորությունները տրամադրվում են վարկառուների կողմից վարկերի տրամադրման որոշակի ստանդարտների պահպանման դեպքում: Խումբը հետևում է պարտավորությունների մարման ժամկետներին, քանի որ երկարաժամկետ պարտավորությունները պարունակում են ավելի բարձր վարկային ռիսկ, քան կարճաժամկետ պարտավորությունները:

Արժեզրկման և պահուստավորման քաղաքականություն

Վարկերի արժեզրկումը գնահատելու հիմնական գործոնները հետևյալն են. արդյոք տոկոսների և մայր գումարի վճարումները ժամկետանց են ավելի քան 90 օր, արդյոք հայտնի են գործընկերների որևէ ֆինանսական դժվարությունների, նրանց վարկային վարկանիշի նվազման կամ պայմանագրի սկզբնական պայմանների խախտման դեպքեր: Խումբը գնահատում է վարկերի արժեզրկումը՝ ելնելով արժեզրկված վարկերի ապագա դրամական հոսքերի վերլուծությունից և արժեզրկման հայտանիշեր չունեցող վարկերի գծով կորուստների նախկին փորձից, ցուցաբերելով պահպանողական մոտեցում:

38. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Արժեզրկման և պահուստավորման քաղաքականություն (շարունակություն)

Անհատապես գնահատվող պահուստներ

Խումբն անհատապես սահմանում է յուրաքանչյուր անհատապես էական վարկի պահուստի ստեղծման անհրաժեշտությունը: Պահուստների չափի որոշման ժամանակ հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները. գործընկերոջ գործարար-ծրագրի կայունությունը, ֆինանսական բարդությունների ծագման դեպքում նրա ունակությունները բարելավելու գործունեության արդյունքները, սնանկացման պարագայում՝ կանխատեսվող ստացվելիք գումարները և ակնկալվող վճարման ենթակա շահաբաժինների գումարները, ֆինանսական օգնության ներգրավման հնարավորությունը, ապահովման միջոցի իրացման արժեքը, ինչպես նաև դրամական միջոցների ակնկալվող ժամկետները: Արժեզրկումից վնասները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ կամ ավելի հաճախ, եթե չնախատեսված իրավիճակը պահանջում է ավելի մեծ ուշադրություն:

Խմբային հիմունքով գնահատվող պահուստներ

Անհատապես էական չհանդիսացող վարկերի (ներառյալ վարկային քարտերը, հիփոթեքային վարկերը և չապահովված սպառողական վարկերը), ինչպես նաև անհատապես էական, բայց անհատապես արժեզրկման օբյեկտիվ հայտանիշեր չունեցող վարկերի գծով պահուստները գնահատվում են խմբային հիմունքներով: Պահուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, այդ թվում յուրաքանչյուր վարկային պորտֆել թեստավորվում է առանձին:

Խմբային հիմունքով գնահատման դեպքում որոշվում է պորտֆելի արժեզրկումը, որը կարող է տեղի ունենալ նույնիսկ անհատական արժեզրկման օբյեկտիվ հայտանիշերի բացակայության դեպքում: Արժեզրկումից վնասները որոշվում են հետևյալ տեղեկատվության հիման վրա. պորտֆելի գծով նախորդ ժամանակաշրջանների վնասները, ընթացիկ տնտեսական պայմանները, մոտավոր ժամանակահատվածը՝ սկսած հնարավոր կորստի պահից մինչև այն պահը, երբ կհաստատվի, որ այն պահանջում է անհատապես գնահատվող արժեզրկման պահուստի ստեղծում, ինչպես նաև, ստացման ենթակա ակնկալվող գումարները և ակտիվի արժեզրկումից հետո արժեքի վերականգնումը:

Ֆինանսական երաշխիքների և ակրեդիտիվների արժեզրկման գնահատումը և պահուստավորումն իրականացվում է նույն հիմունքներով՝ ինչ վարկերինը:

Չարժեզրկված, ոչ ժամկետանց վարկեր և փոխառություններ

Ստորև աղյուսակում ներկայացված է վարկերի և փոխառությունների որակը ըստ դասերի.

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	*Ոչ ժամկետանց և չարժեզրկված*			*Ժամկետանց, բայց ոչ անհատապես արժեզրկված*	*Անհատապես արժեզրկված*	
Հազար ՀՀ դրամ	*Բարձր վարկանիշ*	*Ստանդարտ վարկանիշ*	*Ցածր վարկանիշ*			*Ընդամենը*
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	6,500,593	71,630,487	–	1,774,513	7,065,365	**86,970,958**

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	*Ոչ ժամկետանց և չարժեզրկված*			*Ժամկետանց, բայց ոչ անհատապես արժեզրկված*	*Անհատապես արժեզրկված*	
Հազար ՀՀ դրամ	*Բարձր վարկանիշ*	*Ստանդարտ վարկանիշ*	*Ցածր վարկանիշ*			*Ընդամենը*
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	6,511,505	82,924,765	–	1,719,349	6,705,694	**97,861,313**

38. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Արժեզրկման և պահուստավորման քաղաքականություն (շարունակություն)

Ժամկետանց, բայց ոչ անհատապես արժեզրկված վարկեր

Ժամկետանց, բայց ոչ անհատապես արժեզրկված վարկերը և փոխառությունները ներառում են ժամկետանց, բայց ոչ անհատապես արժեզրկված վարկերը: Ժամկետանց, բայց ոչ անհատապես արժեզրկված վարկերի վերլուծությունը՝ ըստ վճարման ուշացման ժամկետների հետևյալն է.

	2015թ.				
հազար ՀՀ դրամ	*Մինչև 30 օր*	*31-60 օր*	*61-90 օր*	*90 օրից առավել*	*Ընդամենը*
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ					
Արդյունաբերություն	–	2,693	–	12,796	**15,489**
Գյուղատնտեսություն	11,723	2,513	4,172	34,486	**52,894**
Շինարարություն	12,574	–	–	–	**12,574**
Առևտուր	14,753	1,960	3,495	34,247	**54,455**
Տրանսպորտ և կապ	–	–	–	13,950	**13,950**
Սպառողական վարկեր ֆիզիկական անձանց	249,086	164,168	92,860	652,281	**1,158,395**
Հիփոթեքային վարկեր	147,543	54,720	66,002	172,776	**441,041**
Ծառայությունների ոլորտ	–	144	–	–	**144**
Այլ	898	–	13,249	11,424	**25,571**
Ընդամենը	**436,577**	**226,198**	**179,778**	**931,960**	**1,774,513**

	2014թ.				
հազար ՀՀ դրամ	*Մինչև 30 օր*	*31-60 օր*	*61-90 օր*	*90 օրից առավել*	*Ընդամենը*
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ					
Արդյունաբերություն	10,867	4,646	–	4,476	**19,989**
Գյուղատնտեսություն	37,230	21,358	7,857	34,424	**100,869**
Շինարարություն	8,218	–	–	287	**8,505**
Առևտուր	19,822	23,820	4,975	75,270	**123,887**
Սպառողական վարկեր ֆիզիկական անձանց	243,327	145,475	132,518	342,103	**863,423**
Հիփոթեքային վարկեր	213,685	100,781	4,446	72,385	**391,297**
Ծառայությունների ոլորտ	30,446	145,182	–	35,751	**211,379**
Այլ	**563,595**	**441,262**	**149,796**	**564,696**	**1,719,349**

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Խմբի ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի փոփոխության ռիսկն է՝ շուկայական պայմանների՝ ներառյալ արտարժույթի փոխարժեքի և տոկոսադրույքների փոփոխության արդյունքում: Խումբը տարանջատում է շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների: Առևտրային պորտֆելի շուկայական ռիսկը կառավարվում և վերահսկվում է VaR մեթոդով, որը արտացոլում է ռիսկի փոփոխականների միջև կախվածությունը: Ոչ առևտրային պորտֆելը կառավարվում և վերահսկվում է զգայունության վերլուծության միջոցով:

38. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Շուկայական ռիսկ (շարունակություն)

Տոկոսադրույքի փոփոխման ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը Խմբի ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխման արդյունքում: Բանկի Խորհուրդը սահմանել է որոշված ժամկետների համար տոկոսադրույքների ճեղքվածքների չափ: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Խմբի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով:

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքներում ենթադրվող փոփոխությունների ազդեցությունն է մեկ տարվա զուտ տոկոսային եկամտի վրա՝ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռում հաշվառվող լողացող տոկոսադրույքով ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով: Կապիտալի զգայունությունը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսադրույքների թույլատրելի փոփոխությունների հանդեպ հաշվարկվում է՝ վերագնահատելով հաստատուն տոկոսադրույքով վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները՝ հիմնվելով այն ենթադրության վրա, որ առկա են եկամտաբերության կորի զուգահեռ տեղաշարժեր:

հազար ՀՀ դրամ ***Արժույթ***	***Բազիսային կետերի ավելացում 2015թ.***	***Զուտ տոկոսային եկամտի զգայունություն 2015թ.***	***Կապիտալի զգայունություն 2015թ.***
Հայկական դրամ	5%	(16,092)	(131,461)
ԱՄՆ Դոլար	1%	–	(80,656)

Արժույթ	***Բազիսային կետերի նվազում 2015թ.***	***Զուտ տոկոսային եկամտի զգայունություն 2015թ.***	***Կապիտալի զգայունություն 2015թ.***
Հայկական դրամ	(5%)	16,092	131,461
ԱՄՆ Դոլար	(1%)	–	80,656

Արժույթ	***Բազիսային կետերի ավելացում 2014 թ.***	***Զուտ տոկոսային եկամտի զգայունություն 2014 թ.***	***Կապիտալի զգայունություն 2014 թ.***
Հայկական դրամ	1%	–	11,451
ԱՄՆ Դոլար	1%	–	–

Արժույթ	***Բազիսային կետերի նվազում 2014թ.***	***Զուտ տոկոսային եկամտի զգայունություն 2014թ.***	***Կապիտալի զգայունություն 2014թ.***
Հայկական դրամ	(1%)	–	11,451
ԱՄՆ Դոլար	(1%)	–	–

38. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Շուկայական ռիսկ (շարունակություն)

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկը արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է: Արտարժութային ռիսկը Խումբը կառավարում է՝ օգտվելով ստանդարտ և ՎաՌ մեթոդաբանություններից: Բանկի Խորհուրդը սահմանել է սահմանաչափեր արտարժութային դիրքերի համար:

Ստորև բերված աղյուսակներում ներկայացված են այն արժույթները, որոնցով դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունի էական արժութային դիրքեր՝ ոչ առևտրային դրամական ակտիվների և պարտավորությունների, ինչպես նաև սպասվող դրամական հոսքերի գծով: Կատարված վերլուծությունը արտահայտում է ՀՀ դրամի նկատմամբ՝ արտարժույթի փոխարժեքի հնարավոր տատանումների ազդեցությունը համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա (կախված արտարժույթի փոխարժեքի փոփոխության նկատմամբ ոչ առևտրային դրամական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի զգայունությունից): Կապիտալի վրա ազդեցությունը չի տարբերվում համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա ազդեցությունից: Բոլոր այլ ցուցանիշները հաստատուն են:

Բացասական գումարները արտացոլում են համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազումը, դրական գումարները՝ պոտենցիալ զուտ աճը:

հազար ՀՀ դրամ	***31 դեկտեմբերի, 2015թ.***		***31 դեկտեմբերի, 2014թ.***	
Արժույթ	***Արտարժույթի փոխարժեքի փոփոխություն %***	***Ազդեցություն մինչև հարկումը շահույթի վրա***	***Արտարժույթի փոխարժեքի փոփոխություն %***	***Ազդեցություն մինչև հարկումը շահույթի վրա***
ԱՄՆ դոլար	10%	(117,632)	5%	92,352
ԱՄՆ դոլար	(10%)	117,632	(5%)	(92,352)
Եվրո	14%	(17,437)	8%	(16,905)
Եվրո	(14%)	17,437	(8%)	16,905

38. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Շուկայական ռիսկ (շարունակություն)

	ՀՀ դրամ	*Ազատ փոխարկելի արժույթ*	*Ոչ փոխարկելի արժույթ*	*Ընդամենը*
Ակտիվներ				
				46,029,188
				207,592
				9,148,697
				82,945,627
				4,818,866
				5,484,221
				304,786
	55,176,456	**90,935,468**	**2,827,053**	**148,938,977**
Պարտավորություններ				
				7,431,275
				14,495
				111,430,135
				9,895,217
				344,919
				7,430,709
	38,693,665	**95,727,978**	**2,125,107**	**136,546,750**
Զուտ դիրք 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**16,482,791**	**(4,792,510)**	**701,946**	**12,392,227**
Պայմանական և պայմանագրային պարտավորություններ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3,616,861**	**3,386,546**	**206,793**	**7,210,200**
				136,321,255
				122,671,323
				13,649,932
Պայմանական և պայմանագրային պարտավորություններ 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությանբ	**3,399,129**	**4,091,377**	**40,703**	**7,531,209**

38. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբը սովորական կամ չկանխատեսված իրավիճակում չի կարողանա կատարել իր պարտավորությունները վերջիններիս մարման ժամանակ: Այդ ռիսկի զսպման նպատակով ղեկավարությունն ապահովել է ֆինանսավորման տարբեր աղբյուրներ՝ ի լրումն արդեն իսկ գոյություն ունեցող բանկային ավանդների հիմնական բազայի: Ղեկավարությունն իրականացնում է նաև ակտիվների կառավարում՝ հաշվի առնելով իրացվելիությունը, և ապագա դրամական հոսքերի և իրացվելիության օրական վերահսկողություն: Այդ գործընթացը ներառում է ակնկալվող դրամական միջոցների գնահատում և առաջնակարգ ապահովման միջոցի առկայություն, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորման ստացման համար:

Խումբը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Բացի այդ Խումբը ՀՀ կենտրոնական բանկում պահում է իր դրամով պարտավորությունների 2%-ի և արտարժույթով պարտավորությունների 20%-ի չափով պահուստավորման գումար (տե՛ս Ծանոթագրություն 15-ը): Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում՝ հաշվի առնելով շուկայի հետ ընդհանրապես և Բանկի հետ մասնավորապես կապված սթրես գործոնները:

Խմբի իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար վերջիններիս մարման ժամանակ, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Խումբը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան:

	Աուդիտ չանցած	
Դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ հարաբերակցությունը կազմել է՝	***2015թ., %***	***2014թ., %***
Ն21 – Ընդհանուր իրացվելիություն (բարձր իրացվելի ակտիվներ/Ընդհանուր ակտիվներ)	31.06	25.21
Ն22 – Ընթացիկ իրացվելիություն (բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ)	91.02	89.96

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների.

Ստորև ներկայացվում է դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների՝ պայմանագրային չզեղչված պարտավորությունների հիման վրա: Այս պարտավորությունների մարման սպասվելիք ժամկետների համար տե՛ս Ծանոթագրություն 37-ը:

38. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Իրացվելիության ռիսկ (շարունակություն)

Պարտավորությունները, որոնք ենթակա են ցպահանջ մարման, դասակարգվում են այնպես, ինչպես եթե մարման պահանջը ներկայացված լիներ ամենավաղ հնարավոր ամսաթվով: Սակայն Խումբը գտնում է, որ շատ հաճախորդներ չեն պահանջի վճարումը այն ամենավաղ հնարավոր ամսաթվի դրությամբ, որով Խումբը պարտավորված կլինի կատարել վճարումը, և աղյուսակը չի արտացոլում ակնկալվող դրամական հոսքերը՝ հաշվարկված Խմբի կողմից՝ անցյալ ժամանակաշրջանների ներդրումների պահանջների տեղեկատվության հիման վրա:

	2015թ.					
հազար ՀՀ դրամ	*Ցպահանջ կամ մինչև մեկ ամիս*	*1-3 ամիս*	*3-12 ամիս*	*1-5 ամիս*	*5 տարուց ավելի*	*Ընդամենը*
Ֆինանսական պարտավորություններ						
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	7,352,805	1,317	–	8,437	72,563	**7,435,122**
Ածանցյալ պարտավորություններ	14,495	–	–	–	–	**14,495**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	55,961,773	9,604,329	43,285,690	5,368,615	152,752	**114,373,159**
Այլ փոխառու միջոցներ	2,483,486	43,474	899,924	6,796,265	1,660,959	**11,884,108**
Այլ ֆինանսական պարտավորություններ	344,919	–	–	–	–	**344,919**
Ստորադաս փոխառություններ	–	–	–	2,473,537	6,818,875	**9,292,412**
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	**66,157,478**	**9,649,120**	**44,185,614**	**14,646,854**	**8,705,149**	**143,344,215**
Պայմանական և պայմանագրային պարտավորություններ	**5,549,350**	**199,223**	**1,180,246**	**304,304**	**–**	**7,233,123**

	2014թ.					
հազար ՀՀ դրամ	*Ցպահանջ կամ մինչև մեկ ամիս*	*1-3 ամիս*	*3-12 ամիս*	*1-5 ամիս*	*5 տարուց ավելի*	*Ընդամենը*
Ֆինանսական պարտավորություններ						
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	6,828,882	1,383,802	–	–	–	**8,212,684**
Ածանցյալ պարտավորություններ	180,645	–	–	–	–	**180,645**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	41,952,679	10,708,056	40,979,188	5,455,220	190,138	**99,285,281**
Այլ փոխառու միջոցներ	137,404	279,117	1,675,909	7,954,715	1,567,236	**11,614,381**
Այլ ֆինանսական պարտավորություններ	315,913	–	–	–	–	**315,913**
Ստորադաս փոխառություններ	4,055	–	1,211,182	8,504,730	–	**9,719,967**
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	**49,419,578**	**12,370,975**	**43,866,279**	**21,914,665**	**1,757,374**	**129,328,871**
Պայմանական և պայմանագրային պարտավորություններ	**5,549,350**	**199,223**	**1,180,246**	**304,304**	**–**	**7,233,123**

38. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Իրացվելիության ռիսկ (շարունակություն)

Խումբը ներգրավել է էական գումարներով միջոցներ բաժնետերերից և կապակցված կողմերից: Նշված գումարների ցանկացած էական վերադարձ կարող է բացասաբար անդրադառնալ Խմբի գործունեության վրա: Խմբի ղեկավարությունը վստահ է, որ ֆինանսավորման ներկայիս մակարդակը կպահպանվի տեսանելի ապագայում, և միջոցների վերադարձի դեպքում նա կտեղեկացվի նախապես, ինչը հնարավորություն կտա Խմբին ժամանակին իրացնելու իր իրացվելի միջոցները և վերադարձնելու պարտքը:

Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկերի կառավարման բարձրագույն մարմինը Խմբի Վարչությունն է, որը պատասխանատու է գործառնական ռիսկերի վերահսկման համար: Գործառնական ռիսկը Խմբում գործարքների սահմանված կարգի և ընթացակարգերի՝ գործող օրենսդրությանը անհամապատասխանության կամ դրանց խախտման, Խմբի աշխատակիցների անիրազեկության կամ սխալների, Խմբի կողմից կիրառվող տեղեկատվական, տեխնոլոգիական և այլ համակարգերի ֆունկցիոնալ հնարավորությունների անբավարարության հետևանքով վնասների առաջացման ռիսկն է: Խմբի նպատակն է կառավարել գործառնական ռիսկը՝ ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից խուսափումը հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկերի կառավարումն իրականացվում է հստակ և փաստաթղթավորված կերպով նկարագրված բոլոր բիզնես գործընթացների, վերջիններիս գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերի, բոլոր գործընթացների և գործառնությունների համար սահմանված համապատասխան սահմանաչափերի, Խմբի կողմից իրականացվող ցանկացած գործարքի ընթացքում կրկնակի ստուգման սկզբունքի միջոցով: Գործառնական ռիսկի առավել արդիական տեսակների կառավարումը նկարագրված է ստորև:

Իրավական ռիսկ. Խմբի բոլոր ստանդարտ պայմանագրերի օրինակելի ձևերը մշակվում են Խմբի Իրավաբանական վարչության կողմից համապատասխան ստորաբաժանման հետ համագործակցության միջոցով և հաստատվում են Խմբի Վարչության կողմից: Խմբի առօրյա գործունեության ընթացքում Խմբի և երրորդ անձանց հետ փոխհարաբերությունները կարգավորող ոչ ստանդարտ պայմանագրերի կիրառումը թույլատրվում է միայն այդ պայմանագրերի վերաբերյալ Խմբի Իրավաբանական վարչության կողմից եզրակացության առկայության դեպքում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) հետ առնչվող ռիսկերը կառավարվում են Խմբում գործող ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Գործընթացի ռիսկի զսպման մեխանիզմներ են՝

- բոլոր բիզնես գործընթացների կանոնակարգումը ներքին իրավական ակտերի միջոցով,
- Խմբի ակտիվների և առավել կարևոր փաստաթղթերի (այդ թվում՝ վարկային պայմանագիր) ֆիզիկական պաշտպանվածությունը,
- սահմանաչափերի սահմանումը և պահպանումը,
- գույքի և գրառումների համատեղ պահպանումը,
- տվյալների գրանցամատյանների կիրառումը և արխիվացումը,
- գործընթացների ժամանակ երկու աչքի սկզբունքի կիրառումը:

Ներքին աուդիտը պարբերաբար տալիս է Խմբի ներքին հսկողության համակարգի արդյունավետության և Խմբի ռիսկերին համարժեք լինելու գնահատական և հսկողություն է իրականացնում Խմբի գործունեության և գործառնական ռիսկերի նկատմամբ:

Խմբի՝ ստանդարտներին համապատասխանությունը ուղեկցվում է ներքին աուդիտի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Ներքին աուդիտի դիտարկումների արդյունքները քննարկվում են Խմբի ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Դիտարկումների ամփոփագրերը ներկայացվում են Խորհրդին:

39. Կապիտալի համարժեքություն

Խումբն ակտիվորեն կառավարում է կապիտալը իր գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու նպատակով: Խմբի կապիտալի համարժեքությունը վերահսկվում է՝ կիրառելով Բազելյան համաձայնագրով սահմանված կապիտալի գծով սկզբունքներն ու ցուցանիշները և Խմբի վերահսկման նպատակով ԿԲ-ի կողմից սահմանված նորմատիվները:

Խմբի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են՝ համոզվել, որ Բանկի կապիտալը համապատասխանում է վերահսկողի կողմից սահմանած պահանջներին, և որ Խումբն ապահովում է ամուր վարկային վարկանիշ և ուժեղ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու նպատակով:

Խումբը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Խումբը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարիների համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է 12%: Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է կանոնադրական կապիտալը, էմիսիոն եկամուտը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը, գլխավոր պահուստը: Ընդհանուր կապիտալը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պահանջներին համաձայն: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է լրացուցիչ կապիտալը, որը ընդգրկում է վերագնահատման պահուստները:

2015 և 2014 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի կապիտալի համարժեքության նորմատիվը, որը հաշվարկվել է ՀՀ ԿԲ-ի պահանջներին համաձայն, կազմել է՝

	Աուդիտ չանցած	
հազար ՀՀ դրամ	***2015թ.***	***2014թ.***
1-ին դասի կապիտալ	12,189,182	12,375,866
2-րդ դասի կապիտալ	6,094,591	4,993,381
Ընդհանուր կապիտալ	**18,283,773**	**17,369,247**
Ռիսկով կշռված ակտիվներ	**135,784,712**	**140,559,654**
Կապիտալի համարժեքության նորմատիվ	**13.47%**	**12.36%**

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի գնահատման:

Ժամանակաշրջանի ընթացքում Բանկը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ բոլոր պահանջները:

2014 թ. դեկտեմբերի 30-ին ՀՀ ԿԲ-ն փոխեց տեղական բանկերի համար սահմանված նորմատիվային կապիտալի նվազագույն չափը ՝ 5,000,000 հազ. դրամից դարձնելով 30,000,000 հազ. դրամ: Պահանջն ուժի մեջ է մտնում 2017 թ. հունվարի 1-ից: 2015թ. հունվարի 1-ի դրությամբ Բանկի նորմատիվային կապիտալը կազմում էր 18,283,773 հազ. դրամ (2014 թ.՝ 17,369,247 հազ. դրամ):

Բանկի մայր կազմակերպությունը հաստատել է, որ մինչև 2016 թ. ավարտը կապահովի Բանկի կապիտալի անհրաժեշտ համալրումը՝ մինչև 2017թ. հունվարի 1-ը նոր պահանջին համապատասխանելու համար:

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն 1
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն 2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն 3
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն 4

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Հիմնական գործունեության նկարագրություն 5
2. Պատրաստման հիմունքներ 5
3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր 6
4. Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումներ 21
5. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 23
6. Առևտրային արժեթղթեր 23
7. Պահանջներ բանկերի նկատմամբ 23
8. Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ 24
9. Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր 27
10. Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր 27
11. Հիմնական միջոցներ 28
12. Ոչ նյութական ակտիվներ 29
13. Բռնագանձված ակտիվներ 30
14. Այլ ակտիվներ 30
15. Պարտավորություններ բանկերի նկատմամբ 31
16. Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ 31
17. Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ 31
18. Հարկում 32
19. Այլ փոխառու միջոցներ 33
20. Այլ պարտավորություններ 34
21. Ստորադաս փոխառություններ 34
22. Կապիտալ 35
23. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ 35
24. Տոկոսային եկամուտ և ծախս 37
25. Միջնորդավճարների գծով եկամուտ և ծախս 37
26. Զուտ առևտրային եկամուտ 38
27. Այլ եկամուտ 38
28. Անձնակազմի գծով ծախսեր 38
29. Այլ ծախսեր 38
30. Կապակցված կողմերի հետ գործառնություններ 39
31. Իրական արժեքի չափում 41
32. Փոխանցված ֆինանսական ակտիվներ և որպես գրավ պահվող կամ տրամադրված ակտիվներ 45
33. Ֆինանսական գործիքների հաշվանցում 46
34. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն 47
35. Ռիսկերի կառավարում 48
36. Կապիտալի համարժեքություն 61

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Ernst & Young CJSC
1 Northern Ave., office 27
Yerevan, 0001, Armenia
Tel: +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Fax: +374 (10) 500 706
www.ey.com/am

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0001
Հյուսիսային պող. 1, գրասենյակ 27
Հեռ. +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Ֆաքս. +374 (10) 500 706

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերության
Բաժնետերերին և Խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Բանկ») և իր դուստր ընկերության (միասին՝ «Խումբ») համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի ֆինանսական վիճակը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ների):

Կարծիքի արտահայտման հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պարտականությունները նկարագրված են ստորև *«Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում:
Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների Վարքագծի Միջազգային Ստանդարտների Խորհրդի Պրոֆեսիոնալ Հաշվապահների Վարքագրքի (ՀՎՄՄԽ Վարքագիրք), և մենք կատարել ենք վարքագծի հետ կապված մեր այլ պարտականությունները համաձայն ՀՎՄՄԽ Վարքագրքի: Մենք գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և Խորհրդի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է համախմբված ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ներին համապատասխան պատրաստելու և ճշմարիտ ներկայացնելու, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, համապատասխան դեպքերում անընդհատ գործելու հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Խումբը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Խորհուրդը պատասխանատու է Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացրած աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել , որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացրած աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն աուդիտի ողջ ընթացքում: Մենք նաև իրականացնում ենք հետևյալը.

- Հայտնաբերում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության վերաբերյալ՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, սակայն ոչ Խմբի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:

EY
Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

- Գնահատում ենք կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան տեղեկատվության բացահայտման խելամտությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Խմբի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզանից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն դարձնել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Խմբի գործունեության անընդհատության դադարեցմանը:
- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ընկերությունների ֆինանսական տեղեկատվության և ձեռնարկատիրական գործունեությունների վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք Խմբի աուդիտի հանձնարարման, վերահսկման և իրականացման համար: Մենք միանձնյա պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Ի թիվս այլ հարցերի, Խորհրդին տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող կարևոր թերությունների մասին:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան

Աուդիտի բաժնի հիմնադիր գործընկեր՝ Էրիկ Հայրապետյան

Գլխավոր տնօրեն՝ Հ. Սարգսյան՝
Ի դեմս լիազորված անձ Է. Հայրապետյանի
(գործող 2016թ. օգոստոսի 1-ին տրված լիազորագրի հիման վրա)

26 ապրիլի, 2017թ.

© Ernst & Young Global Limited

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն
2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2016	2015
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5	44,751,939	46,029,188
Առևտրային արժեթղթեր	6	184,833	207,592
Պահանջներ բանկերի նկատմամբ	7	2,320,882	9,148,697
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	8	119,024,824	82,945,627
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր	9	14,929,205	4,818,866
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	10	–	5,484,221
Հիմնական միջոցներ	11	6,384,767	6,612,460
Ոչ նյութական ակտիվներ	12	139,802	187,008
Բռնագանձված ակտիվներ	13	2,385,649	2,288,512
Ընթացիկ ակտիվներ շահութահարկի գծով		–	131,654
Այլ ակտիվներ	14	871,369	1,049,340
Ընդամենը ակտիվներ		**190,993,270**	**158,903,165**
Պարտավորություններ և կապիտալ			
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	15	278,064	7,431,275
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	16	31,591	14,495
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	17	139,680,217	111,430,135
Ընթացիկ պարտավորություններ շահութահարկի գծով		175,744	–
Հետաձգված հարկային պարտավորություններ	18	1,113,141	1,244,231
Այլ փոխառու միջոցներ	19	9,096,208	9,895,217
Այլ պարտավորություններ	20	841,484	755,678
Ստորադաս փոխառություններ	21	7,598,818	7,430,709
Ընդամենը պարտավորություններ		**158,815,267**	**138,201,740**
Կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	22	16,416,633	7,002,033
Էմիսիոն եկամուտ		63,233	63,233
Գլխավոր պահուստ		1,005,996	1,005,996
Հողի և շենքերի վերագնահատումից աճ		3,353,126	3,316,639
Վաճառքի համար մատչելի արժեթղթերի վերագնահատման պահուստ		1,365,201	337,223
Չբաշխված շահույթ		9,973,814	8,976,301
Ընդամենը կապիտալ		**32,178,003**	**20,701,425**
Ընդամենը պարտավորություններ և կապիտալ		**190,993,270**	**158,903,165**

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները վավերացվել և ստորագրվել են Բանկի Գործադիր տնօրենի և Գլխավոր հաշվապահի կողմից 2017թ. ապրիլի 26-ին:

Արթուր Հակոբյան
Գործադիր տնօրեն

Արաքսյա Առաքելյան
Գլխավոր հաշվապահի ՕԿ

5-62 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն 2016 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	*2016*	*2015*
Տոկոսային եկամուտ	24	13,859,656	13,458,001
Տոկոսային ծախս	24	(6,787,759)	(6,961,726)
Զուտ տոկոսային եկամուտ		**7,071,897**	**6,496,275**
Վարկերի արժեզրկման պահուստի ձևավորման գծով ծախս	8	(1,507,899)	(3,242,949)
Զուտ տոկոսային եկամուտ վարկերի արժեզրկման պահուստից հետո		**5,563,998**	**3,253,326**
Միջնորդավճարների գծով եկամուտ	25	2,003,640	1,887,676
Միջնորդավճարների գծով ծախս	25	(763,729)	(656,310)
Զուտ առևտրային եկամուտ	26	899,056	1,009,948
Արտարժույթի վերագնահատումից զուտ վնաս		(237,214)	(518,306)
Վաճառքի համար մատչելի ներդրումներից զուտ օգուտ		54,229	45,838
Այլ եկամուտ	27	943,846	944,279
Անձնակազմի գծով ծախսեր	28	(3,379,260)	(3,137,936)
Հիմնական միջոցների մաշվածություն	11	(739,362)	(669,766)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	12	(76,339)	(127,891)
Այլ ծախսեր	29	(2,623,145)	(2,556,009)
Արժեզրկման և պահուստների ձևավորման գծով այլ ծախսեր	13, 14	(137,130)	(90,922)
Շահույթ/(վնաս) մինչև շահութահարկ		**1,508,590**	**(616,073)**
Շահութահարկի գծով փոխհատուցում/(ծախս)	18	56,442	(47,510)
Հաշվետու տարվա շահույթ/(վնաս)		**1,565,032**	**(663,583)**
Այլ համապարփակ եկամուտ			
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Հիմնական միջոցների վերագնահատում		213,769	(708,574)
Շահութահարկի ազդեցություն	18	(42,754)	141,715
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող զուտ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		**171,015**	**(566,859)**
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթերի հետ կապված գործառնություններից չիրացված օգուտ		1,339,201	33,128
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթերի հետ կապված գործառնություններից իրացված օգուտ՝ վերադասակարգված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում		(54,229)	(45,838)
Շահութահարկի ազդեցություն	18	(256,994)	2,542
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող զուտ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		**1,027,978**	**(10,168)**
Հաշվետու տարվա այլ համապարփակ եկամուտ/(վնաս) հարկումից հետո		**1,198,993**	**(577,027)**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ/(վնաս)		**2,764,025**	**(1,240,610)**

5-62 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն
2016 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	Կանոնադրական կապիտալ	*Էմիսիոն եկամուտ*	*Գլխավոր պահուստ*	*Վաճառքի համար մատչելի արժեթղթերի վերագնահատման պահուստ*	*Հողի և շենքերի վերագնահատումից աճ*	*Չբաշխված շահույթ*	*Ընդամենը կապիտալ*
Մնացորդն առ 2015թ. հունվարի 1	**7,002,033**	**63,233**	**844,898**	**347,391**	**3,978,488**	**10,268,240**	**22,504,283**
Հատկացում գլխավոր պահուստին	–	–	161,098	–	–	(161,098)	–
Շահաբաժիններ բաժնետերերին	–	–	–	–	–	(562,248)	**(562,248)**
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	**–**	**–**	**161,098**	**–**	**–**	**(723,346)**	**(562,248)**
Հաշվետու տարվա վնաս	–	–	–	–	–	(663,583)	**(663,583)**
Հաշվետու տարվա այլ համապարփակ վնաս	–	–	–	(10,168)	(566,859)	–	**(577,027)**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ վնաս	**–**	**–**	**–**	**(10,168)**	**(566,859)**	**(663,583)**	**(1,240,610)**
Վերագնահատման պահուստի ամորտիզացիա	–	–	–	–	(94,990)	94,990	–
Մնացորդը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**7,002,033**	**63,233**	**1,005,996**	**337,223**	**3,316,639**	**8,976,301**	**20,701,425**
Կանոնադրական կապիտալի ավելացում	9,414,600	–	–	–	–	–	**9,414,600**
Շահաբաժիններ բաժնետերերին	–	–	–	–	–	(702,047)	**(702,047)**
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	**9,414,600**	**–**	**–**	**–**	**–**	**(702,047)**	**8,712,553**
Հաշվետու տարվա շահույթ	–	–	–	–	–	1,565,032	**1,565,032**
Հաշվետու տարվա այլ համապարփակ եկամուտ	–	–	–	1,027,978	171,015	–	**1,198,993**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	**–**	**–**	**–**	**1,027,978**	**171,015**	**1,565,032**	**2,764,025**
Վերագնահատման պահուստի ամորտիզացիա	–	–	–		(134,528)	134,528	–
Մնացորդը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**16,416,633**	**63,233**	**1,005,996**	**1,365,201**	**3,353,126**	**9,973,814**	**32,178,003**

5-62 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն 2016 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	2016	*2015*
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Ստացված տոկոսներ	13,110,944	13,429,082
Վճարված տոկոսներ	(6,550,012)	(6,939,477)
Ստացված միջնորդավճարներ	2,003,640	1,887,676
Վճարված միջնորդավճարներ	(763,729)	(656,310)
Զուտ առևտրային եկամուտ	899,056	1,009,948
Ստացված այլ եկամուտ	943,846	943,440
Աշխատակազմին վճարված գումարներ	(3,349,030)	(3,125,110)
Վճարված այլ ծախսեր	(2,615,419)	(2,492,799)
Դրամական միջոցների հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը	**3,679,296**	**4,056,450**
Գործառնական ակտիվների զուտ (ավելացում)/նվազում		
Առևտրային արժեթղթեր	22,759	(318,847)
Պահանջներ բանկերի նկատմամբ	6,698,218	(1,961,453)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	(38,685,135)	5,083,968
Բռնագանձված ակտիվներ	190,557	406,513
Այլ ակտիվներ	(10,347)	(533,142)
Գործառնական պարտավորությունների զուտ ավելացում/(նվազում)		
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	(6,705,878)	(858,194)
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	27,986,234	15,778,647
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	17,472	(166,150)
Այլ պարտավորություններ	61,502	(485,708)
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ (օգտագործված)/ստացված գործառնական գործունեությունում մինչև շահութահարկը	**(6,745,322)**	**21,002,084**
Վճարված շահութահարկ	(41,940)	(275,495)
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ (օգտագործված)/ստացված գործառնական գործունեությունում	**(6,787,262)**	**20,726,589**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթերի ձեռքբերում	(7,611,181)	(6,402,759)
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթերի վաճառք և մարում	3,981,403	4,237,823
Հիմնական միջոցների ձեռքբերում	(430,846)	(694,328)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(29,133)	(61,609)
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ օգտագործված ներդրումային գործունեությունում	**(4,089,757)**	**(2,920,873)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Մուտքեր բաժնետիրական կապիտալի թողարկումից	9,414,600	–
Մուտքեր այլ փոխառու միջոցներից	2,154,195	3,836,778
Այլ փոխառու միջոցների մարում	(1,410,854)	(3,412,102)
Ստացված ստորադաս փոխառություններ	343,425	–
Ստորադաս փոխառությունների մարում	–	(957,952)
Վճարված շահաբաժիններ	(702,047)	(562,248)
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ ստացված/(օգտագործված) ֆինանսավորման գործունեությունից	**9,799,319**	**(1,095,524)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	**(1,077,700)**	**16,710,192**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա սկզբում	46,029,188	27,841,421
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(199,549)	1,477,575
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա վերջում (Ծան. 5)	**44,751,939**	**46,029,188**

5-62 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

1. Հիմնական գործունեության նկարագրություն

Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ «Բանկ») հանդիսանում է Խմբի մայր կազմակերպությունը, որը ներառում է Բանկը և իր դուստր ընկերությունը (այսուհետ՝ «Խումբ»):

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն հիմնվել է 1994թ. և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Բանկը գրանցվել է 1994թ. նոյեմբերի 28-ին ՀՀ Կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N 57 արտոնագրային համարով:

Բանկն ընդունում է բնակչությունից ավանդներ, տրամադրում է վարկեր և իրականացնում է դրամական փոխանցումներ Հայաստանի Հանրապետության տարածքում և ՀՀ տարածքից դուրս, իրականացնում է արտարժույթի փոխանակման գործարքներ, ինչպես նաև իր հաճախորդ իրավաբանական և ֆիզիկական անձանց մատուցում է այլ բանկային ծառայություններ:

Բանկի գլխամասային գրասենյակը գտնվում է Երևանում: Բանկն ունի 34 մասնաճյուղ, որոնք գտնվում են Երևանում և Հայաստանի տարբեր մարզերում, իսկ 1 մասնաճյուղը՝ ԼՂՀ տարածքում: Բանկի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան փող. 26/1:

2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ «Ընդվանսդ Գլոբալ Ինվեստմենտ» ՍՊԸ–ն հանդիսանում է Բանկի մայր կազմակերպությունը (բաժնետոմսերի 80.94%-ի սեփականատեր): Խմբի վերջնական վերահսկող անձը արգենտինացի գործարար Է. Էռնեկյանն է:

Բանկի դուստր ընկերությունը

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են հետևյալ դուստր ընկերությունը.

	Բաժնեմաս, %			*Ստեղծման*	
Դուստր ընկերություն	***2016***	***2015***	***Երկիր***	***ամսաթիվ***	***Ոլորտ***
«Կոնվերս Ինկասացիա» ՍՊԸ	100%	100%	Հայաստան	20 ապրիլի, 2000թ.	Դրամական միջոցների, դրանց համարժեքների և այլ ակտիվների տեղափոխում

Հայաստանի գործարար միջավայրը

Հայաստանի Հանրապետությունը շարունակում է տնտեսական բարեփոխումները և իրավական, հարկային ու օրենսդրական համակարգերի զարգացումը: Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը առավելապես կախված է այս բարեփոխումներից և զարգացումներից, ինչպես նաև կառավարության կողմից իրականացվող տնտեսական, ֆինանսական և դրամավարկային քաղաքականությունների արդյունավետությունից:

Խմբի ղեկավարությունը գտնում է, որ ընթացիկ հանգամանքներում ձեռնարկվում են համապատասխան միջոցառումներ Խմբի կայունությունն ապահովելու նպատակով:

2. Պատրաստման հիմունքներ

Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ «ՖՀՄՍ»), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (այսուհետ՝ «ՀՀՄՍԽ») կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (այսուհետ՝«ՖՀՄՍԿ»):

2. Պատրաստման հիմունքներ (շարունակություն)

Չափման հիմունքներ

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի հիմունքով այն ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար, որոնք չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների և պարտավորությունների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ներկայացված են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները՝ պատմական արժեքով, բացառությամբ հողի և շինությունների, որոնք ներկայացվել են վերագնահատված արժեքով:

Վերադասակարգումներ

2016թ.-ի ներկայացմանը համապատասխանեցնելու նպատակով 2015թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում կատարվել են հետևյալ վերադասակարգումները.

հազար ՀՀ դրամ	***Համաձայն նախորդ հաշվետվության***	***Վերադասա-կարգում***	***Ճշգրտված***
Արժեզրկումից կորուստներ	(3,271,603)	3,271,603	–
Վարկերի արժեզրկման պահուստի ձևավորման գծով ծախս	–	(3,242,949)	(3,242,949)
Արժեզրկման և պահուստների ձևավորման գծով այլ ծախսեր	–	(90,922)	(90,922)
Այլ ծախսեր	(2,618,277)	62,268	(2,556,009)

Գործառնական և ներկայացման արժույթ

Խմբի գործառնական արժույթը այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Խումբը: Խմբի գործառնական և ներկայացման արժույթը Հայաստանի Հանրապետության դրամն է (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը: Խումբը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան: Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Խմբի հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով: Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ: ՀՀ սահմաններից դուրս դրամը փոխարկելի չէ:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները

Խումբը կիրառել է հետևյալ վերանայված ՖՀՄՍ-ները, որոնք ուժի մեջ են մտնում 2016 թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար:

ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ. Նախաձեռնություն տեղեկատվության բացահայտման ոլորտում

ՀՀՄՍ 1-ում կատարված փոփոխությունները հստակեցնում են, այլ ոչ թե էապես փոխում ՀՀՄՍ 1-ի առկա պահանջները: Փոփոխությունները պարզաբանում են հետևյալը՝

- ՀՀՄՍ 1-ի պահանջները էականության նկատմամբ,
- Ֆինանսական արդյունքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունների առանձին հոդվածները կարող են առանձնացվել,
- Կազմակերպություններն ունեն հնարավորություն ընտրելու ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրությունների ներկայացման կարգը,
- Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ասոցիացված կազմակերպությունների և համատեղ ձեռնարկությունների համապարփակ եկամտի մասը պետք է ներկայացվի ամբողջությամբ մեկ հոդվածում և դասակարգվի որպես հոդվածներ, որոնք հետագայում կդասակարգվեն կամ չեն դասակարգվի շահույթի կամ վնասի կազմում:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները (շարունակություն)

Բացի այդ, փոփոխությունները պարզաբանում են այն պահանջները, որոնք կիրառվում են ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններում լրացուցիչ միջանկյալ ենթագումարների բացահայտման ժամանակ: Փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2016 թ.-ի հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Սույն փոփոխությունը ազդեցություն չունի Խմբի վրա:

Տարեկան բարեփոխումներ՝ 2012-2014 թթ.

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2016 թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Դրանք, մասնավորապես ներառում են՝

ՖՀՄՄ 5 «Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործունեություն»

Ակտիվները (կամ օտարման խմբերը) ընդհանուր առմամբ օտարվում են կա՛մ վաճառքի, կա՛մ սեփականատերերի միջև բաշխման միջոցով: ՖՀՄՄ 5-ի փոփոխությունը պարզաբանում է, որ նշված օտարման մեթոդներից մեկը մյուսով փոխարինելը չի նշանակի օտարման նոր պլան, այլ այն կհանդիսանա սկզբնական ծրագրի շարունակություն: Հետևաբար ՖՀՄՄ 5-ի պահանջների կիրառման ընդհատում չի լինի: Փոփոխությունը պետք է կիրառվի առաջընթաց կերպով: Սույն փոփոխությունը ազդեցություն չունի Խմբի վրա:

ՖՀՄՄ 7 «Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ»

Փոփոխությունը պարզաբանում է, որ ծառայությունների մատուցման պայմանագիրը, որը ներառում է միջնորդավճար, կարող է հանդիսանալ ֆինանսական ակտիվի շարունակական ներգրավվածություն: Կազմակերպությունը պետք է գնահատի միջնորդավճարի բնույթը և պայմանագիրը ՖՀՄՄ 7-ի շարունակական մասնակցության ուղեցույցի համաձայն՝ գնահատելու համար, թե արդյոք պահանջվում են բացահայտումներ: Փոփոխությունը պետք է կիրառվի այնպես, որ շարունակական ներգրավվածություն կազմող ծառայությունների մատուցման պայմանագրերի գնահատումը կատարվի հետընթաց: Սակայն, պահանջվող բացահայտումները չպետք է կատարվեն ավելի վաղ ժամանակահատվածներում, քան այն տարեկան ժամանակաշրջանը, երբ կազմակերպությունն առաջին անգամ կիրառում է փոփոխությունները: Սույն փոփոխությունը ազդեցություն չունի Խմբի վրա:

Համախմբման հիմունքներ

Դուստր ընկերությունը, որի մայր կազմակերպությունը իրավունք ունի ներդրումներից ստանալ փոփոխական արդյունքներ կամ ենթարկվում է այդ արդյունքների փոփոխությունների հետ կապված ռիսկին և կարող է ազդել այդ ներդրումներից ստացվող արդյունքների վրա իր իրավասությունների միջոցով, համախմբվում է: Դուստր կազմակերպության համախմբումը սկսվում է, երբ Խումբը ձեռք է բերում վերահսկողություն դուստր ընկերության նկատմամբ և դադարում է, երբ Խումբը կորցնում է այդ վերահսկողությունը: Ներխմբային բոլոր գործարքները, ինչպես նաև այդ գործարքների արդյունքում առաջացած մնացորդներն ու չիրացված օգուտները ամբողջությամբ բացառվում են: Չիրացված վնասները նույնպես բացառվում են, բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքը վկայում է փոխանցվող ակտիվի արժեզրկման մասին: Անհրաժեշտության դեպքում, դուստր ընկերության ֆինանսական հաշվետվությունները ճշգրտվում են՝ այդ ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխանեցնելու նպատակով: Դուստր ընկերության հաշվետու ամսաթիվ է հանդիսանում դեկտեմբերի 31-ը:

Ձեռքբերման ժամանակ դուստր ընկերության ակտիվները, պարտավորությունները և պայմանական պարտավորությունները չափվում են ձեռքբերման պահին գոյություն ունեցող իրական արժեքով: Որոշելի զուտ ակտիվների նկատմամբ ձեռքբերման գնի ցանկացած գերազանցող մաս ճանաչվում է որպես գուդվիլ: Որոշելի զուտ ակտիվների նկատմամբ ձեռքբերման գնի ցանկացած պակաս մասը (այսինքն՝ ձեռքբերման զեղչում) կրեդիտագրվում է ձեռքբերման ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ծախսերի և եկամուտների ճանաչում

Հասույթը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Խումբ և ստացված հասույթը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Խմբից, և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև հասույթի ճանաչումը:

Տոկոսային եկամուտ և ծախս

Տոկոսային եկամուտը ու ծախսը բոլոր տոկոսային եկամուտ բերող ֆինանսական գործիքների համար, բացառությամբ առևտրային նպատակով պահվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների, շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում ճանաչվում են որպես «տոկոսային եկամուտ» և «տոկոսային ծախս»՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի հաշվեկշռային արժեքը նվազում է արժեզրկումից կորուստների պատճառով, տոկոսային եկամուտը շարունակում է ճանաչվել կիրառելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը՝ նոր հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Միջնորդավճարների գծով եկամուտ

Վարկերի տրամադրման համար գանձվող վճարները (համապատասխան ուղղակի ծախսերի հետ միասին) հետաձգվում են՝ ճշգրտելով տվյալ վարկի արդյունավետ տոկոսադրույքը: Վճարները, այլ եկամուտները և ծախսերը հիմնականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով ծառայությունների մատուցման ընթացքում: Ներդրումային պորտֆելի, այլ կառավարչական և խորհրդատվական ծառայությունների գծով վճարները ճանաչվում են պայմանագրային պայմաններին համապատասխան: Ակտիվների կառավարման գծով վճարները ճանաչվում են ծառայությունների մատուցման ժամանակաշրջանում: Նույն սկզբունքն է կիրառվում ակտիվների կառավարման, ֆինանսական պլանավորման և ակտիվների պահառության ծառայությունների դեպքում, որոնք ենթադրում են ծառայությունների մատուցման երկար ժամկետ:

Շահաբաժիններից եկամուտ

Եկամուտը ճանաչվում է, երբ Խմբի՝ վճարը ստանալու իրավունքը հաստատված է:

Զուտ առևտրային եկամուտ

Զուտ առևտրային եկամուտը ներառում է առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից իրացված և չիրացված եկամուտը և ծախսը, տոկոսներից, շահաբաժիններից և արտարժութային տարբերություններից գոյացող բոլոր եկամուտները և ծախսերը: Զուտ առևտրային եկամուտը ներառում է նաև արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտը և ծախսը և ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ համապատասխան ծառայությունն արդեն մատուցված է:

Գործառնական վարձակալությունից եկամուտ

Ներդրումային գույքի վարձակալությունից ստացվող եկամուտը հաշվառվում է գծային մեթոդով վարձակալության ժամանակահատվածի ընթացքում և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում գրանցվում է «Այլ եկամուտ» հոդվածում:

Արտարժույթի վերահաշվարկ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը Խմբի գործառնական և հաշվետվությունների ներկայացման արժույթն է: Արտարժույթով կատարված գործարքները գրանցվում են գործառնական արժույթով՝վերահաշվարկված ՀՀ ԿԲ կողմից հրապարակված գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվներն ու պարտավորությունները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով հաշվետու ամսաթվի փոխարժեքը: Արտարժույթով արտահայտված գործարքների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ որպես արտարժույթի վերագնահատման տարբերություններից օգուտ/(վնաս): Ոչ դրամային հոդվածների համար, որոնք ներկայացվում են սկզբնական արժեքով, վերագնահատման ժամանակ կիրառվում է գործարքի ամսաթվի փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքը:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Արտարժույթի վերահաշվարկ (շարունակություն)

Գործարքի ամսաթվի դրությամբ պայմանագրային փոխարժեքի և ԿԲ-ի փոխարժեքի տարբերությունը ներառվում է եկամտի կազմում՝ նվազեցված արտարժույթով կատարված գործարքի գծով ծախսերը: 2016 և 2015 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ ԿԲ-ի կողմից 1 ԱՄՆ դոլարի համար հայտարարված փոխարժեքը կազմում էր համապատասխանաբար 483.94 և 483.75 ՀՀ դրամ:

Հարկում

Հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են կապիտալում, որի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են կապիտալում:

Ընթացիկ հարկը ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման ենթակա ակնկալվող շահութահարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության, ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ, ինչպես նաև նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն հաստատված են թողարկման համար մինչ համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է գնահատումների վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի վճարում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուդվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում, որոնք առաջացման պահին չեն ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջինները հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության, ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ առաջանում են նաև այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են դուստր, ասոցիացված կամ համատեղ կազմակերպություններում ներդրումներից, բացի այն դեպքերից, երբ ժամանակավոր տարբերությունների իրացման ժամկետները կառավարվում են մայր կազմակերպության կողմից, և հավանական է, որ դրանք մոտ ապագայում չեն իրացվի:

ՀՀ-ում գործում են նաև այլ գործառնական հարկեր, որոնք վերաբերում են Խմբի գործունեությանը: Այդ հարկերը ներառված են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության «Այլ ծախսեր» հոդվածում:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ դրամը, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցները՝ ներառյալ պարտադիր պահուստները և այլ բանկերում պահվող մնացորդները (բացառությամբ ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների համար դեպոնացված գումարների), որոնք կարճ ժամանակամիջոցում կարող են փոխարկվել կանխիկի, այդ թվում, մինչև 90 օր մարման ժամկետ ունեցող բարձր իրացվելի ներդրումները, որոնք հեշտությամբ փոխարկելի են ֆիքսված կանխիկ գումարների, և չեն ենթարկվում արժեքի փոփոխման զգալի ռիսկի: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

Թանկարժեք մետաղներ

Ոսկին և այլ թանկարժեք մետաղները հաշվառվում են ՀՀ ԿԲ գնման գներով, որոնք մոտավորապես համապատասխանում են իրական արժեքին՝ Լոնդոնի մետաղների բորսայի գնանշումների նկատմամբ զեղչմամբ: Թանկարժեք մետաղները ներառված են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության «Այլ ակտիվներ» հոդվածում: Գների տատանումներն արտացոլվում են թանկարժեք մետաղներով գործառնություններից որպես զուտ եկամուտ/վնաս՝ այլ եկամուտների կամ ծախսերի կազմում:

Պահանջներ բանկերի նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Խումբն օգտագործում է այլ բանկերում տարբեր ժամկետայնության բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Բանկերին տրամադրված ֆիքսված ժամկետով վարկերն ու կանխավճարները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ոչ ֆիքսված ժամկետներով միջոցներն ամորտիզացվում են Խմբի ղեկավարության կողմից գնահատված ժամկետներում: Բանկերի նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

Ֆինանսական գործիքներ

Խումբը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր հաշվեկշռում ճանաչում է այն դեպքում, երբ դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների բոլոր կանոնավոր կերպով գնումներն ու վաճառքները արտացոլվում են գործարքի ամսաթվով: Հետագայում իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների կանոնավոր ձեռքբերման գործարքները պայմանագրի օրվա և գործարքի օրվա միջև ընկած ժամանակահատվածում հաշվառվում են նույն սկզբունքով, ինչ-որ ձեռքբերված գործիքները:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչման պահին այն չափվում է իրական արժեքով՝ գումարած՝ այն դեպքում, երբ դա իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի հետ կապված ուղղակիորեն վերագրելի ծախսումները: Սկզբնական ճանաչումից հետո բոլոր ֆինանսական պարտավորությունները, բացի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորությունների (ներառյալ նաև առևտրային նպատակներով պահվող գործիքները), հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորությունները հաշվառվում են իրական արժեքով:

Խումբը իր ֆինանսական ակտիվները դասակարգում է հետևյալ խմբերի՝ վարկեր և դեբիտորական պարտքեր, իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ և մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ: Ներդրումների նման դասակարգումը կատարվում է դրանց ձեռքբերման պահին՝ Խմբի ղեկավարության կողմից սահմանված ուղեցույցի հիման վրա: Խումբը սահմանում է ֆինանսական ակտիվների դասակարգումը սկզբնական ճանաչման ժամանակ և հետագայում յուրաքանչյուր հաշվետու տարում անհրաժեշտության և հնարավորության դեպքում կարող է վերադասակարգել դրանք:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական գործիքներ (շարունակություն)

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ

Այս խմբում հաշվառվում են առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվները և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվները: Ֆինանսական ակտիվը հաշվառվում է այս խմբում, եթե այն ձեռք է բերվում կարճ ժամկետում վաճառքի նպատակով կամ եթե այդպես է որոշվում ղեկավարության կողմից ակտիվի ձեռքբերման պահին:

Իր բնականոն գործունեության ընթացքում, արտարժույթի և կապիտալի շուկաներում, Խումբը հանդես է գալիս որպես ածանցյալ գործիքներով պայմանագրերի կողմ, որոնք ներառում են ֆյուչերսներ, ֆորվարդներ, սվոպեր և օպցիոններ: Նմանատիպ ածանցյալ գործիքները դասակարգվում են որպես առևտրային նպատակներով պահվող և սկզբնապես ճանաչվում են ֆինանսական գործիքների նախնական ճանաչման քաղաքականության համաձայն, իսկ հետագա չափումը իրականացվում է իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է շուկաներում գնանշվող գների միջոցով կամ այնպիսի մոդելների կիրառմամբ, որոնց հիմքում ընկած են շուկաների ընթացիկ վիճակների գնահատումները և բազային գործիքների պայմանագրային գները և այլ գործոններ: Դրական իրական արժեք ունեցող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվ, իսկ բացասական իրական արժեքով ածանցյալ գործիքները՝ որպես պարտավորություն:

Այլ ֆինանսական գործիքներում ներառված ածանցյալ գործիքները դիտարկվում են որպես առանձին ածանցյալ գործիքներ, եթե դրանց գծով ռիսկերը և բնութագրիչները սերտորեն կապված չեն հիմնական պայմանագրերի ռիսկերի և բնութագրիչների հետ, և հիմնական պայմանագրերը չեն հաշվառվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Պարունակվող ածանցյալ գործիքը հանդիսանում է հիբրիդ ֆինանսական գործիքի բաղադրիչ, որը ներառում է ինչպես հիմնական պայմանագիրը, այնպես էլ ածանցյալ բաղադրիչը, ինչի արդյունքում հիբրիդ գործիքի որոշ դրամական հոսքեր փոփոխվում են նույն ձևով, ինչ առանձին ածանցյալ գործիքինը:

Ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, երբ.

- Այդպես վարվելը զգալիորեն կնվազեցնի չափման անհամապատասխանությունները, որոնք կառաջանային, եթե ածանցյալ գործիքները համարվեին առևտրային նպատակներով պահվող, իսկ բազիսային ֆինանսական գործիքները հաշվառվեին ամորտիզացված արժեքով, ինչպես հաճախորդներին և բանկերին տրված վարկերը կամ պարտքային արժեթղթերի տեսքով թողարկված արժեթղթերը:
- Որոշ ներդրումներ, ինչպես օրինակ կապիտալի գործիքներում կատարված ներդրումները, որոնք փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային քաղաքականության համաձայն հաշվառվում են իրական արժեքով և կառավարչական անձնակազմին զեկուցվում են այդ արժեքով, համարվում են իրական արժեքով՝շահույթի կամ վնասի միջոցով չափվող, և
- Ֆինանսական գործիքները, ինչպիսիք են մեկ կամ ավելի ներառված ածանցյալներ պարունակող պարտքային արժեթղթերը, որոնք էականորեն ազդում են դրամական հոսքերի վրա, համարվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Ածանցյալ գործիքները նույնպես դասակարգվում են որպես առևտրային նպատակներով պահվող, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք օգտագործվում են հեջավորման նպատակով: Առևտրային նպատակներով պահվող ակտիվներից շահույթը և վնասը արտացոլվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում:

Վարկեր և դեբիտորական պարտքեր

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Խմբի կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական գործիքներ (շարունակություն)

Վարկեր և դեբիտորական պարտքեր (շարունակություն)

Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ՝ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում: Այնուհետև վարկերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հաճախորդներին տրված ֆիքսված մարման ժամկետ չունեցող վարկերը հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հաճախորդներին տրված վարկերի գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից կորուստների պահուստների գումարներով:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքներ

Վաճառքի համար մատչելի ներդրումները պարտքային, ինչպես նաև կապիտալի գործիքներում կատարված այն ներդրումներն են, որոնք Խումբը մտադիր է պահել անորոշ ժամկետով, և որոնք կարող են վաճառվել իրացվելիության կարիքների բավարարման համար, ինչպես նաև տոկոսադրույքների, փոխարժեքների կամ բաժնետոմսերի գների փոփոխությունների դեպքում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները նախնական ճանաչումից հետո հաշվառվում են իրական արժեքով, ընդ որում օգուտներն ու վնասները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում մինչև ներդրումների օտարումը կամ արժեզրկումը, որի ընթացքում նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներառված կուտակված շահույթը կամ վնասը վերադասակարգվում է համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ամեն դեպքում, արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում: Վաճառքի համար մատչելի կապիտալի գործիքների գծով շահաբաժինները համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում գրանցվում են այն ժամանակ, երբ Խումբը իրավունք է ձեռք բերում ստանալու այդ շահաբաժինները:

Կարգավորվող ֆինանսական շուկաներում ակտիվորեն վաճառվող ֆինանսական ակտիվի իրական արժեքը որոշվում է հաշվետու ամսաթվին բորսայի փակման պահին այդ ակտիվի գծով գնանշվող գների միջոցով: Ակտիվ շուկա չունեցող գործիքների իրական արժեքը որոշվում է գնահատման մոդելների միջոցով: Նման մոդելները ներառում են վերջին շուկայական անկախ գործառնությունները, էականորեն չտարբերվող ակտիվների շուկայական գներին հղում կատարելը, զեղչված դրամական հոսքերի վերլուծությունը: Հակառակ դեպքում ներդրումները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով արժեզրկումից կորուստները:

Ֆինանսական գործիքների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Խումբն իրականացնում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի՝ արժեզրկված լինելու օբյեկտիվ հայտանիշների գնահատում:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվներ

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը համարվում են արժեզրկված և արժեզրկումից կորուստը ճանաչվում է միայն այն դեպքում, եթե կա արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ, որպես ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձությունների («ծախսային իրադարձություն») արդյունք, և այդ իրադարձությունը կամ իրադարձություններն ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվից կամ ակտիվների խմբից ակնկալվող ապագա դրամական հոսքերի վրա, որոնք կարելի է արժանահավատորեն չափել:

Արժեզրկումից առաջացած վնասի օբյեկտիվ հայտանիշը կարող է ներառել վարկառուի կամ վարկառուների խմբի զգալի ֆինանսական դժվարությունները, տոկոսագումարների և մայր գումարների վճարման պարտավորությունների խախտումների առկայությունը, այն հավանականությունը, որ տեղի կունենա սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմակերպում, ինչպես նաև դիտարկվող շուկաներից տեղեկատվությունն ակնկալվող ապագա դրամական հոսքերի չափերի նվազման վերաբերյալ, օրինակ՝ ժամկետանց վճարումների մակարդակի փոփոխություն կամ տնտեսական պայմանների փոփոխություն, որոնք կապված են ակտիվների արժեզրկման հետ:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական գործիքների արժեզրկում (շարունակություն)

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվներ (շարունակություն)

Խումբն ի սկզբանե գնահատում է արժեզրկված լինելու հայտանիշները անհատապես՝ էական ակտիվների համար, և անհատապես կամ խմբային՝ բոլոր ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես էական չեն համարվում: Եթե Խումբը որոշում է, որ անհատապես գնահատված ֆինանսական ակտիվի համար չկա արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ, անկախ այն հանգամանքից, էական է այն, թե՝ ոչ, այդ ակտիվը ներառվում է համանման վարկային ռիսկերի բնութագրիչներ ունեցող ֆինանսական ակտիվների խմբում և դրանց արժեզրկված լինելը գնահատվում է խմբային հիմունքով: Ակտիվները, որոնց արժեզրկված լինելը գնահատվում է անհատական հիմունքով և որոնց նկատմամբ ճանաչվում են արժեզրկումից վնասներ, չպետք է գնահատվեն խմբային հիմունքով:

Արժեզրկված լինելու օբյեկտիվ հայտանիշների առկայության դեպքում արժեզրկումից վնասը իրենից ներկայացնում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի տարբերությունը, որը չի ներառում վարկերից՝ ապագայում սպասվող կորուստները, որոնք Խումբը դեռ չի կրել: Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկման պահուստի միջոցով, իսկ արժեզրկումից ծախսն արտացոլվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում: Եթե վարկը կամ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումն ունի փոփոխական տոկոսադրույք, ցանկացած արժեզրկումից վնաս չափելու համար զեղչման դրույքը պայմանագրով որոշված ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքն է: Խումբը կարող է արժեզրկումը չափել գործիքի իրական արժեքի հիման վրա՝ օգտագործելով տեսանելի շուկայական գինը:

Գրավով ապահովված ֆինանսական ակտիվների ապագա հոսքերի ներկա արժեքի հաշվարկը հիմնվում է այն դրամական հոսքերի վրա, որոնք կարող են ստացվել գրավի իրացումից, նվազեցված գրավի բռնագանձման և օտարման ծախսումներով՝ անկախ բռնագանձման հավանականությունից:

Արժեզրկման խմբային գնահատման նպատակով ֆինանսական ակտիվները խմբավորվում են Խմբի ներքին վարկային դասակարգման հիման վրա, որը հաշվի է առնում վարկային ռիսկի այնպիսի բնութագրիչներ, ինչպիսիք են ակտիվի տեսակը, ոլորտը, աշխարհագրական դիրքը, գրավի տեսակը, ժամկետայնության կարգավիճակը և այլ կապակցված գործոններ:

Ֆինանսական ակտիվների խմբի գծով ապագա դրամական հոսքերը, որոնց արժեզրկված լինելը գնահատվում է խմբային հիմքով, որոշվում են ակտիվների գծով կրած վնասների պատմական վիճակագրության հիման վրա, որի գծով պարտքային ռիսկի բնութագրիչները համարժեք են համանման ակտիվների խմբի բնութագրիչներին: Պատմական վիճակագրական շարքերը ճշգրտվում են ընթացիկ շուկայական իրավիճակը արտացոլելու համար՝ չեզոքացնելու պատմական վիճակագրական շարքերի հիմքում ընկած այն շուկայական պայմանների ազդեցությունը, որոնք տվյալ ժամանակաշրջանում գոյություն չունեն, և արտացոլելու պատմական վիճակագրական շարքերի հիմքում չընդգրկված շուկայական նոր պայմանները:

Ապագա դրամական հոսքերում գնահատման փոփոխությունները արտացոլում և համապատասխանում են դիտարկվող շուկաներում յուրաքանչյուր տարվա տեղեկատվության փոփոխությանը (օրինակ, գործազրկության մակարդակի փոփոխություն, անշարժ գույքի գներ, ապրանքների գներ, վճարունակության կարգավիճակ կամ այլ գործոններ, որոնք վկայում են խմբի կրած վնասների և դրանց չափի մասին): Ապագա դրամական հոսքերի գնահատման համար օգտագործվող մեթոդաբանությունը և ենթադրությունները պարբերաբար վերանայվում են Խմբի կողմից՝ վնասների իրական և գնահատված արժեքների միջև տարբերությունները նվազեցնելու նպատակով:

Վարկերը համապատասխան պահուստների հետ միասին դուրս են գրվում, եթե ապագայում չկա վարկը հավաքագրելու իրատեսական հեռանկար, և երբ բոլոր գրավներն օգտագործվել են կամ փոխանցվել Խմբին: Եթե հաջորդող տարում գնահատված արժեզրկման գծով ծախսը ավելանում կամ նվազում է արժեզրկման ճանաչումից հետո կատարված իրադարձությունների պատճառով, նախկինում ճանաչված արժեզրկման ծախսը ավելացվում կամ նվազեցվում է՝ պահուստի գումարը ճշտելով: Եթե ապագա դուրսգրումը հետագայում վերականգնվում է, ապա վերականգնված գումարը կրեդիտագրվում է պահուստի հաշվին:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական գործիքների արժեզրկում (շարունակություն)

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված վնասը փոխանցելով շահույթի կամ վնասի կազմ՝ որպես վերադասակարգման ճշգրտում: Կուտակված վնասը, որը այլ համապարփակ եկամտից վերադասակարգվում է շահույթի կամ վնասի կազմ, հանդիսանում է ձեռքբերման արժեքի՝ հանած մայր գումարի մարումները ու ամորտիզացիան, և ընթացիկ իրական արժեքի՝ հանած նախկինում շահույթի կամ վնասի կազմում ճանաչված արժեզրկումից կորուստները, միջև տարբերությունը: Ժամանակի արժեքին վերագրելի արժեզրկման գծով պահուստի փոփոխություններն արտացոլվում են որպես տոկոսային եկամտի բաղադրիչ:

Եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկված վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթի իրական արժեքն աճում է, և այդ աճը հնարավոր է անկողմնակալորեն վերագրել շահույթի կամ վնասի կազմում արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը, ապա արժեզրկումից կորուստը հակադարձվում է, իսկ հակադարձված գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այնուհանդերձ, արժեզրկված վաճառքի համար մատչելի բաժնային արժեթղթի իրական արժեքի ցանկացած հետագա վերականգնումը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը, կամ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ

- ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքի ժամկետն ավարտված է,
- Խումբը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամբողջությամբ և առանց էական ուշացման փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրի համաձայն, ինչպես նաև,
- Խումբը կամ (ա) փոխանցել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) ոչ փոխանցել և ոչ էլ պահպանում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողության իրավունքը:

Այն դեպքում, երբ Խումբը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը և ոչ փոխանցել ու ոչ էլ պահպանում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, և չի փոխանցել ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ակտիվը հաշվառվում է ակտիվում Խմբի շարունակվող մասնակցության սահմաններում: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի նկատմամբ երաշխիքի ձև, այդպիսի մասնակցությունը չափվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնով՝ ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեք և Խմբից պահանջվող փոխհատուցման առավելագույն գումար:

Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի գծով թողարկված/կամ գնված օպցիոնի ձև, ներառյալ՝ դրամական միջոցներով մարվող օպցիոններ կամ նմանատիպ գործիքներ, Խմբի մասնակցության չափը որոշվում է այն գումարի չափով, որով Խումբը կարող է հետ գնել փոխանցված ակտիվը, բացառությամբ իրական արժեքով գնահատված ակտիվի գծով վաճառված օպցիոնի, ներառյալ՝ դրամական միջոցներով մարվող օպցիոններ կամ նմանատիպ գործիքներ, երբ շարունակվող մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ փոխանցված ակտիվի իրական արժեք և օպցիոնի իրագործման գին:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ մարվում, չեղյալ է համարվում կամ ուժի մեջ լինելու ժամկետը լրանում է:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում (շարունակություն)

Նույն վարկատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորության փոխարինումը այլ ֆինանսական պարտավորությամբ (որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ երբ կատարվում է գործող պարտավորության պայմանների էական փոփոխություն) հանգեցնում է հին պարտավորության ապաճանաչմանը և նոր պարտավորության ճանաչմանը, իսկ համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը արտացոլվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում:

Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսավորման գործառնություններ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակում են հաշվառվել հաշվեկշռում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում որպես առանձին հաշվեկշռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է բանկերի կամ հաճախորդների միջոցների կազմում:

Հետադարձ վաճառքի պայմանագրով արժեթղթերի ձեռքբերումը (հակադարձ ռեպո) արտացոլվում է բանկերի նկատմամբ պահանջների կամ հաճախորդներին տրված վարկերի կազմում՝ կախված իրավիճակից: Վաճառքի գնի և ձեռք բերման գնի միջև տարբերությունը դիտարկվում է որպես տոկոսային եկամուտ և հաշվեգրվում ռեպո պայմանագրի ժամկետի ընթացքում՝ արդյունավետ եկամտաբերության մեթոդով:

Եթե հակադարձ ռեպո պայմանագրով գնված ակտիվները վաճառվեն երրորդ կողմին, արժեթղթերի վերադարձի պարտավորությունը արտացոլվում է առևտրային գործառնությունների գծով պարտավորություններում՝ իրական արժեքով:

Վարձակալություն

Ֆինանսական վարձակալություն՝ Խումբը, որպես վարձատու

Խումբը ճանաչում է ֆինանսական վարձակալությունից դեբիտորական պարտքը վարձակալության զուտ ներդրման գումարի չափով՝ վարձակալության պայմանների ուժի մեջ մտնելու պահից սկսած: Այս գործառնությունները ներկայացվում են որպես հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ: Ֆինանսական եկամուտը ճանաչվում է վարձակալության ընթացքում այնպես, որ ապահովի անփոփոխ պարբերական դրույք վարձակալության շրջանակներում չմարված զուտ ներդրումների նկատմամբ: Սկզբնական ուղղակի ծախսերը ներառվում են ստացվելիք գումարների կազմում սկզբնական ճանաչման ժամանակ:

Երբ վարձակալման պայմանագրերի դադարեցման արդյունքում Խմբի տիրապետության տակ է անցնում գրավի առարկան, այդ ակտիվները չափվում են իրացման զուտ արժեքից և պատմական ամորտիզացված արժեքից նվազագույնով:

Գործառնական վարձակալություն՝ Խումբը, որպես վարձատու

Խումբը ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացնում է գործառնական վարձակալության առարկա հանդիսացող ակտիվը՝ ըստ ակտիվի բնույթի: Գործառնական վարձակալությունից ստացվող վարձակալական եկամուտը ճանաչվում է շահույթում կամ վնասում որպես այլ եկամուտ՝ հավասարաչափ վարձակալության ժամկետի ընթացքում: Վարձակալներին տրամադրված զեղչերի համախառն գումարը արտացոլվում է որպես վարձակալությունից եկամտի նվազեցում՝ հավասարաչափ վարձակալության ժամկետի ընթացքում: Գործառնական վարձակալության պայմանագրի հետ կապված սկզբնական ուղղակի ծախսումները ավելացվում են վարձակալության առարկա հանդիսացող ակտիվի հաշվեկշռային արժեքին:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ, բացի հողից և շենքերից: Բանկի շենքերը ներկայացված են իրական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը: Հողը հաշվառվում է իրական արժեքով և ունի անսահմանափակ օգտակար ծառայության ժամկետ և, հետևաբար, չի ամորտիզացվում:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայություն (տարի)	*Դրույք (%)*
Շենքեր	20	5
Համակարգիչներ և հեռահաղորդակցման սարքեր	1-5	20-100
Տրանսպորտային միջոցներ	5	20
Կահույք և պարագաներ	5	20
Այլ հիմնական միջոցներ	5	20

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալման ժամկետի և հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով: Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները հաշվառվում են փաստացի ծախսերի և արժեզրկումից կորուստների տարբերությամբ: Շինարարական աշխատանքների ավարտից հետո ակտիվները փոխանցվում են հիմնական միջոցներին և հաշվառվում են իրենց մնացորդային արժեքով: Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները չեն ամորտիզացվում, քանի դեռ պատրաստ չեն օգտագործման համար:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ դրանք բավարարում են ակտիվի ճանաչման չափանիշին: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

Հողը և շինությունները վերագնահատվում են կանոնավոր կերպով մոտավորապես 3-5 տարին մեկ: Վերագնահատման հաճախականությունը կախված է ակտիվների իրական արժեքի փոփոխություններից: Այն դեպքում, երբ նշանակալի շեղում կա վերագնահատված ակտիվների իրական արժեքի և նրանց մնացորդային արժեքների միջև, ապա անցկացվում է հետագա վերագնահատում: Վերագնահատումը կատարվում է հիմնական միջոցների ողջ դասի համար:

Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի աճը արտացոլվում է կապիտալում՝ հիմնական միջոցների վերագնահատման պահուստում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է ֆինանսական արդյունքներում տվյալ ակտիվի գծով նախկինում ճանաչված վերագնահատումից վնասը. այս դեպքում վերագնահատումից աճը նույնպես ճանաչվում է ֆինանսական արդյունքներում: Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի նվազումը ճանաչվում է ֆինանսական արդյունքներում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է նախկինում տվյալ ակտիվի գծով կապիտալում ճանաչված վերագնահատումից աճը:

Հիմնական միջոցների օգտագործմանը զուգահեռ, տվյալ ակտիվի վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության տարբերությունը փոխանցվում է չբաշխված շահույթին:

Վերագնահատված գումարով հաշվառվող հիմնական միջոցների իրացման դեպքում իրացված հիմնական միջոցների վերագնահատման պահուստը փոխանցվում է չբաշխված շահույթին:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից, արտոնագրերից և այլն:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում՝ 1-ից 10 տարվա ընթացում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հայտանիշեր: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական հաշվետու տարվա վերջում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

Բռնագանձված ակտիվներ

Որոշ դեպքերում, ակտիվները բռնագանձվում են վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Շնորհներ

Ակտիվներին վերաբերող շնորհները ներառվում են այլ պարտավորություններում և կրեդիտագրվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությանը գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Ներգրաված միջոցներ

Ներգրաված միջոցները, որոնք ներառում են ՀՀ կառավարության և Կենտրոնական բանկի, ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների հաշիվները, թողարկված արժեթղթերը և ստորադաս փոխառությունները, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրաված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

Ֆինանսական երաշխիքներ

Ֆինանսական երաշխիքների պայմանագրերը այն պայմանագրերն են, որոնք պահանջում են, որ երաշխիք տրամադրողը փոխհատուցի երաշխիքը ստացողին կոնկրետ պարտապանի կողմից պարտքային գործիքի ժամկետներին համաձայն վճարումները ժամանակին չկատարելու պատճառով վերջինիս կողմից կրած վնասների դիմաց: Նման ֆինանսական երաշխիքներ տրամադրվում են բանկերին, ֆինանսական և այլ կազմակերպություններին՝ որպես հաճախորդների վարկերի, օվերդրաֆտները և այլ բանկային գործիքների ապահովման միջոց:

Ֆինանսական երաշխիքների պայմանագրերը համախմբված ֆինանսական հաշվետվություններում սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով «Այլ պարտավորություններ» հոդվածում՝ միջնորդավճարների գծով ստացված վարձատրության չափով: Պարտավորության սկզբնական ճանաչումից հետո Խումբը յուրաքանչյուր երաշխիքի պայմանագրի գծով իր պարտավորությունը գնահատում է հետևյալ երկու մեծություններից առավելագույնով. միջնորդավճարների գծով ամորտիզացված վարձատրությունը և երաշխիքի պայմանագրից առաջացող ֆինանսական պարտավորությունը մարելու համար անհրաժեշտ ծախսումների լավագույն գնահատականը:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Խումբն ունի գործող իրավական կամ կառուցողական պարտավորություն, որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտավորության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Կապիտալ

Կանոնադրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը և չմարվող արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը վերաբերող ուղղակի ծախսերը, բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության միավորման դեպքերի, արտացոլվում են սեփական կապիտալում որպես թողարկման գծով մուտքերից նվազեցում: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես էմիսիոն եկամուտ:

Էմիսիոն եկամուտ

Էմիսիոն եկամուտը ներառում է բաժնետոմսերի թողարկումից ստացված ցանկացած հավելավճար: Գործարքի գծով ցանկացած ծախսում, որը կապված է բաժնետոմսերի թողարկման հետ, նվազեցվում է էմիսիոն եկամուտից:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվետու ամսաթվի դրությամբ շահաբաժինները նվազեցվում են սեփական կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն միայն այն դեպքում, երբ դրանք հայտարարվել են մինչև հաշվետու ամսաթիվը ներառյալ: Մինչև հաշվետու ամսաթիվը առաջարկված կամ հաշվետու ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը առաջարկված կամ հայտարարված շահաբաժինները բացահայտվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում:

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստը օգտագործվում է գույքի իրական արժեքի աճը և նույն ակտիվի՝ նախկինում կապիտալում ճանաչված աճի սահմաններում իրական արժեքի նվազեցումը գրանցելու համար:

Վաճառքի համար մատչելի արժեթղթերի վերագնահատման պահուստ

Այս պահուստը արտացոլում է վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքի փոփոխությունները:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները հաշվանցվում են պարտավորություններով և ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում արտացոլվում են զուտ մնացորդով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավական հիմք և գոյություն ունի դրանք զուտ հիմքով մարելու կամ միաժամանակ ակտիվները իրացնելու և պարտավորությունները մարելու մտադրություն:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՍ-ների կամ համանման գործարքների խմբից առաջացող օգուտների և վնասների համար, օրինակ՝ Խմբի առևտրային գործունեությունից:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ստանդարտներ, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել

Ստորև ներկայացված են ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք թողարկվել են, բայց Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների հրապարակման օրվա դրությամբ դեռևս ուժի մեջ չեն մտել: Խումբը մտադիր է կիրառել այդ ստանդարտները ուժի մեջ մտնելուց հետո:

ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ»

2014 թ. հուլիսին ՀՀՄՍԽ-ն թողարկեց ՖՀՄՍ 9 «*Ֆինանսական գործիքներ*» ստանդարտի վերջնական տարբերակը, որն արտացոլում է ֆինանսական գործիքներին վերաբերող նախագծի բոլոր փուլերն ու փոխարինում է ՀՀՄՍ 39-ին՝ «*Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը*», և ՖՀՄՍ 9-ի բոլոր նախկին տարբերակներին: Ստանդարտը ներկայացնում է դասակարգման, չափման, ինչպես նաև արժեզրկման և հեջավորման հաշվառման նոր պահանջներ:

Դասակարգման և չափման տեսանկյունից, նոր ստանդարտը կպահանջի գնահատել բոլոր ֆինանսական գործիքները, բացի բաժնային գործիքներում ներդրումներից և ածանցյալ գործիքներից, համակցված մոտեցման հիման վրա՝ ելնելով ընկերության ակտիվները կառավարելու բիզնես մոդելի և գործիքների դրամական հոսքերի բնութագրիչներից: ՀՀՄՍ 39-ի չափման կատեգորիաները կփոխարինվեն հետևյալ կատեգորիաներով. իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող, և ամորտիզացված արժեքով չափվող գործիքներ: ՖՀՄՍ 9-ը նաև թույլ կտա ընկերություններին շարունակել դասակարգել (առանց հետագա վերադասակարգման հնարավորության) իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող, և ամորտիզացված արժեքով չափվող գործիքների սահմանմանը համապատասխանող գործիքները որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա վերացնում կամ էապես նվազեցնում է չափման կամ ճանաչման անհետևողականությունը: Առևտրական նպատակով չպահվող բաժնային գործիքներում ներդրումները կարող են դասակարգվել (առանց հետագա վերադասակարգման հնարավորության) որպես իրական արժեքով՝այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող գործիքներ, առանց օգուտների կամ վնասների հետագա վերադասակարգման ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ֆինանսական պարտավորությունների հաշվառման ՀՀՄՍ 39-ի պահանջները էապես չեն փոխվի:

ՖՀՄՍ 9-ը նաև հիմնովին կփոխի վարկերի արժեզրկման նկատմամբ մոտեցումը: Ստանդարտը կփոխարինի ՀՀՄՍ 39-ի՝ կրած վնասների մոտեցումը ակնկալվող վարկային կորուստների (ԱՎԿ) մոտեցմամբ: Խմբից կպահանջվի ակնկալվող վարկային կորուստների պահուստ ճանաչել բոլոր վարկերի և պարտքային ֆինանսական գործիքների համար, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ինչպես նաև վարկային պարտավորվածությունների և ֆինանսական երաշխիքի պայմանագրերի համար: Պահուստը գնահատվում է ակնկալվող վարկային կորուստների հիման վրա՝ կապված հաջորդ տասներկու ամիսների ընթացքում դեֆոլտի հավանականության հետ: Այն դեպքերում, երբ գործիքի սկզբնական ճանաչումից հետո տեղի է ունեցել վարկային ռիսկի էական աճ, պահուստը գնահատվում է ակտիվի ամբողջ ժամկետի ընթացքում դեֆոլտի հավանականության հիման վրա:

ՖՀՄՍ 9-ը ուժի մեջ է մտնում 2018 թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Ավելի վաղ կիրառությունը թույլատրվում է: Ստանդարտը կիրառվում է հետընթաց կարգով, սակայն համեմատական տեղեկատվության վերահաշվարկ չի պահանջվում. կիրառման ազդեցությունը անցման ամսաթվին (2018թ. հունվարի 1) կգրանցվի չբաշխված շահույթում: ՖՀՄՍ 9-ի կիրառումն ազդեցություն կունենա Խմբի ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման վրա, սակայն ազդեցություն չի ունենա Խմբի ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման վրա: Խումբն ակնկալում է, որ ՖՀՄՍ 9-ը նշանակալի ազդեցություն կունենա իր կապիտալի վրա: Այդ ազդեցության չափը որոշելու համար Խմբին անհրաժեշտ է կատարել ավելի մանրամասն վերլուծություն, որը հաշվի կառնի ամբողջ հիմնավորված և կիրառելի տեղեկությունը՝ներառյալ հեռանկարային տարրեր: Խումբը սկսել է ՖՀՄՍ 9-ին անցման պրոցեսը: Խումբն ակնկալում է ավարտին հասցնել կիրառումը մինչև 2017թ.-ի ավարտը:

ՖՀՄՍ 15 «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»

2014 թ.-ի մայիսին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է «*Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ*» ՖՀՄՍ 15-ը, որն ուժի մեջ է մտնում 2018 թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ վաղաժամկետ կիրառման հնարավորությամբ: ՖՀՄՍ 15-ը սահմանում է հասույթի ճանաչման սկզբունքները և կիրառելի է լինելու հաճախորդների հետ բոլոր պայմանագրերի համար: Սակայն, տոկոսային եկամուտները և միջնորդավճարները, որոնք ֆինանսական գործիքների և վարձակալության անբաժան մասն են կազմում, կշարունակեն գտնվել ՖՀՄՍ 15-ի շրջանակներից դուրս և կկարգավորվեն այլ կիրառելի ստանդարտներով (օր.՝ ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 16՝ «*Վարձակալություն*»):

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ստանդարտներ, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել (շարունակություն)

ՖՀՄՍ 15 ստանդարտի համաձայն հասույթը պետք է ճանաչվի, երբ ապրանքներն ու ծառայությունները փոխանցվել են, այն փոխհատուցման գումարի չափով, որի նկատմամբ իրավունքը ընկերությունն ակնկալում է ստանալ այդ ապրանքների և ծառայությունների փոխանցման դիմաց: Ստանդարտը նաև կիստակեցնի հասույթի բնույթի, չափի և ժամկետների, ինչպես նաև հասույթի և հաճախորդներից համապատասխան դրամական հոսքերի վերաբերյալ ցանկացած անորոշության բացահայտումների մի շարք համապարփակ պահանջներ:

Խումբը չի նախատեսում ՖՀՄՍ 15-ի վաղաժամկետ ընդունում և ներկայումս գնահատում է դրա ազդեցությունը:

ՖՀՄՍ 16 «Վարձակալություն»

ՀՀՄՍԽ-ն հրապարակել է ՖՀՄՍ 16 «*Վարձակալություն*» վարձակալության հաշվառման նոր ստանդարտը 2016թ. հունվարին: Նոր ստանդարտը զգալիորեն չի փոխում վարձակալության հաշվառումը վարձատուների համար: Սակայն, այն պահանջում է վարձակալներին ճանաչել վարձակալությունների մեծ մասը իրենց հաշվապահական հաշվեկշռում որպես վարձակալության գծով պարտավորություն՝ համապատասխան ակտիվի օգտագործման իրավունքի հետ մեկտեղ: Վարձակալները պետք է կիրառեն միասնական մոդել բոլոր ճանաչված վարձակալությունների համար, բայց ինարավորություն կունենան չճանաչել կարճաժամկետ վարձակալությունները և ցածր արժեք ունեցող ակտիվների վարձակալությունը: Ընդհանուր առմամբ, շահույթի կամ վնասի ճանաչման կարգը նման է այսօրվա ֆինանսական վարձակալության հաշվառմանը՝ շահույթ կամ վնասում տոկոսային եկամտի և մաշվածության առանձին ճանաչմամբ:

ՖՀՄՍ 16 ուժի մեջ է մտնում 2019 թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Վաղաժամկետ կիրառումը թույլատրելի է, պայմանով, որ հասույթի նոր ստանդարտ ՖՀՄՍ 15-ը կիրառվում է նույն օրը:

Խումբը չի նախատեսում ՖՀՄՍ 16 վաղաժամկետ ընդունում և ներկայումս գնահատում է դրա ազդեցությունը:

ՀՀՄՍ 12-ի փոփոխություններ՝ «Շահութահարկ»

2016թ. հունվարին, փոփոխություններ հրապարակելով ՀՀՄՍ 12-ում, ՀՀՄՍԽ-ն հստակեցրեց ֆինանսական հաշվառման նպատակով իրական արժեքով չափվող, սակայն հարկային հաշվառման նպատակով սկզբնական արժեքով չափվող պարտքային գործիքների գծով հետաձգված հարկային ակտիվների հաշվառման պահանջները: Այս փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2017 թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար և վաղաժամկետ կիրառումը թույլատրելի է: Խումբը ակնկալվում է, որ փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա իր համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՀՀՄՍ 7-ի փոփոխություններ՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին»

2016թ. հունվարին ՀՀՄՍԽ-ն հրապարակեց «*Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին*» ՀՀՄՍ 7-ում փոփոխություններ՝ նպատակ ունենալով բարելավել ֆինանսավորման գործունեության բացահայտումները և օգնել օգտագործողներին ավելի լավ հասկանալ հաշվետու ընկերության իրացվելիության դիրքերը: Ըստ նոր պահանջների՝ ընկերությունները պետք է բացահայտեն տեղեկատվություն ֆինանսավորման գործունեության հետևանքով իրենց ֆինանսական պարտավորությունների փոփոխությունների վերաբերյալ, ինչպիսիք են փոփոխությունները դրամական հոսքերից և ոչ-դրամական հոդվածներից (օր.՝ օգուտ և վնաս արտարժույթի փոփոխությունից): Փոփոխությունը ուժի մեջ է մտնում 2017թ.-ի հունվարի 1-ից: Խումբը ներկայումս գնահատում է փոփոխության ազդեցությունը:

ՖՀՄԿԿ Մեկնաբանություն 22 – «Արտարժույթով գործարքներ և կանխավճարված փոխհատուցում»

Ուժի մեջ է մտնում 2018 թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ստանդարտներ, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել (շարունակություն)

Մեկնաբանությունը հստակեցնում է, որ ոչ դրամային ակտիվի և ոչ դրամային պարտավորության ապաճանաչումից կանխավճարված փոխհատուցման հետ կապված համապատասխան ակտիվի սկզբնական ճանաչման և ծախսերը և եկամուտները հաշվելու համար օգտագործվող սփոթ փոխարժեքը որոշելիս գործարքի ամսաթիվն այն ամսաթիվն է, երբ կազմակերպությունը սկզբնապես ճանաչում է կանխավճարված փոխհատուցումից առաջացող ոչ դրամային ակտիվը կամ ոչ դրամային պարտավորությունը: Եթե կան մի քանի ստացվող և վճարվող կանխավճարներ, կազմակերպությունը պետք է որոշի գործարքի ամսաթիվը յուրաքանչյուր ստացված կամ վճարված կանխավճարի համար:

Կազմակերպությունները պետք է կիրառեն փոփոխությունները հետընթաց: Կազմակերպություններն ունեն այլընտրանք կիրառել մեկնաբանությունը առաջընթաց դրա շրջանակներում գտնվող բոլոր ակտիվների, ծախսերի և եկամուտների համար, որոնք սկզբնապես ճանաչվել են հետևյալ ժամանակաշրջաններում կամ ավելի ուշ.

(i) Այն հաշվետու ժամանակաշրջանի սկզբում, երբ կազմակերպությունը առաջին անգամ կիրառել է մեկնաբանությունը,

(ii) Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի սկզբում՝ ներկայացված որպես համեմատական տեղեկատվություն այն հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում, երբ կազմակերպությունն առաջին անգամ կիրառում է մեկնաբանությունը: Մեկնաբանության վաղ կիրառումը թույլատրվում է և պետք է բացահայտվի: ՖՀՄՍ առաջին անգամ կիրառողները նույնպես կարող են կիրառել մեկնաբանությունը առաջընթաց ՖՀՄՍ-ին անցման ամսաթվին կամ դրանից հետո սկզբնապես ճանաչված բոլոր ակտիվների, ծախսերի և եկամուտների համար:

Փոփոխությունները նպատակ ունեն նվազեցնել պրակտիկայում առկա տարբերությունները, որոնք առաջանում են արտարժույթով ստացվող կամ վճարվող կանխավճարված փոխհատուցման հետ կապված ոչ դրամային ակտիվի կամ ոչ դրամային պարտավորության ապաճանաչումից համապատասխան ակտիվը, ծախսը կամ եկամուտը (կամ դրա մի մասը) ճանաչելիս: Փոփոխությունները ազդեցություն չունեն Խմբի վրա:

Տարեկան բարելավումներ 2014-2016 ժամանակաշրջան (թողարկված 2016 թ. դեկտեմբերին)

Ստորև 2014-2016 տարեկան բարելավումների ամփոփ նկարագիրն է:

ՖՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների առաջին անգամ որդեգրումը»

Առաջին անգամ կիրառողների համար կարճաժամկետ բացառությունները հանվել են.

- ՖՀՄՍ 1 E3-E7 պարագրաֆները հանվել են, որովհետև դրանք արդեն ծառայել են իրենց նպատակին:
- Փոփոխությունն ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին: Փոփոխությունն ազդեցություն չունի Խմբի վրա:

4. Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումներ

ՖՀՄՍ համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Խմբի ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

4. Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումներ (շարունակություն)

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Հողի և շենքերի վերագնահատում

Հիմնական միջոցների իրական արժեքը որոշվում է շուկայական համեմատական մեթոդով: Այսինքն, գնահատողի կողմից իրականացված գնահատումը հիմնված է շուկայական գործարքների գների վրա՝ էականորեն ճշգրտված գույքի բնույթի, գտնվելու վայրի և պայմանների տարբերություններն արտացոլելու համար: Խումբը ներգրավում է անկախ փորձագետների իր գույքերը գնահատելու համար:

Ֆինանսական գործիքների իրական արժեքը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է իրական արժեքի գնահատման մոդելներ: Սա ներառում է գնահատումների և ենթադրությունների ձևավորում՝ համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում, որքան հնարավոր է, հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կստացվեր շուկայական գործարքների դեպքում (տես՝ Ծանոթագրություն 31):

Ներդրումային արժեթղթերի դասակարգում

Խմբի ներդրումային արժեթղթերը ներառում են ՀՀ պետական և ոչ պետական պարտատոմսերը, ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթերը և կորպորատիվ բաժնետոմսերը: Սկզբնական ճանաչման ժամանակ Խումբը դասակարգում է արժեթղթերը որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ, մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվներ և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, որոնց իրական արժեքի ճշգրտումը ճանաչվում է կապիտալում:

Կապակցված կողմերի հետ գործառնություններ

Իր բնականոն գործունեության ընթացքում Խումբն իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Խումբը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա:

Վարկերի արժեզրկման պահուստ

Խումբը պարբերաբար կատարում է վարկերի և դեբիտորական պարտքերի՝ արժեզրկված լինելու վերլուծություն: Սեփական փորձից ելնելով՝ Խումբը արժեզրկումից վնասները գնահատելիս օգտագործում է իր սուբյեկտիվ դատողություններն այն դեպքերում, երբ վարկառուն ֆինանսական դժվարություն է կրում և համանման վարկառուների վերաբերյալ չկա բավարար փաստացի տեղեկատվություն: Խումբը համանման կերպով գնահատում է ապագա դրամական հոսքերի փոփոխությունները դիտարկվող տեղեկատվության հիման վրա, որը վկայում է վարկառուի պարտավորությունների մարման ոչ բարենպաստ կարգավիճակի, կա՛մ պետական, կա՛մ տեղական տնտեսական պայմանների փոփոխության մասին, որոնք վերագրվում են տվյալ խմբի ակտիվների գծով պարտավորությունների չկատարման դեպքերին: Ղեկավարությունն օգտագործում է գնահատումներ՝ հիմնվելով ակտիվների նկատմամբ համանման վարկային ռիսկի բնութագրերի և վարկերի ու դեբիտորական պարտքերի խմբերի արժեզրկման օբյեկտիվ հայտանիշների պատմական տվյալների վրա: Սեփական փորձից ելնելով՝ Խումբը օգտագործում է իր սուբյեկտիվ դատողությունները դիտարկվող վարկերի և դեբիտորական պարտքերի վերաբերյալ տեղեկատվության ճշգրտման համար՝ ընթացիկ իրավիճակը արտացոլելու նպատակով:

5. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

հազար ՀՀ դրամ	***2016***	***2015***
Կանխիկ դրամական միջոցներ	10,895,951	9,872,122
ԿԲ-ում թղթակցային հաշիվների մնացորդներ, ներառյալ պարտադիր պահուստները	32,812,539	32,111,909
Այլ բանկերում թղթակցային հաշիվների մնացորդներ	1,043,449	4,045,157
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**44,751,939**	**46,029,188**

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ում թղթակցային հաշիվների մնացորդները ներառում են պարտադիր պահուստներ, որոնք հաշվարկվում են Բանկի կողմից ներգրաված դրամային միջոցների 2%-ի և արտարժութային միջոցների 18%-ի չափով (2015թ.՝ դրամային միջոցների 2%-ի և արտարժույթով միջոցների 20%-ի չափով) 20,038,884 հազ. ՀՀ դրամի չափով (2015թ.՝ 19,136,759 հազ. ՀՀ դրամ): Այդ միջոցների ելքագրումն օրենսդրությամբ արգելված չէ, սակայն եթե Բանկը չի ապահովում նվազագույն միջին պահուստի գումարը, ապա կարող են կիրառվել պատժամիջոցներ: Պարտադիր պահուստավորման դիմաց Խումբը տոկոսներ չի ստանում:

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ բանկերում տեղաբաշխված միջոցները 926,842 հազ. դրամ գումարով (89%) կենտրոնացված են երեք բանկերում (2015թ.՝ 3,842,137 հազ. դրամ գումարով (95%) կենտրոնացված են երեք բանկերում):

6. Առևտրային արժեթղթեր

հազար ՀՀ դրամ	***2016***	***2015***
ՀՀ կառավարության կողմից թողարկված պարտքային արժեթղթեր	139,594	207,592
ՀՀ ոչ պետական արժեթղթեր	45,239	–
Ընդամենը առևտրային արժեթղթեր	**184,833**	**207,592**

Ստորև ներկայացվում են նշված արժեթղթերի անվանական տոկոսադրույքները և մարման ժամկետները.

	2016		***2015***	
	%	***Մարման ժամկետ***	***%***	***Մարման ժամկետ***
ՀՀ կառավարության կողմից թողարկված պարտքային արժեթղթեր	10.0-12.0	2018-2023	8.0-11.0	2017-2020
ՀՀ ոչ պետական արժեթղթեր	15.0	2018	–	–

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետգնման պայմանագրերով գրավադրված առևտրային արժեթղթեր չկան (2015թ.՝ 310,177 հազ. ՀՀ դրամ):

7. Պահանջներ բանկերի նկատմամբ

հազար ՀՀ դրամ	***2016***	***2015***
Դեբիտորական պարտքեր վճարահաշվարկային ծառայությունների գծով	1,039,310	635,324
ՀՀ ԿԲ-ում դեպոնացված միջոցներ	720,000	720,000
Բանկերին տրված վարկեր և ավանդներ	4,006	7,147,471
Այլ	557,566	645,902
Ընդամենը պահանջներ բանկերի նկատմամբ	**2,320,882**	**9,148,697**

ՀՀ ԿԲ-ում դեպոնացված գումարը իրենից ներկայացնում է Արքա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդ:

8. Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ

հազար ՀՀ դրամ	***2016***	***2015***
Վարկեր հաճախորդներին	106,201,759	77,667,081
Օվերդրաֆտ	15,672,506	8,927,382
Հակադարձ հետգնման պայմանագրեր	1,373,788	–
Դեբիտորական պարտքեր ֆինանսական վարձակալության գծով	296,207	341,346
Ֆակտորինգ	33,629	33,790
Ակրեդիտիվներ	1,131	1,359
	123,579,020	**86,970,958**
Հանած՝ վարկերի գծով արժեզրկման պահուստ	(4,554,196)	(4,025,331)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	**119,024,824**	**82,945,627**

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի տասը խոշոր վարկառուներին տրամադրված վարկերի կենտրոնացում 49,226,623 հազ. դրամ ընդհանուր գումարով (համախառն վարկային պորտֆելի 40%) (2015թ.՝ 19,975,139 հազ. դրամ կամ համախառն վարկային պորտֆելի 23%): Նշված վարկերի գծով արժեզրկումից պահուստները կազմում են 1,184,887 հազ. դրամ (2015թ.՝ 802,195 հազ. դրամ):

Ստորև ներկայացված է վարկերի արժեզրկման պահուստի համաձայնեցումը՝ ըստ դասերի.

	2016										
հազար ՀՀ դրամ	***Արդյունաբերություն***	***Էներգետիկա***	***Գյուղատնտեսություն (ներառյալ ֆիզիկական անձանց տրված վարկեր)***	***Շինարարություն***	***Առևտուր***	***Տրանսպորտ և կապ***	***Ծառայությունների ոլորտ***	***Սպառողական վարկեր ֆիզիկական անձանց***	***Հիփոթեքային վարկեր***	***Այլ***	***Ընդամենը***
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	**489,597**	**32,692**	**713,091**	**510,612**	**456,156**	**152,657**	**42,174**	**832,722**	**744,254**	**51,376**	**4,025,331**
Տարվա ծախս/(հակադարձում)	79,579	11,964	167,874	191,342	267,843	82,619	85,726	349,968	298,116	(27,132)	**1,507,899**
Դուրսգրում	(33,167)	–	(350,586)	(67,546)	(379,075)	(16,496)	(6,741)	(1,189,372)	(433,277)	(208,875)	**(2,685,135)**
Վերականգնում	11,947	–	203,948	74,082	72,999	1,319	564	683,673	436,030	221,539	**1,706,101**
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**547,956**	**44,656**	**734,327**	**708,490**	**417,923**	**220,099**	**121,723**	**676,991**	**1,045,123**	**36,908**	**4,554,196**
Անհատական հիմունքներով արժեզրկում	516,800	–	706,641	673,202	316,818	215,896	50,184	22,812	758,802	1,269	**3,262,424**
Խմբային հիմունքներով արժեզրկում	31,156	44,656	27,686	35,288	101,105	4,203	71,539	654,179	286,321	35,639	**1,291,772**
	547,956	**44,656**	**734,327**	**708,490**	**417,923**	**220,099**	**121,723**	**676,991**	**1,045,123**	**36,908**	**4,554,196**
Անհատապես արժեզրկված վարկերի համախառն գումար (մինչև անհատական արժեզրկման պահուստով զտելը)	**599,087**	**–**	**963,113**	**1,227,458**	**1,100,650**	**481,764**	**286,596**	**208,204**	**1,724,922**	**140,949**	**6,732,743**

8. Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ (շարունակություն)

	2015										
հազար ՀՀ դրամ	*Արդյունաբերություն*	*Էներգետիկա*	*Գյուղատնտեսություն (ներառյալ ֆիզիկական անձանց տրված վարկեր)*	*Շինարարություն*	*Առևտուր*	*Տրանսպորտ և կապ*	*Ծառայությունների ոլորտ*	*Սպառողական վարկեր ֆիզիկական անձանց*	*Հիփոթեքային վարկեր*	*Այլ*	*Ընդամենը*
2015թ. հունվարի 1-ի դրությամբ	**417,018**	**61,760**	**424,734**	**1,816,376**	**416,020**	**71,937**	**40,285**	**324,902**	**506,462**	**397,774**	**4,477,268**
Տարվա ծախս/ (հակադարձում)	75,186	(29,068)	250,601	451,528	143,696	93,275	(7,390)	1,157,604	428,358	679,159	**3,242,949**
Դուրսգրում	(11,983)	–	(315,987)	(1,757,490)	(198,077)	(27,647)	–	(1,200,262)	(604,143)	(1,333,567)	**(5,449,156)**
Վերականգնում	9,376	–	353,743	198	94,517	15,092	9,279	550,478	413,577	308,010	**1,754,270**
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**489,597**	**32,692**	**713,091**	**510,612**	**456,156**	**152,657**	**42,174**	**832,722**	**744,254**	**51,376**	**4,025,331**
Անհատական հիմունքներով արժեզրկում	468,026	–	672,789	484,570	369,426	139,783	37,834	112,821	519,175	28,439	**2,832,863**
Խմբային հիմունքներով արժեզրկում	21,571	32,692	40,302	26,042	86,730	12,874	4,340	719,901	225,079	22,937	**1,192,468**
	489,597	**32,692**	**713,091**	**510,612**	**456,156**	**152,657**	**42,174**	**832,722**	**744,254**	**51,376**	**4,025,331**
Անհատապես արժեզրկված վարկերի համախառն գումար (մինչև անհատական արժեզրկման պահուստով զտելը)	**591,318**	–	**1,069,098**	**1,105,175**	**1,103,773**	**430,444**	**228,850**	**336,273**	**1,860,820**	**339,614**	**7,065,365**

Հաճախորդներին տրված վարկերը և փոխառությունները՝ ըստ տնտեսության ճյուղերի, ունեն հետևյալ տեսքը.

հազար ՀՀ դրամ	*2016*	*2015*
Սպառողական վարկեր ֆիզիկական անձանց	31,428,298	29,546,709
Հիփոթեքային վարկեր	20,706,198	20,492,115
Տրանսպորտ և կապ	18,626,511	4,395,824
Առևտուր	16,181,097	9,263,987
Ծառայությունների ոլորտ	8,234,515	795,176
Շինարարություն	5,148,382	4,503,695
Էներգետիկա	4,961,672	6,537,726
Գյուղատնտեսություն, ներառյալ ֆիզիկական անձանց տրված վարկեր	4,621,160	4,053,981
Արդյունաբերություն	3,815,017	2,602,907
Այլ	9,856,170	4,778,838
	123,579,020	**86,970,958**
Հանած՝ վարկերի գծով արժեզրկման պահուստ	(4,554,196)	(4,025,331)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	**119,024,824**	**82,945,627**

Վարկերը և դրանց գծով ձևավորված արժեզրկման պահուստները դուրս են գրվում, երբ չկա վարկերի վերականգնման իրատեսական հեռանկար և գրավն ամբողջությամբ իրացվել է կամ փոխանցվել է Խմբին:

8. Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ (շարունակություն)

Տրված վարկերի և փոխառությունների վերլուծությունը ըստ հաճախորդների հետևյալն է.

հազար ՀՀ դրամ	***2016***	***2015***
Մասնավոր ձեռնարկություններ	66,469,244	29,886,465
Ֆիզիկական անձինք	52,380,174	50,341,373
Անհատ ձեռնարկատերեր	4,025,290	2,471,967
Պետական ձեռնարկություններ	701,676	4,261,584
Ոչ առևտրային կազմակերպություններ	2,636	9,569
	123,579,020	**86,970,958**
Հանած՝ վարկերի գծով արժեզրկման պահուստ	(4,554,196)	(4,025,331)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	**119,024,824**	**82,945,627**

Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերը ներառում են հետևյալ հոդվածները.

հազար ՀՀ դրամ	***2016***	***2015***
Հիփոթեքային վարկեր	20,706,198	20,492,115
Վարկային քարտեր	15,524,600	12,895,093
Սպառողական վարկեր	8,969,962	6,373,842
Ոսկու վարկեր	6,593,907	8,248,570
Ավտո վարկեր	339,898	542,277
Գյուղատնտեսական վարկեր	243,646	302,611
Այլ	1,963	1,486,865
Ընդամենը ֆիզիկական անձանց տրված համախառն վարկեր և փոխառություններ	**52,380,174**	

9. Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր

հազար ՀՀ դրամ	***2016***	***2015***
Պետական պարտատոմսեր	13,133,887	3,514,646
ՀՀ ոչ պետական պարտատոմսեր	810,726	389,861
ՏՀՋԿ երկրների բաժնեմասային արժեթղթեր	616,646	612,771
Ներդրումներ ֆոնդերում	310,152	243,794
ՀՀ բաժնեմասային արժեթղթեր	57,794	57,794
Ընդամենը վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր	**14,929,205**	**4,818,866**

Բոլոր պարտքային արժեթղթերը ունեն հաստատուն արժեկտրոններ:

ՀՀ բաժնեմասային արժեթղթերը հաշվառվում են ինքնարժեքով, քանի որ իրական արժեքը չի կարող արժանահավատորեն գնահատվել: Այս ներդրումների համար գնանշվող շուկա չկա, և Խումբը նախատեսում է դրանք պահել երկար ժամկետով:

Չգնանշվող վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերը չափվում են իրական արժեքով գնահատման մեթոդների միջոցով՝ կիրառելով տվյալ պահին գործող շուկայական տոկոսադրույքները ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը զեղչելու նպատակով:

Վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերը ըստ արդյունավետ եկամտաբերության և մարման ժամկետի ներառում է.

	2016		***2015***	
հազար ՀՀ դրամ	***%***	***Մարման ժամկետ***	***%***	***Մարման ժամկետ***
Պետական պարտատոմսեր	4.76-18.35	2017-2036	6.15-16.9	2016-2032
ՀՀ ոչ պետական պարտատոմսեր	6.46-12.34	2017-2019	8.77-15.85	2017-2019

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետգնման պայմանագրերով գրավադրված վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր չկան (2015թ.՝ 5,174,044 հազ. դրամ):

10. Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր

հազար ՀՀ դրամ	***2016***	***2015***
Առևտրային արժեթղթեր (Ծան. 6)	–	310,177
Ներդրումային արժեթղթեր (Ծան. 9)	–	5,174,044
Ընդամենը	**–**	**5,484,221**

Գրավադրված արժեթղթերը այն ֆինանսական ակտիվներն են, որոնք գրավադրված են հետգնման պայմանագրերով ՀՀ ԿԲ-ում՝ գործընկերոջ կողմից վաճառելու և կրկին վերագրավադրելու իրավունքով:

Այս գործարքները կատարվել են ստանդարտ վարկավորման, արժեթղթերի փոխառության և վարկավորման սովորական պայմաններով:

11. Հիմնական միջոցներ

հազար ՀՀ դրամ	*Հող և շենքեր*	*Կահույք և պարագաներ*	*Փոխադրա-միջոցներ*	*Համակարգիչ-ներ և հեռահաղոր-դակցման սարքեր*	*Այլ հիմնական միջոցներ*	*Վարձակա-լած գույքի բարելավում*	*Ընդամենը*
Վերագնահատված կամ սկզբնական արժեք							
2015թ. հունվարի 1-ի դրությամբ	**5,826,965**	**681,158**	**204,820**	**2,462,132**	**643,368**	**911,456**	**10,729,899**
Ավելացումներ	243,744	51,727	3,537	195,007	77,152	123,161	**694,328**
Օտարում	–	(91)	–	(337)	(1,256)	–	**(1,684)**
Վերագնահատման ազդեցություն	(787,305)	–	–	–	–	–	**(787,305)**
Հոդվածների միջև տեղափոխություն	78,143	–	–	–	–	(78,143)	**–**
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**5,361,547**	**732,794**	**208,357**	**2,656,802**	**719,264**	**956,474**	**10,635,238**
Ավելացումներ	19,823	21,008	270	284,535	35,000	9,133	**369,769**
Օտարում	(56,143)	(544)	–	(4,646)	(12,861)	(170)	**(74,364)**
Վերագնահատման ազդեցություն	(191,209)	–	–	–	–	–	**(191,209)**
2016թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	**5,134,018**	**753,258**	**208,627**	**2,936,691**	**741,403**	**965,437**	**10,739,434**
Կուտակված մաշվածություն							
2015թ. հունվարի 1-ի դրությամբ	**128,895**	**495,274**	**145,820**	**1,851,926**	**483,906**	**326,671**	**3,432,492**
Մաշվածություն	137,750	71,953	23,755	248,503	59,022	128,783	**669,766**
Օտարում	–	(46)	–	(326)	(378)	–	**(750)**
Վերագնահատման ազդեցություն	(78,730)	–	–	–	–	–	**(78,730)**
Հոդվածների միջև տեղափոխություն	22,750	–	–	–	1,999	(24,749)	**–**
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**210,665**	**567,181**	**169,575**	**2,100,103**	**544,549**	**430,705**	**4,022,778**
Մաշվածություն	186,575	67,079	23,779	273,744	63,161	125,024	**739,362**
Օտարում	–	(151)	–	(3,746)	(6,336)	–	**(10,233)**
Վերագնահատման ազդեցություն	(397,240)	–	–	–	–	–	**(397,240)**
2016թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	**–**	**634,109**	**193,354**	**2,370,101**	**601,374**	**555,729**	**4,354,667**
Հաշվեկշռային արժեք							
2015թ. հունվարի 1-ի դրությամբ	**5,698,070**	**185,884**	**59,000**	**610,206**	**159,462**	**584,785**	**7,297,407**
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**5,150,882**	**165,613**	**38,782**	**556,699**	**174,715**	**525,769**	**6,612,460**
2016թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	**5,134,018**	**119,149**	**15,273**	**566,590**	**140,029**	**409,708**	**6,384,767**

Ակտիվների վերագնահատում

Խմբի սեփականությունը հանդիսացող շենքերի և հողի վերագնահատումը կատարվել է 2016թ. անկախ գնահատող կազմակերպության կողմից: Ղեկավարությունը հիմք է ընդունել անկախ գնահատողի կողմից ներկայացված արդյունքները շենքերի և հողի իրական արժեքի գնահատման ժամանակ:

Եթե հիմնական միջոցները ներկայացվեին սկզբնական արժեքի մեթոդի կիրառմամբ, ապա հաշվեկշռային արժեքը 2016թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմեր 931,932 հազ. դրամ (2015թ.՝ 995,456 հազ. դրամ):

11. Հիմնական միջոցներ (շարունակություն)

Ակտիվների վերագնահատում (շարունակություն)

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների կազմում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվները կազմում են 2,200,044 հազ. դրամ (2015թ.՝ 1,941,920 հազ. դրամ):

Տեղադրման փուլում գտնվող հիմնական միջոցներ

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների կազմում ներառված տեղադրման փուլում գտնվող ակտիվները կազմում են 139,395 հազ. դրամ (2015թ.՝ 91,843 հազ. դրամ):

Հիմնական միջոցների սահմանափակումներ

2016թ. դեկտեմբերի 31-ի և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չի ունեցել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա հիմնական միջոցներ:

12. Ոչ նյութական ակտիվներ

հազար ՀՀ դրամ	***Արտոնագրեր***	***Համակարգչային ծրագրեր***	***Այլ***	***Ընդամենը***
Սկզբնական արժեք				
2015թ. հունվարի 1-ի դրությամբ	**616,444**	**51,634**	**67,266**	**735,344**
Ավելացումներ	52,828	8,732	49	**61,609**
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**669,272**	**60,366**	**67,315**	**796,953**
Ավելացումներ	16,014	1,200	11,919	**29,133**
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**685,286**	**61,566**	**79,234**	**826,086**
Կուտակված մաշվածություն				
2015թ. հունվարի 1-ի դրությամբ	**424,904**	**32,614**	**24,536**	**482,054**
Ամորտիզացիա	114,476	4,855	8,560	**127,891**
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**539,380**	**37,469**	**33,096**	**609,945**
Ամորտիզացիա	62,230	4,001	10,108	**76,339**
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**601,610**	**41,470**	**43,204**	**686,284**
Հաշվեկշռային արժեք				
2015թ. հունվարի 1-ի դրությամբ	**191,540**	**19,020**	**42,730**	**253,290**
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**129,892**	**22,897**	**34,219**	**187,008**
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**83,676**	**20,096**	**36,030**	**139,802**

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ոչ նյութական ակտիվների կազմում ներառված ամբողջությամբ մաշված ոչ նյութական ակտիվները կազմում են 441,977 հազ. դրամ (2015թ.՝ 349,712 հազ. դրամ):

13. Բռնագանձված ակտիվներ

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի կողմից տրամադրված վարկերի ապահովվածություն հանդիսացող գրավների տնօրինման արդյունքում ձեռք բերված գրավները ներկայացված են ստորև.

հազար ՀՀ դրամ	***2016***	***2015***
Անշարժ գույք	2,353,995	2,217,598
Փոխադրամիջոցներ	17,000	13,400
Այլ	14,654	57,514
Ընդամենը	**2,385,649**	**2,288,512**

Խմբի քաղաքականությունն է՝ հետամուտ լինել գրավի ժամանակին և պատշաճ կերպով իրացմանը: Խումբը հիմնականում չի օգտագործում ոչ դրամային գրավները իր սեփական գործունեության իրականացման նպատակով: Ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները, նվազագույնով: 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում բռնագանձված ակտիվների արժեզրկման գծով ճանաչված ծախսը կազմել է 100,563 հազ. դրամ (2015թ.՝ 62,268 հազ. դրամ):

14. Այլ ակտիվներ

հազար ՀՀ դրամ	***2016***	***2015***
Դեբիտորական պարտքեր	325,778	320,653
Դրամական փոխանցումների գծով դեբիտորական պարտքեր	14,116	29,336
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	**339,894**	**349,989**
Հանած ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով պահուստ	(59,174)	(45,203)
Ընդամենը զուտ այլ ֆինանսական ակտիվներ	**280,720**	**304,786**
Պաշարներ	223,816	191,552
Թանկարժեք մետաղներ	205,035	421,580
Կանխավճարներ մատակարարներին	88,803	68,095
Կանխավճարներ այլ հարկերի գծով	40,006	24,044
Չամորտիզացված ապահովագրության գծով հավելավճար	29,479	27,033
Հաշվարկներ աշխատակիցների հետ	1,645	10,385
Այլ	1,865	1,865
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	**590,649**	**744,554**
Ընդամենը այլ ակտիվներ	**871,369**	**1,049,340**

Այլ ակտիվների գծով արժեզրկման կորուստների պահուստի շարժը հետևյալն է.

հազար ՀՀ դրամ	***Ընդամենը***
2015թ. հունվարի 1-ի դրությամբ	**48,317**
Տարվա ծախս	28,654
Դուրսգրում	(31,768)
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**45,203**
Տարվա ծախս	36,567
Դուրսգրում	(22,596)
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**59,174**

15. Պարտավորություններ բանկերի նկատմամբ

հազար ՀՀ դրամ	*2016*	*2015*
Այլ բանկերի թղթակցային հաշիվներ	224,626	235,850
Հետգնման պայմանագրեր ՀՀ ԿԲ-ի հետ	–	5,302,646
Բանկերից ստացված վարկեր	–	1,800,961
Այլ պարտավորություններ	53,438	91,818
Ընդամենը պարտավորություններ բանկերի նկատմամբ	**278,064**	**7,431,275**

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չունի բանկերից ստացված վարկեր (2015թ.-ին մեկ գործընկերոջ նկատմամբ պարտավորությունը կազմել է բանկերից ստացված վարկերի ընդհանուր գումարի 100%-ը):

16. Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ

	2016			*2015*		
հազար ՀՀ դրամ	**Պայմանա-կան գումար**	**Ակտիվների իրական արժեք**	**Պարտավ. իրական արժեք**	**Պայմանա-կան գումար**	**Ակտիվների իրական արժեք**	**Պարտավ. իրական արժեք**
Վաճառքի համար պահվող ածանցյալ գործիքներ						
Արտարժութային սվոփ	3,396,500	–	31,591	4,160,250	–	14,495
Ընդամենը ածանցյալ պարտավորություններ	**3,396,500**	**–**	**31,591**	**4,160,250**	**–**	**14,495**

17. Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

հազար ՀՀ դրամ	*2016*	*2015*
Իրավաբանական անձիք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	33,450,564	32,545,909
Ժամկետային ավանդներ	35,193,241	16,676,273
	68,643,805	**49,222,182**
Ֆիզիկական անձիք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	21,002,322	18,584,272
Ժամկետային ավանդներ	50,034,090	43,623,681
	71,036,412	**62,207,953**
Ընդամենը պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	**139,680,217**	**111,430,135**

Հաճախորդներից ներգրավված ավանդները հաստատուն տոկոսադրույքով են:

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդների նկատմամբ պարտավորություններում ներառված են 31,826,259 հազ. դրամ գումարով ավանդներ, որոնք հանդիսանում են ապահովածություն տրամադրված վարկերի, ակրեդիտիվների, երաշխիքների և այլ պայմանական պարտավորությունների համար (2015թ.՝ 8,059,007 հազ. դրամ): Այդ ավանդների իրական արժեքը մոտավորապես համարժեք է իրենց հաշվեկշռային արժեքին:

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ամենամեծ տասը հաճախորդների միջոցների ընդհանուր գումարը կազմում է 65,612,790 հազ. դրամ (2015թ.՝ 52,933,661 հազ. դրամ) կամ հաճախորդներից ներգրավված միջոցների ընդհանուր գումարի 47.0% (2015թ.՝ 47.5%):

18. Հարկում

Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է հետևյալ հոդվածներից.

հազար ՀՀ դրամ	***2016***	***2015***
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	409,468	2,369
Նախորդ ժամանակաշրջանի շահութահարկի ճշգրտում	(35,072)	15,540
Հետաձգված հարկի գծով (փոխհատուցում)/ծախս	(430,838)	29,601
Ընդամենը շահութահարկի գծով (փոխհատուցում)/ծախս	**(56,442)**	**47,510**

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2015թ.՝ 20%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկման նպատակով հաշվեկշռային արժեքների միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է՝ կիրառելով 20% հիմնական դրույքաչափը:

Հաշվապահական շահույթի և հարկային ծախսերի միջև թվաբանական համաձայնեցումը ներկայացված է ստորև.

հազար ՀՀ դրամ	***2016***	***2015***
Շահույթ/(վնաս) նախքան հարկումը	**1,508,590**	**(616,073)**
Օրենքով սահմանված հարկի դրույքաչափ	20%	20%
Շահութահարկի գծով տեսական ծախս/(փոխհատուցում)՝ օրենքով սահմանված դրույքաչափով	**301,718**	**(123,215)**
Չնվազեցվող ծախսեր	149,362	155,185
Նախորդ ժամանակաշրջանի շահութահարկի ճշգրտում	(35,072)	15,540
Հետաձգված հարկային ակտիվներ՝ ճանաչված 2016թ.-ին հիմնական միջոցների գնահատված հարկային բազայի ավելացման հետևանքով (տես ստորև)	(472,450)	–
Շահութահարկի գծով (փոխհատուցում)/ծախս	**(56,442)**	**47,510**

2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում Խումբը փոխեց հիմնական միջոցների հարկային բազայի իր գնահատականը ՀՀ հարկային մարմիններից ստացված պարզաբանող գրության հիման վրա: Դրա հետևանքով 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում ճանաչվեց հավելյալ հետաձգված հարկային ակտիվ՝ 472,450 հազ. դրամի չափով:

18. Հարկում (շարունակություն)

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները 2016թ. և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և դրանց շարժը համապատասխան տարիների համար ներկայացված է ստորև.

	Մնացորդը 2015թ. հունվարի 1-ին	*Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում*		*Մնացորդը 2015թ. դեկտեմբերի 31-ին*	*Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում*		*Մնացորդը 2016թ. դեկտեմբերի 31-ին*
		Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	*Այլ համապարփակ եկամտի կազմում*		*Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում*	*Այլ համապարփակ եկամտի կազմում*	
Բռնագանձված ակտիվներ	7,752	11,344	–	19,096	20,113	–	39,209
Այլ ակտիվներ	22,613	(16,359)	–	6,254	20,936	–	27,190
Այլ պարտավորություններ	27,760	7,796	–	35,556	5,607	–	41,163
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	**58,125**	**2,781**	**–**	**60,906**	**46,656**	**–**	**107,562**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	(392,945)	(111,901)	–	(504,846)	(121,430)	–	(626,276)
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր	(83,024)	–	2,542	(80,482)	–	(256,994)	(337,476)
Հիմնական միջոցներ	(951,104)	89,659	141,715	(719,730)	507,340	(42,754)	(255,144)
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	10,061	(10,140)	–	(79)	(1,728)	–	(1,807)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություններ	**(1,417,012)**	**(32,382)**	**144,257**	**(1,305,137)**	**384,182**	**(299,748)**	**(1,220,703)**
Զուտ հետաձգված հարկային պարտավորություններ	**(1,358,887)**	**(29,601)**	**144,257**	**(1,244,231)**	**430,838**	**(299,748)**	**(1,113,141)**

19. Այլ փոխառու միջոցներ

հազար ՀՀ դրամ	*2016*	*2015*
ՀՀ ԿԲ-ից ներգրավված վարկեր	3,977,980	4,031,622
Այլ ֆինանսական հաստատություններից ներգրավված վարկեր	3,762,757	3,339,162
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված վարկեր	1,331,482	2,443,824
ՀՀ կառավարությունից ներգրավված վարկեր	23,989	80,609
Ընդամենը այլ փոխառու միջոցներ	**9,096,208**	**9,895,217**

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ նկատմամբ պարտավորությունները ներառում են Գերմանա-Հայկական հիմնադրամի կողմից Փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման, սպառողական և այլ նպատակով վարկերի տրամադրման համար ներգրավված միջոցները:

Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված վարկերը ներառում են Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկից ստացված վարկերը:

Այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված վարկերը ներառում են Առաջին Հիփոթեքային Ընկերությունից և Բնակարան երիտասարդներին ՈՒՀԿ-ից ներգրավված վարկերը:

19. Այլ փոխառու միջոցներ (շարունակություն)

Պարտադիր պայմաններ

2016թ. դեկտեմբերի 31-ի և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը խախտել է Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (ՎԶԵԲ) հետ կնքված վարկային պայմանագրի որոշակի պարտադիր պայմաններ: Խումբը ՎԶԵԲ-ից չի ստացել պարտքի չվճարված մասն անմիջապես մարման ենթակա հայտարարելու իրավունքից հրաժարման հաստատում, համապատասխանաբար ՎԶԵԲ-ից ստացված վարկը 1,331,482 հազ. դրամ գումարի չափով (2015թ.՝ 2,443,824 հազ. դրամ), դասակարգվել է «Մեկ տարվա ընթացքում» խմբում՝ ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծության ծանոթագրությունում (Ծանոթագրություն 34), և «Ցպահանջ կամ մինչև 1 ամիս» խմբում՝ իրացվելիության ռիսկի վերլուծությունում (Ծանոթագրություն 35-ում):

20. Այլ պարտավորություններ

հազար ՀՀ դրամ	***2016***	***2015***
Վճարվելիք գումարներ	205,996	181,430
Պարտավորություններ անձնակազմի նկատմամբ	193,719	163,489
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	**399,715**	**344,919**
Պարտավորություններ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	404,649	120,504
Ակտիվներին վերաբերող շնորհներ	28,432	30,856
Հարկային պարտավորությունների, տույժերի և տուգանքների գծով պահուստ	–	253,353
Այլ	8,688	6,046
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	**441,769**	**410,759**
Ընդամենը այլ պարտավորություններ	**841,484**	**755,678**

Ակտիվներին վերաբերվող շնորհներ

հազար ՀՀ դրամ	***2016***	***2015***
Հունվարի 1-ի դրությամբ	**30,856**	**33,278**
Եկամտի ճանաչում (Ծան. 27)	(2,424)	(2,422)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**28,432**	**30,856**

21. Ստորադաս փոխառություններ

հազար ՀՀ դրամ	***2016***	***2015***
Ստորադաս փոխառություն ստացված կապակցված կողմից	7,598,818	7,430,709
	7,598,818	**7,430,709**

Ստորադաս փոխառությունն իրենից ներկայացնում է երկարաժամկետ փոխառության համաձայնագիր, որը Խմբի անվճարունակության դեպքում հանդիսանում է ստորադաս Խմբի մնացած պարտավորությունների նկատմամբ՝ ներառյալ ավանդները և այլ պարտքային գործիքները:

Կապակցված կողմից ստացված ստորադաս փոխառությունները թողարկված են ԱՄՆ դոլարով, տարեկան 6.87% միջին արդյունավետ տոկոսադրույքով (2015թ.՝ 6.16%) և 2017թ. հունվարից մինչև 2023թ. փետրվար սահմանված մարման ժամկետով (Ծան. 34):

22. Կապիտալ

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի հայտարարված և ամբողջությամբ վճարված կանոնադրական կապիտալը կազմում է 16,416,633 հազ. դրամ (2015թ.՝ 7,002,033 հազ. դրամ):

Համաձայն Բանկի կանոնադրության, կանոնադրական կապիտալը կազմված է թվով 54,722 սովորական բաժնետոմսերից և 333 արտոնյալ բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը համապատասխանաբար 300,000 դրամ և 100 դրամ անվանական արժեքներով (2015թ.՝ 23,340 սովորական բաժնետոմսեր և 333 արտոնյալ բաժնետոմսեր):

2016թ. դեկտեմբերի 31-ի և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են՝

	2016		*2015*	
հազար ՀՀ դրամ	***Վճարված կանոնադրա-կան կապիտալ***	***Բաժնեմասը վճարված կապիտալում***	***Վճարված կանոնադրա-կան կապիտալ***	***Բաժնեմասը վճարված կապիտալում***
«Ընդվանսդ գլոբալ ինվեստմենտ» ՍՊԸ	13,287,900	80.94	6,651,900	95.00
«Ընդվանսդ գլոբալ ինվեստմենտ» ՍՊԸ (արտոնյալ բաժնետոմսեր)	33	–	33	–
Հայփոստ Թրասթ Մենեջմենթ Բի Վի	2,307,900	14.06	–	–
Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցի	820,800	5.00	350,100	5.00
	16,416,633	**100**	**7,002,033**	**100**

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերը իրավունք ունեն ստանալու շահաբաժին և մեկ բաժնետոմսի դիմաց մեկ ձայնի իրավունք Բանկի տարեկան և ընդհանուր ժողովներում:

Բանկի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն իրավասու մարմնի կողմից շահաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման դեպքում ստանալ տարեկան հաստատագրված շահաբաժին իրենց պատկանող արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքի 20%-ի չափով:

Համաձայն 2016թ. հունիսի 23-ին տեղի ունեցած Բաժնետերերի ժողովի որոշմանը՝ Բանկի կողմից հայտարարված և վճարված շահաբաժինները կազմել են 702,040 հազ. դրամ սովորական բաժնետոմսերի (2015թ.՝ 562,242 հազ. դրամ) և 6.6 հազ. դրամ արտոնյալ բաժնետոմսերի համար (2015թ.՝ 6.6 հազ. դրամ): Շահաբաժինների հայտարարելու դրությամբ մեկ սովորական բաժնետոմսի գծով շահաբաժինները կազմել են 12,829 դրամ (2015թ.՝ 24,089 դրամ), և մեկ արտոնյալ բաժնետոմսի գծով շահաբաժինները՝ 19.8 դրամ (2015թ.՝ 19.8 դրամ):

Բանկի կանոնադրական կապիտալը ձևավորվել է բաժնետերերի դրամական ներդրումներից, ընդ որում, բաժնետերերն ունեն շահաբաժիններ ստանալու և կապիտալը ՀՀ դրամով տեղաբաշխելու իրավունք:

Բանկի բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են չբաշխված շահույթով՝ հաշվարկված համաձայն ՀՀ օրենսդրության: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով: Պահուստը ստեղծվել է համաձայն Բանկի կանոնադրության:

23. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ

Իրավական և հարկային միջավայր

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և ենթարկվում են տարբեր մեկնաբանությունների հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել էական տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

23. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ (շարունակություն)

Իրավական և հարկային միջավայր (շարունակություն)

Այս հանգամանքները Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները: Ղեկավարությունը համոզված է, որ Խումբն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Խմբին ներկայացվող դատական հայցերի առումով Խմբի ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Խմբի ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

Վարկային բնույթի պարտավորություններ, երաշխիքներ և այլ ֆինանսական պայմանագրեր

Իր բնականոն գործունեության ընթացքում Խումբը տրամադրում է իր հաճախորդներին հետհաշվեկշռային ռիսկ պարունակող ֆինանսական գործիքներ: Նշված ֆինանսական գործիքները, որոնք ունեն վարկային ռիսկի տարբեր մակարդակներ, չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում:

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ անվանական կամ պայմանագրային գումարները հետևյալն են՝

հազար ՀՀ դրամ	***2016***	***2015***
Չօգտագործված վարկային գծեր	6,051,046	5,518,235
Երաշխիքներ	3,516,421	1,691,965
Ակրեդիտիվներ	1,787,858	–
Ընդամենը պայմանական և պայմանագրային պարտավորություններ	**11,355,325**	**7,210,200**

Վարկային պարտավորությունների, երաշխիքների և այլ ֆինանսական պայմանագրերի գծով պարտքային ռիսկի առավելագույն չափը լավագույնս ներկայացված է այս պարտավորությունների և պայմանական պարտավորությունների ընդհանուր գումարում:

Գործառնական վարձակալություն՝ Խումբը, որպես վարձակալ

Խումբն իր բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով վարձակալում է շենք և տարածքներ: Չեղյալ չհայտարարվող գործառնական վարձակալության գծով վճարվելիք ապագա ընդհանուր նվազագույն վարձավճարների կառուցվածքը հետևյալն է.

հազար ՀՀ դրամ	***2016***	***2015***
Մինչև 1 տարի	461,427	488,686
1-5 տարի	1,124,462	1,341,220
5 տարուց ավելի	789,268	875,027
Ընդամենը գործառնական վարձակալության գծով պարտավորություններ	**2,375,157**	**2,704,933**

23. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ (շարունակություն)

Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն իրականացրել է ավտոտրանսպորտային միջոցների (նաև ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն), շենքերի և շինությունների, շահագործվող գույքի, բանկին պատկանող բանկոմատների ապահովագրություն, ինչպես նաև Բանկային ռիսկերի համապարփակ, էլեկտրոնային և համակարգչային հանցագործության և տնօրենների և ղեկավարների պատասխանատվության ապահովագրություն: Քանի դեռ Խումբը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

24. Տոկոսային եկամուտ և ծախս

հազար ՀՀ դրամ	***2016***	***2015***
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	12,246,696	12,087,657
Վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթեր	1,206,518	929,731
Պահանջներ բանկերի նկատմամբ	400,786	434,354
Այլ տոկոսային եկամուտ	5,656	6,259
Ընդամենը տոկոսային եկամուտ	**13,859,656**	**13,458,001**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	5,468,707	5,195,451
Այլ փոխառու միջոցներ	808,286	791,850
Ստորադաս փոխառություններ	473,964	765,471
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	36,802	208,954
Ընդամենը տոկոսային ծախս	**6,787,759**	**6,961,726**

2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում անհատապես արժեզրկված վարկերի գծով հաշվեգրված տոկոսային եկամուտը կազմել է 125,489 հազ. դրամ (2015թ.՝ 384,490 հազ. դրամ):

25. Միջնորդավճարների գծով եկամուտ և ծախս

հազար ՀՀ դրամ	***2016***	***2015***
Վճարային քարտերով գործառնություններ	840,208	838,569
Միջնորդավճարներ դրամական փոխանցումներից	567,315	556,537
Դրամարկղային գործառնություններ	327,716	263,601
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	53,267	42,903
Այլ	215,134	186,066
Ընդամենը միջնորդավճարների գծով եկամուտ	**2,003,640**	**1,887,676**
Վճարային քարտերով գործառնություններ	468,958	434,045
Դրամարկղային գործառնություններ	171,014	100,463
Միջնորդավճարներ փոխանցումներից	94,081	84,925
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	681	11,761
Այլ ծախսեր	28,995	25,116
Ընդամենը միջնորդավճարների գծով ծախս	**763,729**	**656,310**

26. Զուտ առևտրային եկամուտ

հազար ՀՀ դրամ	***2016***	***2015***
Արտարժույթի փոխարկումից զուտ օգուտ	1,634,306	1,080,235
Առևտրային արժեթղթերից զուտ օգուտ/(վնաս)	36,940	(3,597)
Ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով զուտ վնաս	(772,190)	(66,690)
Ընդամենը զուտ առևտրային եկամուտ	**899,056**	**1,009,948**

27. Այլ եկամուտ

հազար ՀՀ դրամ	***2016***	***2015***
Ստացված տույժեր և տուգանքներ	781,173	728,931
Ինկասացիայի գծով եկամուտ	33,489	68,380
Թանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ եկամուտ	5,759	40,328
Շահաբաժիններից եկամուտ	4,469	4,133
Շնորհներից եկամուտ	2,424	2,422
Հիմնական միջոցների վաճառքից եկամուտ	330	839
Այլ եկամուտ	116,202	99,246
Ընդամենը այլ եկամուտ	**943,846**	**944,279**

28. Անձնակազմի գծով ծախսեր

հազար ՀՀ դրամ	***2016***	***2015***
Աշխատավարձ	3,346,119	3,105,119
Այլ ծախսեր	33,141	32,817
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	**3,379,260**	**3,137,936**

29. Այլ ծախսեր

հազար ՀՀ դրամ	***2016***	***2015***
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	476,212	485,145
Գովազդի գծով ծախսեր	382,922	248,571
Անվտանգության գծով ծախսեր	191,309	192,454
Հայկական ծրագրերի գծով ծախսեր	168,840	149,388
ԱրՔա-ի գծով ծախսեր	150,881	121,223
Ավանդների ապահովագրման ծախսեր	137,746	112,924
Կապ	129,409	125,030
Հիմնական միջոցների վերանորոգման և սպասարկման ծախսեր	103,686	98,210
Խորհրդատվություն և այլ ծառայություններ	103,599	86,901
Ապահովագրության գծով ծախսեր	92,605	102,505
Գրասենյակային ծախսեր	47,084	48,792
Հարկեր (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	30,587	52,588
Գործուղման ծախսեր	18,417	18,484
Հիմնական միջոցների և հողի վերագնահատումից կորուստներ	7,738	–
Վճարված տուգանքներ	4,866	6,420
Հարկային պարտավորությունների, տույժերի և տուգանքների պահուստ	–	253,353
Բռնագանձված գրավի օտարումից վնաս	–	63,210
Այլ ծախսեր	577,244	390,811
	2,623,145	**2,556,009**

30. Կապակցված կողմերի հետ գործառնություններ

ՀՀՄՍ 24 *«Կապակցված կողմերի բացահայտումներ»* ստանդարտի համաձայն կողմերը համարվում են կապակցված, եթե կողմերից մեկը հնարավորություն ունի վերահսկել կամ նշանակալի ձևով ազդել մյուս կողմի գործառնական և ֆինանսական որոշումների վրա: Ներկայացվող համախմբված ֆինանսական հաշվետվությունների առումով Խմբի կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները: Խմբի վերջնական վերահսկող է հանդիսանում արգենտինացի գործարար Է. Էռնեկյանը:

Խումբն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են վարկերը, ավանդները և այլն: Գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և տարվա եկամուտը և ծախսը հետևյալն են.

30. Կապակցված կողմերի հետ գործառնություններ (շարունակություն)

հազար ՀՀ դրամ	*2016*			*2015*		
	Մայր կազմակեր-պություն	*Ընդհանուր հսկողության տակ գտնվող ընկերություն-ներ*	*Առանցքային ղեկավար անձնակազմ և նրանց ընտանիքի անդամներ*	*Մայր կազմակեր-պություն*	*Ընդհանուր հսկողության տակ գտնվող ընկերություն-ներ*	*Առանցքային ղեկավար անձնակազմ և նրանց ընտանիքի անդամներ*
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն						
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ						
Վարկերի մնացորդը հունվարի 1-ի դրությամբ, համախառն	**12,874**	**4,150,912**	**244,030**	**24,105**	**4,158,979**	**230,850**
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	98,578	55,366,239	544,808	196,042	5,630,317	514,541
Տարվա ընթացքում մարված վարկեր	(106,641)	(30,565,570)	(611,177)	(207,273)	(5,638,384)	(501,361)
Վարկերի մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ, համախառն	**4,811**	**28,951,581**	**177,661**	**12,874**	**4,150,912**	**244,030**
Հանած՝ վարկերի գծով արժեզրկման պահուստ	(48)	(289,516)	(1,777)	(129)	(41,509)	(2,440)
Վարկերի մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**4,763**	**28,662,065**	**175,884**	**12,745**	**4,109,403**	**241,590**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ						
Ավանդների մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	**114,430**	**28,014,157**	**100,227**	**126,002**	**20,306,443**	**147,256**
Տարվա ընթացքում ստացված ավանդներ	14,857,283	675,611,740	3,300,673	2,016,506	711,136,996	1,915,324
Տարվա ընթացքում վճարված ավանդներ	(14,623,608)	(664,823,768)	(3,233,355)	(2,028,078)	(703,429,282)	(1,962,353)
Ավանդների մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**348,105**	**38,802,129**	**167,545**	**114,430**	**28,014,157**	**100,227**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ – ստորադաս փոխառություններ						
Ստորադաս փոխառությունների մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	–	**7,430,709**	–	–	**7,087,003**	–
Տարվա ընթացքում ստացված ստորադաս փոխառություններ	–	338,758	–	–	–	–
Տարվա ընթացքում մարված ստորադաս փոխառություններ	–	–	–	–	–	–
Արտարժույթի վերագնահատումից զուտ արդյունք	–	(170,649)	–	–	343,706	–
Ստորադաս փոխառությունների մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	–	**7,598,818**	–	–	**7,430,709**	–
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն						
Տոկոսային եկամուտ	–	1,198,588	15,493	1,612	382,627	17,203
Միջնորդավճարների գծով եկամուտ	431	19,576	784	675	24,448	478
Այլ եկամուտ	2,190	105,412	1,362	2,685	87,789	865
Տոկոսային ծախս	(18,641)	(1,417,551)	(9,382)	–	(1,571,553)	(5,999)
Արժեզրկումից կորուստներ	81	(248,007)	663	112	81	(132)
Այլ ծախսեր	(8,660)	(51,908)	(29,465)	–	(84,783)	(217)

30. Կապակցված կողմերի հետ գործառնություններ (շարունակություն)

Առանցքային ղեկավար անձնակազմին (և նրանց մոտ ընտանիքի անդամներին) տարվա ընթացքում տրամադրված վարկերը ունեն 1-ից 20 տարի մարման ժամկետ (2015թ.՝ 1-ից 20 տարի) և դրանց տոկոսադրույքը կազմում է 6-22% (2015թ.՝ 6-24%): Այլ կապակցված կողմերին տարվա ընթացքում տրամադրված վարկերը ունեն 1-ից 20 տարի մարման ժամկետ (2015թ.՝ 1-ից 20 տարի) և դրանց տոկոսադրույքը կազմում է 7-22% (2015թ.՝ 8-22%): Վարկերը ապահովված են ոսկով, անշարժ գույքով, դրամական միջոցներով և այլ ակտիվներով:

Առանցքային ղեկավար անձնակազմի (և նրանց մոտ ընտանիքի անդամների) ավանդներն ունեն 1-ից 2 տարի մարման ժամկետ (2015թ.՝ 1-3 տարի) և դրանց տոկոսադրույքը կազմում է 6-15% (2015թ.՝ 1-15%): Այլ կապակցված կողմերի ավանդներն ունեն 1-13 տարի մարման ժամկետ (2015թ.՝ 1-13 տարի) և դրանց տոկոսադրույքը կազմում է 6-15% (2015թ.՝ 3-15%):

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

հազար ՀՀ դրամ	***2016 թ.***	***2015 թ.***
Աշխատավարձ և այլ կարճաժամկետ վճարումներ	405,774	381,303
Ընդամենը առանցքային կառավարչական անձնակազմի փոխհատուցում	**405,774**	**381,303**

31. Իրական արժեքի չափում

Խմբի Խորհուրդը սահմանում է ինչպես իրական արժեքի պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, օրինակ՝ չգնանշվող առևտրային և վաճառքի համար մատչելի արժեթղթերի համար, չգնանշվող ածանցյալ ֆինանսական գործիքների, այնպես էլ իրական արժեքի ոչ պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, օրինակ՝ վաճառքի համար պահվող ակտիվների համար:

Անկախ գնահատողները ներգրավվում են նշանակալի ակտիվների, ինչպես օրինակ՝ անշարժ գույքի և բռնագանձված գույքի գնահատման համար: Անկախ գնահատողների ընդգրկումը յուրաքանչյուր տարի որոշվում է Խմբի Խորհրդի կողմից:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին ղեկավարությունը վերլուծում է այն ակտիվների և պասիվների արժեքների փոփոխությունները, որոնք ենթակա են վերագնահատման Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն: Այս վերլուծությունների համար ճշտվում են հիմնական տվյալները, որոնք կիրառվել են նախորդ գնահատման ժամանակ՝ համադրելով գնահատման հաշվարկի տեղեկատվությունը պայմանագրերի և այլ համապատասխան փաստաթղթերի հետ: Ղեկավարությունը Խմբի անկախ գնահատողների հետ միասին համեմատում է յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության իրական արժեքի փոփոխությունը յուրաքանչյուր համապատասխան արտաքին աղբյուրների հետ՝ որոշելու համար տվյալ փոփոխության հիմնավորված լինելը:

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում իրական արժեքով չափվող ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ներկայացված են ստորև: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

- Մակարդակ 1 – նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված):
- Մակարդակ 2 – Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):
- Մակարդակ 3 – ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

31. Իրական արժեքի չափում (շարունակություն)

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրական արժեքով և վերլուծում է դրանք՝ ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների, որում իրական արժեքի չափումը դասակարգված է.

	2016թ.			
հազար ՀՀ դրամ	***Մակարդակ 1***	***Մակարդակ 3***	***Ընդամենը իրական արժեք***	***Ընդամենը հաշվեկշռային արժեք***
Ֆինանսական ակտիվներ				
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	–	110,355,038	**110,355,038**	**119,024,824**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	44,751,939	–	**44,751,939**	**44,751,939**
Պահանջներ բանկերի նկատմամբ	–	2,320,882	**2,320,882**	**2,320,882**
Այլ ֆինանսական ակտիվներ	–	280,720	**280,720**	**280,720**
Ֆինանսական պարտավորություններ				
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	–	139,680,217	**139,680,217**	**139,680,217**
Այլ փոխառու միջոցներ	–	9,096,208	**9,096,208**	**9,096,208**
Ստորադաս փոխառություններ	–	7,598,818	**7,598,818**	**7,598,818**
Այլ ֆինանսական պարտավորություններ	–	399,715	**399,715**	**399,715**
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	–	278,064	**278,064**	**278,064**

	2015թ.			
հազար ՀՀ դրամ	***Մակարդակ 1***	***Մակարդակ 3***	***Ընդամենը իրական արժեք***	***Ընդամենը հաշվեկշռային արժեք***
Ֆինանսական ակտիվներ				
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	–	80,922,222	**80,922,222**	**82,945,627**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	46,029,188	–	**46,029,188**	**46,029,188**
Պահանջներ բանկերի նկատմամբ	–	9,148,697	**9,148,697**	**9,148,697**
Այլ ֆինանսական ակտիվներ	–	304,786	**304,786**	**304,786**
Ֆինանսական պարտավորություններ				
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	–	111,430,135	**111,430,135**	**111,430,135**
Այլ փոխառու միջոցներ	–	9,895,217	**9,895,217**	**9,895,217**
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	–	7,431,275	**7,431,275**	**7,431,275**
Ստորադաս փոխառություններ	–	7,430,709	**7,430,709**	**7,430,709**
Այլ ֆինանսական պարտավորություններ	–	344,919	**344,919**	**344,919**

31. Իրական արժեքի չափում (շարունակություն)

Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ (շարունակություն)

Իրական արժեքի չափման մեթոդները և գնահատման մեխանիզմները չեն փոփոխվել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատությամբ:

Չգնանշվող ՀՀ բաժնետոմսեր

Բանկի ներդրումների իրական արժեքը ՀՀ չգնանշվող բաժնետոմսերում չի կարող չափվել և, հետևաբար, դուրս է մնում այս բացահայտումից: Այս ներդրումների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար տե՛ս Ծան. 9-ը:

Ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափում

	2016թ.	
հազար ՀՀ դրամ	***Մակարդակ 3***	***Ընդամենը***
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Հող և շենքեր	5,134,018	5,134,018
Ընդամենը	**5,134,018**	**5,134,018**

	2015թ.	
հազար ՀՀ դրամ	***Մակարդակ 3***	***Ընդամենը***
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Հող և շենքեր	5,150,882	5,150,882
Ընդամենը	**5,150,882**	**5,150,882**

Իրական արժեքի չափումը Մակարդակ 3-ում

Երրորդ մակարդակում դասակարգված Խմբի ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատման մեխանիզմների օգտագործումը հիմնված է այն էական ելակետային տվյալների վրա, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայի տվյալների վրա: Այս մակարդակում ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները շարժը կարելի է համաձայնեցնել հետևյալ կերպ.

հազար ՀՀ դրամ	***Հող և շենքեր***	***Ընդամենը***
Ոչ ֆինանսական ակտիվներ		
2016 հունվարի 1-ի դրությամբ	5,150,882	5,150,882
Ձեռքբերումներ	19,823	19,823
Այլ համապարփակ եկամուտում ճանաչված եկամուտ/վնաս	206,031	206,031
Օտարում	(56,143)	(56,143)
Կուտակված մաշվածություն	(186,575)	(186,575)
Զուտ իրական արժեքը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**5,134,018**	**5,134,018**

հազար ՀՀ դրամ	***Հող և շենքեր***	***Ընդամենը***
Ոչ ֆինանսական ակտիվներ		
2015 հունվարի 1-ի դրությամբ	5,698,070	5,698,070
Ձեռքբերումներ	243,744	243,744
Այլ համապարփակ եկամուտում ճանաչված եկամուտ/վնաս	(708,575)	(708,575)
Հիմնական միջոցների հոդվածների միջև տեղափոխություն	78,143	78,143
Կուտակված մաշվածություն	(160,500)	(160,500)
Զուտ իրական արժեքը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**5,150,882**	**5,150,882**

31. Իրական արժեքի չափում (շարունակություն)

Ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափում (շարունակություն)

Խմբի հիմնական գույքային ակտիվների իրական արժեքը հաշվարկվում է գնահատումների հիման վրա՝ իրականացված անկախ, մասնագիտորեն որակավորված գույքի գնահատողների կողմից: Նշանակալի ելակետային տվյալները և ենթադրությունները մշակվում են համաձայն ղեկավարության հետ սերտ խորհրդակցության: Գնահատման գործընթացները և իրական արժեքի փոփոխությունները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին:

Գնահատումը իրականացվել է՝ կիրառելով համեմատական և եկամտային մեթոդները, որոնք արտացոլում են նմանատիպ գույքերի վերջին շուկայական գործարքների գները և ներառում են վերոնշյալ գույքին հատուկ գործոնների ճշգրտումներ, այդ թվում հողամասի չափը, գտնվելու վայրը, օգտագործման սահմանափակումները, ներկայիս օգտագործումը և այլն:

Հողը և շենքերը վերագնահատվել են 2016թ. դեկտեմբերի 31-ին: Հողը և շենքերը նախկինում վերագնահատվել էին 2015թ. դեկտեմբերի 31-ին.:

Նշանակալի չդիտարկվող ելակետային տվյալը՝ վերոնշյալ գույքին հատուկ գործոնների ճշգրտումն է: Այս ճշգրտումների ծավալն ու ուղղությունը կախված է դիտարկվող շուկայում նմանատիպ գույքի գործարքների քանակից և բնույթից, որոնք կիրառվում են որպես գնահատման մեկնարկային կետ: Չնայած նրան, որ այս ելակետային տվյալը սուբյեկտիվ դատողություն է, ղեկավարությունը գտնում է, որ ողջամտորեն հնարավոր այլընտրանքային ենթադրությունները էական ազդեցություն չեն ունենա ընդհանուր գնահատման վրա:

32. Փոխանցված ֆինանսական ակտիվներ և որպես գրավ պահվող կամ տրամադրված ակտիվներ

Փոխանցված ֆինանսական ակտիվներ, որոնք ամբողջությամբ չեն ապաճանաչվում

Ստորև ներկայացված է ֆինանսական ակտիվների ցանկը 2015թ.-ի դեկտեմբերի 31-ին, որոնք այնպես են փոխանցվել, որ բոլոր փոխանցված ֆինանսական ակտիվները կամ փոխանցված ֆինանսական ակտիվների մի մասը չեն բավարարում ապաճանաչման չափանիշներին (2016թ.-ի դեկտեմբերի 31-ին այդպիսի ակտիվներ չկան):

		2015թ.		
հազար ՀՀ դրամ	***Փոխանցված ֆինանսական ակտիվներ***	***Առևտրային արժեթղթեր***	***Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր***	***Ընդամենը***
Ակտիվների հաշվեկշռային արժեք	Հետգնման պայմանագրեր	310,177	5,174,044	**5,484,221**
Ընդամենը		**310,177**	**5,174,044**	**5,484,221**
Համապատասխան պարտավորությունների հաշվեկշռային արժեք	Հետգնման պայմանագրեր	326,388	4,976,258	**5,302,646**
Ընդամենը		**326,388**	**4,976,258**	**5,302,646**
Զուտ դիրք		**(16,211)**	**197,786**	**181,575**

Հետգնման պայմանագրեր

Հետգնման պայմանագրով վաճառված արժեթղթերը փոխանցվում են երրորդ կողմին, և Խումբը դրա փոխարեն ստանում է դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվներ: Արժեթղթերի արժեքի ավելացման կամ նվազման դեպքում, Խումբը, որոշակի իրավիճակներում, կարող է պահանջել կամ նրանից կարող է պահանջվել դրամական միջոցների տեսքով լրացուցիչ ապահովություն: Խումբը եկել է այն եզրակացության, որ պահպանում է գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները կապված այդպիսի արժեթղթերի հետ, այդ թվում վարկային, շուկայական, երկրային և գործառնական ռիսկերը, և այդ պատճառով չի ապաճանաչել դրանք: Բացի այդ, Խումբը ճանաչում է ֆինանսական պարտավորությունները ստացված դրամական միջոցների նկատմամբ:

32. Փոխանցված ֆինանսական ակտիվներ և որպես գրավ պահվող կամ տրամադրված ակտիվներ (շարունակություն)

Հետգնման պայմանագրեր (շարունակություն)

Նման ձևով, Խումբն իրավունք ունի վաճառել կամ գրավադրել փոխառությամբ ներգրաված կամ հակադարձ հետգնման պայմանագրով ձեռք բերած արժեթղթերը, բայց պարտավոր է վերադարձնել արժեթղթերը: Այս դեպքում գործընկերը պահպանում է սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերը և օգուտները: Հետևաբար, Խումբը չի ճանաչում այդպիսի արժեթղթերը, այլ ճանաչում է առանձին ակտիվ դրամական տեսքով տրամադրված ցանկացած գրավի նկատմամբ:

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չունի հետգնման պայմանագրերով վաճառված արժեթղթեր (2015թ.՝ 5,484,221 հազ. դրամ), որոնք դասակարգված են որպես վաճառքի համար մատչելի արժեթղթեր և առևտրային արժեթղթեր:

Համապատասխան պարտավորությունները, արտացոլված այդպիսի գործարքների գծով ստացված դրամական միջոցների դիմաց, ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված են որպես «Պարտավորություններ բանկերի նկատմամբ» 5,302,646 հազ. դրամ հաշվեկշռային արժեքով:

33. Ֆինանսական գործիքների հաշվանցում

Ստորև ներկայացված աղյուսակները ներառում են ֆինանսական ակտիվները, որոնք հաշվանցվել են ֆինանսական պարտավորությունների հետ ֆինանսական վիճակի մասին համախմբած հաշվետվությունում, ինչպես նաև հաշվանցման վերաբերյալ իրավաբանորեն ամրագրված գլխավոր համաձայնագրերի և նմանատիպ համաձայնագրերի հետևանքները, որոնք չեն հանգեցնում հաշվանցման ֆինանսական վիճակի մասին համախմբած հաշվետվությունում:

հազար ՀՀ դրամ	*Ճանաչված ֆինանսական ակտիվների համախառն գումար*	*Ճանաչված ֆինանսական պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում*	*Ֆինանսական ակտիվների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում*	*Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել*		*Զուտ գումար*
				Ֆինանսական գործիքներ	*Ստացված դրամական ապահովում*	
2016թ.						
Ֆինանսական ակտիվներ						
Հաճախորդներին տրված վարկեր - հակադարձ հետգնման պայմանագրեր	1,373,788	–	1,373,788	(1,373,788)	–	–
Ընդամենը	**1,373,788**	**–**	**1,373,788**	**(1,373,788)**	**–**	**–**

33. Ֆինանսական գործիքների հաշվանցում (շարունակություն)

հազար ՀՀ դրամ	*Ճանաչված ֆինանսական ակտիվների համախառն գումար*	*Ճանաչված ֆինանսական պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում*	*Ֆինանսական ակտիվների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում*	*Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել*		*Զուտ գումար*
				Ֆինանսական գործիքներ	*Ստացված դրամական ապահովում*	
2015թ.						
Ֆինանսական պարտավորություններ						
Հետգնման պայմանագրեր	5,302,646	–	5,302,646	(5,302,646)	–	–
Ընդամենը	**5,302,646**	**–**	**5,302,646**	**(5,302,646)**	**–**	**–**

34. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ակտիվները և պարտավորությունները՝ իրենց սպասվելիք մարման ժամկետների կտրվածքով: Խմբի պայմանագրային չզեղչված պարտավորությունների մարման վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է Ծանոթագրություն 35–ում:

	2016թ.			*2015թ.*		
հազար ՀՀ դրամ	*Մեկ տարվա ընթացքում*	*Մեկ տարուց ավել*	*Ընդամենը*	*Մեկ տարվա ընթացքում*	*Մեկ տարուց ավել*	*Ընդամենը*
Ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	44,751,939	–	**44,751,939**	46,029,188	–	**46,029,188**
Առևտրային արժեթղթեր	5,080	179,753	**184,833**	–	207,592	**207,592**
Պահանջներ բանկերի նկատմամբ	1,043,316	1,277,566	**2,320,882**	7,783,565	1,365,132	**9,148,697**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	61,217,503	57,807,321	**119,024,824**	36,374,317	46,571,310	**82,945,627**
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	577,781	14,351,424	**14,929,205**	660,928	4,157,938	**4,818,866**
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	–	–	**–**	–	5,484,221	**5,484,221**
Հիմնական միջոցներ	–	6,384,767	**6,384,767**	–	6,612,460	**6,612,460**
Ոչ նյութական ակտիվներ	–	139,802	**139,802**	–	187,008	**187,008**
Բռնագանձված ակտիվներ	2,385,649	–	**2,385,649**	2,288,512	–	**2,288,512**
Ընթացիկ ակտիվներ շահութահարկի գծով	–	–	**–**	131,654	–	**131,654**
Այլ ակտիվներ	645,320	226,049	**871,369**	304,786	744,554	**1,049,340**
Ընդամենը	**110,626,588**	**80,366,682**	**190,993,270**	**93,572,950**	**65,330,215**	**158,903,165**
Պարտավորություններ						
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	205,473	72,591	**278,064**	7,350,275	81,000	**7,431,275**
Ածանցյալ պարտավորություններ	31,591	–	**31,591**	14,495	–	**14,495**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	133,818,864	5,861,353	**139,680,217**	106,800,783	4,629,352	**111,430,135**
Այլ փոխառու միջոցներ	2,725,870	6,370,338	**9,096,208**	3,368,929	6,526,288	**9,895,217**
Ընթացիկ պարտավորություններ շահութահարկի գծով	175,744	–	**175,744**	–	–	**–**
Հետաձգված հարկային պարտավորություններ	–	1,113,141	**1,113,141**	–	1,244,231	**1,244,231**
Այլ պարտավորություններ	436,835	404,649	**841,484**	344,919	410,759	**755,678**
Ստորադաս փոխառություններ	1,739,946	5,858,872	**7,598,818**	–	7,430,709	**7,430,709**
Ընդամենը	**139,134,323**	**19,680,944**	**158,815,267**	**117,879,401**	**20,322,339**	**138,201,740**
Զուտ դիրք	**(28,507,735)**	**60,685,738**	**32,178,003**	**(24,306,451)**	**45,007,876**	**20,701,425**

34. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն (շարունակություն)

Մարման ժամկետների միջև տարբերությունների վերլուծությունը չի արտացոլում այն ընթացիկ հաշիվների միջոցների պատմական կայունությունը, որոնց վերադարձը սովորաբար տեղի է ունենում ավելի երկար ժամանակահատվածի ընթացքում, քան ներկայացված է վերոնշյալ աղյուսակում: Վերոնշյալ աղյուսակում այդ մնացորդները ներառված են «Մեկ տարվա ընթացքում» ժամկետայնության խմբի մեջ:

Հաճախորդների նկատմամբ պարտավորությունները ներառում են ֆիզիկական անձանց ժամկետային ավանդները: Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության՝ Խումբը պարտավոր է մարել ֆիզիկական անձանց ժամկետային ավանդները ավանդատուների առաջին իսկ պահանջով:

35. Ռիսկերի կառավարում

Խմբի գործունեությանը բնորոշ են բազմազան ֆինանսական ռիսկեր, և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկերի կառավարման գործընթացը կազմակերպվում է Խմբի առաքելությանը, հիմնական ու միջանկյալ նպատակներին համահունչ և ուղղված է Խմբի ֆինանսական վիճակի բարելավմանը և հեղինակության բարձրացմանը:

Ռիսկերի կառավարման գործընթացի նպատակն է՝ ռիսկերի նվազեցմանն ուղղված համալիր միջոցառումների, սահմանաչափերի և ներքին իրավական ակտերի շրջանակներում օժանդակել Խմբի ղեկավարությանը կայացնելու որոշումներ, որոնք թույլ են տալիս արդյունավետ կառավարել Խմբի և Խմբի հաճախորդների ակտիվների և պարտավորությունների հետ առնչվող ռիսկերը, ինարավոր ռիսկերով պայմանավորված կորուստների բացառման կամ դրանց նվազագույնի հասցնելու միջոցով, շահութաբերության, իրացվելիության և վճարունակության սահմանաչափերի ընդունելի մակարդակի ապահովումը: Ռիսկերի կառավարումը հիմնվում է Խմբի իրավասու մարմնի կողմից հաստատված ընթացակարգերի, կարգերի, նորմատիվների և սահմանաչափերի վրա: Խմբի ռիսկերի բացահայտումը, չափումը, վերահսկումը և մոնիտորինգը կրում են պարբերական և շարունակական բնույթ: Ռիսկերի վերլուծությունը հանդիսանում է Խմբի ռազմավարական պլանավորման, ինչպես նաև ներդրումային ծրագրերի գնահատման մի մասը: Խմբի ռիսկերի կառավարման սկզբունքներին են դասվում. ճգնաժամային իրավիճակներում ռիսկերի կառավարման ոչ ստանդարտ ընթացակարգերի օգտագործումը, ֆինանսական դրության կայունության ստուգման նպատակով սթրես սցենարների պարբերաբար կիրառումը, ակտիվներում բիզնես գործառնությունների և վարկային պորտֆելի տեսակների կենտրոնացումից խուսափելը, Խմբի ակտիվների և պարտավորությունների դիվերսիֆիկացումը, Խմբի կողմից ստանձնված ռիսկերի համապատասխան հաճախականությամբ մոնիտորինգի իրականացումը, բանկային ռիսկերի կենտրոնացված կառավարումը, ռիսկերի կառավարման վարչության և այլ ստորաբաժանումների միջև անընդհատ կապը:

Ռիսկերի կառավարման կառուցվածք

Բանկում ռիսկերի կառավարումը կազմակերպում և կոորդինացնում է Գործադիր տնօրենը՝ Բանկի Խորհրդի կողմից հաստատված ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Բանկում ռիսկերի կառավարումն իրականացվում է հստակ և փաստաթղթավորված կերպով նկարագրված բոլոր բիզնես գործընթացների, վերջիններիս գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերի, բոլոր գործընթացների և գործառնությունների համար սահմանված համապատասխան սահմանաչափերի միջոցով:

Բանկի Խորհուրդ

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության և ռիսկերի կառավարման քաղաքականության, ինչպես նաև ռիսկերի կառավարմանը վերաբերող այլ քաղաքականությունների հաստատման համար, որոնց հիման վրա Բանկի Գործադիր տնօրենը կազմակերպում է ռիսկերի կառավարումը՝ հիմք ընդունելով ռիսկերի կառավարման սահմանաչափերը և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջները:

35. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ռիսկերի կառավարման կառուցվածք (շարունակություն)

Վարչություն

Բանկում ռիսկերի կառավարման կազմակերպման նպատակով Բանկի Վարչությունն իրականացնում է՝

- ճգնաժամային իրավիճակներում Խմբի եկամտաբերության հետ կապված, ինչպես նաև գործառնական, ռազմավարական, վարկանիշային և իրավական ռիսկերին առնչվող Խմբի ռիսկերի կառավարման տեսակետի հիման վրա Խորհրդի համաձայնությամբ համալիր միջոցառումների հաստատումը,
- որոշակի գործարքների հանդեպ արգելքների սահմանումը,
- միջբանկային շուկայում առանց ապահովվածության իրականացվող գործառնությունների սահմանաչափերի սահմանումը,
- բանկային ռիսկերի կարգավորման և վերահսկման ներքին նորմատիվների սահմանումը:

Վարչությունը պատասխանատու է Խմբի ակտիվների և պարտավորությունների կառավարման, ինչպես նաև ողջ ֆինանսական համակարգի համար: Վարչությունը պատասխանատվություն է կրում նաև Խմբի իրացվելիության ֆինանսական ռիսկերի համար: Վարչությանն է վերապահված Խմբի Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի գործառույթները:

Ռիսկերի կառավարման ստորաբաժանում

Ռիսկերի կառավարման վարչության հիմնական գործառույթներն են՝

- Խմբում ռիսկերի կառավարման գործուն մեխանիզմների և գործընթացների մշակումն ու ներդրումը, դրանց ներդրման նկատմամբ հսկողության իրականացումը,
- Խմբի կողմից տրամադրվող վարկերի ռիսկայնության վերլուծությունը և ծրագրային վարկերի տրամադրման գործընթացի նկատմամբ հսկողությունը,
- տրամադրված վարկերի մոնիտորինգը, խնդիրների բացահայտումը և դրանց վերաբերյալ հաշվետվությունների ներկայացումը,
- գրավադրվող գույքի գնահատումների նկատմամբ վերահսկողության իրականացումը և գրավադրված գույքի վերագնահատումների պարբերական իրականացումը,
- Խմբի սեփականությունը հանդիսացող գույքի ապահովագրության գործընթացի կազմակերպումը,
- խնդրահարույց վարկային պորտֆելի կառավարումը:

Ներքին աուդիտ

Խմբի կողմից իրականացվող ռիսկի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում ներքին աուդիտի բաժնի կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը և արդյունավետությունը, այնպես էլ Խմբի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի բաժինը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Բանկի խորհրդին:

Ռիսկի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր

Կախված տարատեսակ գործոններից՝ Խումբը նպատակահարմար է գտնում բանկային ռիսկերը բաժանել արտաքին և ներքին ռիսկերի:

Արտաքին ռիսկերն են՝ երկրի, օրենսդրական, ֆորս մաժորային հանգամանքների, գնային և մրցակցային ռիսկերը:

Խմբի ներքին ռիսկերի դասին են պատկանում իր իսկ գործառնություններից բխող ռիսկերը: Դրանք են վարկային, գործառնական, իրացվելիության, տոկոսադրույքի, արտարժութային, հեղինակության, կապիտալի նվազման, անձնակազմի և փողերի լվացման ռիսկերը:

35. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ռիսկերի կառավարման կառուցվածք (շարունակություն)

Ռիսկի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր (շարունակություն)

Երկրի ռիսկը Բանկը կառավարում է՝ օգտվելով միջազգային վարկանիշային գործակալությունների (Moody's, S&P, Fitch) կողմից միջազգային բանկերին և կազմակերպություններին շնորհված վարկանիշներից: Ռիսկերի կառավարման վարչությունը կատարում է Խմբի գործընկեր արտասահմանյան բանկերի վարկանիշների մոնիտորինգ և եռամսյակը մեկ Բանկի Վարչության հաստատմանն է ներկայացնում այդ բանկերի գծով սահմանաչափերը:

Գնային ռիսկի հնարավոր նվազագույն մակարդակն ապահովվում է հետևյալ միջոցառումների շրջանակներում՝ ֆինանսական շուկայի կառուցվածքային, ծավալային և գնային ցուցանիշների դինամիկայի, առանձին ֆինանսական գործիքների իրացվելիության վերլուծություն, առկա միտումների բացահայտում, հնարավոր կորուստների գնահատում ամսական կտրվածքով կիրառվող սթրես թեստերի միջոցով, ֆինանսական գործիքների գծով սահմանաչափերի (ըստ արժեթղթերով գործառնության տեսակի, ըստ դիլերի, ըստ թողարկողի) սահմանում, արժեթղթերի փաթեթի բազմազանեցում (դիվերսիֆիկացիա)՝ ըստ թողարկողի, տնտեսության ճյուղերի, ժամկետայնության և այլն:

Մրցակցային ռիսկի կառավարումը իրականացվում է բիզնես ստորաբաժանումների և մարքետինգի բաժնի կողմից պարբերաբար իրականացվող Խմբի և այլ բանկերի կողմից առաջարկվող ծառայությունների տեսականու և պայմանների համեմատության միջոցով:

Տոկոսադրույքի ռիսկը Խմբում կառավարվում է Ռիսկերի կառավարման վարչության կողմից՝ մշակելով և կիրառելով տոկոսադրույքի ռիսկի զսպման մեխանիզմեր/մոդելներ, որի հիման վրա էլ Խմբի Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի կողմից ընդունվում են որոշումներ: Ռիսկերի կառավարման վարչությունը տոկոսադրույքի ռիսկի կառավարման համար ընտրել է տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ զգայունության ճեղքվածքի, դյուրացիայի և բազային ռիսկի մոդելները: Տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ զգայունության ճեղքվածքի և դյուրացիայի մոդելները կիրառվում են սթրես սցենարների միջոցով ամսական կտրվածքով: Տոկոսադրույքի բազային ռիսկը կառավարվում է սթրես սցենարի միջոցով տարբեր խստության սցենարների կիրառմամբ եռամսյակային կտրվածքով:

Իրացվելիության ռիսկի կառավարման նպատակով իրականացվում է ակտիվների և պարտավորությունների ժամկետային կառուցվածքի՝ իրացվելիության ճեղքվածքի (liquitidy GAP) ամենօրյա քննարկում, ինչպես նաև բարձր իրացվելի գործիքներում ներդրումների տեսակարար կշռի նկատմամբ հսկողություն: Իրացվելիության ռիսկի զսպման նպատակով Խմբի Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեին Ռիսկերի կառավարման վարչության կողմից ամսական կտրվածքով ներկայացվում է վերլուծություն Խմբի սպասվելիք մարումների, տրամադրվելիք միջոցների և դիրքի վերաբերյալ: Իրացվելիության ռիսկի կառավարումն իր մեջ ներառում է՝ Խմբի ակտիվների գնագոյացման մեխանիզմի մշակումը, բանկին տրամադրված փոխառությունների գումարների, տեսակների կամ համախառն տոկոսային ծախսերի սահմանաչափերը, իրացվելիության պահանջները բավարարելու համար օգտագործվող ֆինանսավորման աղբյուրների կենտրոնացումների սահմանաչափերի կիրառումը, փոխառությունները, ըստ մարման ժամկետների դիվերսիֆիկացնելու պահանջը, իրացվելիության պահանջները բավարարելու համար Խմբի հետ կապված անձանցից (կազմակերպություններից) փոխառու միջոցների ներգրավման սահմանափակումները, տոկոսադրույքի ռիսկը սահմանափակելու սկզբունքներն ու մեթոդները՝ ներառյալ հետհաշվեկշռային հոդվածների հետ առնչվող տոկոսադրույքի ռիսկն ու սահմանաչափերը, տոկոսային մարժայի նպատակային մակարդակը, միջոցների ներգրավման և տեղաբաշխման տոկոսադրույքի վերաբերյալ որոշումների կայացման մեխանիզմներն ու ընթացակարգերը, Խմբի ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ճեղքվածքի թույլատրելի սահմանաչափերը, Խմբի այն ստորաբաժանումների աշխատանքների կոորդինացման եղանակները, որոնք կարող են իրենց կողմից իրականացվող գործառնություններով ազդել Խմբի իրացվելիության մակարդակի վրա, իրացվելիության արտահերթ պահանջները (ինչը կարող է ծագել եկամուտների նվազման, չաշխատող ակտիվների աճի, ավանդների կենտրոնացման) բավարարելու ծրագիրը, Խորհրդին ու գործադիր մարմնին Խմբի իրացվելիության կառավարման վերաբերյալ տրամադրվող համապատասխան հաշվետվությունների ձևերը:

Կապիտալի նվազման ռիսկի չափման մեխանիզմներ են հանդիսանում ներքին և ՀՀ ԿԲ կողմից սահմանված նորմատիվները (կապիտալի համարժեքության, մեկ փոխառուի գծով և այլն): Ամսական կտրվածքով կիրառվող սթրես սցենարները հնարավորություն են տալիս որոշելու կապիտալի առավելագույն կորստի մեծությունը՝ կախված տարբեր հանգամանքներից:

35. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ռիսկերի կառավարման կառուցվածք (շարունակություն)

Ռիսկի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր (շարունակություն)

Անձնակազմի ռիսկը կառավարվում է Անձնակազմի կառավարման բաժնի կողմից, որը պարբերաբար իրականացնում է ՀՀ բանկային համակարգում աշխատատեղերի և դրանց պայմանների ուսումնասիրություն, ինչպես նաև կազմակերպում է աշխատակիցների մասնագիտական գիտելիքների բարձրացմանն ուղղված դասընթացներ՝ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին միջոցների հաշվին:

Փողերի լվացման ռիսկի կառավարումը իրականացվում է ֆինանսական դիտարկումների բաժնի կողմից, որը գործում է փողերի լվացման դեմ պայքարի օրենսդրության և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Ռիսկի կենտրոնացումներ

Ռիսկի կենտրոնացումները առաջանում են, երբ մի շարք գործընկերներ իրականացնում են նմանատիպ գործունեություն, կամ գործունեությունը կատարվում է միևնույն աշխարհագրական շրջանում, կամ նրանք ունեն համանման տնտեսական հատկանիշներ, որի հետևանքով տնտեսական, քաղաքական կամ այլ պայմաններում փոփոխությունները պայմանագրային պարտավորությունների կատարման նրանց ունակության վրա նույն կերպ են ազդում: Ռիսկի կենտրոնացումները արտացոլում են Խմբի գործունեության արդյունքների հարաբերական զգայունությունը պայմանների փոփոխություններին, որոնք ազդեցություն են ունենում կոնկրետ բնագավառի կամ աշխարհագրական շրջանի վրա:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներից խուսափելու համար Խմբի քաղաքականությունը և գործընթացները ներառում են հատուկ սկզբունքներ՝ ուղղված բազմաբնույթ ակտիվների տեսակների, վարկային և արժեթղթերի պորտֆելների պահպանմանը:

Վարկային ռիսկ

Խմբի գործունեությունը ենթարկվում է վարկային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարման հետ, որի արդյունքում Խումբը կարող է վնասներ կրել: Վարկային ռիսկը Խմբի կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Խումբն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Վարկային ռիսկը հիմնականում առաջանում է վարկային գործունեությունից՝ կապված վարկերի և փոխառությունների տրամադրման հետ, և ներդրումային գործունեությունից՝ պայմանավորված Խմբի ակտիվների պորտֆելում պարտքային արժեթղթերի և այլ պարտքային գործիքների առաջացման հետ: Վարկային ռիսկ առկա է նաև մի շարք հետհաշվեկշռային հոդվածներում, ինչպես օրինակ վարկային պարտավորվածությունները: Վարկային ռիսկը կառավարվում է համաձայն Խմբի վարկային քաղաքականության և ոլորտը կարգավորող այլ ներքին իրավական ակտերի: Ռիսկերի կառավարման վարչության կողմից կատարվում է վարկային պորտֆելի օրական կտրվածքով մոնիտորինգ, կառուցված շարքերի հիման վրա վարկային պորտֆելի դինամիկայի հաշվարկ և պորտֆելի որակի վերլուծություն ըստ վարկատեսակների ու մասնաճյուղերի, ինչի հիման վրա կատարվում են վարկային պորտֆելի որակական ցուցանիշների կանխատեսումներ: Ռիսկերի կառավարման վարչությունը իրականացնում է նաև տարբեր վարկատեսակների վարկերի մոնիտորինգ հաստատված ընթացակարգերով, իսկ հարկ եղած դեպքում առանձին վարկերի մոնիտորինգ՝ ելնելով վարկառուի վարկունակության վատթարացումից: Ներքին իրավական ակտերի պահանջների համաձայն՝ վարկային ռիսկը նվազեցնելու նպատակով Խմբի կողմից տրամադրվող վարկերը նաև հաստատվում են ռիսկերի վարչության կողմից: Վարկային ռիսկի կառավարումը և վերահսկումը կենտրոնացած է Ռիսկերի Կառավարման վարչությունում, որը պարբերաբար հաշվետվություն է ներկայացնում գործադիր խորհրդին:

2016թ. և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը լավագույնս ներկայացնում է նրանց վարկային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը՝ առանց հաշվի առնելու պահվող գրավը կամ վարկի որակի բարելավման այլ միջոցները:

35. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ռիսկի կենտրոնացումներ

Աշխարհագրական սեգմենտներ

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս 2016 և 2015թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի՝ վարկային ռիսկի կենտրոնացումները հաշվեկշռային արժեքներով՝ ըստ աշխարհագրական սեգմենտների.

հազար ՀՀ դրամ	*ՀՀ*	*Ոչ ՏՀԶԿ երկրներ*	*ՏՀԶԿ երկրներ*	*Ընդամենը*
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	43,719,886	156,599	875,454	**44,751,939**
Առևտրային արժեթղթեր	184,833	–	–	**184,833**
Պահանջներ բանկերի նկատմամբ	1,569,380	173,042	578,460	**2,320,882**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	92,934,554	15,863,791	10,226,479	**119,024,824**
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	14,312,559	–	616,646	**14,929,205**
Այլ ֆինանսական ակտիվներ	111,623	84	169,013	**280,720**
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**152,832,835**	**16,193,516**	**12,466,052**	**181,492,403**

հազար ՀՀ դրամ	*ՀՀ*	*Ոչ ՏՀԶԿ երկրներ*	*ՏՀԶԿ երկրներ*	*Ընդամենը*
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	42,002,034	1,705,281	2,321,873	**46,029,188**
Առևտրային արժեթղթեր	207,592	–	–	**207,592**
Պահանջներ բանկերի նկատմամբ	8,292,328	194,690	661,679	**9,148,697**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	79,448,566	3,484,204	12,857	**82,945,627**
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	4,206,095	–	612,771	**4,818,866**
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	5,484,221	–	–	**5,484,221**
Այլ ֆինանսական ակտիվներ	120,027	30,959	153,800	**304,786**
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**139,760,863**	**5,415,134**	**3,762,980**	**148,938,977**

Ակտիվները դասակարգվում են՝ հիմք ընդունելով այն երկիրը, որտեղ գործընկեր կողմը գրանցված է:

Ռիսկի սահմանաչափերի վերահսկողություն և զսպողական քաղաքականություն

Խումբը կառավարում է վարկային ռիսկի կենտրոնացումները՝ մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի, ինչպես նաև վարկավորման ճյուղային կամ աշխարհագրական սեգմենտների կտրվածքով:

Խումբը կարգավորում է վարկային ռիսկի մակարդակները՝ մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի, ինչպես նաև վարկավորման ճյուղային կամ աշխարհագրական սեգմենտների կտրվածքով ռիսկի ընդունելի գումարների սահմանաչափեր սահմանելով: Նման ռիսկերը պարբերաբար վերահսկվում են և ենթակա են վերանայման տարեկան կամ ավելի հաճախակի կտրվածքով՝ ելնելով անհրաժեշտությունից: Ըստ վարկատեսակների, արդյունաբերության ճյուղերի և երկրների վարկային ռիսկի սահմանաչափերը հաստատվում են Վարկային կոմիտեի կողմից եռամսյակային կտրվածքով:

Մեկ վարկառուի գծով վարկային ռիսկի չափը, ներառյալ բանկերը և ֆինանսական կազմակերպությունները, լրացուցիչ սահմանափակում է հաշվեկշռային և հետհաշվեկշռային ռիսկերի համար լրացուցիչ սահմանաչափերով:

Վարկային ռիսկը նաև կառավարվում է վարկառուների և պոտենցիալ վարկառուների՝ մայր գումարի և տոկոսների վճարման ունակությունը պարբերաբար վերլուծելով և անհրաժեշտության դեպքում վարկի տրամադրման սահմանաչափերը փոխելով:

35. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ռիսկի սահմանաչափերի վերահսկողություն և զսպողական քաղաքականություն (շարունակություն)

Ստորև ներկայացված են հատուկ հսկողության և զսպողական մի քանի այլ միջոցներ:

Գրավ

Խումբը կիրառում է բազմաթիվ միջոցներ վարկային ռիսկը զսպելու համար: Առավել ավանդական մոտեցում է համարվում տրամադրված դրամական միջոցների դիմաց գրավ վերցնելը, որը նաև համընդհանուր ընդունված գործելակերպ է: Խումբը կանոններ է սահմանում ընդունելի գրավի տեսակների կամ ռիսկերի նվազեցման ուղղությամբ: Վարկերի և փոխառությունների համար գրավի հիմնական տեսակներն են.

- Հիփոթեքային պայմանագրերով գրավադրվող անշարժ գույքը,
- Կազմակերպությունների գործառնական ակտիվները՝ շենքերը, պաշարները և մեքենաները,
- Ոսկին և դրամական միջոցները:

Իրավաբանական անձանց երկարաժամկետ ֆինանսավորումը և վարկավորումը հիմնականում ապահովված են, ֆիզիկական անձանց գծով վերականգնվող վարկային գծերը, որպես կանոն, ապահովված չեն: Ի լրումն, վարկային կորուստը նվազագույնի հասցնելու նպատակով Խումբը վարկառուից լրացուցիչ ապահովություն է պահանջում՝ առանձին վարկերի և փոխառությունների գծով արժեզրկման հայտանիշների ի հայտ գալու դեպքում:

Վարկերի և փոխառություններից բացի այլ ֆինանսական ակտիվների գծով ապահովություն հանդիսացող գրավի տեսակը որոշվում է՝ ելնելով գործիքի էությունից: Հիմնականում բանկերին վարկեր և փոխառություններ տրամադրելու համար գրավներ չեն պահանջվում: Բացառություն են կազմում այն գրավները, որոնք ձեռք են բերվել հետգնման պայմանագրերի և արժեթղթերի փոխառության գործարքներից: Պարտատոմսերը և այլ պարտքային արժեթղթերը հիմնականում ապահովված չեն:

Համախառն վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության.

հազար ՀՀ դրամ	***2016 թ.***	***2015 թ.***
Անշարժ գույքի գրավադրմամբ վարկեր	58,061,771	49,805,080
Դրամական միջոցներով ապահովված վարկեր	27,221,417	6,500,593
Ոսկու գրավով վարկեր	13,485,219	11,191,936
Կազմակերպությունների երաշխիքներով ապահովված վարկեր	5,895,609	4,077,012
Տրանսպորտային միջոցների գրավադրմամբ վարկեր	1,977,955	2,778,470
Արժեթղթերով գրավադրված վարկեր	1,513,789	–
Սարքավորումների գրավադրմամբ վարկեր	1,485,529	2,316,309
Պաշարների գրավադրմամբ վարկեր	896,863	374,423
Այլ գրավներ	5,155,737	6,228,448
Չապահովված վարկեր	7,885,131	3,698,687
Ընդամենը վարկեր և փոխառություններ (համախառն)	**123,579,020**	**86,970,958**

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա վարկերի տրամադրման ամսաթվի դրությամբ: Հիմնականում դրանք չեն թարմացվում մինչև վարկերը չգնահատվեն որպես անհատապես արժեզրկված:

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ անհատապես արժեզրկված վարկերի գծով գրավների իրական արժեքը կազմում է 8,147,725 հազ. դրամ (2015թ. 8,082,905 հազ. դրամ):

35. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ռիսկի սահմանաչափերի վերահսկողություն և զսպողական քաղաքականություն (շարունակություն)

Վարկերի հետ կապված պայմանական պարտավորություններ

Այս գործիքների հիմնական նպատակը անհրաժեշտության դեպքում հաճախորդներին միջոցներ տրամադրելն է: Երաշխիքները և ակրեդիտիվները ենթակա են նույն վարկային ռիսկին, ինչ վարկերը: Ապրանքային և փաստաթղթային ակրեդիտիվները Խմբի գրավոր հավաստումներն են հաճախորդների անունից, որոնք թույլ են տալիս չորրորդ անձանց գումարներ ստանալ Խմբից հատուկ պայմանների կատարման դեպքում, ապահովված են դրանց հետ կապված ապրանքների առաքմամբ և, հետևաբար, դրանք ավելի ապահով են, քան ուղղակի տրամադրվող վարկերը:

Վարկի տրամադրման պայմանական պարտավորություններն իրենցից ներկայացնում են վարկային գծերի չօգտագործած մասերը: Այս դեպքում, հնարավոր կորուստների գումարը, որ Խումբը կարող է կրել, հավասար է չօգտագործված վարկային գծերի գումարին:

Սակայն, հնարավոր վնասի իրական գումարն ավելի փոքր է, քան չօգտագործված վարկային գծերի ընդհանուր գումարը, քանի որ վարկային պարտավորությունները տրամադրվում են վարկառուների կողմից վարկերի տրամադրման որոշակի ստանդարտների պահպանման դեպքում: Խումբը հետևում է պարտավորությունների մարման ժամկետներին, քանի որ երկարաժամկետ պարտավորությունները պարունակում են ավելի բարձր վարկային ռիսկ, քան կարճաժամկետ պարտավորությունները:

Արժեզրկման և պահուստավորման քաղաքականություն

Վարկերի արժեզրկումը գնահատելու հիմնական գործոնները հետևյալն են. արդյոք տոկոսների և մայր գումարի վճարումները ժամկետանց են ավելի քան 90 օր, արդյոք հայտնի են գործընկերների որևէ ֆինանսական դժվարությունների, նրանց վարկային վարկանիշի նվազման կամ պայմանագրի սկզբնական պայմանների խախտման դեպքեր: Խումբը գնահատում է վարկերի արժեզրկումը՝ ելնելով արժեզրկված վարկերի ապագա դրամական հոսքերի վերլուծությունից և արժեզրկման հայտանիշեր չունեցող վարկերի գծով կորուստների նախկին փորձից, ցուցաբերելով պահպանողական մոտեցում: Խումբը պահուստների գնահատումն իրականացնում է անհատապես գնահատվող պահուստների և խմբային հիմունքով գնահատվող պահուստների դասակարգմամբ:

Անհատապես գնահատվող պահուստներ

Խումբն անհատապես սահմանում է յուրաքանչյուր անհատապես էական վարկի պահուստի ստեղծման անհրաժեշտությունը: Պահուստների չափի որոշման ժամանակ հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները. գործընկերոջ գործարար-ծրագրի կայունությունը, ֆինանսական բարդությունների ծագման դեպքում նրա ունակությունները բարելավելու գործունեության արդյունքները, սնանկացման պարագայում՝ կանխատեսվող ստացվելիք գումարները և ակնկալվող վճարման ենթակա շահաբաժինների գումարները, ֆինանսական օգնության ներգրավման հնարավորությունը, ապահովման միջոցի իրացման արժեքը, ինչպես նաև դրամական միջոցների ակնկալվող ժամկետները: Արժեզրկումից վնասները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ կամ ավելի հաճախ, եթե չնախատեսված իրավիճակը պահանջում է ավելի մեծ ուշադրություն:

Խմբային հիմունքով գնահատվող պահուստներ

Անհատապես էական չհանդիսացող վարկերի (ներառյալ վարկային քարտերը, հիփոթեքային վարկերը և չապահովված սպառողական վարկերը), ինչպես նաև անհատապես էական, բայց անհատապես արժեզրկման օբյեկտիվ հայտանիշեր չունեցող վարկերի գծով պահուստները գնահատվում են խմբային հիմունքներով: Պահուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, այդ թվում յուրաքանչյուր վարկային պորտֆել թեստավորվում է առանձին:

Խմբային հիմունքով գնահատման դեպքում որոշվում է պորտֆելի արժեզրկումը, որը կարող է տեղի ունենալ նույնիսկ անհատական արժեզրկման օբյեկտիվ հայտանիշերի բացակայության դեպքում: Արժեզրկումից վնասները որոշվում են հետևյալ տեղեկատվության հիման վրա. պորտֆելի գծով նախորդ ժամանակաշրջանների վնասները, ընթացիկ տնտեսական պայմանները, մոտավոր ժամանակահատվածը՝ սկսած հնարավոր կորստի պահից մինչև այն պահը, երբ կհաստատվի, որ այն պահանջում է անհատապես գնահատվող արժեզրկման պահուստի ստեղծում, ինչպես նաև ստացման ենթակա ակնկալվող գումարները և ակտիվի արժեզրկումից հետո արժեքի վերականգնումը:

Ֆինանսական երաշխիքների և ակրեդիտիվների արժեզրկման գնահատումը և պահուստավորումն իրականացվում է նույն հիմունքներով՝ ինչ վարկերինը:

35. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Արժեզրկման և պահուստավորման քաղաքականություն (շարունակություն)

Չարժեզրկված, ոչ ժամկետանց վարկեր և փոխառություններ

Ստորև ներկայացված աղյուսակում բարձր վարկանիշ ունեցող վարկերը իրավաբանական անձանց տրված վարկերն են, որոնք ունեն նվազագույն մակարդակի վարկային ռիսկ, սովորաբար ապահովված բարձրակարգ գրավով (որպես գրավ են հանդիսանում դրամական միջոցներ կամ պետական երաշխիքներ): Լավ ֆինանսական վիճակ և պարտքերի սպասարկման լավ պատմություն ունեցող այլ վարկառուները ընդգրկվում են ստանդարտ վարկանիշի մեջ: Ստանդարտ վարկանիշից ցածր վարկերը կազմում են անհատապես չարժեզրկված, ստանդարտից ցածր գնահատական ունեցող վարկերը:

	Ոչ ժամկետանց և չարժեզրկված			*Ժամկետանց, բայց ոչ անհատապես արժեզրկված*	*Անհատապես արժեզրկված*	
Հազար ՀՀ դրամ	*Բարձր վարկանիշ*	*Ստանդարտ վարկանիշ*	*Ցածր վարկանիշ*			*Ընդամենը*
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	27,221,417	88,178,139	–	1,446,721	6,732,743	**123,579,020**

	Ոչ ժամկետանց և չարժեզրկված			*Ժամկետանց, բայց ոչ անհատապես արժեզրկված*	*Անհատապես արժեզրկված*	
Հազար ՀՀ դրամ	*Բարձր վարկանիշ*	*Ստանդարտ վարկանիշ*	*Ցածր վարկանիշ*			*Ընդամենը*
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	6,500,593	71,630,487	–	1,774,513	7,065,365	**86,970,958**

Ժամկետանց, բայց ոչ անհատապես արժեզրկված վարկեր

Ժամկետանց, բայց ոչ անհատապես արժեզրկված վարկերը և փոխառությունները ներառում են ժամկետանց, բայց ոչ անհատապես արժեզրկված վարկերը: Ժամկետանց, բայց ոչ անհատապես արժեզրկված վարկերի վերլուծությունը՝ ըստ վճարման ուշացման ժամկետների հետևյալն է.

	2016թ.				
հազար ՀՀ դրամ	*Մինչև 30 օր*	*31-60 օր*	*61-90 օր*	*90 օրից առավել*	*Ընդամենը*
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ					
Արդյունաբերություն	–	–	21,986	11,343	**33,329**
Գյուղատնտեսություն	994	–	1,281	21,290	**23,565**
Առևտուր	21,428	–	5,357	73,518	**100,303**
Սպառողական վարկեր ֆիզիկական անձանց	107,802	103,187	58,902	589,546	**859,437**
Հիփոթեքային վարկեր	64,917	18,038	42,889	260,418	**386,262**
Այլ	3,622	–	–	40,203	**43,825**
Ընդամենը	**198,763**	**121,225**	**130,415**	**996,318**	**1,446,721**

35. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Արժեզրկման և պահուստավորման քաղաքականություն (շարունակություն)

Ժամկետանց, բայց ոչ անհատապես արժեզրկված վարկեր (շարունակություն)

	2015թ.				
հազար ՀՀ դրամ	*Մինչև 30 օր*	*31-60 օր*	*61-90 օր*	*90 օրից առավել*	*Ընդամենը*
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ					
Արդյունաբերություն	–	2,693	–	12,796	**15,489**
Գյուղատնտեսություն	11,723	2,513	4,172	34,486	**52,894**
Շինարարություն	12,574	–	–	–	**12,574**
Առևտուր	14,753	1,960	3,495	34,247	**54,455**
Տրանսպորտ և կապ	–	–	–	13,950	**13,950**
Սպառողական վարկեր ֆիզիկական անձանց	249,086	164,168	92,860	652,281	**1,158,395**
Հիփոթեքային վարկեր	147,543	54,720	66,002	172,776	**441,041**
Ծառայությունների ոլորտ	–	144	–	–	**144**
Այլ	898	–	13,249	11,424	**25,571**
Ընդամենը	**436,577**	**226,198**	**179,778**	**931,960**	**1,774,513**

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Խմբի ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի փոփոխության ռիսկն է՝ շուկայական պայմանների՝ ներառյալ արտարժույթի փոխարժեքի և տոկոսադրույքների փոփոխության արդյունքում: Խումբը տարանջատում է շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների: Առևտրային պորտֆելի շուկայական ռիսկը կառավարվում և վերահսկվում է VaR մեթոդով, որը արտացոլում է ռիսկի փոփոխականների միջև կախվածությունը: Ոչ առևտրային պորտֆելը կառավարվում և վերահսկվում է զգայունության վերլուծության միջոցով:

Տոկոսադրույքի փոփոխման ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը Խմբի ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխման արդյունքում: Բանկի Խորհուրդը սահմանել է որոշված ժամկետների համար տոկոսադրույքների ճեղքվածքների չափ: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Խմբի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքներում ենթադրվող փոփոխությունների ազդեցությունն է ժամանակաշրջանի զուտ տոկոսային եկամտի վրա՝ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռում հաշվառվող լողացող տոկոսադրույքով ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով: Կապիտալի զգայունությունը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսադրույքների թույլատրելի փոփոխությունների հանդեպ հաշվարկվում է՝ վերագնահատելով հաստատուն տոկոսադրույքով վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները՝ հիմնվելով այն ենթադրության վրա, որ առկա են եկամտաբերության կորի զուգահեռ տեղաշարժեր:

հազար ՀՀ դրամ	*Բազիսային կետերի ավելացում 2016թ.*	*Զուտ տոկոսային եկամտի զգայունություն 2016թ.*	*Կապիտալի զգայունություն 2016թ..*
Արժույթ			
Հայկական դրամ	3.7%	(18,448)	(1,174,090)
ԱՄՆ Դոլար	1%	–	(142,859)

35. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Շուկայական ռիսկ (շարունակություն)

Տոկոսադրույքի փոփոխման ռիսկ (շարունակություն)

հազար ՀՀ դրամ	***Բազիսային կետերի նվազում 2016թ.***	***Զուտ տոկոսային եկամտի զգայունություն 2016թ..***	***Կապիտալի զգայունություն 2016թ.***
Արժույթ			
Հայկական դրամ	(3.7%)	18,448	1,174,090
ԱՄՆ Դոլար	(1%)	–	142,859

հազար ՀՀ դրամ	***Բազիսային կետերի ավելացում 2015թ.***	***Զուտ տոկոսային եկամտի զգայունություն 2015թ.***	***Կապիտալի զգայունություն 2015թ.***
Արժույթ			
Հայկական դրամ	5%	(16,092)	(131,461)
ԱՄՆ Դոլար	1%	–	(80,656)

հազար ՀՀ դրամ	***Բազիսային կետերի նվազում 2015թ.***	***Զուտ տոկոսային եկամտի զգայունություն 2015թ.***	***Կապիտալի զգայունություն 2015թ.***
Արժույթ			
Հայկական դրամ	(5%)	16,092	131,461
ԱՄՆ Դոլար	(1%)	–	80,656

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկը արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է: Բանկի Խորհուրդը սահմանել է սահմանաչափեր արտարժութային դիրքերի համար:

Ստորև բերված աղյուսակներում ներկայացված են այն արժույթները, որոնցով 2016 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունի էական արժութային դիրքեր՝ ոչ առևտրային դրամական ակտիվների և պարտավորությունների, ինչպես նաև սպասվող դրամական հոսքերի գծով: Կատարված վերլուծությունը արտահայտում է ՀՀ դրամի նկատմամբ՝ արտարժույթի փոխարժեքի հնարավոր տատանումների ազդեցությունը համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա (կախված արտարժույթի փոխարժեքի փոփոխության նկատմամբ ոչ առևտրային դրամական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի զգայունությունից): Բացասական գումարները արտացոլում են համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազումը, դրական գումարները՝ պոտենցիալ զուտ աճը:

	2016թ.		***2015թ.***	
հազար ՀՀ դրամ	***Արտարժույթի փոխարժեքի փոփոխություն %***	***Ազդեցություն մինչև հարկումը շահույթի վրա***	***Արտարժույթի փոխարժեքի փոփոխություն %***	***Ազդեցություն մինչև հարկումը շահույթի վրա***
Արժույթ				
ԱՄՆ դոլար	6%	(34,858)	10%	(117,632)
ԱՄՆ դոլար	(6%)	34,858	(10%)	117,632
Եվրո	11%	377	14%	(17,437)
Եվրո	(11%)	(377)	(14%)	17,437

35. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբը սովորական կամ չկանխատեսված իրավիճակում չի կարողանա կատարել իր պարտավորությունները վերջիններիս մարման ժամանակ: Այդ ռիսկի զսպման նպատակով ղեկավարությունն ապահովել է ֆինանսավորման տարբեր աղբյուրներ՝ ի լրումն արդեն իսկ գոյություն ունեցող բանկային ավանդների հիմնական բազայի: Ղեկավարությունն իրականացնում է նաև ակտիվների կառավարում՝ հաշվի առնելով իրացվելիությունը, և ապագա դրամական հոսքերի և իրացվելիության օրական վերահսկողություն: Այդ գործընթացը ներառում է ակնկալվող դրամական միջոցների գնահատում և առաջնակարգ ապահովման միջոցի առկայություն, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորման ստացման համար:

Խումբը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Բացի այդ Խումբը ՀՀ կենտրոնական բանկում պահում է իր դրամով պարտավորությունների 2%-ի և արտարժույթով պարտավորությունների 18%-ի չափով պահուստավորման գումար: Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում՝ հաշվի առնելով շուկայի հետ ընդհանրապես և Բանկի հետ մասնավորապես կապված սթրես գործոնները:

Խմբի իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար վերջիններիս մարման ժամանակ, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Խումբը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան: Դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ հարաբերակցությունը կազմել է՝

	Սահմանային արժեք	*2016, %*	*2015, %*
Ն21 – Ընդհանուր իրացվելիություն (բարձր իրացվելի ակտիվներ/Ընդհանուր ակտիվներ)	Նվ. 15%	39.01	31.06
Ն22– Ընթացիկ իրացվելիություն (բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ)	Նվ. 60%	116.23	91.02

35. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Իրացվելիության ռիսկ (շարունակություն)

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների

Ստորև ներկայացվում է դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների՝ պայմանագրային չզեղչված պարտավորությունների հիման վրա: Այս պարտավորությունների մարման սպասվելիք ժամկետների համար տե՛ս Ծանոթագրություն 34-ը:

Պարտավորությունները, որոնք ենթակա են ցպահանջ մարման, դասակարգվում են այնպես, ինչպես եթե մարման պահանջը ներկայացված լիներ ամենավաղ հնարավոր ամսաթվով: Սակայն, Խումբը գտնում է, որ շատ հաճախորդներ չեն պահանջի վճարումը այն ամենավաղ հնարավոր ամսաթվի դրությամբ, որով Խումբը պարտավորված կլինի կատարել վճարումը, և աղյուսակը չի արտացոլում ակնկալվող դրամական հոսքերը՝ հաշվարկված Խմբի կողմից՝ անցյալ ժամանակաշրջանների ավանդների պահանջների տեղեկատվության հիման վրա:

	2016թ.					
հազար ՀՀ դրամ	*Ցպահանջ կամ մինչև մեկ ամիս*	*1-3 ամիս*	*3-12 ամիս*	*1-5 ամիս*	*5 տարուց ավելի*	*Ընդամենը*
Ֆինանսական պարտավորություններ						
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	205,473	–	–	–	72,591	**278,064**
Ածանցյալ պարտավորություններ	31,591	–	–	–	–	**31,591**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	54,262,156	26,995,968	55,391,082	6,607,702	161,891	**143,418,799**
Այլ փոխառու միջոցներ	1,427,262	670,893	703,130	7,137,018	1,302,071	**11,240,374**
Այլ ֆինանսական պարտավորություններ	402,055	–	–	–	–	**402,055**
Ստորադաս փոխառություններ	1,742,795	–	–	–	8,316,020	**10,058,815**
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	**58,071,332**	**27,666,861**	**56,094,212**	**13,744,720**	**9,852,573**	**165,429,698**
Պայմանական և պայմանագրային պարտավորություններ	**6,088,226**	**2,253,510**	**2,680,709**	**332,880**	**–**	**11,355,325**

35. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Իրացվելիության ռիսկ (շարունակություն)

	2015թ.					
հազար ՀՀ դրամ	*Պահանջ կամ մինչև մեկ ամիս*	*1-3 ամիս*	*3-12 ամիս*	*1-5 ամիս*	*5 տարուց ավելի*	*Ընդամենը*
Ֆինանսական պարտավորություններ						
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	7,352,805	1,317	–	8,437	72,563	**7,435,122**
Ածանցյալ պարտավորություններ	14,495	–	–	–	–	**14,495**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	55,961,773	9,604,329	43,285,690	5,368,615	152,752	**114,373,159**
Այլ փոխառու միջոցներ	2,483,486	43,474	899,924	6,796,265	1,660,959	**11,884,108**
Այլ ֆինանսական պարտավորություններ	344,919	–	–	–	–	**344,919**
Ստորադաս փոխառություններ	–	–	–	2,473,537	6,818,875	**9,292,412**
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	**66,157,478**	**9,649,120**	**44,185,614**	**14,646,854**	**8,705,149**	**143,344,215**
Պայմանական և պայմանագրային պարտավորություններ	**5,549,315**	**198,583**	**1,166,882**	**295,420**	–	**7,210,200**

Ժամկետայնության վերլուծությունը չի արտացոլում ընթացիկ հաշիվների պատմական կայունությունը: Պատմականորեն դրանց մարումը տեղի է ունեցել ավելի երկար ժամանակահատվածում, քան ցույց է տրվում տվյալ աղյուսակում: Դրանց մնացորդները աղյուսակներում ընդգրկվում են երեք ամսից պակաս ժամանակահատվածի գումարներում:

Հաճախորդներից ներգրավված միջոցների մեջ ներառված են ֆիզիկական անձանց կողմից ներդրված ժամկետային ավանդները: ՀՀ օրենսդրության համաձայն ֆիզիկական անձիք կարող են ցանկացած պահի ետ պահանջել իրենց ժամկետային ավանդները:

Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկերի կառավարման բարձրագույն մարմինը Խմբի Վարչությունն է, որը պատասխանատու է գործառնական ռիսկերի վերահսկման նպատակով մեխանիզմների ստեղծման և զարգացման համար: Գործառնական ռիսկը համակարգի խափանման, աշխատակազմի կողմից թույլ տրված սխալների, խարդախությունների կամ արտաքին գործոնների հետևանքով ինարավոր կորուստի ռիսկն է: Երբ ներքին վերահսկողության համակարգը դադարում է գործել, գործառնական ռիսկերը կարող են վնաս հասցնել համբավին, ունենալ իրավական հետևանքներ կամ բերել ֆինանսական վնասներ: Խումբը չի ենթադրում, որ բոլոր գործառնական ռիսկերը վերացված են, սակայն ներքին վերահսկողության համակարգի օգնությամբ և հնարավոր ռիսկերի որոշման և համապատասխան ռեակցիայի միջոցով Խումբը կարող է կառավարել նման ռիսկերը: Ներքին վերահսկողության համակարգը նախատեսում է պարտավորությունների արդյունավետ բաժանման, մուտքի թույլատվության, համադրման և հաստատման ընթացակարգեր, աշխատակազմի ուսուցում և գնահատում `այդ թվում ներքին աուդիտը:

Գործառնական ռիսկերի կառավարումն իրականացվում է հստակ և փաստաթղթավորված կերպով նկարագրված բոլոր բիզնես գործընթացների, վերջիններիս գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերի, բոլոր գործընթացների և գործառնությունների համար սահմանված համապատասխան սահմանաչափերի, Խմբի կողմից իրականացվող ցանկացած գործարքի ընթացքում կրկնակի ստուգման սկզբունքի միջոցով: Գործառնական ռիսկի առավել արդիական տեսակների կառավարումը նկարագրված է ստորև:

35. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Գործառնական ռիսկ (շարունակություն)

Իրավական ռիսկ. Խմբի բոլոր ստանդարտ պայմանագրերի օրինակելի ձևերը մշակվում են Խմբի Իրավաբանական վարչության կողմից համապատասխան ստորաբաժանման հետ համագործակցության միջոցով և հաստատվում են Խմբի Վարչության կողմից: Խմբի առօրյա գործունեության ընթացքում Խմբի և չորրորդ անձանց հետ փոխհարաբերությունները կարգավորող ոչ ստանդարտ պայմանագրերի կիրառումը թույլատրվում է միայն այդ պայմանագրերի վերաբերյալ Խմբի Իրավաբանական վարչության կողմից եզրակացության առկայության դեպքում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) հետ առնչվող ռիսկերը կառավարվում են Խմբում գործող ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Գործընթացի ռիսկի զսպման մեխանիզմներ են՝

- բոլոր բիզնես գործընթացների կանոնակարգումը ներքին իրավական ակտերի միջոցով,
- Խմբի ակտիվների և առավել կարևոր փաստաթղթերի (այդ թվում՝ վարկային պայմանագիր) ֆիզիկական պաշտպանվածությունը,
- սահմանաչափերի սահմանումը և պահպանումը,
- գույքի և գրառումների համատեղ պահպանումը,
- տվյալների գրանցամատյանների կիրառումը և արխիվացումը,
- գործընթացների ժամանակ երկու աչքի սկզբունքի կիրառումը:

Ներքին աուդիտը պարբերաբար տալիս է Խմբի ներքին հսկողության համակարգի արդյունավետության և Խմբի ռիսկերին համարժեք լինելու գնահատական և հսկողություն է իրականացնում Խմբի գործունեության և գործառնական ռիսկերի նկատմամբ:

Խմբի՝ ստանդարտներին համապատասխանությունը ուղեկցվում է ներքին աուդիտի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Ներքին աուդիտի դիտարկումների արդյունքները քննարկվում են Խմբի ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Դիտարկումների ամփոփագրերը ներկայացվում են Խորհրդին:

36. Կապիտալի համարժեքություն

Խումբն ակտիվորեն կառավարում է կապիտալը իր գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու նպատակով: Խմբի կապիտալի համարժեքությունը վերահսկվում է՝ կիրառելով Բազելյան համաձայնագրով սահմանված կապիտալի գծով սկզբունքներն ու ցուցանիշները և Խմբի վերահսկման նպատակով ԿԲ-ի կողմից սահմանված նորմատիվները:

Խմբի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են՝ համոզվել, որ Բանկի կապիտալը համապատասխանում է վերահսկողի կողմից սահմանած պահանջներին, և որ Խումբն ապահովում է ամուր վարկային վարկանիշ և ուժեղ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու նպատակով:

Խումբը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Խումբը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարիների համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

Խումբը որպես կապիտալ ճանաչում է ՀՀ օրենսդրությամբ բանկերի կապիտալի համար սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն, որոնք հիմնված են Բազելյան համաձայնագրի սկզբունքների վրա, բանկերը պետք է ապահովեն, որպեսզի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշը («կապիտալի համարժեքության ցուցանիշ») բարձր լինի սահմանված նվազագույն մակարդակից: 2016թ. և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սահմանված նվազագույն մակարդակը կազմում է 12%: 2016թ. և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի կապիտալի համարժեքության ցուցանիշը համապատասխանում է սահմանված մակարդակին:

36. Կապիտալի համարժեքություն (շարունակություն)

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 1988թ. Բազելյան համաձայնագրի պահանջների համաձայն հաշվարկված կապիտալի կառուցվածքի վերլուծությունը 2016թ. և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

հազար ՀՀ դրամ	***2016թ.***	***2015թ.***
1-ին դասի կապիտալ	24,379,928	14,917,134
2-րդ դասի կապիտալ	10,925,187	9,852,931
Ընդհանուր կապիտալ	**35,305,115**	**24,770,065**
Ռիսկով կշռված ակտիվներ	**147,033,555**	**110,163,350**
Կապիտալի համարժեքության նորմատիվ	**24.01%**	**22.48%**

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի գնահատման:

Ժամանակաշրջանի ընթացքում Խումբը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ բոլոր պահանջները:

ConverseBank

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն
31 դեկտեմբերի 2017թ.
Կոնվերս բանկՓԲԸ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1

Հազար ՀՀ դրամ	Մանոթ.	01/10/17-31/12/17	01/01/17-31/12/17	01/10/16-31/12/16	01/01/16-31/12/16
Տոկոսային եկամուտ	7	4,899,526	17,624,252	3,636,974	13,859,656
Տոկոսային ծախս	7	(2,178,811)	(8,284,069)	(1,842,451)	(6,787,759)
Զուտ տոկոսային եկամուտ		**2,720,715**	**9,340,183**	**1,794,523**	**7,071,897**
Միջնորդավճարների գծով եկամուտ	8	683,421	2,433,145	543,025	2,003,640
Միջնորդավճարների գծով ծախս	8	(224,363)	(752,304)	(219,311)	(763,729)
Միջնորդավճարների գծով զուտ եկամուտ		**459,058**	**1,680,841**	**323,714**	**1,239,911**
Զուտ առևտրային եկամուտ	9	424,794	1,279,654	519,718	899,056
Արտարժույթի վերագնահատումից զուտ (վնաս)/օգուտ		1,221	(1,128)	(189,369)	(237,214)
Վաճառքի համար մատչելի ներդրումներից զուտ օգուտ		182,959	304,220	11,084	54,229
Այլ եկամուտ	10	242,835	967,294	195,093	943,846
Արժեզրկումից կորուստներ	11	(242,243)	(1,212,874)	(774,801)	(1,544,466)
Անձնակազմի գծով ծախսեր	12	(1,369,896)	(4,298,789)	(885,760)	(3,379,260)
Հիմնական միջոցների մաշվածություն	22	(168,683)	(731,100)	(192,192)	(739,362)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	23	(12,830)	(41,719)	9,961	(76,339)
Այլ ծախսեր	13	(847,088)	(2,872,067)	(762,486)	(2,723,708)
Շահույթ/(վնաս) մինչև շահութահարկ		**1,390,841**	**4,414,515**	**49,485**	**1,508,590**
Շահութահարկի գծով ծախս	14	(245,856)	(788,393)	(251,827)	56,442
Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ/(վնաս)		**1,144,985**	**3,626,122**	**(202,342)**	**1,565,032**
Այլ համապարփակ եկամուտ					
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ					
Հիմնական միջոցների վերագնահատում		-	(61,078)	213,769	213,769
Շահութահարկի ազդեցություն		-	12,010	(42,754)	(42,754)
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող զուտ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		-	(49,068)	171,015	171,015
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ					
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթերի հետ կապված գործառնություններից չիրացված օգուտ/(վնաս)		555,710	1,312,450	127,153	1,339,201
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթերի հետ կապված գործառնություններից իրացված օգուտ՝ վերադասակարգված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում		(182,959)	(304,220)	(11,084)	(54,229)
Շահութահարկի ազդեցություն		(74,550)	(201,646)	(41,377)	(256,994)
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող զուտ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		298,201	806,584	74,692	1,027,978
Այլ համապարփակ եկամուտ/վնաս հարկումից հետո		298,201	757,516	245,707	1,198,993
Ընդամենը համապարփակ եկամուտ/(վնաս)		1,443,186	4,383,638	43,365	2,764,025

Հաշվետվության վավերացման ամսաթիվը՝ 12.01.18թ

Բանկի գլխավոր գործադիր տնօրեն
տնօրինության նախագահ՝ Ա. Հակոբյան

Գլխավոր հաշվապահ՝ Դ. Ազատյան

ConverseBank

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

31 դեկտեմբերի 2017թ.

Կոնվերս բանկՓԲԸ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31/12/2017թ.	31/12/2016թ. ստուգված
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	39,842,049	44,751,939
Առևտրային արժեթղթեր	16	787,330	184,833
Պահանջներ բանկերի նկատմամբ	17	10,546,355	2,320,882
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	18	165,167,500	119,024,824
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր	19	22,812,218	14,929,205
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	20	3,056,113	-
Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր	21	346,140	-
Հիմնական միջոցներ	22	6,115,287	6,384,767
Ոչ նյութական ակտիվներ	23	226,538	139,802
Բռնագանձված ակտիվներ	24	1,832,119	2,385,649
Այլ ակտիվներ	25	2,004,204	871,369
Ընդամենը ակտիվներ		252,735,853	190,993,270
Պարտավորություններ և կապիտալ			
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	26	15,173,467	278,064
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	27	68,857	31,591
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	28	173,914,157	139,680,217
Կազմակերպության կողմից թողարկված տոկոսային արժեթղթեր	29	5,931,969	-
Ընթացիկ պարտավորություններ շահութահարկի գծով		494,171	175,744
Հետաձգված հարկային պարտավորություններ	14	1,302,993	1,113,141
Այլ փոխառու միջոցներ	30	12,659,350	9,096,208
Այլ պարտավորություններ	31	1,336,872	841,484
Ստորադաս փոխառություններ	32	5,854,396	7,598,818
Ընդամենը պարտավորություններ		216,736,232	158,815,267
Կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	33	16,416,633	16,416,633
Էմիսիոն եկամուտ		63,233	63,233
Գլխավոր պահուստ		1,243,064	1,005,996
Այլ պահուստներ		5,352,858	4,718,327
Չբաշխված շահույթ		12,923,833	9,973,814
Ընդամենը կապիտալ		35,999,621	32,178,003
Ընդամենը պարտավորություններ և կապիտալ		252,735,853	190,993,270

Հաշվետվության վավերացման ամսաթիվը՝ 12.01.18թ

Բանկի գլխավոր գործադիր տնօրեն
տնօրինության նախագահ՝ Ա. Հակոբյան

Գլխավոր հաշվապահ՝ Դ. Ազատյան

ConverseBank

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն
31 դեկտեմբերի 2017թ.
Կոնվերս բանկՓԲԸ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1

Հազար ՀՀ դրամ	Կանոնադրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Վաճառքի համար մատչելի արժեթղթերի վերագնահատման պահուստ	Հիմնական միջոցների գծով վերագնահատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը կապիտալ
Մնացորդը առ 2016թ. հունվարի 1-ի դրությամբ(աուդիտված)	7,002,033	63,233	1,005,996	337,223	3,316,639	8,976,301	20,701,425
Կանոնադրական կապիտալի համալրում	9,414,600						9,414,600
Համալրում գլխավոր պահուստին							-
Շահաբաժիններ բաժնետերերին						(702,047)	(702,047)
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	9,414,600	-	-	-	-	(702,047)	8,712,553
Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ/վնաս						1,565,032	1,565,032
Հաշվետու ժամանակաշրջանի այլ համապարփակ շահույթ/վնաս				1,027,978	171,015		1,198,993
Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ եկամուտ/(վնաս)	-	-	-	1,027,978	171,015	1,565,032	2,764,025
Վերագնահատման պահուստի ամորտիզացիա	-	-	-	-	(134,528)	134,528	-
Մնացորդը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ(աուդիտված)	16,416,633	63,233	1,005,996	1,365,201	3,353,126	9,973,814	32,178,003
Մնացորդը առ 2017թ. հունվարի 1-ի դրությամբ(աուդիտված)	16,416,633	63,233	1,005,996	1,365,201	3,353,126	9,973,814	32,178,003
Նախորդ տարիների սխալի ճշգրտում						2,446	2,446
Կանոնադրական կապիտալի համալրում							-
Համալրում գլխավոր պահուստին			237,068			(237,068)	-
Շահաբաժիններ բաժնետերերին						(564,466)	(564,466)
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	-	-	237,068	-	-	(801,534)	(564,466)
Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ/վնաս						3,626,122	3,626,122
Հաշվետու ժամանակաշրջանի այլ համապարփակ շահույթ/վնաս				806,584	(49,068)		757,516
Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ եկամուտ/(վնաս)	-	-	-	806,584	(49,068)	3,626,122	4,383,638
Վերագնահատման պահուստի ամորտիզացիա	-	-	-	-	(122,985)	122,985	-
Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	16,416,633	63,233	1,243,064	2,171,785	3,181,073	12,923,833	35,999,621

Հաշվետվության վավերացման ամսաթիվը

Բանկի գլխավոր գործադիր տնօրեն տնօրինության նախագահ՝ Ա. Զաքրյան

Գլխավոր հաշվապահ՝ Դ. Ազարյան

ConverseBank

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն
31 դեկտեմբերի 2017թ.
Կոնվերս բանկ ՓԲԸ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1

Հազար ՀՀ դրամ	01/01/2017-31/12/2017թ.	01/01/2016-31/12/2016թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Ստացված տոկոսներ	16,938,024	13,110,944
Վճարված տոկոսներ	(8,075,131)	(6,550,012)
Ստացված միջնորդավճարներ	2,433,144	2,003,640
Վճարված միջնորդավճարներ	(752,305)	(763,729)
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից օգուտ / վնաս	1,279,655	899,056
Ստացված այլ եկամուտ	935,482	943,834
Վճարված վարչական ծախսեր	(4,184,263)	(3,349,030)
Այլ գործառնական ծախսեր	(2,936,783)	(2,615,407)
Դրամական միջոցների հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունները	**5,637,823**	**3,679,296**
Գործառնական ակտիվների (ավելացում)/նվազում		
Առևտրային արժեթղթեր	(948,637)	22,759
Պահանջներ բանկերի նկատմամբ	(8,296,628)	6,698,218
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	(46,439,071)	(38,685,135)
Բռնագանձված ակտիվներ	553,530	190,557
Այլ ակտիվներ	(1,138,876)	(10,347)
Գործառնական պարտավորությունների ավելացում/(նվազում)		
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	15,513,186	(6,705,878)
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	41,261,787	27,986,234
Ածանցյալ գործիքներ	37,678	17,472
Այլ պարտավորություններ	61,849	61,502
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկը	**6,242,640**	**(6,745,322)**
Վճարված շահութահարկ	(318,429)	(41,940)
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ ստացված գործառնական գործունեությունից	**5,924,211**	**(6,787,262)**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթերի ձեռքբերում	(14,064,883)	(7,611,181)
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթերի վաճառքից հոսքեր	8,849,531	3,981,404
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(34,873)	(29,133)
Հիմնական միջոցների ձեռքբերում	(614,526)	(430,846)
Հիմնական միջոցների վաճառքից հոսքեր	4,198	-
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ օգտագործված ներդրումային գործունեությունում	**(5,860,554)**	**(4,089,756)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Մուտքեր կանոնադրական կապիտալի համալրումից	-	9,414,600
Այլ փոխառու միջոցների ներգրավումից հոսքեր	6,069,704	2,154,194
Այլ փոխառու միջոցների մարումներ	(9,607,318)	(1,410,854)
Սուբորդաց փոխառությունների մարումներ	(1,453,077)	343,425
Բաժնետերերին վճարված շահաբաժիններ	(564,466)	(702,047)
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ (օգտագործված)/ստացված ֆինանսավորման գործունեությունում	**(5,555,157)**	**9,799,318**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	**(5,491,500)**	**(1,077,700)**
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների	581,610	46,029,188
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա սկզբում	44,751,939	(199,549)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու ժամանակաշրջանի վերջում (Տես. 15)	**39,842,049**	**44,751,939**

Հաշվետվության վավերացման ամսաթիվը՝ 12.01.18թ

Բանկի գլխավոր գործադիր տնօրեն
տնօրինության նախագահ՝ Ա. Հակոբյան

Գլխավոր հաշվապահ՝ Դ. Ազատյան

ConverseBank

(եռամսյակային)

Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ
31 դեկտեմբերի 2017թ.
Կոնվերս բանկՓԲԸ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1

(հազար ՀՀ դրամ)

Նորմատիվներ	Նորմատիվի փաստացի մեծությունը հաշվարկված բանկի համար	ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը	Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը
1	2	3	4
Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափը	16,416,633	50,000	Խախտում առկա չէ
Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը	36,029,592	30,000,000	Խախտում առկա չէ
Ն1 Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	16.96%	12.00%	Խախտում առկա չէ
Ն21 Բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	35.26%	15.00%	Խախտում առկա չէ
Ն211 Բանկի առաջին խմբի արտարժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և առաջին խմբի արտարժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	17.97%	4.00%	Խախտում առկա չէ
Ն22 Բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը	102.49%	60.00%	Խախտում առկա չէ
Ն221 Բանկի առաջին խմբի արտարժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և առաջին խմբի արտարժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը	44.75%	10.00%	Խախտում առկա չէ
Ն31 Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը	15.33%	20.00%	Խախտում առկա չէ
Ն32 Խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը	33.38%	500.00%	Խախտում առկա չէ
Ն41 Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը	0.76%	5.00%	Խախտում առկա չէ
Ն42 Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը	7.21%	20.00%	Խախտում առկա չէ
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում տեղաբաշխված պարտադիր պահուստների նվազագույն չափը			
ՀՀ դրամով	X	2.00%	
ԱՄՆ դոլարով		18.00%	
Եվրոյով		18.00%	Խախտում առկա չէ
Արտարժութային դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը (ածանցյալ գործիքներով)	0.91%	10.00%	Խախտում առկա չէ
Արտարժութային դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը (առանց ածանցյալ գործիքների)	2.24%	10.00%	Խախտում առկա չէ
Ըստ առանձին արտարժույթների յուրաքանչյուր արտարժույթի դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը			
ԱՄՆ դոլարով	X	7.00%	Խախտում առկա չէ
Եվրոյով	0.03%	7.00%	Խախտում առկա չէ
Ռուսական ռուբլիով	0.72%	7.00%	Խախտում առկա չէ
Այլ	X	X	Խախտում առկա չէ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը՝ 12.01.18թ

Բանկի գլխավոր գործադիր տնօրեն
տնօրինության նախագահ՝ Ա. Հակոբյան

Գլխավոր հաշվապահ՝ Դ. Ազատյան

«Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերություն

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող ժամանակաշրջանի համար

Բովանդակություն

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն 1
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն 2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն 3
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն 4

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Գործունեության նկարագրություն 7
2. Հայաստանի գործարար միջավայրը 7
3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր 13
4. Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումներ 25
7. Տոկոսային եկամուտ և ծախս 26
8. Միջնորդավճարների գծով եկամուտ և ծախս 26
9. Զուտ առևտրային եկամուտ 26
10. Այլ եկամուտ 27
11. Արժեզրկումից կորուստներ 27
12. Անձնակազմի գծով ծախսեր 27
13. Այլ ծախսեր 27
14. Շահութահարկի գծով ծախս 28
15. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 29
16. Առևտրային արժեթղթեր 30
17. Պահանջներ բանկերի նկատմամբ 30
18. Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ 30
19. Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր 34
20. Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր 34
21. Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր 35
22. Հիմնական միջոցներ 35
23. Ոչ նյութական ակտիվներ 37
24. Բռնագանձված ակտիվներ 37
25. Այլ ակտիվներ 38
26. Պարտավորություններ բանկերի նկատմամբ 38
27. Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ 39
28. Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ 39
29. Թողարկված պարտքային արժեթղթեր 39
30. Այլ փոխառու միջոցներ 40
31. Այլ պարտավորություններ 40
32. Ստորադաս փոխառություններ 40
33. Կապիտալ 41
34. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ 41
35. Կապակցված կողմերի հետ գործառնություններ 43
36. Իրական արժեքի չափում 45
37. Փոխանցված ֆինանսական ակտիվներ և որպես գրավ պահվող կամ տրամադրված ակտիվներ 51
38. Ֆինանսական գործիքների հաշվանցում 52
39. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն 53
40. Ռիսկերի կառավարում 54
41. Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն 68
42. Կապիտալի համարժեքություն 70

ConverseBank

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն
31 դեկտեմբերի 2017թ.
Կոնվերս բանկՓԲԸ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31/12/2017թ.	31/12/2016թ. ստուգված
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	39,842,049	44,751,939
Առևտրային արժեթղթեր	16	787,330	184,833
Պահանջներ բանկերի նկատմամբ	17	10,546,355	2,320,882
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	18	165,167,500	119,024,824
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր	19	22,812,218	14,929,205
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	20	3,056,113	-
Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր	21	346,140	-
Հիմնական միջոցներ	22	6,115,287	6,384,767
Ոչ նյութական ակտիվներ	23	226,538	139,802
Բոնազանձված ակտիվներ	24	1,832,119	2,385,649
Այլ ակտիվներ	25	2,004,204	871,369
Ընդամենը ակտիվներ		252,735,853	190,993,270
Պարտավորություններ և կապիտալ			
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	26	15,173,467	278,064
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	27	68,857	31,591
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	28	173,914,157	139,680,217
Կազմակերպության կողմից թողարկված տոկոսային արժեթղթեր	29	5,931,969	-
Ընթացիկ պարտավորություններ շահութահարկի գծով		494,171	175,744
Հետաձգված հարկային պարտավորություններ	14	1,302,993	1,113,141
Այլ փոխառու միջոցներ	30	12,659,350	9,096,208
Այլ պարտավորություններ	31	1,336,872	841,484
Ստորադաս փոխառություններ	32	5,854,396	7,598,818
Ընդամենը պարտավորություններ		216,736,232	158,815,267
Կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	33	16,416,633	16,416,633
Էմիսիոն եկամուտ		63,233	63,233
Գլխավոր պահուստ		1,243,064	1,005,996
Այլ պահուստներ		5,352,858	4,718,327
Չբաշխված շահույթ		12,923,833	9,973,814
Ընդամենը կապիտալ		35,999,621	32,178,003
Ընդամենը պարտավորություններ և կապիտալ		252,735,853	190,993,270

Հաշվետվության վավերացման ամսաթիվը՝ 12.01.18թ

Բանկի գլխավոր գործադիր տնօրեն
տնօրինության նախագահ՝ Ա. Հակոբյան

Գլխավոր հաշվապահ՝ Դ. Ազատյան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն 2017 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող ժամանակաշրջանի համար

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	01/10/17-31/12/17	01/01/17-31/12/17	01/10/16-31/12/16	01/01/16-31/12/16
Տոկոսային եկամուտ	7	4,899,526	17,624,252	3,636,974	13,859,656
Տոկոսային ծախս	7	(2,178,811)	(8,284,069)	(1,842,451)	(6,787,759)
Զուտ տոկոսային եկամուտ		**2,720,715**	**9,340,183**	**1,794,523**	**7,071,897**
Միջնորդավճարների գծով եկամուտ	8	683,421	2,433,145	543,025	2,003,640
Միջնորդավճարների գծով ծախս	8	(224,363)	(752,304)	(219,311)	(763,729)
Միջնորդավճարների գծով զուտ եկամուտ		**459,058**	**1,680,841**	**323,714**	**1,239,911**
Զուտ առևտրային եկամուտ	9	424,794	1,279,654	519,718	899,056
Արտարժույթի վերագնահատումից զուտ (վնաս)/օգուտ		1,221	(1,128)	(189,369)	(237,214)
Վաճառքի համար մատչելի ներդրումներից զուտ օգուտ		182,959	304,220	11,084	54,229
Այլ եկամուտ	10	242,835	967,294	195,093	943,846
Արժեզրկումից կորուստներ	11	(242,243)	(1,212,874)	(774,801)	(1,544,466)
Անձնակազմի գծով ծախսեր	12	(1,369,896)	(4,298,789)	(885,760)	(3,379,260)
Հիմնական միջոցների մաշվածություն	22	(168,683)	(731,100)	(192,192)	(739,362)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	23	(12,830)	(41,719)	9,961	(76,339)
Այլ ծախսեր	13	(847,088)	(2,872,067)	(762,486)	(2,723,708)
Շահույթ/(վնաս) մինչև շահութահարկ		**1,390,841**	**4,414,515**	**49,485**	**1,508,590**
Շահութահարկի գծով ծախս	14	(245,856)	(788,393)	(251,827)	56,442
Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ/(վնաս)		**1,144,985**	**3,626,122**	**(202,342)**	**1,565,032**
Այլ համապարփակ եկամուտ					
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ					
Հիմնական միջոցների վերագնահատում		-	(61,078)	213,769	213,769
Շահութահարկի ազդեցություն		-	12,010	(42,754)	(42,754)
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող զուտ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		-	(49,068)	171,015	171,015
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ					
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթերի հետ կապված գործառնություններից չիրացված օգուտ/(վնաս)		555,710	1,312,450	127,153	1,339,201
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթերի հետ կապված գործառնություններից իրացված օգուտ՝ վերադասակարգված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում		(182,959)	(304,220)	(11,084)	(54,229)
Շահութահարկի ազդեցություն		(74,550)	(201,646)	(41,377)	(256,994)
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող զուտ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		**298,201**	**806,584**	**74,692**	**1,027,978**
Այլ համապարփակ եկամուտ/վնաս հարկումից հետո		**298,201**	**757,516**	**245,707**	**1,198,993**
Ընդամենը համապարփակ եկամուտ/(վնաս)		**1,443,186**	**4,383,638**	**43,365**	**2,764,025**

Կից ներկայացված ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն 2017 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող ժամանակաշրջանի համար

Հազար ՀՀ դրամ	Կանոնադրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Վաճառքի համար մատչելի արժեթղթերի վերագնահատման պահուստ	Հիմնական միջոցների գծով վերագնահատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը կապիտալ
Մնացորդն առ 2016թ. հունվարի 1(ստուգված)	**7,002,033**	**63,233**	**1,005,996**	**337,223**	**3,316,639**	**8,976,301**	**20,701,425**
Կանոնադրական կապիտալի համալրում	9,414,600						**9,414,600**
Հատկացում գլխավոր պահուստին							**-**
Շահաբաժիններ բաժնետերերին						(702,047)	**(702,047)**
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	**6,985,200**	**-**	**-**	**-**	**-**	**(702,047)**	**8,712,553**
Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ/վնաս						1,565,032	**1,565,032**
Հաշվետու ժամանակաշրջանի այլ համապարփակ շահույթ/վնաս				1,027,978	171,015		**1,198,993**
Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ եկամուտ/(վնաս)	**-**	**-**	**-**	**1,027,978**	**171,015**	**1,565,032**	**2,764,025**
Վերագնահատման պահուստի ամորտիզացիա	-	-	-	-	(134,528)	134,528	**-**
Մնացորդը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (ստուգված)	**16,416,633**	**63,233**	**1,005,996**	**1,365,201**	**3,353,126**	**9,973,814**	**32,178,003**
Մնացորդն առ 2017թ. հունվարի 1(ստուգված)	**16,416,633**	**63,233**	**1,005,996**	**1,365,200**	**3,353,126**	**9,973,817**	**32,178,005**
Նախորդ տարիների ճշգրտում						2,446	**2,446**
Կանոնադրական կապիտալի համալրում							
Հատկացում գլխավոր պահուստին			237,068			(237,068)	**-**
Շահաբաժիններ բաժնետերերին						(564,466)	**(564,466)**
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	**-**	**-**	**237,068**	**-**	**-**	**(801,534)**	**(564,466)**
Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ/վնաս						3,626,122	**3,626,122**
Հաշվետու ժամանակաշրջանի այլ համապարփակ շահույթ/վնաս				806,584	(49,068)		**757,516**
Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ եկամուտ/(վնաս)	**-**	**-**	**-**	**806,584**	**(49,068)**	**3,626,122**	**4,383,638**
Վերագնահատման պահուստի ամորտիզացիա	-	-	-	-	(122,985)	122,985	**-**
Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**16,416,633**	**63,233**	**1,243,064**	**2,171,785**	**3,181,073**	**12,923,833**	**35,999,621**

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն
2017 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող ժամանակաշրջանի համար

Հազար ՀՀ դրամ	01/01/2017-31/12/2017 թ.	01/01/2016-31/12/2016 թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Ստացված տոկոսներ	16,938,024	13,110,944
Վճարված տոկոսներ	(8,075,131)	(6,550,012)
Ստացված միջնորդավճարներ	2,433,144	2,003,640
Վճարված միջնորդավճարներ	(752,305)	(763,729)
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից օգուտ / վնաս	1,279,655	899,056
Ստացված այլ եկամուտ	935,482	943,834
Վճարված վարչական ծախսեր	(4,184,263)	(3,349,030)
Այլ գործառնական ծախսեր	(2,936,783)	(2,615,407)
Դրամական միջոցների հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունները	**5,637,823**	**3,679,296**
Գործառնական ակտիվների (ավելացում)/նվազում		
Առևտրային արժեթղթեր	(948,637)	22,759
Պահանջներ բանկերի նկատմամբ	(8,296,628)	6,698,218
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	(46,439,071)	(38,685,135)
Բռնագանձված ակտիվներ	553,530	190,557
Այլ ակտիվներ	(1,138,876)	(10,347)
Գործառնական պարտավորությունների ավելացում/(նվազում)		
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	15,513,186	(6,705,878)
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	41,261,787	27,986,234
Ածանցյալ գործիքներ	37,678	17,472
Այլ պարտավորություններ	61,849	61,502
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկը	**6,242,640**	**(6,745,322)**
Վճարված շահութահարկ	(318,429)	(41,940)
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ ստացված գործառնական գործունեությունից	**5,924,211**	**(6,787,262)**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթերի ձեռքբերում	(14,064,883)	(7,611,181)
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթերի վաճառքից հոսքեր	8,849,531	3,981,404
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(34,873)	(29,133)
Հիմնական միջոցների ձեռքբերում	(614,526)	(430,846)
Հիմնական միջոցների վաճառքից հոսքեր	4,198	-
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ օգտագործված ներդրումային գործունեությունում	**(5,860,554)**	**(4,089,756)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Մուտքեր կանոնադրական կապիտալի համալրումից	-	9,414,600
Այլ փոխառու միջոցների ներգրավումից հոսքեր	6,069,704	2,154,194
Այլ փոխառու միջոցների մարումներ	(9,607,318)	(1,410,854)
Ստորադաս փոխառությունների մարումներ	(1,453,077)	343,425
Բաժնետերերին վճարված շահաբաժիններ	(564,466)	(702,047)
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝(օգտագործված)/ստացված ֆինանսավորման գործունեությունում	**(5,555,157)**	**9,799,318**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	**(5,491,500)**	**(1,077,700)**
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	581,610	46,029,188
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա սկզբում	44,751,939	(199,549)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու ժամանակաշրջանի վերջում (Տան. 15)	**39,842,049**	**44,751,939**

1. Գործունեության նկարագրություն

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ «Բանկ») հանդիսանում է Խմբի մայր կազմակերպությունը, որը ներառում է Բանկը և իր դուստր ընկերությունը (այսուհետ՝ «Խումբ»):

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն հիմնվել է 1994թ. և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Բանկը գրանցվել է 1994թ. նոյեմբերի 28-ին ՀՀ Կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N 57 արտոնագրային համարով:

Բանկն ընդունում է բնակչությունից ավանդներ, տրամադրում է վարկեր և իրականացնում է դրամական փոխանցումներ Հայաստանի Հանրապետության տարածքում և ՀՀ տարածքից դուրս, իրականացնում է արտարժույթի փոխանակման գործարքներ, ինչպես նաև իր հաճախորդ իրավաբանական և ֆիզիկական անձանց մատուցում է այլ բանկային ծառայություններ:

Բանկի գլխամասային գրասենյակը գտնվում է Երևանում: Բանկն ունի 31 մասնաճյուղ, որոնք գտնվում են Երևանում և Հայաստանի տարբեր մարզերում, իսկ 1 մասնաճյուղը՝ ԼՂՀ տարածքում: Բանկի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան փող. 26/1:
Խմբի մայր կազմակերպության աշխատակիցների թվաքանակը հաշվետու ամսաթվի դրությամբ կազմել է 710 աշխատակից, իսկ Դուստր կազմակերպությանը՝ 26 աշխատակից :

2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ «Ընդվանսդ Գլոբալ Ինվեստմենտ» ՍՊԸ–ն հանդիսանում է Բանկի խոշորագույն բաժնետերը (բաժնետոմսերի 80.94%-ի սեփականատեր):
Հայփոստ Թրասթ Մենեջմենթ Բի Վի-ն 2016-թ.ի վերջին ձեռք բերելով Բանկի բաժնետոմսերի 14.06%-ը՝ դարձավ երկրորդ խոշոր բաժնետերը:
Իսկ Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցին տիրապետում է բաժնետոմսերի 5%-ին:
Խմբի վերջնական վերահսկող անձ հանդիսանում է արգենտինացի գործարար Է. Էռնեկյանը:

Բանկի դուստր ընկերությունը

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են հետևյալ դուստր ընկերությունը.

	Բաժնեմաս %					
Դուստր ընկերություն	*2015*	*2016*	*2017*	*Երկիր*	*Միավորման ամսաթիվ*	*Ոլորտ*
«Կոնվերս Ինկասացիա» ՍՊԸ	100%	100%	100%	Հայաստան	20 ապրիլի, 2000թ.	Դրամական միջոցների, դրանց համարժեքների և այլ ակտիվների տեղափոխում

2. Հայաստանի գործարար միջավայրը

Հայաստանի Հանրապետությունը շարունակում է իրականացնել քաղաքական և տնտեսական բարեփոխումներ: Որպես զարգացող շուկա, Հայաստանում բացակայում են զարգացած գործարար միջավայր և համապատասխան օրենսդրական ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և կառուցվածքային զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ, կենտրոնացված տնտեսական հենքով:

ՀՀ հետ համագործակցող երկրների տնտեսությունների վիճակի վատթարացումը հանգեցրել է արտերկրից դրամային փոխանցումների կրճատմանը, ինչից Հայաստանի տնտեսությունը գտնվում է մեծ կախման մեջ: Հանքահումքային ապրանքների միջազգային գների հետագա անկումը, անորոշությունները՝ պայմանավորված ուղղակի կապիտալ ներդրումների ներգրավման հնարավորություններով, գնաճը, կարող են հանգեցնել Հայաստանի տնտեսության, ինչպես նաև Խմբի վիճակի վատթարացմանը: Այնուամենայնիվ, քանի որ այս անորոշություններում առկա դատողություններն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Խմբի ակտիվների և պարտավորությունների մնացորդային արժեքի վրա:

Խմբի ղեկավարությունը գտնում է, որ ընթացիկ հանգամանքներում ձեռնարկվում են համապատասխան միջոցառումներ Խմբի կայունությունն ապահովելու նպատակով:

Պատրաստման հիմունքներ

Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ «ՖՀՄՍ»), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (այսուհետ՝ «ՀՀՄՍԽ») կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (այսուհետ՝«ՖՀՄՍԿ»):

Չափման հիմունքներ

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի հիմունքով այն ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար, որոնք չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների և պարտավորությունների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ներկայացված են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները՝ պատմական արժեքով, բացառությամբ հողի և շինությունների, որոնք ներկայացվել են վերագնահատված արժեքով:

Գործունեության անընդհատություն

2014 թ. դեկտեմբերի 30-ին ՀՀ ԿԲ-ն փոխեց տեղական բանկերի համար սահմանված նորմատիվային կապիտալի նվազագույն չափը ՝ 5,000,000 հազ. դրամից դարձնելով 30,000,000 հազ. դրամ: Պահանջն ուժի մեջ է մտել 2017 թ. հունվարի 1-ից: 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի նորմատիվային կապիտալը կազմել է 36,029,592 հազ. դրամ (2016 թ.՝ 32,078,097 հազ. դրամ):

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները կազմվել են գործունեության անընդհատության սկզբունքի հիման վրա, քանի որ Բանկը համալրել է բանկի կանոնադրական կապիտալը նոր պահանջին համապատասխանելու համար:

Գործառնական և ներկայացման արժույթ

Խմբի գործառնական արժույթը այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Խումբը: Խմբի գործառնական և ներկայացման արժույթը Հայաստանի Հանրապետության դրամն է (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը: Խումբը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան: Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Խմբի հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով: Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ: ՀՀ սահմաններից դուրս դրամը փոխարկելի չէ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները

Խումբը կիրառել է հետևյալ վերանայված ՖՀՄՍ-ները, որոնք ուժի մեջ են մտնում 2016 թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար:

ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ. Նախաձեռնություն տեղեկատվության բացահայտման ոլորտում

ՀՀՄՍ 1-ում կատարված փոփոխությունները հստակեցնում են, այլ ոչ թե էապես փոխում ՀՀՄՍ 1-ի առկա պահանջները: Փոփոխությունները պարզաբանում են հետևյալը՝

- ՀՀՄՍ 1-ի պահանջները էականության նկատմամբ,
- Ֆինանսական արդյունքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունների առանձին հոդվածները կարող են առանձնացվել,
- Կազմակերպություններն ունեն հնարավորություն ընտրելու ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրությունների ներկայացման կարգը,
- Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ասոցիացված կազմակերպությունների և համատեղ

ձեռնարկությունների համապարփակ եկամտի մասը պետք է ներկայացվի ամբողջությամբ մեկ հոդվածում և դասակարգվի որպես հոդվածներ, որոնք հետագայում կդասակարգվեն կամ չեն դասակարգվի շահույթի կամ վնասի կազմում:

Բացի այդ, փոփոխությունները պարզաբանում են այն պահանջները, որոնք կիրառվում են ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններում լրացուցիչ միջանկյալ ենթագումարների բացահայտման ժամանակ: Փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2016 թ.-ի հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Սույն փոփոխությունը ազդեցություն չունի Խմբի վրա:

Տարեկան բարելավումներ՝ 2012-2014 թթ.

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2016 թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Դրանք, մասնավորապես ներառում են՝

ՖՀՄՍ 5 «Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործունեություն»

Ակտիվները (կամ օտարման խմբերը) ընդհանուր առմամբ օտարվում են կա՛մ վաճառքի, կա՛մ սեփականատերերի միջև բաշխման միջոցով: ՖՀՄՍ 5-ի փոփոխությունը պարզաբանում է, որ նշված օտարման մեթոդներից մեկը մյուսով փոխարինելը չի նշանակի օտարման նոր պլան, այլ այն կհանդիսանա սկզբնական ծրագրի շարունակություն: Հետևաբար ՖՀՄՍ 5-ի պահանջների կիրառման ընդհատում չի լինի: Փոփոխությունը պետք է կիրառվի առաջընթաց կերպով: Սույն փոփոխությունը ազդեցություն չունի Խմբի վրա:

ՖՀՄՍ 7 «Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ»

Փոփոխությունը պարզաբանում է, որ ծառայությունների մատուցման պայմանագիրը, որը ներառում է միջնորդավճար, կարող է հանդիսանալ ֆինանսական ակտիվի շարունակական ներգրավվածություն: Կազմակերպությունը պետք է գնահատի միջնորդավճարի բնույթը և պայմանագիրը ՖՀՄՍ 7-ի շարունակական մասնակցության ուղեցույցի համաձայն՝ գնահատելու համար, թե արդյոք պահանջվում են բացահայտումներ: Փոփոխությունը պետք է կիրառվի այնպես, որ շարունակական ներգրավվածություն կազմող ծառայությունների մատուցման պայմանագրերի գնահատումը կատարվի հետընթաց: Սակայն, պահանջվող բացահայտումները չպետք է կատարվեն ավելի վաղ ժամանակահատվածներում, քան այն տարեկան ժամանակաշրջանը, երբ կազմակերպությունն առաջին անգամ կիրառում է փոփոխությունները: Սույն փոփոխությունը ազդեցություն չունի Խմբի վրա:

3. Պատրաստման հիմունքներ (շարունակություն)

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները (շարունակություն)

Խմբի կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Ստորև ներկայացված են ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք թողարկվել են, բայց Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների հրապարակման օրվա դրությամբ դեռևս ուժի մեջ չեն մտել: Խումբը մտադիր է կիրառել այդ ստանդարտները ուժի մեջ մտնելուց հետո:

ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ»

2014 թ. հուլիսին ՀՀՄՄԽ-ն թողարկեց ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» ստանդարտի վերջնական տարբերակը, որն արտացոլում է ֆինանսական գործիքներին վերաբերող նախագծի բոլոր փուլերն ու փոխարինում է ՀՀՄՍ 39-ին՝ «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը», և ՖՀՄՍ 9-ի բոլոր նախկին տարբերակներին: Ստանդարտը ներկայացնում է դասակարգման, չափման, ինչպես նաև արժեզրկման և հեջավորման հաշվառման նոր պահանջներ:

Դասակարգման և չափման տեսանկյունից, նոր ստանդարտը կպահանջի գնահատել բոլոր ֆինանսական գործիքները, բացի բաժնային գործիքներում ներդրումներից և ածանցյալ գործիքներից, համակցված մոտեցման հիման վրա՝ ելնելով ընկերության ակտիվները կառավարելու բիզնես մոդելի և գործիքների դրամական հոսքերի բնութագրիչներից: ՀՀՄՍ 39-ի չափման կատեգորիաները կփոխարինվեն հետևյալ կատեգորիաներով. իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող, և ամորտիզացված արժեքով

չափվող գործիքներ: ՖՀՄՍ 9-ը նաև թույլ կտա ընկերություններին շարունակել դասակարգել (առանց հետագա վերադասակարգման հնարավորության) իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող, և ամորտիզացված արժեքով չափվող գործիքների սահմանմանը համապատասխանող գործիքները որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա վերացնում կամ էապես նվազեցնում է չափման կամ ճանաչման անհետևողականությունը: Առևտրական նպատակով չպահվող բաժնային գործիքներում ներդրումները կարող են դասակարգվել (առանց հետագա վերադասակարգման հնարավորության) որպես իրական արժեքով՝այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող գործիքներ, առանց օգուտների կամ վնասների հետագա վերադասակարգման ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ֆինանսական պարտավորությունների հաշվառման ՀՀՄՍ 39-ի պահանջները էապես չեն փոխվի:

ՖՀՄՍ 9-ը նաև հիմնովին կփոխի վարկերի արժեզրկման նկատմամբ մոտեցումը: Ստանդարտը կփոխարինի ՀՀՄՍ 39-ի՝ կրած վնասների մոտեցումը ակնկալվող վարկային կորուստների (ԱՎԿ) մոտեցմամբ: Խմբից կպահանջվի ակնկալվող վարկային կորուստների պահուստ ճանաչել բոլոր վարկերի և պարտքային ֆինանսական գործիքների համար, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ինչպես նաև վարկային պարտավորվածությունների և ֆինանսական երաշխիքի պայմանագրերի համար: Պահուստը գնահատվում է ակնկալվող վարկային կորուստների հիման վրա՝ կապված հաջորդ տասներկու ամիսների ընթացքում դեֆոլտի հավանականության հետ: Այն դեպքերում, երբ գործիքի սկզբնական ճանաչումից հետո տեղի է ունեցել վարկային ռիսկի էական աճ, պահուստը գնահատվում է ակտիվի ամբողջ ժամկետի ընթացքում դեֆոլտի հավանականության հիման վրա:

ՖՀՄՍ 9-ը ուժի մեջ է մտնում 2018 թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Ավելի վաղ կիրառությունը թույլատրվում է: Ստանդարտը կիրառվում է հետընթաց կարգով, սակայն համեմատական տեղեկատվության վերահաշվարկ չի պահանջվում. կիրառման ազդեցությունը անցման ամսաթվին (2018թ. հունվարի 1) կգրանցվի չբաշխված շահույթում: ՖՀՄՍ 9-ի կիրառումն ազդեցություն կունենա Խմբի ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման վրա, սակայն ազդեցություն չի ունենա Խմբի ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման վրա: Խումբն ակնկալում է, որ ՖՀՄՍ 9-ը նշանակալի ազդեցություն կունենա իր կապիտալի վրա: Այդ ազդեցության չափը որոշելու համար Խմբին անհրաժեշտ է կատարել ավելի մանրամասն վերլուծություն, որը հաշվի կառնի ամբողջ հիմնավորված և կիրառելի տեղեկությունը՝ ներառյալ հեռանկարային տարրեր: Խումբը սկսել է ՖՀՄՍ 9-ին անցման պրոցեսը: Խումբն ակնկալում է ավարտին հասցնել կիրառումը մինչև 2017թ.-ի ավարտը:

ՖՀՄՍ 15 «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»

2014 թ.-ի մայիսին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» ՖՀՄՍ 15-ը, որն ուժի մեջ է մտնում 2018 թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ վաղաժամկետ կիրառման հնարավորությամբ: ՖՀՄՍ 15-ը սահմանում է հասույթի ճանաչման սկզբունքները և կիրառելի է լինելու հաճախորդների հետ բոլոր պայմանագրերի համար: Սակայն, տոկոսային եկամուտները և միջնորդավճարները, որոնք ֆինանսական գործիքների և վարձակալության անբաժան մասն են կազմում, կշարունակեն գտնվել ՖՀՄՍ 15-ի շրջանակներից դուրս և կկարգավորվեն այլ կիրառելի ստանդարտներով (օր.՝ ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 16՝ «Վարձակալություն»):

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ստանդարտներ, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել (շարունակություն)

ՖՀՄՍ 15 ստանդարտի համաձայն հասույթը պետք է ճանաչվի, երբ ապրանքներն ու ծառայությունները փոխանցվել են, այն փոխհատուցման գումարի չափով, որի նկատմամբ իրավունքը ընկերությունն ակնկալում է ստանալ այդ ապրանքների և ծառայությունների փոխանցման դիմաց: Ստանդարտը նաև կիստակեցնի հասույթի բնույթի, չափի և ժամկետների, ինչպես նաև հասույթի և հաճախորդներից համապատասխան դրամական հոսքերի վերաբերյալ ցանկացած անորոշության բացահայտումների մի շարք համապարփակ պահանջներ:

Խումբը չի նախատեսում ՖՀՄՍ 15-ի վաղաժամկետ ընդունում և ներկայումս գնահատում է դրա ազդեցությունը:

ՖՀՄՍ 16 «Վարձակալություն»

ՀՀՄՄԽ-ն հրապարակել է ՖՀՄՍ 16 «Վարձակալություն» վարձակալության հաշվառման նոր ստանդարտը 2016թ. հունվարին: Նոր ստանդարտը զգալիորեն չի փոխում վարձակալության հաշվառումը վարձատուների համար: Սակայն, այն պահանջում է վարձակալներին ճանաչել վարձակալությունների մեծ մասը իրենց հաշվապահական հաշվեկշռում որպես վարձակալության գծով պարտավորություն՝ համապատասխան ակտիվի օգտագործման իրավունքի հետ մեկտեղ: Վարձակալները պետք է կիրառեն միասնական մոդել բոլոր ճանաչված վարձակալությունների համար, բայց հնարավորություն կունենան չճանաչել կարճաժամկետ վարձակալությունները և ցածր արժեք ունեցող ակտիվների վարձակալությունը: Ընդհանուր առմամբ, շահույթի կամ վնասի ճանաչման կարգը նման է այսօրվա ֆինանսական վարձակալության հաշվառմանը՝ շահույթ կամ վնասում տոկոսային եկամտի և մաշվածության առանձին ճանաչմամբ:

ՖՀՄՍ 16 ուժի մեջ է մտնում 2019 թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Վաղաժամկետ կիրառումը թույլատրելի է, պայմանով, որ հասույթի նոր ստանդարտ ՖՀՄՍ 15-ը կիրառվում է նույն օրը:

Խումբը չի նախատեսում ՖՀՄՍ 16 վաղաժամկետ ընդունում և ներկայումս գնահատում է դրա ազդեցությունը:

ՀՀՄՍ 12-ի փոփոխություններ՝ «Շահութահարկ»

2016թ. հունվարին, փոփոխություններ հրապարակելով ՀՀՄՍ 12-ում, ՀՀՄՄԽ-ն հստակեցրեց ֆինանսական հաշվառման նպատակով իրական արժեքով չափվող, սակայն հարկային հաշվառման նպատակով սկզբնական արժեքով չափվող պարտքային գործիքների գծով հետաձգված հարկային ակտիվների հաշվառման պահանջները: Այս փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2017 թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար և վաղաժամկետ կիրառումը թույլատրելի է: Խումբը ակնկալվում է, որ փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա իր համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՀՀՄՍ 7-ի փոփոխություններ՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին»

2016թ. հունվարին ՀՀՄՄԽ-ն հրապարակեց «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին» ՀՀՄՍ 7-ում փոփոխություններ՝ նպատակ ունենալով բարելավել ֆինանսավորման գործունեության բացահայտումները և օգնել օգտագործողներին ավելի լավ հասկանալ հաշվետու ընկերության իրացվելիության դիրքերը: Ըստ նոր պահանջների՝ ընկերությունները պետք է բացահայտեն տեղեկատվություն ֆինանսավորման գործունեության հետևանքով իրենց ֆինանսական պարտավորությունների փոփոխությունների վերաբերյալ, ինչպիսիք են փոփոխությունները դրամական հոսքերից և ոչ-դրամական հոդվածներից (օր.՝ օգուտ և վնաս արտարժույթի փոփոխությունից): Փոփոխությունը ուժի մեջ է մտնում 2017թ.-ի հունվարի 1-ից: Խումբը ներկայումս գնահատում է փոփոխության ազդեցությունը:

ՖՀՄԿԿ Մեկնաբանություն 22 – «Արտարժույթով գործարքներ և կանխավճարված փոխհատուցում»

Ուժի մեջ է մտնում 2018 թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ստանդարտներ, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել (շարունակություն)

Մեկնաբանությունը հստակեցնում է, որ ոչ դրամային ակտիվի և ոչ դրամային պարտավորության ապաճանաչումից կանխավճարված փոխհատուցման հետ կապված համապատասխան ակտիվի սկզբնական ճանաչման և ծախսերը և եկամուտները հաշվելու համար օգտագործվող սփոթ փոխարժեքը որոշելիս գործարքի ամսաթիվն այն ամսաթիվն է, երբ կազմակերպությունը սկզբնապես ճանաչում է կանխավճարված փոխհատուցումից առաջացող ոչ դրամային ակտիվը կամ ոչ դրամային պարտավորությունը: Եթե կան մի քանի ստացվող և վճարվող կանխավճարներ, կազմակերպությունը պետք է որոշի գործարքի ամսաթիվը յուրաքանչյուր ստացված կամ վճարված կանխավճարի համար:

Կազմակերպությունները պետք է կիրառեն փոփոխությունները հետընթաց: Կազմակերպություններն ունեն այլընտրանք կիրառել մեկնաբանությունը առաջընթաց դրա շրջանակներում գտնվող բոլոր ակտիվների, ծախսերի և եկամուտների համար, որոնք սկզբնապես ճանաչվել են հետևյալ ժամանակաշրջաններում կամ ավելի ուշ.

(i) Այն հաշվետու ժամանակաշրջանի սկզբում, երբ կազմակերպությունը առաջին անգամ կիրառել է մեկնաբանությունը,

(ii) Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի սկզբում՝ ներկայացված որպես համեմատական տեղեկատվություն այն հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում, երբ կազմակերպությունն առաջին անգամ կիրառում է մեկնաբանությունը: Մեկնաբանության վաղ կիրառումը թույլատրվում է և պետք է բացահայտվի: ՖՀՄՍ առաջին անգամ կիրառողները նույնպես կարող են կիրառել մեկնաբանությունը առաջընթաց ՖՀՄՍ-ին անցման ամսաթվին կամ դրանից հետո սկզբնապես ճանաչված բոլոր ակտիվների, ծախսերի և եկամուտների համար:

Փոփոխությունները նպատակ ունեն նվազեցնել պրակտիկայում առկա տարբերությունները, որոնք առաջանում են արտարժույթով ստացվող կամ վճարվող կանխավճարված փոխհատուցման հետ կապված ոչ դրամային ակտիվի կամ ոչ դրամային պարտավորության ապաճանաչումից համապատասխան ակտիվը, ծախսը կամ եկամուտը (կամ դրա մի մասը) ճանաչելիս: Փոփոխությունները ազդեցություն չունեն Խմբի վրա:

Տարեկան բարելավումներ 2014-2016 ժամանակաշրջան (թողարկված 2016 թ. դեկտեմբերին)

Ստորև 2014-2016 տարեկան բարելավումների ամփոփ նկարագիրն է:

ՖՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների առաջին անգամ որդեգրումը»

Առաջին անգամ կիրառողների համար կարճաժամկետ բացառությունները հանվել են.

- ՖՀՄՍ 1 E3-E7 պարագրաֆները հանվել են, որովհետև դրանք արդեն ծառայել են իրենց նպատակին:
- Փոփոխությունն ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին: Փոփոխությունն ազդեցություն չունի Խմբի վրա:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվություններում կիրառվում է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

Համախմբման հիմունքները

Դուստր ընկերությունը, որի մայր կազմակերպությունը իրավունք ունի ներդրումներից ստանալ փոփոխական արդյունքներ կամ ենթարկվում է այդ արդյունքների փոփոխությունների հետ կապված ռիսկին և կարող է ազդել այդ ներդրումներից ստացվող արդյունքների վրա իր իրավասությունների միջոցով, համախմբվում է: Դուստր կազմակերպության համախմբումը սկսվում է, երբ Խումբը ձեռք է բերում վերահսկողություն դուստր ընկերության նկատմամբ և դադարում է, երբ Խումբը կորցնում է այդ վերահսկողությունը: Ներխմբային բոլոր գործարքները, ինչպես նաև այդ գործարքների արդյունքում առաջացած մնացորդներն ու չիրացված օգուտները ամբողջությամբ բացառվում են: Չիրացված վնասները նույնպես բացառվում են, բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքը վկայում է փոխանցվող ակտիվի արժեզրկման մասին: Անհրաժեշտության դեպքում, դուստր ընկերության ֆինանսական հաշվետվությունները ճշգրտվում են՝ այդ ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխանեցնելու նպատակով: Դուստր ընկերության հաշվետու տարին հանդիսանում է դեկտեմբերի 31-ը:

Ձեռքբերման ժամանակ դուստր ընկերության ակտիվները, պարտավորությունները և պայմանական պարտավորությունները չափվում են ձեռքբերման պահին գոյություն ունեցող իրական արժեքով: Որոշելի զուտ ակտիվների նկատմամբ ձեռքբերման գնի ցանկացած գերազանցող մաս ճանաչվում է որպես գուդվիլ: Որոշելի զուտ ակտիվների նկատմամբ ձեռքբերման գնի ցանկացած պակաս մասը (այսինքն՝ ձեռքբերման զեղչում) կրեդիտագրվում է ձեռքբերման ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

Ծախսերի և եկամուտների ճանաչում

Հասույթը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Խումբ և ստացված հասույթը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Խմբից, և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև հասույթի ճանաչումը:

Տոկոսային եկամուտ և ծախս

Տոկոսային եկամուտը ու ծախսը բոլոր տոկոսային եկամուտ բերող ֆինանսական գործիքների համար, բացառությամբ առևտրային նպատակով պահվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների, շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես «տոկոսային եկամուտ» և «տոկոսային ծախս»՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի հաշվեկշռային արժեքը նվազում է արժեզրկումից կորուստների պատճառով, տոկոսային եկամուտը շարունակում է ճանաչվել կիրառելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը՝ նոր հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Միջնորդավճարների գծով եկամուտ

Վարկերի տրամադրման համար գանձվող վճարները (համապատասխան ուղղակի ծախսերի հետ միասին) հետաձգվում են՝ ճշգրտելով տվյալ վարկի արդյունավետ տոկոսադրույքը: Վճարները, այլ եկամուտները և ծախսերը հիմնականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով ծառայությունների մատուցման ընթացքում: Ներդրումային պորտֆելի, այլ կառավարչական և խորհրդատվական ծառայությունների գծով վճարները ճանաչվում են պայմանագրային պայմաններին համապատասխան: Ակտիվների կառավարման գծով վճարները ճանաչվում են ծառայությունների մատուցման ժամանակաշրջանում: Նույն սկզբունքն է կիրառվում կարողությունների կառավարման, ֆինանսական պլանավորման և ակտիվների պահպանման ծառայությունների դեպքում, որոնք ենթադրում են ծառայությունների մատուցման երկար ժամկետ:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ծախսերի և եկամուտների ճանաչում (շարունակություն)

Շահաբաժիններից եկամուտ

Եկամուտը ճանաչվում է, երբ Խմբի՝ վճարը ստանալու իրավունքը հաստատված է:

Զուտ առևտրային եկամուտ

Զուտ առևտրային եկամուտը ներառում է առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից իրացված և չիրացված եկամուտը և ծախսը, տոկոսներից, շահաբաժիններից և արտարժութային տարբերություններից գոյացող բոլոր եկամուտները և ծախսերը: Զուտ առևտրային եկամուտը ներառում է նաև արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտը և ծախսը և ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ համապատասխան ծառայությունն արդեն մատուցված է:

Գործառնական վարձակալությունից եկամուտ

Ներդրումային գույքի վարձակալությունից ստացվող եկամուտը հաշվառվում է գծային մեթոդով վարձակալության ժամանակահատվածի ընթացքում և ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում գրանցվում է «Այլ եկամուտ» հոդվածում:

Արտարժույթի վերահաշվարկ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը Խմբի գործառնական և հաշվետվությունների ներկայացման արժույթն է: Արտարժույթով կատարված գործարքները գրանցվում են գործառնական արժույթով՝վերահաշվարկված ՀՀ ԿԲ կողմից հրապարակված գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվներն ու պարտավորությունները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով հաշվետու ամսաթվի փոխարժեքը: Արտարժույթով արտահայտված գործարքների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ որպես արտարժույթի վերագնահատման տարբերություններից օգուտ/(վնաս): Ոչ դրամային հոդվածների համար, որոնք ներկայացվում են սկզբնական արժեքով, վերագնահատման ժամանակ կիրառվում է գործարքի ամսաթվի փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքը:

Գործարքի ամսաթվի դրությամբ պայմանագրային փոխարժեքի և ԿԲ-ի փոխարժեքի տարբերությունը ներառվում է եկամտի կազմում՝ նվազեցված արտարժույթով կատարված գործարքի գծով ծախսերը: 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԿԲ-ի կողմից 1 ԱՄՆ դոլարի համար հայտարարված փոխարժեքը կազմում էր 484.1 ՀՀ դրամ (2016թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ԿԲ-ի կողմից 1 ԱՄՆ դոլարի համար հայտարարված փոխարժեքը կազմում էր համապատասխանաբար 483.94ՀՀ դրամ):

Սեգմենտային հաշվետվություն

Բանկի սեգմենտային հաշվետվությունները հիմնված են հետևյալ գործառնական սեգմենտների վրա՝ Մանրածախ բանկային գործունեություն, Կորպորատիվ բանկային գործունեություն, Առևտրային և ներդրումային բանկային գործունեություն:

Հարկում

Հաշվետու ժամանակաշրջանի շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են կապիտալում, որի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են կապիտալում:

Ընթացիկ հարկը ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման ենթակա ակնկալվող շահութահարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության, ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ, ինչպես նաև նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն հաստատված են թողարկման համար

մինչ համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է գնահատումների վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի վճարում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Հարկում (շարունակություն)

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուդվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում, և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջինները հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության, ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ առաջանում են նաև այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են դուստր, ասոցիացված կամ համատեղ կազմակերպություններում ներդրումներից, բացի այն դեպքերից, երբ ժամանակավոր տարբերությունների իրացման ժամկետները կառավարվում են մայր կազմակերպության կողմից, և հավանական է, որ դրանք մոտ ապագայում չեն իրացվի:

ՀՀ-ում գործում են նաև այլ գործառնական հարկեր, որոնք վերաբերում են Խմբի գործունեությանը: Այդ հարկերը ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության «Այլ ծախսեր» հոդվածում:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ դրամը, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցները՝ ներառյալ պարտադիր պահուստները և այլ բանկերում պահվող մնացորդները (բացառությամբ ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների համար դեպոնացված գումարների), որոնք կարճ ժամանակամիջոցում կարող են փոխարկվել կանխիկի, այդ թվում, մինչև 90 օր մարման ժամկետ ունեցող բարձր իրացվելի ներդրումները, որոնք հեշտությամբ փոխարկելի են ֆիքսված կանխիկ գումարների, և չեն ենթարկվում արժեքի փոփոխման զգալի ռիսկի:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

Թանկարժեք մետաղներ

Ոսկին և այլ թանկարժեք մետաղները հաշվառվում են ՀՀ ԿԲ գնման գներով, որոնք մոտավորապես համապատասխանում են իրական արժեքին՝ Լոնդոնի մետաղների բորսայի գնանշումների նկատմամբ զեղչմամբ: Թանկարժեք մետաղները ներառված են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության «Այլ ակտիվներ» հոդվածում:

Գների տատանումներն արտացոլվում են թանկարժեք մետաղներով գործառնություններից որպես զուտ եկամուտ/վնաս՝ այլ եկամուտների կամ ծախսերի կազմում:

Պահանջներ բանկերի նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Խումբն օգտագործում է այլ բանկերում տարբեր ժամկետայնության բացված

ընթացիկ և ավանդային հաշիվներ: Բանկերին տրամադրված ֆիքսված ժամկետով վարկերն ու կանխավճարները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ոչ ֆիքսված ժամկետներով միջոցներն ամորտիզացվում են Խմբի ղեկավարության կողմից գնահատված ժամկետներում: Բանկերի նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական գործիքներ

Խումբը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր հաշվեկշռում ճանաչում է այն դեպքում, երբ դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների բոլոր կանոնավոր կերպով գնումներն ու վաճառքները արտացոլվում են գործարքի ամսաթվով: Հետագայում իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների կանոնավոր ձեռքբերման գործարքները պայմանագրի օրվա և գործարքի օրվա միջև ընկած ժամանակահատվածում հաշվառվում են նույն սկզբունքով, ինչ-որ ձեռքբերված գործիքները:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչման պահին այն չափվում է իրական արժեքով՝ գումարած՝ այն դեպքում, երբ դա իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի հետ կապված ուղղակիորեն վերագրելի ծախսումները: Սկզբնական ճանաչումից հետո բոլոր ֆինանսական պարտավորությունները, բացի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորությունների (ներառյալ նաև առևտրային նպատակներով պահվող գործիքները), հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորությունները հաշվառվում են իրական արժեքով:

Խումբը իր ֆինանսական ակտիվները դասակարգում է հետևյալ խմբերի՝ վարկեր և դեբիտորական պարտքեր, իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ և մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ: Ներդրումների նման դասակարգումը կատարվում է դրանց ձեռքբերման պահին՝ Խմբի ղեկավարության կողմից սահմանված ուղեցույցի հիման վրա: Խումբը սահմանում է ֆինանսական ակտիվների դասակարգումը սկզբնական ճանաչման ժամանակ և հետագայում յուրաքանչյուր հաշվետու տարում անհրաժեշտության և հնարավորության դեպքում կարող է վերադասակարգել դրանք:

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ

Այս խմբում հաշվառվում են առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվները և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվները: Ֆինանսական ակտիվը հաշվառվում է այս խմբում, եթե այն ձեռք է բերվում կարճ ժամկետում վաճառքի նպատակով կամ եթե այդպես է որոշվում ղեկավարության կողմից ակտիվի ձեռքբերման պահին:

Իր բնականոն գործունեության ընթացքում, արտարժույթի և կապիտալի շուկաներում, Խումբը հանդես է գալիս որպես ածանցյալ գործիքներով պայմանագրերի կողմ, որոնք ներառում են ֆյուչերսներ, ֆորվարդներ, սվոպեր և օպցիոններ: Նմանատիպ ածանցյալ գործիքները դասակարգվում են որպես առևտրային նպատակներով պահվող և սկզբնապես ճանաչվում են ֆինանսական գործիքների նախնական ճանաչման քաղաքականության համաձայն, իսկ հետագա չափումը իրականացվում է իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է շուկաներում գնանշվող գների միջոցով կամ այնպիսի մոդելների կիրառմամբ, որոնց հիմքում ընկած են շուկաների ընթացիկ վիճակների գնահատումները և բազային գործիքների պայմանագրային գները և այլ գործոններ: Դրական իրական արժեք ունեցող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվ, իսկ բացասական իրական արժեքով ածանցյալ գործիքները՝ որպես պարտավորություն:

Այլ ֆինանսական գործիքներում ներառված ածանցյալ գործիքները դիտարկվում են որպես առանձին ածանցյալ գործիքներ, եթե դրանց գծով ռիսկերը և բնութագրիչները սերտորեն կապված չեն հիմնական պայմանագրերի ռիսկերի և բնութագրիչների հետ, և հիմնական պայմանագրերը չեն հաշվառվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Պարունակվող ածանցյալ գործիքը հանդիսանում է հիբրիդ ֆինանսական գործիքի բաղադրիչ, որը ներառում է ինչպես հիմնական պայմանագիրը, այնպես էլ ածանցյալ բաղադրիչը, ինչի արդյունքում հիբրիդ գործիք որոշ դրամական հոսքեր փոփոխվում են նույն ձևով, ինչ առանձին ածանցյալ գործիքինը:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական գործիքներ (շարունակություն)

Ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, երբ.

- Այդպես վարվելը զգալիորեն կնվազեցնի չափման անհամապատասխանությունները, որոնք կառաջանային, եթե ածանցյալ գործիքները համարվեին առևտրային նպատակներով պահվող, իսկ բազիսային ֆինանսական գործիքները հաշվառվեին ամորտիզացված արժեքով, ինչպես հաճախորդներին և բանկերին տրված վարկերը, կամ պարտքային արժեթղթերի տեսքով թողարկված արժեթղթերը:
- Որոշ ներդրումներ, ինչպես օրինակ կապիտալի գործիքներում կատարված ներդրումները, որոնք փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային քաղաքականության համաձայն հաշվառվում են իրական արժեքով և կառավարչական անձնակազմին զեկուցվում են այդ արժեքով, համարվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, և
- Ֆինանսական գործիքները, ինչպիսիք են մեկ կամ ավելի ներառված ածանցյալներ պարունակող պարտքային արժեթղթերը, որոնք էականորեն ազդում են դրամական հոսքերի վրա, համարվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Ածանցյալ գործիքները նաև դասակարգվում են որպես առևտրային նպատակներով պահվող, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք օգտագործվում են հեջավորման նպատակով: Առևտրային նպատակներով պահվող ակտիվներից շահույթը և վնասը արտացոլվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում:

Վարկեր և դեբիտորական պարտքեր

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Խմբի կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ՝ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում: Այնուհետև վարկերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հաճախորդներին տրված ֆիքսված մարման ժամկետ չունեցող վարկերը հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հաճախորդներին տրված վարկերի գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից կորուստների պահուստների գումարներով:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքներ

Վաճառքի համար մատչելի ներդրումները պարտքային, ինչպես նաև կապիտալի գործիքներում կատարված այն ներդրումներն են, որոնք Խումբը մտադիր է պահել անորոշ ժամկետով, և որոնք կարող են վաճառվել իրացվելիության կարիքների բավարարման համար, ինչպես նաև տոկոսադրույքներում, փոխարժեքներում կամ բաժնետոմսերի գներում փոփոխությունների դեպքում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները նախնական ճանաչումից հետո հաշվառվում են իրական արժեքով, ընդ որում օգուտներն ու վնասները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում մինչև ներդրումների օտարումը կամ արժեզրկումը, որի ընթացքում նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներառված կուտակված շահույթը կամ վնասը վերադասակարգվում է համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ամեն դեպքում, արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում: Վաճառքի համար մատչելի կապիտալի գործիքների գծով շահաբաժինները համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում գրանցվում են այն ժամանակ, երբ Խումբը իրավունք է ձեռք բերում ստանալու այդ շահաբաժինները: Կարգավորվող ֆինանսական շուկաներում ակտիվորեն վաճառվող ֆինանսական ակտիվի իրական արժեքը որոշվում է հաշվետու ամսաթվին բորսայի փակման պահին այդ ակտիվի գծով գնանշվող գների միջոցով: Ակտիվ շուկա չունեցող գործիքների իրական արժեքը որոշվում է գնահատման մոդելների միջոցով: Նման մոդելները ներառում են վերջին շուկայական անկախ գործառնությունները, էականորեն չտարբերվող ակտիվների շուկայական գներին հղում կատարելը, զեղչված դրամական հոսքերի վերլուծությունը: Հակառակ դեպքում ներդրումները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով արժեզրկումից կորուստները:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական գործիքների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Խումբն իրականացնում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի՝ արժեզրկված լինելու օբյեկտիվ հայտանիշների գնահատում:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվներ

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը համարվում են արժեզրկված և արժեզրկումից կորուստը ճանաչվում է միայն այն դեպքում, եթե կա արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ, որպես ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձությունների («ծախսային իրադարձություն») արդյունք, և այդ իրադարձությունը կամ իրադարձություններն ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվից կամ ակտիվների խմբից ակնկալվող ապագա դրամական հոսքերի վրա, որոնք կարելի է արժանահավատորեն չափել:

Արժեզրկումից առաջացած վնասի օբյեկտիվ հայտանիշը կարող է ներառել վարկառուի կամ վարկառուների խմբի զգալի ֆինանսական դժվարությունները, տոկոսագումարների և մայր գումարների վճարման պարտավորությունների խախտումների առկայությունը, այն հավանականությունը, որ տեղի կունենա սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմակերպում, ինչպես նաև դիտարկվող շուկաներից տեղեկատվությունն ակնկալվող ապագա դրամական հոսքերի չափերի նվազման վերաբերյալ, օրինակ՝ ժամկետանց վճարումների մակարդակի փոփոխություն կամ տնտեսական պայմանների փոփոխություն, որոնք կապված են ակտիվների արժեզրկման հետ;

Խումբն ի սկզբանե գնահատում է արժեզրկված լինելու հայտանիշները անհատապես՝ էական ակտիվների համար, և անհատապես կամ խմբային՝ բոլոր ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես էական չեն համարվում: Եթե Խումբը որոշում է, որ անհատապես գնահատված ֆինանսական ակտիվի համար չկա արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ, անկախ այն հանգամանքից, էական է այն, թե՝ ոչ, այդ ակտիվը ներառվում է համանման վարկային ռիսկերի բնութագրիչներ ունեցող ֆինանսական ակտիվների խմբում և դրանց արժեզրկված լինելը գնահատվում է խմբային հիմունքով: Ակտիվները, որոնց արժեզրկված լինելը գնահատվում է անհատական հիմունքով և որոնց նկատմամբ ճանաչվում են արժեզրկումից վնասներ, չպետք է գնահատվեն խմբային հիմունքով:

Արժեզրկված լինելու օբյեկտիվ հայտանիշների առկայության դեպքում արժեզրկումից վնասը իրենից ներկայացնում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի տարբերությունը, որը չի ներառում վարկերից՝ ապագայում սպասվող կորուստները, որոնք Խումբը դեռ չի կրել: Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկման պահուստի միջոցով, իսկ արժեզրկումից ծախսն արտացոլվում է համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Եթե վարկը կամ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումն ունի փոփոխական տոկոսադրույք, ցանկացած արժեզրկումից վնաս չափելու համար գեղչման դրույքը պայմանագրով որոշված ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքն է: Խումբը կարող է արժեզրկումը չափել գործիքի իրական արժեքի հիման վրա՝ օգտագործելով տեսանելի շուկայական գինը:

Գրավով ապահովված ֆինանսական ակտիվների ապագա հոսքերի ներկա արժեքի հաշվարկը հիմնվում է այն դրամական հոսքերի վրա, որոնք կարող են ստացվել գրավի իրացումից, նվազեցված գրավի բռնագանձման և օտարման ծախսումներով՝ անկախ բռնագանձման հավանականությունից:

Արժեզրկման խմբային գնահատման նպատակով ֆինանսական ակտիվները խմբավորվում են Խմբի ներքին վարկային դասակարգման հիման վրա, որը հաշվի է առնում վարկային ռիսկի այնպիսի բնութագրիչներ, ինչպիսիք են ակտիվի տեսակը, ոլորտը, աշխարհագրական դիրքը, գրավի տեսակը, ժամկետայնության կարգավիճակը և այլ կապակցված գործոններ:

Ֆինանսական ակտիվների խմբի գծով ապագա դրամական հոսքերը, որոնց արժեզրկված լինելը գնահատվում է խմբային հիմքով, որոշվում են ակտիվների գծով կրած վնասների պատմական վիճակագրության հիման վրա, որի գծով պարտքային ռիսկի բնութագրիչները համարժեք են համանման ակտիվների խմբի բնութագրիչներին: Պատմական վիճակագրական շարքերը ճշգրտվում են ընթացիկ շուկայական իրավիճակը արտացոլելու համար՝ չեզոքացնելու պատմական վիճակագրական շարքերի հիմքում ընկած այն շուկայական պայմանների ազդեցությունը, որոնք տվյալ ժամանակաշրջանում գոյություն չունեն, և արտացոլելու պատմական վիճակագրական շարքերի հիմքում չընդգրկված շուկայական նոր պայմանները:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական գործիքների արժեզրկում (շարունակություն)

Ապագա դրամական հոսքերում գնահատման փոփոխությունները արտացոլում և համապատասխանում են դիտարկվող շուկաներում յուրաքանչյուր տարվա տեղեկատվության փոփոխությանը (օրինակ, գործազրկության մակարդակի փոփոխություն, անշարժ գույքի գներ, ապրանքների գներ, վճարունակության կարգավիճակ կամ այլ գործոններ, որոնք վկայում են խմբի կրած վնասների և դրանց չափի մասին): Ապագա դրամական հոսքերի գնահատման համար օգտագործվող մեթոդաբանությունը և ենթադրությունները պարբերաբար վերանայվում են Խմբի կողմից՝ վնասների իրական և գնահատված արժեքների միջև տարբերությունները նվազեցնելու նպատակով:

Վարկերը համապատասխան պահուստների հետ միասին դուրս են գրվում, եթե ապագայում չկա վարկը հավաքագրելու իրատեսական հեռանկար, և երբ բոլոր գրավներն օգտագործվել են կամ փոխանցվել Խմբին: Եթե հաջորդող տարում, գնահատված արժեզրկման գծով ծախսը ավելանում կամ նվազում է արժեզրկման ճանաչումից հետո կատարված իրադարձությունների պատճառով, նախկինում ճանաչված արժեզրկման ծախսը ավելացվում կամ նվազեցվում է պահուստի գումարը ճշտելով: Եթե ապագա դուրսգրումը հետագայում վերականգնվում է, ապա վերականգնված գումարը կրեդիտագրվում է պահուստի հաշվին:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակված վնասը փոխանցելով շահույթի կամ վնասի կազմ՝ որպես վերադասակարգման ճշգրտում: Կուտակված վնասը, որը այլ համապարփակ եկամտից վերադասակարգվում է շահույթի կամ վնասի կազմ, հանդիսանում է ձեռքբերման արժեքի՝ հանած մայր գումարի մարումները ու ամորտիզացիան, և ընթացիկ իրական արժեքի՝ հանած նախկինում շահույթի կամ վնասի կազմում ճանաչված արժեզրկումից կորուստները, միջև տարբերությունը: Ժամանակի արժեքին վերագրելի արժեզրկման գծով պահուստի փոփոխություններն արտացոլվում են որպես տոկոսային եկամտի բաղադրիչ:

Եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկված վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթի իրական արժեքն աճում է, և այդ աճը հնարավոր է անկողմնակալորեն վերագրել շահույթի կամ վնասի կազմում արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը, ապա արժեզրկումից կորուստը հակադարձվում է, իսկ հակադարձված գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այնուհանդերձ, արժեզրկված վաճառքի համար մատչելի բաժնային արժեթղթի իրական արժեքի ցանկացած հետագա վերականգնումը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը, կամ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ

- ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքի ժամկետն ավարտված է,
- Խումբը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամբողջությամբ և առանց էական ուշացման փոխանցել չորրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրի համաձայն, ինչպես նաև,
- Խումբը կամ (ա) փոխանցել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) ոչ փոխանցել և ոչ էլ պահպանում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողության իրավունքը:

Այն դեպքում, երբ Խումբը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը և ոչ փոխանցել ու ոչ էլ պահպանում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, և չի փոխանցել ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ակտիվը հաշվառվում է ակտիվում Խմբի շարունակվող մասնակցության սահմաններում: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի նկատմամբ երաշխիքի ձև, այդպիսի մասնակցությունը չափվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնով՝ ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեք և Խմբից պահանջվող փոխհատուցման առավելագույն գումար:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում (շարունակություն)

Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի գծով թողարկված/կամ գնված օպցիոնի ձև, ներառյալ՝ դրամական միջոցներով մարվող օպցիոններ կամ նմանատիպ գործիքներ, Խմբի մասնակցության չափը որոշվում է այն գումարի չափով, որով Խումբը կարող է հետ գնել փոխանցված ակտիվը, բացառությամբ իրական արժեքով գնահատված ակտիվի գծով վաճառված օպցիոնի, ներառյալ՝ դրամական միջոցներով մարվող օպցիոններ կամ նմանատիպ գործիքներ, երբ շարունակվող մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ փոխանցված ակտիվի իրական արժեք և օպցիոնի իրագործման գին:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ մարվում, չեղյալ է համարվում կամ ուժի մեջ լինելու ժամկետը լրանում է: Նույն վարկատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորության փոխարինումը այլ ֆինանսական պարտավորությամբ (որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ երբ կատարվում է գործող պարտավորության պայմանների էական փոփոխություն) հանգեցնում է հին պարտավորության ապաճանաչմանը և նոր պարտավորության ճանաչմանը, իսկ համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը արտացոլվում է համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսավորման գործառնություններ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակում են հաշվառվել հաշվեկշռում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում որպես առանձին հաշվեկշռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է բանկերի կամ հաճախորդների միջոցների կազմում:

Հետադարձ վաճառքի պայմանագրով արժեթղթերի ձեռքբերումը (հակադարձ ռեպո) արտացոլվում է բանկերի նկատմամբ պահանջների կամ հաճախորդներին տրված վարկերի կազմում՝ կախված իրավիճակից: Վաճառքի գնի և ձեռք բերման գնի միջև տարբերությունը դիտարկվում է որպես տոկոսային եկամուտ և հաշվեգրվում ռեպո պայմանագրի ժամկետի ընթացքում՝ արդյունավետ եկամտաբերության մեթոդով:

Եթե հակադարձ ռեպո պայմանագրով գնված ակտիվները վաճառվեն չորրորդ կողմին, արժեթղթերի վերադարձի պարտավորությունը արտացոլվում է առևտրային գործառնությունների գծով պարտավորություններում՝ իրական արժեքով:

Վարձակալություն

Ֆինանսական վարձակալություն՝ Խումբը որպես վարձատու

Խումբը ճանաչում է ֆինանսական վարձակալությունից դեբիտորական պարտքը վարձակալության զուտ ներդրման գումարի չափով՝ վարձակալության պայմանների ուժի մեջ մտնելու պահից սկսած: Այս գործառնությունները ներկայացվում են որպես հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ: Ֆինանսական եկամուտը ճանաչվում է վարձակալության ընթացքում այնպես, որ ապահովի անփոփոխ պարբերական դրույք վարձակալության շրջանակներում չմարված զուտ ներդրումների նկատմամբ: Սկզբնական ուղղակի ծախսերը ներառվում են ստացվելիք գումարների սկզբնական ճանաչման ժամանակ:

Երբ վարձակալման պայմանագրերի դադարեցման արդյունքում Խմբի տիրապետության տակ է անցնում գրավի առարկան, այդ ակտիվները չափվում են իրացման զուտ արժեքի և պատմական ամորտիզացված արժեքների նվազագույնով:

Գործառնական վարձակալություն՝ Խումբը որպես վարձատու

Խումբը համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացնում է գործառնական վարձակալության առարկա հանդիսացող ակտիվը՝ ըստ ակտիվի բնույթի: Գործառնական վարձակալությունից ստացվող վարձակալական եկամուտը ճանաչվում է շահույթում կամ վնասում որպես այլ եկամուտ՝ հավասարաչափ վարձակալության ժամկետի ընթացքում: Վարձակալներին տրամադրված զեղչերի համախառն գումարը արտացոլվում է որպես վարձակալությունից եկամտի նվազեցում՝ հավասարաչափ վարձակալության ժամկետի ընթացքում: Գործառնական վարձակալության պայմանագրի հետ կապված սկզբնական ուղղակի ծախսումները ավելացվում են վարձակալության առարկա հանդիսացող ակտիվի հաշվեկշռային արժեքին:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ, բացի հողից և շենքերից: Բանկի շենքերը ներկայացված են իրական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը: Հողը հաշվառվում է իրական արժեքով և ունի անսահմանափակ օգտակար ծառայության ժամկետ և, հետևաբար, չի ամորտիզացվում:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայություն (տարի)	*Դրույք (%)*
Շենքեր	20	5
Համակարգիչներ	1	100
Տրանսպորտային միջոցներ	5	20
Սարքավորումներ	5	20
Այլ հիմնական միջոցներ	5	20

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալման ժամկետի և հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով: Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները հաշվառվում են փաստացի ծախսերի և արժեզրկումից կորուստների տարբերությամբ: Շինարարական աշխատանքների ավարտից հետո ակտիվները փոխանցվում են հիմնական միջոցներին և հաշվառվում են իրենց մնացորդային արժեքով: Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները չեն ամորտիզացվում, քանի դեռ պատրաստ չեն օգտագործման համար:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ դրանք բավարարում են ակտիվի ճանաչման չափանիշին: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

Հողը և շինությունները վերագնահատվում են կանոնավոր կերպով մոտավորապես 3-5 տարին մեկ: Վերագնահատման հաճախականությունը կախված է ակտիվների իրական արժեքի փոփոխություններից: Այն դեպքում, երբ նշանակալի շեղում կա վերագնահատված ակտիվների իրական արժեքի և նրանց մնացորդային արժեքների միջև, ապա անցկացվում է հետագա վերագնահատում: Վերագնահատումը կատարվում է հիմնական միջոցների ողջ դասի համար:

Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի աճը արտացոլվում է կապիտալում՝ հիմնական միջոցների վերագնահատման պահուստում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է ֆինանսական արդյունքներում տվյալ ակտիվի գծով նախկինում ճանաչված վերագնահատումից վնասը. այս դեպքում վերագնահատումից աճը նույնպես ճանաչվում է ֆինանսական արդյունքներում: Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի նվազումը ճանաչվում է ֆինանսական արդյունքներում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է նախկինում տվյալ ակտիվի գծով կապիտալում ճանաչված վերագնահատումից աճը:

Հիմնական միջոցների օգտագործմանը զուգահեռ, տվյալ ակտիվի վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության տարբերությունը փոխանցվում է չբաշխված շահույթին: Վերագնահատված գումարով հաշվառվող հիմնական միջոցների իրացման դեպքում, իրացված հիմնական միջոցների համապատասխան դասի վերագնահատման պահուստում վերագրված գումարը փոխանցվում է չբաշխված շահույթին:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից, արտոնագրերից և այլն:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում՝1-ից 10 տարվա ընթացում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հայտանիշեր: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական հաշվետու տարում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

Բռնագանձված ակտիվներ

Որոշ դեպքերում, ակտիվները բռնագանձվում են վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Շնորհներ

Ակտիվներին վերաբերող շնորհները ներառվում են այլ պարտավորություններում և կրեդիտագրվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությանը գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Ներգրավված միջոցներ

Ներգրավված միջոցները, որոնք ներառում են ՀՀ կառավարության և Կենտրոնական բանկի, ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների հաշիվները, թողարկված արժեթղթերը և ստորադաս փոխառությունները, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրավված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

Ֆինանսական երաշխիքներ

Ֆինանսական երաշխիքների պայմանագրերը այն պայմանագրերն են, որոնք պահանջում են, որ երաշխիք տրամադրողը փոխհատուցի երաշխիքը ստացողին կոնկրետ պարտապանի կողմից պարտքային գործիքի ժամկետներին համաձայն վճարումները ժամանակին չկատարելու պատճառով վերջինիս կողմից կրած վնասների դիմաց: Նման ֆինանսական երաշխիքներ տրամադրվում են բանկերին, ֆինանսական և այլ կազմակերպություններին՝ որպես հաճախորդների վարկերի, օվերդրաֆտները և այլ բանկային գործիքների ապահովման միջոց:

Ֆինանսական երաշխիքների պայմանագրերը համախմբված ֆինանսական հաշվետվություններում սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով «Այլ պարտավորություններ» հոդվածում՝ միջնորդավճարների գծով ստացված վարձատրության չափով: Պարտավորության սկզբնական ճանաչումից հետո Խումբը յուրաքանչյուր երաշխիքի պայմանագրի գծով իր պարտավորությունը գնահատում է հետևյալ երկու մեծություններից առավելագույնով. միջնորդավճարների գծով ամորտիզացված վարձատրությունը և երաշխիքի պայմանագրից առաջացող ֆինանսական պարտավորությունը մարելու համար անհրաժեշտ ծախսումների լավագույն գնահատականը:

Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Խումբն ունի գործող իրավական կամ կառուցողական պարտավորություն, որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտավորության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Կապիտալ

Կանոնադրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը և չմարվող արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը վերաբերող ուղղակի ծախսերը, բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության միավորման դեպքերի, արտացոլվում են սեփական կապիտալում որպես թողարկման գծով մուտքերից նվազեցում: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես էմիսիոն եկամուտ:

Էմիսիոն եկամուտ

Էմիսիոն եկամուտը ներառում է բաժնետոմսերի թողարկումից ստացված ցանկացած հավելավճար: Գործարքի գծով ցանկացած ծախսում, որը կապված է բաժնետոմսերի թողարկման հետ, նվազեցվում է էմիսիոն եկամուտից:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվետու ամսաթվի դրությամբ շահաբաժինները նվազեցվում են սեփական կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն միայն այն դեպքում, երբ դրանք հայտարարվել են մինչև հաշվետու ամսաթիվը ներառյալ: Մինչև հաշվետու ամսաթիվը առաջարկված կամ հաշվետու ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը առաջարկված կամ հայտարարված շահաբաժինները բացահայտվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում:

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստը օգտագործվում է գույքի իրական արժեքի աճը և նույն ակտիվի՝ նախկինում կապիտալում ճանաչված աճի սահմաններում իրական արժեքի նվազեցումը գրանցելու համար:

Վաճառքի համար մատչելի արժեթղթերի վերագնահատման պահուստ

Այս պահուստը արտացոլում է վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքի փոփոխությունները:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները հաշվանցվում են պարտավորություններով և համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվում են զուտ մնացորդով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավական հիմք և գոյություն ունի դրանք զուտ հիմքով մարելու կամ միաժամանակ ակտիվները իրացնելու և պարտավորությունները մարելու մտադրություն:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՍ-ների, կամ համանման գործարքների խմբից առաջաղող օգուտների և վնասների համար, օրինակ՝ Խմբի առևտրային գործունեությունից:

4. Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումներ

ՖՀՄՍ համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Խմբի ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Իրական արժեքի չափում

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է իրական արժեքի գնահատման մոդելներ: Սա ներառում է զարգացող գնահատումները և ենթադրությունները համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կստացվեր շուկայական գործարքների դեպքում (տես՝ Ծանոթագրություն 35):

Ներդրումային արժեթղթերի դասակարգում

Խմբի ներդրումային արժեթղթերը ներառում են ՀՀ պետական և ոչ պետական պարտատոմսերը, ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթերը և կորպորատիվ բաժնետոմսերը: Սկզբնական ճանաչման ժամանակ Խումբը դասակարգում է արժեթղթերը որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ, մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվներ և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, որոնց իրական արժեքի ճշգրտումն իրականցվում է կապիտալում:

Կապակցված կողմերի հետ գործառնություններ

Խումբն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Խումբը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա:

Վարկերի արժեզրկման պահուստ

Խումբը պարբերաբար կատարում է վարկերի և դեբիտորական պարտքերի՝ արժեզրկված լինելու վերլուծություն: Սեփական փորձից ելնելով՝ Խումբը արժեզրկումից վնասները գնահատելիս օգտագործում է իր սուբյեկտիվ դատողություններն այն դեպքերում, երբ վարկառուն ֆինանսական դժվարություն է կրում և համանման վարկառուների վերաբերյալ չկա բավարար փաստացի տեղեկատվություն: Խումբը համանման կերպով գնահատում է ապագա դրամական հոսքերի փոփոխությունները դիտարկվող տեղեկատվության հիման վրա, որը վկայում է վարկառուի պարտավորությունների մարման ոչ բարենպաստ կարգավիճակի, կա՛մ պետական, կա՛մ տեղական տնտեսական պայմանների փոփոխության մասին, որոնք վերագրվում են տվյալ խմբի ակտիվների գծով պարտավորությունների չկատարման դեպքերին: Ղեկավարությունն օգտագործում է գնահատումներ՝ հիմնվելով ակտիվների նկատմամբ համանման վարկային ռիսկի բնութագրերի և վարկերի ու դեբիտորական պարտքերի խմբերի արժեզրկման օբյեկտիվ հայտանիշների պատմական տվյալների վրա: Սեփական փորձից ելնելով՝ Խումբը օգտագործում է իր սուբյեկտիվ դատողությունները դիտարկվող վարկերի և դեբիտորական պարտքերի վերաբերյալ տեղեկատվության ճշգրտման համար՝ ընթացիկ իրավիճակը արտացոլելու նպատակով:

7. Տոկոսային եկամուտ և ծախս

հազար ՀՀ դրամ	01/10/17-31/12/17թ.	01/01/17-31/12/17թ.	01/10/16-31/12/16թ.	01/01/16-31/12/16թ.
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	4,282,918	15,608,153	3,292,673	12,246,697
Վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթեր	540,441	1,867,749	323,427	1,206,517
Պահանջներ բանկերի նկատմամբ	44,494	109,410	19,997	400,785
Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր	21,458	21,458	-	-
Այլ տոկոսային եկամուտ	10,213	17,482	875	5,657
Ընդամենը տոկոսային եկամուտ	**4,899,526**	**17,624,252**	**3,636,974**	**13,859,656**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	1,600,402	6,562,643	1,468,134	5,388,906
Այլ փոխառու միջոցներ	189,236	743,889	173,545	792,726
Ստորադաս փոխառություն	104444	404862	120431	473964
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	195,191	398,837	80,341	132,163
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	89,538	173,838	-	-
Ընդամենը տոկոսային ծախս	**2,178,811**	**8,284,069**	**1,842,451**	**6,787,759**

2017 թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող ժամանակաշրջանի ընթացքում անհատապես արժեզրկված վարկերի գծով հաշվեգրված տոկոսային եկամուտը կազմել է 155,751 հազ. դրամ (2016թ.՝ 125,489 հազ. դրամ):

8. Միջնորդավճարների գծով եկամուտ և ծախս

հազար ՀՀ դրամ	01/10/17-31/12/17թ.	01/01/17-31/12/17թ.	01/10/16-31/12/16թ.	01/01/16-31/12/16թ.
Վճարային քարտերով գործառնություններ	264,142	947,367	216,226	840,209
Միջնորդավճարներ փոխանցումներից	241,022	722,044	157,451	567,315
Դրամարկղային գործառնություններ	84,259	318,573	74,747	218,385
Միջնորդավճարներ վարկերից	21,783	168,542	27,893	109,329
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	17,077	43,690	16,299	53,268
Այլ	55,136	232,929	50,409	215,134
Ընդամենը միջնորդավճարների գծով եկամուտ	**683,421**	**2,433,145**	**543,025**	**2,003,640**
Վճարային քարտերով գործառնություններ	164,325	526,130	124,146	468,958
Դրամարկղային գործառնություններ	16,159	84,079	63,005	171,014
Միջնորդավճարներ փոխանցումներից	30,805	101,166	25,034	94,081
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	797	5,015	-	681
Այլ ծախսեր	12,277	35,914	7,126	28,995
Ընդամենը միջնորդավճարների գծով ծախս	**224,363**	**752,304**	**219,311**	**763,729**

9. Զուտ առևտրային եկամուտ

հազար ՀՀ դրամ	01/10/17-31/12/17թ.	01/01/17-31/12/17թ.	01/10/16-31/12/16թ.	01/01/16-31/12/16թ.
Արտարժույթի փոխարկումից զուտ օգուտ/վնաս	375,492	1,387,360	462,502	1,634,306
Առևտրային արժեթղթերից զուտ օգուտ/ վնաս	22,861	45,861	13	36,940
Ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով զուտ օգուտ/ վնաս	26,439	(153,567)	57,203	(772,190)
Ընդամենը զուտ առևտրային եկամուտ	**424,794**	**1,279,654**	**519,718**	**899,056**

10. Այլ եկամուտ

հազար ՀՀ դրամ	01/10/17-31/12/17թ.	01/01/17-31/12/17թ.	01/10/16-31/12/16թ.	01/01/16-31/12/16թ.
Ստացված տույժեր և տուգանքներ	134,015	589,407	190,134	781,173
Թանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ եկամուտ	27,180	110,193	(28,054)	5,759
Շահաբաժիններից եկամուտ	606	2,424	606	2,424
Հիմնական միջոցների վաճառքից եկամուտ	(9,984)	(17,164)	-	330
Շնորհներից եկամուտ	1,374	4,127	1,263	4,469
Ինկասացիայի գծով եկամուտ	9,286	31,812	8,261	33,489
Այլ եկամուտ	80,360	246,495	22,883	116,202
Ընդամենը այլ եկամուտ	**242,835**	**967,294**	**195,093**	**943,846**

11. Արժեզրկումից կորուստներ

հազար ՀՀ դրամ	01/10/17-31/12/17թ.	01/01/17-31/12/17թ.	01/10/16-31/12/16թ.	01/01/16-31/12/16թ.
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ (Ծան. 18)	239,327	1,146,313	806,740	1,559,419
Այլ ակտիվներ (Ծան. 25)	2,918	66,561	(31,938)	(14,953)
Ընդամենը արժեզրկումից կորուստներ	**242,243**	**1,212,874**	**774,801**	**1,544,466**

12. Անձնակազմի գծով ծախսեր

հազար ՀՀ դրամ	01/10/17-31/12/17թ.	01/01/17-31/12/17թ.	01/10/16-31/12/16թ.	01/01/16-31/12/16թ.
Աշխատավարձ	1,349,753	4,250,933	874,519	3,346,119
Այլ ծախսեր	20,143	47,856	11,241	33,141
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	**1,369,896**	**4,298,789**	**885,760**	**3,379,260**

13. Այլ ծախսեր

հազար ՀՀ դրամ	01/10/17-31/12/17թ.	01/01/17-31/12/17թ.	01/10/16-31/12/16թ.	01/01/16-31/12/16թ.
Հիմնական միջոցների վերանորոգման և սպասարկման ծախսեր	41,287	125,906	32,558	103,687
Խորհրդատվություն և այլ ծառայություններ	21,601	72,333	14,911	103,599
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	128,734	507,801	119,590	476,212
Հարկեր (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	11,633	35,006	8,544	30,587
Գովազդի գծով ծախսեր	89,167	315,430	56,347	382,922
Ապահովագրության գծով ծախսեր	29,648	100,583	29,664	92,605
Հիմնական միջոցների և հողի վերգնահատումից կորուստներ	-	-	7,738	7,738
Բռնագանձված գրավի արժեզրկումից կորուստներ	58,078	58,078	100,563	100,563
Կապ	35,034	133,030	35,562	129,409
Անվտանգության գծով ծախսեր	55,993	205,518	47,126	191,309
Ավանդների ապահովագրման ծախսեր	55,850	231,003	44,602	137,746
Գրասենյակային ծախսեր	3,698	40,745	5,076	47,084
Գործուղման ծախսեր	8,822	24,020	4,559	18,417
Հայկական ծրագրերի գծով ծախսեր	47,749	182,661	43,660	168,840
ԱրՔա-ի գծով ծախսեր	48,719	174,557	71,975	150,881
Վճարված տուգանքներ	207	3,891	2,000	4,865
Այլ ծախսեր	210,871	661,505	138,011	577,244
Ընդամենը ծախսեր	**847,088**	**2,872,067**	**762,486**	**2,723,708**

14. Շահութահարկի գծով ծախս

հազար ՀՀ դրամ	01/10/17-31/12/17թ.	01/01/17-31/12/17թ.	01/10/16-31/12/16թ.	01/01/16-31/12/16թ.
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	244,558	788,176	282,236	374,398
Նախորդ ժամանակաշրջանի շահութահարկի ճշգրտում	-	-	-	-
Հետաձգված հարկի գծով ծախս/(փոխհատուցում)	1,298	217	(30,411)	(430,840)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	**245,856**	**788,393**	**251,827**	**(56,442)**

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2016թ.՝ 20%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկման նպատակով հաշվեկշռային արժեքների միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է՝ կիրառելով 20% հիմնական դրույքաչափը:

Հաշվապահական շահույթի և հարկային ծախսերի միջև թվաբանական համաձայնեցումը ներկայացված է ստորև.

հազար ՀՀ դրամ	*31/12/17*	*31/12/16*
(Վնաս)/շահույթ նախքան հարկումը	**4,414,515**	**1,508,590**
Շահութահարկի (փոխհատուցում)/ծախս՝ 20% դրույքաչափով	**882,903**	**301,718**
Չհարկվող եկամուտ	138,458	
Չնվազեցվող ծախսեր	(252,420)	149,3 62
Արտարժույթի փոխարկումից զուտ վնաս/(օգուտ)	19,451	0
Նախորդ ժամանակաշրջանի շահութահարկի ճշգրտում	0	(35,072)
Հետաձգված հարկային ակտիվներ՝ ճանաչված 2016թ.-ին հիմնական միջոցների գնահատված հարկային բազայի ավելացման հետևանքով		(472.450)
Շահութահարկի գծով ծախս	**788,393**	**(56,442)**

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

հազար ՀՀ դրամ	*2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ*	*Հաշվեգրված շահույթում և վնասում*	*Ճանաչված այլ համապարփակ ֆինանսական արդյունքում*	*2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ*
Բռնագանձված ակտիվներ	39,209			39,209
Այլ ակտիվներ	27,190	(31,270)		(4,080)
Այլ պարտավորություններ	41,163	-		41,163
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	**107,562**	**(31,270)**	**-**	**76,292**
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր	(337,476)	–	(201,646)	(539,122)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	(626,276)	51		(626,255)
Հիմնական միջոցներ	(255,144)	31,002	12,010	(212,131)
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	(1,807)			(1,807)
	(1,220,703)	**31,054**	**(189,636)**	**(1,379,285)**
Զուտ հետաձգված հարկային պարտավորություններ	**(1,113,141)**	**(217)**	**(189,636)**	**(1,302,993)**

հազար ՀՀ դրամ	*2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ*	*Հաշվեգրված շահույթում և վնասում*	*Ճանաչված այլ համապարփակ ֆինանսական արդյունքում*	*2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ*
Բռնագանձված ակտիվներ	19,096	20113	0	39,209
Այլ ակտիվներ	6,254	20,936	0	27,190
Այլ պարտավորություններ	35,556	5,607	0	41,163
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	**60,906**	**46,656**	**0**	**107,562**
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր	(80,482)	–	(256,994)	(337,476)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	(504,846)	(121,430)	-	(626,276)
Հիմնական միջոցներ	(719,730)	507,340	(42,754)	(255,144)
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	(79)	(1,728)		(1,807)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություններ	**(1,305,137)**	**384,182**	**(299,748)**	**(1,220,703)**
Զուտ հետաձգված հարկային պարտավորություններ	**(1,244,231)**	**430,838**	**(299,748)**	**(1,113,141)**

15. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

հազար ՀՀ դրամ	**31/12/2017թ.**	**31/12/2016թ.**
Կանխիկ դրամական միջոցներ	8,802,423	10,895,951
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	29,005,963	32,812,539
Այլ բանկերում տեղաբաշխված միջոցներ	2,033,663	1,043,449
Ընդամենը դրամական միջոցներ և համարժեքներ	**39,842,049**	**44,751,939**

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ թղթակցային հաշիվները ՀՀ ԿԲ-ում ներառում են ՀՀ բանկային օրենսդրության համաձայն ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված պարտադիր պահուստները, որոնք հաշվարկվում են Խմբի կողմից ներգրաված դրամային միջոցների 2%-ի և արտարժույթով միջոցների 18%-ի չափով (2016թ.՝ դրամային միջոցների 2%-ի և արտարժույթով միջոցների 18%-ի չափով)՝ կազմելով 22,573,220 հազ. դրամ (2016թ.՝ 20,038,884 հազ. դրամ): Այդ միջոցների ելքագրումն արգելված չէ, սակայն պահուստավորման նվազագույն չափը չպահպանելը հանգեցնում է ԿԲ-ի կողմից տույժերի կիրառման: Պարտադիր պահուստավորման դիմաց Խումբը տոկոսներ չի ստանում:

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ բանկերում տեղաբաշխված միջոցները 1,716,360 հազ. դրամ գումարով (84.4%) կենտրոնացված են երեք բանկերում (2016թ.՝ 926,842 հազ. դրամ գումարով (88.8%) կենտրոնացված են երեք բանկերում):

16. Առևտրային արժեթղթեր

հազար ՀՀ դրամ	**31/12/2017թ.**	**31/12/2016թ.**
ՀՀ կառավարության կողմից թողարկված պարտքային արժեթղթեր	787,330	139,594
ՀՀ ոչ պետական արժեթղթեր	-	45,239
Ընդամենը առևտրային արժեթղթեր	**787,330**	**184,833**

Ստորև ներկայացվում են նշված արժեթղթերի անվանական տոկոսադրույքները և մարման ժամկետները.

	31/12/2017թ.		***31/12/2016թ.***	
	%	***Մարման ժամկետ***	***%***	***Մարման ժամկետ***
ՀՀ կառավարության կողմից թողարկված պարտքային արժեթղթեր	8.00-13.00	2020-2036	10.0-12.0	2018-2023
ՀՀ ոչ պետական արժեթղթեր			15	2018

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ երրորդ անձանց հետգնման պայմանագրերով վաճառված Առևտրային արժեթղթեր չկան (2016թ.՝0դրամ): Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության մեջ այս արժեթղթերը վերադասակարգվում են որպես հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր (Ծան. 20):

17. Պահանջներ բանկերի նկատմամբ

հազար ՀՀ դրամ	**31/12/2017թ.**	**31/12/2016թ.**
ՀՀ ԿԲ-ում դեպոնացված միջոցներ	920,000	720,000
Բանկերին տրված վարկեր և ավանդներ	753,858	4,006
Հակադարձ հետգնման պայմանագրեր	7,025,413	
Դեբիտորական պարտքեր վճարահաշվարկային ծառայությունների գծով	1,194,907	1,039,310
Այլ	652,177	557,566
Ընդամենը պահանջներ բանկերի նկատմամբ	**10,546,355**	**2,320,882**

18. Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ

հազար ՀՀ դրամ	**31/12/2017թ.**	**31/12/2016թ.**
Վարկեր հաճախորդներին	139,239,113	106,201,760
Օվերդրաֆտ	25,558,298	15,672,505
Ռեպո համաձայնագրեր	4,820,511	1,373,788
Ֆակտորինգ	95,247	33,629
Ակրեդիտիվ	1,525	1,131
Դեբիտորական պարտքեր ֆինանսական վարձակալության	316,157	296,207

հազար ՀՀ դրամ	31/12/2017թ.	31/12/2016թ.
գծով		
վարկերի գծով արժեզրկման պահուստ	(4,863,351)	(4,554,196)
	165,167,500	**119,024,824**

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի տասը խոշոր վարկառուներին տրամադրված վարկերի կենտրոնացում 48,622,782 հազ. դրամ ընդհանուր գումարով (համախառն վարկային պորտֆելի 28.60%) (2016թ.՝ 49,226,623 հազ. դրամ ընդհանուր գումարով (համախառն վարկային պորտֆելի 40%): Նշված վարկերի գծով արժեզրկումից պահուստները կազմում են 1,251,130 հազ. դրամ (2016թ.՝1,184,887 հազ. դրամ):

Հաճախորդներին տրված վարկերը և փոխառությունները, ըստ տնտեսության ճյուղերի ունեն հետևյալ տեսքը.

հազար ՀՀ դրամ	31/12/2017թ.	31/12/2016 թ.
Սպառողական վարկեր ֆիզիկական անձանց	43,142,026	31,428,298
Հիփոթեքային վարկեր	28,612,851	20,706,198
Առևտուր	23,146,110	16,181,097
Էներգետիկա	7,699,389	4,961,672
Այլ	23,114,263	9,856,170
Շինարարություն	6,100,246	5,148,382
Տրանսպորտ և կապ	17,701,025	18,626,511
Գյուղատնտեսություն , ներառյալ ֆիզիկական անձանց տրված վարկեր	7,012,168	4,621,160
Արդյունաբերություն	6,362,891	3,815,017
Ծառայությունների ոլորտ	7,139,882	8,234,515
	170,030,851	**123,579,020**
Հանած՝ վարկերի գծով արժեզրկման պահուստ	(4,863,351)	(4,554,196)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	**165,167,500**	**119,024,824**

18. Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ (շարունակություն)

Ստորև ներկայացված է վարկերի արժեզրկման պահուստի համաձայնեցումը՝ ըստ դասերի.

31/12/2017թ

ազար ՀՀ դրամ	*Արդյունա-բերություն*	*Էներգետիկա*	*Գյուղատն-տեսություն (ներառյալ ֆիզիկական անձանց տրված վարկեր)*	*Շինարա-րություն*	*Առևտուր*	*Տրանսպոր տ և կապ*	*Ծառայութ-յունների ոլորտ*	*Սպառող-ական վարկեր ֆիզիկական անձանց*	*Հիփոթե-քային վարկեր*	*Այլ*	*Ընդամենը*
2017թ. հունվարի 1-ի դրությամբ	**547,956**	**44,656**	**734,327**	**708,490**	**417,923**	**220,099**	**121,723**	**676,991**	**1,045,123**	**36,908**	**4,554,196**
Տարվա ծախս/ (հակադարձում)	30,820	24,642	197,989	87,277	232,288	23,419	25,224	218,658	174,485	131,513	1,146,313
Դուրսգրում	(9,747)		(110,432)	(90,418)	(207,695)		(136,936)	(1,190,886)	(436,710)	(46,258)	(2,229,081)
Վերականգնում	19,853		19,391	26,457	65,571	9,155	54,395	779,854	393,393	23,854	1,391,924
2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**588,882**	**69,298**	**841,275**	**731,805**	**508,087**	**252,673**	**64,406**	**484,618**	**1,176,291**	**146,017**	**4,863,353**
Անհատական հիմունքներով արժեզրկում	540,538	-	792,508	708,705	344,399	240,206	449	38,299	917,763	13,824	3,596,691
Խմբային հիմունքներով արժեզրկում	48,345	69,298	48,767	23,100	163,688	12,467	63,957	446,318	258,528	132,193	1,266,662
	588,882	69,298	841,275	731,805	508,087	252,673	64,406	484,618	1,176,291	146,017	4,863,351
Անհատապես արժեզրկված վարկերի համախառն գումար (մինչև անհատական արժեզրկման պահուստով զտելը)	**1,049,708**	**-**	**1,010,942**	**1,109,030**	**1,217,724**	**479,853**	**49,890**	**277,870**	**1,790,319**	**268,619**	**7,253,956**

հազար ՀՀ դրամ	*Արդյունա-բերություն*	*Էներգետիկա*	*Գյուղատն-տեսություն (ներառյալ ֆիզիկական անձանց տրված վարկեր)*	*Շինարա-րություն*	*Առևտուր*	*Տրանսպորտ և կապ*	*Ծառայութ-յունների ոլորտ*	*Սպառո-ղական վարկեր ֆիզիկական անձանց*	*Հիփոթե-քային վարկեր*	*Այլ*	*Ընդամենը*
31/12/2016											
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	**489,597**	**32,692**	**713,091**	**510,612**	**456,156**	**152,657**	**42,174**	**832,722**	**744,254**	**51,376**	**4,025,331**
Տարվա ծախս/ (հակադարձում)	79,579	11,964	167,874	191,342	267,843	82,619	85,726	349,968	298,116	(27,132)	**1,507,899**
Դուրսգրում	(33,167)	–	(350,586)	(67,546)	(379,075)	(16,496)	(6,741)	(1,189,372)	(433,277)	(208,875)	**(2,685,135)**
Վերականգնում	11,947	–	203,948	74,082	72,999	1,319	564	683,673	436,030	221,539	**1,706,101**
2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**547,956**	**44,656**	**734,327**	**708,490**	**417,923**	**220,099**	**121,723**	**676,991**	**1,045,123**	**36,908**	**4,554,196**
Անհատական հիմունքներով արժեզրկում	516,800	–	706,641	673,202	316,818	215,896	50,184	22,812	758,802	1,269	**3,262,424**
Խմբային հիմունքներով արժեզրկում	31,156	44,656	27,686	35,288	101,105	4,203	71,539	654,179	286,321	35,639	**1,291,772**
	547,956	**44,656**	**734,327**	**708,490**	**417,923**	**220,099**	**121,723**	**676,991**	**1,045,123**	**36,908**	**4,554,196**
Անհատապես արժեզրկված վարկերի համախառն գումար (մինչև անհատական արժեզրկման պահուստով զտելը)	**599,087**	**–**	**963,113**	**1,227,458**	**1,100,650**	**481,764**	**286,596**	**208,204**	**1,724,922**	**140,949**	**6,732,743**

18. Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ (շարունակություն)

Վարկերը և դրանց գծով ձևավորված արժեզրկման պահուստները դուրս են գրվում, երբ չկա վարկերի վերականգնման իրատեսական հեռանկար և գրավն ամբողջությամբ իրացվել է կամ փոխանցվել է Խմբին:

Տրված վարկերի և փոխառությունների վերլուծությունը ըստ հաճախորդների հետևյալն է.

հազար ՀՀ դրամ	**31/12/2017թ.**	**31/12/2016թ**
Ֆիզիկական անձինք	72,186,041	52,380,175
Մասնավոր ձեռնարկություններ	90,043,273	66,469,244
Պետական ձեռնարկություններ	960,399	701,676
Անհատ ձեռնարկատերեր	6,839,679	4,025,289
Ոչ առևտրային կազմակերպություններ	1,459	2,636
	170,030,851	**123,579,020**
Հանած՝ վարկերի գծով արժեզրկման պահուստ	**(4,863,351)**	(4,554,196)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	**165,167,500**	**119,024,824**

Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերը ներառում են հետևյալ հոդվածները.

հազար ՀՀ դրամ	31/12/2017թ.	31/12/2016թ
Հիփոթեքային վարկեր	28,612,851	20,706,198
Վարկային քարտեր	20,278,945	15,524,600
Ոսկու վարկեր	7,419,891	6,593,907
Սպառողական վարկեր	15,142,797	8,969,962
Ավտո վարկեր	300,393	339,898
Գյուղատնտեսական վարկեր	391,985	243,646
Այլ	39,179	1,963
Ընդամենը ֆիզիկական անձանց տրված համախառն վարկեր և փոխառություններ	**72,186,041**	**52,380,174**

Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերը ներառում են.

հազար ՀՀ դրամ	31/12/2017թ.	31/12/2016թ
Ֆինանսական վարձակալության գծով համախառն ներդրումներ		
Մինչև 1 տարի	13,487	-
1-5 տարի	326,747	346,768
	340,234	**346,768**
Ապագա ժամանակաշրջանների չվաստակած ֆինանսական եկամուտ ֆինանսական վարձակալության գծով	(24,077)	(50,561)
Զուտ ներդրումներ ֆինանսական վարձակալությունում նախքան արժեզրկման գծով պահուստը	**316,157**	**296,207**
Արժեզրկման գծով պահուստ	(357,432)	(181,184)
Զուտ ներդրումներ ֆինանսական վարձակալությունում	**(41,275)**	**115,023**

Հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների գնահատված իրական արժեքը 2017 թ. դեկտեմբերի 30-ի և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բացահայտված են Ծանոթագրություն 36-ում:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների վերլուծությունը ըստ մինչև մարումը մնացած ժամկետների բացահայտված է Ծանոթագրություն 39-ում:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների վերլուծությունը ըստ վարկային, արտարժույթի, իրացվելիության և տոկոսային ռիսկի բացահայտված են Ծանոթագրություն 40-ում: Կապակցված անձանց վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է Ծանոթագրություն 35-ում:

19. Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր

հազար ՀՀ դրամ	31/12/2017թ.	31/12/2016թ.
Պետական պարտատոմսեր	18,518,365	13,133,887
ՀՀ բաժնեմասային արժեթղթեր	57,794	57,794
Ներդրումներ ֆոնդերում	579,582	310,152
ՏՀՋԿ երկրների բաժնեմասային արժեթղթեր	888,409	616,646
ՏՀՋԿ երկրների ոչ պետական պարտատոմսեր	123,062	
ՀՀ ոչ պետական պարտատոմսեր	2,645,006	810,726
Ընդամենը վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր	**22,812,218**	**14,929,205**

Բոլոր պարտքային արժեթղթերը ունեն հաստատուն արժեկտրոններ:

ՀՀ բաժնային արժեթղթերը հաշվառվում են ինքնարժեքով, քանի որ իրական արժեքը չի կարող արժանահավատորեն գնահատվել: Այս ներդրումների համար գնանշվող շուկա չկա, և Խումբը նախատեսում է դրանք պահել երկար ժամկետով:

Չգնանշվող վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերը չափվում են իրական արժեքով գնահատման մեթոդների միջոցով՝ կիրառելով տվյալ պահին գործող շուկայական տոկոսադրույքները ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը զեղչելու նպատակով:

Վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերը ըստ արդյունավետ եկամտաբերության և մարման ժամկետի ներառում է.

	31/12/2017թ.		*31/12/2016թ.*	
հազար ՀՀ դրամ	*%*	*Մարման ժամկետ*	*%*	*Մարման ժամկետ*
Պետական պարտատոմսեր	4.76-18.35	2018-2047	4.76-18.35	2017-2036
ՀՀ ոչ պետական պարտատոմսեր	5.83-12.63	2018-2022	6.46-12.34	2017-2019

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթերում հետգնման պայմանագրերով ՀՀ ԿԲ-ում գրավադրված ՀՀ պետական պարտատոմսերը կազմել են 3,056,113 հազ. դրամ (2016թ.՝ չկան): Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում այս արժեթղթերը վերադասակարգվում են որպես հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր (Ծան. 20):

20. Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր

հազար ՀՀ դրամ	31/12/2017թ.	31/12/2016թ.
Առևտրային արժեթղթեր (Ծան. 16)	-	-
Ներդրումային արժեթղթեր (Ծան. 19)	3,056,113	
Ընդամենը	**3,056,113**	**-**

Գրավադրված արժեթղթերը այն ֆինանսական ակտիվներն են, որոնք գրավադրված են հետգնման պայմանագրերով՝ գործընկերոջ կողմից վաճառելու և կրկին վերագրավադրելու իրավունքով: Բոլոր պայմանագրերը ունեն մինչև մեկ ամիս ժամկետայնություն:

Այս գործարքները կատարվել են ստանդարտ վարկավորման, արժեթղթերի փոխառության և վարկավորման սովորական պայմանների ներքո:

21. Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր

հազար ՀՀ դրամ	31/12/2017թ.	31/12/2016թ.
ՀՀ կառավարության կողմից թողարկված պարտքային արժեթղթեր	346,140	
ՀՀ ոչ պետական արժեթղթեր	-	
Ընդամենը առևտրային արժեթղթեր	**346,140**	

Ստորև ներկայացվում են նշված արժեթղթերի անվանական տոկոսադրույքները և մարման ժամկետները.

	31/12/2017թ.		*31/12/2016թ.*	
	%	*Մարման ժամկետ*	*%*	*Մարման ժամկետ*
ՀՀ կառավարության կողմից թողարկված պարտքային արժեթղթեր	0.00	2018		

22. Հիմնական միջոցներ

հազար ՀՀ դրամ	*Հող և շենքեր*	*Մարքավո-րումներ*	*Փոխադրա-միջոցներ*	*Համակարգ-չային տեխնիկա*	*Այլ հիմնական միջոցներ*	*Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում*	*Ընդամենը*
Վերագնահատված կամ սկզբնական արժեք							
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	**5,361,547**	**732,794**	**208,357**	**2,656,802**	**719,264**	**956,474**	**10,635,238**
Ավելացումներ	19,823	21,008	270	284,535	35,000	9,133	**369,769**
Օտարում	(56,143)	(544)	–	(4,646)	(12,861)	(170)	**(74,364)**
Վերագնահատման ազդեցություն	(191,209)	0	0	0	0	0	**(191,209)**
Հոդվածների միջև տեղափոխություն	0	0	0	0	0	0	**0**
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**5,134,018**	**753,258**	**208,627**	**2,936,691**	**741,403**	**965,437**	**10,739,434**
Ավելացումներ	103	31,317	6,025	410,824	68,455	99,883	616,607
Օտարում	0	(33,269)	(4,000)	(34,391)	(35,940)	(42,355)	(149,955)
Ճշգրտումներ	(156,025)	0	0	3,577	10,737	78,143	(63,569)
Վերագնահատման ազդեցություն	(61,078)	-	-	-	-	-	(61,078)
Հոդվածների միջև տեղափոխություն	-	(106)	-	106	28,836	(28,836)	-
2017թ.ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	**4,917,018**	**751,200**	**210,652**	**3,316,807**	**813,491**	**1,072,272**	**11,081,439**
Կուտակված մաշվածություն							
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	**128,895**	**495,274**	**145,820**	**1,851,926**	**483,906**	**326,671**	**3,432,492**
Մաշվածություն	186,575	67,079	23,779	273,744	63,161	125,024	**739,362**
Օտարում	–	(151)	–	(3,746)	(6,336)	–	**(10,233)**
Վերագնահատման ազդեցություն	(397,240)	0	0	0	0	0	**(397,240)**
Հոդվածների միջև տեղափոխություն	0	0	0	0	0	0	**0**
2016թ. դեկտեմբերի 31-	**–**	**634,109**	**193,354**	**2,370,101**	**601,374**	**555,729**	**4,354,667**

հազար ՀՀ դրամ	*Հող և շենքեր*	*Մարքավո-րումներ*	*Փոխադրա-միջոցներ*	*Համակարգ-չային տեխնիկա*	*Այլ հիմնական միջոցներ*	*Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում*	*Ընդամենը*
ի դրությամբ							
Մաշվածություն	197,005	58,625	12,935	285,869	67,782	108,884	731,100
Ճշգրտումներ	(3,027)	-	-	1,947	5,078	21,830	25,829
Օտարում	-	(33,268)	(222)	(34,200)	(33,986)	(42,576)	(144,252)
Վերագնահատման ազդեցություն	(1190)	0	0	0	0	0	(1,190)
Հոդվածների միջև տեղափոխություն	**-**	(103)	-	103	7,772	(7,772)	0
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**192,788**	**659,363**	**206,067**	**2,623,820**	**648,020**	**636,095**	**4,966,154**
Հաշվեկշռային արժեք							
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	**5,150,882**	**165,613**	**38,782**	**556,699**	**174,715**	**525,769**	**6,612,460**
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**5,134,018**	**119,149**	**15,273**	**566,590**	**140,029**	**409,708**	**6,384,767**
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**4,724,230**	**91,837**	**4,585**	**692,987**	**165,471**	**436,177**	**6,115,287**

Ակտիվների վերագնահատում

Խմբի սեփականությունը հանդիսացող շենքերի և հողի վերագնահատումը կատարվել է 2016թ. անկախ գնահատող կազմակերպության կողմից: Ղեկավարությունը հիմք է ընդունել անկախ գնահատողի կողմից ներկայացված արդյունքները շենքերի և հողի իրական արժեքի գնահատման ժամանակ:
Եթե հիմնական միջոցները ներկայացվեին սկզբնական արժեքի մեթոդի կիրառմամբ, ապա հաշվեկշռային արժեքը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 737,210 հազ. դրամ (2016թ.՝ 931,932 հազ. դրամ):

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների կազմում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվները կազմում են 2,728,548 հազ. դրամ (2016թ.՝ 2,200,044 հազ. դրամ):

Տեղադրման փուլում գտնվող հիմնական միջոցներ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների կազմում ներառված տեղադրման փուլում գտնվող ակտիվները կազմում են 139,069 հազ. դրամ (2016թ.՝ 139,395 հազ. դրամ):

Հիմնական միջոցների սահմանափակումներ

2017 թ. դեկտեմբերի 31-ի և 2016թ. դեկտեմբերի 31 -ի դրությամբ Խումբը չի ունեցել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա հիմնական միջոցներ:

23. Ոչ նյութական ակտիվներ

հազար ՀՀ դրամ	*Արտոնագրեր*	*Համակարգչային ծրագրեր*	*Այլ*	*Ընդամենը*
Սկզբնական արժեք				
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	**669,272**	**60,366**	**67,315**	**796,953**
Ավելացումներ	16,014	1,200	11,919	**29,133**
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**685,286**	**61,566**	**79,234**	**826,086**
Ավելացումներ	11,361	-	93,600	104,961
Հոդվածների միջև տեղափոխություն	18,244	5,250	-	23,494
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**714,891**	**66,816**	**172,834**	**954,541**
Կուտակված մաշվածություն				
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	**539,380**	**37,469**	**33,096**	**609,945**
Ամորտիզացիա	62,230	4,001	10,108	**76,339**
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**601,610**	**41,470**	**43,204**	**686,284**
Ամորտիզացիա	31,426	2,998	7,295	41,719
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**633,036**	**44,468**	**50,499**	**728,003**
Հաշվեկշռային արժեք				
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	**129,892**	**22,897**	**34,219**	**187,008**
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**83,676**	**20,096**	**36,030**	**139,802**
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**81,855**	**22,348**	**122,335**	**226,538**

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ոչ նյութական ակտիվների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ոչ նյութական ակտիվները կազմում են 454,122 հազ. դրամ (2016թ.՝ 441,977 հազ. դրամ):

2017 թ. դեկտեմբերի 31-ի և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չի ունեցել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա ոչ նյութական ակտիվներ:

24. Բռնագանձված ակտիվներ

Խմբի կողմից տրամադրված վարկերի ապահովվածություն հանդիսացող գրավների տնօրինման արդյունքում ձեռք բերված գրավները ներկայացված են ստորև.

հազար ՀՀ դրամ	**31/12/2017թ.**	**31/12/2016թ.**
Անշարժ գույք	1,807,659	2,353,995
Փոխադրամիջոցներ	11,000	17,000
Այլ	13,460	14,654
Ընդամենը	**1,832,119**	**2,385,649**

Խմբի քաղաքականությունն է հետամուտ լինել գրավի ժամանակին և պատշաճ կերպով իրացմանը: Խումբը հիմնականում չի օգտագործում ոչ դրամային գրավները իր սեփական գործունեության իրականացման նպատակով: Ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները նվազագույնով:

25. Այլ ակտիվներ

հազար ՀՀ դրամ	31/12/2017թ.	31/12/2016թ.
Դեբիտորական պարտքեր	416,024	325,777
Դրամական փոխանցումների գծով դեբիտորական պարտքեր	7,004	14,116
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	***423,028***	***339,893***
Հանած ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով պահուստ	(43,421)	(59,174)
Ընդամենը զուտ այլ ֆինանսական ակտիվներ	***379,607***	***280,719***
Թանկարժեք մետաղներ	444,766	205,035
Պաշարներ	239,255	223,816
Կանխավճարներ մատակարարներին	550,583	88,803
Չամորտիզացված ապահովագրության գծով հավելավճար	44,994	29,479
Կանխավճարներ այլ հարկերի գծով	342,867	40,006
Հաշվարկներ աշխատակիցների հետ	267	1,645
Այլ	1,865	1,865
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	*1,624,597*	*590,649*
Ընդամենը այլ ակտիվներ	**2,004,204**	**871,369**

Այլ ակտիվների գծով արժեզրկման կորուստների պահուստի շարժը հետևյալն է.

հազար ՀՀ դրամ	*Ընդամենը*
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	**45,203**
Ծախս(վերադարձ)	36,567
Դուրսգրում	(22,596)
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**59,174**
Ծախս(վերադարձ)	66,561
Դուրսգրում(վերադարձ)	(82,308)
2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**43,421**

26. Պարտավորություններ բանկերի նկատմամբ

հազար ՀՀ դրամ	31/12/2017թ.	31/12/2016թ.
Հետգնման պայմանագրեր ՀՀ ԿԲ-ի հետ	0	0
Հետգնման պայմանագրեր բանկերի հետ	2,900,619	0
Այլ բանկերի թղթակցային հաշիվներ	143,170	224,626
Բանկերից ստացված վարկեր	12,004,512	0
Այլ պարտավորություններ	125,166	53,438
Ընդամենը պարտավորություններ բանկերի նկատմամբ	**15,173,467**	**278,064**

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունեցել է այլ բանկերից ստացված վարկեր թվով չորս բանկերից (2016թ.-ին չի ունեցել):
Հետգնման պայմանագրերի գծով պարտավորություններ ունեցել է մեկ բանկի հանդեպ (2016թ.-ին չի ունեցել):
Իսկ այլ բանկերի թղթակցային հաշիվների 85.89%-ը կենտրոնացված է եղել երկու գործընկերների մոտ (2016թ.՝ 57.6%):

27. Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ

	31/12/2017թ.			31/12/2016թ.		
հազար ՀՀ դրամ	*Պայմանական գումար*	*Ակտիվների իրական արժեք*	*Պարտավ. իրական արժեք*	*Պայմանական գումար*	*Ակտիվների իրական արժեք*	*Պարտավ. իրական արժեք*
Վաճառքի համար պահվող ածանցյալ գործիքներ						
Արտարժութային սվոփ	7,628,876	–	68,857	3,396,500	–	31,591
Ընդամենը ածանցյալ պարտավորություններ	**7,628,876**	**–**	**68,857**	**3,396,500**	**–**	**31,591**

28. Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

հազար ՀՀ դրամ	31/12/2017թ.	31/12/2016թ.
Իրավաբանական անձինք	**96,613,250**	**68,643,805**
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	52,015,402	33,450,564
Ժամկետային ավանդներ	44,597,848	35,193,241
Ֆիզիկական անձինք	**77,300,907**	**71,036,412**
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	25,353,490	21,002,322
Ժամկետային ավանդներ	51,947,417	50,034,090
Ընդամենը պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	**173,914,157**	**139,680,217**

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդների նկատմամբ պարտավորություններում ներառված են 33,078,968 հազ. դրամ գումարով ավանդներ, որոնք հանդիսանում են ապահովածություն տրամադրված վարկերի, ակրեդիտիվների, երաշխիքների և այլ պայմանական պարտավորությունների համար (2016թ.՝ 31,826,259 հազ. դրամ): Այդ ավանդների իրական արժեքը մոտավորապես համարժեք է իրենց հաշվեկշռային արժեքին:

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ամենամեծ տասը հաճախորդների միջոցների ընդհանուր գումարը կազմում է 78,683,050 հազ. դրամ (2016թ.՝ 65,612,790 հազ. դրամ) կամ հաճախորդներից ներգրաված միջոցների ընդհանուր գումարի 45.24 % (2016թ.՝ 46.9%):

29. Թողարկված պարտքային արժեթղթեր

հազար ՀՀ դրամ	31/12/2017թ.	31/12/2016թ.
ՀՀ-ում թողարկված պարտատոմսեր	5,931,969	0
Ընդամենը թողարկված պարտատոմսեր	**5,931,969**	**0**

2017թ. երկրորդ եռամսյակում Բանկը ՀՀ-ում թողարկել և տեղաբաշխել է 6,000,000 ԱՄՆ դոլար անվանական արժեքով 60,000 հատ արժեկտրոնային պարտատոմս, մարման ժամկետը՝ 2019թ. երկրորդ եռամսյակ: 2017թ. երրորդ եռամսյակում Բանկը ՀՀ-ում տեղաբաշխել է ևս 1,000,000,000 ՀՀ դրամ անվանական արժեքով 100,000 հատ արժեկտրոնային պարտատոմս, մարման ժամկետը՝ 2019թ. երրորդ եռամսյակ: 2017թ. չորրորդ եռամսյակում Բանկը ՀՀ-ում տեղաբաշխել է ևս 4,000,000 ԱՄՆ դոլար անվանական արժեքով 40,000 հատ արժեկտրոնային պարտատոմս, մարման ժամկետը՝ 2019թ. չորրորդ եռամսյակ:2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ պարտատոմսերի հաշվեկշռային արժեքը կազմում է 5,931,969 հազար ՀՀ դրամ:

Բանկի կողմից թողարկված պարտատոմսերը ցուցակված են ՆԱՍԴԱՔ ՕԷՄԵՔՍ Արմենիա ֆոնդային բորսայում:

30. Այլ փոխառու միջոցներ

հազար ՀՀ դրամ	31/12/2017թ.	31/12/2016թ.
ՀՀ ԿԲ-ից ներգրավված վարկեր	5,117,959	3,977,980
Այլ ֆինանսական հաստատություններից ներգրավված վարկեր	6,216,391	3,762,757
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված վարկեր	1,271,923	1,331,482
ՀՀ կառավարությունից ներգրավված վարկեր	53,077	23,989
Ընդամենը այլ փոխառու միջոցներ	**12,659,350**	**9,096,208**

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ նկատմամբ պարտավորությունները ներառում են Գերմանա-Հայկական հիմնադրամի կողմից Փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման, սպառողական և այլ նպատակով վարկերի տրամադրման համար ներգրավված միջոցների:

Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված վարկերը ներառում են Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկից ստացված վարկերը:

Այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված վարկերը ներառում են Առաջին Հիփոթեքային Ընկերությունից և Բնակարան երիտասարդներին ՈՒՀՎԿ-ից ներգրավված վարկերը:

31. Այլ պարտավորություններ

հազար ՀՀ դրամ	31/12/2017թ.	31/12/2016թ.
Վճարվելիք գումարներ	343,221	205,996
Պարտավորություն անձնակազմի նկատմամբ	600,445	193,719
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	***943,666***	***399,715***
Պարտավորություններ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	360,502	404,649
Ակտիվներին վերաբերող շնորհներ	26,010	28,432
Այլ	6,694	8,688
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	***393,206***	***441,769***
Ընդամենը այլ պարտավորություններ	**1,336,872**	**841,484**

Ակտիվներին վերաբերվող շնորհներ

հազար ՀՀ դրամ	*31/12/2017թ.*	*31/12/2016թ.*
Հունվարի 1-ի դրությամբ	28,432	30,854
Եկամտի ճանաչում (Ծան. 10)	(2,424)	(2,424)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**26,010**	**28,432**

32. Ստորադաս փոխառություններ

հազար ՀՀ դրամ	31/12/2017թ.	31/12/2016թ.
Ստորադաս փոխառություն ստացված կապակցված կողմից	5,854,396	7,598,818
	5,854,396	7,598,818

Ստորադաս փոխառությունն իրենից ներկայացնում է երկարաժամկետ փոխառության համաձայնագիր, որը Խմբի անվճարունակության դեպքում հանդիսանում է ստորադաս Խմբի մնացած պարտավորությունների նկատմամբ՝ ներառյալ ավանդները և այլ պարտքային գործիքները:

Կապակցված կողմից ստացված ստորադաս փոխառությունը թողարկված է ԱՄՆ դոլարով, տարեկան 7.12% միջին արդյունավետ տոկոսադրույքով և 2023թ. հունվար սահմանված մարման ժամկետով, (2016թ.՝ 6.87%, 2017թ. հունվարից մինչև 2023թ. հունվար) (տե՛ս, Ծան. 35):

33. Կապիտալ

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի հայտարարված և ամբողջությամբ վճարված կանոնադրական կապիտալը կազմում է 16,416,633 հազ. դրամ (2016թ.՝ 7,002,033 հազ. դրամ):

Համաձայն Բանկի կանոնադրության, կանոնադրական կապիտալը կազմված է թվով 54,722 սովորական բաժնետոմսերից և 333 արտոնյալ բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը համապատասխանաբար 300,000 դրամ և 100 դրամ անվանական արժեքներով:

2017թ. դեկտեմբերի 31-ի և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են՝

	31/12/2017թ.		31/12/2016թ.	
հազար ՀՀ դրամ	*Վճարված կանոնադրական կապիտալ*	*Բաժնեմասը վճարված կապիտալում*	*Վճարված կանոնադրական կապիտալ*	*Բաժնեմասը վճարված կապիտալում*
«Ըդվանսդ գլոբալ ինվեստմենտ» ՍՊԸ	13,287,900	80.94	13,287,900	80.94
«Ըդվանսդ գլոբալ ինվեստմենտ» ՍՊԸ (արտոնյալ բաժնետոմսեր)	33	–	33	–
Հայփոստ Թրասթ Մենեջմենթ Բի Վի	2,307,900	14.06	2,307,900	14.06
Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցի	820,800	5	820,800	5
	16,416,633	**100**	**16,416,633**	**100**

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերը իրավունք ունեն ստանալու շահաբաժին և մեկ բաժնետոմսի դիմաց մեկ ձայնի իրավունք Բանկի տարեկան և ընդհանուր ժողովներում:

Բանկի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն իրավասու մարմնի կողմից շահաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման դեպքում ստանալ տարեկան հաստատագրված շահաբաժին, իրենց պատկանող արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքի 20%-ի չափով:

Համաձայն 2017թ. հունիսի 19-ին տեղի ունեցած Բաժնետերերի ժողովի որոշմանը՝ Բանկի կողմից հայտարարված և վճարված շահաբաժինները կազմել են 564,460 հազ. դրամ սովորական բաժնետոմսերի (2016թ. հայտարարված և վճարված՝ 702,040 հազ. դրամ) և 6.6 հազ. դրամ արտոնյալ բաժնետոմսերի համար (2016թ. հայտարարված և վճարված՝ 6.6 հազ. դրամ): Շահաբաժինների հայտարարելու դրությամբ մեկ սովորական բաժնետոմսի գծով շահաբաժինները կազմել են 10,315 դրամ (2016թ.՝ 12,829 դրամ), և մեկ արտոնյալ բաժնետոմսի գծով շահաբաժինները՝ 19.8 դրամ (2016թ.՝ 19.8 դրամ):

Բանկի կանոնադրական կապիտալը ձևավորվել է բաժնետերերի դրամական ներդրումներից, ընդ որում, բաժնետերերն ունեն շահաբաժիններ ստանալու և կապիտալը ՀՀ դրամով տեղաբաշխելու իրավունք:

Բանկի բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են չբաշխված շահույթով՝ հաշվարկված համաձայն ՀՀ օրենսդրության: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով: Պահուստը ստեղծվել է համաձայն Բանկի կանոնադրության, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ պակաս, քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված կանոնադրական կապիտալի 20%-ի չափով:

34. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ

Իրավական և հարկային միջավայր

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և ենթարկվում են տարբեր մեկնաբանությունների հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել էական տույժեր, տուգանքներ և տոկոսագումարներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել:

Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա:

Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները: Ղեկավարությունը համոզված է, որ Խումբն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Խմբին ներկայացվող դատական հայցերի առումով Խմբի ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Խմբի ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ, երաշխիքներ և այլ ֆինանսական պայմանագրեր

Իր գործունեության ընթացքում Խումբը տրամադրում է իր հաճախորդներին հետհաշվեկշռային ռիսկ պարունակող ֆինանսական գործիքներ: Նշված ֆինանսական գործիքները, որոնք ունեն պարտքային ռիսկի տարբեր մակարդակներ, չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ անվանական կամ պայմանագրային գումարները հետևյալն են՝

հազար ՀՀ դրամ	*31/12/2017թ.*	*31/12/2016թ.*
Չօգտագործված վարկային գծեր	10,248,879	6,051,046
Ակրեդիտիվներ	58,010	1,787,858
Երաշխիքներ	3,232,716	3,516,421
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորությունների գծով պահուստ		–
Ընդամենը պայմանական և պայմանագրային պարտավորություններ	**13,539,605**	**11,355,325**

Վարկային պարտավորությունների, երաշխիքների և այլ ֆինանսական պայմանագրերի գծով պարտքային ռիսկի առավելագույն չափը լավագույնս ներկայացված է այս պարտավորությունների և պայմանական պարտավորությունների ընդհանուր գումարում:

34. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ (շարունակություն)

Գործառնական վարձակալություն՝ Խումբը որպես վարձակալ

Խումբն իր գործունեությունն ապահովելու նպատակով վարձակալում է շենք և տարածքներ: Չեղյալ չհայտարարվող գործառնական վարձակալության գծով վճարվելիք ապագա ընդհանուր նվազագույն վարձավճարների կառուցվածքը հետևյալն է.

հազար ՀՀ դրամ	*31/12/2017թ.*	*31/12/2016թ.*
Մինչև 1 տարի	579,847	461,494
1-5 տարի	1,952,989	1,320,226
5 տարուց ավելի	2,398,534	566,280
Ընդամենը գործառնական վարձակալության գծով պարտավորություններ	**4,931,370**	**2,348,000**

Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն իրականացրել է ավտոտրանսպորտային միջոցների (նաև ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն), շենքերի և շինությունների, շահագործվող գույքի, բանկին պատկանող բանկոմատների ապահովագրություն, ինչպես նաև Բանկային ռիսկերի համապարփակ, էլեկտրոնային և համակարգչային հանցագործության և տնօրենների և ղեկավարների պատասխանատվության ապահովագրություն: Քանի դեռ Խումբը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

35. Կապակցված կողմերի հետ գործառնություններ

ՀՀՄՍ 24 *«Կապակցված կողմերի բացահայտումներ»* ստանդարտի համաձայն կողմերը համարվում են կապակցված, եթե կողմերից մեկը հնարավորություն ունի վերահսկել կամ նշանակալի ձևով ազդել մյուս կողմի գործառնական և ֆինանսական որոշումների վրա: Ներկայացվող համախմբված ֆինանսական հաշվետվությունների առումով Խմբի կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները: Խմբի վերջնական վերահսկող է հանդիսանում արգենտինացի գործարար Է. Էռնեկյանը:

հազար ՀՀ դրամ	31/12/2017 թ.			31/12/2016 թ.		
	Մայր կազմակերպություն	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմ և կապակցված կողմեր	Մայր կազմակերպություն	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմ և կապակցված կողմեր
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն						
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ						
Վարկերի մնացորդը հունվարի 1-ի դրությամբ, համախառն	4,811	28,951,581	177,661	12,874	4,150,912	244,030
Ժամանակաշրջանի ընթացքում տրամադրված վարկեր	92,282	26,764,742	1,041,835	98,578	55,366,239	544,808
Ժամանակաշրջանի ընթացքում մարված վարկեր	(78,056)	(27,666,376)	(829,619)	(106,641)	(30,565,570)	(611,177)
Վարկերի մնացորդը ժամանակաշրջանի վերջի դրությամբ, համախառն	19,037	28,049,947	389,877	4,811	28,951,581	177,661
Հանած՝ վարկերի գծով արժեզրկման պահուստ	(190)	(280,499)	(3,899)	(48)	(289,516)	(1,777)
Վարկերի մնացորդը ժամանակաշրջանի վերջի դրությամբ	18,847	27,769,448	385,978	4,763	28,662,065	175,884
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ						
Ավանդների մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	348,105	38,802,129	167,545	114,430	28,014,157	100,227
Ժամանակաշրջանի ընթացքում ստացված ավանդներ	1,022,935	623,622,329	4,088,473	14,857,283	675,611,740	3,300,673
Ժամանակաշրջանի ընթացքում վճարված ավանդներ	(1,003,421)	(619,128,160)	(3,841,823)	(14,623,608)	(664,823,768)	(3,233,355)
Ավանդների մնացորդը ժամանակաշրջանի վերջի դրությամբ	367,619	43,296,298	414,195	348,105	38,802,129	167,545
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ – Ստորադաս փոխառություն						
Ստորադաս փոխառության մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	–	7,598,818		–	7,430,709	–
Ժամանակաշրջանի ընթացքում ստացված ստորադաս փոխառություններ	–			–	338,758	–
Ժամանակաշրջանի ընթացքում մարված ստորադաս փոխառություններ	–	(1,741,114)	–	–		–
Արտարժույթի վերագնահատումից զուտ արդյունք	–	(3,309)		–	(170,649)	–
Ստորադաս փոխառության մնացորդը ժամանակաշրջանի վերջի դրությամբ	–	5,854,395		–	7,598,818	–

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն						
Տոկոսային եկամուտ	**-**	**2,238,266**	**13,700**	**-**	**1,198,588**	**15,493**
Միջնորդավճարների գծով եկամուտ	**702**	**24,965**	**660**	**431**	**19,576**	**784**
Այլ եկամուտ	**1,300**	**61,287**	**910**	**2,190**	**105,412**	**1,362**
Տոկոսային ծախս	**(3,771)**	**(1,880,344)**	**(15,985)**	**(18,641)**	**(1,417,551)**	**(9,382)**
Արժեզրկումից կորուստներ	**(142)**	**9,016**	**(2,122)**	**81**	**(248,007)**	**663**
Այլ գործառնական ծախսեր	**-**	**(43,109)**	**(28,601)**	**(8,660)**	**(51,908)**	**(29,465)**

Խումբն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են վարկերը, ավանդները և այլն: Գործարքների ծավալները, մնացորդները ժամանակաշրջանի վերջի դրությամբ և ժամանակաշրջանի եկամուտը և ծախսը հետևյալն են.

Տնօրեններին և ղեկավար անձնակազմի այլ անդամներին (և ընտանիքի անդամներին) տարվա ընթացքում տրամադրված վարկերը ունեն 1-ից 20 տարի մարման ժամկետ և դրանց տոկոսադրույքը կազմում է 3-24% (2016թ.՝ 5-24%, 1-ից 20 տարի): Տնօրեններին տրամադրված վարկերը ապահովված են ոսկով, անշարժ գույքով, դրամական միջոցներով և այլ ակտիվներով:

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

հազար ՀՀ դրամ	**31/12/2017 թ.**	**31/12/2016 թ.**
Աշխատավարձ և այլ կարճաժամկետ վճարումներ	494,746	405,774
Ընդամենը առանցքային կառավարչական անձնակազմի փոխհատուցում	**494,746**	**405,774**

36. Իրական արժեքի չափում

Խմբի Խորհուրդը սահմանում է ինչպես իրական արժեքի պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, ինչպես օրինակ չգնանշվող առևտրային և վաճառքի համար մատչելի արժեթղթերի համար, չգնանշվող ածանցյալ ֆինանսական գործիքների համար, այնպես էլ իրական արժեքի ոչ պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, ինչպես օրինակ վաճառքի համար պահվող ակտիվների համար:

Անկախ գնահատողները ներգրավվում են նշանակալի ակտիվների, ինչպես օրինակ՝ անշարժ գույքի և բռնագանձված գույքի գնահատման համար: Անկախ գնահատողների ընդգրկումը յուրաքանչյուր տարի որոշվում է Խմբի Խորհրդի կողմից:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին Խմբի ղեկավարությունը վերլուծում է ակտիվների և պարտավորությունների արժեքների փոփոխությունները, որոնք պետք է վերագնահատվեն համաձայն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության: Այս վերլուծությունների համար ճշտվում են հիմնական տվյալները, որոնք կիրառվել են նախորդ գնահատման ժամանակ՝ համադրելով գնահատման հաշվարկի տեղեկատվությունը պայմանագրերի և այլ համապատասխան փաստաթղթերի հետ: Ղեկավարությունը Խմբի անկախ գնահատողների հետ միասին համեմատում է յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության իրական արժեքի յուրաքանչյուր փոփոխությունը համապատասխան արտաքին աղբյուրների հետ, որոշելու համար տվյալ փոփոխության հիմնավորված լինելը:

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում իրական արժեքով չափվող ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ներկայացված են ստորև: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

- Մակարդակ 1 – նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները

(չճշգրտված):

- Մակարդակ 2 – Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):
- Մակարդակ 3 – ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

36. Իրական արժեքի չափում (շարունակություն)

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրական արժեքով և վերլուծում է դրանք ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների, որում իրական արժեքի չափումը դասակարգված է.

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

հազար ՀՀ դրամ

	Մակարդակ 1	*Մակարդակ 3*	*Ընդամենը իրական արժեք*	*Ընդամենը հաշվեկշռային արժեք*
Ֆինանսական ակտիվներ				
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	–	151,021,736	**151,021,736**	**165,167,500**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	39,842,049	–	**39,842,049**	**39,842,049**
Պահանջներ բանկերի նկատմամբ	–	10,546,355	**10,546,355**	**10,546,355**
Այլ ֆինանսական ակտիվներ	–	379,607	**379,607**	**379,607**
Ֆինանսական պարտավորություններ				
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	–	173,914,157	**173,914,157**	**173,914,157**
Այլ փոխառու միջոցներ	–	12,659,350	**12,659,350**	**12,659,350**
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	–	15,173,467	**15,173,467**	**15,173,467**
Ստորադաս փոխառություններ	–	5,854,396	**5,854,396**	**5,854,396**
Այլ ֆինանսական պարտավորություններ	–	943,666	**943,666**	**943,666**

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

հազար ՀՀ դրամ	*Մակարդակ 1*	*Մակարդակ 3*	*Ընդամենը իրական արժեք*	*Ընդամենը հաշվեկշռային արժեք*
Ֆինանսական ակտիվներ				
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	–	110,355,038	**110,355,038**	**119,024,824**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	44,751,939	–	**44,751,939**	**44,751,939**
Պահանջներ բանկերի նկատմամբ	–	2,320,882	**2,320,882**	**2,320,882**
Այլ ֆինանսական ակտիվներ	–	280,720	**280,720**	**280,720**
Ֆինանսական պարտավորություններ				
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	–	139,680,217	**139,680,217**	**139,680,217**
Այլ փոխառու միջոցներ	–	9,096,208	**9,096,208**	**9,096,208**
Ստորադաս փոխառություններ	–	7,598,818	**7,598,818**	**7,598,818**
Այլ ֆինանսական պարտավորություններ	–	399,715	**399,715**	**399,715**
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	–	278,064	**278,064**	**278,064**

36. Իրական արժեքի չափում (շարունակություն)

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ (շարունակություն)

Պահանջներ և պարտավորություններ բանկերի նկատմամբ

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից ելնելով և զեղչվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ

Այն միջոցների գնահատված իրական արժեքները, որոնք ունեն ֆիքսված տոկոսադրույք, սահմանվում են՝ ելնելով ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նման պարտքային ռիսկ և մարման ժամկետ ունեցող գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով: Կիրառվելիք տոկոսադրույքները կախված են վարկառուի վարկային ռիսկից և տատանվում են 5% մինչև 24% տարեկան (2015թ.՝ 5% մինչև 24% տարեկան):

Արժեզրկված վարկերի իրական արժեքը հաշվարկվում է գրավի առարկայի վաճառքից ակնկալվող դրամական հոսքերի հիման վրա: Գրավի առարկայի արժեքը հիմնված է անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գույքի գնահատողի իրականացրած գնահատումների վրա:

Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

Հաճախորդների ավանդների իրական արժեքը գնահատվում է՝ օգտագործելով զեղչված դրամական հոսքերի մեթոդը՝ կիրառելով նմանատիպ մարման ժամկետ ունեցող ավանդների համար առաջարկվող դրույքաչափերը: Ցպահանջ վճարվելիք ավանդների իրական արժեքը հաշվետու ամսաթվին վճարվելիք գումարն է:

Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

	2017 թ. դեկտեմբերի31-ի դրությամբ		
հազար ՀՀ դրամ	***Մակարդակ 1***	***Մակարդակ 2***	***Ընդամենը***
Ֆինանսական ակտիվներ			
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր		3,056,113	**3,056,113**
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	883,076	21,871,348	**22,754,424**
Առևտրային արժեթղթեր		787,330	**787,330**
Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր		346,140	**346,140**
Ընդամենը	**883,076**	**26,060,931**	**26,761,697**
Ֆինանսական պարտավորություններ			
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ		68,857	**68,857**
Կազմակերպության կողմից թողարկված տոկոսային արժեթղթեր		5,931,969	**5,931,969**
Ընդամենը	**0**	**6,000,826**	**6,000,826**
Զուտ իրական արժեք	**883,076**	**20,060,105**	**20,760,871**

36. Իրական արժեքի չափում (շարունակություն)

Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ (շարունակություն)

		2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
հազար ՀՀ դրամ	*Մակարդակ 1*	*Մակարդակ 2*	*Ընդամենը*
Ֆինանսական ակտիվներ			
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	0	0	0
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	604,112	14,267,299	14,871,411
Առևտրային արժեթղթեր	0	184,833	184,833
Ընդամենը	**604,112**	**14,452,132**	**15,056,244**
Ֆինանսական պարտավորություններ			
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	0	31,591	31,591
Ընդամենը	**0**	**31,591**	**31,591**
Զուտ իրական արժեք	**604,112**	**14,420,541**	**15,024,653**

Իրական արժեքի չափման մեթոդները և գնահատման մեխանիզմները չեն փոփոխվել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատությամբ:

Չգնանշվող ՀՀ բաժնետոմսեր

Բանկի ներդրումների իրական արժեքը ՀՀ չգնանշվող բաժնետոմսերում չի կարող չափվել և, հետևաբար, դուրս է մնում այս բացահայտումից: Այս ներդրումների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար տե՛ս Ծան. 19-ը:

Ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափում

	2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
հազար ՀՀ դրամ	*Մակարդակ 3*	*Ընդամենը*
Ոչ ֆինանսական ակտիվների		
Հող և շենքեր	4,724,230	**4,724,230**
Ընդամենը	4,724,230	**4,724,230**

	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
հազար ՀՀ դրամ	*Մակարդակ 3*	*Ընդամենը*
Ոչ ֆինանսական ակտիվների		
Հող և շենքեր	5,134,018	5,134,018
Ընդամենը	**5,134,018**	**5,134,018**

36. Իրական արժեքի չափում (շարունակություն)

Ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափում (շարունակություն)

Իրական արժեքի չափումը Մակարդակ 3-ում

3-րդ մակարդակում դասակարգված Խմբի ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատման մեխանիզմների օգտագործումը հիմնված է այն էական ելակետային տվյալների վրա, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայի տվյալների վրա: Այս մակարդակում ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները շարժը կարելի է համաձայնեցնել հետևյալ կերպ.

հազար ՀՀ դրամ	*Հող և շենքեր*	*Ընդամենը*
Ոչ ֆինանսական ակտիվներ		
2017 հունվարի 1-ի դրությամբ	**5,134,018**	**5,134,018**
Ձեռքբերումներ	**103**	**103**
Այլ համապարփակ եկամուտում ճանաչված եկամուտ/վնաս	(56,861)	(56,861)
Օտարում	(156,025)	(156,025)
Հիմնական միջոցների հոդվածների միջև տեղափոխություն	0	0
Կուտակված մաշվածություն	**(197,005)**	**(197,005)**
Զուտ իրական արժեքը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**4,724,230**	**4,724,230**

հազար ՀՀ դրամ	*Հող և շենքեր*	*Ընդամենը*
Ոչ ֆինանսական ակտիվներ		
2016 հունվարի 1-ի դրությամբ	**5,150,882**	**5,150,882**
Ձեռքբերումներ	19,823	19,823
Այլ համապարփակ եկամուտում ճանաչված եկամուտ/վնաս	206,031	206,031
Օտարում	(56,143)	(56,143)
Կուտակված մաշվածություն	(186,575)	(186,575)
Զուտ իրական արժեքը 2016թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	**5,134,018**	**5,134,018**

Խմբի հիմնական գույքային ակտիվների իրական արժեքը հաշվարկվում է գնահատումների հիման վրա՝ իրականացված անկախ, մասնագիտորեն որակավորված գույքի գնահատողների կողմից: Նշանակալի ելակետային տվյալները և ենթադրությունները մշակվում են համաձայն ղեկավարության հետ սերտ խորհրդակցության: Գնահատման գործընթացները և իրական արժեքի փոփոխությունները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին:

Գնահատումը իրականացվել է՝ կիրառելով համեմատական և եկամտային մեթոդները, որոնք արտացոլում են նմանատիպ գույքերի վերջին շուկայական գործարքների գները և ներառում են վերոնշյալ գույքին հատուկ գործոնների ճշգրտումներ, այդ թվում հողամասի չափը, գտնվելու վայրը, գրավադրումը, ներկայիս օգտագործումը և այլն:

Հողը և շենքերը վերագնահատվել են 2016թ.: Շենքերը նախկինում վերագնահատվել էին 2015թ.:

Նշանակալի չդիտարկվող ելակետային տվյալը՝ վերոնշյալ գույքին հատուկ գործոնների ճշգրտումն է: Այս ճշգրտումների ծավալն ու ուղղությունը կախված է դիտարկվող շուկայում նմանատիպ գույքի գործարքների քանակից և բնույթից, որոնք կիրառվում են որպես գնահատման մեկնարկային կետ: Չնայած նրան, որ այս ելակետային տվյալը սուբյեկտիվ դատողություն է, ղեկավարությունը գտնում է, որ ողջամտորեն հնարավոր այլընտրանքային ենթադրությունները էական ազդեցություն չեն ունենա ընդհանուր գնահատման վրա:

37. Փոխանցված ֆինանսական ակտիվներ և որպես գրավ պահվող կամ տրամադրված ակտիվներ

Փոխանցված ֆինանսական ակտիվներ, որոնք ամբողջությամբ չեն ապաճանաչվում

Ստորև ներկայացված է ֆինանսական ակտիվների ցանկը, որոնք այնպես են փոխանցվել, որ բոլոր փոխանցված ֆինանսական ակտիվները կամ փոխանցված ֆինանսական ակտիվների մի մասը չեն բավարարում ապաճանաչման չափանիշներին:

		31/12/2017թ.		
հազար ՀՀ դրամ	*Փոխանցված ֆինանսական ակտիվներ*	*Առևտրային արժեթղթեր*	*Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր*	*Ընդամենը*
Ակտիվների հաշվեկշռային արժեք	Հետգնման պայմանագրեր	0	3,056,113	**3,056,113**
Ընդամենը		**0**	3,056,113	**3,056,113**
Համապատասխան պարտավորությունների հաշվեկշռային արժեք	Հետգնման պայմանագրեր	0	2,900,619	**2,900,619**
Ընդամենը		**0**	2,900,619	**2,900,619**
Զուտ դիրք		**0**	155,494	**155,494**

		31/12/2016թ.		
հազար ՀՀ դրամ	*Փոխանցված ֆինանսական ակտիվներ*	*Առևտրային արժեթղթեր*	*Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր*	*Ընդամենը*
Ակտիվների հաշվեկշռային արժեք	Հետգնման պայմանագրեր	0	0	**0**
Ընդամենը		**0**	**0**	**0**
Համապատասխան պարտավորությունների հաշվեկշռային արժեք	Հետգնման պայմանագրեր	0	0	**0**
Ընդամենը		**0**	**0**	**0**
Զուտ դիրք		**0**	**0**	**0**

Հետգնման պայմանագրեր

Հետգնման պայմանագրով վաճառված արժեթղթերը փոխանցվում են չորրորդ կողմին, և Խումբը դրա փոխարեն ստանում է դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվներ: Արժեթղթերի արժեքի ավելացման կամ նվազման դեպքում, Խումբը, որոշակի իրավիճակներում, կարող է պահանջել կամ նրանից կարող է պահանջվել դրամական միջոցների տեսքով լրացուցիչ ապահովություն: Խումբը եկել է այն եզրակացության, որ պահպանում է գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները կապված այդպիսի արժեթղթերի հետ, այդ թվում վարկային, շուկայական, երկրային և գործառնական ռիսկերը, և այդ պատճառով չի ապաճանաչել դրանք: Բացի այդ, Խումբը ճանաչում է ֆինանսական պարտավորությունները ստացված դրամական միջոցների նկատմամբ:

Նման ձևով, Խումբն իրավունք ունի վաճառել կամ գրավադրել փոխառությամբ ներգրաված կամ հակադարձ հետգնման պայմանագրով ձեռք բերած արժեթղթերը, բայց պարտավոր է վերադարձնել արժեթղթերը: Այս դեպքում գործընկերը պահպանում է սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերը և օգուտները: Հետևաբար, Խումբը չի ճանաչում այդպիսի արժեթղթերը, այլ ճանաչում է առանձին ակտիվ դրամական տեսքով տրամադրված ցանկացած գրավի նկատմամբ:

37. Փոխանցված ֆինանսական ակտիվներ և որպես գրավ պահվող կամ տրամադրված ակտիվներ (շարունակություն)

Փոխանցված ֆինանսական ակտիվներ, որոնք ամբողջությամբ չեն ապաճանաչվում (շարունակություն)

Հետգնման պայմանագրերով վաճառված արժեթղթեր 2017թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 3,056,113հազ. դրամ (2016թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ չեն եղել):

38. Ֆինանսական գործիքների հաշվանցում

Ստորև ներկայացված աղյուսակները ներառում են ֆինանսական ակտիվները, որոնք հաշվանցվել են ֆինանսական պարտավորությունների հետ ֆինանսական վիճակի մասին համախմբած հաշվետվությունում, ինչպես նաև հաշվանցման վերաբերյալ իրավաբանորեն ամրագրված գլխավոր համաձայնագրերի և նմանատիպ համաձայնագրերի հետևանքները, որոնք չեն հանգեցնում հաշվանցման ֆինանսական վիճակի մասին համախմբած հաշվետվությունում:
հազար ՀՀ դրամ

31/12/2017թ. հազար ՀՀ դրամ	*Ճանաչված ֆինանսական ակտիվների համախառն գումար*	*Ճանաչված ֆինանսական պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում*	*Ֆինանսական ակտիվների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում*	*Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել*		*Զուտ գումար*
				Ֆինանսական գործիքներ	*Ստացված դրամական ապահովում*	
Ֆինանսական ակտիվներ						
Հաճախորդներին տրված վարկեր - հակադարձ հետգնման պայմանագրեր	4,820,511	–	4,820,511	**(4,820,511)**	–	**–**
Ընդամենը	4,820,511	–	4,820,511	**(4,820,511)**	**–**	**–**

31/12/2016թ. հազար ՀՀ դրամ	*Ճանաչված ֆինանսական ակտիվների համախառն գումար*	*Ճանաչված ֆինանսական պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում*	*Ֆինանսական ակտիվների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում*	*Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել*		*Զուտ գումար*
				Ֆինանսական գործիքներ	*Ստացված դրամական ապահովում*	
Ֆինանսական ակտիվներ						
Հաճախորդներին տրված վարկեր - հակադարձ հետգնման պայմանագրեր	1,373,788	–	1,373,788	(1,373,788)	–	**–**
Ընդամենը	**1,373,788**	**–**	**1,373,788**	**(1,373,788)**	**–**	**–**

39. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ակտիվները և պարտավորությունները՝ իրենց սպասվելիք մարման ժամկետների կտրվածքով: Խմբի պայմանագրային չզեղչված պարտավորությունների մարման վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է Ծանոթագրություն 40–ում:

	2017թ.դեկտեմբերի31-ի դրությամբ								
հազար ՀՀ դրամ	*Ցպահանջ և մինչև 1 ամիս*	*1-ից 3 ամիս*	*3-ից 12 ամիս*	*Մինչև 12 ամիս, ընդամենը*	*1-ից 5 տարի*	*5 տարուց ավելի*	*12 ամսից ավելի, ընդամենը*	*Առանց մարման ժամկետի*	*Ընդամենը*
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	39,842,049	0	0	**39,842,049**	0	0	**0**	0	**39,842,049**
Առևտրային արժեթղթեր	0	3,567	11,146	**14,713**	537,175	235,442	**772617**	0	**787,330**
Պահանջներ բանկերի նկատմամբ	8,222,566	0	791,619	**9,014,185**	0	0	**0**	1,532,170	**10,546,355**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	8,432,724	18,147,543	37,792,977	**64,373,244**	53,148,160	47,646,096	**100794256**	0	**165,167,500**
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	16,495	202,236	1,730,394	**1,949,125**	15,116,792	4,800,098	**19916890**	946,203	**22,812,218**
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	3,056,113	0	0	**3,056,113**	0	0	**0**	0	**3,056,113**
Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր	0	0	346,140	**346,140**	0	0		0	**346,140**
Հիմնական միջոցներ	0	0	0	**0**	0	0	**0**	6,115,287	**6,115,287**
Ոչ նյութական ակտիվներ	0	0	0	**0**	0	0	**0**	226,538	**226,538**
Բռնագանձված ակտիվներ	0	0	1,832,119	**1,832,119**	0	0	**0**	0	**1,832,119**
Այլ ակտիվներ	1,632,331	23,630	326,598	**1,982,559**	575	21,070	**21645**	0	**2,004,204**
	61,202,278	**18,376,975**	**42,830,993**	**122,410,247**	**68,802,702**	**52,702,706**	**121,505,408**	**8,820,198**	**252,735,853**
Պարտավորություններ									
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	13,456,203	0	1,644,649	**15,100,852**	0	0	**0**	72,615	**15,173,467**
Ածանցյալ պարտավորություններ	0	0	0	**0**	0	0	**0**	68,857	**68,857**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	73,332,379	11,139,342	63,824,245	**148,295,966**	25,203,657	220,881	**25,424,538**	193,653	**173,914,157**
Այլ փոխառու միջոցներ	132,456	225,435	1,606,581	**1,964,472**	8,091,692	2,603,186	**10,694,878**	-	**12,659,350**
Կազմակերպության կողմից թողարկված տոկոսային արժեթղթեր	0	43,438	47,531	**90,969**	5,841,000	0	**5,841,000**	-	**5,931,969**
Պարտավորություններ շահութահարկի գծով	0	0	494,171	**494,171**	0	0	**0**	-	**494,171**
Հետաձգված հարկային պարտավորություններ	0	0	0	**0**	1,302,993	0	**1,302,993**	-	**1,302,993**
Այլ պարտավորություններ	384,506	40,774	885,582	**1,310,862**	0	26,010	**26,010**	-	**1,336,872**
Ստորադաս փոխառություններ	0	0	-3,214	**-3,214**	0	5,857,610	**5,857,610**	-	**5,854,396**
	87,305,544	**11,448,989**	**68,499,545**	**167,254,078**	**40,439,342**	**8,707,687**	**49,147,029**	**335,125**	**216,736,232**
Զուտ դիրք	**(26,103,266)**	**6,927,986**	**(25,668,552)**	**(44,843,831)**	**28,363,360**	**43,995,019**	**80,843,452**	**8,485,073**	**35,999,621**
Կուտակված ճեղքվածք	**(26,103,266)**	**(19,175,279)**	**(18,740,565)**		**2,694,809**	**80,843,452**			

39. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն (շարունակություն)

		2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ							
հազար ՀՀ դրամ	*Ցպահանջ և մինչև 1 ամիս*	*1-ից 3 ամիս*	*3-ից 12 ամիս*	*Մինչև 12 ամիս, ընդամենը*	*1-ից 5 տարի*	*5 տարուց ավելի*	*12 ամսից ավելի, ընդամենը*	*Առանց մարման ժամկետի*	*Ընդամենը*
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	44,751,939	-	-	**44,751,939**			**0**		**44,751,939**
Առևտրային արժեթղթեր		3,884	1,196	**5,080**	165,560	14,193	**179,753**		**184,833**
Պահանջներ բանկերի նկատմամբ	1,070,779	-717	-26,746	**1,043,316**	38,381		**38,381**	1,239,185	**2,320,882**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	7,961,755	23,469,389	29,786,359	**61,217,503**	21,189,352	36,617,969	**57,807,321**		**119,024,824**
Վաճառքի համար մատչելի ներդրումներ		149,274	428,507	**577,781**	10,023,995	3,653,189	**13,677,184**	674,240	**14,929,205**
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր				**0**			**0**		**0**
Հիմնական միջոցներ			-	**0**			**0**	6,384,767	**6,384,767**
Ոչ նյութական ակտիվներ				**0**			**0**	139,802	**139,802**
Բռնագանձված ակտիվներ			2,385,649	**2,385,649**			**0**		**2,385,649**
Այլ ակտիվներ	605,435	17,123	22,762	**645,320**	2,233		**2,233**	223,816	**871,369**
	54,389,908	**23,638,953**	**32,597,727**	**110,626,588**	**31,419,521**	**40,285,351**	**71,704,872**	**8,661,810**	**190,993,270**
Պարտավորություններ									
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	205,473			**205,473**			**0**	72,591	**278,064**
Ածանցյալ պարտավորություններ	31,591			**31,591**			**0**	0	**31,591**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	54,242,791	26,653,162	52,922,912	**133,818,864**	5,778,935	82,405	**5,861,340**	13	**139,680,217**
Այլ փոխառու միջոցներ	1,427,187	660,753	637,930	**2,725,870**	5,509,200	861,138	**6,370,338**		**9,096,208**
Պարտավորություններ շահութահարկի գծով		175,744		**175,744**			**0**		**175,744**
Հետաձգված հարկային պարտավորություններ				**0**	1,113,141		**1,113,141**		**1,113,141**
Այլ պարտավորություններ	436,835			**436,835**	404,649		**404,649**		**841,484**
Ստորադաս փոխառություններ	1,739,947			**1,739,947**	1152	5,857,718	**5,858,870**		**7,598,817**
	58,083,824	**27,489,659**	**53,560,842**	**139,134,324**	**12,807,077**	**6,801,261**	**19,608,338**	**72,604**	**158,815,266**
Զուտ դիրք	**(3,693,916)**	**(3,850,706)**	**(20,963,115)**	**(28,507,736)**	**18,612,444**	**33,484,090**	**60,685,740**	**8,589,206**	**32,178,004**
Կուտակված ճեղքվածք	**(3,693,916)**	**(7,544,621)**	**(24,813,820)**		**(2,350,671)**	**60,685,740**			

Մարման ժամկետների միջև տարբերությունների վերլուծությունը չի արտացոլում այն ընթացիկ հաշիվների միջոցների պատմական կայունությունը, որոնց վերադարձը սովորաբար տեղի է ունենում ավելի երկար ժամանակահատվածի ընթացքում, քան ներկայացված է վերոնշյալ աղյուսակում: Վերոնշյալ աղյուսակում այդ մնացորդները ներառված են «Ցպահանջ և մինչև 1 ամիս ժամկետայնության խմբի մեջ:

Հաճախորդների նկատմամբ պարտավորությունները ներառում են ֆիզիկական անձանց ժամկետային ավանդները: Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության՝ Խումբը պարտավոր է մարել ֆիզիկական անձանց ժամկետային ավանդները ավանդատուների առաջին իսկ պահանջով:

40. Ռիսկերի կառավարում

Խմբի գործունեությանը բնորոշ են բազմազան ֆինանսական ռիսկեր, և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկերի կառավարման գործընթացը կազմակերպվում է Խմբի առաքելությանը, հիմնական ու միջանկյալ նպատակներին համահունչ և ուղղված է Խմբի ֆինանսական վիճակի բարելավմանը և հեղինակության բարձրացմանը:

40. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ռիսկերի կառավարման գործընթացի նպատակն է ռիսկերի նվազեցմանն ուղղված համալիր միջոցառումների, սահմանաչափերի և ներքին իրավական ակտերի շրջանակներում օժանդակել Խմբի ղեկավարությանը կայացնելու որոշումներ, որոնք թույլ են տալիս արդյունավետ կառավարել Խմբի և Խմբի հաճախորդների ակտիվների և պարտավորությունների հետ առնչվող ռիսկերը, հնարավոր ռիսկերով պայմանավորված կորուստների բացառման կամ դրանց նվազագույնի հասցնելու միջոցով, շահութաբերության, իրացվելիության և վճարունակության սահմանաչափերի ընդունելի մակարդակի ապահովումը: Ռիսկերի կառավարումը հիմնվում է Խմբի իրավասու մարմնի կողմից հաստատված ընթացակարգերի, կարգերի, նորմատիվների և սահմանաչափերի վրա: Խմբի ռիսկերի բացահայտումը, չափումը, վերահսկումը և մոնիտորինգը կրում են պարբերական և շարունակական բնույթ: Ռիսկերի վերլուծությունը հանդիսանում է Խմբի ռազմավարական պլանավորման, ինչպես նաև ներդրումային ծրագրերի գնահատման մի մասը: Խմբի ռիսկերի կառավարման սկզբունքներին են դասվում. ճգնաժամային իրավիճակներում ռիսկերի կառավարման ոչ ստանդարտ ընթացակարգերի օգտագործումը, ֆինանսական դրության կայունության ստուգման նպատակով սթրես սցենարների պարբերաբար կիրառումը, ակտիվներում բիզնես գործառնությունների և վարկային պորտֆելի տեսակների կենտրոնացումից խուսափելը, Խմբի ակտիվների և պարտավորությունների դիվերսիֆիկացումը, Խմբի կողմից ստանձնված ռիսկերի համապատասխան հաճախականությամբ մոնիտորինգի իրականացումը, բանկային ռիսկերի կենտրոնացված կառավարումը, ռիսկերի կառավարման վարչության և այլ ստորաբաժանումների միջև անընդհատ կապը:

Ռիսկերի կառավարման կառուցվածք

Բանկում ռիսկերի կառավարումը կազմակերպում և կոորդինացնում է Գործադիր տնօրենը՝ Բանկի Խորհրդի կողմից հաստատված ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Բանկում ռիսկերի կառավարումն իրականացվում է հստակ և փաստաթղթավորված կերպով նկարագրված բոլոր բիզնես գործընթացների, վերջիններիս գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերի, բոլոր գործընթացների և գործառնությունների համար սահմանված համապատասխան սահմանաչափերի միջոցով:

Բանկի Խորհուրդ

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության և ռիսկերի կառավարման քաղաքականության, ինչպես նաև ռիսկերի կառավարմանը վերաբերող այլ քաղաքականությունների հաստատման համար, որոնց հիման վրա Բանկի Գործադիր տնօրենը կազմակերպում է ռիսկերի կառավարումը՝ հիմք ընդունելով ռիսկերի կառավարման սահմանաչափերը և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջները:

Վարչություն

Բանկում ռիսկերի կառավարման կազմակերպման նպատակով Բանկի Վարչությունն իրականացնում է՝

- ճգնաժամային իրավիճակներում Խմբի եկամտաբերության հետ կապված, ինչպես նաև գործառնական, ռազմավարական, վարկանիշային և իրավական ռիսկերին առնչվող Խմբի ռիսկերի կառավարման տեսակետի հիման վրա Խորհրդի համաձայնությամբ համալիր միջոցառումների հաստատումը,
- որոշակի գործարքների հանդեպ արգելքների սահմանումը,
- միջբանկային շուկայում առանց ապահովվածության իրականացվող գործառնությունների սահմանաչափերի սահմանումը,
- բանկային ռիսկերի կարգավորման և վերահսկման ներքին նորմատիվների սահմանումը:

Վարչությունը պատասխանատու է Խմբի ակտիվների և պարտավորությունների կառավարման, ինչպես նաև ողջ ֆինանսական համակարգի համար: Վարչությունը պատասխանատվություն է կրում նաև Խմբի իրացվելիության ֆինանսական ռիսկերի համար: Վարչությանն է վերապահված Խմբի Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի գործառույթները:

40. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ռիսկերի կառավարման ստորաբաժանում

Ռիսկերի կառավարման վարչության հիմնական գործառույթներն են՝

- Խմբում ռիսկերի կառավարման գործուն մեխանիզմների և գործընթացների մշակումն ու ներդրումը, դրանց ներդրման նկատմամբ հսկողության իրականացումը,
- Խմբի կողմից տրամադրվող վարկերի ռիսկայնության վերլուծությունը և ծրագրային վարկերի տրամադրման գործընթացի նկատմամբ հսկողությունը,
- տրամադրված վարկերի մոնիտորինգը, խնդիրների բացահայտումը և դրանց վերաբերյալ հաշվետվությունների ներկայացումը,
- գրավադրվող գույքի գնահատումների նկատմամբ վերահսկողության իրականացումը և գրավադրված գույքի վերագնահատումների պարբերական իրականացումը,
- Խմբի սեփականությունը հանդիսացող գույքի ապահովագրության գործընթացի կազմակերպումը,
- խնդրահարույց վարկային պորտֆելի կառավարումը:

Ներքին աուդիտ

Խմբի կողմից իրականացվող ռիսկի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում ներքին աուդիտի բաժնի կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը և արդյունավետությունը, այնպես էլ Խմբի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի բաժինը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Բանկի խորհրդին:

Ռիսկի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր

Կախված տարատեսակ գործոններից՝ Խումբը նպատակահարմար է գտնում բանկային ռիսկերը բաժանել արտաքին և ներքին ռիսկերի:

Արտաքին ռիսկերն են՝ երկրի, օրենսդրական, ֆորս մաժորային հանգամանքների, գնային և մրցակցային ռիսկերը:

Խմբի ներքին ռիսկերի դասին են պատկանում իր իսկ գործառնություններից բխող ռիսկերը: Դրանք են վարկային, գործառնական, իրացվելիության, տոկոսադրույքի, արտարժութային, հեղինակության, կապիտալի նվազման, անձնակազմի և փողերի լվացման ռիսկերը:

Երկրի ռիսկը Բանկը կառավարում է՝ օգտվելով միջազգային վարկանիշային գործակալությունների (Moody's, S&P, Fitch) կողմից միջազգային բանկերին և կազմակերպություններին շնորհված վարկանիշներից: Ռիսկերի կառավարման վարչությունը կատարում է Խմբի գործընկեր արտասահմանյան բանկերի վարկանիշների մոնիտորինգ և եռամսյակը մեկ Բանկի Վարչության հաստատմանն է ներկայացնում այդ բանկերի գծով սահմանաչափերը:

Գնային ռիսկի հնարավոր նվազագույն մակարդակն ապահովվում է հետևյալ միջոցառումների շրջանակներում՝ ֆինանսական շուկայի կառուցվածքային, ծավալային և գնային ցուցանիշների դինամիկայի, առանձին ֆինանսական գործիքների իրացվելիության վերլուծություն, առկա միտումների բացահայտում, հնարավոր կորուստների գնահատում ամսական կտրվածքով կիրառվող սթրես թեստերի միջոցով, ֆինանսական գործիքների գծով սահմանաչափերի (ըստ արժեթղթերով գործառնության տեսակի, ըստ դիլերի, ըստ թողարկողի) սահմանում, արժեթղթերի փաթեթի բազմազանեցում (դիվերսիֆիկացիա)՝ ըստ թողարկողի, տնտեսության ճյուղերի, ժամկետայնության և այլն:

Մրցակցային ռիսկի կառավարումը իրականացվում է բիզնես ստորաբաժանումների և մարքետինգի բաժնի կողմից պարբերաբար իրականացվող Խմբի և այլ բանկերի կողմից առաջարկվող ծառայությունների տեսականու և պայմանների համեմատության միջոցով:

40. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ռիսկի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր (շարունակություն)

Տոկոսադրույքի ռիսկը Խմբում կառավարվում է Ռիսկերի կառավարման վարչության կողմից՝ մշակելով և կիրառելով տոկոսադրույքի ռիսկի զսպման մեխանիզմներ/մոդելներ, որի հիման վրա էլ Խմբի Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի կողմից ընդունվում են որոշումներ: Ռիսկերի կառավարման վարչությունը տոկոսադրույքի ռիսկի կառավարման համար ընտրել է տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ զգայունության ճեղքվածքի, դյուրացիայի և բազային ռիսկի մոդելները: Տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ զգայունության ճեղքվածքի և դյուրացիայի մոդելները կիրառվում են սթրես սցենարների միջոցով ամսական կտրվածքով: Տոկոսադրույքի բազային ռիսկը կառավարվում է սթրես սցենարի միջոցով տարբեր խստության սցենարների կիրառմամբ եռամսյակային կտրվածքով:

Իրացվելիության ռիսկի կառավարման նպատակով իրականացվում է ակտիվների և պարտավորությունների ժամկետային կառուցվածքի՝ իրացվելիության ճեղքվածքի (liquitidy GAP) ամենօրյա քննարկում, ինչպես նաև բարձր իրացվելի գործիքներում ներդրումների տեսակարար կշռի նկատմամբ հսկողություն: Իրացվելիության ռիսկի զսպման նպատակով Խմբի Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեին Ռիսկերի կառավարման վարչության կողմից ամսական կտրվածքով ներկայացվում է վերլուծություն Խմբի սպասվելիք մարումների, տրամադրվելիք միջոցների և դիրքի վերաբերյալ: Իրացվելիության ռիսկի կառավարումն իր մեջ ներառում է՝ Խմբի ակտիվների գնագոյացման մեխանիզմի մշակումը, բանկին տրամադրված փոխառությունների գումարների, տեսակների կամ համախառն տոկոսային ծախսերի սահմանաչափերը, իրացվելիության պահանջները բավարարելու համար օգտագործվող ֆինանսավորման աղբյուրների կենտրոնացումների սահմանաչափերի կիրառումը, փոխառությունները ըստ մարման ժամկետների դիվերսիֆիկացնելու պահանջը, իրացվելիության պահանջները բավարարելու համար Խմբի հետ կապված անձանցից (կազմակերպություններից) փոխառու միջոցների ներգրավման սահմանափակումները, տոկոսադրույքի ռիսկը սահմանափակելու սկզբունքներն ու մեթոդները՝ ներառյալ հետհաշվեկշռային հոդվածների հետ առնչվող տոկոսադրույքի ռիսկն ու սահմանաչափերը, տոկոսային մարժայի նպատակային մակարդակը, միջոցների ներգրավման և տեղաբաշխման տոկոսադրույքի վերաբերյալ որոշումների կայացման մեխանիզմներն ու ընթացակարգերը, Խմբի ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ճեղքվածքի թույլատրելի սահմանաչափերը, Խմբի այն ստորաբաժանումների աշխատանքների կոորդինացման եղանակները, որոնք կարող են իրենց կողմից իրականացվող գործառնություններով ազդել Խմբի իրացվելիության մակարդակի վրա, իրացվելիության արտահերթ պահանջները (ինչը կարող է ծագել եկամուտների նվազման, չաշխատող ակտիվների աճի, ավանդների կենտրոնացման) բավարարելու ծրագիրը, Խորհրդին ու գործադիր մարմնին Խմբի իրացվելիության կառավարման վերաբերյալ տրամադրվող համապատասխան հաշվետվությունների ձևերը:

Կապիտալի նվազման ռիսկի չափման մեխանիզմներ են հանդիսանում ներքին և ՀՀ ԿԲ կողմից սահմանված նորմատիվները (կապիտալի համարժեքության, մեկ փոխառուի գծով և այլն): Ամսական կտրվածքով կիրառվող սթրես սցենարները հնարավորություն են տալիս որոշելու կապիտալի առավելագույն կորստի մեծությունը՝ կախված տարբեր հանգամանքներից:

Անձնակազմի ռիսկը կառավարվում է Անձնակազմի կառավարման բաժնի կողմից, որը պարբերաբար իրականացնում է ՀՀ բանկային համակարգում աշխատատեղերի և դրանց պայմանների ուսումնասիրություն, ինչպես նաև կազմակերպում է աշխատակիցների մասնագիտական գիտելիքների բարձրացմանն ուղղված դասընթացներ՝ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ռեսուրսների հաշվին:

Փողերի լվացման ռիսկի կառավարումը իրականացվում է ֆինանսական դիտարկումների բաժնի կողմից, որը գործում է փողերի լվացման դեմ պայքարի օրենսդրության և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Ռիսկի կենտրոնացումներ

Ռիսկի կենտրոնացումները առաջանում են, երբ մի շարք գործընկերներ իրականացնում են նմանատիպ գործունեություն, կամ գործունեությունը կատարվում է միևնույն աշխարհագրական շրջանում, կամ նրանք ունեն համանման տնտեսական հատկանիշներ, որի հետևանքով տնտեսական, քաղաքական կամ այլ պայմաններում փոփոխությունները պայմանագրային պարտավորությունների կատարման նրանց ունակության վրա նույն կերպ են ազդում: Ռիսկի կենտրոնացումները արտացոլում են Խմբի գործունեության արդյունքների հարաբերական զգայունությունը պայմանների փոփոխություններին, որոնք ազդեցություն են ունենում կոնկրետ բնագավառի կամ աշխարհագրական շրջանի վրա:

40. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ռիսկի կենտրոնացումներ (շարունակություն)

Ռիսկի չափազանց կենտրոնացումներից խուսափելու համար Խմբի քաղաքականությունը և գործընթացները ներառում են հատուկ սկզբունքներ՝ ուղղված բազմաբնույթ ակտիվների տեսակների, վարկային և արժեթղթերի պորտֆելների պահպանմանը:

Վարկային ռիսկ

Խմբի գործունեությունը ենթարկվում է վարկային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարման հետ, որի արդյունքում Խումբը կարող է վնասներ կրել: Վարկային ռիսկը Խմբի կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Խումբն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Վարկային ռիսկը հիմնականում առաջանում է վարկային գործունեությունից՝ կապված վարկերի և փոխառությունների տրամադրման հետ, և ներդրումային գործունեությունից՝ պայմանավորված Խմբի ակտիվների պորտֆելում պարտքային արժեթղթերի և այլ պարտքային գործիքների առաջացման հետ: Վարկային ռիսկ առկա է նաև մի շարք հետհաշվեկշռային հոդվածներում, ինչպես օրինակ վարկային պարտավորվածությունները: Վարկային ռիսկը կառավարվում է համաձայն Խմբի վարկային քաղաքականության և ոլորտը կարգավորող այլ ներքին իրավական ակտերի:

Ռիսկերի կառավարման վարչության կողմից կատարվում է վարկային պորտֆելի օրական կտրվածքով մոնիտորինգ, կառուցված շարքերի հիման վրա վարկային պորտֆելի դինամիկայի հաշվարկ և պորտֆելի որակի վերլուծություն ըստ վարկատեսակների ու մասնաճյուղերի, ինչի հիման վրա կատարվում են վարկային պորտֆելի որակական ցուցանիշների կանխատեսումներ: Ռիսկերի կառավարման վարչությունը իրականացնում է նաև տարբեր վարկատեսակների վարկերի մոնիտորինգ հաստատված ընթացակարգերով, իսկ հարկ եղած դեպքում առանձին վարկերի մոնիտորինգ՝ ելնելով վարկառուի վարկունակության վատթարացումից: Ներքին իրավական ակտերի պահանջների համաձայն՝ վարկային ռիսկը նվազեցնելու նպատակով Խմբի կողմից տրամադրվող վարկերը նաև հաստատվում են ռիսկերի վարչության կողմից: Վարկային ռիսկի կառավարումը և վերահսկումը կենտրոնացած է Ռիսկերի Կառավարման վարչությունում, որը պարբերաբար հաշվետվություն է ներկայացնում գործադիր խորհրդին:

2017 թ. դեկտեմբերի 31-ի և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը լավագույնս ներկայացնում է նրանց վարկային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը՝ առանց հաշվի առնելու պահվող գրավը կամ վարկի որակի բարելավման այլ միջոցները:

Ռիսկի կենտրոնացումներ

Աշխարհագրական սեգմենտներ

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս 2017 թ. դեկտեմբերի 31-ի և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի՝ վարկային ռիսկի կենտրոնացումները հաշվեկշռային արժեքներով՝ ըստ աշխարհագրական սեգմենտների.

հազար ՀՀ դրամ	*ՀՀ*	*Ոչ ՏՀԶԿ երկրներ*	*ՏՀԶԿ երկրներ*	*Ընդամենը*
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	37,825,147	556,703	1,460,198	**39,842,049**
Առևտրային արժեթղթեր	787,330			**787,330**
Պահանջներ բանկերի նկատմամբ	9,587,915	672,052	286,388	**10,546,355**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	142,405,904	16,556,249	6,205,348	**165,167,500**
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	21,923,809	888,409		**22,812,218**
Հետգնման պայմանագրերում գրավադրված արժեթղթեր	3,056,113			**3,056,113**
Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր	346,140			**346,140**
Այլ ֆինանսական ակտիվներ	153,991	225,352	265	**379,607**
2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**216,086,349**	**18,898,765**	**7,952,199**	**242,937,312**

40. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ռիսկի կենտրոնացումներ (շարունակություն)

հազար ՀՀ դրամ	*ՀՀ*	*Ոչ ՏՀԶԿ երկրներ*	*ՏՀԶԿ երկրներ*	*Ընդամենը*
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	43,719,886	156,599	875,454	**45,286,422**
Առևտրային արժեթղթեր	184,833	-	-	**184,833**
Պահանջներ բանկերի նկատմամբ	1,569,380	173,042	578,460	**2,320,882**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	92,934,554	15,863,791	10,226,479	**119,024,824**
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	14,312,559	-	616,646	**14,929,205**
Հետգնման պայմանագրերում գրավադրված արժեթղթեր	-	-	-	**0**
Այլ ֆինանսական ակտիվներ	111,623	84	169,013	**280,720**
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**152,832,835**	**16,193,516**	**12,466,052**	**181,492,403**

Ակտիվները դասակարգվում են՝ հիմք ընդունելով այն երկիրը, որտեղ գործընկեր կողմը գրանցված է:

Ռիսկի սահմանաչափերի վերահսկողություն և զսպողական քաղաքականություն

Խումբը կառավարում է վարկային ռիսկի կենտրոնացումները՝ մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի, ինչպես նաև վարկավորման ճյուղային կամ աշխարհագրական սեգմենտների կտրվածքով:

Խումբը կարգավորում է վարկային ռիսկի մակարդակները՝ մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի, ինչպես նաև վարկավորման ճյուղային կամ աշխարհագրական սեգմենտների կտրվածքով ռիսկի ընդունելի գումարների սահմանաչափեր սահմանելով: Նման ռիսկերը պարբերաբար վերահսկվում են և ենթակա են վերանայման տարեկան կամ ավելի հաճախակի կտրվածքով՝ ելնելով անհրաժեշտությունից : Ըստ վարկատեսակների, արդյունաբերության ճյուղերի և երկրների վարկային ռիսկի սահմանաչափերը հաստատվում են Վարկային կոմիտեի կողմից եռամսյակային կտրվածքով:

Մեկ վարկառուի գծով վարկային ռիսկի չափը, ներառյալ բանկերը և ֆինանսական կազմակերպությունները, լրացուցիչ սահմանափակում է հաշվեկշռային և հետհաշվեկշռային ռիսկերի համար լրացուցիչ սահմանաչափերով:

Վարկային ռիսկը նաև կառավարվում է վարկառուների և պոտենցիալ վարկառուների՝ մայր գումարի և տոկոսների վճարման ունակությունը պարբերաբար վերլուծելով և անհրաժեշտության դեպքում վարկի տրամադրման սահմանաչափերը փոխելով:

Ստորև ներկայացված են հատուկ հսկողության և զսպողական մի քանի այլ միջոցներ:

Գրավ

Խումբը կիրառում է բազմաթիվ միջոցներ վարկային ռիսկը զսպելու համար: Առավել ավանդական մոտեցում է համարվում տրամադրված դրամական միջոցների դիմաց գրավ վերցնելը, որը նաև համընդհանուր ընդունված գործելակերպ է: Խումբը կանոններ է սահմանում ընդունելի գրավի տեսակների կամ ռիսկերի նվազեցման ուղղությամբ: Վարկերի և փոխառությունների համար գրավի հիմնական տեսակներն են.

- Հիփոթեքային պայմանագրերով գրավադրվող անշարժ գույքը,
- Կազմակերպությունների գործառնական ակտիվները՝ շենքերը, պաշարները և մեքենաները,
- Ոսկին և դրամական միջոցները:

Իրավաբանական անձանց երկարաժամկետ ֆինանսավորումը և վարկավորումը հիմնականում ապահովված են, ֆիզիկական անձանց գծով վերականգնվող վարկային գծերը, որպես կանոն, ապահովված չեն: Ի լրումն, վարկային կորուստը նվազագույնի հասցնելու նպատակով Խումբը վարկառուից լրացուցիչ ապահովություն է պահանջում՝ առանձին վարկերի և փոխառությունների գծով արժեզրկման հայտանիշների ի հայտ գալու դեպքում: Վարկերի և փոխառություններց բացի այլ ֆինանսական ակտիվների գծով ապահովություն հանդիսացող գրավի տեսակը որոշվում է՝ ելնելով գործիքի Էությունից: Հիմնականում բանկերին վարկեր և փոխառություններ տրամադրելու համար գրավներ չեն պահանջվում: Բացառություն են կազմում այն գրավները, որոնք ձեռք են բերվել հետգնման պայմանագրերի և արժեթղթերի փոխառության գործարքներից: Պարտատոմսերը և այլ պարտքային արժեթղթերը հիմնականում ապահովված չեն:

40. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ռիսկի սահմանաչափերի վերահսկողություն և զսպողական քաղաքականություն (շարունակություն)

Համախառն վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության.

հազար ՀՀ դրամ	*31/12/2017թ.*	*31/12/2016թ.*
Անշարժ գույքի գրավադրմամբ վարկեր	82,040,110	58,061,771
Ոսկու գրավով վարկեր	15,950,465	13,485,219
Կազմակերպությունների երաշխիքներով ապահովված վարկեր	6,383,684	5,895,609
Տրանսպորտային միջոցների գրավադրմամբ վարկեր	2,320,430	1,977,955
Դրամական միջոցներով ապահովված վարկեր	34,978,334	27,221,417
Պաշարների գրավադրմամբ վարկեր	676,734	896,863
Սարքավորումների գրավադրմամբ վարկեր	3,300,657	1,485,529
Այլ արժեթղթեր	5,541,894	1,513,788
Այլ գրավներ	7,231,871	5,155,738
Չապահովված վարկեր	11,606,672	7,885,131
Ընդամենը վարկեր և փոխառություններ (համախառն)	**170,030,851**	**123,579,020**

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա վարկերի տրամադրման ամսաթվի դրությամբ: Հիմնականում դրանք չեն թարմացվում մինչև վարկերը չգնահատվեն որպես անհատապես արժեզրկված:

2017 թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ անհատապես արժեզրկված վարկերի գծով գրավների իրական արժեքը կազմում է 7,808,184 հազ. դրամ (2016թ. 8,147,725 հազ. դրամ):

Վարկերի հետ կապված պայմանական պարտավորություններ

Այս գործիքների հիմնական նպատակը անհրաժեշտության դեպքում հաճախորդներին միջոցներ տրամադրելն է: Երաշխիքները և ակրեդիտիվները ենթակա են նույն վարկային ռիսկին, ինչ վարկերը: Ապրանքային և փաստաթղթային ակրեդիտիվները Խմբի գրավոր հավաստումներն են հաճախորդների անունից, որոնք թույլ են տալիս չորրորդ անձանց գումարներ ստանալ Խմբից հատուկ պայմանների կատարման դեպքում, ապահովված են դրանց հետ կապված ապրանքների առաքմամբ, և, հետևաբար, դրանք ավելի ապահով են, քան ուղղակի տրամադրվող վարկերը:

Վարկի տրամադրման պայմանական պարտավորություններն իրենցից ներկայացնում են վարկային գծերի չօգտագործած մասերը: Այս դեպքում, հնարավոր կորուստների գումարը, որ Խումբը կարող է կրել, հավասար է չօգտագործված վարկային գծերի գումարին:

Սակայն հնարավոր վնասի իրական գումարն ավելի փոքր է, քան չօգտագործված վարկային գծերի ընդհանուր գումարը, քանի որ վարկային պարտավորությունները տրամադրվում են վարկառուների կողմից վարկերի տրամադրման որոշակի ստանդարտների պահպանման դեպքում: Խումբը հետևում է պարտավորությունների մարման ժամկետներին, քանի որ երկարաժամկետ պարտավորությունները պարունակում են ավելի բարձր վարկային ռիսկ, քան կարճաժամկետ պարտավորությունները:

Արժեզրկման և պահուստավորման քաղաքականություն

Վարկերի արժեզրկումը գնահատելու հիմնական գործոնները հետևյալն են. արդյոք տոկոսների և մայր գումարի վճարումները ժամկետանց են ավելի քան 90 օր, արդյոք հայտնի են գործընկերների որևէ ֆինանսական դժվարությունների, նրանց վարկային վարկանիշի նվազման կամ պայմանագրի սկզբնական պայմանների խախտման դեպքեր: Խումբը գնահատում է վարկերի արժեզրկումը՝ ելնելով արժեզրկված վարկերի ապագա դրամական հոսքերի վերլուծությունից և արժեզրկման հայտանիշեր չունեցող վարկերի գծով կորուստների նախկին փորձից, ցուցաբերելով պահպանողական մոտեցում:

40. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Արժեզրկման և պահուստավորման քաղաքականություն (շարունակություն)

Անհատապես գնահատվող պահուստներ

Խումբն անհատապես սահմանում է յուրաքանչյուր անհատապես էական վարկի պահուստի ստեղծման անհրաժեշտությունը: Պահուստների չափի որոշման ժամանակ հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները. գործընկերոջ գործարար-ծրագրի կայունությունը, ֆինանսական բարդությունների ծագման դեպքում նրա ունակությունները բարելավելու գործունեության արդյունքները, սնանկացման պարագայում՝ կանխատեսվող ստացվելիք գումարները և ակնկալվող վճարման ենթակա շահաբաժինների գումարները, ֆինանսական օգնության ներգրավման հնարավորությունը, ապահովման միջոցի իրացման արժեքը, ինչպես նաև դրամական միջոցների ակնկալվող ժամկետները: Արժեզրկումից վնասները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ կամ ավելի հաճախ, եթե չնախատեսված իրավիճակը պահանջում է ավելի մեծ ուշադրություն:

Խմբային հիմունքով գնահատվող պահուստներ

Անհատապես էական չհանդիսացող վարկերի (ներառյալ վարկային քարտերը, հիփոթեքային վարկերը և չապահովված սպառողական վարկերը), ինչպես նաև անհատապես էական, բայց անհատապես արժեզրկման օբյեկտիվ հայտանիշեր չունեցող վարկերի գծով պահուստները գնահատվում են խմբային հիմունքներով: Պահուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, այդ թվում յուրաքանչյուր վարկային պորտֆել թեստավորվում է առանձին:

Խմբային հիմունքով գնահատման դեպքում որոշվում է պորտֆելի արժեզրկումը, որը կարող է տեղի ունենալ նույնիսկ անհատական արժեզրկման օբյեկտիվ հայտանիշերի բացակայության դեպքում: Արժեզրկումից վնասները որոշվում են հետևյալ տեղեկատվության հիման վրա. պորտֆելի գծով նախորդ ժամանակաշրջանների վնասները, ընթացիկ տնտեսական պայմանները, մոտավոր ժամանակահատվածը՝ սկսած հնարավոր կորստի պահից մինչև այն պահը, երբ կհաստատվի, որ այն պահանջում է անհատապես գնահատվող արժեզրկման պահուստի ստեղծում, ինչպես նաև, ստացման ենթակա ակնկալվող գումարները և ակտիվի արժեզրկումից հետո արժեքի վերականգնումը:

Ֆինանսական երաշխիքների և ակրեդիտիվների արժեզրկման գնահատումը և պահուստավորումն իրականացվում է նույն հիմունքներով՝ ինչ վարկերինը:

Չարժեզրկված, ոչ ժամկետանց վարկեր և փոխառություններ

Ստորև աղյուսակում ներկայացված է վարկերի և փոխառությունների որակը ըստ դասերի.

2017 թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ Հազար ՀՀ դրամ	*Ոչ ժամկետանց և չարժեզրկված*			*Ժամկետանց, բայց ոչ անհատապես արժեզրկված*	*Անհատապես արժեզրկված*	*Ընդամենը*
	Բարձր վարկանիշ	*Ստանդարտ վարկանիշ*	*Ցածր վարկանիշ*			
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	34,978,334	126,653,387	-	1,145,174	7,253,956	**170,030,851**

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հազար ՀՀ դրամ	*Ոչ ժամկետանց և չարժեզրկված*			*Ժամկետանց, բայց ոչ անհատապես արժեզրկված*	*Անհատապես արժեզրկված*	*Ընդամենը*
	Բարձր վարկանիշ	*Ստանդարտ վարկանիշ*	*Ցածր վարկանիշ*			
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	27,221,417	88,178,139		1,446,721	6,732,743	**123,579,020**

40. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Արժեզրկման և պահուստավորման քաղաքականություն (շարունակություն)

Ժամկետանց, բայց ոչ անհատապես արժեզրկված վարկեր

Ժամկետանց, բայց ոչ անհատապես արժեզրկված վարկերը և փոխառությունները ներառում են ժամկետանց, բայց ոչ անհատապես արժեզրկված վարկերը: Ժամկետանց, բայց ոչ անհատապես արժեզրկված վարկերի վերլուծությունը՝ ըստ վճարման ուշացման ժամկետների հետևյալն է.

	31/12/2017թ.				
հազար ՀՀ դրամ	*Մինչև 30 օր*	*31-60 օր*	*61-90 օր*	*90 օրից առավել*	*Ընդամենը*
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ					
Արդյունաբերություն	0	10,016	5,296	14,672	29,984
Գյուղատնտեսություն	186	2,637	4,788	26,842	34,454
Շինարարություն	909	0	0	0	909
Առևտուր	0	0	14,196	14,923	29,119
Տրանսպորտ և կապ	0	0	0	12,014	12,014
Սպառողական վարկեր ֆիզիկական անձանց	194,988	133,290	71,080	308,747	708,105
Հիփոթեքային վարկեր	42,914	66,224	17,632	199,623	326,394
Ծառայությունների ոլորտ	0	0	0	0	0
Այլ	0	0	0	4,195	4,195
Ընդամենը	**238,997**	**212,167**	**112,992**	**581,016**	**1,145,174**

	31/12/2016թ.				
հազար ՀՀ դրամ	*Մինչև 30 օր*	*31-60 օր*	*61-90 օր*	*90 օրից առավել*	*Ընդամենը*
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ					
Արդյունաբերություն	0	0	21,986	11,343	33,329
Գյուղատնտեսություն	994	0	1,281	21,290	23,565
Շինարարություն	0	0	0	0	0
Առևտուր	21,428	0	5,357	73,518	100,303
Տրանսպորտ և կապ	0	0	0	0	0
Սպառողական վարկեր ֆիզիկական անձանց	107,802	103,187	58,902	589,546	859,437
Հիփոթեքային վարկեր	64,917	18,038	42,889	260,418	386,261
Ծառայությունների ոլորտ	0	0	0	0	0
Այլ	3,622	0	0	40,203	43,825
Ընդամենը	**198,763**	**121,225**	**130,415**	**996,318**	**1,446,720**

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Խմբի ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի փոփոխության ռիսկն է՝ շուկայական պայմանների՝ ներառյալ արտարժույթի փոխարժեքի և տոկոսադրույքների փոփոխության արդյունքում: Խումբը տարանջատում է շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների: Առևտրային պորտֆելի շուկայական ռիսկը կառավարվում և վերահսկվում է ՎաՌ մեթոդով, որը արտացոլում է ռիսկի փոփոխականների միջև կախվածությունը: Ոչ առևտրային պորտֆելը կառավարվում և վերահսկվում է զգայունության վերլուծության միջոցով:

40. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Շուկայական ռիսկ (շարունակություն)

Տոկոսադրույքի փոփոխման ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը Խմբի ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխման արդյունքում: Բանկի Խորհուրդը սահմանել է որոշված ժամկետների համար տոկոսադրույքների ճեղքվածքների չափ: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Խմբի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով:

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքներում ենթադրվող փոփոխությունների ազդեցությունն է ժամանակաշրջանի զուտ տոկոսային եկամտի վրա՝ 2016թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռում հաշվառվող լողացող տոկոսադրույքով ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով: Կապիտալի զգայունությունը 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսադրույքների թույլատրելի փոփոխությունների հանդեպ հաշվարկվում է՝ վերազնահատելով հաստատուն տոկոսադրույքով վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները՝ հիմնվելով այն ենթադրության վրա, որ առկա են եկամտաբերության կորի զուգահեռ տեղաշարժեր:

հազար ՀՀ դրամ	***Բազիսային կետերի ավելացում 31/12/17***	***Զուտ տոկոսային եկամտի զգայունություն 31/12/17***	***Կապիտալի զգայունություն 31/12/17***
Արժույթ			
Հայկական դրամ	3.7%	(112,494)	(1,718,847)
ԱՄՆ Դոլար	1%	–	(177,373)

Արժույթ	***Բազիսային կետերի նվազում 31/12/17***	***Զուտ տոկոսային եկամտի զգայունություն 31/12/17***	***Կապիտալի զգայունություն 31/12/17***
Հայկական դրամ	-3.7%	112,494	1,718,847
ԱՄՆ Դոլար	-1%	–	177,373

հազար ՀՀ դրամ ***Արժույթ***	***Բազիսային կետերի ավելացում 31/12/2016թ.***	***Զուտ տոկոսային եկամտի զգայունություն 31/12/2016թ.***	***Կապիտալի զգայունություն 31/12/2016թ.***
Հայկական դրամ	3.7%	(18,448)	(1,174,090)
ԱՄՆ Դոլար	1%	–	(142,859)

Արժույթ	***Բազիսային կետերի նվազում 31/12/2016թ.***	***Զուտ տոկոսային եկամտի զգայունություն 31/12/2016թ.***	***Կապիտալի զգայունություն 31/12/2016թ***
Հայկական դրամ	-3.7%	18,448	1,174,090
ԱՄՆ Դոլար	-1%	–	142,859

Շուկայական ռիսկ (շարունակություն)

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկը արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է: Արտարժութային ռիսկը Խումբը կառավարում է՝ օգտվելով ստանդարտ և ՎաՌ մեթոդաբանություններից: Բանկի Խորհուրդը սահմանել է սահմանաչափեր արտարժութային դիրքերի համար:

Ստորև բերված աղյուսակներում ներկայացված են այն արժույթները, որոնցով դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունի էական արժութային դիրքեր՝ ոչ առևտրային դրամական ակտիվների և պարտավորությունների, ինչպես նաև սպասվող դրամական հոսքերի գծով: Կատարված վերլուծությունը արտահայտում է ՀՀ դրամի նկատմամբ՝ արտարժույթի փոխարժեքի հնարավոր տատանումների ազդեցությունը համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա (կախված արտարժույթի փոխարժեքի փոփոխության նկատմամբ ոչ առևտրային դրամական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի զգայունությունից): Կապիտալի վրա ազդեցությունը չի տարբերվում համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա ազդեցությունից: Բոլոր այլ ցուցանիշները հաստատուն են:

Բացասական գումարները արտացոլում են համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազումը, դրական գումարները՝ պոտենցիալ զուտ աճը:

հազար ՀՀ դրամ	*31 դեկտեմբերի, 2017թ.*		*31 դեկտեմբերի, 2016թ.*	
Արժույթ	*Արտարժույթի փոխարժեքի փոփոխություն %*	*Ազդեցություն մինչև հարկումը շահույթի վրա*	*Արտարժույթի փոխարժեքի փոփոխություն %*	*Ազդեցություն մինչև հարկումը շահույթի վրա*
ԱՄՆ դոլար	6%	(39,892)	6%	(34,858)
ԱՄՆ դոլար	-6%	39,892	-6%	34,858
Եվրո	11%	1,232	11%	377
Եվրո	-11%	(1,232)	-11%	(377)

40. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբը սովորական կամ չկանխատեսված իրավիճակում չի կարողանա կատարել իր պարտավորությունները վերջիններիս մարման ժամանակ: Այդ ռիսկի զսպման նպատակով ղեկավարությունն ապահովել է ֆինանսավորման տարբեր աղբյուրներ՝ ի լրումն արդեն իսկ գոյություն ունեցող բանկային ավանդների հիմնական բազայի: Ղեկավարությունն իրականացնում է նաև ակտիվների կառավարում՝ հաշվի առնելով իրացվելիությունը, և ապագա դրամական հոսքերի և իրացվելիության օրական վերահսկողություն: Այդ գործընթացը ներառում է ակնկալվող դրամական միջոցների գնահատում և առաջնակարգ ապահովման միջոցի առկայություն, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորման ստացման համար:

Խումբը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Բացի այդ Խումբը ՀՀ կենտրոնական բանկում պահում է իր դրամով պարտավորությունների 2%-ի և արտարժույթով պարտավորությունների 18%-ի չափով պահուստավորման գումար (տե՛ս Ծանոթագրություն 15-ը): Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում՝ հաշվի առնելով շուկայի հետ ընդհանրապես և Բանկի հետ մասնավորապես կապված սթրես գործոնները:

Խմբի իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար վերջիններիս մարման ժամանակ, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Խումբը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան:

Այդ հարաբերակցությունը կազմել է՝	*31/12/2017թ., %*	*31/12/2016թ., %*
Ն21 – Ընդհանուր իրացվելիություն (բարձր իրացվելի ակտիվներ/Ընդհանուր ակտիվներ)	35.26%	39.01%
Ն22 – Ընթացիկ իրացվելիություն (բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ)	102.49%	116.23%

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ըստ մինչև մարումը մնացած ժամկետների.

Ստորև ներկայացվում է դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների՝ պայմանագրային չզեղչված պարտավորությունների հիման վրա: Այս պարտավորությունների մարման սպասվելիք ժամկետների համար տե՛ս Ծանոթագրություն 39-ը:

40. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Իրացվելիության ռիսկ (շարունակություն)

Պարտավորությունները, որոնք ենթակա են ցպահանջ մարման, դասակարգվում են այնպես, ինչպես եթե մարման պահանջը ներկայացված լիներ ամենավաղ հնարավոր ամսաթվով: Սակայն Խումբը գտնում է, որ շատ հաճախորդներ չեն պահանջի վճարումը այն ամենավաղ հնարավոր ամսաթվի դրությամբ, որով Խումբը պարտավորված կլինի կատարել վճարումը, և աղյուսակը չի արտացոլում ակնկալվող դրամական հոսքերը՝ հաշվարկված Խմբի կողմից՝ անցյալ ժամանակաշրջանների ներդրումների պահանջների տեղեկատվության հիման վրա:

	31/12/2017թ.					
հազար ՀՀ դրամ	*Ցպահանջ կամ մինչև մեկ ամիս*	*1-3 ամիս*	*3-12 ամիս*	*1-5 ամիս*	*5 տարուց ավելի*	*Ընդամենը*
Ֆինանսական պարտավորություններ						
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	13,463,293	0	1,674,272	0	72,615	**15,210,180**
Ածանցյալ պարտավորություններ	0	0	0	0	68,857	**68,857**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	73,536,373	11,196,999	65,821,548	28,077,900	564,589	**179,197,409**
Այլ փոխառու միջոցներ	132,553	227,335	1,689,991	10,212,515	3,980,126	**16,242,520**
Կազմակերպության կողմից թողարկված տոկոսային արժեթղթեր	0	43,438	47,531	6,414,215	0	**6,505,184**
Ստորադաս փոխառություններ	0	0	(3,214)	0	7,907,774	**7,904,560**
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	**87,132,219**	**11,467,772**	**69,230,128**	**44,704,630**	**12,593,961**	**225,128,710**
Պայմանական և պայմանագրային պարտավորություններ	**10,352,506**	**360,101**	**1,791,053**	**1,016,495**	**19,450**	**13,539,605**

	31/12/2016թ.					
հազար ՀՀ դրամ	*Ցպահանջ կամ մինչև մեկ ամիս*	*1-3 ամիս*	*3-12 ամիս*	*1-5 ամիս*	*5 տարուց ավելի*	*Ընդամենը*
Ֆինանսական պարտավորություններ						
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	205,473	0	0	0	72,591	**278,064**
Ածանցյալ պարտավորություններ	18,063	0	0	0	13,528	**31,591**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	54,262,156	26,995,968	55,391,082	6,607,702	161,891	**143,418,799**

	31/12/2017թ.					
հազար ՀՀ դրամ	*Պահանջ կամ մինչև մեկ ամիս*	*1-3 ամիս*	*3-12 ամիս*	*1-5 ամիս*	*5 տարուց ավելի*	*Ընդամենը*
Այլ փոխառու միջոցներ	1,427,262	670,893	703,130	7,137,018	1,302,071	**11,240,375**
Այլ ֆինանսական պարտավորություններ	402,055	0	0	0	0	**402,055**
Ստորադաս փոխառություններ	1,742,795	0	0	0	8,316,020	**10,058,815**
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	**58,071,332**	**27,666,861**	**56,094,212**	**13,744,720**	**9,852,573**	**165,429,698**
Պայմանական և պայմանագրային պարտավորություններ	**6,088,226**	**2,253,510**	**2,680,709**	**332,880**	**–**	**11,355,325**

40. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Իրացվելիության ռիսկ (շարունակություն)

Խումբը ներգրավել է էական գումարներով միջոցներ բաժնետերերից և կապակցված կողմերից: Նշված գումարների ցանկացած էական վերադարձ կարող է բացասաբար անդրադառնալ Խմբի գործունեության վրա: Խմբի ղեկավարությունը վստահ է, որ ֆինանսավորման ներկայիս մակարդակը կպահպանվի տեսանելի ապագայում, և միջոցների վերադարձի դեպքում նա կտեղեկացվի նախապես, ինչը հնարավորություն կտա Խմբին ժամանակին իրացնելու իր իրացվելի միջոցները և վերադարձնելու պարտքը:

Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկերի կառավարման բարձրագույն մարմինը Խմբի Վարչությունն է, որը պատասխանատու է գործառնական ռիսկերի վերահսկման համար: Գործառնական ռիսկը Խմբում գործարքների սահմանված կարգի և ընթացակարգերի՝ գործող օրենսդրությանը անհամապատասխանության կամ դրանց խախտման, Խմբի աշխատակիցների անիրազեկության կամ սխալների, Խմբի կողմից կիրառվող տեղեկատվական, տեխնոլոգիական և այլ համակարգերի ֆունկցիոնալ հնարավորությունների անբավարարության հետևանքով վնասների առաջացման ռիսկն է: Խմբի նպատակն է կառավարել գործառնական ռիսկը՝ ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից խուսափումը հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկերի կառավարումն իրականացվում է հստակ և փաստաթղթավորված կերպով նկարագրված բոլոր բիզնես գործընթացների, վերջիններիս գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերի, բոլոր գործընթացների և գործառնությունների համար սահմանված համապատասխան սահմանաչափերի, Խմբի կողմից իրականացվող ցանկացած գործարքի ընթացքում կրկնակի ստուգման սկզբունքի միջոցով: Գործառնական ռիսկի առավել արդիական տեսակների կառավարումը նկարագրված է ստորև:

Իրավական ռիսկ. Խմբի բոլոր ստանդարտ պայմանագրերի օրինակելի ձևերը մշակվում են Խմբի Իրավաբանական վարչության կողմից համապատասխան ստորաբաժանման հետ համագործակցության միջոցով և հաստատվում են Խմբի Վարչության կողմից: Խմբի առօրյա գործունեության ընթացքում Խմբի և չորրորդ անձանց հետ փոխհարաբերությունները կարգավորող ոչ ստանդարտ պայմանագրերի կիրառումը թույլատրվում է միայն այդ պայմանագրերի վերաբերյալ Խմբի Իրավաբանական վարչության կողմից եզրակացության առկայության դեպքում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) հետ առնչվող ռիսկերը կառավարվում են Խմբում գործող ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Գործընթացի ռիսկի զսպման մեխանիզմներ են՝

- բոլոր բիզնես գործընթացների կանոնակարգումը ներքին իրավական ակտերի միջոցով,
- Խմբի ակտիվների և առավել կարևոր փաստաթղթերի (այդ թվում՝ վարկային պայմանագիր) ֆիզիկական պաշտպանվածությունը,
- սահմանաչափերի սահմանումը և պահպանումը,

- գույքի և գրառումների համատեղ պահպանումը,
- տվյալների գրանցամատյանների կիրառումը և արխիվացումը,
- գործընթացների ժամանակ երկու աչքի սկզբունքի կիրառումը:

Ներքին աուդիտը պարբերաբար տալիս է Խմբի ներքին հսկողության համակարգի արդյունավետության և Խմբի ռիսկերին համարժեք լինելու գնահատական և հսկողություն է իրականացնում Խմբի գործունեության և գործառնական ռիսկերի նկատմամբ:

Խմբի՝ ստանդարտներին համապատասխանությունը ուղեկցվում է ներքին աուդիտի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Ներքին աուդիտի դիտարկումների արդյունքները քննարկվում են Խմբի ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Դիտարկումների ամփոփագրերը ներկայացվում են Խորհրդին:

41. Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն

Կառավարչական նպատակներից ելնելով, հիմնվելով մատուցվող ծառայությունների և ապրանքատեսակների վրա Բանկն իր գործունեությունը բաժանում է երեք սեգմենտների և դրանց արդյունքների հիման վրա կայացվում են ռազմավարական որոշումներ:

Մանրածախ բանկային գործունեություն- Ֆիզիկական անձանց ընթացիկ հաշիվների բացում և վարում,դեպո հաշիվների վարում, ավանդների ներգրավում սպառողական և հիփոթեքային վարկերի տրամադրում, օվերդրաֆտների, վարկային քարտերի սպասարկում, փոքր և միկրո վարկերի տրամադրում:
Կորպորատիվ բանկային գործունեություն- Կազմակերպություններին վարկերի տրամադրում, ավանդների և ընթացիկ հաշիվների բացում և սպասարկում:
Առևտրային և ներդրումային բանկային գործունեություն- Ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ՝ գանձապետական ֆինանսական, ներդրունային բակային ծառայություններ, վարձակալություն, կազմակերպությունների միաձուլման և դադարեցնամ խորհրդատվությունների տրամադրում:
Ռեսուրսների բաշխման և գործունեության գնահատման նպատակով ղեկավարությունը հետևում է իր բիզնես միավորների գործառնական արդյունքներին առանձին-առանձին:

Սեգմենտների ակտիվները և պարտավորությունները ներառում են գործառնական ակտիվները և պարտավորությունները, որոնք կազմում են Բանկի ակտիվների և պարտավորությունների մեծ մասը:

2017 և 2016թթ. ընթացքում արտաքին գործընկերոջից կամ հաճախորդից ստացված և Բանկի ընդհանուր հասույթի 10% և ավելի գերազանցող հասույթով որևէ գործարք չի կատարվել:

Ստորև ներկայացված է 31.12.17թ. դրությամբ բիզնես-սեգմենտների գծով սեգմենտային տեղեկատվությունը:

Հազար դրամ

	Մանրածախ Բանկային գործունեություն	Կորպորատիվ բանկային գործունեություն	Առևտրային և ներդրումային, բանկային գործունեություն	Ընդամենը
Զուտ տոկոսային եկամուտ	5,056,916	2,662,092	1,621,177	9,340,185
Զուտ ոչ տոկոսային եկամուտ	2,558,947	1,418,837	271,285	4,249,068
Գործառնական շահույթ	*7,615,863*	*4,080,929*	*1,892,462*	*13,589,253*
Արժեզրկումից կորուստներ	(415,187)	(797,687)	0	(1,212,874)
Մաշվածություն և ամորտիզացիա	(270,165)	(16,978)	(701)	(287,844)
Անձնակազմի և այլ ընդհանուր վարչական ծախսեր	(2,496,631)	(493,872)	(154,937)	(3,145,439)
Սեգմենտի շահույթ	**4,433,879**	**2,772,392**	**1,736,825**	**8,943,095**
Արտարժույթի փոխարկումից գուտ (վնաս)/օգուտ				*(1,128)*
Ընդհանուր կառավարչական ծախսեր և աշխատավարձ				*(4,510,395)*
Այլ ծախսեր				*(17,058)*
Շահույթ մինչև շահութահարկը				*4,414,515*
Շահութահարկի գծով ծախս				*(788,393)*
Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ				**3,626,122**

Սեգմենտի շահույթը ձևավորվել է արտաքին հաճախորդներից, միջսեգմենտային եկամուտներ առկա չեն հաշվետու տարում (2016թ. ին ևս առկա չեն):

Սեգմենտի շահույթը յուրաքանչյուր սեգմենտի գծով ստացված շահույթն է մինչև շահութահարկը՝ առանց տեղաբաշխելու արտարժույթի փոխարկումից զուտ (վնաս)/օգուտը, ընդհանուր կառավարչական ծախսերը և աշխատավարձը և հիմնական միջոցների օտարումից առաջացած ծախսերը:

Հազար դրամ	Մանրածախ Բանկային գործունեություն	Կորպորատիվ բանկային գործունեություն	Առևտրային և ներդրումային, բանկային գործունեություն	Ընդամենը
Տոկոսակիր ֆինանսական ակտիվներ	70,521,233	94,646,267	37,548,156	202,715,656
Տոկոսակիր ֆինանսական պարտավորություն	77,300,907	102,467,646	33,833,643	213,602,196

Տոկոսակիր ակտիվները ներառում են առևտրային նպատակով պահվող,վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները, բանկերին տրված վարկեր, փոխառությունները, հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարները, հաճախորդներին տրված վարկերը, ակրեդիտիվները, ֆինասական վարձակալության, ֆակտորինգի գծով ստացվելիք գումարները:

Տոկոսակիր պարտավորությունները ներառում են բանկերի, հաճախորդների պարտավորությունների գումարը, թողարարկված պարտքային արժեթղթերը, ստորադաս և այլ փոխառությունները:

Ստորև ներկայացված է 31.12.16թ. դրությամբ բիզնես-սեգմենտների գծով սեգմենտային տեղեկատվությունը:

Հազար դրամ

	Մանրածախ Բանկային գործունեություն	Կորպորատիվ բանկային գործունեություն	Առևտրային և ներդրումային, բանկային գործունեություն	Ընդամենը
Զուտ տոկոսային եկամուտ	4,325,357	1,782,351	964,190	7,071,898
Զուտ ոչ տոկոսային եկամուտ	2,298,227	1,454,764	(615,950)	3,137,041
Գործառնական շահույթ	*6,623,584*	*3,237,115*	*348,240*	*10,208,939*
Արժեզրկումից կորուստներ	(584,771)	(959,695)	0	(1,544,466)
Մաշվածություն և ամորտիզացիա	(304,932)	(21,014)	(701)	(326,647)
Անձնակազմի և այլ ընդհանուր վարչական ծախսեր	(2,075,943)	(841,170)	(98,107)	(3,015,220)
Սեգմենտի շահույթ	**3,657,938**	**1,415,236**	**249,432**	**5,322,606**
Արտարժույթի փոխարկումից զուտ (վնաս)/օգուտ				*(237,214)*
Ընդհանուր կառավարչական ծախսեր և աշխատավարձ				*(3,576,803)*
Շահույթ մինչև շահութահարկը				*1,508,590*
Շահութահարկի գծով ծախս				*56,442*
Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ				**1,565,032**

Հազար դրամ	Մանրածախ Բանկային գործունեություն	Կորպորատիվ բանկային գործունեություն	Առևտրային և ներդրումային, բանկային գործունեություն	Ընդամենը
Տոկոսակիր ֆինանսական ակտիվներ	50,655,851	68,368,973	17,434,920	136,459,744
Տոկոսակիր ֆինանսական պարտավորություն	71,036,412	76,242,623	9,405,863	156,684,898

Աշխարհագրական տեղեկատվություն

Բանկն իր հիմնական գործունեությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում: Բացառությամբ ֆինանսական գործիքների՝ Բանկը չունի ՀՀ տարածքից դուրս այլ ոչ ընթացիկ ակտիվներ:

42. Կապիտալի համարժեքություն

Խումբն ակտիվորեն կառավարում է կապիտալը իր գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու նպատակով: Խմբի կապիտալի համարժեքությունը վերահսկվում է՝ կիրառելով Բազելյան համաձայնագրով սահմանված կապիտալի գծով սկզբունքներն ու ցուցանիշները և Խմբի վերահսկման նպատակով ԿԲ-ի կողմից սահմանված նորմատիվները:

Խմբի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են՝ համոզվել, որ Բանկի կապիտալը համապատասխանում է վերահսկողի կողմից սահմանած պահանջներին, և որ Խումբն ապահովում է ամուր վարկային վարկանիշ և ուժեղ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու նպատակով:

Խումբը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Խումբը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարիների համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է 12%: Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է կանոնադրական կապիտալը, էմիսիոն եկամուտը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը, գլխավոր պահուստը: Ընդհանուր կապիտալը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պահանջներին համաձայն: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է լրացուցիչ կապիտալը, որը ընդգրկում է վերագնահատման պահուստները:

2017 թ. դեկտեմբերի 31-ի և 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի կապիտալի համարժեքության նորմատիվը, որը հաշվարկվել է ՀՀ ԿԲ-ի պահանջներին համաձայն, կազմել է՝

հազար ՀՀ դրամ	**31/12/2017թ.**	**31/12/2016թ.**
1-ին դասի կապիտալ	24,722,195	20,622,475
2-րդ դասի կապիտալ	11,307,397	9,001,380
Ընդհանուր կապիտալ	**36,029,592**	**29,623,855**
Ռիսկով կշռված ակտիվներ	**212,464,854**	**137,415,853**
Կապիտալի համարժեքության նորմատիվ	**16.96%**	**21.56%**

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի գնահատման:

Ժամանակաշրջանի ընթացքում Բանկը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ բոլոր պահանջները:

Բանկերի համար սահմանված նորմատիվային կապիտալի նվազագույն չափը 30,000,000 հազ. դրամ է: Նորմատիվային միջին կապիտալը դեկտեմբեր ամսվա համար կազմել է **36,029,592** հազ. դրամ (2016 թ. դեկտեմբերին՝ 29,623,855 հազ. դրամ):